

ISSN 0135-0536

ՊԱՏՄԱԲՆՆԱՄԻՐԱԿԱՆ
ՆԱԿԻԵՍ
ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ

2

2019

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА

Պ Ա Տ Մ Ա Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն
Տ Ա Ն Դ Ե Ս
ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ

2019, 2 (211)

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА

ԵՐԵՎԱՆ

2019

ЕРЕВАН

Հանդեսը լույս է տեսնում 1958 թվականից
Հիմնադիր խմբագիր՝ Մ. Գ. Ներսիսյան

Журнал выходит с 1958 года
Редактор-основоположник М. Г. Нерсисян

Խ մ ր ա գ ր ա կ ա ն ի ն ր հ ն լ ր ղ

Ն ա ի ա գ ա հ՝ ԱՇՈՏ ՄԵԼԿՈՆՅԱՆ
Գ լ ի ա վ ն ր ի մ ր ա գ ի ր՝ ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ
Գ լ ի ա վ ն ր ի մ ր ա գ ի թ ե ղ ա կ ա լ՝ ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ
Ա ն ղ ա մ ն ե ր՝ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԼԵՎՈՆ, ԱՎԵՏԻՍՅԱՆ ՊԱՎԵԼ, ԲԱՐԴԱԿՅԱՆ
ԳԵՎՈՐԳ (ԱՄՆ), ԴԵՎՐԻԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ, ԶԵԿԻԱՆ ԼԵՎՈՆ (Իտալիա), ԿԱՏՎԱԼՅԱՆ ՎԻԿՏՈՐ,
ՀԱՍՐԱԹՅԱՆ ՄՈՒՐԱԴ, ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԵՆՐԻԿ, ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ,
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ, ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԱՄՎԵԼ, ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ ՎԱՀԱՆ, ՏԵՐՅԱՆ
ԱԲՐԱՀԱՄ (ԱՄՆ),
ՏՈՆԱՊԵՏՅԱՆ ԱՆԱՊԵՏ (Ֆրանսիա)

Р е д а к ц и о н н а я к о л л е г и я

Председатель – АШОТ МЕЛКОНЯН
Главный редактор – АНУШАВАН ЗАКАРЯН
Заместитель главного редактора – АЭЛИТА ДОЛУХАНИЯН
Члены – АБРАМЯН ЛЕВОН, АВЕТИСЯН ПАВЕЛ, АСРАТЯН МУРАД, БАРДАКЧЯН
ГЕВОРГ (США), ДЕВРИКЯН ВАРДАН, ЗЕКИАՆ ЛЕВОН (Италия), ИОАННИСЯՆ ГЕНРИК,
КАТВАԼԿԱՆ ՎԻԿՏՈՐ, ՄՈՎՍԻՍԿԱՆ ԱՐՏԱԿ, ՄՈՐԱԴԿԱՆ ՍԱՄՎԵԼ, ՕԳԱՆԵՍԿԱՆ ՆԻԿՈԼԱՅ, ԹԵՐ-
ԿԵՎՈՆԿԱՆ ՎԱՆ, ԹԵՐԿԱՆ ԱԲՐԱՄ (ՍՊԱ), ԹՈՆԱՊԵՏԿԱՆ ԱՆԱՊԵՏ (Ֆրանսիա)

Պատմաբանասիրական հանդես, 2019
Историко-филологический журнал, 2019

Հապավումը՝ ՊԲՀ ©
Аббревиатура – ИФЖ

Հայերեն բաժնի խմբագիրներ

Ռուսերեն բաժնի խմբագիր

Հայերենի սրբագրիչ

Անգլերենի խմբագիր

Համակարգչային ձևավորում և էջադրում

Редакторы армянского отдела

Редактор русского отдела

Корректор армянского отдела

Редактор английского отдела

Компьютерный дизайн и пагинация

Editors of Armenian segment

Editor of Russian segment

Proofreader of Armenian segment

Proofreader of English segment

Computer design and pagination

Թամար Ջաքարյան

Լիանա Օհանյան

Կարինե Ալեքսանյան

Ադավնի Շահինյան

Հարություն Խուդանյան

Շուշան Բասենցյան

Тамар Закарян

Лиана Оганян

Карине Алексанян

Агавни Шагинян

Арутюн Худанян

Шушан Басенция

Tamar Zakaryan

Liana Ohanyan

Karine Aleksanyan

Aghavni Shahinyan

Harutyun Khudanyan

Shushan Basentsyan

Խմբագրության հասցեն՝ 375019, Երևան-19, Մարշալ Բաղրամյան պող. 24-գ, հեռ. (010)581872

Адрес редакции: 375019, Ереван-19, пр. Маршал Баграмяна, 24 г. тел. (010) 581872

Address: 24G Marshal Baghranian av., 375019, Yerevan, Armenia, tel. (010)581872

Հանդեսի պաշտոնական կայքէջը՝ <http://academhistory.am/hy/պատմաբանասիրական-հանդես.html>

Официальный сайт журнала: <http://academhistory.am/hy/պատմաբանասիրական-հանդես.html>

Official site of the journal: <http://academhistory.am/hy/պատմաբանասիրական-հանդես.html>

Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ patmhandes@rambler.ru, patmhandes@yahoo.com

Электронная почта журнала: patmhandes@rambler.ru, patmhandes@yahoo.com

E-mail of the journal: patmhandes@rambler.ru, patmhandes@yahoo.com

Հրատ. պատվեր № 958

Ստորագրված է տպագրության 29.07.2019 թ.:

Տպագրական 19.75 մամուլ: Թուղթ № 1, 70x100:

ՀՀ ԳԱԱ տպարան, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:

Изд. заказ № 958

Подписано к печати 29.07.2019 г.

Печ. 19.75 л. Бумага № 1, 70x100.

Типография НАН РА, 375019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24.

I

ԻՐԱՆԱԿԱՆ ՄԵՏԱՔՍԻ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐՁԱՎՈՐ ՈՒ ՄԻԶԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ ԵՎ ՀԱՅ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ (XVII դարասկիզբ)*

ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

Բանալի բառեր՝ մետաքս, Լևանտ, պարսիկ, վաճառական, Իրան, խոջա, Վենետիկ, Անգլիա, Ջուդա, Հնդկաստան, Զմյուռնիա, Սպահան:

XV դ. Փոքր Ասիայում, Բալկաններում և Հյուսիսային Աֆրիկայում թուրքական նվաճումներն ու հատկապես 1453 թ. Կ. Պոլսի գրավումը և բյուզանդական կայսրության անկումը Եվրոպայի արևելյան առևտրի համար իսկական աղետ եղան: Սուլթանի տիրապետության տակ անցավ Ադրիատիկ ծովի ու Հունգարիայի սահմաններից մինչև Պարսից ծոց ընկած առևտրական ուղին: Իսկ Տրապիզոնի կայսրության (1461 թ.) և Ղրիմի նվաճումից (1475 թ.) հետո Սև ծովն ուղղակի վերածվեց թուրքական ներքին լճի: Այս ամենն արևմտյան աշխարհը գրկվում էր Արևելքի հետ շփումներ ունենալու հնարավորությունից՝ Խափանվեց նաև Եվրոպան Արևելքի հետ կապող միջազգային առևտրական ուղին: Արևմուտքի վաճառականները գրկվեցին Փոքր Ասիայի, Սիրիայի և Հայաստանի վրայով Միջին Արևելքի, Հնդկաստանի ու Չինաստանի հետ առևտրատնտեսական կայուն կապեր ունենալու հնարավորությունից: Մինչդեռ այդ նույն ժամանակ եվրոպական երկրներում սկսված տնական տնտեսական վերելքը հրամայական պահանջ էր առաջադրում ապահովել հումքի հարուստ աղբյուրներ և վաճառահանման կայուն շուկաներ:

Դրությունն էլ ավելի էր բարդանում այն պատճառով, որ օսմանյան սուլթանների տնտեսական քաղաքականությունն աչքի էր ընկնում ծայրահեղ կամայականությամբ: “Յանիչարիները վատ էին կողմնորոշվում առևտրական հարցերում և անպարկեշտ կողոպուտների թուրքական մեթոդները իտալական վաճառականներին հասցնում էին հուսահատության”²: Եվրոպան կտրվեց արևելյան

* Ընդունվել է տպագրության 06. V. 2019 թ.: Գրախոսվել է 14. VI. 2019 թ.:

¹ W. Heyd. Histoire du Commerce du Levant au Moyen Age, t. II. Amsterdam, 1967, pp. 348–349.

² Ф. Я. Полянскій. Экономическая история зарубежных стран (эпоха феодализма). М., 1954, с. 360.

շուկաներից: Փակվեց նաև «մետաքսի ճանապարհը». առևտրական այն մեծ ուղին, որը Կենտրոնական Ասիայից և Իրանից Հայաստանի վրայով տանում էր դեպի Սև ծով ու լեանտյան շուկաներ: Դա այն ուղին էր, որի վրայով Եվրոպյան ստանում էր Արևելքի «փափուկ ոսկին»՝ մետաքս և մետաքսի հումք:

Այսպիսով, մերձավորարևելյան ողջ առևտուրն ընկավ թուրք-օսմանների հսկողության տակ:

Կասկածից վեր է, որ օսմանցիների կողմից, փաստորեն, տնտեսական շրջափակման ենթարկված եվրոպական առևտրական պետությունները պետք է ուղիներ որոնեին Արևելքի հետ խափանված ճանապարհը բացելու ուղղությամբ:

1571 թ., երբ Վենետիկի, Ջենովայի և Բուսանիայի միացյալ նավատորմիդները Լեպանտոյի ծովածոցում ոչնչացրին օսմանյան ռազմական նավատորմը, Արևմուտքում հույսեր արթնացան Կ. Պոլսի մոտակա ազատագրման, հետևաբար, նաև դեպի Արևելք տանող առևտրական ճանապարհների բացվելու վերաբերյալ: Բայց այդ հույսերը ի դերն եղան, քանի որ Օսմանյան կայրությունը կրկին ուշքի եկավ և նախկինի պես եվրոպացիների առջև փակեց ճանապարհը դեպի Իրան, Հնդկաստան, Չինաստան ու Հեռավոր Արևելք:

Սակայն Արևելքի և Արևմուտքի միջև միջազգային առևտրի այդ հակաբնական խզումը չէր կարող տևական բնույթ կրել, քանի որ, ի վերջո, դրանից վնասներ էր կրում նաև օսմանյան գանձարանը³: Ուստի, հետամուտ լինելով իր համար ռազմական փառքի ստեղծմանը և նոր տարածքներ նվաճելուն՝ Օսմանյան կայսրությունը միաժամանակ սկսեց չիտրջել իր տարածքի վրայով իրականացվող առևտրի հովանավորությունից՝ ակնկալելով հսկայական եկամուտներ: Օսմանյան սուլթանները ձգտում էին իրենց բաժինը ստանալ ոչ միայն իրանական հում-մետաքսի առևտրից, այլև՝ Կենտրոնական Ասիայի, Հնդկաստանի ու Չինաստանի հետ կատարվող ապրանքափոխանակությունից⁴: «Իրանական մետաքսի բոլոր վաճառահանման շուկաները, որոնք բաց էին եվրոպացիների համար այժմ օսմանցիների ձեռքում էր, – գրում է թուրք պատմաբան-տնտեսագետ Խալիլ Բնալջիքը: – Չբավարարվելով սոսկ վաճառահանման շուկաների վրա ունեցած հսկողությամբ, օսմանցիները XVI դարում փորձում էին իրենց տիրույթներին միացնել Իրանի մետաքս արտադրող այնպիսի կենտրոններ, ինչպիսիք էին Շիրվանը և Գիլանը»⁵:

³ A. H. Lybyer. The Ottoman Turks and the Routs of Oriental Trade.– “English Historical Review”, 1915, № 30, pp. 577–593.

⁴ H. Inalcik. The Ottoman Economic Mind and Aspects of the Middle East from the Rise of Islam to the Present Day. London, 1970, pp. 214–215.

⁵ Նույն տեղում, էջ 211:

Իր արևելյան ախոյանին՝ Սեֆյան Իրանին, տնտեսական հարված հասցնելու համար սուլթան Սելիմ I «Յավուզը» («ահեղ») (1512–1520 թթ.) որոշել էր արգելել իրանական մետաքսով բեռնված քարավանների մուտքը Փոքր Ասիայում մետաքսի առևտրի խոշորագույն կենտրոն Բուրսա⁶:

Խ. Ինալչիքը մոլորության մեջ է կամ միտումնավոր կեղծում է պատմական հանրահայտ իրողությունը՝ գրելով՝ «պարսիկ և թուրք վաճառականներն այլևս - չէին կարող շարունակել իրենց գործունեությունը, դրա հետևանքով առևտուրն անցավ հայ վաճառականների ձեռքը»⁷:

1514 թ. ծայր են առնում թուրք-իրանական պատերազմները, որոնք, առանձին դադարներով, շարունակվեցին մոտ մեկուկես դար: Պատերազմող կողմերը ձգտում էին տիրանալ Հայաստանին, Ատրպատականին (Ազերբայջան), Արաբական Իրաքին, Անդրկովկասին ու Դաղստանին, հաստատել իրենց տիրապետությունն առևտրական ճանապարհների վրա, տեր դառնալ մետաքսի արտադրության հիմնական կենտրոններին: Ուշագրավ է նշել, որ այդ պատերազմների ժամանակ հակառակորդին մետաքսի վաճառքից ստացվող հասույթներից զրկելու համար թուրքերն ոչ միայն սրի էին քաշում մետաքսի արտադրության շրջանների բնակչությանը, այլև անխնա կտրատում ու ոչնչացնում էին թթենու ծառերը՝ շերամապահությանը վերջ տալու նպատակով⁸: Այդ նույն կերպ էին վարվում պարսիկները՝ պարտության դեպքում հարկադրական նահանջի ժամանակ: Այդպես եղավ, օրինակ, Կախեթում օսմանցիների կողմից այդ երկրամասը զրավելուց հետո:

Շահ Աբբաս I-ը (1587–1629 թթ.) իր պետությունը մետաքսի միջազգային առևտրի կենտրոն դարձնելու համար չէր խորշում դիմելու ամենաձայրահեղ միջոցների: Նա, օրինակ, 40 հազար հայ գյուղացիների, 12 հազար վրացիների ու 7 հազար հրեաների բռնագաղթի ենթարկեց Իրանի մետաքսաբեր շրջաններից մեկը՝ Մազանդարան, այնտեղ մետաքսի արտադրությամբ զբաղվելու համար⁹: Իր ոխերիմ թշնամուն՝ Օսմանյան կայսրությանը, իրանական մետաքսի առևտրից ստացվող հասույթներից զրկելու համար պատերազմների ժամանակ շա-

⁶ Նույն տեղում, էջ 213: *St' u նան*՝ H. Inalcik. Bursa and the Commerce of the Levant.—“Journal of Economic and Social History of the Orient”, III/2, Leiden, 1960.

⁷ H. Inalcik. The Ottoman Economic Mind and Aspects of the Middle East from the Rise of Islam to the Present Day, p. 213.

⁸ T. Herbert. Relation du Voyage en Perse et des Indes Orientales. Paris, 1663, pp. 263–265.

⁹ A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVII and XVIII Centuries, vol. I. London, 1939, pp. 99–108.

հր հրամայում էր անապատ դարձնել Թավրիզ–Էրզրումը և առևտրական մյուս ճանապարհները:

Իրանի պետական հեղինակության համար միանգամայն նվաստացուցիչ էր այն հանգամանքը, որ Օսմանյան կայսրության հետ պատերազմներում պարտության դեպքում հաշտության պայմանագիր կնքելիս, որպես կանոն, թուրքերը պարտադրում էին դրա մեջ ներառել հատուկ հոդված. այն է՝ որպես ռազմատուգանք օսմանյան պետությանն որոշակի քանակությամբ մետաքսի մուծումների վերաբերյալ: Ճիշտ է, պայմանագրերում ռազմատուգանքի այդ ձևը հիշատակվում էր “նվերի” անվան տակ, սակայն, անտարակույս, դրանից իրանական կողմի նվաստացուցիչ վիճակը բնավ չէր փոխվում: Հատկանշական է նաև, որ պարսիկների կողմից մետաքսի՝ որպես ռազմատուգանքի հանձնման դադարեցումն անմիջապես տեղիք էր տալիս թուրք-իրանական նոր պատերազմի¹⁰:

XVII դ. եվրոպական առաջատար երկրներում մանուֆակտուրաների բուռն զարգացման ու մետաքսի պահանջարկի մեծացման կապակցությամբ հում-մետաքսը ձեռք էր բերել խոշոր նշանակություն: Արդեն XVI դ. երկրորդ կեսից հում-մետաքսի առևտուրը գալիս էր փոխարինելու համեմունքների առևտրին¹¹: Վկայելով այդ մասին՝ Ստամբուլում հոլանդական հյուպատոսը 1615 թ. մայիսի 2-ին տեղեկացնում էր Նիդերլանդների արտաքին գործերի նախարարությանը, որը դեպի Հնդկաստան տանող ծովային ճանապարհի հայտնագործումից հետո Արևելքի հետ համեմունքների առևտուրն անցել է երկրորդ պլան և, ընդհակառակը, եվրոպական երկրներում մանուֆակտուրաների զարգացման հետևանքով Արևելքի ու Արևմուտքի միջև առևտրի գլխավոր առարկա է դարձել հում-մետաքսը¹², որի հիմնական մատակարարողը դեպի եվրոպական շուկաներ Իրանն էր: Իրանական արտահանության այդ գլխավոր ապրանքն աչքի էր ընկնում իր բարձր որակով և համեմատական էժանությամբ:

Շահ Աբբաս I-ը ծրագրել էր լայն թափ հաղորդել իրանական մետաքսի արտահանմանը լեանտյան ու եվրոպական շուկաներ և դրանով իսկ “մահացու” հարված հասցնել Արևմուտքի երկրների հետ թուրքական մետաքսի առևտրին:

Սակայն այդ ծրագրի իրականացման ճանապարհին առկա էին բազում դժվարություններ: Նախ XVII դ. սկզբին Սեֆյան պետությունը դեռևս լիարժեք ընդգրկված չէր Եվրոպայի առևտրատնտեսական շահերի շրջանակների մեջ, ուստի եվրոպական վաճառականների այցելություններն Իրան կրում էին թռու-

¹⁰ Sk´u TŞrk Sanayi ve ticaret tarihinde Bursada ipekçilik Fahri Dalsar, Calisma vecaleti, Kurulunda. Istanbul, 1960, s. 151.

¹¹ P. R. Harris. An Aleppo Merchant’s Letter-Book.– “The British Museum Quarterly”, vol. XXII, № 3–4, 1960, p. 67.

¹² Ա. Միւրմեւն. Պատմութիւն Հալէպի հայոց, հ. 3, Փարիզ, 1950, էջ 293–302:

ցիկ բնույթ, դիպվածից դիպված, մանավանդ, որ նրանք չէին զբաղվում ցամաքային քարավանային առևտրով: Իսկ բուն իրանական վաճառականներն (պարսիկներ, հրեաներ և այլն) առավելապես զբաղվում էին ներքին առևտրով ու հազվադեպ էին մեկնում եվրոպական երկրներ¹³: Շահի բազմաթիվ փորձերը նրանց նաև ներգրավելու արտաքին առևտրի մեջ ցանկալի արդյունքներ չէին տվել¹⁴: Նույնիսկ Աբբաս I-ի հպատակ բազմաթիվ վաճառականներ Եվրոպայում շահապատկան մետաքսի վաճառքից հետո այլևս չէին վերադառնում Իրան՝ դրանք վատնելով կանանց վրա և վարելով ցուփ ու շվայտ կյանք¹⁵: Ըստ երևույթին, նման դեպքերն այն աստիճան հաճախակի բնույթ էին կրում, որ Վենետիկի հանրապետության սենատը ստիպված էր հրավիրել շահի ուշադրությունը¹⁶:

Այսպիսով՝ այն հանգամանքը, որ Իրանը կատարելապես մեկուսացված էր եվրոպական երկրներից և նույնիսկ Լևանտի առևտրական կենտրոններից, մեծապես դժվարացնում էր Իրանի ամենակարևոր հարստության՝ հում-մետաքսի արտահանման գործը: Դրությունից էլք գտնելու նպատակով շահ Աբբաս I-ը իր մոտ ծառայության անցած անգլիացի Էնտոնի Շիրլիին 1599 թ. դիվանագիտական առաքելությամբ ուղարկեց Եվրոպա: Նրան հանձնարարված էր տեսակցել գերմանական կայսր Ռուդոլֆի, Վենետիկի դոժի, Իսպանիայի թագավորի և այլ միապետների, Հռոմի պապի հետ ու շահի անունից հայտարարել, որ Իրանի դռները բաց են եվրոպական վաճառականների համար: Շիրլիին հանձնարարված էր նաև հնարավորության դեպքում եվրոպական միապետների հետ կնքել առևտրական և քաղաքական պայմանագրեր՝ մասնավորապես հակաօսմանյան ռազմական պակտ¹⁷: Շահական դեսպանի առաքելությունը, սակայն, ոչ մի արդյունք չտվեց: Անարձագանք մնաց նաև նրա հրավերը վաճառականներին՝ ներգրավվելու Իրանի հետ առևտրի մեջ: Ավելին, դեսպանության կազմի մեջ ընդգրկված 18 պարսիկներից համարյա ոչ ոք չվերադարձավ Իրան¹⁸: Դեսպանության 3 քարտուղարներ՝ Ալի Ղուլի խանը, Բոնայեդ բեկը և Օրուջ բեկը, դավանափոխ լինելով մնացին Իսպանիայում, ընդունեցին Դոն Ֆիլիպ, Դոն Դիեգո և Դոն Ժուան (Խուան) անունները: Իսկ դեսպանության մի քանի այլ անձինք

¹³ Bells travels in Asia. A General Collection of the Best and Most Interesting Voyages and Travels by John Pincerton. London, 1811, p. 283.

¹⁴ J. B. Tavernier. Les six voyages de Jean-Baptiste Tavernier en Turquie, en Perse et aux Indes. Paris, 1692, p. 623.

¹⁵ Ռ. Յաուեմի. Թարիխե Իրան, Թեհրան, 1344, էջ 84 (պարսկ.):

¹⁶ С. В. Аветисян. Город Джуга. Тифлис, 1937, с. 83.

¹⁷ E. D. Ross. Sir Anthony Sherley and His Persian Adventure. London, 1933, p. 177.

¹⁸ St' u Sir Anthony Shirley. His relation of his travels into Persia. London, 1613.

մնացին Հռոմում, որոնք ճիզվիտների կողմից նույնպես դավանափոխ եղան և ընդունեցին կաթոլիկություն¹⁹:

Այդ բոլորը ճնշող տպավորություն էր գործել շահի վրա: Դրությունից միակ էլքը նա համարեց միջազգային առևտրի մեջ մեծ փորձ ունեցող հայ վաճառականների՝ հատկապես Նոր Ջուղայի առևտրական կապիտալի ներկայացուցիչների ծառայություններից օգտվելը: Այդ առթիվ ֆրանսիացի Շարդենը գրում է. «...այդ հայերին շահը բերեց իր մայրաքաղաքը որպես հպատակներ, որոնք բոլորից ավելի լավ էին վարժված առևտուր անելու ինչպես թուրքերի, այնպես էլ քրիստոնյաների հետ, քանի որ առաջինները նրանց ասում էին ոչ այնքան որքան պարսիկներին, իսկ երկրորդները նրանց հավատակիցներն են²⁰: Իսկ Շ. Բ. Տավերնիեն գրում է. «Շահ Աբբասն իր հայացքն ուղղեց հայերին, որոնք իր մտադրությունը իրականացնելու համար իրեն ավելի հարմար էին թվում: Ընթաց, որ առույգ և հոգնության դիմացող մարդիկ են, երկար ճամփորդություններ անելու ընդունակ, թե շատ ժուժկալ էին կերուխումի մեջ և խնայասեր, և թե քանի որ քրիստոնյա էին՝ ավելի դյուրությամբ կարող էին առևտուր անել ամբողջ քրիստոնյա աշխարհի հետ²¹»:

Շահն ամեն կերպ խրախուսում էր հայ վաճառականներին՝ զարկ տալու Բրանի արտաքին առևտրին՝ հատկապես հում-մետաքսի արտահանությանը՝ այդ նպատակով հայտնաբերելու նոր ազատ շուկաներ և այլն²²: Շահական կառավարության ու հայ առևտրական դասի միջև ստեղծվում էր շահերի միասնություն, մի տեսակ դաշինք, որը ձեռնառու էր երկու կողմերին էլ: Կառավարությունը խոջաների համար ստեղծում էր առևտրի բարենպաստ պայմաններ, իսկ վերջիններս էլ իրենց առևտրով մեծ եկամուտներ էին բերում շահական գանձարանին: «Ջուղայեցիք պարսից թագավորի համար այն են, ինչ որ ջենովացիները իսպանական թագավորի համար, առանց թագավորի նրանք չեն կարող ապրել, ինչպես և թագավորն առանց նրանց²³,– գրում է Պիետրո դելլա Վալլեն: Ըստ էության, մետաքսի առևտրի միջազգային կենտրոն դարձավ Նոր Ջուղան, որի խոջաները սկսեցին հանդես գալ որպես պետական մենաշնորհ հոչակված

¹⁹ L. I. Bellan. Chah Abbas I. Sa Vie, Son histoire. Paris, 1932, pp. 95–97, 135–136.

²⁰ Chardin. Voyages du Chevalier Chardin en Perse, et autres lieux de l’Orient, t. III. Paris, 1811, p. 86.

²¹ J. B. Tavernier. Նշվ. աշխ., էջ 72–73:

²² N. Steensgaard. The Asian Trade Revolution of the Seventeenth Century. Chicago, 1973, p. 377.

²³ Pietro della Valle. Voyages dans la Turquie, l’Egypte, La Palestine, la Perse, les Indes Orientales et autres lieux, t. IV. Rouen, 1745, p. 263.

“շահլուղ” (“արքունի”) մետաքսի վաճառահանման խոշորագույն կոնտրագենտներ:

Հայ վաճառականներն իրենց առևտրական գործառնությունների ժամանակ շփվում էին ամենատարբեր երկրների ու ժողովուրդների հետ: Գրիգոր Դարանաղցին գրում է, որ ջուղայեցիները լինում էին “ընդ ամենայն երեսս երկրի”, “ի Հնդկիս ներքինս եւ Յեթովպիա, եւ յԵգիպտոս, եւ յամենայն աշխարհս Ֆրանգաց, եւ Կոստանդնուպոլիս, եւ յամենայն աշխարհն Թրակացվող եւ Մոսկոֆայ եւ Վրկանաց, եւ ընդ ամենայն աշխարհն Թուրքաց եւ Քրդաց, Քաղդէացւոց եւ ամենայն Պարսկաստանաց, եւ արեւելայս՝ մինչեւ ի Չինն եւ Մատչինն, ի Թօնն եւ ի Թօնճան, եւ յԱնգլիան, եւ յամենայն աշխարհքն Տաթարաց եւ Ափիսագաց, մինչեւ ի ծագս աշխարհաց անձանօթից”²⁴:

Խոջաներն իրենց առևտրով ոչ միայն հարստացնում էին շահական գանձարանը, այլև իրենք էին կուտակում հսկայական հարստություն: Շրջանառության մեջ գտնվող նրանց կապիտալները հասնում էին միլիոնների: Ջ. Տավերնիեի վկայությամբ՝ ջուղայեցի խոջաներից մեկը մահից հետո թողել էր մոտ 40 միլիոն թումանի հասնող հարստություն²⁵, որն այդ ժամանակների համար հսկայական գումար էր:

Թուրք-իրանական պատերազմների, թուրքական քարավանային ճանապարհների վտանգավորության, եվրոպական վաճառականների համար ցամաքային քարավանային առևտրի անսովոր լինելու և այլ պատճառների հետևանքով եվրոպացիները հնարավորություն չունեին Օսմանյան կայսրության վրայով անմիջական առևտրական հարաբերություններ հաստատել Իրանի հետ ու անձամբ կազմակերպել իրանական մետաքսի արտահանումը Եվրոպա: Ուստի հայ վաճառականները հիմնականում հանդես էին գալիս որպես միջնորդ վաճառականներ, որոնք Իրանից հում-մետաքսը թուրքական ցամաքային ճանապարհով հասցնում էին լևանտյան շուկաներ, իսկ այնտեղից՝ Միջերկրական ծովի վրայով Արևմուտքի երկրներ:

Ընդ որում, լևանտյան քաղաքներում առևտուր էին անում ինչպես բուն Լևանտում՝ Սիս, Այաս, Ադանա, Գարաման, Հոմկլյա, Հալեպ, Բեյրութ, Տրիպոլի, Կ. Պոլիս, Չմյուռնիա, Սալոնիկ, Ալեքսանդրիա, Ալեքսանդրեթ (Հայոց ծոց) և այլ քաղաքներում բնակվող հայ վաճառականները, այնպես էլ՝ Սեֆյան Իրանում գործող հայ խոջաները: Լևանտի առևտրական կենտրոններում բազմամարդ հայկական գաղութների ու գաղթօջախների առկայությունը նշանակալիորեն

²⁴ Գրիգոր Դարանաղցի. Ժամանակագրություն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ, Երուսաղեմ, 1915, էջ 457–458:

²⁵ J. B. Tavernier. Նշվ. աշխ., էջ 418–419:

հեշտացնում էր հայ վաճառականների գործունեությունը և բարձրացնում նրանց մրցողունակությունը:

XVI դարավերջին – XVII դարասկզբին եվրոպական առևտրական կապիտալի ներթափանցումը Մերձավոր Արևելք արդեն ավարտվել էր, և դրանով իսկ Արևելքի շուկան կռվադաշտ էր դարձել Արևմտյան Եվրոպայի առևտրական պետությունների միջև, որոնց գլխավորներն Անգլիան, Հոլանդիան ու Ֆրանսիան էին: Հետևաբար, Լևանտում հայ վաճառականները կամա թե ակամա հանդիպելու էին առևտրական լուրջ մրցակիցների: Այսպես, օրինակ, անգլիական “Լևանտյան ընկերությունն” ամեն կերպ աշխատում էր իրանական մետաքսի արտահանման մենաշնորհը վերցնել իր ձեռքն ու Լևանտում խափանել հայ վաճառականների մետաքսի առևտուրը²⁶:

Այդ իսկ պատճառով իրանահայ վաճառականները գերադասում էին համագործակցել առևտրական այնպիսի գործընկերների հետ, որոնց շահերն իրենց հետ համընկնում էին: Այդպիսի գործընկեր էր, օրինակ, Վենետիկի հանրապետությունը, որը, ի վիճակի չլինելով դիմանալու առաջավոր արդյունաբերական երկրների հետ առևտրական մրցակցությանը, ստիպված էր ամեն կերպ խրախուսել արևելյան, այդ թվում՝ հայ վաճառականների միջնորդական առևտուրն իր հետ՝ այդ նպատակով նրանց տրամադրելով բազմաթիվ արտոնություններ ու իրավունքներ և պարբերաբար իջեցնելով նրանցից գանձվող մաքսատուրքերը²⁷:

XVII դ. առաջին տասնամյակներին մետաքսագործության բնագավառում վենետիկյան հանրապետությունը դեռևս գրավում էր առաջատար տեղերից մեկը²⁸: Նրա մետաքսագործական մանուֆակտուրաներն աշխատում էին գլխավորապես բարձրորակ իրանական հում-մետաքսի հումքային հենքի վրա: Լևանտում Վենետիկյան հանրապետությունն ուներ բազմաթիվ հյուպատոսություններ, որոնք նաև զբաղվում էին առևտրական հարցերով՝ հայ վաճառականների հետ իրագործելով առևտրական խոշոր գործառնություններ: Վենետիկի առևտրական կապիտալն Առաջավոր Արևելքի երկրներում սերտորեն կապված էր տեղական, հատկապես, հայկական առևտրական կապիտալի հետ: Հայ վաճառականների հետ ապրանքափոխանակության ընդլայնումը Վենետիկի համար կենսականորեն կարևոր հարց դարձավ հատկապես XVII դ. երկրորդ կեսին, երբ ֆրանսիական դիվանագիտության դրդումով Թուրքիան ոչ միայն խզեց իր հարաբերությունները Վենետիկի հետ, այլև զրկեց նրան առևտրի բնագավա-

²⁶ Calendar of State Papers. Colonial ser. 1601–1617. London, 1860–1930, № 590, 1622–1624, № 283, 404.

²⁷ G. B e r c h e t. La Repubblica di Venezia e la Persia. Torino, 1896, p. 67.

²⁸ Очерки истории Италии. М., 1959, с. 154.

ռում ունեցած արտոնությունների²⁹: Դա հետևանք էր Օսմանյան կայսրության և Վենետիկի հանրապետության միջև ընթացող 25-ամյա Կրետեի պատերազմի (1645–1669 թթ.), որն անմիջականորեն նաև շոշափում էր երկու պետությունների առևտրական շահերը:

Լևանտում հայ վաճառականները խոշոր առևտուր ունեին նաև Հոլանդիայի հետ, որը հասել էր իր առևտրական հզորության գագաթնակետին ու դարձել դեպի լևանտյան շուկաներ կենտրոնական և հյուսիսային Եվրոպայի ապրանքների հիմնական մատակարարողը: Հոլանդիան մրցակիցների դեմ թե՛ պայքարում աստիճանաբար ընդարձակում էր իր առևտուրը Լևանտում՝ հենվելով 1598 թ. Օսմանյան կայսրության հետ կնքած կապիտուլյացիոն պայմանագրի վրա: Մինչև Իրանի հետ հոլանդացիների կողմից անմիջական առևտրական կապերի հաստատումը (1623 թ.)՝ իրանահոլանդական առևտուրը տեղի էր ունենում գլխավորապես հայ վաճառականների միջոցով, ընդ որում, ինչպես լևանտյան քաղաքներում, այնպես էլ անմիջականորեն Հոլանդիայում: Ամստերդամը հայերին ծանոթ էր դեռևս XVI դ. 60-ական թվականների³⁰: Ընդամենը մեկ հարյուրամյակ անց՝ 1660-ական թվականներին, միայն Ամստերդամում արդեն հաշվվում էին 60 հայկական առևտրական տուն³¹:

1612 թ. Օսմանյան կայսրության հետ կապիտուլյացիոն պայմանագրի կնքումից հետո Նիդերլանդները զարկ տվեցին իրենց լևանտյան առևտրին՝ հատկապես հում-մետաքսի ձեռք բերմանը հայ և հույն վաճառականների³²: 1623 թ., երբ հոլանդական Արևելահնդկական ընկերությունը շահ Աբբաս I-ից ստացավ Իրանում ազատ առևտրի իրավունք, հայ-հոլանդական առևտրական կապիտալի համագործակցությունն ավելի լայն ընդգրկում ունեցավ³³:

Լևանտում հայ վաճառականները ծավալուն առևտուր ունեին նաև Ֆրանսիայի հետ: Միջերկրական ծովն ավանդաբար կարևոր տեղ էր գրավում ֆրանսիական քաղաքականության մեջ ու Լևանտի հետ առևտուրը կենսականորեն

²⁹ Н. А. Смирнов. Россия и Турция в XVI–XVII вв., т. 1.– «Ученые записки», вып. 94. М., 1946, с. 64.

³⁰ Ա. Մարտիչան. Հոլանդիան և հայերը ԺԶ–ԺԹ դարերում, Վիեննա, 1926, էջ 14:

³¹ Fr. Macler. Quatre Conférences sur l'Arménie et les Arméniens Faites en Hollande. Paris, 1932, p. 251.

³² H. Watjen. Die Niederländer im Mittelmeergebiet zur Zeit ihrer höchsten Machtstellung Abhande Z. Verkehrs und Seegeschichte, Bd. II. Berlin, 1909, S. 134–136, 146.

³³ H. Dunlop. Source pour servir à l'histoire de la compagnie des Indes Orientales et La Hay (հրատ. վայրը նշված չէ), 1930, p. 14.

կարևոր էր Տրանսիայի համար: Կարդինալ Ռիշելյեն նույնիսկ ստեղծեց Լևանտի գործերով պետական քարտուղարի պաշտոն³⁴:

Չնայած այն հազնամանքին, որ հայ վաճառականների միջոցով հուլմ-մետաքսի արտահանումն Օսմանյան կայսրության ցամաքային քարավանային ճանապարհով հաջողությամբ իրագործվում էր՝ սակայն, այնուամենայնիվ, շահ Աբբաս I-ին հանգիստ չէր տալիս այդ ճանապարհից հրաժարվելու և Իրանի արտաքին առևտրի համար նոր այլընտրանքային ուղի գտնելու սնեռուն գաղափարը: Դրա համար առկա էին լուրջ հիմքեր: XVII դ. առաջին քառորդին Օսմանյան կայսրության կողմից իրականացվող անթաքույց հակաիրանական քաղաքականության և առանձին ընդմիջումներով կրկնվող թուրք-իրանական պատերազմների պատճառով Սեֆյան պետությունը հայտնվել էր Արևմուտքից համարյա կատարյալ մեկուսացվածության վիճակում: Անկախ այդ բոլորից Օսմանյան կայսրությունում առևտրական քարավանների կողոպուտը շարունակվում էր մնալ որպես սովորական երևույթ: «Ողջ Թուրքիան լի է ավազակներով, – գրում է Տավերնիեն, – որոնք թափառում են խոշոր խմբերով և ճանապարհներին դարանակալում են հայ վաճառականներին: Երբ հանդիպում են հարուստ վաճառականներ կողոպտում են նրանց և հաճախ զրկում են նաև կյանքից»³⁵: Առհասարակ, նույնիսկ ուշ միջնադարում Օսմանյան կայսրության մեջ առևտուր անելու եղանակը քարավաններ կողոպտելն էր, այդ մասին է վկայում ֆրանսիացի Ռիկոն³⁶: Առաքել Դավրիժեցին ևս նշում է, որ ապստամբ փաշաները, դերեբեյերն ու այաններն անխնա թալանի էին ենթարկում իրենց սահմաններով անցնող առևտրական քարավանները³⁷: Գողոթյունը, ավազակությունը, կողոպուտն ու թալանն այն աստիճանի տարածված երևույթներ էին Փոքր Ասիայում, որ անգլիացի ճանապարհորդ Պարրին այդ երկրամասն անվանել էր «գողերի երկիր»³⁸: Շահ Աբբաս I-ի պալատական պատմիչ Իսքենդեր Մոնշին հաղորդում է, որ քիչ չէին դեպքերը, երբ թուրքական իշխանությունները բռնագրավում էին հենց իր շահի ապրանքները: «Ահմեդ փաշան (Վանի կուսակալը – Վ. Բ.), – վկայում է

³⁴ Gay de Montanella R., Valoration en et Mediterraneo. Marseil, 1952, p. 118.

³⁵ J. B. Tavernier. Նշվ. աշխ., էջ 78:

³⁶ Ricaut. Histoire de l'Etat present de l'Empire Ottoman. Paris (հրատ. թվականը նշված չէ), p. 219.

³⁷ Առաքել Դավրիժեցի. Պատմություն Առաքել վարդապետի Դարիժեցույ սակս դիպուածոց Հայաստանեայց եւ գաւառին Արարատաց եւ ի մասին Գողթան գաւառի, սկսեալ ի ՌԾԱ թուականին Հայոց մինչ ի ՌՃԺԱ թ., երրորդ տպագրութիւն, Վաղարշապատ, 1896, էջ 573:

³⁸ Տե՛ս E. D. Ross. Նշվ. աշխ., էջ 155:

նա, – 1602 թ. գայթակղվելով խասսեի շերիֆե (արքունական – Վ. Բ.) վաճառականներից մեկի գույքով՝ սպանեց նրան և ձեռք բերեց ամբողջ ապրանքը³⁹:

Այս բուլոնի եզրակացությունը կարող էր լինել մեկը. անհրաժեշտ էր գտնել Իրանի արտաքին առևտրի համար այլընտրանքային ճանապարհ: Այդպիսին կարող էր լինել Պարսից ծովի վրայով ծովային ճանապարհը դեպի Բաց օվկիանոս: Թեև այն դեռևս XVI դ. գործող առևտրական ուղի էր, սակայն թուրքական ճանապարհի հետ համեմատած, Իրանի արտաքին առևտրում ուներ երկրորդական նշանակություն: Ուստի, շահը երազում էր փոխել իրերի այդ վիճակը և Պարսից ծոցը դարձնել Իրանի համար բանուկ առևտրական ճանապարհ: Ծրագրի իրագործումն ոչ միայն իրանական գանձարանին խոշոր եկամուտներ կբերեր, այլև քաղաքական բնույթի բազում առավելություններ, մասնավորապես Սեֆյան պետությունը շոշափելի տնտեսական վնաս կհասցներ իր ախոյան Օսմանյան կայսրությանը՝ դադարեցնելով իրանական ապրանքների՝ հատկապես հում-մետաքսի արտահանումը թուրքական քարավանային ճանապարհներով: Շահը ենթադրում էր, որ դա ավելի «կարճակեր» Իրանի ձեռքերն իր արևմտյան հարևանի հետ փոխհարաբերություններում: Այդ ծրագրի իրագործումը նաև կնշանակեր Սեֆյան պետության կենտրոնական նահանգների ու առաջին հերթին մայրաքաղաք Սպահանի տնտեսական նշանակության արագ աճ, որը շահի ներքին քաղաքականության գլխավոր խնդիրներից էր:

Կարևոր է նշել, որ առևտուրը դեպի ծովային ճանապարհ շրջելու հարցում Իրանի ու արևմտյան մի շարք տերությունների՝ հատկապես Անգլիայի և Հոլանդիայի շահերը միանգամայն համընկնում էին: 1600 թ. անգլիական Արևելաինդիական և 1602 թ. հոլանդական համանուն ընկերության հիմնադրումից հետո այդ ընկերություններն իրենց կարևորագույն խնդիրն էին համարում Արևելք – Արևմուտք առևտուրն ամբողջապես տեղափոխել դեպի օվկիանոսային ուղիները: Այդ հարցը, սակայն, կապված էր մի շարք լուրջ դժվարությունների հետ: Դեռևս 1515 թ. պորտուգալացի ծովագնաց Ալֆոնսո դ'Ալբուքերքը գրավել էր Պարսից ծոցի բանալի Հորմոզ կղզին, այնտեղ կառուցել էր ամրոց, Հորմոզի նեղուցի մոտ շրջափակել էլքը դեպի Հնդկական օվկիանոս: Պորտուգալացիները ծոցի ողջ տարածքում արգելքներ էին հարուցում եվրոպական մյուս տերությունների նավագնացության, ինչպես նաև իրանցի վաճառականների առջև, նեղուցով անցնող նավերից գանձում էին չափազանց բարձր մաքսատուրքեր, թույլ տալիս անօրինականություններ և այլն: Նման իրավիճակը ծայրահեղորեն դժվարացնում էր տեղական վաճառականների՝ պարսիկների, արաբների և

³⁹ Ի սրբենդեր բեկ Թորքեման Մոնշի. Թարիխե այեմ արայիե Աբբասի, Թեհրան, 1313, էջ 440 (պարսկ.):

տարածաշրջանի այլ ժողովուրդների գործունեությունը, խափանում նրանց առևտուրն ոչ միայն ծոցի ավազանի երկրամասերի բնակչության, այլև Հնդկաստանի ու Հարավարևելյան Ասիայի երկրների հետ: Ուշագրավ տեղեկություններ կան այն մասին, որ պորտուգալացիների կողմից նույնամասն վերաբերմունքի էին արժանանում նաև քրիստոնյա ազգերի վաճառականները՝ հայերը, հույները և այլք: Դեռևս 1563 թ. Պորտուգալիան ընդունել էր մի օրենք, որը որոշակի արգելքներ էր հարուցում իրանահպատակ, այդ թվում՝ հայ վաճառականների առջև՝ սահմանափակելով նաև նրանց Պորտուգալիա այցելելու իրավունքը⁴⁰: Իսկ 1596 թ. Իսպանիայի թագավոր Ֆիլիպ II-ը հրահանգ էր տվել Հնդկաստանի իր փոխարքա Ֆրանսիսկո դը Կամային՝ «հսկել Օրմուզի հրամանատարին տրված հրամանի գործադրության, առանց գայթակղության տեղի տալու, արգելելու համար, որ վենետիկցիներ, հայեր և ուրիշ օտարականներ մուտք գործեն Հնդկաստանի մեջ»⁴¹:

Սեֆյան շահ Թահմազը (1524–1576 թթ.) իր գահակալության՝ ավելի քան կես դարի ընթացքում ի վիճակի չեղավ արդյունավետ պայքար կազմակերպելու պորտուգալացիների դեմ⁴²: Օսմանյան թուրքերի՝ համարյա անընդմեջ ներխուժումներն Իրան բարենպաստ իրավիճակ էին ստեղծում, որպեսզի պորտուգալացիները տեր ու տնօրինություն անեն Պարսից ծոցում:

Շահ Աբբաս I-ի բազմաթիվ փորձերը՝ պայմանավորվել պորտուգալացիների հետ, որպեսզի նրանք թույլ տան իրանական ապրանքներն անարգել արտահանել ծոցով, մնացել էին անպատասխան: Ջուրկ լինելով ռազմական նավատորմից ու մանավանդ մտավախություն ունենալով, որ պորտուգալացիներին պատերազմ հայտարարելու դեպքում Օսմանյան կայսրությունը կօգտվի հարմար առիթից և կվերսկսի պատերազմական գործողություններն իր դեմ՝ շահը խոհեմաբար ձեռնպահ էր մնում նման վտանգավոր քայլից: Նրան զսպում էր նաև այն հանգամանքը, որ ժամանակի երկու հզորագույն պետությունները՝ Պորտուգալիան ու Իսպանիան, 1580 թ. միավորվել էին թագավորական ունիայով և իրենց շահերը վտանգվելու դեպքում հանդես կգային համատեղ:

Իր մասշտաբներով վերոնշյալ վիթխարի ծրագրի իրագործումը շահը պլանավորել էր կյանքի կոչել մի քանի փուլերով: Նրա առաջին փուլը հենց կապված էր Հայաստանից հայերի բռնագաղթի հետ: Ռուս պատմաբան Բ. Պ. Պետրուշնսկին իրավացիորեն նկատում է, որ շահ Աբբասը, մետաքսի միջազգային առևտրի կենտրոնը Հին Ջուդայից տեղափոխելով Իրան, այնուհետև այդ ապ-

⁴⁰ Ռ. Կյոնլյեկյան. Հայ-պորտուգալական հարաբերությունները, Երևան, 1986, էջ 54:

⁴¹ Նույն տեղում:

⁴² Ֆարհանգե ջեղղրաֆիե Իրան, ջելդե 4, Թեհրան, 1335, էջ 15 (պարսկ.):

րանքի առևտրի ուղին մտադիր էր Սպահանի վրայով ուղղել դեպի Պարսից ծոց⁴³:

Ծրագրի երկրորդ փուլն էր լինելու Պարսից ծոցի նավահանգիստներից և ռազմավարական նշանակություն ունեցող կետերից պորտուգալացիների վտարումն ու էլքի ապահովումը դեպի համաշխարհային օվկիանոս: Նաև տեսակետ կար, որ Իրանի արտաքին առևտրի ուղին դեպի Պարսից ծոց ուղղելու քաղաքականությանն «ընդառաջում էր նաև շահի ռազմաքաղաքական խորհրդատուների՝ անգլիացի Շիրլի եղբայրների նպատակներին և գուցե առանց նրանց հուշարկումների չէ, որ գլուխ բերվեց հայերի բռնագաղթը»⁴⁴: Այս վարկածը միանգամայն իրական է թվում, եթե, մանավանդ, նկատի առնենք, որ XV դ. կեսերից անգլիացիները եռանդուն փորձեր էին կատարում Պարսից ծոցի գոտուց պորտուգալացիներին դուրս մղելու և Հորմոզի վրայով կատարվող առևտրին տիրանալու համար⁴⁵:

Իր լայնահուն այս ծրագրերի իրականացման հույժ խոշոր կարևորության գիտակցումը շահին ստիպեց խիզախել: Նա ռազմական գործողություններ սկսեց պորտուգալացիների դեմ և 1601–1602 թթ. նվաճեց Բահրենյան կղզիները⁴⁶: Հակառակ Իսպանիայի սպառնալիքներին՝ շահը դրանք այլևս չվերադարձրեց: Հաջողության զարգացումը որոշ ժամանակ ընդհատվեց 1603 թ. Օսմանյան կայրության դեմ Իրանի սկսած հերթական պատերազմի հետևանքով: Այդ պատերազմը, որի ժամանակ մետաքսի արտահանումը Փոքր Ասիայի վրայով մեծապես դժվարացել էր՝ ահռելի ֆինանսական վնաս հասցնելով շահական գանձարանին, վերջնականապես Արբաս I-ին համոզեց՝ Պարսից ծոցն առևտրի համար բաց անելու իր ծրագիրն անհետաձգելի խնդիր է Սեֆյան պետության համար: Մանավանդ որ պորտուգալացիները ծոցում նախկինի պես շեշտված թշնամական քաղաքականություն էին վարում իրանահպատակ, այդ թվում՝ հայ վաճառականների նկատմամբ՝ նրանցից գանձելով անօրինական ու կամայական մաքսատուրքեր՝ երբեմն էլ դիմելով անթաքույց հալածանքների⁴⁷: Այդ քաղաքականությունը նպատակ ուներ ստիպել շահին, որ նա հետ վերադարձնի Բահ-

⁴³ И. П. Петрушевский. Очерки по истории феодальных отношений Азербайджана и Армении в XVI – начале XIX вв. Л., 1949, с. 62.

⁴⁴ Ա. Հոսթինսոնի պատմությունը հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Երևան, 1959, էջ 99:

⁴⁵ R. Hakluyt. The Principal Navigations, Voyages and Discoveries of the English Nation, vol. III. Glasgow, 1905, p. 58.

⁴⁶ R. Vada la. La golfe Persique. Paris, 1920, p. 14.

⁴⁷ Աբուլղասեմ Սոհաբ. Թարիխե զենդեգանիե շահ Արբասե քերի, բախշե ավվալ, Թեհրան, 1325, էջ 130 (պարսկ.):

րենյան կղզիները: Լիսաբոնի ծրագրերի մեջ էր մտնում նաև իրանահայ վաճառականներին կաթոլիկության պարտադրումը՝ նրանց վերածելու համար իրենց առևտրական գործակալների:

Դրությունից ելք գտնելու նպատակով, գուցե և շահի թելադրմամբ՝ հայ վաճառականները դիմում են Էջմիածնի կաթողիկոս Մելիքսեթին՝ թախանձագին խնդրելով, որ դիմի Հռոմի պապին՝ միջնորդելու իսպանական թագավորի առջև, որպեսզի նա բարեխոսի պորտուգալացիների մոտ հայ վաճառականներից գանձվող մաքսատուրքերը թեթևացնելու համար: Իր նամակում կաթողիկոսը գրում էր. «Զի յանուանի շահաստանի անդ յորմուտ (Հորմուզ – Վ. Բ.), որ ի Պարսից ծոցին կայ, յորում յայլոց քրիստոնեայ վաճառականաց վասն տուրեւ առիկ վաճառաց մտիցն եւ ելիցն ի սակ տասանորդի հայն պահանջին, ի նոցունց Հայոց նոյն սակ կրկին չափով որպէս յանհաւատիցն⁴⁸ պահանջի, ի մեծ վնաս նոցին եւ իրաց եւ համբաւոյ⁴⁹»:

XVI դ. վերջին քառորդից բրիտանական նավատորմը եռանդուն պայքար էր սկսել Հնդկական օվկիանոսի ավազանից պորտուգալացիներին դուրս մղելու համար: Առաջին հաջողությունը ձեռք բերվեց 1588 թ., երբ նրանք Պարսից ծոցում պարտության մատնեցին պորտուգալացիներին⁵⁰:

Ոչ միայն Հնդկական օվկիանոսի ավազանում, այլև համաշխարհային օվկիանոսի մյուս հատվածներում Անգլիայի հակաիսպանական քաղաքականության աննախընթաց ակտիվացումը ստիպեց իսպանական թագավորին փոփոխություններ մտցնել իր արևելյան քաղաքականության մեջ: Ֆիլիպ III-ը երկու անգամ՝ 1602 և 1607 թթ., դեսպանություններ ուղարկեց Իրան՝ շահին առաջարկելով կնքել դաշնակցային պայմանագիր: Աբբաս I-ին շահագրգռելու նպատակով նա իր դեսպանի՝ Անտոնիո դե Գուլվեայի միջոցով հայտարարում էր, որ Միջերկրական ծովում գործող իսպանական նավատորմը պատրաստ է ջախջախիչ հարված հասցնելու Իրանի թշնամուն՝ Օսմանյան կայսրությանը⁵¹: Այնուհետև Ֆիլիպ III-ը Նեապոլում իր դեսպան Վիքոնդ դե Բենավենտի միջոցով շահին ներկայացրեց գրավոր մի առաջարկություն, որտեղ հավանություն էր տալիս ի-

⁴⁸ Հայերը, ինչպես նաև քրիստոնյա այլ ժողովուրդներ, որոնք կաթոլիկներ չէին, Հռոմի պապի կողմից հռչակվել էին որպես «անհավատ հերետիկոսներ»:

⁴⁹ Տե՛ս «Հանդես ամսօրեայ» (Վիեննա), 1934, № 2, էջ 238:

⁵⁰ G. N. C u r z o n. Persia and the Persian Question, vol. 2. London, 1892, p. 418.

⁵¹ A. G o u v e a. Histoire Orientale des grands progres de l'Eglise catholique. Bruxelles, 1609, pp. 207, 477–478.

րանական մետաքսը Պարսից ծոցով Եվրոպա արտահանելու շահի գաղափարին՝ խոստանալով այդ հարցում աջակցել⁵²:

Առաջարկությունը հետաքրքրեց շահին. նա մի դեսպանություն կազմեց՝ նրան հանձնարարելով իր անունից բանակցել իսպանական թագավորի հետ: Այդ դեսպանության կազմում, որը 1608 թ. մեկնեց Եվրոպա, ընդգրկվեց նաև ջուդահայ մեծահարուստ վաճառական Եղիգարի որդի խոջա Սաֆարը: Վերջինս մետաքսի վաճառահանման հարցերի գծով շահի խորհրդականն էր և շահական ապրանքների վաճառքով զբաղվող արքունի («խասսեի շարիֆե») վաճառականը⁵³:

Քանի որ դեսպանությունը Իսպանիա էր մեկնելու ծովային ճանապարհով՝ Պարսից ծոցով, շահը Սաֆարին տրամադրեց 50 հակ (բեռ) հում-մետաքս, որպեսզի դրանով սկիզբ դրվի մետաքսի արտահանման նոր ճանապարհին: Սակայն ծոցի ճանապարհով առևտրական նոր ուղի բացելու անդրանիկ այս փորձն ավարտվեց կատարյալ ձախողմամբ: Նախ խոջա Սաֆարի և դեսպանության կարևոր դեմքերից մեկի՝ Դենգիգ բեկի միջև տեղի ունեցավ վեճ ու ընդհարում, որի պատճառն այն էր՝ վերջինս բռնագրավում է փորձական վաճառքի համար խոջա Սաֆարին հանձնված 50 հակ հում-մետաքսը և այն նվիրում իսպանական թագավորին: Ի նշան բողոքի՝ խոջան բաժանվում է դեսպանությունից ու եվրոպական մայրաքաղաքներում վարում անջատ բանակցություններ:

Այսպիսով՝ շահական դեսպանությանը չի հաջողվում իրագործել իր հիմնական առաքելությունը: Ինչ վերաբերում է խոջա Սաֆարի անջատ գործունեությանը, ապա այն արգասավորվում է շոշափելի հաջողությամբ: Նախ, այդ վաճառական-դիվանագետը խորությամբ ուսումնասիրում է Եվրոպայի ընդհանուր վիճակը, իսկ, ամենակարևորը, Վենետիկի հանրապետության հետ ձեռք է բերում պայմանավորվածություն՝ հայ վաճառականների առևտուրը ծավալելու վերաբերյալ⁵⁴:

Առաջին անհաջողությունը, սակայն, չվիատեցրեց շահին: 1615 թ. Սուրաթի մոտ բրիտանական ռազմական նավատորմը ջախջախիչ պարտության մատնեց պորտուգալական «անպարտելի արմադային»⁵⁵: Այդ իրադարձությունից հետո շահ Աբբասը եզրակացրեց, որ պորտուգալացիներն այլևս ի վիճակի չեն պահպանելու իրենց դիրքերն Արևելքում, և, ընդհակառակը, ուժեղացող Անգլիան

⁵² Ն. Ֆալսաֆի. Չենդեգանիե շահ Աբբասե ավվալ, ջելդե 4, Թեհրան, 1972, էջ 178 (պարսկ.):

⁵³ G. Berchet. Նշվ. աշխ., էջ 203, 285:

⁵⁴ Ղ. Ալիշան. Միսական, Վենետիկ, 1893, էջ 419:

⁵⁵ G. Birdwood and W. Foster. The Register of Letters of the Governor and Company of Merchants of London Trading into the East Indies (1600–1619). London, 1893, p. 56.

դառնում է այդ աշխարհամասում հիմնական քաղաքական գործոն: Ուստի, երբ 1615 թ. բրիտանական Արևելահնդկական ընկերությունը Սպահան ուղարկեց իր ներկայացուցիչներ Ռիչարդ Ստիլին և Ջոն Գրովտերին՝ առևտրական համաձայնագիր կնքելու համար: Շահն անմիջապես ընդառաջ գնաց և ընկերությանը շնորհեց ֆիրման (հրաման-արտոնագիր), որն անգլիական վաճառականներին իրավունք էր տալիս Ջասկում, Շիրագում ու Սպահանում բացել առևտրական գրասենյակներ և առևտրական գործունեություն ծավալել⁵⁶:

1616 թ. դեկտեմբերին Արևելահնդկական ընկերության նախնի Պարսից ծոցի Ջասկ նավահանգիստ ժամանեց ընկերության կարևոր դեմքերից մեկը՝ Էդվարդ Կոննոկը: Նրա առաքելության նպատակն էր իրանական մետաքսի ողջ առևտուրը շրջել դեպի ծովային ճանապարհ և Լոնդոնը վերածել մետաքսի առևտրի համաշխարհային շուկայի⁵⁷: Երկու տարի անց՝ 1618 թ., շահն Արևելահնդկական ընկերության ներկայացուցիչներ Ջիլզ Հոփսի և Թոմաս Պարկերի հետ կնքեց առևտրական պայմանագիր, ըստ որի՝ ընկերությունը ձեռք էր բերում Իրանի ողջ հում-մետաքսի գնման ու վաճառահանման մենաշնորհը⁵⁸: Պայմանագրում հատուկ շեշտվում էր, որ անգլիացիները պարտավորվում են մետաքսի արտածումն իրագործել բացառապես ծովային ճանապարհով, իսկ շահը պարտավորվում էր հում-մետաքս չվաճառել իսպանացիներին և պորտուգալացիներին ու այլևս մետաքս չարտահանել թուրքական ցամաքային ճանապարհներով: Բացի այդ, իրանական կողմը պետք է երկրի հյուսիսային մետաքսաբեր շրջաններից մետաքսը հասցներ Պարսից ծոցի Բենդեր-Աբբաս նավահանգիստ և հանձներ անգլիացիներին: Վերջիններս իրավունք էին ստանում Գիլանում և մետաքսաբեր այլ շրջաններում առանց միջնորդի ձեռք բերել այդ ապրանքն ու գնումներ կատարելու համար տեղերում ունենալ մշտական ներկայացուցիչներ: Արևելահնդկական ընկերությունը նաև իրավունք էր ստանում Սեֆյան պետության տարածքում ազատորեն կատարել ապրանքների տեղափոխություն, ազատվում նաև մաքսատուրքեր վճարելուց և այլն⁵⁹:

Ի դեպ, պայմանագրին նախորդող բանակցությունների ժամանակ անգլիացիները նաև հարց բարձրացրին Պարսից ծոցում իրենց տրամադրել որևէ ռազմական արժեք ունեցող նավահանգիստ, սակայն շահը կտրականապես այդ առաջարկը մերժեց⁶⁰:

⁵⁶ R. Savori. Iran under the Safavids. Cambridge, 1980, pp. 113, 195.

⁵⁷ A. Wilson. The Persian Gulf. London, 1954, p. 133.

⁵⁸ Մոդրոսդեմ Ղուլում Հոսեյին. Քելիդե խալիջե Ֆարս, Թեհրան, 1332, էջ 25 (պարսկ.):

⁵⁹ A. Wilson. Նշվ. աշխ., էջ 139:

⁶⁰ N. Steensgaard. Նշվ. աշխ., էջ 333:

Միանգամայն ակնհայտ էր, որ պայմանագրի այն կետը՝ պարտավորեցնում էր իրանական կառավարությանը դադարեցնել մետաքսի արտահանումը թուրքական ցամաքային ճանապարհներով, անմիջականորեն շոշափում հայ վաճառականների շահերը և, ըստ էության, ուղղված էր նրանց դեմ: 1618 թ. պայմանագիրն ուներ կապիտուլյացիոն բնույթ: Դրանով անգլիացիները լուրջ քայլ էին կատարում իրանական շուկա ներթափանցելու և այն մենաշնորհացնելու ուղղությամբ: Բրիտանական գործարար շրջանները ենթադրում էին այդ պայմանագրի օգնությամբ ոչ միայն ձեռք բերել հսկայական շահույթներ, դառնալ միանձնյա միջնորդ Եվրոպայի ու Իրանի միջև ծովային առևտրի բնագավառում, այլև Իրանը վերածել անգլիական ապրանքների վաճառահանման լայնածավալ շուկայի:

Հայ վաճառականների համար պարզ դարձավ, որ հայտնվել է հզոր և ճկուն մրցակից⁶¹: Նրանք հիանալի հասկանում էին՝ ծովային ճանապարհների վրա իրենք չեն կարող մրցակցել առևտրական ու ռազմական հզոր նավատորմիդներ ունեցող անգլիացիների հետ, և, որ իրենց ուժը ցամաքային քարավանային առևտրի մեջ է, որտեղ համարյա մրցակիցներ չունեն: Ուստի, պատահական չէ, որ դեռ բանակցությունների փուլում հայ վաճառականները փորձում էին խափանել պայմանագրի կնքումը:

Երբ պայմանագրի ստորագրումը դարձավ իրողություն, հայ խոջաները դիմեցին շահին՝ խնդրելով չեղյալ հայտարարել պայմանագիրը: Մակայն 1619 թ. հունվարին Աբբաս I-ը պատասխանում է, որ հարց անգամ չի կարող լինել մետաքսի արտահանությունը քարավանային ճանապարհներով վերսկսելու մասին: Մակայն զրույցի ընթացքում մի հայ վաճառական շահին առաջարկում է 5 թուման վճարել միայն 1 բեռին՝ որպես արտահանման մաքս, եթե ճանապարհները բացվեն: Աբբասն ասում է, որ այդ դեպքում ինքը կհրամայի անմիջապես վերսկսել արտահանությունը քարավանային ուղիներով⁶²: Շահը հայտարարում է, որ մետաքսի հարցն առևտրական խնդիր է, և, ով ավելի շատ կվճարի, նա էլ կստանա արտահանման իրավունքը⁶³:

1619 թ. սեպտեմբերի 14-ին շահը մետաքսն աճուրդի հանեց, որին ներկա էին Արևելահնդկական ընկերության գործակալներ, կարմեյան միաբանության ներկայացուցիչ Խուան Թադեոն և հայ վաճառականներ: Խ. Թադեոն հայտարարում է, որ ինքը լիազորված չէ մասնակցելու աճուրդին: Հայ վաճառականներն էլ

⁶¹ K. Bayani. Les relations de l'Iran avec l'Europe occidentale a l'epoque Safavide. Paris, 1937, pp. 116–117.

⁶² Pietro della Valle. Նշվ. աշխ., էջ 271–272:

⁶³ Ն ա սր ո լ լ ա Ֆ ա լ ս ա Ֆ ի. Թարիխե րեվաբաթե Իրան վա Ուրոփա դար դովրեե Սեֆնիյե, Ղեսմաթե ավվալ, Թեհրան, 1937, էջ 68 (պարսկ.):

հայտարարում են, որ պատրաստ են վճարել 1 բեռ մետաքսի համար 50 թուման: Անգլիացիների վերջնական գինը 43.2 թուման էր: Մերժելով շահի առաջարկը՝ մետաքսը գնել հայերի առաջարկած գնով, անգլիացիները դա հիմնավորեցին նրանով, որ հայ վաճառականների առաջարկած գինը պայմանավորված էր վճարման այլ պայմանների հետ: Այն է՝ նրանք իրենց շահույթները ստանում էին ապրանքը Հալեպում վաճառելով, հետո միայն վճարում արքունական գանձարանին: Մինչդեռ իրենցից պահանջվում էր, որպեսզի մետաքսի համար կանխիկ վճարեն: Բսկ երբ շահը հայտարարում է, թե դա պատճառ չէ, անգլիացիները պատասխանում են, որ այդ դեպքում հայերը պետք է առևտուր անեն վնասով և շեշտում՝ իրենք այդ գնով չեն կարող մասնակցել մետաքսի առևտրին⁶⁴:

Շահը չեղյալ է հայտարարում անգլիացիների հետ կնքած պայմանագիրը և նորջուղայեցի վաճառականներին հանձնում հում-մետաքսի արտահանման մենաշնորհը⁶⁵: Հայ վաճառականների “հաղթանակն” ամենագոր Արևելահնդկական ընկերության նկատմամբ պայմանավորված էր նրանով՝ նախ, առևտուր անելիս նրանք բավարարվում էին ցածր շահույթով, մինչդեռ անգլիական ընկերությունը, որը շփացել էր հնդկական առևտրից ստացվող հսկայական եկամուտներից, չափազանց մեծ ախորժակ ուներ և գործարքների մեջ էր մտնում միայն այն դեպքում, երբ վստահ էր՝ դրանք իր համար կապահովեն բարձր շահույթներ: Այսպես, սվյայներ կան, որ առանձին ժամանակներում ընկերությունն առևտրական գործարքներից ստանում էր 340 տոկոս և ավելի շահույթ⁶⁶: Ընկերության աշխատակից Ջոն Ֆրայերը 1677 թ. իր ղեկավարությանը գրում էր, որ “հայերը ներքին առևտրի բարդությունների և նրբությունների մեջ չափազանց հմուտ են: Ջինված այդ հմտություններով և տիրապետելով տնտեսվարության արվեստին, մասնագիտանալով առևտրական գործարքների մեջ և լինելով իրենց ազգին հատուկ ազնվության կրողներ՝ նրանք ճամփորդում են ամենահեռավոր թագավորություններ: Նրանք կարող են 50 շիլինգով ճամփորդել այնպիսի վայրեր, որտեղ մենք չենք կարող նույնիսկ 50 թումանով: Այդ հայերը շրջում են երկրագնդով մեկ՝ մրցակցելով տարբեր վայրերի վաճառականների հետ”⁶⁷:

⁶⁴ N. Steensgaard. Նշվ. աշխ., էջ 334:

⁶⁵ С. В. Тер-Аветисян. Նշվ. աշխ., էջ 44:

⁶⁶ Г и б б и н с. Очерк истории английской торговли и колонии. СПб., 1899, с. 8.

⁶⁷ J. Fryer. A New Account of East India and Persia 1672–1681, vol II. Liechtenstein, 1967, pp. 249–250.

Առհասարակ, դեռևս XVII դարասկզբին անգլիացիները չէին հարմարվել Արևելքում կատարվող առևտրի ձևերին⁶⁸: Պատահական չէ, որ Արևելահնդկական ընկերության ղեկավարությունը իր աշխատակիցներին խորհուրդ էր տալիս բնակվելու Նոր Ջուդայի հայ առևտրականների տներում, սովորելու հայերեն, առևտուր վարելու նրանց մեթոդներն՝ «իրենց որակավորումը բարձրացնելու համար»⁶⁹:

Տարակույս չի կարող լինել, որ անգլիացիների ու հայ վաճառականների միջև ընտրություն կատարելիս շահը պետք է նախապատվություն տար վերջիններին: Նախ, խոջաները իր հպատակներն էին, մինչդեռ անգլիացիների նկատմամբ հսկողությունը բացառվում էր: Այնուհետև, շահը հայ վաճառականների հետ կապում էր բազմաբնույթ տնտեսական ու քաղաքական ծրագրեր: Հենց դա էր պատճառը, որ ինչպես Աբբաս I-ը, այնպես էլ նրա ժառանգորդները գերադասել են մետաքսի արտահանումն ու վաճառքը իրականացնել անմիջականորեն հայ վաճառականների միջոցով:

Ենթադրվում է նաև, որ հայ խոջաների օգտին և ի վնաս անգլիական ընկերության որոշակի աշխատանք են տարել թուրքերի դեմ շահ Աբբաս I-ի տարած հաղթանակներում փառաբանված գորավարներ, ծագումով հայ, բանակի գլխավոր հրամանատար Ալլահվերդի խաներն ու Կարճկա խաները⁷⁰:

Այսպիսով, անգլիացիների առաջին լուրջ փորձն իրանական շուկայում ամրապնդվելու ուղղությամբ հաջողություն չունեցավ: Դրանում, անշուշտ, որոշակի դերակատարություն են ունեցել հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչները: Այսպես, Իրանում կապիտուլյացիաների ռեժիմն ուսումնասիրող պարսիկ պատմաբան Մ. Փանահիանը գրում է, որ XVII դ. «Իրանում արևմտաեվրոպական գաղութարարների դեմ պայքարի կազմակերպման գործում բացառիկ կարևոր դեր են խաղացել հայ վաճառականները, որոնք օգտվում էին իրանական հասարակայնության տարբեր խավերի մեծ աջակցությունից՝ հանդես գալով ստրկացուցիչ կապիտուլյացիաների ռեժիմի դեմ»⁷¹:

1620 թ. դեկտեմբերի 28-ին անգլիական նավատորմը Ջասկի մոտ նոր ջախջախիչ հարված հասցրեց պորտուգալական նավատորմին: Օրակարգում Հոր-

⁶⁸ Այդ մասին մանրամասն տե՛ս Armenian Merchants of the Seventeenth and Early Eighteenth Centuries: English East India Company Sources, edited by Vahe Baladouni and Margaret Makepeace. Philadelphia, 1998.

⁶⁹ J. B r u c e. Annals of Honorable East India Company, vol. III. London, 1810, p. 123.

⁷⁰ H. F. F a r m a y a n. The beginnings of modernization in Iran. The Policies and Reforms of Shah Abbas I (1587-1629). Utah, 1969, pp. 21-22.

⁷¹ М. Т а н а х и я н. О режиме капитуляций в Иране (1568-1715). Автореферат дисс. на соиск. уч. ст. канд. и. н. М., 1962, с. 16.

մոզի նվաճումն էր, որը փակում էր Պարսից ծոցից ելքը դեպի օվկիանոս: Մի առիթով շահ Աբբաս I-ն ասել էր, որ «Եթե նույնիսկ պետք լիներ զոհելու իր թագավորության կեսը՝ պիտի գրավեր Հորմուզը»⁷²: 1622 թ. հունվարի 8-ին բրիտանական Արևելահնդկական ընկերության ու Իրանի միջև կնքվեց համաձայնագիր՝ պորտուգալացիների դեմ համատեղ ռազմական գործողություններ ծավալելու վերաբերյալ⁷³: 1622 թ. ապրիլի 22-ին Ֆարսի նահանգի կառավարիչ իմամ Ղուլի խանի զորքերը ընկերության ռազմանավերի օգնությամբ գրավեցին Հորմուզը⁷⁴: - Շահ Աբբասը քանդեց Հորմուզի ամրոցը, իսկ առևտրական նավահանգիստը տեղափոխեց Գոմբրուն, որը հետագայում ի պատիվ շահի վերանվանվեց Բենդեր-Աբբաս (Աբբասի նավահանգիստ):

Այսպիսով՝ Պարսից ծոցը բացվեց բոլոր ժողովուրդների վաճառականների համար: Գոմբրուն նավահանգիստը կարճ ժամանակամիջոցի ընթացքում վերածվեց առևտրական խոշոր քաղաքի՝ շնորհիվ անգլիացի, հոլանդացի, պորտուգալացի, հայ, հնդիկ, արաբ, հրեա, թուրք և այլ ժողովուրդների վաճառականների առևտրի⁷⁵: Ծոցի բացվելը նոր զարկ հաղորդեց Հնդկաստանի հետ հայ խոջաների ծովային առևտրին⁷⁶: Մինչ այդ նրանց կապերն այդ երկրի հետ ծովային ճանապարհով իրականացվում էր դիպվածաբար: Այսուհետև ցամաքային ճանապարհով առևտուր անող վաճառականներն աշխատում էին յուրացնել նաև ծովային ճանապարհը⁷⁷:

Չափազանց լայն էր հայ խոջաների ծովային առևտրի աշխարհագրական սահմանները: Նրանց, անշուշտ, հետաքրքրում էր նաև Պարսից ծոցի ավազանի երկրների հարստություններն ու առևտրական հնարավորությունները: Այդ կողմերում կային մեծ քանակությամբ մարգարտի, գորշ համպարի, գմրուխտի, կարմիր հակինթի, շափյուղայի և թանկարժեք այլ քարերի հանքեր: Տեղեկություններ կան, որ այդ հանքերը կապալով շահագործողների թվում նաև եղել են մեծ թվով իրանահայեր⁷⁸: Ծոցի շուկաներում Բասրայում, Քիշում, Ղեշում, Հորմուզում, Մասքաթում, վաճառվում էին ոչ միայն իրանական ու արաբական ապրանքներ, այլև՝ Եվրոպայի, Աֆրիկայի ու Հեռավոր Արևելքի երկրների արտադրանքներ:

⁷² Ռ. Կլոուդ Էնկլան. նշվ. աշխ., էջ 120:

⁷³ W. Foster. England's Quest of Eastern Trade. London, 1933, p. 312.

⁷⁴ The Cambridge History of India, vol. 5. Cambridge, 1932, p. 82.

⁷⁵ T. Herbert. Travels in Persia. New York, 1929, p. 43; C. R. Boxer. The Portuguese Seaborne Empire, 1415–1825. New York, 1969, pp. 40–41.

⁷⁶ W. Foster. նշվ. աշխ., էջ 312–313:

⁷⁷ Աբուլղաուեմ Սոնաբ. Թարիխե զենդեգանիե..., էջ 310:

⁷⁸ Sanson. Voyage ou Relation de l'etat present de Royaume de Perse. Paris, 1694, p. 97.

Օտվային ճանապարհով հայ վաճառականները Լևանտ ու Եվրոպական երկրներ էին արտահանում հում և մշակված մետաքս, զանազան համեմունքներ, գորշ համպար, մուշկ, թանկարժեք քարեր, տեղական արտադրության զանազան ապրանքներ: Նրանք գործուն մասնակցություն ունեին նաև ոսկյա ու արծաթյա դրամների համաշխարհային փոխանակության մեջ: Ֆրանսուա Բերնիեն նկարագրում է առևտուրն արգասավորող դրամի համաշխարհային շրջանառության ուղիները: Ամերիկայից Եվրոպա մտնող ոսկու մի մասն անցնում էր Օսմանյան կայսրություն՝ այնտեղից ստացվող ապրանքների դիմաց, մյուս մասն ուղարկվում էր Իրան՝ մետաքսի դիմաց, քանի որ Թուրքիան կարիք ուներ Եմենից ստացվող սուրճի, իսկ Եմենը, Իրանը և Թուրքիան հնդկական ապրանքների, ուստի դրանց դիմաց ստիպված էին Կարմիր ծովի ու Պարսից ծոցի վրայով Հնդկաստան ուղարկել իրենց մոտ գոյացող ոսկու զգալի մասը⁷⁹:

Իրանական առևտրի համար Պարսից ծոցը բացվելու կապակցությամբ բանուկ առևտրական ուղի դարձավ Սպահան-Մահյար-Եզդիխաս-Շիրազ-Լառ-Բանդար-Արբաս քարավանային ճանապարհը, որի վրայով երկրի կենտրոնական շրջանները կապվեցին Պարսից ծոցի հետ: Հայ վաճառականների քարավանները Սպահանից մեկնում էին Թավրիզ, այնտեղից շարժվում Լևանտյան առևտրական կենտրոններ՝ Հալեպ, Բրուսա, Կ. Պոլիս, Ջոնուսիա և այլն⁸⁰: Նոր Ջուղայի վաճառականությունը կարողացավ ստեղծել նոր պատմության ժամանակաշրջանի ամենանշանավոր առևտրական համաշխարհային ցանցերից մեկը: Արևելյան ուղղությամբ՝ Թավրիզից շարժվելով Կասպից ծով, նրանք ծովով գնում էին Խորասան, այնտեղից քարավաններով մեկնում Ղանդահար և Քաբուլ, ապա՝ Դելի: Դրանով իսկ հայ վաճառականությունը լայնորեն ներգրավվում էր նաև եվրասիական համաշխարհային ապրանքափոխանակության մեջ:

Պարսից ծոցով բեռնափոխադրումներ կատարելիս խոջաները օգտվում էին ծոցի և Հնդկաստանի միջև երթնեկող արաբական, հոլանդական ու անգլիական նավերից⁸¹: Ջուղայեցի հայ վաճառականները, սակայն, ունեին նաև սեփական առևտրական նավեր⁸²: Դրանք մեծ մասամբ ոչ մեծ առագաստանավեր էին, ու-

⁷⁹ Ф. Бернье. История последних политических событий и переворотов в государстве Великого Могола. М.–Л., 1936, с. 183.

⁸⁰ Sétú S. D. Aslanian. From the Indian Ocean to the Mediterranean: the Global Trade Networks of Armenian Merchants from New Julfa. Berkley, 2011.

⁸¹ К. З. Ашрафян. К вопросу о просветительском течении среди представителей армянского купечества в Индии в 70–80-х годах XVIII в.– «Проблемы истории Индии и стран среднего Востока». М., 1970, с. 152.

⁸² W. H. Moreland. India at the Death of Akbar. An Economic Study. London, 1920, p. 221. ի»°Յ Կ³~ձ M. J. Seth. Armenians in India from the Earliest Times to the Present day. Calcutta, 1937, pp. 290, 293.

րոնք վերին աստիճանի շարժունակ էին, արագընթաց և ունեին բավարար բեռնատարողություն: Նկատի ունենալով նման նավերի շահավետությունը՝ Արևելահնդկական ընկերության ղեկավարները նախընտրում էին վաճառել իրենց խոշոր նավերը և մոտիկ տարածություններում բեռնափոխադրումներն իրականացնել հայերին պատկանող նավերով⁸³:

Առավել խոշոր խոջաների տրամադրության տակ կային օվկիանոսային նավեր, որոնցից մի քանիսի անունը հասել է մեզ՝ «Ս. Միքայել», «Հոլուեյ» և այլն: Նաև տեղեկություններ կան, որ մեծահարուստ հայ վաճառականներից ոմանք իրենց սեփական նավերի նավավարներն էին: Նրանցից էին, օրինակ, Հնդկաստանում խոշոր վաճառականի համբավ ձեռք բերած Հովհան և Հովսեփ Մարգարյանները⁸⁴:

Հնդկական օվկիանոսում վիստացող ծովահեններից պաշտպանվելու համար հայ վաճառականների նավերը զինված էին թնդանոթներով: Այդ նավերը կանոնավոր երթևեկում էին ոչ միայն Պարսից ծոցի ու Հնդկաստանի միջև, այլև բեռներ էին տեղափոխում Հեռավոր Արևելքի ու եվրոպական երկրների նավահանգիստներ: Ի դեպ, պետականության բացակայության պայմաններում գուրկ լինելով ազգային դրոշից՝ հայ նավատերերը ստեղծել էին իրենց կարմիր-դեղին-կարմիր գույնի դրոշը, որի վրա պատկերված էր «Գառն Աստծոյ»⁸⁵:

Այն հարցին, թե ինչ չափերի էր հասնում միջազգային առևտրով զբաղվող հայ վաճառականների մասնակցությունը համաշխարհային առևտրաշրջանառության մեջ, պատասխանում են ժամանակակիցները: Այսպես, Ջ. Տավերնիեն գրում էր. «Առևտուրը Պարսկաստանում միանգամայն բաժանված է, ընդ որում երկրի ներսում այն վարում են քրիստոնյաներն (իմա՝ հայերը – Վ. Բ.) ու հրեաները, իսկ արտաքին առևտուրը ամբողջապես գտնվում է հայերի ձեռքում»⁸⁶: Այդ մասին են վկայում նաև ֆրանսիացի Գաբրիել Շինոնը⁸⁷, գերմանացի Ադամ Օլեարուսը⁸⁸ և շատ ուրիշներ:

Պարսից ծոցի ծովային ճանապարհի բացումից կարճ ժամանակ անց և՛ շահ Աբբասի, և՛ հայ վաճառականության համար միանգամայն պարզ դարձավ, որ նոր օվկիանոսային ճանապարհը նվազ շահավետ է, քան հին ցամաքային քա-

⁸³ Bruce. Annales of the Honorable East-India Company, vol. 2-3. London, 1810, pp. 140-141.

⁸⁴ M. J. Seth. Նշվ. աշխ., էջ 304-305, 321:

⁸⁵ «Եվրոպա» (ամսագիր, Վիեննա), 1858, էջ 510:

⁸⁶ J. B. Tavernier. Նշվ. աշխ., էջ 510:

⁸⁷ G. Chiron. Reaition nouvelle du Levant. Lyon, 1671, p. 225.

⁸⁸ Подробное описание путешествия Голштинского посольства в Московию и Персию в 1633, 1636 и 1639 гг., составленное секретарем посольства Адамом Олеарием. М., 1870, с. 791.

րավանային ճանապարհը Թուրքիայի վրայով: Ն. Ստենսգորը, ով հատուկ քննության է ենթարկել Իրանի արտաքին առևտրի ուղիների հարցը, հանգել է այն եզրակացության՝ XVII դարասկզբին ծովային բեռնափոխադրումները դեռևս էական դեր չունեին Սեֆյան Իրանի արտաքին առևտրում, և որ, առհասարակ, անգլիական ու հոլանդական Արևելահնդկական ընկերություններն այդ ժամանակաշրջանում տրանսպորտային տեղափոխությունների տեսակետից առավելություն չունեին ցամաքային առևտրի մեջ ներգրավված առևտրականների նկատմամբ⁸⁹:

Հավանաբար, XVII դարասկզբին ծովագնացության թերի զարգացման և ծովային երթուղիների թույլ յուրացվածության պայմաններում նոր օվկիանոսային ճանապարհը բավական մեծ ծախսերի տեղիք էր տալիս ու ավելի թանկ էր, ինչպես նաև կապված էր բազում վտանգների, նաև՝ ծովահենության վտանգի հետ: Բացի այդ, Պարսից ծոցի և Հնդկական օվկիանոսի ավազանը քաղաքական ու ռազմական սուր մրցակցության գոտի էր առաջատար պետությունների միջև, որը կասեցնում ու արգելքներ էր հարուցում միջազգային ապրանքափոխանակության համար: Ուշագրավ է. բավական էր, որ Օսմանյան կայսրության վրայով անցնող առևտրական ճանապարհները բաց լինեին, որ Աբբաս I-ը կորցնե՞ր իր հետաքրքրությունը օվկիանոսային ուղու նկատմամբ⁹⁰:

Սակայն հարց է առաջանում. ինչո՞ւ, ի՞նչ պատճառներով էր շահ Աբբաս I-ը համառոտե՞ն հրաժարվում օգտվել հյուսիսային՝ Վոլգա-կասպյան ճանապարհից, որն արդեն XVI դ. երկրորդ կեսից դարձել էր առևտրական բանուկ ուղի: Այդ հարցը կարոտ է հատուկ ուսումնասիրության:

1629 թ. շահ Աբբաս I-ի մահը էական փոփոխություն չմտցրեց հայ վաճառականական կապիտալի նկատմամբ Սեֆյան կառավարության քաղաքականության մեջ: Վերջինս շարունակում էր նրա նկատմամբ վարել ավանդական հովանավորական քաղաքականություն:

1639 թ. Չոհաբում կնքված թուրք-իրանական հաշտության պայմանագիրը տևական ժամանակ (մոտ 80 տարի) խաղաղություն հաստատեց երկու պետությունների միջև: Այդ պայմանագրի շնորհիվ առևտրական քարավանների երթևեկության համար ստեղծվեցին համեմատաբար բարենպաստ պայմաններ: Վերահաստատված խաղաղությունը նպաստավոր էր մանավանդ իրանահայ խոշոր առևտրականների համար⁹¹: Իսկապես, հետագայում Սեֆյան պետության մետաքսի արտահանությունը, փաստորեն, ամբողջությամբ անցնում է հայ վա-

⁸⁹ N. Steensgaard. Նշվ. աշխ., էջ 101:

⁹⁰ Ա. Հոլհանսիսյան. նշվ. աշխ., էջ 81:

⁹¹ R. Davis. English Imports from the Middle East, 1580-1780.– “Studies in the Economic History of the Middle East from the Rise of Islam to the Present Day”, London, 1970, p. 335.

ճառականների ձեռքը: Իսկ 1641 թ. անգլիացիներն ընդհանրապես չէին մասնակցում իրանական մետաքսի առևտրին⁹²:

Այսպիսով, XVII դ. ընթացքում Իրանի հայ վաճառականությունն առաջնակարգ դեր էր խաղում Արևելքի ու Արևմուտքի միջև միջազգային առևտրի բնագավառում՝ հատկապես իր ձեռքերում կենտրոնացնելով հում-մետաքսի առևտուրը: Կասկածից վեր է, որ այդ գործունեությունն ունեցել է քաղաքակրթական նշանակություն: Իգուր չէ, որ ժամանակակիցները հայ վաճառականներին վերագրել են Արևելքի ու Արևմուտքի միջև քաղաքակրթությունները մեղվի նման փոշոտողի դեր:

Վահան Բայբուրդյան – պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժնի վարիչ, ԵՊՀ-ի միջազգային հարաբերություններ ֆակուլտետի պրոֆեսոր: Գիտական հետաքրքրությունները՝ Իրանի և Թուրքիայի պատմություն, հայագիտության հարցեր, Մերձավոր և Միջին Արևելքի երկրների պատմություն, քրդագիտություն, հայ գաղթօջախների պատմություն, միջազգային հարաբերություններ: Հեղինակ է 10 մենագրության, շուրջ 200 գիտական հոդվածի: vbayburdyan1933@gmail.com

REFERENCES

- A. Gouvea.** Histoire Orientale des grands progres de l'Eglise catholique. Bruxelles, 1609.
- A. Hovhannisian.** Drvagner hay azatagrakan mtqi patmutyan, girk erkrord, Yerevan, 1959 (In Armenian).
- Araquel Davrizheci.** Patmutivn Araquel vardapeti Davrizhecvo saks dipuacoc Hayasataneayc ev gavarin Araratac ev i masin Goghtan gavarI, skseal i RC'A tuakanin Hayoc minch i RCDZA t., yerrord tpagrutivn, Vagharshapat, 1896 (In Grabar).
- A. Syrmean.** Patmutivn Halepi hajoc, h. 3, Paris, 1950 (In Grabar).
- A. Wilson.** The Persian Gulf. London, 1954.
- Chardin.** Voyages du Chevalier Chardin en Perse, et autres lieux de l'Orient, t. III. Paris, 1811.
- C. R. Boxer.** The Portuguese Seaborne Empire, 1415–1825. New York, 1969.
- Fr. Macler.** Quatre Confernces sur l'Armenie et les Armniens Faites en Hollande. Paris.
- G. Chinon.** Relation nouvelle du Levant. Lyon, 1671.
- Gh. Alishan.** Sisakan, Venetik, 1893 (In Armenian).
- Gibbins.** Ocherki istorii angliyskoy torgovli i kolonii., SPB, 1899 (In Russian).
- Grigor Daranachzi.** Zhamanakagrutivn, Grigor vardapeti Kamaxecvoy kam Daranagh'cvoy, Erusagh'em, 1915 (In Grabar).

⁹² Վ. Փ ա փ ա զ յ ա ն. Հայաստանի առևտրական ուղիները միջազգային առևտրի ոլորտում XVI–XVII դդ., Երևան, 1990, էջ 66:

- H. F. Farmayan.** The beginnings of modernization in Iran. The Policies and Reforms of Shah Abbas I (1587-1629), Utah, 1969.
- H. Inalcik.** Bursa and the Commerce of the Levant.– “Journal of Economic and Social History of the Orient”, III/2, Leiden, 1960; The Ottoman Economic Mind and Aspects of the Middle East from the Rise of Islam to the Present Day. London, 1970.
- J. Bruce.** Annals of Honorable East India Company, vol. III. London, 1810.
- J. B. Tavernier.** Les six voyages de Jean-Baptiste Tavernier en Turquie, en Perse et aux Indes, Paris, 1692.
- J. Fryer.** A New Account of East India and Persia 1672–1681, vol II. Liechtenstein, 1967
- K. Bayani.** Les relations de l’Iran avec l’Europe occidentale a l’epoque Safavide. Paris, 1937.
- L. I. Bellan.** Chah Abbas I. Sa Vie, Son histoire. Paris, 1932.
- M. Panaxiyan.** O rezhime kapitulyacii v Irane (1568-1715). Avtoreferat diss. na soyisk. Uch. st. kand. Ist. n., M., 1962 (In Russian).
- N. A. Smirnov.** Rossiya i Turciya v XVI-XVII vv., t. I.- ,Uchyonnie zapiski, vyp. 94, M., 1946 (In Russian).
- N. Steensgaard.** The Asian Trade Revolution of the Seventeenth Century, Chicago, 1973. Ocherki istorii Italii, M., 1959 (In Russian).
- T. Herbert.** Relation du Voyage en Perse et des Indes Orientales. Paris, 1663; Travels in Persia. New York, 1929.
- R. Kyulpenkian.** Hay-portugalakan haraberutyunnerə, Erevan, 1986.
- R. Savori.** Iran under the Safavids. Cambridge, 1980.
- R. Vadala.** La golfe Persique. Paris, 1920.
- Sanson.** Voyage ou Relation de l’etat present de Royaume de Perse. Paris, 1694.
- Sir Anthony Shirley.** His relation of his travels into Persia. London, 1613.
- S. V. Avetisyan.** Gorod Dzhuga, Tiflis, 1937(In Russian).
- V. Papazyan.** Hayastani arevtrakan ughinerə mijazggain arevtri volortum XVI-XVII dd., Yerevan, 1990 (In Armenian).
- W. Foster.** England’s Quest of Eastern Trade. London, 1933.

ВЛИЯНИЕ БОРЬБЫ ЗА ИРАНСКИЙ ШЕЛК НА МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ НА БЛИЖНЕМ И СРЕДНЕМ ВОСТОКЕ И АРМЯНСКИЙ ТОРГОВЫЙ КАПИТАЛ

(Начало XVII века)

ВААН БАЙБУРТЯН

Резюме

Ключевые слова: шелк, Левант, перс, купец, Иран, ходжа, Венеция, Англия, Джуга, Индия, Смирна, Исфахан.

В начале XVII в. представители торгового капитала армянской общины Ирана, в частности Новой Джульфы (Нор Джуга), вовлеченные в международную торговлю между Востоком и Западом, заняли ключевые позиции во внешней торговле Ирана. Из-за

частых ирано-турецких войн, небезопасности транзитных караванных путей через Османскую империю, европейские купцы не имели возможности установления непосредственных торговых связей с Ираном, чтобы самим организовать вывоз главного предмета внешней торговли Ирана – шелка-сырца. Поэтому они были вынуждены пользоваться посредническими услугами армянской торговой буржуазии.

Экспорт шелка во внешние рынки осуществлялся главным образом представителями армянского торгового капитала Ирана. Начиная с XVII в. монопольное право торговли шелком уже всецело было сосредоточено в руках армянских купцов. Этому способствовало также то обстоятельство, что в связи с развитием европейской мануфактуры шелк-сырец приобрел значение важнейшего товара в международной торговле. Посредством государственной монополии на шелк-сырец шах Аббас I (1587–1629) стремился вступить в конкуренцию со своим противником Османской империей и нанести ее экономическим интересам сильнейший удар. С этой целью шахское правительство также стремилось найти альтернативные пути для внешней торговли Ирана. В этом отношении наиболее удобным, эффективным и независимым мог быть морской путь через Персидский залив. Наряду с сухопутной караванной торговлей через османские владения, армянские купцы интенсивно занимались также морской торговлей, осуществляя внешнеторговые операции со странами бассейна Персидского залива и Индийского океана, а также Ближнего Востока и Западной Европы.

Ваан Байбурдян – д. и. н., заведующий отделом Ирана Института востоковедения НАН РА, профессор факультета международных отношений ЕГУ. Научные интересы: история Ирана и Турции, вопросы арменоведения, история стран Ближнего и Среднего Востока, курдоведение, история армянских колоний, международные отношения. Автор 10 монографий, около 200 научных статей. vbayburdyan1933@gmail.com

THE IMPACT OF THE STRUGGLE FOR IRANIAN SILK ON INTERNATIONAL
RELATIONS IN THE NEAR AND THE MIDDLE EAST AND THE ARMENIAN TRADE
CAPITAL

(The beginning of the 17th century)

VAHAN BAYBURDYAN

S u m m a r y

Key words: silk, Levant, Persion, merchant, Iran, khoja, Venice, England, Jugha, India, Smyrna, Isfahan.

At the beginning of the 17th century, the representatives of the trading capital of the Armenian community in Iran, of New Julfa (Nor Jugha) in particular, who were engaged in the international trade between the East and the West acquired a key position in the external trade of Iran. As a result of frequent Iranian-Turkish wars as well as lack of security of transit caravan routes via the Ottoman Empire, the European merchants were deprived of the possibility to establish direct trade connections with Iran. They could not manage the export of raw silk from Iran, which was the main export item for the country's international trade. That was the reason that compelled them to use intermediary services of the Armenian merchant bourgeoisie.

The export of silk to the foreign markets was mostly realized by the representatives of the Armenian merchant capital of Iran. Since the beginning of the 40s of the 17th century, the monopolized right of the silk trade was entirely concentrated in the hands of the Armenian merchants. The factor of the raw silk becoming key merchandise in international trade was also stipulated by development of the European manufacturing. Through instituting state monopoly over the raw silk, Shah Abbas I (1587–1629) intended to contest with his adversary – the Ottoman Empire, and deal a mighty blow to its economic interests. Pursuing this goal, the Iranian rulers strove to discover alternative routes for the external trade of Iran. In this regard, the most convenient, effective, and feasible could be the maritime route crossing the Persian Gulf. Along the overland caravan trade through the Ottoman lands, Armenian merchants also intensively engaged in maritime trade. They successfully accomplished external commercial activities with the countries of the Persian Gulf and the Indian Ocean as well as the countries of the Middle East and Western Europe.

Vahan Bayburdyan – Doctor of Historical Sciences, Chair of The Department of Iran at the NAS RA Institute of Oriental Studies, Professor at the YSU Faculty of International Relations. Scientific interests: history of Iran and Turkey, issues of armenology, history of Near and Middle Eastern countries, kurdology, history of Armenian colonies, international relations. Author of 10 monographs, around 200 scientific articles. vbayburdyan1933@gmail.com

ԽՈՐԵՆԱՅՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖՐԱՆՍԵՐԵՆ ՆՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԱԲԱՆԸ ԵՎ ՀԱՅ ՊԱՏՄԱՀՈՐ ԺԱՄԱՆԱԿԸ *

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Բանալի բառեր՝ Ժան-Պիեռ Մահեն, Մովսես Խորենացի, “Հայոց պատմություն”, Ռ. Թոմսոն, Օգ. Կարիեր, Ֆ. Կոնիբեր, V դար, Գ. Սարգսյան, զրադաշտություն, պատմիչ:

*Խիստ շնորհակալ գործ է կատարել Ժան-Պիեռ Մահեն իր կնոջ՝ նույնպես ե-
ռանդուն հայագետ Աննի Մահեի հետ՝ ֆրանսիացիներին ու ֆրանսախոս երկրնե-
րի գիտնականներին մատուցելով հայ պատմահոր՝ Մովսես Խորենացու “Հայոց
պատմության” նոր և ընտիր թարգմանությունը՝ կցված ընդարձակ (91 էջ) առա-
ջաբանով ու հարուստ ծանոթագրություններով:*

*Մովսես Խորենացու “Հայոց պատմությունն” առաջին անգամ ֆրանսերեն ամ-
բողջական թարգմանել է հայ միջնադարյան մատենագրության ու պատմության
լավագույն հետազոտողներից մեկը՝ Վիկտոր Լանգլուան (1829–1869): Այն լույս է
տեսել հայագետի մահից հետո՝ 1869-ին Փարիզում¹:*

*Շ.-Պ. Մահեն իր ընդարձակ առաջաբանի վերջում գետեղել է “Notice sur la
traduction et les notes” (“Տեղեկություն թարգմանության և ծանոթագրություններ”)
հատվածը, որում հայտնում է, թե իր թարգմանությունը հիմքում ունի 1913 թ.
Թիֆլիսում տպագրված Խորենացու երկի քննական բնագիրը, որը նմանահա-
նությամբ վերահրատարակվել է 1991 թ. Երևանում²: Բնականաբար, ֆրանսերեն
նոր թարգմանության մեջ հաշվի են առնված Ա. Սարգսյանի ձեռագրական նոր
նկատումները: Շ.-Պ. Մահեն միաժամանակ հաշվի է առել Ստ. Մալխասյանի աշ-*

* Ընդունվել է տպագրության 01. II. 2019 թ.: Գրախոսվել է 10. VI. 2019 թ.:

¹ Sté Moïse de Khorène. Histoire de l’Arménie, Nouvelle traduction de l’arménien classique par Annie et Jean-Pierre Mahé (d’après Victor Langlois) avec une introduction et des notes, Gallimard. Paris, 1993.

² Collection des historiens anciens et modernes de l’Arménie par Victor Langlois. t. II, Première période, Historiens Arméniens du cinquième siècle. Paris, 1869.

³ Մովսես Խորենացի. Պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը և ներածությունը Մ. Արեղյանի և Ս. Հարությունյանի, Նմանահանություն, Լրացումները Ա. Բ. Սարգսյանի, Երևան, 1991:

խարհաբար թարգմանությունը⁴, որի հիման վրա Մ. Մինասյանը ժնկում 1991-ին տպագրել է “շատ պատշաճ դիտողություններ” (“de remarques très pertinentes”) և Ռոբերտ Թոմսոնի Մ. Խորենացու պատմության անգլերեն թարգմանությունը⁵:

Բոլորովին հասկանալի չէ, թե ինչու հայերեն և այլ լեզուներով Մ. Խորենացու պատմությունը “Հայաստանի պատմություն” խորագիրն ունի, իսկ Թոմսոնի մոտ “Հայերի պատմությունը”, Լը Վայան դը Ֆլորիվալն այն կոչել է “Histoire d’Armenie”, առաջնակարգ հայագետ Մկրտիչ Էմինը՝ “История Армении”, Մ.-Պ. Մահեն “Histoire de l’Arménie” և այլն⁶:

Վ. Լանգլուայի թարգմանության առաջաբանում վերջինս հայ պատմահորը ներկայացնում է հայկական ավանդական տեսակետից: Խորենացին Մահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի աշակերտն էր, որը պարապել էր Ասորիքի նշանավոր կենտրոն Եդեսիայի դիվանում, եղել Անտիոքում, ուսանել Ալեքսանդրիայում, այցելել էր Բրյուզանդիոն, Աթենք ու Հռոմ⁷: Մովսես Խորենացին և նրա հետ արտասահման մեկնած աշակերտները լքվել էին իրենց հայրենակիցների անհոգությունից: Մովսեսն էլ իր կյանքի տասը տարիներն անց էր կացրել միայնության ու աղքատության մեջ: Նրան այդ վիճակից հանել է Գյուտ կաթողիկոսը, որը դարձել էր հայոց կաթողիկոս և իր ուսանող ընկերներին հավաքել շուրջը⁸: Լանգլուան նշում է, թե Եզնիկ Կողբացու մահից հետո Խորենացին նշանակվել է Բագրևանդի և Արշարունիքի եպիսկոպոս: Ըստ Լանգլուայի՝ Խորենացին իր գլխավոր գործը գրել է Մահակ Բագրատունու խնդրանքով՝ օգտվելով հունական, ասորական, քաղդեական, ազգային և աստվածաշնչային աղբյուրներից: Նա լայն բազմազգիտական շնորհիվ և քերթողի տաղանդով արտոնություն է ստացել կոչվելու իր ազգի պատմահայրը⁹: Լանգլուան նշում է, որ արտագրողները ձևափոխել են Խո-

⁴ Մովսես Խորենացի. Հայոց պատմություն, Աշխարհաբար թարգմանությունը և մեկնաբանությունները Ստ. Մալխասյանի, Երևան, 1981:

⁵ Moses Khorenats'i. History of the Armenians, Translations and Commentary on the Literary Sources by Robert W. Thomson, revised edition, Caravan Books. Ann Arbor, 2006.

⁶ Մովսես Խորենացու երկերի մատենագիտության մեջ Պետրոս Հովհաննիսյանը ներկայացրել է պատմահոր գլուխգործոցի բոլոր այլալեզու տվյալները (տե՛ս Պ. Հովհաննիսյան. Մովսես Խորենացի Մատենագիտություն, Երևան, 2013, էջ 26–42):

⁷ Collection des historiens ..., p. 47.

⁸ Նույն տեղում: Մ. Գյուտ Ա Արահեզացի: Մովորել է Մահակ-Մեսրոպյան դպրոցում, ուսումը կատարելագործել է Հունաստանում: Հայոց կաթողիկոս է եղել 461–478 թթ.: Մասնակցել է 449-ի Արտաշատի ժողովին: Հովանավորել է պարսկական արքայից վերադարձած նախարարներին և մյուս հայրենասեր ուժերին (տե՛ս Ամենայն Հայոց կաթողիկոսներ, Խմբագրությամբ՝ Պետրոս Հովհաննիսյանի, Երևան, 2001, էջ 32):

⁹ Collection des historiens ..., p. 48 (“Moïse doit le privilège d’être classé à la tête des historiens de sa nation”).

րենացու պատմությունը՝ հավելելով հատվածներ, որոնք չեն եղել նախնական բնագրում¹⁰: Այստեղ տեղին է հիշատակել ռուս հին գրականության գերագանց մասնագետ Դմիտրի Լիխաչովի մի կարևոր նկատումը հին պատմական ձեռագրերի վերաբերյալ. «Առավել մեծ աստիճանի վերամշակման է ենթարկվել աշխարհիկ գրականությունը՝ առաջին հերթին պատմագրությունը»¹¹:

Լանգլուան իրավացիորեն նշում է, թե Խորենացին առաջին պատմիչն է, որ մանրամասնում է իր ազգի ծագումը: Հետագա բոլոր հայ պատմիչները հետևում են նրա գրած հայ ազգի ծագումնաբանությանը: Այնուհետև հայագետը բարեխղճորեն թվարկում է այլ լեզուներով այն բոլոր թարգմանությունները, որոնք կատարվել են իրենից առաջ՝ սկսելով շվեդ Հենրի Բրեններից¹²: Թարգմանությունների մեջ հիշատակվում են երկու իտալերեն թարգմանությունները և Հ. Հովհաննիսյանի ու Մ. Էմինի ռուսերեն թարգմանությունները¹³:

Շ.-Պ. Մահեի առաջաբանն ունի բազմաթիվ հետաքրքիր բաժիններ: Առաջին հատվածից են հետևյալները՝ «Մովսես Խորենացին ինքն իր մասին», «Միջնադարյան վկայություններ հեղինակի և նրա գործի մասին», «Մովսեսի մասին բացահայտումներն Արևմուտքում», «Աղբյուրների քննադատություն և բանավեճեր «Հայոց պատմության» ստեղծման ժամանակի վերաբերյալ», «Ազգագրություն և բանահյուսություն», «Հնագիտական հաստատումներ», ««Հայոց պատմության» շարադրման կառուցվածքը»¹⁴:

Այս խորագրերից առաջ ասվում է, թե Մովսես Խորենացին, այսինքն՝ Մովսես Խորենը կամ Խորեանը, անունն է մի քերթողի, որի «Հայոց պատմությունը» սկսած հայերի ծագումից, սկզբնավորվում է, ըստ նրա, բաբելոնյան աշտարակաշինությունից առաջ և հասնում է մինչև 439 թ.՝ հայոց այբուբենի ստեղծող և Աստվածաշնչի թարգմանիչ սուրբ վանական Մեսրոպ Մաշտոցի մահը¹⁵:

Շ.-Պ. Մահեի առաջաբանի երկրորդ մասը բաժանված է հետևյալ խորագրերի՝ «Պատմություն և առասպել. Մովսեսը Հունաստանի և Իրանի միջև», «Պաճուճանք և հանդես»: Այս հատվածն ունի իր հերթին չորս ենթաբաժիններ. ա) «Պատմիչի և նրա մեկենասի երկխոսությունը», բ) «Մովսեսը պալատական մատենագիր», գ) «Հազվագյուտ գրքերի որոնումը», դ) «Մատենագիտական կեղծիք, թե՛ պատմական կեղծիք»:

¹⁰ Նույն տեղում, էջ 49:

¹¹ Д. С. Лихачев при участии А. А. Алексеева и А. Г. Боброва. Текстология на материале русской литературы X–XVII веков. СПб., 2001, с. 395.

¹² Collection des historiens ..., p. 51.

¹³ Նույն տեղում, էջ 52:

¹⁴ Moïse de Khorène. Histoire de l'Arménie, pp. 9–24.

¹⁵ Նույն տեղում, էջ 9:

Մույն առաջաբանի III հատվածը կոչվում է՝ «Հայոց պատմությունը» բորգեզյան պարադոկսի¹⁶ ձևով՝ Այս բաժնի ենթահարցերն են՝ ա) «Հնարանքի երեք շրջանակներ և պատմելու երեք աստիճաններ», բ) «Իրական գրքեր, թե պատրանկար պաճույճ», գ) «Մի պատմություն խոսող ուրիշ գրքերի կամ տարաշխարհի մասին»:

Հռոմեական թվակարգով III բաժինը կոչվում է՝ «Մովսես Խորենացին և պատմությունը»: Այս հատվածի մասերն են՝ «Հայոց պատմության» բանավոր և գրավոր աղբյուրները», «Ստեղծագործության պատմական արժեքը»: Նույն խորագրի ներքո կան հետևյալ հատվածները՝ «Ընկերական և հիմնական օրենքների տեղեկությունների հանգամանքը», «Մովսեսը և Հայաստանի լեզվական անցյալը», «Համընդհանուր հիշողությունը և պատմական ոճավորումը»:

Ծավալուն հատվածից հետո դրվում է հետևյալ խորագիրը՝ «Հայոց պատմության» քաղաքական նպատակները՝: Խորագրի տակ Շ.-Պ. Մահեն գրում է. «Ճշտենք այժմ այն նպատակները, որ կարող էր ունենալ Մովսեսը՝ գրելով իր պատմությունը»¹⁷: Այս հատվածում կան հետևյալ ուշագրավ վերնագրերը՝ «Փառավոր անցյալը և թշվառ ներկան», «Գովեստ Բագրատունիների թագավորական միապետության և գահասիրության», «Ժամանակագրության բազմադիմությունը»: Առաջաբանն ավարտվում է համառոտ ամփոփումով¹⁸, վերջինս էլ՝ հետևյալ հավատով. «Կգա մի օր, երբ բոլոր գիտաճյուղերի առաջընթացը կբերի պրոբլեմի այնպիսի մի լուծում, որը կհամարվի վերջնական: Ենթադրենք, հասու կլինեն առաջ քաշելու բոլորովին տարբեր վարկած: Օրինակ, այնպիսին, որ V դ. հեղինակը հետո վերամշակվել է, ինչպես եղել է Ագաթանգեղոսի, Ղազար Փարպեցու և հաստատուն ձևով Կորյունի հետ, եթե հաշվի առնենք «համառոտ խմբագրությունը»:

Բավական է հետաքրքրությամբ և հիացմունքով, բայց նաև անհրաժեշտ մեծարանքով սպասելու այն հոյակապ գովեստին, ըստ որի Քերթոդահայրը տվել է իր ազգի ծագման պատմությունը¹⁹:

Թվում է, թե այդ ժամանակը եկել է: 2015 թ. մարտի 10-ին Nicholas Wade-ը «New York Times» թերթում տպագրել է «Հայերի ծննդյան ժամանակը՝ տրված V դարում» հաղորդումը, որը հաստատվել է հայերի և պատմական Հայաստանի ու նրան հարող բնակավայրերի տեղաբնակների արյան գենետիկ քննությամբ: Գիտական

¹⁶ Պարադոկս – օտարոտի միտք (տե՛ս Մ տ. Մ ա լ ի ա ս յ ա ն ց. Հայերեն բացատրական բառարան, հ. 4, Զ-Ֆ, Երևան, 2010, էջ 76), paradoxe – նորօրինակ՝ զարմանալի նորակերպ, նորալուր կարծիք, տարակերպություն (տե՛ս Բառարան ֆրանսերեն հայ-աշխարհիկ, յօրինեց Մեսրոպ Նուպարեան, Կ. Պոլիս, 1892, էջ 728):

¹⁷ Moïse de Khorène. Histoire de l'Arménie, p. 86.

¹⁸ Նույն տեղում, էջ 91:

¹⁹ Նույն տեղում:

արդյունքները վկայում են, որ Մովսես Խորենացին ճշտորեն նշել է հայերի՝ որպես ազգ ձևավորվելու ճշգրիտ թվականը, որն է՝ Ք. ծ. ա. 2492-ը (“Movses Khorenatsi, a historian in the fifth century, wrote that his native Armenia had been established in 2492 B.C., a date ususally regarded as legendary though he claimed to have traveled to Babylon and consulted ancient records. But either he made a lucky guess or he really did gain access to useful data, because a new genomic analysis suggests that his date is entirely plausible”):

Գերմանական բանասիրության մեջ XIX դարում խիստ տարածված էր գիտական խնդիրներում կասկածել ամեն ինչում: Անշուշտ, հետևելով դրան, Գրիգոր Խալաթյանցն էլ, որը կրթվել էր Գերմանիայում, 1896-ին տպագրեց “Հայոց վեպը Մովսես Խորենացու “Հայոց պատմության” մեջ” խիստ վարկածաշատ գիրքը²⁰, որում հայ պատմահորը համարում է կեղծարար: Ի դեպ, հենց նույն 1896 թ. Ս. Պետերբուրգում լույս տեսնող Ֆ. Ա. Բրոկհաուզի և Ի. Ա. Էֆրոնի հեղինակավոր հանրագիտարանում Մովսես Խորենացին ներկայացված է որպես V դարի հեղինակ, որը սովորել է Ալեքսանդրիայում, եղել Անտիոքում, Հռոմում, Կոստանդնուպոլսում: Այդ հոդվածում կան նաև Ս. Խորենացուն քննադատող գիտնականների, այդ թվում նաև Գր. Խալաթյանցի անունները²¹:

Ճ.-Պ. Մահեն բարեխղճորեն թվարկում է այն հայ և օտարազգի գիտնականներին, որոնք տեղափոխել են Խորենացու անձը և, հետևաբար, նաև նրա գործն ավելի ուշ դարեր: Իհարկե, վկայակոչված գիտնականների մեջ մեծաքանակ հղումներ կան հատկապես Օգյուստ Կարիերից և ամենաշատը Ռոբերտ Թոմսոնից: Շատ քիչ անդրադարձ կա նշանավոր հայագետ ու մեծ հայասեր Ֆրեդերիկ Կոնիքերին, որը Մովսես Խորենացուն համարում է ոսկեդարի հեղինակ և հանդես է եկել Օգ. Կարիերի տեսակետի խիստ քննադատությամբ:

Օգ. Կարիերի Խորենացու քննադատությունը նույնպես չի ազդել “Larousse” հեղինակավոր հանրագիտարանի վրա, որի փոքրածավալ միհատորյակի մեջ Մովսես Խորենացին ներկայացվում է որպես V դարի հայ մատենագիր՝ կոչված Հայաստանի Հերոդոտոս²²:

Մովսես Խորենացուն քննադատելը XIX դարի վերջին XX դարում ստացել էր համաեվրոպական բնույթ: Հավանաբար, հենց այդ պատճառով էլ Ֆ. Կոնիքերը

²⁰ Гр. Х а л а т я н ц, Армянский эпос в истории Армении Моисея Хоренского: опыт критики источников. В 2-х частях. М., 1896.

²¹ *Sté u* Энциклопедический словарь. т. XIX А. Издатели: Ф. А. Брокгауз, И. А. Ефрон. СПб., 1896, с. 610–611.

²² *Sté u* Nouveau petit Larousse, illustré dictionnaire encyclopédique, publié sous la direction de Claude Augé. Paris, 1932, p. 1543 (“Moïse de Khoren, écrivain arménien du V^e siècle, surnommé l’Herodote de l’Arménie”).

Մյունխենում հրատարակում է “Մովսես Խորենացու ժամանակաշրջանը” հոդվածը²³։ Ֆ. Կոնիբերը ժխտում է Խալաթյանցի այն տեսակետը, թե Խորենացին օգտվել է Սեբեոսից՝ ավելի շուտ Մար Աբաս Կատինային վերագրվող հատվածներից։ Նրա կարծիքով՝ Մար Աբասի մասին Սեբեոսի հիշատակումը փաստ է, որ նա հետևել է Մովսես Խորենացուն²⁴։

1979-ին Սեբեոսի “Պատմության” քննական բնագրի մեջ Գևորգ Աբգարյանը Գ գլխի համար ունի այսպիսի խորագիր՝ ըստ Սեբեոսի. “Արդ՝ թե պիտոյ է քեզ, ո՛վ ընթերցասէր, երկրորդեցից ի պատմագրացն Մովսիսի Խորենացոյ եւ Ստեփանոսի Տարաւնացոյ, հաւաստի եւ ճշմարիտ մատենագրաց՝ զորդի ի հաւրէ ճանաչել”²⁵։

Կոնիբերն անհնար է համարում, որ ուշ դարերի հեղինակը՝ մի ինչ-որ հայ, ծաղկաքաղ աներ 760 թ. իր հայրենիքի պատմությունը մինչև 450 թվականը՝ գրելով մի ոճով, որը հատուկ է միայն V դարին²⁶։ Նա իր հոդվածն ավարտում է այն եզրահանգումով, թե պրոֆեսոր Կարիերի վարկածը գրական զարմանալիք էր և, այնուհանդերձ, ինքը նրա որոշ փաստերը համոզիչ է համարել և ուրախ է, որ կարողացել է ազատվել վարկածի լծից, որ թվում էր անխուսափելի և այդքան դժվարություններ էր պարունակում²⁷։

Ստուգապես հավաստի է, որ VII դ. նշանավոր թվարան, տիեզերագետ, տոմարագետ և մատենագիր Անանիա Շիրակացուց հասել է “Պատմություն Անանիայի Շիրակայնոյ համարողի” քերթվածը, որը սկսվում է Մովսես Խորենացու անունով. “Մովսէսի Խորենացոյ եւ Անդրեասի։ Աղամ նախաստեղծ. սա կեցեալ ամս երկերիւր եւ երեսուն՝ ծնանի զՄէթ”²⁸։

²³ F. Conybeare. The date of Moses of Khoren (*տե՛ս Byzantinische Zeitschrift*. Munich, 1901, № 3–4, pp. 389–504).

²⁴ Նույն տեղում, էջ 501 (“I cannot agree with him on the point, but that similar narrative equally attributed to Mar Aba is prefixt in the mss to the history of Sebeos, surely does not prove that Moses copied Sebeos. It rather confirms Moses’ veracity”):

²⁵ Սեբեոս. Պատմություն, Աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 55:

²⁶ F. Conybeare. Նշվ. աշխ., էջ 501:

²⁷ Նույն տեղում, էջ 502–503: Կոնիբերն անդրադարձել է նաև Խորենացու օգտագործած աղբյուրների խնդրին [տե՛ս “Հանդէս ամսօրեայ” (Վիեննա), 1902, № 5, էջ 129–132, № 7, էջ 193–201, էջ 236–240]:

²⁸ Ա. Գ. Աբրահամյան. Անանիա Շիրակացու մատենագրությունը, Ուսումնասիրություն, Երևան, 1944, էջ 357:

Իսկ ինչո՞ւ չմտածել, թե Անանիա Շիրակացին, հետևելով Մովսես Խորենացու «Հայոց պատմության» և այն եզրափակող Ողբի կենսագրական տվյալներին, գրեց իր ինքնակենսագրությունը, որում մտքեր կան հիշեցնող պատմահոր Ողբը.

Անանիա Շիրակացի

«... Թեպետ և ոչ ոք եղև շնորհակալ և մեծարալո իմոյ աշխատութեան, քանզի և ոչ սիրալո իսկ է ազգ մեր իմաստից և գիտութեանց, այլ ծոյլք են և ձանձրացողք: Զի իբրև եկի ես, բազում ընթացան առ իս յուսումն և սուղ ինչ խելամտեալ՝ թողին զիս և գնացին, ոչ մնացեալք կատարման արուեստին, բաւական համարեալ վարուց կենցաղոյս զորչափիկն ասին և փոքր ինչ յինէն մեկուսացեալք՝ սկսան ուսուցանել, զոր ոչն գիտէին և քարոզել զանձինս վարդապետս, որումն ոչ էին հասու»²⁹:

Մովսես Խորենացի

«Աշակերտք հեղգք առ ուսումն և փոյթք առ ի վարդապետել, որք նախ քան գտեսութիւնն աստուածաբանք»³⁰:

V դ. մատենագիրներից Մովսես Խորենացուն հիշատակել է Ղազար Փարպեցին՝ իր հոչակավոր «Թղթում»: Թուղթը աշխարհաբար թարգմանել ու ծանոթագրել է Միքայել Նալբանդյանը: Հայկական աղբյուրներն ու ավանդությունը, որոնք առաջացել են նաև իր՝ Խորենացու վկայությունից, խոսում են պատմահոր հալածական որոշ տարիների մասին, երբ նա վերադարձավ արտասահմանից: Փարպեցին գրում է. «Երանելի Մովսես Փիլիսոփոսը (Խորենացին), որ արդարև, մինչդեռ մարմնով էր ապրում, գրեթե երկնքի զորքերին էր քաղաքակից. չէ որ այդ Հայոց արեղայքը այս տեղից այն տեղ հալածական արին նորան»³¹: Իր այս թարգմանությունը կցած «Թարգմանչի բացատրությունը» հաստատում Նալբանդյանը գրում է. «...մի՛ միայն մարդ կա, որ կարող է Փարպեցուց առնուլ նորա առաջնությունը, և այդ մարդը է անգուգական Մովսես Խորենացին»³²:

«Հանդէս ամսօրեայի» 1902 թ. 6-րդ համարում կա փոքրիկ մի նյութ, որի մեջ խոսվում է ուրախալի այն լուրի մասին, թե գտնված է Մար Աբասի արաբական թարգմանությունը, որով զբաղվում է պրոֆեսոր Ն. Մառը³³: Խոսքն այստեղ, ան-

²⁹ Նույն տեղում, էջ 335:

³⁰ Մ ո վ ս ե ս Խ ո ռ Է ն ա գ ի. Պատմություն Հայոց, էջ 364:

³¹ Մ. Ն ա լ Բ ա ն Դ յ ա ն. Երկերի լիակատար ժողովածու վեց հատորով, հ. 4, Երևան, 1983, էջ 322:

³² Նույն տեղում, էջ 335:

³³ Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1902, № 6, էջ 191:

շուշտ, այն արաբական բնագրի մասին է, որը ֆրանսերեն թարգմանեց և տպագրեց Ֆրեդերիկ Մակլերը “Journal Asiatique” ամսագրում 1903-ին³⁴:

Նշանավոր հայագետ Նիկողայոս Մառը միշտ շեշտում է, թե գիտության համար կարևորը փաստն է և ոչ թե անձնական կամ ազգային շահը: Ակադեմիկոս Գրիգոր Ղափանցյանը “Ն. Մառի գիտական ժառանգությունը անմահ է” հոդվածում գրում է. “Բնարկե, Մառը չէր կարող բարձր չգնահատել մեր պատմիչներին և հատկապես նա զբաղվել է Խորենացիով, Ազաթանգեղոսով, Անանուն պատմիչով: Առաջինի մասին խոսելիս նա ասել է. “Հին հայ պատմիչները ինչ-որ սֆինքսներ են, իսկ նրանց մեջ Խորենացին՝ սֆինքս հսկա: Նա իր մեջ վառ կերպով արտացոլել է հայկական մտավոր կյանքի մի ամբողջ էպոխա, ուստի և դարձել է ազգային կուռք”։ Մառը գտավ Պարիզի թանգարանի ձեռագրերում Խորենացու պատմության առաջին գրքի հիմնական աղբյուր՝ ասորի Մարաբասի ժամանակագրության մի քաղվածքը, որը հրատարակելով (1896) վերջ տվեց այն “անաչառ” քննադատներին (Կարիեր, Խալաթյանց...), որոնք Խորենացու գրքում ամեն ինչ տեսնում էին անձնական հնարանք կամ էլ եղծանք”³⁵:

Մինչ այդ՝ 1895-ին, Մառը փաստել է, թե Խորենացու խնդրում բոլորովին անտեսվում է, որ V դ. ոչ մի պատմիչ հայերի մոտ չի եղել ինքնուրույն և գրվել են ոչ միայն օրիգինալ գործեր: Այդ դարաշրջանի մատենագիրները ժողովրդական գործիչներ էին, քրիստոնեական գաղափարները հասկանալի հարազատ լեզվով, ազգային ոգով բացատրողներ: Դա մի բնագավառ էր, որում դեռ կային հեթանոսական տրամադրություններ: Վերջապես դրանք հեղինակներ էին, որոնք ընտրում էին իրենց անհրաժեշտ թեմաներ, և իզուր ենք նրանց փնտրում ուրիշ դարաշրջանում: Նա պնդում է, թե չի կարելի դարաշրջանի հատկություններն անտեսելով, որոնք հասուն էին V դարին (“տեղափոխել պատմիչին մի դարից ուրիշը”)³⁶:

Մովսես Խորենացու ժամանակի խնդրում երբեք չի կարելի մոռանալ մի կարևոր հանգամանք: Պատմահոր գլուխգործոցը հակազդադաշտական բովանդակություն ունի: Սա կարևոր փաստ է: Չէ որ հայտնի է, որ VII դ. այլևս Պարսկաստանը զրադաշտական կրոնի դավանող չէր, և Բագրատունիների գահակալության ժամանակ հայերի կրոնական ու քաղաքական պայքարն ուղղված էր մահմեդականության դեմ: Մի թե այնքան մեծ հայրենասեր մատենագիր, ինչպի-

³⁴ Տե՛ս “Journal Asiatique”, mai-juin, Paris, 1903, pp. 491–549.

³⁵ Գր. Ղափանցյան. Ն. Մառի գիտական ժառանգությունը անմահ է (տե՛ս Ն. Մառի անվան կաթինեոսի աշխատություններ, № 2, խմբագրությամբ Գր. Ղափանցյանի, Երևան, 1947, էջ 7):

³⁶ Н. Марр. О начальной истории Армении Анонима. К вопросу об источниках истории Моисея Хоренского. По поводу критических статей проф. А. Carrière’a (տե՛ս «Византийский временник», 1895, № 1, с. 306).

սին էր Մովսես Խորենացին, պետք է դիմեր ժամանակավրեպ կրոնի դեմ պայքարի, որը պարզապես հայերի պետականությանը չէր կարող սպառնալ:

Արդեն VIII դարում գրվել էր Ղևոնդի պատմությունը, որը նկարագրում է, թե որքան ծանր է եղել արաբական լուծը Հայաստանում: Բավական է հիշել, թե Ղևոնդը ինչպես է նկարագրում VIII դարի սկզբում հայ նախարարների ողջակիզումը Նախիջևանի և Խրամ ավանի եկեղեցիներում³⁷: Ղևոնդի երկի աշխարհաբար թարգմանիչ Ա. Տեր-Ղևոնդյանը ծանոթագրում է. “Նախճավանի և Խրամի բարբարոսական գործողությունների նկարագրությունը տալիս են ոչ միայն հայ, այլև բյուզանդացի, ասորի և արաբ պատմիչները”³⁸:

Նշանավոր ֆրանսիացի արվեստագետ C. de Harlez-ն, որը 1881-ին Փարիզում հրատարակել է զրադաշտական կրոնի սրբազան մատյանի Ավեստայի քննական բնագիրը, դիմում է V դ. պատմիչներ Մովսես Խորենացու ու Եղիշեի երկերում եղած փաստերին: Նա հիշեցնում է Խորենացու “Հայոց պատմության” այն հատվածը, որ պատմում է մար Զրադաշտի ու Շամիրամի բախումը³⁹:

Հայտնի է, որ մեր օրերում Ավեստայի բնագիրը հասել է խիստ թերի: Դա գիտեր դեռևս V դ. Եզնիկ Կողբացին և դրա համար էլ զրադաշտական կրոնի սրբազան մատյանը համարում էր “կցմցած ցնդաբանություն”⁴⁰:

Հառչեի հրատարակած Ավեստայի քննական բնագրում բացակայում են Եզնիկ Կողբացու “Եղծ աղանդոցում” ու Եղիշեի “Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին” երկում եղած Զրվանին ու նրա երկու որդիների՝ Որմիզդի և Արհմի ծնվելուն վերաբերող հատվածները: Այն վերականգնելու համար ֆրանսիացի արվեստագետը դիմում է Եղիշեի երկին⁴¹: Միհրներսես վզրուկ հրամանատարը Հայաստանի մեծերին նամակ է ուղարկում, որում բացատրում է զրադաշտական կրոնի աշխարհաստեղծման առասպելը. “Քանզի մինչ չև էին երկինք ու երկիր, Զրուան մեծն աստուած յաշտ առնէր զհագար ամ և ասէր. “Թերևս լիցի իմ որդի Որմիզդ անուն, արասցէ զերկին և զերկիր”: Եւ յոսցաւ երկուս յորովայնի. մի վասն յաշտ առնելոյ՝ և զմեւսն ևս ի թերևսն ասելոյ: Իբրև զիտաց, եթէ երկու են յորովայնի, “Որ վաղ եկեցէ, ասէ, նմա տաց զթագաւարութիւնս”: “... Եւ այսպէս բաժանին արա-

³⁷ Ղևոնդ. Պատմություն, Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1982, էջ 38–39:

³⁸ Նույն տեղում, էջ 147:

³⁹ Avesta Livre sacré du Zoroastrisme, traduit du text zend accompagné de notes explicatives et précédé d'une introduction à l'étude de l'Avesta et de la religion mazdeenne par C. de Harlez. Paris, 1881, p. XXIII.

⁴⁰ Եզնիկ Կողբացի. Եղծ աղանդոց, Թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Ա. Արբախալյանի, Երևան, 1970, էջ 86:

⁴¹ Avesta, pp. XXXVI–XXXVII.

րաճքս, հրեշտակը Որմիզդի են, իսկ դևքն Արհմնոյն, և ամենայն բարիք, որ յերկնից և այսր լինին՝ Որմզդի են, և ամենայն վնասք, որ անտի և այսօր գործին՝ գայն Արհմն արար”⁴²:

Ավեստայի քննական բնագրի առաջաբանում հիշատակվում է այն պատմական փաստը, ըստ որի VII դարում Պարսկաստանն ընկավ արաբական լծի տակ, և պարսիկներն անմիջապես ընդունեցին իրենց նոր տերերի կրոնը. “Մազդեզական հավատն ամբողջովին վերացավ: Արաբները, որոնք զրադաշտականներին դիտարկում էին որպես կռապաշտներ, նրանց արհամարհում էին և հալածում: Մազդեզական գրքերը, որոնք ընկնում էին նրանց ձեռքը, պատառոտվում էին ու այրվում”⁴³: Պարսիկներին հեշտ էր անցնել մահմեդականությանը: Ջրադաշտականության և մահմեդականության մեջ կային մեծ ընդհանրություններ: Երկուսն էլ ռազմատենչ կրոններ էին. զրադաշտականը և մահմեդականը ընդունում էին այլակրոնների ստորադաս լինելը: Երկու կրոններում էլ թույլատրվում էին մերձամուսնությունները և բազմակնությունը:

Բնական հարց է առաջանում, թե IX դ. ինչո՞ւ պետք է Խորենացին պայքարեր չեղած և իր երկրին որևէ վտանգ չսպառնացող կրոնի դեմ ու հանդիմաներ սիրելի մեկենասի՝ զրադաշտական կրոնի առասպելներին անդրադառնալու խնդրանքը. “Բայց զի նչ արդեօք տարփանք քեզ և Բիւրասպայ Աժդահակայ փծուն և անձոռնի առասպելքն իցեն և կամ էր սակս զմեզ Պարսից անյարմար և անոճ բանից, մանաւանդ թէ առաւել վասն անբանութեան, առնես աշխատ...”⁴⁴:

Մովսես Խորենացին, որն այնքան չէր սիրում ավելորդաբանություններ, ինչո՞ւ IX դարում պետք է հակակրանք արտահայտեր պարսից առասպելների վերաբերյալ: VII դ. սկսած հայ պատմիչների պայքարը՝ հանուն ազգային անկախության և ազգային ինքնագիտակցության, ուղղված էր մահմեդականության դեմ:

Մովսես Խորենացու “Հայոց պատմությունը” ազգային ծրագիր է՝ գրված դարերի համար: Եվ պատմահայրը հեռու է ազգային սնապարծությունից, մի զգացմունք, որը նպաստում է ոչ թե ազգային առաջընթացին, այլ նրան տանում է դեպի փակուղի:

V դարում, երբ չկար հայոց պետականությունը, Խորենացու մտահոգությունն առավել քան հասկանալի է: Բագրատունիների հայ թագավորությունը Մեծ Հայքում եղել է 885–1045 թվականին⁴⁵, և եթե Խորենացին IX դ. պատմիչ է, այն էլ պալատական պատմիչ, ինչո՞ւ պետք է ողբար հայ պետականության կորուստն այն

⁴² Եղիշե. Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1989, էջ 48–50:

⁴³ Avesta, pp. XXXVI–XXXVII.

⁴⁴ Մովսես Խորենացի. Պատմութիւն Հայոց, էջ 89:

⁴⁵ Հանրագիտական բառարան, հ. 1, Երևան, 2016, էջ 266:

դեպքում, երբ Բագրատունիները վերելքի մեջ էին, և նրանց գերիշխանության տակ էին նաև հարևան Վրաստանն ու Ադվանքը⁴⁶:

1990 թ. լույս է տեսել Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ռուսերեն նոր թարգմանությունը, որն իրականացրել է ակադեմիկոս Գագիկ Մարգարյանը: Թարգմանությանը կցված է հանգամանալի գիտական առաջաբան⁴⁷, որը նախատեսված է գիտական առավել լայն շրջանակների համար: Պատմաբանն անդրադառնում է Մովսես Խորենացու կենսագրությանը և լիովին հավատ է ընծայում այն փաստին, թե Եփեսոսի ժողովից հետո Մահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցը հայ ուսանողների մի խումբ ուղարկել են Ալեքսանդրիա՝ ուսման մեջ կատարելագործվելու: Ճանապարհին ծանոթացել են Եդեսիայի հարուստ գրադարանին, իսկ տարիներ անց հայրենիք վերադառնալիս անբարենպաստ նավագնացության հետևանքով հայտնվել են Բտալիայում, որտեղից Հունաստանի և Փոքր Ասիայի վրայով 440 թ. հետո վերադարձել են Հայաստան⁴⁸:

Մարգարյանի կարծիքով Խորենացու ձեռքի տակ աղբյուրների ոչ բավարար քանակ ունենալը և այդ աղբյուրները ոչ ճշգրիտ ժամանակագրելը չեն նսեմացնում պատմահոր ծառայությունը, այլ դառնում են անկյունաքար ու անգնահատելի ժառանգություն հին հայկական քաղաքակրթության համար:

Պատմաբանը կազմել է Խորենացու և Անանունի ժամանակագրությունների աղյուսակը և մատնացույց արել, որ Խորենացու ու գիտական ժամանակագրության ընդհանուր թիվը նույնն է՝ 214 տարի⁴⁹: Վ դարում Մովսես Խորենացու ստեղծած ավանդույթը շարունակել են Մովսես Կադանկատվացին, Ուխտանեսը, Հովհաննես Դրասխանակերտցին, Թովմա Արծրունին և մյուսները՝ մինչև XVII դ.:

Խորենացիագետն անդրադառնում է Օգ. Կարիերի, Գ. Գուլշմիտի, Գր. Խալաթյանցի տեսակետներին՝ չընդունելով դրանք: Նա ներկայացնում է մի մեծ ցուցակ այն գիտնականների, որոնք Խորենացուն տեսնում են V դ.: Դրանք են՝ Հ. Օրբելին, Ս. Երեմյանը, Բ. Առաքելյանը, Լ. Խաչիկյանը, Գ. Ջահուկյանը, Բ. Պիոտրովսկին, Կ. Տրեբերը, Բ. Դյակոնովը, Հ. Բարթիկյանը, Ա. Տեր-Ղևոնդյանը, Ս. Կրկյաշարյանը և ուրիշներ⁵⁰:

⁴⁶ Նույն տեղում, էջ 267:

⁴⁷ Տե՛ս Мовсес Хоренаци. История Армении. Перевод с древнеармянского языка. Введение и примечания Гагика Саркисяна. Ереван, 1990, с. VII–L.

⁴⁸ Նույն տեղում, էջ IX–X: 2018 թ. ու Մալթայի Գոգո կղզում տեսել եմ այն վայրը, ուր Տրոյայից հայրենի Բթակե կղզի վերադառնալիս ապրել է Հումերոսի «Իլիական» քերթվածի գլխավոր հերոսներից Ոդիսևսը: Այնպես որ, նույն ձևով Խորենացին կարող էր Հունաստանի փոխարեն ընկնել Բտալիա:

⁴⁹ Նույն տեղում, էջ XIII:

⁵⁰ Նույն տեղում, էջ XXV:

Խորենացուն քննադատողների կարծիքները հերքվում են նորագյուտ հնագիտական փաստերով: Խորենացին ասում է, թե Չարեհի որդի Արտաշեսը գյուղաբաժան քարեր է դրել արամեերեն արձանագրություններով: Պատմահոր այս փաստը հաստատվել է այդ քարերի մեկ տասնյակից ավելին հայտնաբերելով: Սարգսյանը հաստատաբան քանակի ճանաչում է Ռ. Թոմսոնի ծայրահեղ քննադատական մոտեցման փաստերի առիթով: Նա Խորենացուն այդպես անողորմ ժխտելը համարում է գերքննադատական ժամանակավրեպություն⁵¹:

Պակաս կարևոր չէ, որ Խորենացուց իմանում ենք, որ մինչև մեր նոր “Մասնա ծոեր” (“Մասունցի Դավիթ”) էպոս ունենալը հայերն ստեղծել են իրենց հին էպոսը և շատ հարուստ գողթան երգիչների բանահյուսությունը⁵²:

Այս հանգամանքը հատուկ շեշտել է նաև Ֆ. Ֆեյդին, որը “Մասունցի Դավիթ” էպոսի թարգմանության առաջաբանում գրում է. “Հինգերորդ դարի հայ պատմիչների մեջ կա մեկը, որը գերազանց է. դա Մովսես Խորենացին է: Նա չբավարարվեց մի ժամանակագրություն գրելով. նա կամեցավ ստեղծել իր ազգի պատմությունը՝ վաղնջական ժամանակներից սկսած: Այս նպատակով դիմեց հույն, պարսիկ, ասորի, քաղդեացի այն պատմիչներին, որոնց գործերը կարողացավ գտնել, բաղդատեց նրանց հաղորդած տեղեկությունները Աստվածաշնչի հիմնակետերին, նա պեղեց ազգային դիվանները, դիմեց անգամ բանավոր ավանդություններին՝ նրանցում փնտրելով պատմական դեպքերի արձագանքները: Մա նրա համար առիթ դարձավ ոգեկոչելու ստույգ լեզուներ, հիշատակելու տարբեր կրկնություններ վիպական քնարերգության, որոնցից կարճ հատվածներ գետեղեց իր գրքում: Աչքի անցկացնելով հեթանոսական ժամանակներին վերաբերող նրա գրքերը՝ այդ կտորներից կարելի է հաստատել հերոս Հայկից սերող թվարկվող և հիշատակվող արքաների կյանքի ընթացքը և նրանց գեղեցիկ ու նշանավոր գործերը: Միննույն ժամանակ պետք է նկատել, որ այս վեպերը բացառապես հերոսական սիրագործությունների պատմություններ չեն⁵³:

Մեկ ուրիշ հետազոտության մեջ Ֆեյդին գրում է. “Գուցե Մովսես Խորենացու վկայությանը համաձայն չեն այն բանասերները, ովքեր նրան չեն համարում ստույգ պատմիչ: Բացի այդ, կարևոր հարցերում նրա վկայությունները զլխավորապես համընկնում են այլ պատմիչների հաղորդածներին⁵⁴:


⁵¹ Նույն տեղում, էջ XXXIV–XXXV:

⁵² Նույն տեղում, էջ XLII:

⁵³ David de Sassoun, Épopée en vers, Traduit de l'arménien avec une introduction et des notes de Frédéric Feydit. Paris, 1964, pp. 38–39.

⁵⁴ F. Feydit. Considérations sur l'alphabet de saint Mesrop et recherches sur la phonétique de l'arménien. Wien, 1982 (Deuxième édition), p. 4.

Ի դեպ, հույն պատմագրության հայրը՝ Հերոդոտոսը, որն օգտագործել է իրենից առաջ եղած և իր ժամանակի աղբյուրներ, հիշատակում է միայն Հեկատեոսին⁵⁵: Վերջինիս քարտեզը կա Գ. Դ. Ռոժանսկու գրքում⁵⁶: Քարտեզը՝ զօված Ք. ծ. ա. VI դ., Սև ու Կասպից ծովերի արանքում տեղադրում է միայն Армения պետականությունը: Ահա այն.



Շատ դիպուկ բանախոսելով Ռ. Թոմսոնի հետ՝ Գ. Մարգսյանը ներկայացնում է Խորենացու “Հայոց պատմության” միջազգային արժեքը: Պատմահոր տեսադաշտում ամբողջ քաղաքակիրթ աշխարհն է՝ Արևմուտքում՝ Բրիտանիան, Արևելքում՝ Չինաստանը⁵⁷:

Ֆրեդերիկ Մակլերը ևս Խորենացուն համարում է ոսկեդարի պատմիչ: Նրա վերաբերմունքը Խորենացու նկատմամբ ճշգրտորեն ձևակերպել է Մեսրոպ Մազիստրոսը. “Ֆրանսիացի հայագետ Կարիերը եվրոպացի մասնագետների շրջանում և գլխավորապես հայերիս մեջ, անուն հանեց սկսած վերջին իննսուն թվականից, երբ սկսեց ուսումնասիրել Մովսես Խորենացու պատմությունը և հատկա-

⁵⁵ Мовсес Хоренацци. История Армении, с. XXXI.

⁵⁶ St. u. И. Д. Рожанский. Античная наука. М., 1980, с. 68.

⁵⁷ Мовсес Хоренацци. История Армении, с. XLVII.

պես այդ գրվածքի ժամանակի խնդիրը: Նրա պաշտպանած կարծիքները, թե Խորենացին օգտվել է փոքր կոչված Մոկրատի պատմությունից և Մադադասի ժամանակագրությունից, ոչ միայն չհաստատվեցին, այլ Մոկրատի վերաբերմամբ միանգամայն հերքվեցին: Չնայած այդ հանգամանքին՝ հանգուցյալ հայագետը մեծ ծառայություն է մատուցել Խորենացու ուսումնասիրությանը: Նրա հողվածների հարուցած հետաքրքրության շնորհիվ համարյա բոլոր հայագետները ավելի կամ պակաս ուշադրությամբ զբաղվեցին Խորենացու խնդրով, և ստեղծվեց մի պատկառելի գրականություն: Անկասկած այդ հանգամանքի շնորհիվ է, որ Կարիերի կենսագիր պ. Ֆ. Մակլերը յուր շարադրության խնդիրը նշանակել է՝ Մովսես Խորենացի և Օգյուստ Կարիերի աշխատությունները⁵⁸:

Խորենացու ժամանակին վերաբերող նոր գրքեր այսօր էլ գրվում են⁵⁹:

Իր շատ հարուստ առաջաբանում Ժ.-Պ. Մահեն նշում է, թե ինչպես Եվրոպայում Խորենացու պատմության լատիներենով երևան գալը գիտական շրջանակներում առաջացրեց իսկական մշակութային շոկ (հարված)՝ «un véritable choc culturel»: Եվրոպայի գերագանց մտքերը տեսան ուժեղ հետաքրքրություն առաջացնող անկախ մի պատմագրություն⁶⁰:

Բոլոր դեպքերում չընդունելով Հայաստանի պատմահոր V դ. ասպարեզ գալը՝ Ժ.-Պ. Մահեն «Հայոց պատմության» բնագրի թարգմանությամբ կատարել է կարևոր աշխատանք, և հուսանք, որ նա էլ մի օր Վ. Լանգլուայի նման կկրկնի պատկառելի հայագգի հոգևորականի խոսքերը. «Կգա մի օր, որ գիտական Եվրոպան նրան կհայտարարի Մեծ՝ իր ապրած ժամանակի համար, կգա մի օր, որ մեր պատմաբանին մեղադրողները կարդարացնեն նրան, որովհետև եթե լավ հետազոտեն մեր Խորենացուն, կճանաչեն նրա անկեղծությունը, և նրանք էլ համաձայն կլինեն անվանելու Հայաստանի պատմահայր, ինչպես որ մեր նախնիները միշտ անվանել են նրան»⁶¹:

Աելիտա Դոլուխանյան – բ. գ. դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ հին և միջնադարյան հայ գրականություն, բանահյուսություն, ժամանակակից հայ գրա-

⁵⁸ Մե ս ր ո պ ա ր ք. Տ ե ր - Մ ո վ ս ի ս յ ա ն (Մե ս ր ո պ Մ ա գ ի ս տ ր ո ս). Հողվածների ժողովածու, Հրատ. պատրաստեց Գ. Տեր-Վարդանյան, Ս. Էջմիածին, 2010, էջ 506:

⁵⁹ Տե՛ս Ս. Վ. Մ ո լ շ ե ղ յ ա ն. Մովսես Խորենացու դարը, Երևան, 2007, 410 էջ:

⁶⁰ Moïse de Khorène. Histoire de l'Arménie, p. 16.

⁶¹ V. Langlois. Étude sur les source de l'Histoire d'Arménie de Moïse de Khoren. Paris, 1861, p. 368.

կանություն, հայագիտություն, գրական կապեր: Հեղինակ է 30 գրքի և շուրջ 500 գիտական հոդվածի: aelita.dolukhanyan@gmail.com

REFERENCES

- A. G. Abrahamyan.** Anania Sh'irakacu matenagrut'yund, Usumnasirut'yun, Ye'rev'an, 1944 (In Armenian).
Amenayn Hayoc kat'ogh'ikosner. Xmbagrut'yamb` Petros Hovhannisyani, Ye'rev'an, 2001 (In Armenian).
 Avesta Livre sacré du Zoroastrisme, traduit du text zend accompagné de notes explicatives et précédé d'une introduction à l'étude de l'Avesta et de la religion mazdeenne par C. de Harlez. Paris, 1881.
- A. V. Mush'egh'yan.** Movses Xorenacu darð, Ye'rev'an, 2007 (In Armenian).
 David de Sassoun, Épopée en vers, Traduit de l'arménien avec une introduction et des notes de Frédéric Feydit. Paris, 1964.
- D. S. Lixachjev pri uchastii A. A. Aljeksjejeva i A. G. Bobrova.** Tjekstologija na matjerialje ruskog litjeratury X-XVII vjekov. SPB., 2001 (In Russian).
 Enciklopedicheskij slovar', t. XIX A. Izdateli: F. A. Brokgauaz, I. A. Jefron. SPB., 1896 (In Russian).
- F. Conybeare.** The date of Moses of Khoren (Byzantinische Zeitschrift. Munich, 1901, № 3–4).
- F. Feydit.** Considérations sur l'alphabet de saint Mesrop et recherches sur la phonétique de l'arménien. Wien, 1982 (Deuxième édition).
- Ghev'ond.** Patmut'yun, Targmanut'yund, nerac'ut'yund yev' c'anot'agrut'yunnerð` Aram Ter-Gh'ev'ondyani, Ye'rev'an, 1982 (In Armenian).
- Gr. Xalatjanc.** Armjanskij epos v istorii Armenii Moiseja Xorenskogo: opyt kritiki istochnikov. V 2-x chastjax. M., 1896 (In Russian).
 "Handes amsorey" (Vienna), 1902, N 5, N 6, N 7 (In Armenian).
- I. D. Rozhanskij.** Antichnaja nauka . M., 1980 (In Russian).
 "Journal Asiatique", mai-juin. Paris, 1903.
- Mesrop arq. Ter-Movsisyan (Mesrop Magistros).** Hodvac'neri zh'ogh'ovac'u, Hrat. Patrastec G. Ter-Vardanyan, S. Ejmiac'in, 2010 (In Armenian).
- M. Nalbandyan.** Ye'rkeri liakatar zh'ogh'ovac'u vec hatorov, h. 4, Ye'rev'an, 1983 (In Armenian).
- Moïse de Khorène.** Histoire de l'Arménie, Nouvelle traduction de l'arménien classique par Annie et Jean-Pierre Mahé (d'après Victor Langlois) avec une introduction et des notes, Gallimard. Paris, 1993.
- Moses Khorenats'i.** History of the Armenians, Translations and Commentary on the Literary Sources by Robert W. Thomson, revised edition, Caravan Books, Ann Arbor, 2006.
- Movses Xorenaci.** Hayoc patmut'yun, Ash'xarhabar t'argmanut'yund yev' meknabanutyunnerð St. Malxasyani, Ye'rev'an, 1981 (In Armenian).
- Movses Xorenaci.** Patmut'ivn Hayoc, Qnnakan bnagir yev' nerac'ut'yund M. Abegh'yan yev' S. Harutyunyani, Nmanahanutyun, Lracumnerð A. B. Satgsyani, Ye'rev'an, 1991 (In Grabar).
- Movses Xorenaci.** Istorija Armenii. Perevod s drevnjearmjanskogo jazika. Vvedjenje I primjechanija Gagika Sarkisjana. Jerjevan, 1990 (In Russian).
- P. Hovhannisyanyan.** Movses Xorenaci Matenagitutyun, Ye'rev'an, 2013 (In Armenian).
- Sebeos.** Patmut'ivn, Ash'xatasitut'yamb G. V. Abgaryani, Ye'rev'an, 1979 (In Grabar).
- St. Malxasyanc.** Hayeren bacatrakan bar'aran, h.4, ch'-f, Ye'rev'an, 2010 (In Armenian).
- V. Langlois.** Etude sur les source de l'Histoire d'Arménie de Moïse de Khoren. Paris, 1861.
- Ye'gh'ish'ye'.** Vasn Vardanay yev' Hayoc paterazmin, Ye'rev'an, 1989 (In Grabar).

Ye'znik Kogh'beci. Ye'gh'c' agh'andoc, Targmanut'yund yev' c'anotagrut'yunnerθ A. A. Abrahamyani, Ye'rev'an, 1970 (In Armenian).

ПРЕДИСЛОВИЕ НОВОГО ФРАНЦУЗСКОГО ПЕРЕВОДА
“ИСТОРИИ” ХОРЕНАЦИ И ЭПОХА ОТЦА
АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИИ

АЭЛИТА ДОЛУХАНЯН

Резюме

Ключевые слова: Жан-Пьер Маэ, Мовсес Хоренаци, “История Армении”, Р. Томсон, Ог. Кариер, Ф. Конибер, V век, Г. Саркисян, зороастризм, историк.

Жан-Пьер Маэ вместе со своей супругой, также плодотворным арменоведом Анни Маэ, совершил очень благородное дело, представив французам и ученым франкоязычных стран новый выдающийся перевод “Истории Армении” отца армянской историографии Мовсеса Хоренаци, с пространным (91 с.) предисловием и богатыми аннотациями.

В своем очень богатом предисловии Жан-Пьер Маэ отмечает, что появление в Европе “Истории” Мовсеса Хоренаци на латинском языке произвело настоящий культурный шок (“un véritable choc culturel”) в научных кругах, а у великих умов Европы появился огромный интерес по отношению к независимой историографии.

Даже если Жан-Пьер Маэ не принимает, что отец армянской историографии жил в V веке, сделав перевод армянского текста “Истории Армении”, он совершил важное дело и надо надеяться, что он тоже, вслед за Виктором Ланглуа, повторит слова почтенного армянского религиозного деятеля: “Придет время и ученная Европа его сочтет великим для своего времени, придет день, когда обвиняющие нашего историка оправдают его, поскольку, если хорошо исследовать нашего Хоренаци, то его искренность станет ясной, и они тоже будут согласны называть его отцом армянской историографии, так же как наши предки всегда его называли”.

Аэлита Долуханян – д. филол. н., профессор, член-корреспондент НАН РА, заведующая кафедрой древней и средневековой армянской литературы и методики ее преподавания АГПУ им. Х. Абовяна. Научные интересы: древнеармянская и средневековая литература, фольклор, современная армянская литература, арменоведение, литературные связи. Автор 30 книг и около 500 научных статей. aelita.dolukhanyan@gmail.com

THE PREFACE OF THE NEW FRENCH TRANSLATION OF THE “HISTORY” BY
KHORENATSI AND THE ERA OF THE FATHER OF ARMENIAN HISTORIOGRAPHY

AELITA DOLUKHANYAN

Summary

Key words: Jean-Pierre Mahé, Movses Khorenatsi, “History of Armenia”, R. Thomson, Aug. Carriere, F. Conybeare, V century, G. Sargisian, zoroastrianism, historian.

Jean-Pierre Mahé realized a very rewarding work together with his wife Annie Mahé, also a fruitful armenologist, presenting a new and outstanding translation of the “History” of Armenia by Movses Khorenatsi, Father of Armenian historiography, to the French people and scholars of French-speaking countries, with a lengthy (91 p.) preface and rich annotations.

In his very rich preface, Jean-Pierre Mahé notes that the appearance of the “History” of Movses Khorenatsi in Europe in Latin language produced a real cultural shock (“un véritable choc culturel”) in scientific circles, and great minds of Europe had a great interest towards an independent historiography.

Even if Jean-Pierre Mahé does not accept that the Father of Armenian historiography lived in the V century, having performed the translation of the Armenian text of his “History of Armenia”, he did an important work and we must hope that he, following Victor Langlois, will repeat the words of a prominent Armenian religious figure: “The time will come and the educated Europe will consider him great for his time, the day will come when the accusers of our historian will acquit him, because if we study our Khorenatsi well, his sincerity will become clear and they will also agree to call him the Father of Armenian historiography, as our ancestors would always call him”.

Aelita Dolukhanyan – Doctor of Philological Sciences, Professor, Correspondent Member of the NAS RA, Chair of the Department of Ancient and Medieval Armenian Literature at the ASPU after Khachatur Abovian. Scientific interests: Ancient and Medieval Armenian Literature, folklore, contemporary Armenian Literature, Armenology, literary connections. Author of 30 books and over 500 scientific articles. aelita.dolukhanyan@gmail.com

ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ՏՈՄԱՐՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ ԱՄՍԱԹՎԻ ՀԱՐՑԸ
1910–1930-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ *

ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Բանալի բառեր՝ Հովհաննես Թումանյան, Նվարդ Թումանյան, Թիֆլիս, Երևան, հորեյան, Հուլյան տոմար, Գրիգորյան տոմար, բանաստեղծ, կենսագրություն:

Հայտնի է, որ Հուլիոս Կեսարի կողմից հաստատված օրացույցի (Հուլյան տոմար) գործածության ընթացքում առաջ եկած սխալն ուղղելու՝ ավելացած 10 օրվա տարբերությունը չեզոքացնելու նպատակով Հռոմի Գրիգորիոս XIII պապը 1582 թ. փետրվարի 24-ին հատուկ բուլլա (հրաման) հրապարակեց, որի համաձայն հոկտեմբերի 4-ին հաջորդող օր հայտարարվեց ոչ թե հոկտեմբերի 5-ը, այլ 15-ը: Նոր տոմարը պապի անունից ստացավ “Գրիգորյան” անվանումը: Այդ թվականից սկսած Եվրոպայի կաթոլիկ պետությունները մեկը մյուսի հետևից սկսեցին գործածել նոր տոմարը (կրոնական այլ ուղղությունների ներկայացուցիչներն այս հարցում որոշակի վերապահ մտեցում ունեին): Հաջորդ տասնամյակներում ու հարյուրամյակներում նրանց հետևեցին տասնյակ երկրներ: Որոշ պետություններ Հուլյան տոմարից հրաժարվեցին միայն XX դ.: Այս ընթացքում Հուլյան (հին) և Գրիգորյան (նոր) տոմարների միջև եղած տարբերությունը հասավ մինչև 13 օրվա: Այսպես՝ եթե XVI–XVII դդ. երկու օրացույցների տարբերությունը 10 օր էր, ապա XVIII դ. դարձավ մինչև 11 օր, XIX դ.՝ մինչև 12 օր, XX դ.՝ մինչև 13 օր, իսկ XXII դ.՝ կղառնա մինչև 14 օր¹:

Խորհրդային Ռուսաստանում Գրիգորյան տոմարը գործածության մեջ դրվեց 1918 թ. փետրվարի 14-ից, իսկ Ռուսական կայսրության երբեմնի մաս Անդրկովկասում՝ մայիսի 1-ից: Երկրամասի օրենսդիր մարմնի՝ Անդրկովկասյան սեյմի ապրիլի 13-ի նիստում քննարկվեց կառավարության առաջարկը՝ շտապ կարգով հաստատել նոր տոմարին անցնելու մասին Ներքին գործերի նախարարության ներկայացրած օրինագիծը: Հիմնական զեկուցողը սեյմի անդամ, իրավաբան Գ-

* Ընդունվել է տպագրության 04. VI. 2019 թ.: Գրախոսվել է 19. VI. 2019 թ.

¹ Հ. Ս. Բադալյան. Օրացույցի պատմություն, Երևան, 1970, էջ 160–168, Շ. Մ. Селешников. История календаря и хронология. М., 1977, с. 69–75.

ևորգ Խատիսյանն էր (բանաստեղծ Հովհաննես Թումանյանի փեսան): Առաջարկն առանց էական ընդդիմության ընդունվեց, որով գործող Հուլյան տոմարի փոխարեն Անդրկովկասի տարածքում անցում կատարվեց Գրիգորյան տոմարին. ապրիլի 17-ի, գիշերվա ժամը 12.00-ին հաջորդող օր համարվեց ոչ թե ապրիլի 18-ը, այլ մայիսի 1-ը²: Անդրկովկասյան կառավարության Ներքին գործերի նախարար Նոյ Ռամիշվիլու ստորագրած “Անդրկովկասում նոր տոմար մտցնելու մասին” օրենքը շրջաբերականի տեսքով ուղարկվեց երկրամասի նահանգային կենտրոններ (այդ թվում՝ Երևան)³:

Փաստորեն, Հայաստանի տարածքում ևս 1918 թ. անցում կատարվեց նոր՝ Գրիգորյան տոմարին: Չնայած այս ակնհայտ հանգամանքին՝ հայկական խորհրդային հանրազիտարանում նշված է, որ Հայաստանում նոր տոմարին անցումը տեղի է ունեցել “սովետական կարգեր հաստատվելուց հետո”⁴: Այս սխալը տեղ է գտել նաև “Վիքիպեդիա”-ի հայկական տարբերակում⁵:

Անդրկովկասի ողջ տարածքում նոր տոմարին անցումը միաժամանակ չկատարվեց: Եթե անդրկովկասյան պետությունների մայրաքաղաքներում (Թիֆլիս, Բաքու, Երևան) շատ արագ գործածության մեջ մտավ նոր տոմարը⁶, ապա որոշ ծայրագավառներում (այդ թվում՝ Սյունիքում և Արցախում) դեռևս շարունակում էին գործածել հին տոմարը, որոշները իրար հետ շփոթում էին հինն ու նորը: Համապատասխան մասնագետների բացակայության պատճառով Անդրկովկասում տոմարական մասնագիտական հաշվարկներ չէին կատարվում, թույլ էր նաև Եվրոպայի հետ կապը՝ գոյություն ունեցող հաշվումներին ծանոթանալու համար: Այս ամենի հետևանքով հանրային լայն շրջանակներին հայտնի չէր, որ բոլոր դեպքերում չէ որ անհրաժեշտ է հին և նոր տոմարների տարբերությունը 13 օր համարել: Եթե XX դ. առաջին երկու տասնամյակներում տեղի ունեցած իրադարձությունները նոր տոմարով թվագրելիս տարակարծություն չէր լինում (հայտնի էր, որ անհրաժեշտ է ընդամենը 13 օր ավելացնել), ապա 1900 թ. նախորդած իրա-

² Закавказский сейм. Стенографический отчетъ (сессия первая, заседание двадцать пятое, 13-го апреля), Тифлис, 1918, с. 30–34; “Մշակ” (Թիֆլիս), 15. IV. 1918:

³ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 203, ց. 1, գ. 28, թ. 3:

⁴ Հայկական սովետական հանրազիտարան, հ. 12, Երևան, 1986, էջ 53:

⁵ <https://hy.wikipedia.org/wiki/%D4%B3%D6%80%D5%AB%D5%A3%D5%B8%D6%80%D5%B5%D5%A1%D5%B6%D6%85%D6%80%D5%A1%D6%81%D5%B8%D6%82%D5%B5%D6%81> (այցելությունը՝ 29. 03. 2019 թ.):

⁶ Անդրկովկասում հրատարակվող հայկական հիմնական պարբերականները ևս մայիսի 1-ից (ապրիլի 18) սկսեցին գործածել Գրիգորյան տոմարը: Ի դեպ, դեռևս մարտի 18-ի համարից Թիֆլիսի “Հորիզոն”-ը Հուլյան տոմարին զուգահեռ գործածում էր Գրիգորյան տոմարը, իսկ արդեն մայիսի 1-ից լիարժեք անցավ վերջինին:

դարձությունների պարագան (այդ թվում՝ անհատների ծննդյան ամսաթվերի որոշման հարցը) համեմատաբար խնդրահարույց էր: Նույնիսկ անդրկովկասյան հանրապետությունների մայրաքաղաքներում (անգամ՝ Թիֆլիսում) հոբելյանական իրադարձությունների տոմարական հաշվումներում սխալներ էին թույլ տրվում: 12 օրվա փոխարեն հաճախ 13 օր էին գումարում: Այս իրողությունը վերաբերում է նաև Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի 50-ամյակի տոնակատարություններին: Վերոհիշյալ փաստն ուշագրավ է նաև այն առումով, որ, ինչպես տեսանք, Անդրկովկասում նոր տոմար մտցնելու հարցում գործուն մասնակցություն էր ունեցել բանաստեղծի փեսան՝ Գ. Խատիսյանը, ով ենթադրելի է՝ տոմարական հաշվումների վերաբերյալ առավել տեղեկացված անձանցից պետք է լիներ: Սակայն նա 1919 թ. պաշտոնավարում էր Երևանում:

Հայ առաքելական եկեղեցու Վրաստանի և Իմերեթի Հայոց վիճակային կոնսիստորիայի Լոռու՝ Դսեղ, Մարց և Քարինջ գյուղերի՝ 1869 թ. չափաբերական մատյանում արձանագրված է, որ Սսյան (հետագայում՝ Թադեոս քահանա) և Սոնա Թումանյանների որդի Հովհաննեսը ծնվել է փետրվարի 7-ին, մկրտվել՝ փետրվարի 15-ին (հասկանալի է, հին տոմարով): Կնքահայրն Արսեն Հովսեփյանն էր, մկրտության խորհուրդը կատարել էր Զաքարիա քահանա Եզանյանը⁷: Ըստ այդմ՝ Հովհ. Թումանյանի ծննդյան օրը (իբրև XIX դ. տեղի ունեցած իրադարձություն) նոր տոմարով պետք է նշվեր փետրվարի 19-ին: Սակայն բանաստեղծի ծննդյան 50-ամյակը Թիֆլիսում, ուր բնակվում էր նա, տոնվել է փետրվարի 20-ին:

Հայտնի փաստ է, որ Ամենայն հայոց բանաստեղծը ծննդյան տարեդարձը նշելու սովորություն չի ունեցել: Ժամանակակիցներից իրավաբան, հրապարակախոս, “Закавказское Слово” թերթի նախկին աշխատակից Վարդգես Ահարոնյանը հիշում է՝ թերթի խմբագրակազմի անդամ Մամիկոն Գևորգյանը մտապահելիս է եղել, որ 1919 թ. փետրվարի 20-ին լրանում է Հովհ. Թումանյանի 50-ամյակը: Հենց նա էլ առաջարկել է թերթի՝ այդ օրվա համարը նվիրել բանաստեղծի հոբելյանին⁸: Պարբերականի՝ փետրվարի 20-ի համարի ծավալի շուրջ կեսը “Հովհաննես Թումանյան. ծննդյան 50-ամյակը (1869 – 7/20 փետրվարի 1919)” խորագրի ներքո նվիրված է բանաստեղծի հոբելյանին: Այստեղ հրապարակումներ ունեն ռուս բանաստեղծ Սերգեյ Գորոդեցկին, վրացի գրող-հրապարակախոս Լևան Կիպիանին, Վ. Ահարոնյանը⁹: Փաստորեն, կարելի է կարծել, որ Թումանյանի լավ բարե-

⁷ ՀԱԱ, ֆ. 53, ց. 5, գ. 3, թ. 24 շրջ.–25:

⁸ Վ. Ա հ ա ր ո ն ե ա ն. Յովհաննես Թումանյան. մարդը և քաղաքացին, Բոստոն, 1936, էջ 159–160:

⁹ “Закавказское Слово” (Тифлис), 20. II. 1919. Տե՛ս նաև՝ Ա. Յ ա к а р я н. О праздновании 50-летия Ованеса Туманяна в Тифлисе – ИФЖ, 2019, № 1, с. 210–222.

կամ Մ. Գևորգյանը նրա ծննդյան տարեդարձը ոչ ճիշտ օր տոնելու ավանդույթի հիմնադիրներից է: Վերջինս մեկ տասնամյակ անց ընդգրկվեց նաև բանաստեղծի 60-ամյակը տոնող ՀՄԽՀ պետական հանձնաժողովի կազմում:

Ի դեպ, Թիֆլիսի հայկական թերթերից առնվազն երկուսը ևս իրենց փետրվարի 20-ի համարները նվիրել են Հովհ. Թումանյանի հոբելյանին: Այսպես՝ «Մշակ»-ի՝ 1919 թ. փետրվարի 20-ի համարում (պարբերականի 4 էջից 3-ը նվիրված է բանաստեղծի մեծարմանը) գրված է. «Այսօր լրանում է յիսուն տարին այն մարդու, որի գլուխը վաղաժամ ալեհեր է դարձել, իսկ հոգին մնում է միշտ արի: Դա բանաստեղծ Յովհ. Թումանյանն է, բանաստեղծ՝ առանց որակումների»: Բսկ թերթի հաջորդ փետրվարի 21-ի համարում մանրամասն տեղեկատվություն է հրատարակված բանաստեղծին նվիրված հոբելյանական հանդեսների մասին¹⁰: Հավելենք, որ Թիֆլիսի «Ժողովրդի ձայն» թերթը ևս 1919 թ. փետրվարի 20-ի համարը գրեթե ամբողջովին նվիրել էր Հովհ. Թումանյանին¹¹: Փաստորեն, Անդրկովկասի երբեմնի կենտրոն Թիֆլիսում այդ օրերին հայ մտավորականների շրջանում նույնիսկ կասկած չի եղել, որ 1869 թ. փետրվարի 7-ը նոր տոմարով պետք է լինի ոչ թե փետրվարի 20-ը, այլ՝ 19-ը:

Այսպիսով՝ միանշանակ է, որ Հովհ. Թումանյանի կենդանության օրոք՝ նրա 50-ամյակի օրերին, նոր տոմարով իր ծննդյան ամսաթիվ են համարել փետրվարի 20-ը: Ուստի բանաստեղծին ուղղված շնորհավորանքներն ու տոնական հանդեսները սկսվել են այդ օրը և շարունակվել հաջորդ ամիսներին:

1929 թ. Ամենայն հայոց բանաստեղծի 60-ամյակի տոնակատարությունների (արդեն՝ հետմահու) ժամանակ¹² ևս կարծես հարց չի առաջացել, թե գուցե՞ նոր տոմարով փետրվարի 20-ը չէ նրա ծննդյան օրը: Ընդհակառակը, արխիվային փաստաթղթերի և պարբերական մամուլի ուսումնասիրությունից տեսնում ենք, որ նրա ծննդյան ամսաթիվ է համարվել փետրվարի 20-ը: Այսպես՝ գավառային լուսավորության բաժիններին ուղղված Խորհրդային Հայաստանի լուսավորության ժողովմատի սոցիալական դաստիարակության գլխավոր վարչության՝ 1929 թ. փետրվարի 5-ի և Երևանի դպրոցներին ուղղված քաղաքի լուսավորության բաժնի փետրվարի 18-ի շրջաբերականներում ուղղակի արձանագրվում էր, որ ժողովրդական մանկական գրող Հովհ. Թումանյանի ծննդյան 60-ամյակը նոր տո-

¹⁰ «Մշակ», 21. II. 1919:

¹¹ «Ժողովրդի ձայն» (Թիֆլիս), 20. II. 1919:

¹² Հովհ. Թումանյանի ծննդյան 60-ամյա տարեդարձը կատարող պետական հանձնաժողովը՝ լուսժողովում Ասքանազ Մռավյանի ղեկավարությամբ, 1929 թ. հունվարի 19-ին որոշում էր կայացրել փետրվարի 19-26-ը համարել բանաստեղծի հիշատակին նվիրված հատուկ շաբաթ (տե՛ս ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 217, թ. 5 և շրջ.):

մարով լրանում է “սույն թվի փետրվարի 20-ին”¹³: “Խորհրդային Հայաստան” պաշտոնաթերթը ևս բանաստեղծի հորեյանին նվիրված հատուկ համարը հրատարակել է փետրվարի 20-ին¹⁴: Նույն փետրվարի 20-ին է բացվել Հանրային գրադարանի և Պետական թանգարանի համատեղ հորեյանական ցուցահանդեսը՝ նվիրված բանաստեղծին: Այդ օրը Հանրային գրադարանի մանկական ընթերցասրահում Հովհ. Թումանյանի մասին զեկուցում է կարդացել ճանաչված մանկավարժ Միմակ Սահակյանը¹⁵:

Այդուհանդերձ, նշյալ փաստը, մեղմ ասած, զարմանք է հարուցում: Բանն այն է, որ արդեն 1925 թ. հրատարակվել էր օրացույցի պատմության վերաբերյալ խորհրդային ճանաչված մաթեմատիկոս, աստղագետ Նաում Բդելսոնի աշխատությունը, որտեղ մանրամասն անդրադարձ էր կատարվել նաև Գրիգորյան տոմարին, այդ թվում՝ պատմական տարբեր ժամանակավիճակների դեպքում հին ու նոր տոմարների միջև գոյություն ունեցող օրերի տարբերություններին¹⁶:

Սակայն բոլոր դեպքերում չէ, որ իբրև Հովհ. Թումանյանի ծննդյան օր փետրվարի 20-ն է նշվել: Փաստերի համադրումից երևում է, որ 1920–1930-ականներին բանաստեղծի ժառանգներն ու կենսագրությանն անդրադարձողներն առավել հաճախ նրա ծննդյան օրը վկայակոչել են հին տոմարով: Այսպես՝ բանաստեղծի երկերի 1926 թ. հրատարակության անստորագիր առաջաբանում նրա ծննդյան ամսաթիվը (առանց այդ մասին նշելու) գրված է հին տոմարով՝ 1869 թ. փետրվարի 7¹⁷: Հովհ. Թումանյանի ծննդյան 70-ամյակին (1939 թ.) նախորդող տարիներին (այդ թվում՝ մահվան 15-ամյա տարելիցի օրերին) նրան նվիրված հրապարակումներում ծննդյան ամսաթիվն առավել հաճախ գործածվում էր հին տոմարով: Ասվածը վերաբերում է նաև բանաստեղծի դուստր Նվարդ Թումանյանի հրապարակումներին, այդ թվում՝ ճանաչված գրականագետ Արամ Ինձիկյանի հետ “Գրական թերթ”-ում հրատարակած համահեղինակային հոդվածին, ինչպես նաև հոր մանկությանն ու պատանեկությանը նվիրված աշխատության առաջին հրատարակությանը (1938 թ.)¹⁸: Բանաստեղծի ծննդյան ամսաթիվը նոր տոմարով վկայակոչ-

¹³ ՀԱՍ, ֆ. 122, ց. 1, գ. 217, թ. 12, ֆ. 133, ց. 1, գ. 1484, թ. 2:

¹⁴ “Խորհրդային Հայաստան” (Երևան), 20. II. 1929:

¹⁵ ՀԱՍ, ֆ. 122, ց. 1, գ. 217, թ. 3, ֆ. 133, ց. 1, գ. 1484, թ. 4:

¹⁶ Н. И. И д е л ь с о н. История календаря. Л., 1925, с. 81.

¹⁷ Հ ո Վ հ. Թ ո մ ա ն յ ա ն. Երկերի ժողովածու, Երևան, 1926, էջ III:

¹⁸ “Հոկտեմբերիկ” (Երևան), 1935, № 3–4, էջ 4, “Խորհրդային Հայաստան”, 23. III. 1938, “Պրոլետար” (Թիֆլիս), 23. III. 1938, “Բանվոր” (Լենինական), 23. III. 1938, “Գրական թերթ” (Երևան), 20. III. 1938, Ն. Թ ո մ ա ն յ ա ն. Թումանյանի մանկությունը և պատանեկությունը. 1869–1883, Երևան, 1938, էջ 5: Գրքի երկրորդ (փոփոխություններով) հրատարակությունում ևս բանաստեղծի ծննդյան ամսաթիվը գրված է միայն հին

չելու դեպքում էլ “փետրվարի 20” էր գրվում, ինչպես նրա բանաստեղծությունների և պատմվածքների ռուսերեն թարգմանության համար 1936 թ. փետրվարի 29-ին Ն. Թումանյանի պատրաստած հոր համառոտ կենսագրականում կամ Լենինականի “Բանվոր” թերթում հրատարակված բանաստեղծի անստորագիր կենսագրականում¹⁹: Փաստորեն, 1938 թ. դրությամբ “փետրվարի 19”-ը դեռևս չէր գործածվում:

Կարծում ենք, փետրվարի 19/20-ի “առեղծվածի” բացահայտման խնդրում վճռորոշ կարող է լինել բանաստեղծի դասեր՝ Ն. Թումանյանի ուսումնասիրություններին դիմելը, ով անգնահատելի ավանդ ունի հոր կենսագրության առաջին փուլի հետազոտման և հանրությանը ներկայացնելու գործում:

Ինչպես տեսանք, բանաստեղծի դուստրը հոր ծննդյան օրը նոր տոմարով նշելուց առավել հաճախ խուսափել է: Այս իրողությունը կարող է վկայել այն մասին, որ նա կարծիքներ ու հիմնավորումներ էր լսել (գուցե՞ իր համար ոչ ամբողջովին համոզիչ), որ XIX դ. տեղի ունեցած իրադարձությունների դեպքում հին և նոր տոմարների տարբերությունը 12 օր է: Ուստի առավել նպատակահարմար է համարել հոր ծննդյան ամսաթիվը գրել հին տոմարով:

Արդեն Հովհ. Թումանյանի ծննդյան 70-ամյակի առթիվ հրատարակած կենսագրական գրքում (այն սպագրության է հանձնվել 1939 թ. ապրիլի 9-ին) Ն. Թումանյանն ուղղակի գրում էր. “Թումանյանը ծնվել է 1869 թ. փետրվարի 7-ին (նոր տոմարով՝ փետրվարի 19-ին) Լոռու Դսեղ գյուղում մի նահապետական ընտանիքում”²⁰: Սա Հովհ. Թումանյանի ծննդյան օրը Գրիգորյան տոմարով փետրվարի 19-ը մատնանշող մեզ հայտնի ամենահին արձանագրումն է: Ցավոք, չի հաջողվել պարզել, թե ով է տոմարական հաշվումներ կատարելու սկզբունքների մասին 1938–1939 թթ. ընթացքում փաստարկված մոտեցում ներկայացրել բանաստեղծի դասերը՝ փարատելու նրա հնարավոր կասկածները²¹:

տոմարով (տե՛ս Ն. Թումանյան. Հովհաննես Թումանյանի մանկությունը, Երևան, 1946, էջ 21):

¹⁹ О. Туманян. Избранные стихи и проза. Тифлис, 1937, с. 9; “Բանվոր”, 20. II. 1938:

²⁰ Ն. Թումանյան. Հովհաննես Թումանյան (ծննդյան 70-ամյակի առթիվ), Երևան, 1939, էջ 15: Գրքի 1955 և 1983 թթ. հրատարակություններում կրկին բանաստեղծի ծննդյան օր է նշվում 1869 թ. փետրվարի 19-ը (տե՛ս նույնի՝ Հովհ. Թումանյան. մանկություն և պատանեկություն, Երևան, 1955, էջ 15, նույնի՝ Թումանյանի մանկությունը, Երևան, 1983, էջ 10):

²¹ Կարելի է ենթադրել, որ այդ անձը կարող էր տոմարագետ Հայկ Բաղայանը լինել, ով այդ տարիներին օրացույցի պատմության ուսումնասիրությամբ էր զբաղվում: Մեկ տարի անց՝ 1940 թ., հրատարակված նրա ուսումնասիրությունում ըստ դարերի մատնանշված է հին և նոր տոմարների տարբերությունը (Հ. Ս. Բաղայան. Օրացույցի պատմությունը, Երևան, 1940, էջ 46):

Փաստորեն, Ն. Թումանյանի նշյալ ուսումնասիրության լույս աշխարհ գալուց հետո արդեն մյուս հետազոտողները սկսեցին նոր տոմարով Հովհ. Թումանյանի ծննդյան օրը ընդունել փետրվարի 19-ը: Ի դեպ, բանաստեղծի թոռնուհի Իրմա Սաֆրազբեկյանը (ծնված 1933 թ.) ևս հիշում է, որ մանկության տարիներին իրենց ընտանիքում պապիկի ծննդյան օրը նշում էին փետրվարի 19-ին²²: Այդուհանդերձ, ինչպես երևում է, նույնիսկ բանաստեղծի 70-ամյակի տոնական օրերին դեռևս «փետրվարի 19»-ը համընդհանուր տարածում և ընդունելություն չէր գտել. երբեմն կրկին հին տոմարով «փետրվարի 7» էին գրում²³:

Հովհ. Թումանյանին նվիրված հոբելյանական հաջորդ իրադարձությունների ժամանակ (մասնավորապես՝ 75-ամյակի օրերին), ինչպես նաև նրան նվիրված ուսումնասիրություններում սկսեցին նոր տոմարով ծննդյան ամսաթիվ օգտագործել փետրվարի 19-ը²⁴: Իսկ բանաստեղծի 100-ամյակի տոնակատարությունների օրերին ոչ ոքի մտքով իսկ չէր անցնում դա կասկածի տակ առնել: Ավելին՝ նախկինում ավանդաբար հիշատակվող «նահապետական ընտանիք»-ի փոխարեն արդեն նշվում էր, որ Թումանյանը ծնվել է քահանայի ընտանիքում: Օրինակ՝ «Գրական թերթ»-ի համարներից մեկում կարդում ենք, որ Թումանյանը ծնվել է «1869 թվականի փետրվարի 19-ին, գյուղական քահանայի ընտանիքում»²⁵: Բանաստեղծի կենսագրության առաջին շրջանին նվիրված ուսումնասիրությունում Ա. Ինճիկյանը գրում էր. «1869 թ. փետրվարի 7-ին (ն. տ. 19-ին) ծնվել է Թումանյանը»²⁶:

Ն. Թումանյանի և Ա. Ինճիկյանի վերը հիշատակված աշխատությունները հաջորդ տասնամյակներում Ամենայն հայոց բանաստեղծի կենսագրությամբ հետաքրքրվող գրականագետների, պատմաբանների ու թումանյանասեր ընթերցող հանրության համար վստահելի աղբյուրներ են: Դրանով փետրվարի 19-ը համընդհանուր տարածում և ընդունելություն է գտել գիտական գրականությունում, հանրագիտարաններում ու դասագրքերում: Արդեն 2008 թ. Հայաստանի գրողների միության նախաձեռնությամբ հանրապետությունում այդ օրը նշվում է նաև իբրև գիրք նվիրելու օր:

²² Այս տեղեկությունը մեզ փոխանցել է թումանյանագետ Ս. Գ. Հովհաննիսյանը:

²³ «Ավանգարդ» (Երևան), 15. IV. 1939:

²⁴ Ն. Թումանյանը 1946 թ. Մոսկվայում տպագրված Հովհ. Թումանյանի ստեղծագործությունների նոր հրատարակության համար գրած կենսագրականում հոր ծննդյան ամսաթիվ է նշում 1869 թ. փետրվարի 7/19-ը (Օ. Туманян. Избранные произведения. М., 1946, с. 9):

²⁵ «Գրական թերթ», 28. II. 1969:

²⁶ Ա. Ինճիկյան. Հովհաննես Թումանյան. կյանքի և ստեղծագործության պատմությունը, 1869–1899, Երևան, 1969, էջ 53:

Այսպիսով 1918 թ. մայիսի 1-ից Անդրկովկասում նոր (Գրիգորյան) օրացույցին անցնելուց հետո տոմարական սխալ հաշվարկներ կատարելու պատճառով շուրջ երկու տասնամյակ նոր տոմարով Հովհ. Թումանյանի ծննդյան օր է համարվել 1869 թ. փետրվարի 20-ը, այլ ոչ թե՝ փետրվարի 19-ը: Այս պատճառով քանաստեղծի 50-ամյակն ու 60-ամյակը տոնվել են համապատասխանաբար 1919 թ. և 1929 թ. փետրվարի 20-ին: Տոմարական վերահաշվարկներից հետո Հովհ. Թումանյանի 70-ամյակի օրերին արդեն նոր տոմարով նրա ծննդյան ամսաթիվ սկսվեց ընդունվել փետրվարի 19-ը, ինչն արտացոլվեց այդ ժամանակ (1939 թ.) քանաստեղծի դստեր՝ Ն. Թումանյանի հրատարակած «Հովհաննես Թումանյան (ծննդյան 70-ամյակի առթիվ)» գրքում: Արդեն հաջորդ տասնամյակներում Ամենայն հայոց քանաստեղծի ծննդյան օրը տոնվում է փետրվարի 19-ին:

Համո Սուքիասյան – պ. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Հայաստանի առաջին Հանրապետության և Խորհրդային Հայաստանի պատմության խնդիրներ: Հեղինակ է 6 գրքի և շուրջ 80 գիտական հոդվածի: hamosukiasyan@gmail.com

REFERENCES

- A. Zakarjan.** O prazdnovanii 50-letija Ovanesa Tumanjana v Tiflise, HPJ, 2019, № 1 (In Russian).
- A. Inc’ikyan.** Hovhannes T’umanyan. kyanqi yev’ stegh’c’agorc’ut’yan patmut’yunə, 1869–1899, Ye’rev’an, 1969 (In Armenian).
- „Avangardn (Ye’re’van), 15. IV. 1939 (In Armenian).
- „Banvort (Leninakan), 20. II. 1938; 23. III. 1938 (In Armenian).
- „Grakan t’ert’k (Ye’revan), 20. III. 1938; 28. II. 1969 (In Armenian).
- Hayastani azgayin arxiv. f. 53, c. 5, g. 3; f. 122, c. 1, g. 217; f. 133, c. 1, g. 1484; f. 203, c. 1, g. 28 (In Armenian).
- Haykakan sovetakan hanragitaran, h. 12, Ye’rev’an, 1986 (In Armenian).
- H. S. Badalyan.** Oracuyci patmut’yun, Ye’rev’an, 1940; Ye’rev’an, 1970 (In Armenian).
- <https://hy.wikipedia.org/wiki/%D4%B3%D6%80%D5%AB%D5%A3%D5%B8%D6%80%D5%B5%D5%A1%D5%B6%D6%85%D6%80%D5%A1%D6%81%D5%B8%D6%82%D5%B5%D6%81>
- „Hoktemberikt (Ye’rev’an), 1935, N 3–4 (In Armenian).
- H. T’umanyan.** Ye’rkeri zh’ogh’ovac’u, Ye’rev’an, 1926 (In Armenian).
- „Msh’akt (T’iflis), 15. IV. 1918; 21. II. 1919 (In Armenian).
- N. T’umanyan.** T’umanyani mankut’yunə yev’ patanekutyunə. 1869–1883, Ye’rev’an, 1938 (In Armenian).
- N. T’umanyan.** Hovhannes T’umanyan (c’nndyan 70-amyaki ar’tiv), Ye’rev’an, 1939 (In Armenian).
- N. T’umanyan.** Hovhannes T’umanyani mankut’yunə, Ye’rev’an, 1946 (In Armenian).
- N. T’umanyan.** Hovh. T’umanyan. mankut’yun yev’ patanekutyun, Ye’rev’an, 1955 (In Armenian).
- N. T’umanyan.** T’umanyani mankut’yunə, Ye’rev’an, 1983 (In Armenian).
- N. I. Idel’son.** Istorija kalendarja, Leningrad, 1925 (In Russian).
- O. Tumanjan.** Izbrannoje stixi i proza, M., 1937 (In Russian).

- O. Tumanjan.** Izbrannije proizvedenija, M., 1946 (In Russian).
,Proletari (T'iflis), 23. III. 1938(In Armenian).
- S. I. Seleshnikov.** Istorija kalendarja i xronologija, M., 1977 (In Russian).
- V. Aharonyan.** Hovhannes T'umanyan. Mardə yev' qagh'aqacin, Boston, 1936 (In Armenian).
,Xorhrdayin Hayastant (Ye'rev'an), 20. II. 1929; 23. III. 1938 (In Armenian).
,Zakavkazskoje slovo (Tiflis), 20. II. 1919 (In Russian).
Zakavkazskij sjejm. Stenograficheskij otchjet' (sjessija pervaja, zasedanije dvadcat' pjatoje, 13-go aprelja),
Tiflis, 2019 (In Russian)
,Zhogh'ovrdi dz'aynt (T'iflis), 20. II. 1919 (In Armenian).

РАЗНИЦА МЕЖДУ СТАРЫМ И НОВЫМ КАЛЕНДАРЯМИ И
ВОПРОС О ДАТЕ РОЖДЕНИЯ ОВАНЕСА ТУМАНЯНА
В 1910–1930-Х ГОДАХ

АМО СУКИАСЯН

Резюме

Ключевые слова: Ованес Туманян, Нвард Туманян, Тифлис, Ереван, юбилей, Юлианский календарь, Григорианский календарь, поэт, биография.

После календарной реформы Папы Римского Григория XIII в 1582 году, когда действующий Юлианский календарь был заменен новым – Григорианским, католические страны Европы одна за другой начали использовать новый календарь. Некоторые страны отказались от Юлианского календаря только в XX веке. В этот период разница между двумя календарями вместо 10 дней составила 13 дней.

В Закавказье новый календарь начали использовать с 1 мая 1918 года. Однако из-за отсутствия специалистов четких календарных подсчетов в регионе не проводилось: иногда при упоминании событий XIX века вместо 12 прибавляли 13 дней. По этой причине день рождения великого армянского поэта Ованеса Туманяна (1869–1923) на протяжении двух десятилетий отмечался 20 февраля. После календарных пересчетов в дни 70-летия Ов. Туманяна уже по новому календарю как дату рождения поэта начали отмечать 19 февраля, что отразилось в книге Нвард Туманян, дочери поэта, ‘Ованнес Туманян (к 70-летию поэта)’. С тех пор день рождения поэта отмечается 19 февраля.

Амо Сукиасян – к. и. н., доцент, старший научный сотрудник Института истории НАН РА. Научные интересы: проблемы истории Первой Республики Армения и Советской Армении. Автор 6 книг и около 80 научных статей. hamosukiasyan@gmail.com

THE DIFFERENCE BETWEEN OLD AND NEW CALENDARS AND
THE ISSUE OF THE DATE OF BIRTH OF HOVHANNES TUMANYAN
IN THE 1910–1930SS

HAMO SUKIASYAN

S u m m a r y

Key words: Hovhannes Tumanyan, Nvard Tumanyan, Tiflis, Yerevan, anniversary, Julian calendar, Gregorian calendar, poet, biography.

After the calendar reform of Pope Grigoris XIII in 1582, when the functioning Julian calendar was replaced by a new, Gregorian calendar, European Catholic states began to use the new calendar one after the other. Some states refused the Julian calendar only in the 20th century. During that period, the difference between the two calendars was 13 days instead of 10.

The new calendar in Transcaucasia was put into operation on May 1, 1918. However, due to the lack of specialists, accurate calendar calculations were not performed in the region; sometimes, while mentioning the events of the 19th century in the new calendar, 13 days instead of 12 were added. That is why for about two decades (1919–1938) the birthday of the Armenian poet Hovhannes Tumanyan (1869–1923) was celebrated on February 20. After recounting of the calendar in the days of Hovh. Tumanyan's 70th birth anniversary, the new date of his birth began to be accepted February 19, which was reflected at that time (1939) in the book "Hovhannes Tumanyan (on the occasion of his 70th birthday)", published by Nvard Tumanyan, the daughter of the poet. Already during the next decades, the poet's birthday was celebrated on February 19.

Hamo Sukiasyan – Candidate of Historical Sciences, Assistant Professor. Senior Researcher at the NAS RA Institute of History. Scientific interests: issues of the First and Soviet Republics of Armenia. Author of 6 books and over 80 scientific articles. hamosukiasyan@gmail.com

ՆԱՐ-ԴՈՍԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՅՔԸ *

ՊԵՏՐՈՍ ԴԵՄԻՐՃՅԱՆ

Բանալի բառեր՝ Նար-Դոս, գնահատություն, անհատականություն, աշխարհայացք, հերոսի տիպ, մեթոդ, թարգմանություն, լեզու, ուճ:

Նար-Դոսի (Միքայել Հովհաննիսյան, 1867–1933) գրողական անհատականության և ստեղծագործության գնահատության խնդիրն անցած ավելի քան մեկ դարի ընթացքում, կարելի է ասել, գրեթե երբեք չի ընդհատվել: Սկսած XIX դ. 80–90-ական թվականներից մինչև մեր օրերը, եղել են բազմաթիվ քննադատական ակնարկներ, արձագանքներ, հոդվածներ, տեսական – քննական տարբեր ժողովածուներում զետեղված ուսումնասիրություններ, մենագրություններ, հրատարակվել են դասական գրողի Երկերի մի քանի (մոտ 6) այդ թվում՝ լիակատար ժողովածուներ, եղել են նրա առանձին գործերի բազմաթիվ հրատարակություններ: Բայց սա չի նշանակում, թե այդ գնահատությունը նույնքան հարթ ու սահուն ընթացք է ունեցել: Նույնիսկ մինչև անցյալ դարի 20-ական թվականների վերջերքը, թեև Նար-Դոսը գրել էր իր բոլոր նշանավոր գործերը, նրա ստեղծագործության շուրջ գիտական լուրջ անդրադարձները մատների վրա կարելի էր հաշվել: Բնորոշ է հենց իր՝ Նար-Դոսի մի անդրադարձն այդ առիթով: 1929 թ. գրած նամակներից մեկում, պատասխանելով իր գրվածքների մասին եղած քննադատականների վերաբերյալ հարցին, նա գրում է, թե կարող է նշել միայն “Արսեն Տերտերյանի գրքույկը “Նար-Դոսի ստեղծագործությունը” վերնագրով և Սուրխաթյանի “Հայ գրականության” երկրորդ հատորը: Իսկ թե ուրիշ ինչ կա – չգիտեմ”: Սակայն հետգրությամբ ավելացնում է ևս երկու անուն. “Նոր հիշեցի, որ գրվածքներիս մասին քննադատականներ կան նաև Լեոյի Հայոց գրականության պատմության և Վ. Փափազյանի նման աշխատության մեջ”:

Պետք է ասել՝ դրանում որոշակի դեր ունեն նաև այն հանգամանքը, որ Նար-Դոսի գրական մուտքը, իհարկե, շատ համեստ է եղել: Վրթանես Փափազյանը վկայում է՝ այդ հարցում մեղավորը նաև ժամանակին մեծ կրքեր բորբոքած պահպանողականների և ազատականների, այսպես կոչված, նորդարական-մշակական անհաշտ բախումն էր, որի հետևանքով “նոր ասպարեզին տեր եղած սերնդի մեջ անուն էին հանում միայն

* Ընդունվել է տպագրության 22. V. 2019 թ.: Գրախոսվել է 04. VI. 2019 թ.:

¹ Ն ա ր - Դ ո ս . Երկերի ժողովածու, հինգ հատորով, հ. 5, Երևան, 1970, էջ 452:

“Մշակի” մէջ գրողները, իսկ “Նոր-Դարի” գրողների անունները երկար մնացին նոյն իսկ անձանօթ²: Ըստ Փափագյանի, Մուրացանի և մի քանի այլ հեղինակների հետ, այդ վիճակին է ենթակվել նաև “այն իրապաշտ գրողը, որ սիրուն, կոկիկ իր պատմաձքներովը գծում էր շրջապատող կեանքի մթին խորշերը և երևան էր հանում հասարակ ժողովրդի հասկացողութիւնը ու տիպարները: Այդ հեղինակը Նար-Դոսն էր”³:

Այնուամենայնիվ, փաստն այն է, որ “Նոր-Դարական” երիտասարդ գրողի առաջին քայլերն արժանացել են որոշակի ուշադրության: Գրականագետ Սաքո Սարգսյանի հավաստմամբ, “Նա գրականության աշխարհ եկավ լուռ, աննկատ և առաջին իսկ քայլերից, որքան էլ խուսափեց անվան շուրջը կարծիք ստեղծելուց, աղմուկից, իրենից անկախ զգացնել տվեց փայլուն անհատականությունը, նրան տեսավ, ճանաչեց, սիրեց ընթերցողը”⁴: Եվ ոչ միայն սովորական ընթերցողը, այլև, որ կարևոր է, իր սերնդակից ապագա մեծանուն գրողներից ոմանք: Նրանցից առաջինը, որի հետ կյանքը հանդիպեցրել էր պատանի Միքայելին, Ալեքսանդր Ծատուրյանն էր: Դեռևս Թիֆլիսի Միքայելյան արհեստագործական դպրոցում սովորելու տարիներին, նրանք ավելի խոսում, գրուցում ու վիճում էին գրականության, թատրոնի հարցերի շուրջ, քան տրվում արհեստի գաղտնիքների տիրապետմանը⁴: Այնուհետև, արդեն “Նոր-Դար”-ի խմբագրությունում նա հանդիպում է Հովհաննես Թումանյանին, մտերմանում, և նրանք հաճախ էին իրենց գրվածքների բովանդակության ու տպագրության հանգամանքներով կիսվում միմյանց հետ⁵: Հենց այդ շրջանում էլ, “Նոր-Դար”-ի քարտուղար Ս. Դանգոյանի կնքահայրությամբ, մինչ այդ Միխո-Օհան ստորագրող երիտասարդ գրողը դառնում է Նար-Դոս⁶: 1888-ին Նար-Դոսի “մի շնչով, մի քանի օրվա մէջ” գրված “Աննա Սարոյան”-ը կարդալուց հետո⁷ գրողին “նկատում է” նաև Ավետիք Բասահայանը՝ ցանկություն հայտնելով հանդիպել հեղինակին⁸:

1904 թ. Վենետիկում Միսիթարյանների հրատարակությամբ լույս է տեսնում Լեոյի “Ռուսահայոց գրականութիւնը (Սկզբից մինչև մեր օրերը)” աշխատությունը, որի նյութերը մինչ այդ տպագրվել էին “Բազմավեպ” հանդեսում: Աշխատության գլուխներից մեկում՝ “Դաստիարակութեան հարցեր” ընդհանուր վերնագրի տակ, մի քանի այլ գրողների՝ Գ. Չուբարի, Լ. Շանթի, Լ. Մանվելյանի գործերի հետ, հեղինակը քննության է առնում նաև Նար-Դոսի “Աննա Սարոյան”, “Տանտիրոջ աղջիկը” գրվածքները: “Կեանքի

² Վ. Փափագյան. Պատմություն հայոց գրականութեան (Սկզբից մինչև մեր օրերը), Թիֆլիս, 1910, էջ 540:

³ Ս. Սարգսյան. Նար-Դոս, Երևան, 1973, էջ 3:

⁴ Նույն տեղում, էջ 23:

⁵ Նույն տեղում, էջ 47-49:

⁶ Նույն տեղում, էջ 46:

⁷ Նույն տեղում, էջ 58:

⁸ Նույն տեղում, էջ 60:

հին, ւաւնդական սահմանների” խորտակման և գոյության կռվի ուժգնացման ժամանակում, այդ ամենին դիմագրավելու “միջոցներից ամենագլխաւորը” համարելով դպրոցի և ընտանիքի տված կրթությունն ու դաստիարակությունը, Լեոն, մասնավորապէս, կանանց կրթության հարցի գեղարվեստական մարմնավորման մեջ առավել հաջողված էր համարում Նար-Ղոսի հիշյալ գործերը:

Մի քանի տարի անց՝ 1910-ին, Վրթանէս Փափագյանը վերոհիշյալ երկու գրվածքներին հավելում է ևս մեկը՝ 1908 թ. լույս տեսած “Մպանւած աղաւնին” վիպակը: Նա ոչ միայն թեմատիկ ու գեղագիտական վերլուծման է ենթարկում նշված գործերը, այլև խոսք է բացում գրողի ստեղծագործական մեթոդի մասին: Ընդգծելով, որ դարասկզբին ընթերցող հասարակության ընկալումներում “վիպային (նոմանտիք) ուղղությունն” արդեն սկսել էր տեղի տալ իրապաշտական հոսանքի առաջ՝ նա “իրապաշտական դպրոցի իսկական աշակերտ և գուտ իրականութիւնը, անմիջապէս իրեն շրջապատող կեանքը, որպէս լաւ լուսանկարիչ արտանկարող վիպասան” էր համարում երիտասարդ Նար-Ղոսին⁹:

Նար-Ղոսի՝ գրականության վերաբերյալ առաջին մենագրական աշխատությունը 1913 թ. Թիֆլիսում Արսեն Տերտերյանի հրատարակած “Նար-Ղոսի ստեղծագործութիւնը (Գրական-քննադատական ուսումնասիրութիւն)” աշխատանքն է: Այն ընդգրկում է ոչ միայն գրողի ստեղծագործական նկարագրի, անհատական խառնվածքի, այլև ստեղծագործության ընդհանուր, իր բառով՝ “բնոյթագիծը” (գեղագիտական սկզբունքները, հերոսի տիպերը)՝ անդրադառնալով Նար-Ղոսի ստեղծագործությանը՝ գրական նախափորձերից մինչև “Պայքար” ու “Մահը” վեպերը¹⁰: Մենագրության “Ներածությանը” հաջորդող չորս գլուխներում գրականագետը տեսական հանգամանալից քննության է ենթարկում, մասնավորապէս, կին և տղամարդ հերոսների, այսպէս կոչված, “գեղարվեստական համայնապարփակ տիպերը” (էջ 19) (ի դեպ, տալով նաև դրանց զարգացման աստիճանները ներկայացնող ենթատիպերի վերլուծությունը): Պետք է ասել, որ Ա. Տերտերյանի այս աշխատությունը պարունակում էր մի շարք կարևոր հարցադրումներ, որոնք հիմքեր նախապատրաստեցին հետագա առավել ծավալուն ու ամբողջական վերլուծությունների համար: Գրականագետը, օրինակ, դրական հատկանիշներին զուգահեռ, Նար-Ղոսի ստեղծագործության մեջ մատնանշում է մի շարք “թուլություններ” կամ թերություններ, որոնք ավելի ուշ առիթ են դառնում տարբեր, նույնիսկ հակադիր մեկնաբանությունների: Ի դեպ, Ա. Տերտերյանը հետագայում առաջաբաններ է գրել նաև Նար-Ղոսի “Ընտիր պատմվածքներ” (1926) և “Մեր թաղը: Պատմվածքներ” (1934) ժողովածուների համար:

⁹ Վ. Փ ա փ ա գ ե ա ն. նշվ. աշխ., էջ 538:

¹⁰ Լ է օ. Ռուսահայոց գրականութիւնը (Սկզբից մինչև մեր օրերը), Վենետիկ, 1904, էջ 368:

Նար-Դոսի կյանքի ու գործի գնահատությունը, կարելի է ասել, որակական նոր փուլ է թնակոխում անցյալ դարի 20-ական թվականների կեսերից: 1926-ին Երևանում հրատարակված իր «Հայ գրականության» 2-րդ հատորում գրականագետ Հարություն Սուրխաթյանն արդեն իսկ արձանագրում է. «Իբրև ռեալիստ՝ Նար-Դոսն իր հատուկ տեղն ունի մեր անցյալ գրականության մեջ՝ հայ խոշոր վիպասանների շարքում»¹¹:

1931 թ. մայիսի 24-ին Թիֆլիսում մեծ շուքով նշվում է Նար-Դոսի գրական գործունեության 45-ամյա հոբելյանը: Հատկանշական է, որ մինչ այդ նման հանդիսություն նախապատրաստվել էր Երևանում՝ Հայաստանի խորհրդայնացման 10-ամյակի առիթով գրողի այնտեղ գտնվելու օրերին: Սակայն «Վախեցա հիվանդությունս բարդանա, դրա համար շուտով վերադարձա Թիֆլիս, – գրում է Նար-Դոսը Հովհ. Մալխասյանին, – թե չէ ուզում էին ինձ երկար պահել Երևանում, ինչ որ պատվո երեկո էին ուզում սարքել ինձ համար»¹²: Բսկ Թիֆլիսում, մինչև պաշտոնական հոբելյանը, «մի տեսակ փոքրիկ հոբելյանական հանդեսներ» էին կազմակերպում դպրոցներում, գրողի խոստովանությամբ՝ «շատ սրտագրավ»: «Մինչև այժմ ես բնավ չէի կարծում, թե գրվածքներս այդքան սիրելի կլինեն աշակերտության համար, – գրում է Նար-Դոսը:– Սա մի կատարյալ հայտնություն է ինձ համար»¹³:

Սկսվել էր նաև գրողի միջազգային ճանաչման գործընթացը: Այդ նույն տարում Մոսկվայում արդեն լույս էր տեսել «Մահը» վեպի ռուսերեն թարգմանությունը: Վրաստանի կառավարությունը հոբելյանի առթիվ Նար-Դոսին շնորհել էր Վրաստանի ժողովրդական գրողի կոչում: Նրա անունով էր կոչվել Ախալքալաքի Ալաստան գյուղի դպրոցը, իսկ Պետհրատը նախատեսում էր վրացերեն հրատարակել «Մպանված աղավին» ու «Մեր թաղը» շարքը: Ուրախալի լուրեր կային նաև Հայաստանից. Խորեն Սարգսյանը խնդրում էր նյութեր ուղարկել Երևանի պետական թանգարանի գրական բաժնի համար, Պետհրատը նախապատրաստում էր գրողի Երկերի քառահատորյակի հրատարակությունը, որն իրականացվեց 1933–1934 թթ.: Այնուհետև իրար հետևից լույս տեսան Երկերի 7-հատորյակը (1938–1950, Ռ. Ջարյանի խմբագրությամբ և ծանոթագրություններով), Երկերի եռահատորյակը (1955–1956, Մ. Մկրյանի առաջաբանով), 5-հատորյակը (1968–1970, Խ. Պողոսյանի աշխատակցությամբ ու ծանոթագրություններով), Երկերի ժողովածուն (1977, «Հայ դասականների գրադարան» մատենաշարով), Երկերի լիակատար ժողովածուն 4 հատորով (1989–1990, Ստ. Թովչյանի առաջաբանով) և այլն: Այդ ամենը չափազանց տպավորիչ է, եթե նկատի ունենանք, որ, ինչպես նշում էր Ռուբեն Ջարյանը, «Նար-Դոսին չվիճակվեց իր երկերի, եթե ոչ ամբողջական, գեթ որևէ ամփոփ ժողովածու լույս ընծայել իր կենդանության օրոք»¹⁴:

¹¹ Հ. Սուրխաթյան. Հայ գրականություն, հ. 2, Երևան, 1926, էջ 195:

¹² Նար-Դոս. Երկերի ժողովածու, հինգ հատորով, հ. 5, էջ 457:

¹³ Նույն տեղում, էջ 462:

¹⁴ Նար-Դոս. Երկերի լիակատար ժողովածու 7 հատորով, հ. 1, Երևան, 1947, էջ 5:

Նար-Ղոսի ստեղծագործության գիտական հետազոտության տեսակետից հատկապես բեղմնավոր էին 50-ականի վերջն ու 60-ականի սկիզբը, երբ հրատարակվեցին գրականագետներ Գարիկ Հովհաննիսյանի «Նար-Ղոս» (1959), Գարեգին Հովսեփյանի «Նար-Ղոս» (1961), Տոսյա Հարությունյանի «Նար-Ղոսի «Մահը» վեպը» (1961) աշխատությունները: Հետագա տասնամյակներին հրապարակ եկան նաև Սաքո Սարգսյանի «Նար-Ղոս» (1973), Ստեփան Թոփչյանի ավելի քան հարյուր էջ ընդգրկող ուսումնասիրությունը «Կերպ և իսկություն» գրքում (1987), Վազգեն Սաֆարյանի «Գրողի և կերպարի անհատականությունը» (2001) հետազոտությունները: Ընդ որում, վերջին երկուսն առանձնանում են առավել տեսական, կոնցեպտուալ հարցադրումների միտվածությամբ:

Եթե հնարավորինս ամփոփ ներկայացնելու լինենք նարդոսագիտության անցած հարյուրամյա ուղին, ապա կարող ենք ասել, որ նրանում առավել ամբողջական և հիմնավոր քննության առնված խնդիրները եղել են՝ գրողի անհատական-ստեղծագործական խառնվածքը, աշխարհայացքը, գեղագիտական սկզբունքները, հերոսի տիպերը, դրանց մարմնավորման մեջ նկատված թերությունները, ստեղծագործական մեթոդը, գրողի խառնվածքի ներկայությունը կերպարների բնութագրություններում, գրական կապերը և ազդեցությունները, լեզուն ու ոճը և այլն: Քանի որ մեր նպատակը չէ այստեղ այդ ամենի քննությունը՝ կրավարարվենք նշելով, որ բացի գրողի անհատական բնավորությանը, խառնվածքին, գրական վարպետությանը, լեզվին ու ոճին վերաբերող հարցերից, մյուս հիմնախնդիրների շուրջ հետազոտողների մոտ եղել են մասնակի կամ երբեմն էլ ուղղակի հակադիր մեկնաբանություններ, ինչը բնական պետք է համարել այնպիսի մի ինքնատիպ գրողի պարագայում, ինչպիսին Նար-Ղոսն է:

Այնուամենայնիվ, կուզենայինք նշել վերոհիշյալ հետազոտություններում տեղ գտած մեկ-երկու հարցադրում, որոնք կարևոր են թվում Նար-Ղոսի ստեղծագործության հետագա ուսումնասիրության տեսակետից: Դրանցից մի քանիսն արդեն իսկ ստացել են իրենց լուծումը: Օրինակ, 1955 թ. եռահատորի առաջաբանում (էջ V) Մկրտիչ Մկրյանը գրում էր, թե «Իր կյանքի վերջին տարիներին Նար-Ղոսը թեև նոր մեծածավալ գեղարվեստական գործեր չստեղծեց, բայց նա լայն հնարավորություններ ստացավ, իր երկերի ժողովածուն հրատարակվելու կապակցությամբ, վերամշակման ենթարկել իր մի շարք գործերը: Այդ վերամշակման բնույթը և գեղարվեստական արդյունքները, իհարկե, հատուկ ուսումնասիրության հարց են...»¹⁵: Կարևոր մի խնդիր, որ տարիներ անց մասամբ իրականացրել է Տ. Հարությունյանը՝ հանգամանորեն ներկայացնելով «Մահը» վեպի ստեղծագործական պատմությունը: Արժարժված մեկ այլ հարցադրում առնչվում է ստեղծագործական մեթոդի խնդրին: Ի տարբերություն հետազոտողների մեծ մասի, որոնք Նար-Ղոսի ստեղծագործական մեթոդը հստակորեն բնորոշում են որպես ռեալիզմ կամ քննադատական ռեալիզմ, Ստ. Թոփչյանը, թվում է, առավել հակվում է դեպի նա-

¹⁵ Նար - Ղոս. Երկերի ժողովածու 3 հատորով, հ. 1, Երևան, 1955, էջ V:

տուրալիզմ: Փորձելով բացատրություն գտնել գրողի հայացքներում և որոշ դատողություններում առկա հակասականության համար՝ նա գրում է, թե դրանցում “հանդես են գալիս 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ գրականության զարգացման ուղեգծերից երկուսը. դասական ռոմանտիզմի անցումը նեոռոմանտիզմ և դասական ռեալիզմի անցումը նատուրալիզմ”¹⁶: Այնուհետև սահմանելով, որ “Երազանքն ու իրականությունը, իդեալականն ու ռեալականը, ռոմանտիկականն ու նատուրալիստականը սուր հակադրությամբ միահյուսվում են Նար-Դոսի ստեղծագործությունում”, ինչպես նաև տեսակետ հայտնելով, թե Նար-Դոսի պարագայում “Խոսքը ոչ միաձուլմանն է վերաբերում, ոչ էլ յուրատեսակ ռոմանտիկական նատուրալիզմին”, գրականագետը հարցը թողնում է բաց՝ արձանագրելով. “Սա չափազանց բարդ ու առանձին հետազոտություն պահանջող խնդիր է, առայժմ բավարարվենք այսքանով”¹⁷:

60-ական թվականների սկզբին Գարեգին Հովսեփյանը բարձրացրել է Նար-Դոսի երկերի՝ հատկապես ռուսերեն բարձրորակ թարգմանության հարցը: Մասնավորապես, “Մահը” վեպի առիթով նշելով, որ այդ երկի “գաղափարական ու գեղարվեստական մեծարվեստ արժանիքները դեռևս համապատասխան ուշադրության չեն արժանանում”, նա գրում է, թե “Մասամբ դրա հետևանքը պետք է համարել այն հանգամանքը, որ մինչև այսօր գոյություն չունի մի քիչ թե շատ կանոնավոր ու ամբողջական ռուսերեն թարգմանություն...”¹⁸: Նա բերում է “Մոլոդայա գվարդիայի” հրատարակած թարգմանական գրքերի առիթով Ս. Գորկու արտահայտած գնահատականը, ըստ որի, մեծ գրողը “Մահը” վեպը “թույլ վեպ” է համարում՝ վերապահելով, թե “թերևս այդպիսին է թվում այն պատճառով, որ վատ է թարգմանված...”¹⁹: Կարծում ենք, խնդիրն արդիական է մնում նաև այսօր:

Կամ՝ հայտնի է, որ Նար-Դոսը իր ստեղծագործական կյանքի սկզբնական շրջանում գրել է նաև, ճիշտ է, փոքրաթիվ, բայց բովանդակալից, սոցիալ-բարոյական որոշակի հարցադրումներ արժարժող հեքիաթներ, որոնց իրենց վերոհիշյալ աշխատություններում համառոտակի անդրադարձել են միայն Ս. Մարգարյանն ու Գ. Հովհաննիսյանը: Նկատի ունենալով, որ ժողովրդական-բանահյուսական պատումների՝ հեքիաթների, ավանդազրույցների, լեգենդների մշակումը մեծ տարածում ունեթ ժամանակի հայ գրողների շրջանում (Ղ. Աղայան, Հ. Թումանյան, Վ. Փափագյան և ուրիշներ)՝ կարծում ենք, այս ժանրի մշակման քննությունը Նար-Դոսի ստեղծագործության մեջ ևս չի կորցրել իր հետաքրքրությունը:

Վերջապես, թվարկված ուսումնասիրություններում, իհարկե, կան առանձին հիշատակումներ Նար-Դոսի կրած գրական ազդեցությունների, զուգահեռների մասին, սա-

¹⁶ Ս տ. Թ ո փ չ յ ա ն. Կերպ և իսկություն, հ. 1, Երևան, 1989, էջ 250:

¹⁷ Նույն տեղում, էջ 250–251:

¹⁸ Գ. Հ ո վ ս ե փ յ ա ն. Նար-Դոս, Երևան, 1961, էջ 461:

¹⁹ Նույն տեղում, էջ 462:

կայն, ընդհանուր առմամբ, բաց է մնում ինչպես հայ, այնպես էլ ռուս և համաշխարհային գրականության երևույթների հետ Նար-Դոսի ստեղծագործության լուրջ ու հիմնավոր համեմատական վերլուծությունը:

Խնդիրներ, որոնք վկայում են, որ նարդոսագիտությունը մեզանում դեռևս որոշակի ճանապարհ ունի անցնելու:

Պետրոս Դեմիրճյան – բ. գ. դ., Հայաստանի գրողների միության վարչության քարտուղար, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ նոր գրականության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ դասական և ժամանակակից գրականություն: Հեղինակ է 3 մենագրության, բազմաթիվ գրականագիտական և գրաքննադատական հոդվածների: pdemirchyan@mail.ru

REFERENCE

- H. Surkhat'yan.** Hay grakanut'yun, h. 2, Ye'rev'an, 1926 (In Armenian).
G. Hovsep'yan. Nar-Dos, Ye'rev'an, 1961 (In Armenian).
S. Sargsyan. Nar-Dos, Ye'rev'an, 1973 (In Armenian).
S. T'op'ch'yan. Kerp yev' iskut'ivn, Ye'rev'an, 1987 (In Armenian).
Leo. R'usahayoc grakanut'yunə (Skzbic minch'ev mer orerə), Venetik, 1904 (In Grabar)
T. Harut'yunyan. Nar-Dosi ,Mahyt vepu, Ye'rev'an, 1961 (In Armenian).
V. P'ap'azean. Patmut'ivn hayoc grakanut'ean (Skzbic minch'ev mer orerə), T'iflis, 1910 (In Grabar).
V. Safaryan. Grogh'i kerpari anhatakanut'yunə, Ye'rev'an, 2001 (In Armenian).

ПРОЦЕСС ОЦЕНКИ ТВОРЧЕСТВА НАР-ДОСА

ПЕТРОС ДЕМИРЧЯН

Резюме

Ключевые слова: Нар-Дос, оценка, индивидуальность, мировоззрение, тип героя, метод, перевод, язык, стиль.

Процесс оценки писательской индивидуальности и творчества Нар-Доса (Микаэл Ованисян, 1867–1933) в течение более чем одного столетия, можно сказать, никогда не прерывался. С 80–90-х годов XIX века до наших дней были написаны многочисленные статьи, исследования,

вошедшие в разные теоретико-аналитические сборники, монографии, изданы собрания сочинений Нар-Доса, неоднократно выходили в свет его отдельные произведения. Но это не означает, что процесс был легким и гладким. Были и до сих пор есть некоторые малоизученные проблемы, касающиеся творческого наследия классика армянской литературы.

Петрос Демирчян – д. филол. н., секретарь правления Союза писателей Армении, старший научный сотрудник отдела новой армянской литературы Института литературы им. М. Абегиана НАН РА. Научные интересы: классическая и современная литература. Автор 3 монографий, многочисленных литературоведческих и литературно-критических статей. pdemirchyan@mail.ru

THE PROCESS OF THE EVALUATION OF NAR-DOS OEUVRE

PETROS DEMIRCHYAN

Summary

Key words: Nar-Dos, evaluation, individuality, worldview, type of hero, method, translation, language, style.

It can be said that the evaluation process of the individuality and oeuvre of Nar-Dos (Michael Hovhannisyan, 1867–1933) as a writer has never been interrupted for more than one century. There were published numerous articles and studies included in various theoretical-analytical collections, monographs, collections of works, numerous publications of individual works of Nar-Dos from the 80-90s of the 19th century to the present day. However, it does not mean that this process was as easy and smooth. There were and so far there are some little-studied problems concerning the creative heritage of the Armenian literature classic.

Petros Demirchyan – Doctor of Philological Sciences, Executive Secretary at Writers' Union of Armenia, Senior Researcher at the Department of Modern Armenian Literature of the NAS RA Institute of Literature after M. Abeghian. Scientific interests: classical and modern literature. Author of 3 monographs, numerous literary, literary-critical articles. pdemirchyan@mail.ru

ՄԻՐԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՃԳՆԱԺԱՍԸ
ՀԱՄԱՍՓՅՈՒՌՔՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՐԺԵՎՈՐՄԱՆ
ԱՌԻԹ
(2011–2018 թթ.)*

ՔՆԱՐԻԿ ԱՎԱԳՅԱՆ

Բանալի բառեր՝ համաշխարհային ահաբեկչություն, Սիրիա, հայ համայնք, հայրենադարձություն, ՀՀ սփյուռքի նախարարություն:

Հայոց ցեղասպանությունից ու արևմտահայության հայրենագրկումից 100 տարի անց՝ մասնավորապես Երկրորդ աշխարհամարտից հետո, պարբերական ու տնական պատերազմների արդյունքում Մերձավոր և Միջին Արևելքում տեղի ունեցող արմատական գործընթացներն այժմ արդեն հանգեցրել ու նպատակ ունեն հանգեցնելու տարածաշրջանի բնիկ ու այլեթնիկ ժողովուրդների բնաջնջմանը և տեղահանությանը, ինչպես դա եղավ մեկ դար առաջ հայերի նկատմամբ:

2001 թ. սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ում տեղի ունեցած ահաբեկչությանը Մերձավոր Արևելքում սկզբնավորված ու իրարահաջորդ ահաբեկչական ավերիչ պատերազմները, քաղաքացիական բախումները, միանման սցենարով իրականացված հեղաշրջումներն իրենց անշրջելի հետևանքներն են ունեցել և շարունակելու են ունենալ նաև տեղի հայ համայնքների վրա [Իրաք (2003 թ. մարտի 20 – 2007 թ. մայիս, 2008 թ-ից մինչ օրս), Եգիպտոս (2011 թ. հունվարի 25 – 2013 թ. հուլիսի 3), Սիրիա (2011 թ. մարտի 15-ից մինչ օրս)]: Հայկական համայնքներ, որոնք մեծապես ստվարացել էին Առաջին աշխարհամարտի ընթացքում հայության նկատմամբ իրագործված ցեղասպանության հետևանքով փրկված հայերի՝ այդ երկրներում ապաստան գտնելով:

Պատահական չէ, որ իր պատմական բնօրրանում՝ Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում, ինչպես նաև Օսմանյան կայսրության հայաբնակ գավառներում համաշխարհային ոճրագործ ուժերի միևնույն հովանավորների կողմից ցեղասպանության և հայրենագրկումի ենթարկված հայության մազապուրծ բեկորների ժառանգները շարունակում են ենթարկվել ցեղասպան ահաբեկիչների հարձակումներին, ավերումներին ու տեղահանումներին, այժմ արդեն երբեմնի հյուրըն-

* Ընդունվել է տպագրության 26. IV. 2019 թ.: Գրախոսվել է 02. V. 2019 թ.:

կալ արաբական հողում՝ Մերձավոր և Միջին Արևելքում, որտեղ ժամանակին ապաստան էին գտել իրենց նախնիները:

Մինչև պատերազմը Սիրիայում առկա էր շուրջ 80.000-անոց բավական կազմակերպված հայ համայնք, որոնց մեծ մասը՝ շուրջ 60.000 բնակվում էր Հալեպում¹: Ահաբեկչական ուժերի կողմից 2011 թ. երկրում սանձազերծված երկարատև ու կործանարար պատերազմի հետևանքով բազմահազար սիրիահայեր, ի շարս այլ երկրների (Լիբանան, Հորդանան, Միացյալ Արաբական Էմիրություններ, ԱՄՆ, Կանադա, Շվեդիա և այլն)², ապաստան են գտել Հայրենիքում՝ Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) և Արցախի Հանրապետությունում (ԱՀ): Ընդհանուր առմամբ, ըստ «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն»

¹ Ա. Փ ա շ ա յ ա ն. Անկայունությունը Սիրիայում և սիրիահայ համայնքը.– «Գլոբուս. Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն», թիվ 3, 2011, էջ 23, Հ. Գ ա լ ս տ յ ա ն. Սիրիահայեր. Վերադարձ, որ չէին նախատեսել.– «Hetq.am», 2015, 3 հունիսի, <<http://hetq.am/arm/news/60582/syrian-armenians-a-return-they-never-predicted.html>>, Ֆ. Ջ ա ք ա ր ե ա ն. Սիրիայի հայ համայնքի հետ տարվող աշխատանքները (2008–2015).– «Սուրիոյ Հայերը. Գիտաժողովի Նիւթեր (24–27 Մայիս, 2015)», իւրբ.՝ Ա. Տ ա գ է ս ե ա ն, Պ է յ ռ ու թ, 2018, էջ 569:

Տարբեր աղբյուրներում նախապատերազմական Սիրիայում հայերի թվի վերաբերյալ այլ տվյալներ են ներկայացված՝ 60.000, 60.000–70.000, 80.000–100.000, ավելի քան 120.000 և կամ՝ Հայ առաքելական եկեղեցու 150.000 հետևորդ (տե՛ս «Պետք է պահպանենք սիրիահայ համայնքը, այն մեր ներկայությունն է Մերձավոր Արևելքում».– «Tert.am», 2012, 21 հունիսի, <<https://www.tert.am/am/news/2012/07/21/siria-haj/552047>>, Կ. Մ ի ն ա ս ե ա ն. «Հայերը Սուրիոյ մէջ ապագայ չունին», Զրուցեց՝ Սազո Արեան, «Ժամանակ», Ստամպուլ, 2018, 4 Օգոստոս, <<http://213.232.51.219/content/հարթակ/4-08-2018-կայծ-մինաստեան-հայերը-սուրիոյ-մէջ-ապագայ-չունին>>: Kuwait to release \$100,000 in emergency assistance to Syrian Armenians.– «Arka.am», 2012, November 29, <http://arka.am/en/news/society/kuwait_to_release_100_000_in_emergency_assistance_to_syrian_armenians/>. M. G r i g o r y a n. Armenia: An Uncertain “Homecoming” for Syria’s Diaspora.– «Eurasianet.org», 2012, July 31, <<https://eurasianet.org/armenia-an-uncertain-homecoming-for-syrias-diaspora>>. War Witness. War Torn Syria and the Armenian Redwood Project – Providing Safe Refuge Amongst the Wreckage.- 2015, May 1, <<http://www.armenianredwoodproject.org/new-blog/2015/5/1/war-torn-syria-and-the-armenian-redwood-project-providing-safe-refuge-amongst-the-wreckage>>. Сирия, <<https://ru.wikipedia.org/wiki/Сирия>>):

Մինչդեռ այլ տվյալներով Հալեպում հայերի թիվը 40.000 էր (Սուրիահայ Գաղութը Տոկուն եւ Զորաւոր Արմատներու Վրայ Հիմնուած ու Կազմուած Գաղութ Է», Կը Յայտնէ Սուրիոյ Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի Անդամ Ներսէս Սարգիսեան.– «Հայրենիք շաբաթաթերթ», 2015, 2 Դեկտեմբեր, <<http://hairenikweekly.com/2015/12/02/24700>>):

² 2015 թ. տվյալներով 15.000–20.000 հայ մեկնել է Լիբանան, մոտավորապես 13.000-ը՝ այլ երկրներ (տե՛ս Ֆ. Ջ ա ք ա ր ե ա ն. նշվ. աշխ., էջ 569):

ՀԿ-ի նախագահ Լենա Հալաճյանի, պատերազմի սկզբից մինչև 2017 թ. հունվարի վերջ Հայաստան է մուտք գործել 22.000 սիրիահայ³: Ընդ որում, ըստ ՀՀ սփյուռքի նախարարության տվյալների, միայն 2012–2015 թթ. ՀՀ է եկել շուրջ 17.000 սիրիահայ⁴:

Միաժամանակ, Արևմուտքի երկրների գաղթականական ծառայությունների կողմից առավելապես քրիստոնյա (հիմնականում՝ հայ) գաղթականների համար բացված արտագաղթելու մասնաբաժինային (Quota) արտոնությունների⁵ (դեպի ԱՄՆ, Կանադա, եվրոպական երկրներ, Ավստրալիա և այլն) արդյունքում Արևել-

³ Սիրիահայերի մասին՝ վիճակագրության լեզվով. Մեր հյուրն է «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի նախագահ Լենա Հալաճյանը.– “Nyut.am,” 2017, 27 հունվարի, <<http://nyut.am/?p=133813&l=am>>: Տե՛ս նաև՝ A. Lieberman. Lessons learned as Syrian-Armenian refugees return to Armenia.– 2017, July 25, <<https://www.devex.com/news/lessons-learned-as-syrian-armenian-refugees-return-to-armenia-90551>>. ՍիրԱրԲի-ի մասին, <<http://syrarbi.am/hy/about-syarbi>>:

⁴ Ֆ. Զ ա ք ա ր ե ա ն. նշվ. աշխ., էջ 569:

⁵ Այսպես, երբ սիրիական պատերազմի ընթացքում հարձակումների թիրախ սկսեցին դառնալ նաև հայերն ու հայկական համայնքային հաստատությունները, ամերիկահայ առանձին գործիչներ դիմել են ԱՄՆ-ի համապատասխան կառույցներին՝ երկրի գաղթականական ծրագրերում հայերին հատկացված մասնաբաժնի վերանայման առաջարկով: 2012 թ. նոյեմբերի 11-ին, ԱՄՆ-ի կառավարությունը, արձագանքելով չորս (անունները հիշատակված չեն – Ք. Ա.) երևելի ամերիկահայ իրավաբանների դիմումին, վերանայել է նախկինում “Հայրենիքի անվտանգության” (“Homeland Security”) բաժանմունքի Միացյալ Նահանգների Քաղաքացիության և ներգաղթի ծառայության (ՄՆԲՆԾ) (US Citizenship and Immigration Services – USCIS) որոշումը սիրիահայերին սուկ “Ժամանակավոր պաշտպանվածության կարգավիճակ” (“Temporary Protected Status” – TPS) տրամադրելու մասին ու արտոնել սիրիահայերին “Ազատ վիզա” (“Visa Waivers”) շնորհել: Շատ չանցած՝ սիրիահայերի անհաշիվ բարեկամներն ու հարազատներն ԱՄՆ-ից և այլ վայրերից իրենց աջակցությունն են հայտնել Միացյալ Նահանգների կառավարությանը սիրիահայերին ԱՄՆ մուտք գործելու դյուրություն ապահովելու համար [US Government Responds to Prominent Armenian-American Lawyers Call upon US Government to Issue Visa Waivers for Syrian-Armenians. Center for Armenian Remembrance. Press Release.– 2012, November 12, <<http://www.centerarnews.com/>>]: Մինչդեռ հարկ էր, որ սփյուռքահայությունը միասնականություն դրսևորեր, որպեսզի տևական պատերազմի հետևանքով ավերվող Սիրիայից մեր այդ հայրենակիցների տեղափոխումն ու բնակեցումն իրականանար ՀՀ-ում և ԱՀ-ում, այլ ոչ թե՛ ԱՄՆ-ում, ինչպես նաև նյութական աջակցություն ցուցաբերվեր Հայաստանի կառավարության ջանքերին արտերկրի մեր հայրենակիցներին Հայրենիք տեղափոխելու, տեղավորելու ու նրանց զբաղվածությունն ապահովելու ուղղությամբ, այլ ոչ թե՛ ԱՄՆ-ի իշխանություններին և ԱՄՆ-ում հաստատվելուն:

քի երկրների առավելապես “հայապահպանված” հայության նորանոր սերունդներ են զոհաբերվում Արևմուտքի “Հալեցնող կաթսայի” (Melting Pot)⁶ ձուլարանին:

Պատմաքաղաքական և գաղափարաքաղաքական օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքների տեսակետից վերլուծելով ճգնաժամի մեջ հայտնված առանձին վերցրած Սիրիայի հայության վերաբերյալ համայնքային, ինչպես նաև Հայաստանի (ՀՀ և ԱՀ) համապատասխան կառույցների տրամադրությունների ու գործողությունների տրամաբանությունը՝ կարելի է հանգել համապատասխան ընդհանրացնող եզրակացությունների, որոնք, ցանկության դեպքում, կարող են դառնալ համասփյուռքյան առաջնահերթությունների հետագա վերարժևորման առիթ:

Այսպես, պատմաքաղաքական օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքների բերումով հայությունը թե՛ սփյուռքում (համայնքային կառույցները) և թե՛ Հայաստանում (իշխանությունները), ընդհանուր առմամբ, անպատրաստ էր պատերազմի հետևանքով սփյուռքի, մասնավորապես Մերձավոր Արևելքի, հայազաղութի՝ Սիրիայի հայ համայնքի արմատական ճգնաժամին ու տասնյակ հազարավոր տեղահանված հայրենակիցներ ունենալու խնդրին:

Ի դեպ, Սիրիայի հայ համայնքի ազգային կառույցները՝ Հայ առաքելական եկեղեցին (Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության երկրորդ խոշոր Բերիո և Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի կաթողիկոսությանը ենթակա Դամասկոսի զույգ թեմերով), ինչպես նաև քաղաքական-կուսակցական ու ազգային-համայնքային կառույցների ղեկավար մարմինները պատրաստ չէին պատերազմական իրավիճակի, թեպետ, հատկապես Երկրորդ աշխարհամարտից հետո Մերձավոր և Միջին Արևելքում (Պաղեստին, Եգիպտոս, Լիբանան, Սիրիա, Իրաք, Իրան և այլն) ընթացող ռազմաքաղաքական զարգացումներին ակնատես և քաջատեղյակ լինելով՝ համայնքային կառույցներն օբյեկտիվորեն պետք է, որ կարողանային առավելագույնս կանխատեսել հասունացող ռազմական ելքի անխուսափելիությունն ու դրա կործանարար հետևանքները հայ համայնքի համար: Հետևաբար, որպես “Մայր գաղութի” համայնքային կառույցներ, հարկ էր, որ մինչև օրս կարողանային վերանայել համասփյուռքյան և, մասնավորապես, համայնքային առաջնահերթությունները (պասիվ հայապահպանություն, համայնքն ամեն գնով պահպա-

⁶ Melting Pot (“Հալեցնող կաթսա”) – XX դ. ԱՄՆ-ում քարոզվող էթնիկ զարգացման մոդել, ըստ որի, ամերիկյան ազգային ինքնության ձևավորումը պետք է ընթանա այդտեղ բնակվող տարբեր ազգերի մշակութային և բիոլոգիական “միախառնման”, “հալեցման” սկզբունքով: Ամերիկյան ներդրամտություն և հաշտություն խորհրդանշող այդ համահարթեցնող հայեցակարգը նպատակ ունի բացառել հասարակության մեջ սոցիալական կամ էթնիկ որևէ հակասություն:

նել՝ նույնիսկ մարդկային կյանքի գնով, օտար երկրներում “հայրենիքներ” վերականգնել՝ անգամ կրակահերթերի տակ):

Սիրիայի հայության կենսագործունեության համար պատասխանատու համայնքային ու, ընդհանրապես, համահամայնքային կառույցները, ունենալով երբեմնի պետականագուրկ հայության ստեղծած դասական հայ գաղթավայրերի՝ (Հնդկաստան, Լեհաստան, Հոլանդիա և այլն) սոսկ որպես ժամանակավոր ու անհեռանկար հանգրվան ծառայած լինելու պատմական փորձառությունը, ինչպես նաև ԽՍՀՄ փլուզումից և “Մառը պատերազմի” փաստացի ավարտից հետո արդեն իսկ պետական-քաղաքական ու սոցիալ-տնտեսական բազմակողմանի հարաբերություններ մշակելով Հայաստանի Հանրապետության հետ [որը 1991 թ. ազատ, անկախ և ԼՂՀ (ԱՀ) հռչակումով նաև միացյալ դառնալու գործընթացում է], այնուամենայնիվ, սուբյեկտիվ դրդապատճառներից ելնելով, շահագրգռված էին և տակավին շահագրգռված են սփյուռքն ընդհանրապես և, մասնավորապես, Հայոց ցեղասպանության հետևանքով ստվարացած Մերձավոր Արևելքի “Մայր գաղութը” պահպանել նույնիսկ ավերակների ու փլատակների պայմաններում (անգամ Սիրիայում պատերազմի ու երկրից արտագաղթի ամենաթեժ պահին և հետո)՝:

Մինչդեռ (Արևելյան) Հայաստանը, հատկապես Ռուսաստանին միավորվելուց հետո (Հայկական մարզ՝ 1828–1840 թթ., Երևանի գավառ՝ 1840–1849 թթ., Երևանի նահանգ՝ 1849–1918 թթ.) և առավել ևս XX դ. ողջ ընթացքում (Հայաստանի առաջին Հանրապետություն՝ 1918–1920 թթ., Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետություն՝ 1920–1991 թթ. և Հայաստանի Հանրապետություն՝ 1991 թ. մինչ օրս), եղել, շարունակում է մնալ գաղթի, ներգաղթի ու հայրենադարձության (անհատ, կազմակերպված, զանգվածային) օբյեկտիվ հանգրվան՝ որքան էլ դժվարին պատմաքաղաքական, սոցիալ-տնտեսական պայմաններում դրանք իրականացված լինեն:

Սուբյեկտիվ դրդապատճառների հետևանքով սոցիալ-տնտեսական և ռազմաքաղաքական դժվարություններ դիմակայող Հայաստանը բնական է, որ անպատրաստ էր նման ահռելի աղետից տեղահանված մեծաթիվ հայրենակիցների ընդունմանը: Այդուհանդերձ, ի տարբերություն 2000-ական թվականներին, իրաքյան պատերազմի հետևանքով տեղահանված և Հայաստան փոխադրված մեր հայրենակիցների նոր միջավայրին ընտելանալու հետ կապված դժվարություններին դիմագրավելու փորձառության, սիրիահայերի կարգավիճակը Հայրենիքում համեմատաբար բարենպաստներից էր: Սիրիայից հայրենադարձներին ցուցա-

⁷ Սիրիայի հայությունը կմնա սիրիական հայրենիքի ու իր ժողովրդի կողքին. Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Կաթողիկոս.– “Tert.am”, 2012, 21 հուլիսի, <<https://www.tert.am/am/news/2012/07/21/aram-asyria/552009>>: Դէպի Վերականգնում. Արամ Ա.ի Կոչը Հայ Ժողովուրդին՝ Տազնապահար Հալէպէն.– “Ասպարէզ”, 2017, 9 Յունուար, <<http://asbarez.com/arm/272583/>>:

բերված աջակցությունն առավել կազմակերպված և համակարգված ընթացք է ստացել՝ շնորհիվ 2008 թ. ստեղծված ՀՀ սփյուռքի նախարարության:

ՀՀ Նախագահի որոշմամբ, սփյուռքի նախարարությունը համակարգել է Հայաստան տեղափոխված սիրիահայերի աջակցության ծրագրերը՝ գործակցելով ՀՀ կառավարության համապատասխան տարբեր գերատեսչությունների, ինչպես նաև միջազգային ու համահայկական հասարակական, բարեգործական մի քանի տասնյակ կառույցների, կազմակերպությունների (այդ թվում՝ սիրիահայ) հետ՝ հնարավոր բոլոր միջոցներով (քաղաքական, սոցիալական, տնտեսական, իրավաբանական, առողջապահական, կրթական, մշակութային, մարդասիրական և այլն) դյուրացնելու համար սիրիահայերի Հայրենիքում տեղավորվելու, հաստատվելու ու համակողմանիորեն ինտեգրվելու (Integration) գործընթացը⁹:

Այնպես որ, Միրիայի հայ համայնքի ճգնաժամը ՀՀ սփյուռքի նախարարության հիմնադրումից ի վեր առաջին լուրջ փորձությունն էր սփյուռքի (տվյալ դեպքում՝ սիրիահայ հատվածի) խնդրով Հայրենիքի ներգրավման և Հայաստան-սփյուռք գործակցության արդյունավետության գնահատման առումներով:

Միրիայի հայ համայնքի ճգնաժամը փորձություն էր նաև խորհրդային տարիներին իրականացված պարբերական հայրենադարձություններից ի վեր հայության երկու հատվածների միջև համատեղ փոխըմբռնման, փոխգործակցության և գոյակցության պատրաստականության գաղափարահոգեբանական կողմը քննության ենթարկելու առումով:

Գաղափարաքաղաքական օբյեկտիվ և սուբյեկտիվ դրդապատճառներից ելնելով՝ հայությունը թե՛ սփյուռքում և թե՛ Հայաստանում հայրենադարձվելու կամ հայրենադարձ ընդունելու առումով ազգային պատրաստվածության տարբեր հարթություններում է:

Այսպես, Միրիայից ժամանակին Հայաստան այցելած, Հայաստանում ուսանած, տարբեր գործակցություն (անձնական, գիտական, գործարար և այլն) իրականացրած և իրականացնող, դրանով իսկ Հայաստանի լեզվամտածողության առանձնահատկություններին (նաև՝ ռուսերենի գործածություն), նիստուկացին, բարբերին, սովորույթներին ու կենցաղավարման այլ առանձնահատկություններ-

⁸ Ֆ. Ջաբարեան. նշվ. աշխ., էջ 570:

⁹ Հայաստանում սիրիահայերին աջակցություն ցուցաբերած հաստատությունների ոչ ամբողջական ցանկը տե՛ս Հայաստանում տեղահանված անձանց աջակցման ծառայությունների տեղեկատվական թերթիկ, Երևան, 2018, օգոստոս, 54 էջ: Միրիահայերին օժանդակություն տրամադրող կազմակերպությունների և ծառայությունների ցանկ. Միրիահայերի և տեղացիների դիմակայունության բարձրացում, Երևան, 2018, 24 էջ:

¹⁰ Ավելի մանրամասն տե՛ս Ֆ. Ջաբարեան. նշվ. աշխ., էջ 569–576:

րին ծանոթ սիրիահայերի համար օբյեկտիվորեն դյուրին է եղել Հայաստան հայրենադարձվելու որոշում կայացնելն իրենց բնակված երկրում հակամարտությունը սկսելուց դեռ շատ առաջ կամ տակավին նոր սկսված տարիներին:

Այնինչ, Սիրիայում հակամարտության խորացման պատճառով արդեն հետագա տարիներին Հայրենիքում ապաստանածների (“ակամա հայրենադարձ”) մի որոշ մասի համար, Հայաստանը դիտվել և կարող է դիտվել որպես ժամանակավոր հանգրվան՝ տարանցման (տրանզիտ) վայր, ինչպես այլ երկրներ (Եվրոպա, ԱՄՆ, Ավստրալիա, Արևելքի երկրներ) փոխադրվելու, նույնպես և ետ՝ Սիրիա վերադառնալու համար, ինչը հիմնականում սուբյեկտիվ դրդապատճառներ ունի (հայաստանյան միջավայրին ընտելանալու ցանկության պակաս, Հայաստանի սոցիալ-տնտեսական դժվարություններին, տարածաշրջանի ռազմաքաղաքական իրավիճակին, արևելահայ լեզվամտածողության առանձնահատկություններին, նաև՝ ռուսերենին, նիստուկացին, բարքերին, սովորույթներին, մշակութային ու կենցաղավարման այլ առանձնահատկություններին անծանոթ լինելը կամ խորթ ընդունելը և այլն):

Մինչդեռ, անկախ Հայաստանի քաղաքացիները, ընդհանուր առմամբ (առանձին աննշան բացառություններով), հանդուրժող վերաբերմունք են դրսևորել ու դրսևորում Սիրիայի մեր հայրենակիցների նկատմամբ, ինչը օբյեկտիվ գործոնների հետևանք է (խորհրդային և հետխորհրդային տարիներին պարբերական ու անհատ հայրենադարձության արդյունքում արևմտահայ լեզվամտածողությանը, նրանց որոշ մասի կողմից նաև՝ թուրքերենի, արաբերենի ու այլ լեզուների գործածությանը, նիստուկացին, բարքերին, սովորույթներին, մշակութային և կենցաղավարման այլ առանձնահատկություններին ծանոթ, ընտելացած, առանձին դեպքերում՝ նաև վարժված ու յուրացրած լինելը):

Ուստի, ՀՀ և ԱՀ բնակչության զգալի մասի սուբյեկտիվ ընկալումներում անհասկանալի է տակավին 1991 թ. ազատ, անկախ դարձած և ԼՂՀ/ԱՀ հռչակումով նաև միացյալ դառնալու ճանապարհին գտնվող Հայաստանը Հայոց ցեղասպանության հետևանքով աշխարհով մեկ սփռված հայության ու նրանց ժառանգների զանգվածային հավաքման (Հայրենադարձություն, “Արի տուն” կոչ, Տունդարձ, Հայահավաք և այլն), համակողմանի բնակեցման ու մինչև օրս Հայրենիքը լայնամասշտաբ ներդրումների վայր դիտարկելու առաջնահերթությունների սակարկումը սփյուռքի իր հայրենակիցների որոշակի հատվածի կողմից, ինչպես նաև սփյուռքի և, մասնավորապես Սիրիայի, որպես “Մայր գաղութի” առավելագույնս “հայապահպանված” հայության հայրենադարձվելու նկատմամբ նախընտրության և նախանձախնդրության պակասը¹¹:

¹¹ Տե՛ս Հ. Գ ա լ ս տ յ ա ն. նշվ. հոդվ.:

Նախկինում սփյուռքի որոշակի հատվածի համար Հայաստանի հետ հարաբերություններում գլխավոր խոչընդոտ ԽՍՀՄ-ի փլուզումից քառորդ դար անց, այժմ արդեն որպես նոր խոչընդոտներ են դիտարկվել Հայաստանի սոցիալ-տնտեսական դժվարությունները, քաղաքական դրությունն Արցախում, արևելահայ լեզվամտածողության, ինչպես նաև՝ ռուսերենի գործածության առանձնահատկությունները և այլն:

Ավելին, ինդրահարույց տարածաշրջանում պատերազմի հետևանքով ավերակված որդեգրած երկրի (“սիրիական հայրենիք”) ազգային կառույցները վերականգնելու, վերաշինելու կոչեր են հնչում և միջոցներ ձեռնարկվում¹², որոնք մնացյալ հայության սերունդները հերթական անորոշության մատնելու միտում ունեն, ինչպես նաև խոչընդոտել ու խոչընդոտելու են իրական Հայրենիքի վերակառուցման համասփյուռքյան ջանքերին և բոլոր ժամանակների համար առաջնահերթ ու օրախնդիր՝ հայահավաքի գաղափարագործնական ծրագրին:

Ցավոք, քաղաքական-կուսակցական հատվածական գաղափարախոսությունը, առանձին բացառություններով, սփյուռքի որոշ շրջաններին հեռու է պահել ու պահում ամբողջովին միանալու և գորացնելու Սիրիայից հայրենադարձ մեր հայրենակիցներին աջակցելու Հայաստանի ջանքերին՝ դրանով իսկ խոչընդոտելով սփյուռքը միանշանակ դեպի Հայրենիք կողմնորոշելու հնարավորությունից: Առանձին դեպքերում նախապատվությունը տալով սատարել փախստական հայերի արտերկրում հաստատվելուն՝ հայության նորանոր իրարահաջորդ սերունդներ մատնելով օտարության մեջ հերթական “հայրենիքներ” “(վերա)կառուցելու” անհեռանկար և իմաստագուրկ գործընթացով զբաղվելու, մինչդեռ Հայրենիքը՝ ՀՀ-ն ու ԱՀ-ն, իր գավակների անսակարկ և բոլորեքյան աջակցության կարիքն ունի:

Վիճակը նույնն է նաև սփյուռքահայ այլ համայնքներում ևս, որտեղ, ժամանակի ընթացքում նմանատիպ (սիրիական) կամ այլ սցենարի չբացառվող իրադարձությունների զարգացման ու ծավալման պայմաններում անգամ Հայրենիք վերադարձը և հայրենադարձների տեղավորմանն աջակցելը մնում է սակարկելի, համասփյուռքյան առաջնահերթություններից դուրս (աչքի առաջ է Բրաքից, Եգիպտոսից, Սիրիայից հեռացած և հեռացող հայության պարագան)՝ նախապատվությունը տալով օտար եզերքներում հանգրվանելուն, և կամ՝ ազատ, անկախ, իսկ Արցախի ազատագրումով նաև միացյալ դառնալու ճանապարհին գտնվող Հայրե-

¹² Ղեպի Վերականգնում. նշվ. հոդվ.: Ա. Գ զ ի յ ա ն. Սիրիայի հայ համայնքի ջանքերով 2019-ին լայն թափով կվերականգնվեն ազգային կառույցները. – “Armenpress.am”, 2019, 9 հունվարի, <<https://armenpress.am/arm/news/960028.html>>:

նիքն¹³ առանձին դեպքերում որպես ցատկահարթակ (տրամպլին), տարանցման (տրանզիտ) վայր է դիտարկվում¹⁴:

Աշխարհաքաղաքական արդի մարտահրավերներն առավել քան առիթ պետք է դառնան համասփյուռքյան առաջնահերթությունների վերարժևորման, համայնքային կյանքը սփյուռքում բարոյահոգեբանական, գաղափարագործնական առումով արմատապես վերանայելու և վերակազմակերպելու համար: Այդ դարակազմիկ առաքելությունն առանց երկմտելու ու հապաղելու միասնականորեն իրենց ձեռքը պետք է վերցնեն ինչպես սփյուռքն իր համայնքային բոլոր կառույցներով Հայ եկեղեցին (Առաքելական, Ավետարանական, Գաթողիկե), ազգային կուսակցությունները (ՄԴՀԿ, ՀՅԴ, ՌԱԿ), համահայկական բարեգործական կազմակերպությունները, սփյուռքյան բոլոր միություններն ու ակումբները, հայ և օտարալեզու հայկական զանգվածային լրատվությունը (մամուլ, ռադիո, հեռուստատեսություն, համացանց), ուսումնակրթական հաստատությունները, այնպես և Մայր Հայրենիքը՝ Հայաստանը (ՀՀ և ԱՀ), իր պետական, եկեղեցական, հասարակական ու այլ լծակներով ուղղորդելու և համակարգելու միացյալ ջանքերը:

Հարկ է, որ Հայաստանի և սփյուռքի կառույցներն իրենց հայրենասեր ու ազգասեր կարող ուժերի միջոցով, նախ և առաջ, գաղափարական առումով վերանայեն օրեցօր առավել անապահով դարձող աշխարհում հայության համազգային առաջնահերթությունները, գոյատևման հեռանկարները և ուղենշեն հետագա անելիքները: Համահայկական, համասփյուռքյան ամենօրյա հետևողական բացատրական ակտիվ գործունեությամբ, հրապարակումներով, էլույթներով, քարոզչությամբ, տեսաճուջադրություններով հարկ է լուսավորական աշխատանք տանել հայկական համայնքներում՝ ներկայացնելով աշխարհաքաղաքական բուն իրավիճակը, համաշխարհային զարգացումներն ու մարտահրավերները, ձուլման և սերնդափոխությունների արդյունքում այլասերման և հայ ինքնության ձևափոխման ու ձևախեղման վտանգները: Հակառակ դեպքում, սփյուռքը, որպես ազգային կարևորություն ներկայացնող հավաքականություն, աննպատակ ու սպարդյուն «հայապահպանությամբ», հարափոփոխ, արագ գլոբալացվող և անընդհատ նորանոր մարտահրավերների հետ առերեսվող աշխարհաքաղաքական պայմաններում դատապարտված է ձուլման ու անհետացման:

Մերձավոր ու Միջին Արևելքի, ինչպես նաև Արևմուտքի երկրների անապահով ու անհեռանկար սպազայի և օրեցօր սպառնացող վտանգների, մարդկության ու

¹³ “Ազատ, անկախ և միացյալ Հայաստան”՝ 1919 թ. ՀՅԴ հռչակած քաղաքական հավատամքը (Անկախ և միացյալ Հայաստան, <https://hy.wikipedia.org/wiki/Անկախ_և_Միացյալ_Հայաստան>):

¹⁴ 2012–2015 թթ. ՀՀ է եկել շուրջ 17.000 սիրիահայ, որից շուրջ 4.000-ը մեկնել է այլ երկրներ, ինչպես նաև վերադարձել է Սիրիա (տե՛ս Ֆ. Ջաքարեան. նշվ. աշխ., էջ 569):

քաղաքակրթության նկատմամբ ահագնացող աշխարհաքաղաքական զարգացումների պայմաններում՝ Հայոց ցեղասպանությունից 100 տարի անց, այժմ արդեն օտար ամերիկացիները նորից ու նորից ֆիզիկական գոյության պահպանման խնդրի առաջ կանգնած, ինչպես նաև ուժացման ու այլասերման դատապարտված հայությանը հնարավոր կարող է լինել գաղափարապես ու բարոյահոգեբանական առումով նախապատրաստել անցում կատարելու մեկդարյա պասիվ ու անարդյունավետ, թափառական ու անհեռանկար հայապահպանությունից դեպի գործնական հողապահպանություն՝ “Դեպի Երկիր” Հայրենադարձության և Հայրենաշինության: Հայրենադարձություն, որը ենթադրում է սփյուռքը գաղափարապես, ֆիզիկապես ու նյութապես նախապատրաստել և ուղղորդել բացառապես Հայաստանի Հանրապետություն, ինչպես նաև՝ հերոսների արյան գնով ազատագրված Լեռնային Ղարաբաղ՝ Արցախի Հանրապետություն, անսակարկ (առանց կուսակցական, գաղափարական, քաղաքական նկրտումների) զանգվածային և համակողմանի Տունդարձի, հանուն հայկական գենոֆոնդի պահպանման ու փրկության և համազգային նպատակների իրականացման շարունակականության պահպանման:

Քնարիկ Ավագյան – պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ ԱՄՆ-ի հայ համայնքի և ընդհանրապես հայ սփյուռքի պատմություն: Հեղինակ է 1 մենագրության և շուրջ 140 գիտական հոդվածի: lira777@yahoo.com

REFERENCES

- Ankakh ev miatsyal Hayastan, <https://hy.wikipedia.org/wiki/Անկախ_և_Միացյալ_Հայաստան> (in Armenian).
- Avagyan K.** Serndapokhutyan herankarnere spyurkum.- HH GAA “Lraber hasarakakan gitutyunneri,” Yerevan, 2015, № 2 (in Armenian).
- Depi verakangnum. Aram A-i koche hay zhoghovurdin tagnapahar Halepen.- “Asparez,” 2017, 9 Hunuar, <<http://asbarez.com/arm/272583/>> (in Armenian).
- Galstyan H.** Siriahayer. Veradardz, or chein nakhatesel.-“Hetq.am,” 2015, 3 hunisi, <http://hetq.am/arm/news/60582/syrian-armenians-a-return-they-never-predicted.html> (in Armenian).
- Grigoryan M.** Armenia: An Uncertain “Homecoming” for Syria’s Diaspora.- “Eurasianet.org,” 2012, July 31, <<https://eurasianet.org/armenia-an-uncertain-homecoming-for-syrias-diaspora>>.
- Gziryan A.** Siriayi haj hamaynki djankerov 2019-in layn tapov kverakangnven azgayin karuytsnere, “Armenpress.am,” 2019, 9 hunvari, <<https://armenpress.am/arm/news/960028.html>> (in Armenian).
- Hayastanum teghahanvads andzants adjaktsman dsarayutyunneri teghekatvakan tertik, Yerevan, 2018, ogostos (in Armenian).
- Kuwait to release \$100,000 in emergency assistance to Syrian Armenians.- “Arka.am,” 2012, November 29, <http://arka.am/en/news/society/kuwait_to_release_100_000_in_emergency_

assistance_to_syrian_armenians/>.

Lieberman A. Lessons learned as Syrian-Armenian refugees return to Armenia.- 2017, July 25, <<https://www.devex.com/news/lessons-learned-as-syrian-armenian-refugees-return-to-armenia-90551>>.

Minassyan K. “Hayere Surio mech apaga chunin,” Zrutsets Sago Arian. “Zhamanak,” Istanbul, 2018, 4 Oostos, <<http://213.232.51.219/content/հարթակ/4-08-2018-կայծ-մինասեան-հայերը-սուրիոյ-մէջ-ապագայ-չունին>> (in Armenian).

Pashayan A. Ankayunutyune Siriayum ev siriahay hamaynke.- “Globus. Energetik ev taradsashrjanayin anvtangutyun,” Yerevan, 2011, № 3 (in Armenian).

Petk e pahpanenk siriahay hamaynke, ayn mer nerkayutyunn e Merdzavor Arevelkum.- “Tert.am,” 2012, 21 hulis, <<https://www.tert.am/am/news/2012/07/21/siria-haj/552047>> (in Armenian).

SirArBi-i masin, <<http://syarbi.am/hy/about-syarbi>> (in Armenian).

Siriya, <<https://ru.wikipedia.org/wiki/Сирия>> (in Russian).

“Siriahayeri himnakhndirner hamakargogh kentron” HK-i nakhagah Lena Halajiane.- “Nyut.am,” 2017, 27 hunvari, <<http://nyut.am/?p=133813&l=am>> (in Armenian).

Siriahayerin ozhandakutyun tramadrogh kazmakerputyunneri ev dsarayutyunneri tsank. Siriahayeri ev teghatsineri dimakayutyun bardzratsum, Yerevan, 2018 (in Armenian).

Siriayi hayutyune kmna siriakan hayreniki u ir dzoghoverdi koghkin. N.S.O.T.T. Aram katoghikos.- “Tert.am,” 2012, 21 hulis, <<https://www.tert.am/am/news/2012/07/21/aram.a-syria/552009>> (in Armenian).

“Surihay gaghute tokun ev zoravor armatneru vra himnuadz u kazmuadz gaghut e,” ke haytne Surio H.Y.D. kedronakan komitei andam Nerses Sargisian.- “Hayrenik shabatatert,” 2015, 2 dektember, <<http://hairenikweekly.com/2015/12/02/24700>> (in Armenian).

UNESCO seeks to save Jewish sites from Islamic State’s claws. 2014, December 1, <<http://www.israelhayom.com/2017/07/20/unesco-seeks-to-save-jewish-sites-from-islamic-states-claws/>>.

US Government Responds to Prominent Armenian-American Lawyers Call upon US Government to Issue Visa Waivers for Syrian-Armenians. Center for Armenian Remembrance. Press Release.- 2012, November 12, <<http://www.centerarnews.com/>>.

War Witness. War Torn Syria and the Armenian Redwood Project – Providing Safe Refuge Amongst the Wreckage.- 2015, May 1, <<http://www.armenianredwoodproject.org/new-blog/2015/5/1/war-torn-syria-and-the-armenian-redwood-project-providing-safe-refuge-amongst-the-wreckage>>.

Zakaryan F. Siriayi hay hamaynki het tarvogh ashkhatanknere (2008-2015).- “Surio hayere. Gitazhoghovi niuter (24-27 Mayıs, 2015),” khmb. A. Dakessian, Beirut, 2018 (in Armenian).

КРИЗИС АРМЯНСКОЙ ОБЩИНЫ СИРИИ
КАК ПОВОД ДЛЯ ПЕРЕОЦЕНКИ
ПРИОРИТЕТОВ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ
(2011–2018 гг.)

КНАРИК АВАКЯН

Резюме

Ключевые слова: мировой терроризм, Сирия, армянская община, репатриация, Министерство диаспоры РА.

В результате развязанной террористическими силами в Сирии (2011 г.) длительной и разрушительной войны тысячи сирийских армян нашли прибежище, помимо Ливана, Иордании, Объединенных Арабских Эмиратов, США, Канады, Швеции и т. д., и на своей родине – в Республике Армения и Республике Арцах. От начала войны до конца января 2017 г. в Армению прибыли 22 тысячи сирийских армян.

В условиях бесперспективного будущего и изо дня в день нарастающей опасности в Сирии, на Ближнем и Среднем Востоке и в странах Запада, а также мощных геополитических процессов, касающихся человечества и цивилизации в целом, спустя 100 лет после Геноцида, у армян зарубежья (перед которыми вновь встал вопрос физического существования, равно как и угрозы отчуждения и извращения) появилась возможность идеологически и морально-психологически подготовиться к переходу от векового пассивного, неэффективного и бесперспективного сохранения национальной идентичности на чужбине к практическому сохранению Родины – к массовой и всесторонней репатриации. Репатриация, которая предполагает как идеологическую, так и физическую и материальную подготовку и ориентацию (без партийно-идеологических и политических притязаний) армянской диаспоры на Республику Армения, а также на освобожденный ценою пролитой крови героев Нагорный Карабах – Республику Арцах, во имя сохранения и спасения армянского генофонда и реализации национальных целей и их последовательного претворения в жизнь. В противном случае диаспора как важная национальная общность, ратуя за бесцельное и неэффективное «сохранение армянства», в условиях стремительной глобализации и новых геополитических вызовов, обречена на ассимиляцию и исчезновение.

Кнарик Авакян – к. и. н., ведущий научный сотрудник Института истории НАН РА. Научные интересы история армянской общины США и диаспоры в целом. Автор 1 монографии и около 140 научных статей. lira777@yahoo.com

THE CRISIS OF THE ARMENIAN COMMUNITY OF SYRIA
AS A GROUND FOR THE REEVALUATION OF THE
PAN-DIASPORAN PRIORITIES
(2011–2018)

KNARIK AVAGYAN

S u m m a r y

Key words: world terrorism, Syria, Armenian Community, repatriation, RA Ministry of Diaspora.

As a consequence of the protracted and devastating war launched by the terrorist forces in 2011, thousands of Armenian-Syrians have taken shelter among other countries (Lebanon, Jordan, the United Arab Emirates, the USA, Canada, Sweden, etc.) also in the Motherland,– in the Republics of Armenia and Artsakh. From the beginning of the war to the end of January 2017, 22.000 Syrian Armenians arrived in Armenia.

Under the conditions of a precarious and unpromising future and the gradually threatening dangers in Syria, as well as in the Near and Middle East and the Western countries, in addition to the dreadful geopolitical developments imperiling humanity and civilization, and a 100 years following the Armenian Genocide, it is advisable to ideologically and psychologically prepare those living in foreign lands and facing the danger of the maintenance of their physical existence and assimilation to make a transition from a century-old passive and inefficient, migratory and dubious Armenian-preserving policy into a practical land-preserving policy, into Repatriation to the Homeland. This idea implies that the Diaspora should be ideologically, physically and materially prepared and aimed (without party, ideological and political pretentions) exclusively at the Republic of Armenia and the Republic of Mountainous Karabakh – the Republic of Artsakh, liberated at the price of the blood of heroes, aimed at an unbargainable massive and multilateral Home-Coming, for the sake of preservation and salvation of the Armenian genofund and for the maintenance and continuity of the realization of the pan-national objects. Otherwise, the Diaspora, as a collective body of national importance, with its aimless and inefficient “Armenian-preservation,” is doomed to assimilation and disappearance under the constantly changing, rapidly globalizing geopolitical conditions, ceaselessly facing new challenges.

Knarik Avagyan – Candidate of Historical Sciences, Leading Researcher at the NAS RA Institute of History. Scientific interests: the history of the Armenian Community of the USA and the Diaspora in general. Author of a monograph and over 140 academic articles. lira777@yahoo.com

ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ ԱՍՏԱՊԱՏՑԻ. ՆՈՐ ԱՆՈՒՆ XVIII ԴԱՐԻ
ՀԱՅ ՈՐՄՆԱՆԿԱՐԶՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ *

ԱՎԵՏԻՄ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Բանալի բառեր՝ հայ որմնանկարչություն, Աստվածատուր Աստապատցի, Մեղրի, Կարճևան:

XVIIՍԻԿ դդ. հայ որմնանկարչությունը նախորդ դարաշրջանների համեմատ ամենաքիչն է ուսումնասիրվել: Այս շրջանի որմնանկարչական հուշարձանների մեծ մասի հեղինակները մինչ օրս մնում են անհայտ, իսկ այն քչերը, որոնց անունները բախտի բերմամբ հասել են մեզ՝ գիտական որևէ հետազոտության չեն ենթարկվել: Այդ բացառիկ անուններից է XVIII դարավերջին ստեղծագործած նկարիչ Աստվածատուր քահանա Աստապատցին:

Աստվածատուր քահանան անհայտ անուն է հայ կերպարվեստի պատմության մեջ: Բացի հոգևորական լինելու փաստից, նրա կյանքի մասին որևէ այլ տեղեկություն մեզ չի հասել: Ի դեմս նրա ստեղծագործությունների՝ կարող ենք խոսել չորս եկեղեցիներում արված որմնանկարների մասին, որոնցից մեկում՝ Սյունիքի Կարճևան գյուղի Ս. Աստվածածին եկեղեցում պահպանվել է նաև նրա ստորագրությունը, իսկ մյուս երեքում արված որոշ որմնանկարներ վստահաբար կարող ենք վերագրել նրան. դրանք են Մեղրիի Անապաստանաց վանքի Ս. Հովհաննես Մկրտիչ, Փոքր թաղի Ս. Հովհաննես Մկրտիչ և Մեծ թաղի Ս. Աստվածածին եկեղեցիների որմնանկարները:

Կարճևանի Ս. Աստվածածին եկեղեցին մի անշուք եռանավ բազիլիկ է՝ կառուցված XVIII դարում: Խորհրդային տարիներին որպես խոտի պահեստ ծառայած այս կառույցը 1990-ական թթ. գտվում էր անմխիթար վիճակում: 2009 թ. գյուղի բնակիչների նախաձեռնությամբ, առանց մասնագետների ներգրավման և թույլտվության, սկսվում է Ս. Աստվածածին եկեղեցու “վերականգնումը”: Ինքնագործունեության արդյունքում պատերը, բացառությամբ որոշ հատվածների, ներքուստ պատվում են գաջով, ինչի արդյունքում որմնանկարները մեծապես տուժում են: Ավագ խորանում այժմ խիստ վատ վիճակում պահպանվել են Ս. Գևորգի և Ս. Մարգարի որմնանկարները, խորանի վերին հատվածի զարդամոտիվային շրջանակների հատվածները, ավագ խորանի հյուսիսակողմյան ու հարա-

* Ընդունվել է տպագրության 24. V. 2019 թ.: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի ասպիրանտ: Հոդվածը տպագրության է երաշխավորել գիտական ղեկավար, արվ. դոկտ. Իրինա Դրամբյանը (21. V. 2019 թ.):

վակողմյան որմնամույթերի Միքայել հրեշտակապետի երկու պատկերները, նաև նախշագարդեր պարունակող որմնանկարի մի հատված՝ հյուսիսարևելյան մույթին:

Ավագ խորանը որմնանկարված է եղել ամենաքիչը երկու գոտիներով, որոնք իրարից բաժանվում են ծաղկային պարզ հաջորդականությամբ եզրագոտիով (նկ. 4): Ստորին գոտուց մեզ են հասել միայն երկու որմնանկարներ՝ Ս. Գևորգը հյուսիսային կողմում և Ս. Սարգիսը՝ հարավայինում (նկ. 1):



Նկ. 1. Գարձնանի Ս. Աստվածածին եկեղեցու ավագ խորանի Ս. Գևորգի (ձախից) և Ս. Սարգսի (աջից) որմնանկարները, 1793 թ. (լուս.՝ 2017 թ.)¹:


Ս. Գևորգը պատկերված է ձին հեծած, լուսապսակով և սաղավարտով, հագին՝ մոխրագույն թեփուկավոր զրահ ու թիկնոց: Ձին ծառս է լինում, իսկ ձիավորը նիզակը բռնած երկու ձեռքով՝ փորձում է խոցել ստորին հատվածում պատկերված չորքոտանի թևավոր հրեշին: Ս. Գևորգն ամբողջովին մոխրագույն է, ձին՝ շագանակագույն, ընդհանուր պատկերի ետնախորքը՝ նարնջագույն: Որմնանկարի վերին հատվածում պահպանվել է սևաներկ արձանագրություն՝ «... ԱՌՐ Ս[ՈՒՐ]Բ ԳԷՈՐԳ»²:

Ս. Սարգսի որմնանկարը խիստ վնասված է հասել մեզ. պահպանվել են ձիավորի գլխի հատվածը, ձիու մի քանի ուրվագծեր, նարնջագույն ետնախորքի որոշ մնացորդներ ու ծաղկային եզրագոտին: Վերին հատվածում պահպանվել է նաև սևաներկ արձանագրությունը՝ «Ս[ՈՒՐ]Բ ՍԱՐԳԻՍ»:

¹ Բոլոր լուսանկարներն ու գրչանկարները մերն են:

² Արձանագրությունները հրապարակվում են առաջին անգամ:

Ավագ խորանի վերին գոտին սպիտակ ծաղկային մոտիվներ պարունակող շրջանակներով բաժանված է եղել տասներկու հատվածների, վեցական լուսամուտից աջ ու ձախ: Աջակողմյան նկարազարդումներից ներկայումս պահպանվել են միայն շրջանակների որոշ հատվածներ: Չախակողմյան առաջին և երրորդ պատկերները սպիտակ ներկով արված ծաղկատերևային նախշազարդեր են, իսկ երկրորդում հատվածաբար պահպանվել է նկարչի անունը կրող խիստ արժեքավոր սևաներկ հետևյալ արձանագրությունը.



Վերծանությունը.


.... / ՎԱՆՑԻ. ՄՈՒ[ԱԴ]Ի ՈՐ[ԴԻ] ... ՀԱ / ԿԻՆ և ՋԱՆԻՆ . ԴԱՐՑԵԱԼ ՀԱՅ / ԲԱՊԵՏԻՆ . և ԻԻՐ Ո[Բ]ԴԻ ՕՎԱՆԷՍԻՆ / ՈՐՈ ՅԻՇԱՍԱԿՆ ՕՐՀՆՈՒԹ[ԵԱՄ]Բ / ԵՂԻՑԻ : ԹԻ[ԻՆ] ՌՄԽԲ ԻՆ (1793) / ԱՍՍԱՊՍՏԻ Տ[Է]Ր Ա[ՍՏՈՒԱ]ՍԱ[Մ]ՍՈՒՐ / ՔԱՀԱՆԱՅՍ ՈՐ ՔԱՇԵՑԻ ԻՄ ՉԵՌՕՔՍ / ... [ՊԱ]ՏԿԵՐՍ

Խորանի հյուսիսակողմյան և հարավակողմյան որմնամույթերի արևմտյան երեսներին պատկերված են Միքայել հրեշտակապետի երկու որմնանկարները՝ երկու տարբեր կերպարներով. հյուսիսակողմյան որմնամույթին՝ որպես հանգուցյալի հոգին դեպի դրախտ ուղեկցող, հարավակողմյան որմնամույթին՝ որպես մարդկանց հոգիները կշռող հրեշտակ (նկ. 2):

Հյուսիսակողմյան որմնանկարում Միքայելը կանգնած է հանգուցյալի վրա և աջ ձեռքով բռնել է վերջինիս հոգին խորհրդանշող փոքրածավալ մարդկային կերպարի մազերից: Նրա վերնագգեստը շագանակագույն է, ներքին շերտավոր զգեստը, լուսապսակը, թևերն ու զգեստը՝ մոխրագույն: Վնասված է որմնանկարի վերին հատվածը, որտեղ եղել է արձանագրություն:

Հարավակողմյան որմնանկարի վերին կեսը խիստ մաշված է, և միայն վեր տարածած թևերի ուրվագծերն ու ձեռքի կշռքի հազիվ նշմարվող լծակը և թելերն են հուշում պատկերվածի ով լինելու մասին: Միքայելի հազին մոխրագույն վերնագգեստ է, որի տակից մինչև գետին իջնում է ծալքավոր ներքին զգեստը: Պատկերի ետնախորքը նարնջագույն է, ստորին հատվածում՝ շախմատաձև դասավորված սև վանդակներ: Որմնանկարի վերին հատվածում նշմարվում է մի քանի տողով գրված արձանագրություն, որից ընդամենը որոշ տառեր են մնացել

(արձանագրության մաշվածության պատճառով տեղադրում ենք միայն գրչանկարը).



Վերծանությունը.

.... / / ... ԵՂ[ԻՅ]Ի ԹԻ[ԻՆ] ՌՄԽԲ (1793)



Նկ. 2. Կարձևանի Ս. Աստվածածին եկեղեցու ավագ խորանի հյուսիսակողմյան (ձախից) և հարավակողմյան (աջից) որմնամույթերի որմնանկարները, 1793 թ. (լուս.՝ 2017 թ.):

Միքայել հրեշտակապետի այս պատկերատիպերը, ինչպես կտեսնենք հաջորդիվ, կենտրոնական տեղ են զբաղեցնում Աստապատցու որմնանկարներում: Ուշագրավ է հատկապես Միքայելի՝ հանգուցյալի հոգին հանող տարբերակը, որը խիստ հազվադեպ է պատահում հայ արվեստում, ուստի հարկ է փոքր ինչ հանգամանալից անդրադառնալ այդ պատկերատիպերին:

Միջնադարյան արվեստում Միքայել հրեշտակապետը պատկերվում է հիմնականում երկու տարբերակով՝ որպես չար ուժերի դեմ պայքարող և հաղթող ռազմիկ (հիմքը՝ Յտ. 12:7-9)՝ զինված սրով ու (կամ) նիզակով, և որպես կշեռքով հանգուցյալների հոգիները կշռող ու նրանց վաստակը որոշող հրեշտակ³: Երկրորդ պատկերատիպը, որ կոչվում է «Պսիխոստագիս» (հուն. «փսիխոստագիա»՝ հոգիների կշռում), «Ահեղ դատաստան» տեսարանի հիմնական դրվագներից մեկն է, սակայն պատկերվում է նաև որպես առանձին տեսարան: Կարելի է ասել, որ «Պսիխոստագիսից» էլ արդեն ետբյուզանդական շրջանում ծագել և XVII-XVIII դդ. տարածում է գտել Միքայելի՝ հանգուցյալի հոգին հանող տարբերակը: Այս դեպքում տեսարանի ստորին հատվածում պատկերվում էր հոգին տանջվելով ավանդող մեղսավորը, իսկ նրա վրա կանգնած՝ Միքայել հրեշտակապետը, ով, որպես կանոն, աջ ձեռքում սուր ուներ, ձախ ձեռքում՝ մեղսավորի հոգին խորհրդանշող մարդկային փոքրիկ ֆիգուր: Վերջինս երբեմն պատկերվում է ետևից ծխացող հետք թողնելով, ինչով, թերևս, շեշտվում է հանգուցյալի մեղսավոր լինելու հանգամանքը: Երբեմն հանգուցյալի կողքին պատկերվում են սատանան, չարքեր և այլն, կարող է պատկերվել նաև ժապավեն՝ վրան գրված՝ «Մարդի կ, տեսե՛ք պարզված սուրբ, իսկ ովքեր որ պիղծ են ու ծույլ՝ հոգեվարքի ձևը» կամ համանման այլ խոսքեր:

Դժվար է ասել՝ ինչ օրինակներից է օգտվել Աստապատցին այս պատկերները ստեղծելիս: Նշենք միայն, որ նոր շրջանի հայ արվեստում հայտնի վաղագույն օրինակը Քյոթահիայում 1719 թ. պատրաստված հախճապակյա ափսեի երեսի պատկերն է (գտնվում է Լոնդոնի Վիկտորիա և Ալբերտ թանգարանում)⁴, վերջին օրինակը՝ Կամարիս գյուղի (Կոտայքի մարզ) Ս. Հովհաննես եկեղեցու մուտքի բարավորի բարձրաքանդակը (XIX դ. երկրորդ կես):

Ս. Աստվածածին եկեղեցում որմնանկարի մի հատված է պահպանվել նաև հյուսիսարևելյան մույթի հարավային երեսին, որը ներկայացնում է նույնպիսի նախշազարդեր, ինչպիսիք տեսնում ենք ավագ խորանի վերին գոտում: Մույթի նույն երեսին՝ նախշազարդերից քիչ ներքև, արձանագրության դատարկ տողեր են, որոնք առկա են նաև հարավարևելյան մույթի հյուսիսային երեսին:


Մեղրիի Անապաստանաց վանքի (Մեղրիի վանք) Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու (XVII դ.)⁵ ներսը որմնանկարվել է ամենաքիչը երկու անգամ՝ 1745 և

³ J. Hall. Dictionary of Subjects and Symbols in Art. New York, 1974, p. 208.

⁴ Ա. Այվազյան. Քյոթահիահայ հախճապակեգործության մի կարևոր հավաքածու, Երևան, 2014, նկ. 107:

⁵ Վանքի ճարտարապետության մասին տե՛ս Ս. Հասրաթյան. Մյունիքի XVII-XVIII դարերի ճարտարապետական համալիրները, Երևան, 1973, էջ 83-86, նույնի՝ Մեղրու


1793 թվականներին: Թե ինչ ծավալով է եկեղեցին որմնանկարվել, փաստացի տեղեկություններ չունենք. ներկայում 1745 թ. շերտից պահպանվել են անհայտ սրբի պատկերն ու ծաղկատերևային զարդամոտիվներն ավագ խորանում, երկու սուրբ ձիավորների պատկերները հարավարևելյան մույթի հյուսիսային և հյուսիսարևելյան մույթի հարավային երեսներին, իսկ 1793 թ. շերտից՝ խորանի հարավակողմյան ու հյուսիսակողմյան որմնամույթերի արևմտյան երեսների Միքայել հրեշտակապետի երկու որմնանկարները (նկ. 3), որոնք, անկասկած, կարող ենք համարել Աստվածատուր քահանայի ձեռքի գործ:



Նկ. 3. Մեղրիի Անապատանաց վանքի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու ավագ խորանի հյուսիսակողմյան (ձախից) և հարավակողմյան (աջից) որմնամույթերի որմնանկարները, 1793 թ. (լուս.՝ 2016 թ.):

Հյուսիսակողմյան որմնանկարում, ինչպես և Կարճևանի եկեղեցու դեպքում, Միքայելը ներկայացված է որպես մարդկանց հոգիները դրախտ ուղեկցող հրեշտակ՝ կանգնած հանգուցյալի վրա, ձեռքին՝ վերջինիս հոգին խորհրդանշող փոքրիկ մարդկային ֆիգուր: Միքայելի զգեստն այստեղ կարմրավուն է, թևերը՝ մոխրագույն: Վերին հատվածում պահպանվել է մաշված արձանագրությունը (մաշվածության պատճառով տեղադրում ենք միայն գրչանկարը)։


Չրջանի հուշարձանները, Երևան, 1987, էջ 9-11, Վ. Հարությունյան. Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1992, էջ 396:



Վերծանությունը.

ՅԻՇԱՏԱԿԷ ՊԱ[Տ]ԿԵՐՄ ՓՈ / ՔՐ ԹԱՂՅԻ . Տ[Է]Ր ՅՕՉԱ / ՆՆԷՍԻ ՈՐԴ[Ի] ՅՕՉԱՆՆԷՍ / ՎԱՐԴԱՊԷՏ ԹԻ[ԻՆ] ՌՄԽԲ (1793)

Հարավակողմյան որմնանկարում Միքայելը պատկերված է որպես մարդկանց հոգիները կշռող հրեշտակ: Նրա թևերը կարմիր են, լուսապսակն ու զգեստը՝ մոխրականաչավուն՝ ի հակադրություն հյուսիսակողմյան պատկերի: Որմնանկարի ետնախորքը սպիտակ է, ստորին հատվածում՝ շախմատաձև սև ու կարմրավուն վանդակներով: Ստորին հատվածում (հրեշտակի պատկերի ու վանդակավոր հատվածի միջև) պահպանվել է դժվար ընթեռնելի արձանագրություն.



Վերծանությունը.

.... / [Յ]ԻՇԱ[Տ]ԱԿԷ (Պ[ԱՏԿԵՐՄ ՓՈՔ[Ր] ԹԱՂՅԻ / [ՀԱՆ]ԳՈՒՑԵԱԼ Տ[Է]Ր ՅՕՉԱՆՆԷՍԻ ՈՐԴԻ ՅՈՉԱՆՆԷՍ[ԻՆ] / Թ[ԻՆ] ՌՄԽԲ (1793)

Նշված երկու որմնանկարներում էլ որպես շրջանակ ծառայում է մոխրաերկնագույն զանգակի (՝), կարմրավուն վարդի, կարմրավուն կակաչի ու տերևների հաջորդական մոտիվներից կազմված եզրագոտին, որը վերին հատվածում պսակվում է ոճավորված կամարով (նկ. 4): Կարճնանում կիրառված ծաղկային պարզ հաջորդականությամբ զարդամոտիվների հետ սրանք Աստապատցու զարդարվեստի հիմնական մոտիվներն են:

Մեղրիի Փոքր թաղի Ս. Հովհաննես Մկրտչի եկեղեցում (XVII դ.)⁶ առկա են ամենաքիչը երեք շրջանի որմնանկարներ՝ 1700, 1793 և 1866 թթ.: Ի դեմս Աստվածատուր քահանայի գործերի՝ այստեղ կարող ենք նշել չորս որմնանկարներ՝ Պետրոս և Պողոս առաքյալների պատկերներն ավագ խորանի հյուսիսակողմյան ու հարավակողմյան որմնամույթերի արևմտյան երեսներին, Հովհաննես Մկրտչի պատկերն ավագ խորանի հյուսիսային և Ս. Ստեփանոս նախավկայի պատկերն ավագ խորանի հարավային կողմերում: Նշվածներից Պետրոս առաքյալի, Հովհաննես Մկրտչի և Ս. Ստեփանոսի որմնանկարների արձանագրություններում կարդում ենք 1793 թվականը, ձեռագիրն էլ նույնական է նախորդ երկու եկեղեցիների՝ Աստապատցու որմնանկարների արձանագրությունների ձեռագրին:



Նկ. 4. Ծաղկատերևային եզրագոտիների նմուշներ Կարճևանի Ս. Աստվածածին եկեղեցու (ձախից) և Անապաստանաց վանքի (աջից) որմնանկարներից, 1793 թ. (լուս.՝ 2017 թ.):

Պետրոսի ու Պողոսի որմնանկարներում որպես շրջանակ է ծառայում զանգակի, վարդի և կակաչի նույն եզրագոտին, ինչ Անապաստանաց վանքում է, Ս. Հովհաննես Մկրտչի ու Ս. Ստեփանոսի որմնանկարներում՝ ծաղկային պարզ հաջորդականությամբ նույն եզրագոտին, ինչ Կարճևանի եկեղեցում է: Մարդկային կերպարների դեպքում, սակայն, դիմանկարների ոճը որոշակիորեն տարբերվում է նկարչի նախորդ գործերից: Հատկանշական է, որ եկեղեցու որմնանկարների՝ 2018 թ. վերականգնման աշխատանքների ժամանակ ավագ խորանի Հովհաննես Մկրտչի պատկերի դեմքի հատվածում արված փորձնական բացվածքի արդյունքում ստորին շերտ ի հայտ եկավ՝ ուրվագծերով վերին (Աստապատցու) շերտին համապատասխան: Կարելի է ենթադրել, որ հին շերտի որմնանկարների մաշված լինելու պատճառով Աստապատցին պարզապես վերանկարել է դրանք՝ դնելով իր արձանագրությունը:

Պետրոս առաքյալը պատկերված է որպես կարճ, սպիտակ մորուքով ծերունի, հագին՝ շագանակագույն թիկնոց և մոխրագույն քիտոն: Աջ ձեռքը պահել է դեպի վեր, իսկ ձախով ինչ որ իր է բռնել (հավանաբար՝ գալարակ): Գլխից աջ ու ձախ նրա անվան տառերն են՝ «ՊԵՏՐՈՍ», իսկ նույն բարձրությամբ աջ կողմում՝

⁶ Եկեղեցու ճարտարապետության մասին տե՛ս Ս. Հ ա ս ր ա թ յ ա ն. Մեղրու շրջանի հուշարձանները, էջ 14:

մատնության խորհրդանիշ աքաղաղը: Պատկերի վերին հատվածում պահպանվել է նաև սևաներկ արձանագրությունը.



Վերծանությունը.

ՅԻՇԱՏԱԿԷ ՊԱՏԿԵՐՄ ՓՈՔԸ ԹԱՂՅԻ . ԴԱՎԻԹԻ - /
ՈՐԴԻ . ՅԱՐՈՒԹ[ԻԻՆ]ԻՆ .: ԹԻ[ԻՆ] ՌՄԽԲ (1793) ԻՆ~~~~

Պողոս առաքյալը պատկերված է սև մազերով և մորուքով՝ ձեռքին երկարավուն, կորացած ծայրով գավազան: Ի տարբերություն Պետրոսի՝ նրա հագին մոխրագույն թիկնոց և շագանակագույն քիտոն է: Ի դեմս արձանագրության՝ այս որմնանկարում առկա են միայն առաքյալի գլխի հատվածում պահպանված մի քանի սևաներկ տառեր՝ “ՊՕՂՈՍ”՝ արված նախորդ արձանագրությունների ձեռագրով: Աստապատցու մասին հուշում են նաև որմնանկարի կարմրավուն և մոխրագույն երանգներն ու եզրագոտին (Պետրոս առաքյալի որմնանկարի նույն եզրագոտին է), այնպես, որ նկարչի ով լինելը որևէ կասկած չի հարուցում:



Նկ. 5. Մեղրիի Փոքր թաղի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու Պողոս և Պետրոս առաքյալների, Հովհաննես Մկրտչի և Ս. Ստեփանոս նախավկայի որմնանկարները, 1793 թ. (լուս.՝ 2017 թ.):

Ավագ խորանում Ս. Հովհաննես Մկրտիչը պատկերված է կանգնած դիրքով՝ աջ ձեռքում բռնած երկարավուն գավազանաձև խաչ, ձախ ձեռքում՝ դժվար

նշմարվող կլորավուն մի իր (հավանաբար՝ թաս)⁷: Վերին հատվածում մաշված սևաներկ արձանագրությունն է.



Վերծանությունը.

ՅԻՇԱՏԱԿԷ ՊԱՏԿԵՐՄ ՓՈՒՔԸ ԹԱՂՅԻ] ... / ... ԱԿԻՆ և ԻԻԸ ԿՈՂԱԿԻՑ ... / ԹԻ[ԻՆ]
ՌՄԽԲ (1793) ԻՆ

Հանդիպակաց կողմում պատկերված է Ս. Ստեփանոս նախավկյան՝ անմորուս, երկար մազերով երիտասարդի տեսքով, հագին՝ ծաղկապատ սարկավազական զգեստ, ձախ ձեռքին՝ բուրվառ: Վերին հատվածում պահպանվել է սևաներկ արձանագրությունը.



Վերծանությունը.


ՅԻՇԱՏԱԿԷ ՊԱՏԿԵՐՄ ՓՈՒՔԸ ԹԱՂՅԻ. ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՎԱԴԻՆ /
և ԿՈՂԱԿԻՑ ՍԻՐԻՆ : ԹԻ[ԻՆ] ՌՄԽԲ (1793) ԻՆ .:

Մեղրիի Մեծ թաղի Ս. Աստվածածին եկեղեցում (XVII դ.)⁸ ևս առկա են ամենաքիչը երեք շրջանի որմնանկարներ, այս դեպքում՝ 1745, 1790-ական և 1844-

⁷ Թասը Հովհաննես Մկրտչի ընդունված պատկերագրության հիմնական ատրիբուտներից է, որը որպես կանոն պատկերվում է նրա ձախ ձեռքում: Վրան կարող են պատկերվել Հովհաննեսի կտրված գլուխը (ի նշան նրա մահապատժի), մանուկ Հիսուսը կամ գառնուկը:

⁸ Եկեղեցու ճարտարապետության մասին՝ տե՛ս Մ. Հ ա ս ր ա թ յ ա ն. Մյունիքի XVII-XVIII դարերի ճարտարապետական համալիրները, էջ 85-89, ն ու յ ն ի՝ Մեղրու շրջանի հուշարձանները, էջ 10-13, Վ. Հ ա ր ու թ յ ու ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 396:

1848 թվականների: 1790-ական թվականով ենթ թվագրել, Աստվածատուր քահանային ենթ վերագրել ավագ խորանի հարավային կողմում նկարված Միքայել հրեշտակապետի պատկերը՝ շատ նման Միքայելի՝ կշեռքը ձեռքին նախորդ տարբերակներին, ինչպես նաև հյուսիսարևելյան մույթի հարավային երեսի Ս. Գևորգի որմնանկարը, որը, կարելի է ասել, Կարճևանի եկեղեցու համապատասխան որմնանկարի կրկնօրինակն է (նկ. 6): Վերջին դեպքում միակ տարբերությունը Կարճևանի եկեղեցու որմնանկարից կարելի է համարել այն, որ եթե այնտեղ Ս. Գևորգը խոցում էր չորեքթաթ դիրքով կանգնած հրեշին, ապա այստեղ այդ հրեշը ընկած է մեջքի վրա՝ թաթերը վեր թափահարելով: Նկատելի է նաև, որ պատկերը վերանկարված է. ավելացվել են աջ կողմի կարմրագգեստ փոքրիկ մարդկային ֆիգուրը (փրկված արքայադուստրն է), վերին աջ անկյունում ամպերի միջից երևացող Աստծո Աջը, ետնախորքն էլ ներկվել է մոխրականաչավուն գույնով, ինչպես եկեղեցու՝ 1844–1848 թթ. որմնանկարների զգալի մասում: Ստորին հատվածում արձանագրություն է պահպանվել, որի թվականի հատվածը, ցավոք, ներկայում անընթեռնելի է.



Վերձանությունը.

[ՅԻ]ՇԱՏԱԿԷ . ՊԱՏԿԵՐՄ Գ ՄԵՂԸՅԻ ՂԶԼԻ ՈՐԴ[Ի] /
...ԻՐԻ...ԻՆ [Վ] ԻԻՐ ԵՂԲԱ[ՅՐ] ՄԿՐԴՉԻՆ ԹԻ[ԻՆ] ՌՄ...



Նկ. 6. Մեղրիի Մեծ թաղի Ս. Աստվածածին եկեղեցու Միքայել հրեշտակապետի, Ս. Գևորգի և Ս. Մինասի որմնանկարները, 1790-ական թթ. (լուս.՝ 2017 թ.):

Արձանագրությունն ակնհայտորեն գրված է Աստապատցու կողմից: Դա են փաստում թե՛ ձեռագրի նույնությունը, թե՛ արձանագրության «ԹԻ[ԻՆ] ՌՄ» հատվածը. եկեղեցու որմնանկարների հին՝ 1745 թ. շերտի դեպքում թվականը պետք է սկսվեր ՌՃ-ով, իսկ 1844–1848 թթ. որմնանկարներում նշվում է կամ «ԹՎ», կամ «ԹՎՆ»:

Հարկ է հիշատակել նա մեկ որմնանկար՝ եկեղեցու հարավարևելյան մույթի հյուսիսային երեսի Ս. Մինասի պատկերը, որը բավական նման է Ս. Գևորգի պատկերին: Ս. Մինասը պատկերված է ծառու եղող ձին հեծած, ձեռքին՝ ծածանվող կարմիր դրոշ: Վերին հատվածում սևաներկ տառերով «Ս[ՈՒՐ]Բ ՄԻՆԱՍ» գրությունն է: Ձին գույնից բացի մնացյալ բոլոր մանրամասներով խիստ նման է Ս. Գևորգի ձիուն: Միմյանց բավական նման են նաև Ս. Գևորգի ու Ս. Մինասի գրահները: Ինչպես Ս. Գևորգի պատկերի դեպքում, այստեղ նա նկատելի են հետագա միջամտությունների հետքերը, մասնավորապես վերին ձախ անկյունում պատկերված Աստծո Աջը, մոխրականաչավուն ետնախորքը և այլն: Ավելին, այս դեպքում ստորին հատվածում տեսնում ենք արդեն վերանկարողի՝ 1846 թ. սևաներկ արձանագրությունը (ՅԻՇ[Ա]Տ[Ա]ԿԷ ՊԱՏԿԵ[Ր]Ս ՂԶԻԱՅ ՀԱ / ՄԲԱՐՁՈՒՄԻ ՈՐԴ[Ի] ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻՆ ԹՎ[ԻՆ] ՌՄՂԵ), ինչը, սակայն, չի նշանակում, որ որմնանկարը 1846 թ. գործ է⁹: Ամենայն հավանականությամբ, կարող ենք ասել, որ սա նա Աստվածատուր քահանայի գործերից է՝ «յուրացված» 1840-ական թվականների որմնանկարների հեղինակի կողմից:

Ահա այսպիսի պատկեր է ներկայացնում Աստվածատուր Աստապատցու ժառանգության՝ մեզ հայտնի բաժինը: Նրա գործերի ամբողջական պատկերը, անկասկած, վերը նշվածից բավական մեծ է եղել. նկարչի աշխատանքներից պետք է փնտրել առաջին հերթին իր հայրենի Աստապատ քաղաքում (Նախճավան գավառ) և շրջակայքում: Աստապատում, օրինակ, որմնանկարված են եղել Ս. Ստեփանոս (Կարմիր վանք) և Ս. Վարդան եկեղեցիները, որոնք այժմ ոչնչացված են: Ս. Վարդան եկեղեցու որմնանկարները պատկերող լուսանկարներ, ցավոք, չեն պահպանվել¹⁰: Ս. Ստեփանոս եկեղեցուց որոշ լուսանկարներ պահ-

⁹ Նոր շրջանի հայկական որմնանկարներում հանդիպում ենք դեպքերի, երբ նկարիչը, վերանկարելով որևէ որմնանկար, ավելացրել է իր արձանագրությունը: Նմանօրինակ դեպքերից էին նաև, ինչպես տեսանք, Աստվածատուր քահանայի՝ Փոքր թաղի եկեղեցու որմնանկարները:

¹⁰ Բովանդակային մասով հայտնի է միայն, որ չորս առաջաստներին պատկերված են եղել չորս ավետարանիչները (Ե. Լ ա լ ա յ է ա ն. Նախիջեւանի ոստիկանական շրջան կամ Նախճաւան.– «Ազգագրական հանդէս», գիրք XV, Թիֆլիս, 1907, էջ 147, Հ. Ո ս կ է ա ն. Վասպուրական–Վանի վանքերը, Բ մաս, Վիեննա, 1942, էջ 504–505, Ա. Այվազյան. Նախիջեւանի որմնանկարչական արվեստը, Երևան, 1998, էջ 50):

պանվել են, սակայն դրանցով հնարավոր չէ որևէ համեմատություն անել՝ հեղինակին պարզելու համար¹¹: Ըստ Ա. Այվազյանի՝ եկեղեցում եղել են երկու շերտի որմնանկարներ՝ արված Հակոբ ու Հարություն Հովնաթանյանների կողմից XVIII դ. առաջին կեսին և Հակոբ Տեր-Աբրահամյանի կողմից՝ 1859–1860 թթ.: Լուսանկարներում նշմարվող որոշ ծաղկատերևային զարդագոտիներ նման են Մեղրիի Մեծ թաղի Ս. Աստվածածին եկեղեցու որոշ որմնանկարների եզրագոտիներին, սակայն որևէ հիմք չկա ենթադրելու, որ դրանք կարող են Աստապատցու գործերը լինել: Նախիջևանի մյուս եկեղեցիների որմնանկարները պատկերող լուսանկարներից ևս դժվար է որոշակի համեմատականներ անցկացնել: Ուստի առայժմ կարելի է սահմանափակվել վերը նշվածով՝ հույս ունենալով, որ նորանոր նյութերը հնարավորություն կտան առավել ամբողջական ներկայացնել աստապատցի Աստվածատուր քահանայի թողած ժառանգության պատկերը:

Ավետիս Ավետիսյան – “Որմնանկարների վերականգնման գիտահետազոտական կենտրոն” ՄՊԸ-ի արվեստաբան: Գիտական հետաքրքրությունները՝ XVII–XVIII դդ. հայ որմնանկարչություն և հարակից թեմաներ: 3 գիտական հոդվածի հեղինակ է: Avetisyan1918@gmail.com

REFERENCES

- A. Ayvazyan.** Naxijevani vo'rmnankarch'akan arvestə, Ye'rev'an, 1998 (in Armenian).
A. Ayvazyan. Qyot'ahiahay haxc"apakegorc'ut'yan mi karev'or havaqac'o, Ye'rev'an, 2014 (in Armenian).
A. Ter-Markarov. Monastyr' "Karmir-vank".– Sbornik materialov dlja opisanija mestnostej i plemen Kavkaza, vyp. 27, Tiflis, 1900 (in Russian).
H. Vo'skean. Vaspurakan-Vani vanqerə, B mas, Vienna, 1942 (in Armenian).
J. Hall. Dictionary of Subjects and Symbols in Art. New York, 1974.
M. Hasrat'yan. Syuniqi XVII–XVIII dareri c"artarapetakan hamalirnerə, Ye'rev'an, 1973 (in Armenian).
M. Hasrat'yan. Megh'ru sh'rjani hush'ardz'anerə, Ye'rev'an, 1987 (in Armenian).
M. P'ap'azeanc. Hnut'yunq vanoreic. ch'orrord girq. Gogh't'an gavar', Vagh'arsh'apat, 1891 (in Armenian).
V. Harut'yunyan. Haykakan c"artarapetut'yan patmut'yun, Ye'rev'an, 1992 (in Armenian).

¹¹ Եկեղեցու գմբեթին պատկերված են եղել ութ սրբերի, առաջաստներին՝ չորս ավետարանիչների պատկերները: Խորանում, մույթերին և երկայնական որմերին եղել են նաև այլ սրբապատկերներ ու սյուժետային տեսարաններ (Մ. Փ ա փ ա զ ե ա ն ց. Հնութիւնք վանօրէից. չորրորդ գիրք. Գողթան գաւառ, Վաղարշապատ, 1891, էջ 5, Ե. Լ ա լ ա յ ե ա ն. նշվ. աշխ., էջ 152–153, А. Т е р - М а р к а р о в. Монастырь “Кармир-ванк”.– Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып. 27. Тифлис, 1900, с. 57; Ա. Ա յ Վ ա զ յ ա ն. Նախիջևանի որմնանկարչական արվեստը, էջ 42, 48):

Ye' Lalaye'an. Naxijev'ani vo'stikanakan sh'rjan kam Naxc''avan.– «Azgagrakan handes», girq XV, T'iflis, 1907 (in Armenian).

АСТВАЦАТУР АСТАПАТЦИ - НОВОЕ ИМЯ В АРМЯНСКОЙ НАСТЕННОЙ
ЖИВОПИСИ XVIII ВЕКА

АВЕТИС АВETИСЯН

Резюме

Ключевые слова: армянская настенная живопись, Аствацатур Астапатци, Мегри, Карчеван.

Имя художника и священника Аствацатура Астапатци (Астапатский) неизвестно в истории армянский настенной живописи. Его росписи находятся в четырех церквях Сюникской области, в одной из которых – в церкви Св. Богородицы села Карчеван – сохранилось также имя художника, а некоторые росписи трех других (церкви Св. Иоанна Крестителя монастыря Анапастанац, Св. Иоанна Крестителя Малого квартала и Св. Богородицы Большого квартала г. Мегри) можно уверенно приписать ему. Большая часть этих росписей датирована 1793 годом.

В карчеванской церкви сохранились два изображения архангела Михаила по бокам от главного алтаря, а в самом алтаре – изображения Св. Георга, Саркиса и некоторые растительные орнаменты. В монастыре Анапастанац из работ Астапатци ныне сохранились только два изображения архангела Михаила, опять по бокам от главного алтаря. В церкви Св. Иоанна Крестителя Малого квартала г. Мегри Астапатци сделал четыре росписи: это изображения апостолов Петра и Павла по бокам от главного алтаря, а в самом алтаре изображения Св. Иоанна Крестителя и Стефана первомученика. Наконец, в церкви Св. Богородицы Большого квартала г. Мегри работы Астапатци представлены в изображениях архангела Михаила в главном алтаре, Св. Георга на северо-восточном пилоне и Св. Минаса на южно-восточном пилоне. Две последние росписи были перерисованы позднее, в 1840-х годах.

Пока относительно наследия Аствацатура Астапатци можно говорить о вышеупомянутых росписях. В дальнейшем не исключена находка других росписей или материалов, что позволит в более широком аспекте представить деятельность художника. *Аветис Аветисян – аспирант отдела изобразительного искусства Института искусств НАН РА, искусствовед ООО «Научно-исследовательский центр реставрации росписей». Научные интересы: армянская настенная живопись XVII–XVIII вв. и примыкающие темы Автор 3 научных статей. Avetisyan1918@gmail.com*

ASTVATSATUR ASTAPATSI - A NEW NAME IN 18TH CENTURY
ARMENIAN MURAL PAINTING

AVETIS AVETISYAN

S u m m a r y

Key words: Armenian mural painting, Astvatsatur Astapatsi, Meghri, Karchevan.

The name of the artist and clergyman Astvatsatur Astapatsi (of Astapat) is unknown in the history of Armenian mural painting. His murals can be found in four churches in Syunik province. One of the murals in the Church of Holy Mother in the village of Karchevan has the artist's name on it, and several murals in other churches (St. John the Baptist Church in Anapastanats Monastery, St. John the Baptist Church in the Small quarter and Holy Mother of God Church in the Big quarter of Meghri) can confidently be attributed to him. Most of these murals are dated 1793.

In Karchevan church, there are two images of Archangel Michael preserved on either side of the main altar, and images of St. George and St. Sarkis and some floral ornaments on the altar itself. In Anapastanats monastery only two of Astapatsi's works have survived – two images of Archangel Michael, also on the sides of the main altar. In St. John the Baptist church in the Small quarter of Meghri, Astapatsi painted four murals – the images of apostles Peter and Paul on the sides of the main altar and St. John the Baptist and Stephen the First Martyr on the altar itself. Finally, Holy Mother of God Church in the Big quarter of Meghri has an image of Archangel Michael on the main altar, St. George on the north-east pillar and St. Minas (Menas) on the south-east pillar. The last two murals were repainted later, in the 1840s.

So far, only the above mentioned murals can be considered a legacy of Astapatsi, but in the future it cannot be excluded the possible discovery of other murals or materials which will enable presenting the activity of the artist in a broader aspect.

Avetis Avetisyan – PhD student at the Department of the Applied Art at the NAS RA Institute of Art, art historian at the “Research Center for Restoration of Mural Paintings” Ltd. Scientific interests: the XVII–XVIII cc. Armenian mural painting and related topics. Author of 3 scientific articles. Avetisyan1918@gmail.com.

II

ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ԶԵՆՔԻ ԵՎ ԶԻՆԱՄԹԵՐՔԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
(1918–1920 թթ.)*

ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ, ՌՈՍՏՈՄ ՍԱՐԳՍՅԱՆ

Բանալի բառեր՝ Հայաստանի Հանրապետություն, Ներքին գործերի նախարարություն, Արամ Մանուկյան, միլիցիա, զենքի և զինամթերքի անօրինական շրջանառություն, Արշավիր Մելիքյան, Սիրական Տիգրանյան, Աբրահամ Գյուլիսանդանյան, Նախիջևան, Ռուբեն Պապիկյան, Երևան, Նոր Բայազետ, Արշավիր Շահխաթունի, Գարեգին Նժդեհ:

1917 թ. Փետրվարյան հեղափոխությունը և իշխանության անցած Ժամանակավոր կառավարությունն արմատական փոփոխություններ մտցրեց Ռուսաստանում, որոնք հիմնավորապես կազմաքանդեցին նախկին պետական համակարգը: Նորաթուխ իշխանավորները հաշվի չառան Ռուսաստանի բազմակացությամբ, բազմակրոն և բազմազգային իրավիճակը, ինչպես նաև՝ տարբեր հետախուզությունների պատերազմի նախօրյակին ու ընթացքում ծավալած քայքայիչ գործունեությունը: Ընդունված «Ժողովրդավարական» օրենքները նպաստեցին պետության աստիճանական կործանմանը, որն ավելի սրությամբ դրսևորվեց Անդրկովկասում:

Իրավիճակն ավելի լարվեց 1918 թ. հունիսի 4-ի Բաթումի պայմանագրից հետո, երբ Հայաստանի Հանրապետությունը ստիպված էր ընդունել Օսմանյան կայսրության կողմից առաջադրված հաշտության ծանր պայմանները: Նորանկախ հանրապետությունը գտնվում էր սոցիալ-տնտեսական ծանր դրության մեջ: Հանրապետությունը լի էր անտուն գաղթականներով, որոնք գոյության տարրական պայմաններ էին փնտրում: ՀՀ - վարչապետ Հովհ. Քաջազնունու բնորոշմամբ՝ Հայաստանն այդ ժամանակ իրենից ներկայացնում էր «անձև քառս և ավերակների կույտ»¹:

* Ընդունվել է տպագրության 21. VI. 2019 թ.: Գրախոսվել է 02 VII. 2019 թ.:

¹ Հայոց պատմություն: Խմբ. խորհուրդ՝ Վ. Բարխուդարյան և ուրիշ.: Հ. 3, Նոր ժամանակաշրջան (XVIII դարի երկրորդ կես – 1918 թ.): Գիրք II (1901–1918 թթ., հայ գաղթավայրերը, պարբերական մամուլը և մշակույթը XIX դ. և XX դ. սկզբին): Խմբագրակազմ՝ Ա. Մելքոնյան և ուրիշ., Երևան, 2015, էջ 29:

Ձենքի և ռազմամթերքի ապօրինի շրջանառությունը պետության քրեածին իրավիճակն ապակայունացնող և հասարակական անվտանգությունը խաթարող հիմնական գործոններից է, որի հետևանքով լայն տարածում են ստանում սպանությունները, կողոպուտը, ինչպես նաև՝ քաղաքական հաշվեհարդարները: Այս դեպքերն էլ իրենց հերթին օգտագործվում են հանրապետության թշնամիների կողմից հակապետական սին քարոզություն տարածելու և հայտարարելու, որ հայ ժողովուրդն ի գորու չէ պետականություն ունենալ ու պահպանել բնակչության անձեռնմխելիությունը²: Դրանք պատճառ են դառնում, որպեսզի բնակչությունն ամեն գնով աշխատեր զենք հայթայթել³:

Բնակչությունը չէր ընդունում, որ անօրինական զենք պահելն ու կրելը ոչ միայն քրեորեն հետապնդելի է, այլև՝ վտանգավոր: Հասարակության մի մասը չէր ըմբռնում, որ զենքը վտանգավոր է առաջին հերթին պահողի ու կրողի, նրա հարազատների՝ հատկապես երեխաների համար: Թաքցված հրազենը մի օր անպայման կրակելու է⁴, պահված նոնակը մի օր պայթելու է ձեռքերում, և անուղղելի ողբերգությունից հետո արդեն ուշ կլինի մեղավոր ու անմեղ փնտրելը, իսկ մեղքը քավելու բոլոր փորձերն՝ անիմաստ: Ողբերգության այդպիսի օրինակները, ցավոք, քիչ չեն, և անօրինական զենք պահելու ոմանց համառությունը մեծացնում է դրանց կրկնության հավանականությունը: Ձենքը կիրառվում էր նաև կենցաղային վեճերի ժամանակ: Այսպես, 1918 թ. օգոստոսի 18-ին Երևանի քաղաքային այգում սուրմալեցիների և երևանցիների վիճաբանության ժամանակ զենք է գործադրվում, որի հետևանքով զոհվում են երկու պատահական քաղաքացիներ ու մեկ երեխա⁵: Հարկ է ընդգծել, որ այդ տարիներին հասարակության կյանքում զենքը հատուկ դեր ուներ. այն նաև քաղաքական վեճերի վերջին փաստարկն էր:

² Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 199, ց. 1, գ. 16, թ. 40:

³ Հայ ազգային գործիչներից Ա-Դոն (Հ. Տեր-Մարտիրոսյան) գրում է հետևյալը. «... զենքը մի չարիք է, մարդկության մեծագույն չարիքներից է պատերազմը, որ գալիս է միջազգային խնդիրները հրով ու սրով լուծելու, բայց քանի դեռ զենքը մնում է իբր այդպիսին, քանի դեռ ցեղերի ու ժողովուրդների հարաբերությունները սահմանավորվում են զենքի ուժով, կամ թե ակամա դառնում է զենքի ջատագով» [Ա-Դո. Հայության երկունքը, Երևան, 2019, էջ 132 (ձեռագրի իրավունքով, հրատարակության պատրաստել են Վ. Ղազախեցյանը, Ռ. Գասպարյանը, Ռ. Սահակյանը, Հ. Սուքիասյանը)]:

⁴ Ձենքի հետ անզույշ վարվելու հետևանքով տեղի ունեցած դեպքերի մասին բավական տեղեկություններ է հաղորդում ժամանակի մամուլը. տե՛ս «Չանգ» (Երևան), 2. X. 1918, 9. X. 1918:

⁵ Նույն տեղում, 17. VIII. 1918: Հատվածականության հիմնախնդրի մասին ավելի մանրամասն տե՛ս Գ. Պ. Հայրապետյան. Հատվածականության հաղթահարման հիմնախնդիրը Հայաստանի Հանրապետությունում. – «ՎԷՄ» (Երևան), 2018, թիվ 4, էջ 164–209:

Պետությունը ձգտում էր կասեցնել օրեցօր ահագնացող զինված հանցագործությունը, որն արդյունք էր հրազենի ու զինամթերքի ապօրինի շրջանառության: Մակայն հանրապետությունում ստեղծված բարդ իրավիճակը, տեղեկատվության գրեթե բացակայությունը, հնարավորություն էր տալիս ներքին և արտաքին թշնամուն, ինչպես նաև քրեական տարրերին, ապատեղեկատվություն տարածելով, գավթել զենք ու զինամթերք: Այսպես, 1918 թ. հուլիսի 1-ին Ներքին Ախտայում (այժմ՝ Հրազդան) անհայտ անձը կամ անձինք կեղծ լուրեր են տարածում, թե իբր թուրքերը հարձակման են անցել: Դա բավական է լինում, որպեսզի բնակավայրում գտնվող 28 զինվորներն ու բնակիչները ներխուժեն զինապահեստ, որտեղից հափշտակում են 100 ֆրանսիական «Լեբել» տեսակի հրացան՝ 38 հազար փամփուշտով և 70 ռուսական «Մոսին» տեսակի հրացան՝ 14 հազար փամփուշտով: Հետաքննությամբ նաև պարզվում է, որ զինապահեստում, բացի վերը նշված զենքերից, ըստ առկա «հաշվեցուցակի», չկա ևս 20 հրացան և 20 հազար փամփուշտ⁶: Օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ հնարավոր է լինում գողացված 170 հրացանից վերադարձնել 70-ը: Հետաքննությամբ նաև պարզվում է, որ կողոպուտին մասնակցել է տեղի գաղթականությունը, իսկ զինվորականներին նույնիսկ ստույգ հայտնի չի եղել, թե զինապահեստում որքան հրացան է եղել⁷:

Նշված դեպքը վկայում է, թե որքան թույլ է եղել տեղական իշխանությունը, իսկ զինվորական հրամանատարությունն ընդհանրապես չի հոգացել զինանոցի պահպանության հարցերով: Հետաքննությունը նույնիսկ չի հետաքրքրվել, թե ովքեր են եղել կեղծ լուրեր տարածողները և զինանոցի վրա հարձակում նախաձեռնողները: Կարելի է ենթադրել, որ զինանոցի վրա հարձակումը եղել է վաղօրոք ծրագրված, քանի որ մասնակցել են ոչ միայն շարքային զինվորականներ, այլև՝ քաղաքացիական անձիք: Դրա վկայությունը հափշտակած զենքի և զինամթերքի քանակն է:

Տեղական իշխանությունները՝ հատկապես իրավապահ համակարգը, նոր էին կազմակերպվում և չունեին համապատասխան օպերատիվ-հետախուզական աշխատանքի փորձ ու հմտություն, որի հետևանքով ստիպված էին լինում ծառայության ընթացքում հաղթահարել բազմաթիվ դժվարություններ, որոնց թվում էին հանրապետության տարբեր գավառներում ու քաղաքներում գործող զինված և իրավիճակն ապակայունացնող ավազակախմբերը: Ս. Վրացյանն իր հուշերում վկայում է. «... սովի և համաճարակի հետ, երկրում խախտուած էր եւ ապահովութիւնը: Դասալիք զինուորներ, ապրուստի միջոց չունեցող գաղթականներ ու տեղացիներ, խմբերով եւ անհատ-անհատ, յարձակում էին ճամբորդների վրա, թալանում տները, խանգարում հանրային անդորրութիւնը: Հասարակական չարիք էր դարձել, այսպէս կոչուած «մաուզերիզմը» – մաուզերով զինուած

⁶ Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրությունները: 1918–1920 թթ: Գլխավոր խմբագիր և կազմող՝ Ա. Վիրաբյան, Երևան, 2010, էջ 98:

⁷ Նույն տեղում:

մարդիկ շահատակություններ էին անում նոյնիսկ մայրաքաղաքի փողոցներում, եւ խաղաղ բնակչությունը տառապում էր նրանց ձեռքին»⁸:

Այս հիմնախնդրի լուծումը պետք է կատարեր Ներքին գործերի նախարարությունը, որը հանրապետության ամենախոշորն էր իր գործառույթներով ու նրա ենթակայության տակ գտնվում էին «ոչ միայն վարչա-նստիկանական իրավապահ համակարգը, այլև հաղորդակցության, պարենավորման, խնամատարության, ներգաղթի, առողջապահության, կրթության, տեղական ինքնավարությունների, փոստ-հեռագրական և այլ ոլորտները: ... Հետագայում նախարարության տրոհումից առաջացան մի շարք նոր նախարարություններ»⁹:

Հիմնահարցի լուծմանն էր ուղղված Ներքին գործերի (ՆԳ) նախարար Արամ Մանուկյանի¹⁰ 1918 թ. օգոստոսի 23-ին ՀՀ խորհրդարանում զինաթափման վերաբերյալ առաջարկած օրինագիծը: Նա իր ելույթում նշում է, որ նման նախաձեռնությունը Վրաստանում դժվարությունների է հանդիպել, սակայն Հայաստանում սոցիալական և քաղաքական այդպիսի հիմնախնդիրներ չկան¹¹: Ա. Մանուկյանն օրենսդրական նախաձեռնությունը հիմնավորում է՝ վկայակոչելով մի շարք դեպքեր, որոնք հստակ ցուցադրում են՝ միշտ չէ, որ զենքի առկայությունը նպաստում է բնակչության ինքնապաշտպանությանը կամ էլ ավագակներին հակադարձելուն: Վկայակոչում է Ախտայում գառան համար տեղի ունեցած երեք ընտանիքի սպանությունը, երբ ամբոխին հանդարտեցնելու համար ստիպված էին ռազմաճակատից բերել մեկ զուամարտակ: Ա. Մանուկյանի համոզմամբ՝ զինված ամբոխն իրենից ռազմական ուժ չի ներկայացնում: Որպես օրինակ վկայակոչում է երեք շաբաթ առաջ Նոր Բայազետի (այժմ՝ Գեղարքունիք) հայկական 10

⁸ Ս. Վրացեան. Հայաստանի Հանրապետությունը: Երկրորդ տպագրություն, Բէրլին, 1958, էջ 192:

⁹ Հայոց պատմություն: Խմբ. խորհուրդ՝ Վ. Բարխուդարյան և ուրիշ.: Զ. 4: Գիրք I: Նորագույն ժամանակաշրջան (1918–1945 թթ.): Խմբագրակազմ՝ Վ. Ղազարխեցյան և ուրիշ., Երևան, 2010, էջ 28, Ռ. Հ. Սարգսյան, Ռ. Օ. Սահակյան. Հայոց ռուսիկանության պատմությունից, Մաս I, Երևան, 2013, էջ 92: Պատմաբաններից ոմանք հայոց պետականության կայացման գրավականներից մեկը համարում են հայոց բանակի և, հատկապես, հատուկ ծառայությունների կայացումը, առանց որոնց անհնարին է պատկերացնել անկախ պետականությունը: Կարծում ենք, որ միայն վերը թվարկվածներով չի կարելի հստակ պատասխանել, թե պետականությունն ամբողջապես ձևավորված է ու կայացած: Մոռացության են մատնվում, որ արտաքին անվտանգության հիմնահարցը սերտորեն կապված է ներքինի հետ, որն առաջին հերթին պարտավոր էր ապահովել իրավապահ մարմինը՝ միլիցիան: Այս կառույցի ոչ ճիշտ ղեկավարման և կազմակերպման դեպքում որևէ նշանակություն չեն ունենա և՛ բանակը, և՛ հատուկ ծառայությունները:

¹⁰ Ավելի մանրամասն տե՛ս Ա. Ասրյան. Արամ Մանուկյան. ազգային-պետական գործիչը.ՊԲՀ, 2019, № 2, էջ 76–91, նույնի՝ Արամ Մանուկյան. կյանքը և գործը (ազատագրական շարժման և անկախ պետականության վերականգնման գործում), Երևան, 2009:

¹¹ Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրությունները, էջ 24:

գյուղերի վրա 300-ից ավելի քրդերի հարձակումը: Ելուզակները, չնայած զավառում կար 8 հազար զինված մարդ, կարողացան այդ գյուղերի ոչխարներն առնանգել: Ղամարլուի (այժմ՝ Արտաշատ) շրջանում կար զենք ունեցող 4 հազար հոգի, սակայն, փոխանակ կազմակերպվելու և հակահարված տալու մահմեդական ավազակներին, նախընտրում են Երևանից օգնություն խնդրել¹²:

Նախարարի ունեցած օպերատիվ-հետախուզական տեղեկությունների համաձայն՝ բնակչության մոտ առկա է 60-ից մինչև 150 հազար միավոր մարտական հրազեն¹³: Եվ դա այն դեպքում, երբ բանակը չուներ անհրաժեշտ զենք ու զինամթերք և նրա կարիքները բավարարելու համար պետք էին հսկայական գումարներ, որոնք պետությունը չունեի¹⁴: Մարդիկ մեկ միավոր հրացանի համար վճարում էին 1500-ից 2000¹⁵ ռուբլի, որոնց մեծ մասը գողացված էր¹⁶:

¹² Նույն տեղում: Անհասկանալի է, թե մի ժողովուրդ, որը 1918 թ. մայիսին արժանի հակահարված տվեց թշնամուն, մարտական գործողություններն ավարտելուց հետո իր մեջ ուժ չգտավ ինքնակազմակերպվել և պաշտպանել սեփական բնակավայրը: Տվյալ դեպքում խոսքը վերաբերվում է Ղամարլուի տեղական նորաստեղծ իշխանությանը, որը, տեղեկանալով Բաթումի պայմանագրի մասին, հունիսի 8-ին հեռագրեց զենքերալ Մ. Միլիկյանին. «Ղամարլուի շրջանի ժողովուրդը պատրաստ է թափելու իր արյան վերջին կաթիլը և պաշտպանել հայրենիքն իր ունեցած զենքով, փամփուշտով, հազուստով ու հացով» (տե՛ս Ա - Դ ռ. Իմ հիշողությունները: Առաջաբանը և ծանոթագրությունները՝ Ռուբեն Գասպարյանի և Ռուբեն Մահակյանի, Երևան, 2015, էջ 409): Տեղի ազգային խորհուրդը պարտավորվեց կառավարությանը տրամադրել 3.000 զինվոր, որի առաջին գումարտակը Երևան եկավ հունիսի 9-ին: Չորքը շարժվեց Ազգային խորհրդի շենքի առջև: Արամը դիմեց ներկաներին ճառով. «Հայը շարժվում է այն ժամանակ, երբ դանակը հասնում է ոսկորին, բայց լավ է ուշ, քան երբեք» (նույն տեղում, էջ 411):

¹³ Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրությունները, էջ 23: Նշենք՝ 1918 թ. օգոստոսի 6-ին Նոր Բայազետի զավառից խնդրում են, որպեսզի միլիցիայի համար ուղարկեն 100 հատ երեք զանգի «Մոսին» տեսակի հրացան՝ 20 հազար փամփուշտներով (տե՛ս Արամ Մանուկյան: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Գլխավոր խմբագիր՝ Ա. Վիրաբյան, Երևան, 2009, էջ 329):

¹⁴ Ջենքի ու զինամթերքի պակասը զգացվում է 1918 թ. դեկտեմբերին՝ հայ-վրացական պատերազմի ժամանակ, երբ կոչ է արվում հանձնել ֆրանսիական «Լեբել» ու թուրքական «Մաուզեր» տեսակի հրացան ու ռուսական երեքզանգի հրացանի փամփուշտներ (տե՛ս «Չանգ», 25. XII. 1918):

¹⁵ Արդեն 1919 թ. վերջին գերմանական «Մաուզեր» ատրճանակը վաճառվում էր 8000 ռուբլով (տե՛ս ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 2, թ. 10):

¹⁶ Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրությունները, էջ 24: 1919 թ. փետրվարին միլիցիոնների ամսական աշխատավարձը 300 ռուբլի էր (տե՛ս նույն տեղում, էջ 213): Այդքան էր նաև շարքային զինվորի ռոճիկը, նաև տրվում էր ուտելիք, հագուստ և կոշիկ [տե՛ս «Աշխատանք» (Երևան), 8. V. 1919]:

Ա. Մանուկյանի կարծիքով՝ «Ժողովրդի զինաթափության հետ միաժամանակ պետք է երկրում կազմվի միլիցիայի ուժեղ կազմ և սահմանները լավ պաշտպանվեն զորքով արտաքին վտանգի դեմ»¹⁷: Նա առաջարկում է անօրինական զենք ունեցողներին ենթարկել կամ 3 ամսվա բանտարկության, կամ՝ 3.000 ռուբլի տուգանքի՝ միաժամանակ նշելով, որ առգրավման ենթակա չեն որսորդական հրացաններն ու սառը զենքը¹⁸:

Սոցիալ-դեմոկրատական (բոլշևիկյան) կուսակցության անդամ և պատգամավոր Արշավիր Մելիքյանն առարկեց օրինագծի դեմ՝ նշելով. «Ամեն քաղաքացի իրավունք ունի զենք ունենալ և պաշտպանել իր հեղափոխական իրավունքները»¹⁹, ուստի առաջարկում է չշտապել օրինագծի ընդունման խնդրում, և հավանություն տալու դեպքում թույլատրել զենքը պահել միայն տանը՝ որպես «անկապտելի իրավունք»²⁰: Ի վերջո, 16 ձայնով ընդդեմ 12-ի անցնում է Ա. Մանուկյանի զինաթափման նախագիծը և հանձնարարվում է օրենսդրական հանձնաժողովին, որ երկու օրվա ընթացքում եզրակացություն ներկայացնի²¹:

1918 թ. օգոստոսի 27-ին տեղի ունեցած խորհրդարանի 10-րդ նիստում պատգամավոր Սիրական Տիգրանյանը (ՀՅԴ) զեկուցում է զինաթափության օրինագծի մասին և առաջարկում է այն ընթերցել կետ առ կետ ու քվեարկել: Դրա դեմ արտահայտվում են սոցիալ-դեմոկրատ պատգամավորներ Հայկ Ազատյանը և Թադևոս Ավդալբեկյանը: Վերջինս հանդես է գալիս ընդարձակ ելույթով և անհիմն է համարում ՆԳ նախարարի այն պնդումը, թե մեծաքանակ զենքի առկայությունը երկրում անհիշխանության պատճառներից մեկն է: Նա օրինակ է բերում Պարսկաստանը, որտեղ բնակչությունը զինված է և այնտեղ օրինակելի կարգ ու կանոն է տիրում: Պատգամավորը վկայակոչում է նաև քանակը, որտեղ մարդիկ նույնպես զինված են և կարգապահ: Թ. Ավդալբեկյանի համոզմամբ՝ ժողովուրդը զինված է, որովհետև վստահություն չունի կառավարության նկատմամբ, քանի որ գավառներում տեղի են ունենում զեղծումներ, ուստի առաջարկում է կարգավորել դատախարակական համակարգը. «...ուժեղ միլիցիա կազմակերպել ... և հետո միայն անցնել զինաթափման խնդրին: Իսկ մինչ այդ ժողովուրդը պետք է զինված

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Վ. Հ. Վիրաբյան. Հայաստանի Հանրապետության հետախուզությունը և բանակը 1918–1920 թթ., Երևան, 2009, էջ 198: Նշենք՝ 1918 թ. դեկտեմբերի 13-ին խորհրդարան օրենքի նախագիծ առաջարկվեց, որի համաձայն բռնագրավման ենթակա էին նաև սառը զենքերը (տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրությունները, էջ 127): 1919 թ. նոյեմբերին տուգանքը հասցվեց 10 հազար ռուբլու [տե՛ս «Սոցիալիստ Յեղափոխական» (Երևան), 23. XI. 1919]:

¹⁹ Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրությունները, էջ 24:

²⁰ Նույն տեղում:

²¹ Նույն տեղում:

մնա²²: Պատգամավորի համոզմամբ՝ զինված ժողովուրդն իր հերոսությունը ցույց տվեց 1918 թ. գարնանը Նոր Բայազետում, Սուրմալուում և Սարդարապատում:

Ինքնին հասկանալի է, որ Թ. Ավդալբեգյանի վերը նշված օրինակն այնքան էլ չի արտացոլում իրականությունը: Մայիսյան հերոսամարտերի ժամանակ թուրքական զինուժի դեմ մարտեր մղեց նաև աշխարհագորքը, սակայն հիմնական հարվածը հասցրեց նոր կազմավորվող հայկական բանակն իր հրամանատարների հետ: Կարծում ենք, որ չի կարելի մի շարք դեպքերում տեղական նշանակություն ունեցող մարտերով՝ Նոր Բայազետի և Սուրմալուի, արդարացնել բնակչության զինված լինելու անհրաժեշտությունը: Կարծում ենք, լուծման եղանակներից մեկը կարող էր լինել սահմանամերձ գավառների բնակչության զենքի հաշվառումը, նրանցից տեղական ինքնապաշտպանական ուժերի կազմակերպումը, որն արվեց ավելի ուշ²³:

Խորհրդարանում Հայ ժողովրդական կուսակցությունը (ՀԺԿ) ներկայացնող Ստ. Մալխասյանը հայտարարում է, որ իր կուսակցությունը կողմ է զինաթափման օրինագծին, սակայն ունի մի շարք առարկություններ: Նա նաև ասում է, որ տեղերում իշխանության վատ կազմակերպվածության դեպքում է, որ բնակչությունը բնագործ են ցանկանում է զինվել ինքնապաշտպանության համար: Դա, սակայն, նկատելի է ոչ միայն Հայաստանում, այլև ողջ Կովկասում: Նա միաժամանակ նշում է, որ Վրաստանում ու Ադրբեջանում իշխանություններին հիմնականում հաջողվել է հավաքել բնակչության մոտ գտնվող զենքը: Պատգամավորը տեղեկացնում է, որ իրենց կուսակցությունը սկզբունքորեն կողմ է զինաթափման օրենքին, սակայն ՀԺԿ-ին անհանգստացնում է հետևյալ խնդիրը՝ զենքերը կհանձնի միայն “... խաղաղ ազգաբնակչությունը, իսկ ոճրագործ տարրը ամեն կերպ կաշխատի թաքցնել, որով և ավելի վնաս կհասնի խաղաղ բնակիչներին ... , որ փոքր զինաթափումը հետին մտքով կհասկանան, ... սահմանազուլխներում աստիճանաբար պետք է գրավվեն զենքերը, ի նկատի ունենալով, որ այնտեղ ավելի վտանգավոր է”²⁴:

ՀԺԿ-ն ներկայացնող պատգամավոր Գարեգին Ենգիբարյանն էլ առարկում է սոցիալ-դեմոկրատներին ու իր զարմանքը հայտնում, որ Ա. Մելիքյանը, լինելով սոցիալիստ,

²² Նույն տեղում, էջ 25:

²³ 1918 թ. դեկտեմբերի 6-ի խորհրդարանի 42-րդ նիստում զինվորական նախարար, գեներալ Հովհ. Հախվերդյանին տրամադրվում է 25.406 ռուբլի՝ զինվորական միլիցիա՝ աշխարհագորք, կազմակերպելու համար (տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրությունները, էջ 114): 1918 թ. դեկտեմբերի 14-ին ՆԳ նախարար Ա. Մանուկյանի հրամանով թույլատրվում է Դիլիջանի գավառի (այժմ՝ Լոռու մարզ) Միխայելովսկյան ռուսական գյուղական համայնքին ունենալ 10–15 մարտական հրացան՝ բացառությամբ “Լեբել” և “Մոսին” տեսակների (տե՛ս Արամ Մանուկյան: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 403):

²⁴ Նույն տեղում, էջ 26:

“այս խնդրում կանգնած է մասնավոր սեփականության պաշտպանության տեսակետի վրա, այն էլ զենքի հարցում”²⁵:

Խորհրդարանական քննարկումների վերջում էլույթ է ունենում Ա. Մանուկյանը: Նա հակադարձում է սոցիալ-դեմոկրատ պատգամավորներին՝ մեկ առ մեկ հերքելով նրանց “ծանրակշիռ հիմնավորումները”: Նախարարը կրկին արձանագրում է, որ բնակչության զինաթափումն անհրաժեշտություն է նշելով. “Խաղաղ, ավազակային հակումներ չունեցող ժողովրդի զինվելը չարիք չէ, բայց բարիք էլ չէ, որովհետև միևնույնն է՝ նա չի կարող պաշտպանվել ավազակներից: Օրինագիծը խորհրդին ներկայացնելով մենք տարված ենք երկրում իշխանություն ստեղծելու, անարխիան ոչնչացնելու և ավազակների դեմ կռվելու բուռն ցանկությամբ”²⁶: Խորհրդարանի նախագահ Ավետիք Սահակյանի առաջարկությամբ օրինագիծը հողված առ հողված քննարկելուց հետո այն դրվում է քվեարկության. 15 ձայնով 7-ի դեմ անցնում է կառավարության առաջարկը²⁷:

1918 թ. օգոստոսի 29-ին²⁸ խորհրդարանը կրկին քննարկում է զինաթափման օրինագիծը: Սոցիալիստ-հեղափոխական (էսէռական) խմբակցության անդամ Տիգրան Մուշեղյանը տեղեկացնում է, որ իրենք ցանկանում են որոշ ուղղումներ կատարելուց հետո միայն ընդունել օրենքի նախագիծը: Ս. Տիգրանյանը, սակայն, ճիշտ չի համարում էսէռական խմբակցության առաջարկը, քանի որ դրանք կարելի էր կատարել նախորդ նիստի ժամանակ և առաջարկում է օրինագիծը հանձնել խմբագրական հանձնաժողովին, “որտեղ թերևս հնարավոր լինի որոշ ուղղումներ մտցնել”²⁹: Ի վերջո, նույն օրը խորհրդարանն ընդունում է ՆԳ նախարարի առաջարկած օրինագիծը³⁰: Միաժամանակ թույլատրվում է թշնամու կամ ավազակների կողմից հարձակման վտանգի ենթակա բնակավայրերում թողնել զենքի ու զինամթերքի մի մասը՝ համապատասխան պաշտոնյայի հսկողության տակ³¹:

1918 թ. սեպտեմբերի 1-ին կառավարական պաշտոնաթերթը հրատարակում է զենեքալ Հովհ. Հախվերդյանի՝ օգոստոսի 21-ի թիվ 1 հրամանը, որտեղ նա իր վրոդովմունքն է հայտնում Երևանում, հատկապես գիշերները, տեղի ունեցող անկանոն ու հաճախա-

²⁵ Նույն տեղում:

²⁶ Նույն տեղում, էջ 26–27:

²⁷ Նույն տեղում, էջ 28:

²⁸ Մասնաւոր սեփականութիւն կազմող զենքերի և զինամթերքների պետականացման մասին Օրէնք № 6.– “Կառավարութեան Լրաբեր” (Երևան), 6. IX. 1918, էջ 2: Նույն օրը, երբ ընթանում էին զինաթափման մասին խորհրդարանական լսումները, Նոր Բայազետում իսկական մարտ էր ընթանում միլիցիայի և տեղացիների միջև (տե՛ս Արամ Մանուկյան: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 341):

²⁹ Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրությունները, էջ 28:

³⁰ Պաշտօնական մաս. Օրէնք № 6.– “Կառավարութեան Լրաբեր”, 6. IX. 1918, էջ 2:

³¹ Նույն տեղում:

կի հրաձգության վերաբերյալ: Նա հրամայում է քաղաքի պարետին և միլիցիայի պետին տեղեկացնել քաղաքացիներին, որ նման գործողություններն անթույլատրելի են և քրեորեն պատժելի: Նա զգուշացնում է, որ նման դեպքեր գրանցվելու դեպքում զենքն անմիջապես կբռնագրավվի: Չենք՝ հրացան և ատրճանակ, կրելու իրավունք ունեն զինվորական նախարարության ու միլիցիայի կողմից համապատասխան թույլտվություն ունեցողները³²:

Վերը նշված հրամանի առանձնահատկությունը հետևյալն է. զինվորական նախարարի կարգադրությունից կարելի է եզրակացնել ոչ միայն, թե ինչպիսի ահռելի չափերի են հասել անօրինական զենքի և զինամթերքի շրջանառությունը, այլև դրանց անհարկի կիրառումը, որ նախարարը անհետաձգելի է համարել անդրադառնալ անկանոն հրաձգությանը: Հարց է ծագում. միթե՞ զինվորական գերատեսչությունը չունեի այլ անհետաձգելի խնդիրներ կամ գործեր, որոնք կարող էին առաջնահերթ լինել:

Անկախ ամեն ինչից, պատճառաբանություններից ու նպատակներից, նման իրավիճակը վկայում էր այն մասին, որ նորանկախ հանրապետության ղեկավարությունը դեռևս ի գործու չէր իր հսկողության տակ պահել երկիրը, առավել ևս, երբ նման անկարգություն տիրում էր մայրաքաղաքում, ուստի կարելի է ենթադրել՝ գավառներում իրավիճակն ավելի անտանելի էր:

Ապօրինի հրազենն արգելելու համար իշխանությունները քայլեր էին ձեռնարկում. Երևանում ստեղծվում է զենքեր գրավող հատուկ հանձնախումբ՝ կապիտան Պոպունցի նախագահությամբ³³: Նրա կողմից հրատարակված հրամանում ասված էր. «Իւրաքանչիւր քաղաքացի առանց ազգի և կրօնի խտրութեան, պարտաւոր է իր մօտ գտնուած բոլոր հրազենները - բացի անմագազին (ոչ պահունակավոր - Ռ. Ս., Ռ. Ս.) և որսորդական հրազեններից - բերել Դոկտօրսկի փողոց - 66 և յանձնել Յանձնախումբին, անախորժ բարդութիւններից խուսափելու համար: ... Կամաւոր յանձնումի վերջին օրը լրանում է կիրակի, Սեպտեմբերի 15-ին, որից յետոյ՝ յանձնողները կենթարկուեն օրէնքով նախորոշուած պատասխանատութեան, այն է՝ 3 ամիս բանտարկութեան, կամ 3000 ռուբլի տուգանքի»³⁴:

ՀՀ-ի տարածքում գործող ավագակախմբերը շարունակում էին իրենց անօրինական գործողությունները: Կարծում ենք, որ նման դեպքերում անհրաժեշտ էր միլիցիայի և բանակային զորամասերի համատեղ գործողություններ, որոնք միասնական ուժերով կկարողանային հայտնաբերել ու բռնագրավել ապօրինի զենքն ու զինամթերքը: Յավոք, Բաթումի պայմանագրից հետո հայոց զինուժը խիստ կրճատվել էր: Բանակը հարկադրված էր սուղ պայմաններում իրականացնել ոչ միայն սահմանների պաշտպանությունը,

³² Զինվորական Մինիստրի կարգադրութիւնները, - 1.- «Կառավարութեան Լրաբեր», 1. IX. 1918, էջ 1:

³³ ԱԶԴ.- «Կառավարութեան Լրաբեր».- 17. IX. 1918, էջ 1:

³⁴ Նույն տեղում:

այլև պայքարել հանրապետության ներսում գործող մահմեդական բազմաթիվ զինված ավազակախմբերի, անկանոն զինվորական ստորաբաժանումների և ՀՀ-ն իշխանությունը չճանաչող մահմեդական բնակավայրերի դեմ, ուստի սկզբնապես զենքի ու զինամթերքի բռնագրավման հիմնական պայքարը կարող էր իրականացնել նորակազմ հայկական միլիցիան:

ՆԳ նախարար Ա. Մանուկյանը Երևանի միլիտերին հրամայում է իրականացնել օպերատիվ-հետախուզական անհետաձգելի միջոցառումներ՝ մայրաքաղաքի փողոցներում կատարվող անկանոն հրաձգությունը դադարեցնելու և հրազենը կրելու թույլտվություն չունեցողներից այն բռնագրավելու համար³⁵: Միաժամանակ նա հայերեն և ռուսերեն տպագրված հրամանով նախազգուշացնում է բնակչությանը, որ զենք ունենալու թույլտվություն ունեցողները հրազենը չեն կարող կրել հասարակական վայրերում, հավաքատեղիներում, փողոցներում և այլ վայրերում³⁶: 1918 թ. սեպտեմբերի 18-ին Ա. Մանուկյանը հատուկ հրամանով պարզաբանում է, թե որ տեսակի զենքերն են անհրաժեշտ բռնագրավել: Նա պարտադրում է, որպեսզի բռնագրավումը կատարող անձինք կազմեն համապատասխան արձանագրություն՝ երկու վկաների մասնակցությամբ: Նախարարը կրկին հիշեցնում է, որ բռնագրավման են ենթակա միայն պահունակավոր մարտական հրացանները: Խուզարկության չեն կարող ենթարկվել նախարարները, խորհրդարանի նախագահը, նրա օգնականները³⁷:

Իր հերթին զինվորական նախարար, զեներալ Հ. Հախվերդյանը պահանջում է սպաներից անձնական օգտագործման նպատակով գնված հրազենը պահելու համար ունենալ “պատշաճ թույլտվություն զօրապետներից զենք կրելու և համարի ու սիստեմի մասին. զենքը յանձնել ուրիշին արգելում է: Արքունական զենքերը տանը պահելը արգելում է”³⁸: Այս հրամանից կարելի է ենթադրել՝ ապօրինի զենք ու զինամթերք ձեռք բերելու խնդրում իրենց մեղքն ունեին որոշ անպատասխանատու սպաներ, որոնք օգտվելով իրենց իրավունքից կարողանում էին առանց թույլտվության հրազեն ձեռք բերել: Սա էր հիմնական պատճառը, որ նախարարը նման կարգադրությամբ փորձում էր սահմանափակել հրազենի ձեռք բերման ցանկացած հնարավորություն:

Անհրաժեշտ է նշել, որ զենքի ու զինամթերքի անօրինական վաճառքով զբաղվողների մի մասը զրկված էր գոյության տարրական պայմաններից. սակայն այդ հանգամանքը նրանց չէր ազատում քրեական պատասխանատվությունից, հատկապես այն դեպքերում, երբ հրազենը վաճառվում էր ՀՀ-ի տարածքում բնակվող մահմեդականներին:

Մի շարք դեպքերում իշխանությունները հարկադրված էին զինաթափման գործողություններին ներգրավել կանոնավոր զինվորական ստորաբաժանումներ, քանի որ,

³⁵ “Ժողովուրդ” (Երևան), 5. IX. 1918:

³⁶ Նույն տեղում, 27. IX. 1918:

³⁷ Արամ Մանուկյան: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 353–354:

³⁸ “Ժողովուրդ”, 27. IX. 1918:

այսպես կոչված, զինաթափման ենթականերն ավելի լավ էին զինված, քան՝ միլիցիաներները: Այսպես օրինակ, 1918 թ. նոյմբերին Գառնիում զինաթափումը կատարվում է Գարեգին Նժդեհի հրամանատարությամբ գործող, զնդացիներով ու թնդանոթներով զինված գորաջոկատի կողմից³⁹, իսկ նույն ամսին Տիգրան Բաղդասարյանի գլխավորած պատժիչ ջոկատը ստիպեց Մեծ Մազրայի մահմեդականներին հանձնել 450 միավոր զենք⁴⁰:

Նկատենք որ, զենքերի բռնագրավման գործողություններ կատարելիս միշտ չէ, որ դա արվում էր օրենքով նախատեսված կանոնները պահելով: Քաղաքացիներից բողոքներ են ստացվում, որ իրենց նկատմամբ գործադրվում են բռնություններ և յուրացվում են տարբեր իրեր⁴¹:

Անհասկանալի էր նաև, այսպես կոչված, դաշնակցի՝ անգլիացիների վերաբերմունքը: Ինչպես վկայում են փաստերը, վերջիններս բացահայտ պաշտպանում էին մահմեդականներին և հնարավորություն չէին տալիս հայ իրավապահներին տեղերում հաստատել կարգուկանոն: Քառյակ միության երկրների պարտությունից հետո Օսմանյան կայսրությունը սկսեց զորքերը դուրս բերել Հայաստանից, այդ թվում՝ Կարսի նահանգից: Երբ խնդիր բարձրացվեց այնտեղ կարգուկանոն հաստատել, ապա անգլիացներն առաջարկեցին ստեղծել 1000 հոգուց բաղկացած միլիցիա, որը կազմված կլիներ բացառապես օսերից և ռուս նախկին ռստիկաններից, որովհետև, ինչպես գրում է Հարտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանը 1919 թ. մարտի 6-ին ՀՀ խորհրդարանին ուղղված զեկուցագրում, “տեղական թուրքերը գրգուռած են հայերի դեմ, բայց թուրք է, թե՛ Անգլիան չի ուզում յենուել որեւէ հայ ուժի վրայ, որովհետև իր կարծիքով ... հայն աւելի է ռուս, քան ռուսը ինքը, եւ չի կարելի յենուել հայի վրա, երբ Ռուսիայի դէմ բան է ծրագրուում”⁴²:

³⁹ Արամ Մանուկյան. Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 371, 515:

⁴⁰ Վ. Հ. Վիրաբյան. Հայաստանի Հանրապետության հետախուզությունը և բանակը 1918–1920 թթ., էջ 228:

⁴¹ Տե՛ս “Զանգ”, 12. X. 1918:

⁴² Ս. Վրացեան. նշվ. աշխ., էջ 246: Անգլիացիների երկակի վերաբերմունքի մասին է վկայում հետևյալ փաստը. նրանք գումար և 300 միավոր ֆրանսիական “Լեբել” տեսակի զենք են հանձնում իր ավագակությամբ հայտնի Շակակ ցեղապետ, քուրդ Միմկոյին [տե՛ս Ա. Մարտիրոսեան. Յաղթական նահանջը.– “Հայրենիք” (Բօստոն), 1961, - 1, էջ 80]: Միմկոն պահը չկորցրեց և 1918 թ. մարտի 3-ին դավադրաբար սպանեց ասորիների հոգևոր առաջորդ Մար Շիմունին, նրա եղբորը՝ Դավթին և ուղեկցող 75 թիկնապահներին, որոնց թվում էին նաև ռուս սպաներ: Մարտի 28-ին Միմկոն հարձակվեց Վասպուրականից Պարսկաստան նահանջող փախստականների վրա, սպանեց ու վիրավորեց 150-ին և նրանց ուղեկցող զինվորներից 60-ին (տե՛ս Ռ. Օ. Սահակյան. Վանի հայության 1918 թ. մարտյան նահանջը.– “ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների”, 2011, - 1–2, էջ 348):

Օսմանյան գործի հեռացումից հետո սկսվում է գաղթականության զանգվածային վերադարձ հայրենի եզրերը: Շարժումը մեծ չափեր է ընդունում, ուստի նրան քիչ թե շատ կանոնավոր ընթացք տալու համար որոշվում է յուրաքանչյուր գավառում կազմակերպել 100-ից 200 հոգուց բաղկացած հեծյալ միլիցիայի ստորաբաժանումներ⁴³:

Ստեղծված բարդ իրավիճակում միլիցիան, այնուամենայնիվ, չնայած բազմաթիվ թերություններին ու բացթողումներին, պայքար էր մղում գենքի ու զինամթերքի անօրինական շրջանառության դեմ: Այսպես, միայն Չանգիրասարի շրջանում (այժմ ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնք) հաջողվում է 1919 թ. հունվար-մայիս ամիսներին բնակչությունից հավաքել “Նագան” տեսակի 762 ատրճանակ, 13124 ժանդարմական հրացան⁴⁴, “Բրաունինգ” տեսակի 10276 հրագեն, 30151 հետևակային հրացան և մոտ 3,5 միլիոն տարբեր տրամաչափի փամփուշտ⁴⁵:

1919 թ. փետրվարի 18-ի խորհրդարանի նիստում կրկին քննարկվում է միլիցիայի կանոնավոր գործունեության հետ կապված հիմնախնդիրները: Սոցիալ - դեմոկրատական (բոլշևիկյան) պատգամավորական խմբակցությունը քննադատում է այն աշխատակիցներին, որոնք լիարժեք չեն կատարում իրենց ծառայողական պարտականությունները և օգնության չեն հասնում վտանգի ենթարկված քաղաքացիներին: ՆԳ նախարարի պաշտոնակատար Ս. Թորոսյանը տալիս է հետևյալ պարզաբանումները. առաջին հերթին ցածր է իրավապահների աշխատավարձը, սակայն նույնիսկ այդ չնչին գումարն արդեն մի քանի ամիս է ինչ նրանց չի վճարվել⁴⁶: Այդ ամենը ստիպում է նրանց գնալ պաշտոնական դիրքի չարաշահման, սակայն դա միլիցիոներներին չի ազատում պատասխանատվությունից՝ օրինախախտները հեռացվում են ծառայությունից: Նախարարը ցավով փաստում է. “Չպիտի մոռանալ, որ միլիցիայի մեջ գիտակից անձնավորություններ չեն մտնում”⁴⁷: Նշված ժամանակահատվածում, ցավոք, իրավապահների

⁴³ Ս. Վրացեան. նշվ. աշխ., էջ 249:

⁴⁴ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին պատերազմող կողմերը, այդ թվում նաև ռուսական բանակը, մեծ կարիք ունեին պահունակավոր հրացանների, ուստի որոշվեց ժանդարմներին զինել ֆրանսիական արտադրության միալիցք “Գրա” տեսակի հրացաններով, իսկ պահունակավոր հրագենը՝ եռագիծ “Մոսին” և այլն ուղարկել գործող բանակ:

⁴⁵ Վ. Հ. Վիրաբյան. Հայաստանի Առաջին Հանրապետության Միլիցիան և Ներքին Գործերի նախարարությունը (1918–1920 թթ.), Երևան, 2003, էջ 109:

⁴⁶ Դրա վկայություններից է “Չանգ”-ում տպագրված հետևյալ հաղորդագրությունը: Մարտի 6-ին Մասիս լեռան ստորոտում բնակվող քրդերը հարձակվել են Քուլուկ գյուղում բնակվող եզդիների վրա, սպանել հովիվին և առևանգել 40 ոչխար: Նախորդ անգամ ելուզակները գողացել էին 400 խոշոր եղջրավոր անասուն և շուրջ 2 հազար ոչխար: Թղթակիցը հայտնում է նաև. “Եզդիի միլիցիոներները, ինչպես և հայերը, ոչ մի կոպեկ ռոճիկ չեն ստացել” (տե՛ս “Չանգ”, 14. IV. 1919):

⁴⁷ Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրությունները, էջ 213:

թիվն անբավարար էր: 1919 թ. ապրիլի դրությամբ Երևանի միլիցիոներները թվով 79-ն էին⁴⁸: Նրանց որոշ մասը երբեմն անպատասխանատու վերաբերմունք էին ցուցաբերում իրենց պարտականությունների կատարման խնդրում: Այսպես, միլիցիայի բաժանմունքի հերթապահ միլիցիոներ Հմայակ Մարգարյանը և մյուս աշխատակիցներ, ոգելից խմիչքներ օգտագործելուց հետո, լքում են ծառայության վայրը, որի համար ազատվում են աշխատանքից և պատասխանատվության ենթարկվում⁴⁹:

Միլիցիայի մի խումբ աշխատակիցներ՝ քաղաքի քրեական հետախուզության պետ Հ. Ամատունու գլխավորությամբ, խնջույքից⁵⁰ հետո, զինովցած վիճակում սկսում են փողոցում անկանոն կրակոցներ արձակել⁵¹: Միաժամանակ միլիցիան շարունակում է ձեռքակալել այն քաղաքացիներին, ովքեր, վտանգի ենթարկելով բնակչության կյանքը, հրազենից անտեղի կրակել են⁵²:

Միլիցիայի հեղինակությունը նաև հնարավոր չէր լինում պահել համապատասխան մակարդակի վրա, քանի որ լուրեր էին տարածվում, թե իշխանությունները իրավապահ մարմնին օգտագործում էին նաև քաղաքական նպատակների համար: Այսպես, 1919 թ. հունիսի 21-ից 23-ը տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունների ժամանակ, իբր, միլիցիայի աշխատակիցներն ընտրողներից պահանջել են քվեարկել ՀՅԴ-ի օգտին⁵³:

Հարկ է փաստել, որ իշխանությունները պայքար էին մղում հակաօրինական գործողություններում ներգրավված իրավապահ մարմնի աշխատակիցների, այդ թվում բարձրաստիճան պաշտոնյաների դեմ: Այսպես, միայն 1919 թ. հունվարին վարչակարգի և միլիցիայի պաշտոնատար անձանց դեմ հարուցվել է 23, իսկ փետրվարին՝ 29 քրեական գործ: Կալանավորվել են քաղաքային և քրեական հետախուզության միլիցիայի պետերը⁵⁴: Կարծում ենք՝ այստեղ կարևորը ոչ թե նշված անձանց աղմկահարույց կալանումն էր, այլ այն, որ օրինախախտները, ի վերջո, ձեռքակալվեցին:

⁴⁸ «Ժողովուրդ», 11. IV. 1919:

⁴⁹ Տե՛ս «Զանգ», 9. X. 1918:

⁵⁰ Այսպես կոչված, «քեֆ» անողների զգալի մասը տիրապետում էին մեծ գումարների, որոնց համար տուգանք վճարելը խնդիր չէր [տե՛ս «Յառաջ» (Երևան), 30. VI. 1920]:

⁵¹ Տե՛ս «Զանգ», 16. II. 1919:

⁵² Նույն տեղում, 24. VII. 1919: Ջարմանալին այն է, որ վերը նշված իրավախախտում կատարած երկու քաղաքացիներից մեկը բանտարկվել էր 20, իսկ երկրորդը՝ 30 օրով, երբ նման հակահասարակական գործողություն կատարած անձնավորությունը կարող էր դատապարտվել կամ 3 ամսով, կամ էլ վճարել 3000 ռուբլի տուգանք, ինչպես որոշել էր խորհրդարանը:

⁵³ «Ժողովուրդ», 1. VIII. 1919:

⁵⁴ Վ. Հ. Վիրաբյան. Հայաստանի Առաջին Հանրապետության Միլիցիան և Ներքին գործերի նախարարությունը (1918–1920 թթ.), էջ 29:

Նորակազմ միլիցիան կարիք ուներ հմուտ և գաղափարապես նախապատրաստված հրամանատարների, որոնք կարող էին օրինակ լինել ենթակաների համար: Նման դեմքերից էր Նախիջևանի միլիցիայի պետ Գարեգին Նժդեհը: Հայկական դիվիզիայի հրամանատար, գեներալ Մ. Միլիկյանը 1919 թ. ապրիլին ՆԳ նախարարին ուղղված գրությունում, նկարագրելով Դավալուի (այժմ՝ Արարատ) շրջանում մղված մարտերը, հարկ է համարում հայտնել. «Չափազանց օգտակար և յարմար կլինի Նախիջևանի միլիցիան թողնել Բաշ-Գեառնիում (այժմ՝ Գառնի - Ռ. Ս. Ռ. Ս.), որի համար ձեր կարգադրությունն էմ խնդրում: Ընդ սմին պարտք էմ համարում յայտնել Ձեզ Նախիջևանի միլիցիայի փայլուն ռազմական գործողության մասին Ղարալարի (այժմ՝ Արալեզ - Ռ. Ս. Ռ. Ս.) շրջանում և յատկապես միլիցիայի պետ Նժդեհի հերոսության մասին»⁵⁵:

1919 թ. հուլիսի 24-ի՝ զինահավաքի մասին կառավարության որոշմամբ նախատեսվում էր, որ հանձնված զենքի և փամփուշտների դիմաց գաղթականներին տալ այնու, սակայն հոկտեմբերի դրությամբ վերը նշված հրամանը կատարած գաղթականները խոստացված այնուրը չէին ստացել⁵⁶: Այս ամենը, իհարկե, անվստահություն էր սերմանում կառավարության նկատմամբ, ուստի շատերը թաքցնում էին իրենց ունեցած զենքն ու զինամթերքը, իսկ ոմանք էլ նախընտրում էին դրանք վաճառել, որպեսզի կարողանան մի կերպ գոյատևել⁵⁷: Նույն օրը՝ հուլիսի 24-ին, ՀՀ կառավարությունը օրենք է ընդունում մահապատիժ սահմանելու մասին. առավելագույն պատժի կարող էր արժանանալ նաև այն անձնավորությունը, ով «կհափշտակի, կվատնի կամ կգողանա պետական զենքը կամ հրանյութը»⁵⁸:

Իրենց հերթին զինվորականները տարբեր միջոցների էին դիմում, որպեսզի խթանեն բնակչության մոտ եղած զենքը բանակին հանձնելու համար: Այսպես, Հայկական 4-րդ առանձին բրիգադի հրամանատար Սեպուհը (Արշակ Ներսիսյան) հատուկ հրամանով

⁵⁵ Տե՛ս «Զանգ», 7. IV. 1919:

⁵⁶ ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 44, թ. 1:

⁵⁷ Հայոց բանակը զինամթերքի մեծ կարիք ուներ. դրա վկայությունն է 1919 թ. սեպտեմբերի 6-ի կառավարության որոշումը՝ զինվորական նախարարությանը 2.5 միլիոն ռուբլի վարկ տրամադրելու՝ օրական 50 հազար փամփուշտ պատրաստելու համար (տե՛ս Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ, էջ 293): Դա հնարավորություն տվեց, որպեսզի կառավարությունն այլևս փամփուշտ չգնի (նույն տեղում, էջ 297): Սեպտեմբերի 12-ի նիստում կառավարությունը հավանություն է տալիս զինվորական նախարարի ներկայացրած զեկուցագրին՝ «գնդակ և փամփուշտ պատրաստելու համար արհեստանոցի և ծառայողների պահպանության համար 6.000.000 ռ. վարկ բանալու մասին» (նույն տեղում, էջ 298):

⁵⁸ Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (Քաղաքական պատմություն): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Պատասխանատու խմբագիրներ՝ Գ. Գալոյան, Վ. Ղազախեցյան, կազմողներ՝ Գ. Գալոյան, Վ. Ղազախեցյան (ղեկավար), Վ. Մելիքյան, Ս. Միրզոյան, Ա. Վիրաբյան, Երևան, 2000, էջ 115:

ազդարարում է, որ իր գործամասում սեփական “Մոսին” հրացանով և փամփուշտներով ծառայության ներկայացած զինվորներին կտրվի զենքի արժեքը՝ 500 ռուբլի⁵⁹:

Հուլիսի 29-ին կառավարությունը լրացում է կատարում ընդունված զինաթափման վերաբերյալ օրենքում. “Զինաժողովի օրենքի գործադրության ընթացքում յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է վճարել զինամթերքի տուրք հրացաններով, փամփուշտներով կամ դրամով՝ հատուկ կոմիսարի որոշված չափով”⁶⁰:

1919 թ. սեպտեմբերի 11-ին Երևանի միլիցիայի պետ նշանակված Ռուբեն Պապիկյանը⁶¹ տեղեկացնում է քաղաքացիներին, որ զենք կրելու թույլտվություն չունեցողներից այն բռնագրավվելու է, իսկ “անոնք, որ իրաւունք ստացած, բացարձակօրէն հագուստի վրայից կախելու իրաւունք չունին”⁶²:

Միլիցիայի աշխատակիցների ծառայողական պարտականությունների կատարմանը լրջորեն խանգարում էին անօրինական զինված խմբերը, որոնց ժողովուրդն անվանում էր “մաուզերիստներ”: Նրանք բացահայտ շրջում էին արժաթապատ կոթ ունեցող “Մաուզեր” ատրճանակներով և օրը ցերեկով կարող էին, ցանկացած պահին անկանոն հրաձգություն բացել և նույնիսկ մարդկանց գնդակահարել⁶³: Այսպես, 1919 թ. հոկտեմբերի 7-ին, երբ Ալեքսանդրապոլ քաղաքի կոմիսար Վարդանեսյանը փորձում է մաուզերիստներին սաստել, սպանվում է⁶⁴: Հոկտեմբերին միլիցիան զինաթափում է Դալի Ղա-

⁵⁹ “Աշխատանք” (Երևան), 24. VII. 1919:

⁶⁰ Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ, էջ 268: 1918 թ. դեկտեմբերին տուրքը կազմում էր հրազենի յուրաքանչյուր միավորի համար 5 ռուբլի (տե՛ս Արամ Մանուկյան: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 403):

⁶¹ Ռ. Պապիկյանը ծառայել էր Կիլիկիայում տեղակայված ֆրանսիական բանակում: Նա ռազմական ոստիկանության (ժանդարմերիայի) լեյտենանտ էր (տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 123, թ. 10):

⁶² “Ժողովուրդ”, 24. IX. 1919:

⁶³ Ժամանակակիցը՝ Վահե Արծրունին, հուշագրում է. ““Մաուզերիստ”ները, եթե բացառենք ոչ աննշան տոկոս մը, որ իրօ՛ք, բառի ամենալայն եւ ամենաբարձր առումով, կը խորհրդանշէր Հայաստանի նոր դարու ասպետութիւնը, հազիւ քանի տասնեակ ըլլային երկրին մէջ եւ, սակայն, անոնց ապրած կեանքը, թէ՛ ներքին եւ թէ՛ արտաքին տեսակետէ, ամենավատ անդրադարձումն ունեցաւ մեր պետութեան վարկին վրայ: ... “Մաուզերիստ”ներու թալանի ախորժակը ո՛չ չափ ունէր եւ ո՛չ սահման...: Հերիք էր, որ առիթ մը ներկայանար հարստանալու, անձնական վրէժ լուծելու եւ կամ պղտոր ջուրին մէջ ձուկ որսալու՝ անոնք մի՛ շտ պատրաստ էին” (տե՛ս Վ. Արծրունի. Հայ-Տաճկական պատերազմը: Հայ սպայութիւնը: Շատախ, Երևան, 2002, էջ 31): Այդ մասին հետաքրքիր դիտարկում ունի նաև ռուս գրող Ս. Գորոդեցկին, ով 1919 թ. ապրիլի վերջին – մայիսի սկզբին եղել է Երևանում [տե՛ս А. Закарян. Сергей Городецкий в Западной Армении и в Закавказье (1916–1921 гг.). Ереван, 2010, с. 182]:

⁶⁴ Վ. Հ. Վիրաբյան. Հայաստանի Առաջին Հանրապետության Միլիցիան և Ներքին Գործերի նախարարությունը (1918–1920 թթ.), էջ 216:

գոյի ավագակախմբին. իրավապահները բռնագրավում են 215 հրացան և մոտ 4 հազար փամփուշտ⁶⁵:

1919 թ. դեկտեմբերին Դիլիջանի գավառում ստուգայց կատարած խորհրդարանական հանձնաժողովը հայտնաբերում է մի շարք աղաղակող թերություններ: Ինչպես նշում է ուսումնասիրություններ կատարած հանձնաժողովի անդամ, պատգամավոր Արմենակ Մաքսապետյանը, գավառում լայն տարածում են գտել կողոպուտն ու գողությունը, քանի որ «Ոստիկանությունը վատ պայմանների մեջ է երկու կողմից. նախ՝ անխիթար է նրա տնտեսական դրությունը, երկրորդ՝ մեծապես կազմված է զինվորական տարիք ունեցող մարդկանցից, ռոճիկները ստացվում են անկանոն և ոչ լրիվ, իսկ դիմումները մատնվում են անուշադրության»⁶⁶: Նա փաստում է, որ հանցագործության առավել տարածված տեսակներից է զինավաճառությունը՝ «տեղում եղած զենքերը մաս առ մաս գնում են Ադրբեջան»⁶⁷:

Միաժամանակ հանրապետությունում զգացվում էր մահմեդականների հակաօրինական բուռն գործունեություն, որն ուղղորդվում էր Ադրբեջանի և օսմանյան Թուրքիայի համապատասխան ծառայությունների կողմից: Նրանք գաղտնի զենք էին ուղարկում Հայաստանի տարածքում ապրող մահմեդականներին, որն էլ պայթունավտանգ իրադրություն էր ստեղծում երկրում⁶⁸: Ադրբեջանից և Օսմանյան կայսրությունից Հայաստան էին ուղարկվում նաև դրամական զգալի միջոցներ⁶⁹, միաժամանակ աշխատում էին շրջանառության մեջ մտցնել ՀՀ կեղծ դրամներ⁷⁰:

Զենքի ու զինամթերքի անօրինական շրջանառությանը մեծապես նպաստում էր դասալքությունը, որն ահռելի չափերի հասավ 1919 թ. վերջերին: Դասալիքների թիվը հաս-

⁶⁵ Տե՛ս «Զանգ», 19. X. 1919:

⁶⁶ Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրությունները, էջ 412:

⁶⁷ Նույն տեղում:

⁶⁸ Վ. Հ. Վիրաբյան. Հայկական հետախուզությունը Առաջին Հանրապետության տարիներին (1918–1920 թթ.), Երևան, 2003, էջ 89:

⁶⁹ ՀՀ-ում զենքի ու զինամթերքի հայթայթումը հնարավորություն է տալիս ադրբեջանական իշխանություններին իրենց ցեղակիցներին ուղարկել դրամ, որով նրանք կկարողանային զենք գնել տեղում: 1920 թ. ապրիլի 10-ին ՆԳ նախարար Ա. Գյուլխանդանյանը հատուկ հրամանով դրվատում է հեծյալ ավագ միլիցիոններ Համբարձում Հակոբյանին, որ նա ձերբակալել է Չանգիրասար ուղևորվող և 500 հազար ադրբեջանական բռներ տանող երեք ադրբեջանցի սուրհանդակների, որոնք միլիցիոններին առաջարկել են 100 հազար ռուբլի կաշառք, սակայն Հ. Հակոբյանը հրաժարվել է: Նախարարի հրամանով ավագ միլիցիոնները պար գնատրվել է 20 հազար ռուբլով (տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ., էջ 181):

⁷⁰ Վ. Հ. Վիրաբյան. Հայաստանի Առաջին Հանրապետության Միլիցիան և Ներքին Գործերի նախարարությունը (1918–1920 թթ.), էջ 104:

նում էր 17.665 հոգու, իսկ բանակում ծառայողներինը՝ 16.000–18.000 էր⁷¹: Դասալիքներից որոշները փախչելով իրենց հետ տանում էին զենք և զինամթերք: Չինծառայությունից խուսափողների մի մասը ինչ-ինչ ճանապարհներով մտնում էր միլիցիա, որը «բարոյալքող և ճնշող սպավորություն էր թողնում հասարակության վրա»⁷²: Այս հանգամանքը բացասաբար էր ազդում նաև իրավապահ մարմնի հեղինակության ու նրա հետագա գործունեության վրա:

Դասալիքները կարողանում են զարտուղի տարբեր ճանապարհներով հայթայթել այլ երկրների (հիմնականում՝ Պարսկաստան) անձնագրեր: Մի շարք դեպքերում նրանց «աջակցում» էին ՆԳ նախարարության ու միլիցիայի «բազմաթիվ ոչ պատասխանատու, անբարեխիղճ»⁷³ աստիճանավորներ և նույնիսկ պատգամավորներ⁷⁴:

Ի դեպ, 1920 թ. մայիսին ՆԳ նախարար Ա. Գյուլիանդանյանը հատուկ հրամանով տեղեկացնում է բնակչությանը, որ «էթե նա (դասալիքը – Ռ. Ս., Ռ. Ս.) իր դասալքութեան դեպքում գողացած է եղել զինուորական զգեստ և զենք ու ծախել է, դատի ենթարկելու հետ միասին, նա, իսկ չքաւորութեան դեպքում նաև նրա ամբողջ ընտանիքը պէտք է վճարէ գողացածի գինը եռակի, շուկայի գներով հաշւած»⁷⁵:

Ցավոք, նույնիսկ դասալքության դեմ ընդունված խիստ օրենքները սպասվող արդյունքը չէին ունենում, քանի որ դասալքությունն ուներ ավելի խորքային պատճառներ⁷⁶: Համոզված ենք, որ առաջին հերթին անհրաժեշտ է փաստել, որ ՆԳ նախարար Ա. Մանուկյանի անժամանակ մահից հետո ՆԳ մարմիններն այդպես էլ վերջնականապես լիարժեք չկազմավորվեցին: Նույնիսկ երկու անգամ փորձ կատարվեց կազմակերպել միլիցիայի աշխատակիցների դասընթացներ⁷⁷, սակայն մենք տեղեկություններ չկարողացանք գտնել այն մասին, թե այդ դասընթացները գործել են, թե՞ ոչ: Կառավարությունը տրամադրել է համապատասխան դրամական միջոցներ, նշանակել դասատուներ,

⁷¹ Նույն տեղում, էջ 62–63: Ցավոք, ինչպես Առաջին համաշխարհային պատերազմի տարիներն, այնպես էլ ՀՀ-ն ժամանակ, դասալիքների ամենամեծ թիվը տալիս էին Երևանը և Ալեքսանդրապոլը (տե՛ս «Յառաջ», 30. III. 1920):

⁷² Նույն տեղում էջ 66:

⁷³ Վ. Հ. Վիրաբյան. Հայաստանի Առաջին Հանրապետության Միլիցիան և Ներքին Գործերի նախարարությունը (1918–1920 թթ.), էջ 62:

⁷⁴ Տե՛ս Ա. Ս. Հակոբյան. Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները, Երևան, 2005, էջ 72:

⁷⁵ ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 490, թ. 144:

⁷⁶ Ավելի մանրամասն տե՛ս Վ. Հ. Վիրաբյան. Հայաստանի Հանրապետության հետախուզությունը և բանակը, էջ 148–190:

⁷⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 16, թ. 369–370, 372–379:

կազմել դասացուցակ և ուստիկանության պարտականությունների վերաբերյալ կանոնադրություն⁷⁸:

1920 թ. հոկտեմբերի 7-ին Երևանի պարետ, փոխգնդապետ Ա. Շահիսաթունին արդեն որերորդ անգամ հարկադրված էր բնակչությանը նախազգուշացնել, որ առանց թույլտվության զենք կրելու դեպքում քաղաքացին կարող է ձերբակալվել 1-ից մինչև 6 ամիս ժամկետով, կամ վճարել 30 հազար ռուբլի տուգանք⁷⁹:

... Ինչպես 1918 – 1919 թթ., այնպես էլ 1920 թ. շարունակվում էր անօրինական զենքի ու զինամթերքի շրջանառությունը, փողոցներում անընդհատ հնչում էին անկանոն ու հաճախակի կրակոցներ: Այսպես, “Յառաջ” թերթի հոդվածներից մեկը վերնագրված էր՝ “Գնդակների տարափ Երևանում”⁸⁰: Ինչն է, հանրապետության կառավարության ոչ ճիշտ քաղաքականության հետևանքով իրավապահ մարմիններում ծաղկեց կաշառակերությունն ու հովանավորչությունը: Աշխատակիցների զգալի մասի համար սովորական էր դարձել խուզարկությունների և առգրավումների ժամանակ բացահայտ կողոպուտը, նրանց նույնիսկ չէր վախեցնում մահվան սպառնալիքը⁸¹: Կարծում ենք, որ նորանկախ հանրապետության կառավարությունն առաջին հերթին պետք է բյուջեից զգալի հատկացումներ կատարեր նաև ՆԳ նախարարությանը, այն հավասարազոր էր հավասարազոր զինված ուժերին: Նման պայմանում հնարավորություն կստեղծվեր ավելի մեծ ուժեր հատկացնել քրեական տարրերի դեմ պայքարում: Կարելի է ենթադրել, որ նման իրավիճակի պատճառներից մեկն էլ ՀՅԴ-ի կուսակցական մենիշխանությունն էր, չնայած այն հանգամանքին, որ կուսակցությունը երկու անգամ կառավարություն կազմեց ՀԺԿ-ի և էսէռների հետ, որը, ցավոք, երկրում էապես չփոխեց իրադրությունը⁸²: Սա-

⁷⁸ ՀԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 123, թ. 6–10, ֆ. 199, ց. 1, գ. 16, թ. 370, 372–373:

⁷⁹ “Յառաջ”, 7. IX. 1920:

⁸⁰ Թերթը գրում է. “Ամեն օր ժամը 5-ից սկսած Երևան քաղաքում այս ու այն կողմից արձակուած հրացանների ու ատրճանակների ձայնից ներկայացնում է իր կարգին որպես մի կուրի վայր: Միսալած չեմ լինի, եթե ասեմ, որ ամեն օր ի գուր տեղ, հենց այնպես, օդի մեջ, այրում են պատկառելի քանակությամբ փամուշտ” (տե՛ս “Յառաջ”, 30. VI. 1920):

⁸¹ ՀՀ ՆԳ նախարարի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Ջամայյանի՝ 1920 թ. մայիսի 13-ի հրամանի համաձայն՝ խուզարկության ժամանակ քաղաքացիների նկատմամբ բռնություններ և կաշառք ստանալու դեպքերում ՆԳ աշխատակիցը կարող է Արտակարգ դատարանի կողմից դատապարտվել ընդհուպ մինչև գնդակահարության (տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 490, թ. 212):

⁸² Վ. Վիրաբյանի համոզմամբ, միլիցիան հանցավորության, այդ թվում զենքի ու զինամթերքի ապօրինի շրջանառության դեմ պայքարում թերանում էր նաև այն պատճառով, որ “ՆԳ Նախարարությունը հաճախ անհիմն կերպով կադրային համալրումներ էր ստանում՝ ելակետ ունենալով կուսակցական պատկանելությունը” (տե՛ս Վ. Հ. Վիրաբյան. Հայաստանի Առաջին Հանրապետության Միլիցիան և Ներքին Գործերի նախարարությունը, էջ 213): Համանման տեսակետ է հայտնում ազատագրական գործիչներից Վ. Արծրունին. “Պաշտօն եւ դիրք ձեռք բերելը, կուսակցական գերակայութիւն ապահովելն աստիճանաբար դարձաւ գերագոյն

կայն, չպետք է մոռանալ հայ բոլշևիկների հակակառավարական գործունեությունը, որոնք օգտվեցին ստեղծված իրադրությունից, և կազմակերպեցին 1920 թ. մայիսյան խռովությունը, որը ծանր հարված հասցրեց նորանկախ հանրապետությանը:

Այսպիսով կարելի է եզրակացնել.

1. Հայաստանի Հանրապետությունում ստեղծված սոցիալ-տնտեսական ու քաղաքական անբարենպաստ պայմաններում, չնայած գրանցված առանձին հաջողություններին, ՆԳ նախարարության մարմիններն ի գործու չեղան արդյունավետ պայքար մղել ապօրինի զենքի ու զինամթերքի շրջանառության դեմ, քանի որ արհեստավարժ կադրերի մեծ պակաս էր զգացվում:

2. ՆԳ նախարար Ա. Մանուկյանի մահից հետո միլիցիան չդարձավ այն իրական ուժը, որը կարող էր հաղթահարել տարբեր զինված կազմավորումների հետ կապված հիմնախնդիրը:

3. ՀՀ-ն ի գործու չեղավ միլիցիան հիմնականում ապահովել կարգապահ ու պարտաճանաչ կադրերով:

4. Ապակայունացմանը հատկապես մեծապես նպաստում էին բոլշևիկների կողմից իրականացվող ապազգային քաղաքականությունը:

5. Հակահետախուզական մարմինները չկարողացան ամբողջությամբ կանխել Ադրբեջանից ու Թուրքիայից Հայաստանի տարածքում բնակվող մահմեդականներին զենքի ու զինամթերքի մատակարարումը:

Ռուբեն Սահակյան – պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նոր պատմության բաժնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ Առաջին համաշխարհային պատերազմի ռուս-թուրքական ռազմաճակատ, կամավորական շարժում, հայերի Ցեղասպանություն, ինքնապաշտպանական մարտեր, հայ ոստիկանության պատմություն: Հեղինակ է 10 մենագրություն - ժողովածուների և շուրջ 100 հոդված - հրապարակումների: rubensahakyan58@gmail.com

Ռոստոմ Սարգսյան – տ. գ. թ., ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պրոֆեսոր, ոստիկանության գնդապետ: Գիտական հետաքրքրությունները՝ Հայաստանի երրորդ Հանրապետության ստեղծմանը զուգընթաց կոռուպցիոն դրսևորումների պատճառահետևանքային կապեր, հայոց ոստիկանության պատմություն: Հեղինակ է 3 մենագրության և ավելի քան 20 գիտական հոդվածի: rosargsyan@gmail.com

նպատակը նախ՝ անհատներու եւ, ապա՝ կուսակցութիւններու համար” (տե՛ս Վ. Արծրունի. նշվ. աշխ., էջ 28):

REFERENCES

- «Horizon», (Tiflis), 13. VIII. 1917 (In Armenian).
- Hayoc patmutjun. Xmb. xorhurd - V. Barxudaryan ev urish. H. 3. Nor zamanakashrchan (XVIII dari erkrord kes - 1918 t.): Girq II (1901-1918 tt., haj gaxtavajrerə, parberakan mamulə ev mshakujtə XIX d. ev XX d. skzbin): Xmbagrakazm - A. Melkonyan ev urish., Erevan, 2015 (In Armenian).
- «Arev». (Bagu), 18. III. 1918 (In Armenian).
- A. G. Emelyanov.** Kazaki na persidskom fronte (1915-1918), Moskva, 2007 (In Russian)..
- Vazgen. Atrpatakani gojamartə. - «Hayrenik» (Boston), 1930, № 12 (In Armenian).
- H. R. Simonyan.** Andraniki zamanakə. erku grqov, Girq B., Erevan, 1996 (In Armenian).
- Hayastani Hanrapetutjan parlamenti nisteri arzanagrutjunner: 1918-1920 t't': Glxavor xhmbagir - A. Virabyan, Erevan, 2010 (In Armenian).
- Hayoc patmutyun. Khmb. khorhurd - V. Barkhudaryan ev urish. H. 4. Girq I. Noragujn zamanakashrchan 1918-1945 tt.): Khmbagrakazm - V. Xazaxecyan ev urish., Erevan, 2010 (In Armenian).
- R. H. Sargsyan, R. O. Sahakyan.** Hajoc vostikanutjan patmutjunic, Mas I, Erevan 2013 (In Armenian).
- A. Asryan. Aram Manukyan.** Azgajin- petakan gorcichə.- «Patmabanasirakan handes», 2019, № 2 (In Armenian).
- Hayastani azgajin arxiv (HAA), fond 198, cucak 1, g. 2 (In Armenian).
- Aram Manukyan:** Pastatxteri ev njuteri zoghovacu: Glxavor xmbagir - A. Virabyan, Erevan, 2009 (In Armenian).
- V. H. Virabyan.** Hayastani Hanrapetutjan hetaxuzutjunə ev banakə 1918-1920 tt., Erevan, 2009 (In Armenian).
- «Karavarutean Lraber», (Erevan), 6. IX. 1918 (In Armenian).
- V. H. Virabyan.** Hayastani Arachin Hanrapetutjan Milician ev Nerqin Gorceri naxararutjunə (1918-1920 tt.), Erevan, 2003 (In Armenian).
- Hayastani Hanrapetujunə 1918-1920 tt. (Qaxaqakan patmtjun). Pastatxteri ev njuteri zoxovacu. Patasxanatu xmbagirner - G. Galoyan, V. Xazaxecyan (xekavar), V. Melikyan, S Mirzoyan, A. Virabyan, Erevan, 2000 (In Armenian).

ПРОБЛЕМА НЕЗАКОННОГО ОБОРОТА ОРУЖИЯ И БОЕПРИПАСОВ
В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ
(1918–1920 гг.)

РУБЕН СААКЯН, РОСТОМ САРГСЯН

Резюме

Ключевые слова: Республика Армения, Министерство внутренних дел, Арам Манукян, милиция, незаконный оборот оружия и боеприпасов, Аршавир Меликян, Сиракан Тигранян, Абрахам Гюлхандарян, Нахиджеван, Рубен Папикян, Ереван, Новый Баязет, Аршавир Шахатуни, Гарегин Нжде.

В 1918–1920 гг. незаконный оборот оружия был одной из серьезнейших проблем для Республики Армения, поскольку он существенно влиял на криминогенную ситуацию в стране. 23 августа 1918 г. министром внутренних дел Арамом Манукяном был представлен законопроект

в парламент РА о конфискации армейских магазинных винтовок. По оперативно-разведывательным данным, в руках населения было до 150 тысяч единиц оружия разного калибра. 29 августа 1918 г. парламент РА принял закон о конфискации боевого оружия у населения, кроме охотничьих ружей. Впоследствии парламент и правительство Армении несколько раз принимали законы и постановления против незаконного оборота оружия и боеприпасов, в том числе предлагали выкупить или обменять армейские винтовки, ужесточали законы. Однако сложившиеся социально-экономические и политические обстоятельства не привели к ожидаемым результатам. Несмотря на это, милиции удалось только за январь–июнь 1919 г. изъять у населения более 50 тысяч единиц разных систем стрелкового, в том числе армейского, оружия и около 3,5 миллионов патронов разного калибра. Милиция также смогла разоружить ряд незаконных вооруженных бандитских формирований, в основном из мусульманского населения РА. Незаконный оборот оружия и боеприпасов в РА спровоцировал рост тяжких преступлений и представлял серьезную угрозу государственной безопасности.

Рубен Саакян – д. и. н., заведующий отделом новой истории Института истории НАН РА. Научные интересы: русско-турецкий фронт Первой мировой войны, добровольческое движение, Геноцид армян, самооборонительные бои, история армянской полиции. Автор 10 исследований-сборников и около 100 статей-публикаций. rubensahakyan58@gmail.com

Ростом Саргсян – к. эк. н., профессор Образовательного комплекса полиции РА, полковник полиции. Научные интересы: исследования причинно-следственных связей коррупционных явлений во времена становления Третьей Республики Армения, история армянской полиции. Автор 3 монографий и более 20 статей. rosargsyan@gmail.com

THE PROBLEM OF THE ILLICIT WEAPONS AND AMMUNITION IN THE REPUBLIC OF
ARMENIA
(1918–1920)

RUBEN SAHAKYAN, ROSTOM SARGSYAN

S u m m a r y

Key words: The Republic of Armenia, Ministry of the Interior Affairs, Aram Manukyan, militia, illicit weapons and ammunition, Arshavir Melikyan, Sirakan Tigranyan, Abraham Gyulkhandaryan, Nakhijevan, Ruben Papikyan, Yerevan, New Bayazet, Arshavir Shahkhatuni, Garegin Nzhdeh.

In 1918-1920 illegal arms trafficking was one of the most serious problems for the Republic of Armenia, since it significantly influenced the criminogenic situation in the country. Still, on August 23, 1918, the bill on the confiscation of the rifles of army store was presented by the Minister of Internal Affairs Aram Manukyan to the Parliament of RA. There were up to 150 thousand weapons of

various caliber in the hands of the population according to operational-intelligence data. On August 29, 1918, the RA Parliament adopted a law on the confiscation of military weapons from the population, except for hunting rifles. Later, the Parliament and the Government of Armenia adopted laws and decrees several times against illegal circulation of weapons and ammunition including offering to buy or exchange army rifles and toughened the laws. However, unfortunately, the current socio-economic and political circumstances did not lead to the expected results. Despite this, the police managed only for the January-June months of 1919 to seize more than 50 thousand units of various small-arms systems, including military weapons and about 3.5 million rounds of different caliber from the population. Police also managed to disarm a number of illegal armed gangster formations mainly from the Muslim population of Armenia. The illegal circulation of weapons and ammunition provoked an increase in serious crimes and represented a serious threat to state security in the Republic of Armenia.

Ruben Sahakyan – Doctor of Historical Sciences, Chair of the Department of New History at the NAS RA Institute of History. Scientific interests: Russian-Turkish front of the First World War, volunteer movement, Armenian Genocide, self-defense battles, history of the Armenian police. Author of 10 monographs and about 100 scientific articles. rubensahakyan58@gmail.com

Rostom Sargsyan – Candidate of Economic Sciences, Professor at the Police Educational Complex of the Republic of Armenia, Colonel of the Police. Scientific interests: cause-effect relationships of corruption phenomena during the formation of the Third Republic of Armenia, history of the Armenian police. Author of 3 monographs and more than 20 scientific articles. rosargsyan@gmail.com

ՀԱՅ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԿԵՐՊԱՎՈՐՈՒՄԸ
ՆՇԱՆ ՊԵՇԻԿԹԱՇԼՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԴԻՄԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ *

ՆԱԻՐԱ ԲԱԼԱՅԱՆ

Բանալի բառեր՝ Նշան Պեշիկթաշյան, Սփյուռք, պայքար ուժացման դեմ, գրական դիմանկար, երգիծանք, հայ ինքնություն, ազգային հատկանիշ, կերպարի գեղարվեստականացում:

Գրական ժանրերի պատմական զարգացման գործընթացում զանազան փոխակերպումներ ու տարբեր հատկանիշներ ստանալով՝ առ այսօր կենսունակ է գրական-գեղարվեստական դիմանկարի տեսակը: Համաշխարհային գրականության մեջ դիմանկարները զանազանվում են իրարից. ընդամեն, հուշագրական-կենսագրական բնույթ ունենալով հանդերձ՝ հաճախ ձեռք են բերում անհատական տարեգրության արժեք: Սրանցում դրսևորվում են հեղինակի գրաքննադատական, հրապարակախոսական, ակնարկային, հուշագրական հայեցակետերը. երբեմն բանաստեղծական, քնարական մոտեցումները զուգադրվում են պատումային ընթացքին: Դիմանկարի ժանրի բնութագիրը հստակ չէ, ինչպես իրավամբ նշում է Ա. Մակարյանը: Այսպես. “Գրական դիմանկարը միջժանրային երևույթ է. շատ դժվար է հստակ տարանջատել նրա սահմանները. այն կարող է հանդես գալ ն՝ գեղարվեստական գրականության մեջ, ն՝ ինքնորոշվել դեպի քննադատությունը՝ էլնելով նորմատիվ պահանջներից, ու ժանրային այդ անստուգության մեջ է, թերևս, նրա ինքնատիպության հիմնական հատկանիշը”¹:

Հայ գրականության պատմության հոլովությունում այս ինքնատիպ ժանրը, անշուշտ, ունի մյուսներից տարբերվող իր առանձնահատկությունները, որոնցից հիմնականն ու զատորոշիչն այն է՝ հայկական դիմանկարը սերտորեն կապված է երգիծանքին ու կարող է դրսևորվել երգիծանքի տարբեր աստիճաններով, ընդհուպ մինչև մերկացնող սարկազմ: Շարունակելով իր նախորդների՝ Հակոբ Պարոնյանի, Գրիգոր Զոհրապի, Երվանդ Օտյանի կատարելագործած դիմակերտման լավագույն ավանդույթները, երբեմն կրելով ազդեցություններ և ունենալով նմանություններ՝ Նշան Պեշիկթաշյանը (1896–1972) որակական նոր աստիճանի

* Ընդունվել է տպագրության 23. V. 2019 թ.: Գրախոսվել է 26. V. 2019 թ.:

¹ Ա. Մ ա կ ա ղ յ ա ն. Արևմտահայ գրական դիմանկարը, Երևան, 2002, էջ 18–19:

հասցրեց հայ գրական-երգիծական դիմանկարի ժանրը: Հայտնի երգիծաբանի գրական դիմանկարներն այսօր էլ շարունակում են կենսունակ մնալ ու առանձնանում են արդիական շեշտադրումներով: “Դիմանկարներն ու պատումները տակաւին կը պահեն իրենց համն ու հոտը եւ մեզի կը ներկայացնեն մեծապէս գունաւոր այն տիպարները, որոնք երգիծաբանը ճանչցած, դիտարկած ու երգիծած է”², – նկատում է գրականագետ Գրիգոր Պըլտյանը:

Սփյուռքահայ անվանի գրող Նշան Պեշիկթաշյանը ծնվել է Կ. Պոլսում: Սկզբնական կրթությունը ստացել է տեղում, սակայն Զմյուռնիայի աղետից հետո՝ 1922 թ., մշտապէս տեղափոխվել է Փարիզ, որտեղ դասավանդել է հայերեն և իրեն ամբողջովին նվիրել գրականությանը: Հինգ տասնամյակից ավել նա գրել, հրատարակել է բազմաթիվ ստեղծագործություններ, աշխատակցել տարբեր պարբերականների ու խմբագրել սփյուռքահայ զանազան հանդեսներ՝ “Ազատ օր” (Աթենք), “Ազդակ”, “Ակոս”, “Բագին”, “Սփիւռք” (Բեյրութ), “Հայրենիք” ամսագիր, “Հայրենիք” օրաթերթ (Բոստոն), “Այիք” (Թեհրան), “Ճակատամարտ”, “Մարմարա” “Շանթ” (Կ. Պոլիս), “Անահիտ”, “Անդաստան”, “Արևմուտք”, “Բժիշկ”, “Զուարթնոց”, “Մենք”, “Յառաջ” (Փարիզ), “Ասպարեզ” (Ֆրեզնո) և այլն:

Նրա գրական ժառանգությունը բազմազան է ու հարուստ. գրել է չափածո և արձակ բանաստեղծություններ, պոեմներ, առակներ, մանրապատումներ, նորավեպեր, պատմվածքներ, վիպակներ ու վեպեր, թատերգություններ, դիմանկարներ, թատերագիտական ուսումնասիրություններ: Ստեղծագործություններում նոր որակի է հասցված գրական-երգիծական դիմանկարի ժանրը, որն ունի երգիծական ուրույն առանձնահատկություններ:

Պեշիկթաշյանի գրական հարուստ ու բազմաժանր ժառանգության մաս են կազմում մոտ հարյուր դիմանկար, որոնցից երգիծական բնույթ ունեցողները պայմանականորեն կարելի է բաժանել երկու տիպի՝ անհատական, երբ երգիծվել են հայ հասարակական-քաղաքական, մշակութային գործիչները և ընդհանրական, երբ հեղինակի երգիծանքի թիրախ են դարձել մարդկային առանձնահատկությունների հավաքական կրողները կամ որևէ խմբի պատկանող մարդիկ՝ դառնալով յուրատեսակ գրական պատկեր-կերպարներ³:

² Գր. Պըլտեան. Ֆրանսահայ գրականութիւն. 1922–1972, Երևան, 2017, էջ 523:

³ Այս առումով Ա. Մակարյանը գտնում է, որ հորինված դիմանկարային կերպարը հեռանում է իր չափորոշիչներից և “դիմանկար” եզրույթի գործածումը դառնում է ձևական. “Գրականության մեջ “դիմանկար” հասկացությունն օգտագործվում է հիմնականում երկու դեպքում՝ իրական, կոնկրետ մարդու և երևակայական, հնարովի կերպարների արտաքինի, բնավորության, վարքուբարքի, հոգեբանության և այլ հատկանիշների բնութագրումների դրսևորման առիթով: Եթե վավերագրությունն իրական մարդու կերպարի, ուրիշ խոսքով՝ դիմանկարային կերպարի ստեղծման համար

Հայի մտավորական անհատական առանձնատիպը

Ն. Պեշիկթաշլյանի՝ մոտ քառասուն անհատական երգիծական դիմանկարներն ամփոփված են «Ծաղրանկարներ», «Նոր ծաղրանկարներ», «Մոմիաներ» ժողովածուներում. դրանց մեջ կան որոշ գործեր, որոնք նա սկզբնապես տպագրել է «Յառաջ», «Հայրենիք» և այլ պարբերականներում: Դիմանկարները կառուցված են ավանդական եղանակով, այսինքն՝ ստեղծագործողն առաջնորդվել է հետևյալ կառույցով՝ կենսագրության, բնավորության հիմնական գծերի ներկայացում, թերությունների երգիծում ու երբեմն անխնա ձախույզ: Այս առիթով գրականագետը փաստում է. «Այս սերը կը բխի **Վարք Սրբոցի** (ընդգծումը՝ Գ. Պ. -ի-Ն. Բ) կենսագրություններէն, որոնց ոճը ընդօրինակուած ու խոտորուած է անշուշտ. հրաշք ծնունդ մը որ ապագայ անհատին «քաջագործությունները» կ(աւետէ, կերպարի կենսագրութենէն ծիծաղելի դրուագներ, մանրավէպերու ընդմէջէն անոր բարոյական դիմանկարը, ուրիշներու հետ բաղդատութիւն մը»⁴: Ուշագրավ է, որ սկզբնական շրջանում գրած մի քանի դիմանկարներում Պեշիկթաշլյանի երգիծանքը դեռ մեղմ է, չափավոր, անգամ այն վաստակաշատ անձինք, ում նկատմամբ հեղինակն ինքը և հասարակությունն ունեն բարձր կարծիք ու խորին հարգանք, երգիծված են շատ ավելի մեղմ, անգամ՝ անվերապահ հիացմունքով: Այսպիսին են Արշակ Չոպանյանի և Վահան Թեքեյանի դիմանկարները: Ընդգծելով Չոպանյանի անմնացորդ նվիրումը հայ մշակույթին, շեշտելով նրա բացառիկ աշխատասիրությունը, բարոյական ու վսեմ կշիռը հայ հասարակության մեջ՝ երգիծաբանը փաստում է մեծ հայագետի համահայկական նկարագիրը. «Սը ձեռքը դրած է Հայաստանի վրայ, ձախ ձեռքը Միացեալ Նահանգներուն վրայ, աջ ոտքը Սուրիոյ վրայ, ձախ ոտքը Եգիպտոսին վրայ, իսկ գլուխը կմնայ Փարիզ»⁵:

Նույն կերպ է ծիծաղաբանված Վ. Թեքեյանի դիմանկարը: Նրան համարելով հայ քնարերգության գագաթներից մեկը, կարևորելով նրա բացառիկ աշխատասիրությունն ու գործի հանդեպ պատասխանատվության մեծ զգացումը՝ Պեշիկթաշլյանը գրում է. «Անիկա աղբիւր մըն է որ թէեւ կաթիլ-կաթիլ կը հոսի, բայց իր ջուրն առնուագն արծաթ է»⁶: Թեքեյանի կերպարի գեղարվեստականացումն ամբողջացնում են նրա կենցաղավարության մանրամասների երգիծումն ու պաշտոնների

այս կամ այն չափով պարտադիր պայման է, ապա նույնը չի կարելի ասել գրական երկի երևակայական հերոսի կերպարի մասին. «դիմանկար» բառի կիրառումն այստեղ, թերևս, ունի մի տեսակ ձևական բնույթ» (տե՛ս Ա. Մ ա կ ա ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 7):

⁴ Գ. Պ ը լ տ ե ա ն. նշվ. աշխ., էջ 528:

⁵ Ն. Պ ե շ ի կ թ ա շ լ ե ա ն. Ծաղրանկարներ, Փարիզ, 1938, էջ 22:

⁶ Նույն տեղում, էջ 38:

հանդեպ նախասիրության՝ որպես թուլության ծաղրումը. «Հոգի է տուած միշտ ազգային պաշտօններու համար: Պաշտօնի տիրանալէն վերջ ոչ միայն իր տուած հոգին տոկոսովը ետ է առած, այլ շատերուն ալ հոգին է հանած»⁷:

Պեշիկթաշյանի երգիծանքն առավել մեծ չափերի, տարատեսակ ճյուղավորումների, գեղագիտական հղկվածության է հասնում նրա հետագա ժողովածուներում: 1954 թ. տպագրված «Մումիաներ, նորագոյն ծաղրանկարներ» գիրքը նոր, թարմ, երգիծանքի ուժեղ շեշտադրումներով առանձնացող ժողովածու է, որում հումորի, սատիրայի, սարկազմի, գրոտեսկի հայեցակետերով են քննվել Սփյուռքի հասարակական-մշակութային հայտնի գործիչներ: Ճիշտ է, այս ժողովածուի մի քանի դիմանկարներ որոշ աղերսներ ունեն Հ. Պարոնյանի «Ազգային ջոջեր» ժողովածուի կերպարների հետ, երբեմն անգամ գեղարվեստական արժեքով զիջում են դրանց, սակայն Պեշիկթաշյանը, թեպետ երբեմն երկարաբանություններով ու պատումային անհարկի մանրամասներով, կարողացել է երգիծական ինքնատիպ հնարքներով, կերպարային արտաքին և ներքին զծերի բաղդատման ու միահյուսման, հակադրամիասնությունների միջոցով հասնել խոր ընդհանրացումների և գեղարվեստական ուրույն ամբողջացումների: Հատկապես այս ժողովածուում Պեշիկթաշյանը, նկարագրելով մարդու արտաքինը, հստորեն դա աղերսակցում է նրա ներքին էությանը. «Վարագդատ Թիւրապեան մեծ հասակով, մեծ գլուխով, մեծ փորով, մեծ յատակով՝ պզտիկ անձ մըն է: Իր աչքերը աւելի քան պզտիկ են, գրեթէ մէյմէկ ծակ: Այդ պատճառով, իր ամբողջ կեանքին մէջ, ոչ ոք չէ կրցած իր աչքը մտնել»⁸: Երգիծաբանը յուրաքանչյուր դիմանկարում առաջնային է համարում մարդու որակական հատկանիշները, կարևորում է նրա՝ ազգի համար ունեցած նշանակությունը և այս առումով դիտարկելով դիմանկարի հերոսին՝ ծաղրում, պախարակում է նրա ընչաքաղցությունը, պարսավելի վարքագիծն ու անօրեն գործունեությունը: Այսպես՝ երգիծաթերթերի խմբագիր Երիցանցի մասին գրում է. «Մկրտիչ Երիցանց Ռոտոսթոցի է: Ըլլալով տերտերի տղայ, շատ կերած է ժամուն նկանակը, նշխարը, մասն ու մատաղը: Մանաւանդ մատաղին համը բերանը մնացած է: Մեծնալով՝ ուզած է ամէն կենդանի արարած մատաղ ընել իրեն: Ձեռքէն եկածին չափ քանի մը ընկերներ վերածած է մատաղի»⁹:

Երգիծաբանի գրիչը հատկապես չէր խնայում մշակույթի այն գործիչներին, ովքեր արվեստի ուժը ծառայեցնում էին իրենց նյութապաշտ նկրտումների համար: Իբրև հասարակության սերուցքի՝ մշակույթի գործիչների մասին Պեշիկթաշյանն ուներ իր իդեալիստական հայեցակարգը, ըստ որի՝ արվեստի մարդը պետք է գերծ լինի նյութի հանդեպ պաշտամունքից, շահամոլությունից: Նա դա-

⁷ Նույն տեղում:

⁸ Ն. Պեշիկթաշյան. Մումիաներ, նորագոյն ծաղրանկարներ, Փարիզ, 1954, էջ 90:

⁹ Նույն տեղում, էջ 122:

տափետում էր մտավորականների՝ փող ու հասարակության մեջ դիրք ունեցող մարդկանց հանդեպ շողոքորթ վերաբերմունքը: Այս առումով սուր ծաղրանքի է ենթարկվում հայտնի երաժշտագետ, կոմպոզիտոր Օհան Դուրյանը: “Ո՛վ որ կ(ուզե՛ հայ ջոջուհիներուն հարստութեան աստիճանը գիտնալ՝ պարտի ուշադրութեամբ հետևիլ Օհան Տուրեանին՝ երբ ան խոնարհելով կը համբուրէ տիկիններուն ձեռները: Եթէ տիկինի մը առջեւ, մինչեւ անոր մէջքը խոնարհի՝ գիտցէք որ նէ յիսուն միլիոնի տէր է, եթէ մինչեւ ծունկը խոնարհի՝ հասկցէք որ տիկինը հարիւր միլիոնի տէր է, եթէ մինչեւ սրունքները խոնարհի՝ ապահով եղէք որ տիկինը հարիւր յիսուն միլիոնի տէր է: ... Այսպէս՝ Տուրեանին գլուխը՝ ոչ միայն չափատու մըն է, այլ նաեւ ճշգրիտ աստիճանաչափ մը, ցոյց տուող նսեմն ու վսեմը”¹⁰:

Հայ մտավորականի արժեհամակարգի եղծմանը երգիծաբանը վերաբերվում է չափազանց խիստ, այն ենթարկում անաչառ քննադատության ու գտնում՝ նրանց ստեղծած արվեստը նյութապաշտության դեպքում դառնում է ինքնանպատակ, չի ծառայում հանուր ժողովրդի շահերին, և առավել դատապարտելի է համարում է այն, որ, ըստ էության, նման մտավորականն արվեստի քողի ներքո սպանում է արվեստը: Այսպիսի յուրատեսակ հայրենասիրության դիրքերից Պեշիկթաշլյանը ծաղրի է ենթարկում նկարիչ Ջարեհ Մութաֆյանին. “Մինչ ուրիշ յիմար նկարիչներ նախ կը նկարեն եւ ապա կը սպասեն հիացողներու՝ Մութաֆեան ընդհակառակն առաջ հիացողներ կը ճարէ եւ յետոյ կը պատրաստէ նկարներ”¹¹: Կոմպոզիցիոն ճկուն ձևերը, “տեքստը տեքստում”¹² կիրառելու ոճական յուրօրինակ կատույցը՝ դիմանկարում այլ անձանց երգիծելու նպատակայնությամբ արված, ուշագրավ երգիծական հնարքը՝ հակադրամիասնությունը, այս դիմանկարը բացառիկ հղկվածություն ունեցող գրական-գեղարվեստական գործ են դարձնում: Ըստ

¹⁰ Նույն տեղում, էջ 133–134:

¹¹ Նույն տեղում, էջ 146–147:

¹² “Տեքստ տեքստում” կառույցի մասին Ս.-Ս. Հարությունյանը գրում է. “Մակայն “տեքստը տեքստում” կառույցը՝ որպես նշանագիտական երևույթ, և նրա հետ կապված ներքին շրջանակները պարտադիր ազուցիկ չեն և պայմանավորված չեն միայն պատմողի փոփոխությամբ. այդ երևույթը ավելի լայն է և կարող է տարբեր ձևերով դրսևորվել: ... Կարող է դրսևորվել նաև պատումի ընթացքի՝ իրադարձությունների տարածական և ժամանակային շրջանակների խախտումով, կամ հեղինակի անցումը պատումի մի գծից մի այլ գծի, որը հատուկ կերպով մերթ դրսևորվում է հիմնականի հետ գուգահեռ, մերթ ինչ-որ կարևոր պահերի հատվում է նրա հետ, ինչպես նաև՝ գլխավոր հերոսի մասին պատումից երկրորդական ինչ-որ մեկի մասին պատմության” (տե՛ս Ս.-Ս. Հարությունյան. Արվեստի նշանագիտական սահմանները, Երևան, 2017, էջ 409): Պատումի այսպիսի կառույցը հաճախադեպ է Պեշիկթաշլյանի ստեղծագործություններում:

երգիծաբանի՝ տասներկու առաքյալներին նկարելու համար Մութաֆյանը պատկերում է մշակութային տասներկու գործիչների, իսկ իր պատկերով՝ Հիսուսին. համեմատությունն ավելին է, քան ծիծաղ շարժելը: Ծիծաղաստեղծ տարբեր միջոցներով՝ անգուգադրելիների գուգադրմամբ, հակոտնյա արժեհամակարգերի համապատասխանեցմամբ, ծաղրվում է այն մտավորականի տիպարը, որն իր ստեղծագործությունն աստվածային արարչագործություն է համարում:

Պեշիկթաշյանի ծաղրանքի հիմնական թիրախը նաև իր գործընկերներն էին, ու պատահական չէ, որ մի շարք դիմանկարներում երգիծաբանն իր սուր գրիչն առանց երկմտանքի ծառայեցնում է նրանց ծաղրելու համար և շատ հաճախ հանիրավի արժանանում թշնամանքի: Հատկապես անխնա երգիծվում է «Անդաստան» պարբերականի խմբագիրը՝ Բյուզանդ Թոփալյանը, որ բազմաթիվ վրիպակներ էր թույլ տալիս. այսինքն՝ ըստ հեղինակի՝ անբարեխիղճ էր ու անփույթ ազգապահպանմանը միտված գործում. «Թոփալեան ունի իր փիլիսոփայությունը. – Աշխարհը Աստուծոյ մէկ վրիպակն է: Կեանքն ալ վրիպակներու շարք մըն է: Վերջապէս ամէն ինչ վրիպակ է: Եւ աշխարհին ու կեանքին, աւելի ճիշտը վրիպակին հանդէպ սէր ունի: Ինք մէկ բանով մեծ է. իբրեւ վրիպակ»¹³:

Պեշիկթաշյանը մարդուն, առանձնապես գրականության մարդուն ճանաչելու և գնահատելու առումով կարևոր այլ չափանիշ էր համարում նրա ազնվությունն ու համեստությունը: Երգիծաբանի կարծիքով՝ գիտության մեջ անգամ պետք է ազնիվ լինել, գրական տեքստերը քննադատելու և արժևորելու, գրականագիտական չափորոշիչ սկզբունքներում՝ առավել ևս, որևէ բանաստեղծի կամ մտավորականի անդրադառնալիս պետք է պահել չափի զգացումն ազնվության չափանիշներով: Ըստ երգիծաբանի՝ իսկական քննադատությունը կաղում է ու անշնորհակալ զբաղմունք է, այնինչ Թոփալյանի գրաքննադատության մեջ գերակշռում են անհիմն գովքն ու պանծացումները. «Հոգին կուտայ զինքը գովողին ու հոգին կ(առնէ զինքը քննադատողին: Այնքան հոգին ասոր անոր տուած է որ մնացած է անհոգի»¹⁴:

Պեշիկթաշյանը, դիտարկելով մտավորականության հոռի կողմերը համեստության և մեծամտության հակոտնյայով, գտնում է, որ հայ մտավորականը, մասնավորապես գրողը, ի հակակշիռ համեստության, մեծամտության ախտով է տառապում. երգիծաբանը մտավորականության այդ ախտին անդրադառնալիս չի վարանում բավական խիստ լինել անգամ Չոպանյանի դեպքում, թեկուզ ժամանակին նրա դիմանկարը բարեբեր լույսի ներքո էր վրձնել. «Ըստ Շաւարշ Նարդունիի ալ առաջին բանաստեղծը Նիկողոս Մարաֆեանն է: ... Հայ համայնավարնե-

¹³ Ն. Պեշիկթաշյան. Մոմիաներ, նորագույն ծաղրանկարներ, էջ 153:

¹⁴ Նույն տեղում, էջ 138–139:

րուն համար անշուշտ առաջին բանաստեղծը Միտալն է, իսկ Արշակ Չօպանեանի համար՝ միակ, մեծ, ազգային ու առաջին բանաստեղծը Արշակ Չօպանեանն է: Այս բոլորը կը հաստատեն մեկ բան. – Թե՛ չունինք առաջնակարգ բանաստեղծ մը, որ բացարձակապես պարտադրած ըլլար ինքզինքը ամէնուն¹⁵:

Գրականության անդաստանում այլոց չտեսնելու, ինքնահռչակման միտումների, ինքնամեծարման, ինքնագովության դեմ է երգիծաբանը հանդես գալիս և “Կոստան Չարեան” դիմանկարում, որը մեծ գրողի գործունեության երգիծական համայնապատկերն է՝ նուրբ ու տեղին կամիթներով, երբեմն իրոնիկ ժպիտներով ու համեմատությունների զանազան դրսևորումներով: Հատկապես շեշտվում է Կ. Չարյանի գրողական մեծամտությունն այլ գրողների հետ համեմատության մեջ. “Իմ գրականութիւնը թե՛ հայաստանեան է, թե՛ սփիւռքային, թե՛ խորք, թե՛ թոնչ, թե՛ լայնք, թե՛ կենտրոն: Ասում եմ ի՛մ գրականութիւնը, որի մէջ կայ եւ՛ Նահապետ Քուչակ, եւ՛ Նարեկացի, եւ՛ Շիրակացի, եւ՛ Շնորհալի, եւ՛ Սայաթ Նովա, եւ՛ Տանթե, Տանուցիօ, Օսքար Ուայլտ, Ունամունօ, հանճարների էսքոզիցիա ...”¹⁶: Ուշագրավ է, որ Պեշիկթաշյանն աչառու վերաբերմունք է դրսևորում այստեղ, Չարյանի կերպարը դիտարկում առարկայնության հայեցակարգով, գրում է տարակուսելի երգիծաբանությամբ, որը դառն ու անողոք շեշտեր ունի: “Չարեան իբրեւ գրագէտ կախարհ մըն է: Իր գրականութիւնը երփներանգ, նկարչագէտ ու շլացուցիչ լուսախաղութիւն մըն է, ճոխացած մտածումի մասերով, սանձարձակ քնարերգութեամբ, երեւակայութեամբ, հեզնանքով եւ փիլիսոփայութեամբ: Ասոնք իր անուրանալի առաւելութիւններն են: Ունի սակայն, մեծ պակաս մըն ալ. – Իր լուսախաղութեան լոյսին ակը իր հոգին չէ: Չարեան ունի արուեստական հոգի մը: Անընդունակ է տառապանքի: Անկեղծութիւնը բացակայ է: Չարեանի կը պակսի Միրտը, որուն արուեստականն իսկ չունի: Հակառակ մեծ պակասին, կը հիանամ իր մոգական տաղանդին վրայ”¹⁷:

Ն. Պեշիկթաշյանի՝ վավերական ու ապշեցուցիչ նմանությամբ ստեղծած այս հրաշալի ծաղրանկարների մասին է վկայում քննադատ Հ. Ադապյանը՝ միննույն ժամանակ շեշտելով այդ դիմանկարների “յորդուն ու երբեմն ինքնահոս առատախօսութիւն”-ը և “գրութեանց մէջ հապճեպը”¹⁸:

Հայի տարածքային հավաքական առանձնատիպը

¹⁵ Նույն տեղում, էջ 156–157:

¹⁶ Նույն տեղում, էջ 42:

¹⁷ Նույն տեղում, էջ 34:

¹⁸ Յ. Ա. դ ա ս ե ա ն. Երգիծանքը եւ իր վարպետները արեւմտահայ արդի գրկնթ. մէջ. – “Ակոս” (Բեյրութ), 1952, թիվ 5, էջ 117:

Ն. Պեշիկթաշյանի երեսուներեք հավաքական-ընդհանրական դիմանկարները գետեղված են նրա “Հայ աղբրտիք”, “Մեր պարտեզեն”, “Մեր դրախտեն” ժողովածուներում: Թեպետ գրականագիտության մեջ այս տիպի ծաղրանկար-դիմանկարը ժանրի վերաբերյալ տարակույսներ է ծնում, այդուհանդերձ, կարելի է համարել, որ այսպիսի ընդհանուր դիմանկարները, իրոք, դիմանկարային ժանրի գործեր են: Պեշիկթաշյանը ևս այս դիմանկարներում հավաքականության փորձով, դեղուկտիվ մտահանգումների միջոցով ընդհանուրն ամբողջացնում ու դարձնում է համաձույլ, եզակի դիմանկար-կերպար:

1941 թ. հրատարակված “Հայ աղբրտիք” ժողովածուն Նահանջի գրականության յուրատեսակ դրսևորում է, որը, սակայն, նահանջողների մասին չէ. այն հայրենասիրական մի մատյան է, որը՝ նահանջողներին հայրենասիրության, ազգային արժեքների, ազգային լավագույն որակների և, հետևաբար, ազգապահպանության է կոչում օտար հողում: Ժողովածուն գեղարվեստականացման հոլովությամբ փորձում է մի անըստգուտ անջրպետ դառնալ ամենակույ ուժացման դեմ. Պոլսեցու, Ակնեցու, Խարբերդցու, Իզմիրցու, Տարոնցու, Կեսարացու, Վանեցու և այլոց պատկեր-կերպարները ինչ-որ առումով դառնում են աշխարհագրական տարածքի կրողներ, տարածք, որ “մնացորդացի” համար պետք է հառներ որպես կորսված Արևմտյան Հայաստան: Եղենից մնացած, հոգում անթեղված ցավը այս դեպքում թույլ չի տվել գործածել երգիծաբանի սատիրիկ գրիչը: Երգիծանքն այս դիմանկարներում մեղմ է, բարեհոգի կամիթներով՝ անչար ծիծաղով: Ընդհանուր բնորոշումները կատարված են ոճական բազմաթիվ հնարքներով՝ բառային կրկնություններ, հոմանիշների ու հարանունների միաժամանակյա ընտրություն, անհամեմատելիների համեմատություն, հակադրամիասնության կիրարկում և այլն: Իհարկե, Պեշիկթաշյանի ոճին հատուկ որոշ երկարաբանություններ և տեքստային ծանծաղուտներ կան, այդուհանդերձ, կարելի է պնդել, որ վերոնշյալ ժողովածուները, մասնավորապես “Հայ աղբրտիք” գիրքը, շահեկան ստեղծագործություններ են: Նրա հայեցակարգի կարևորագույն դրույթը, ինչպես նշվել է, ազգի բարօրության, ինչու չէ, փրկության համար համահայկական չափորոշիչներով առաջնորդվելն է: Այս համատեքստում երգիծաբանի համար առաջնային գործոններ են դարձել ազգային թերությունների մերժումն ու, ընդհակառակը, հատկանշավոր լավագույն որակների վերհանումը և ընդգծումը: Թերությունները, իհարկե, շատ են, բարեհոգի քննադատում է Պեշիկթաշյանը և սրանցում պատկերաբանում ընտանեկան անհավատարմությունը. “Ատափազարցին իր հոգին կուտայ իր ընտանիքին համար: Ուրիշին ընտանիքին համար ալ մարմինը կուտայ: Այսպէսով իրեն կը մնայ իր հագուստ կապուստը միայն”¹⁹: Մյուս կողմից էլ՝ այս թերության

¹⁹ Ն. Պեշիկթաշյան. Հայ աղբրտիք, Փարիզ, 1941, էջ 38:

պախարակումը խոսքի կոմիզմի՝ բառային համանունների, ծիծաղ պարզեղու արտահայտչական ձևերի միջոցով վերածվում է հեղինակի՝ կնոջ հանդեպ ունեցած ջերմ ներողամտության:

“Բզմիրցին, տօնական առիթով, իր կնոջը կ(ըստ.

– Գոհարս, քեզի ծաղիկ բերի:

Իսկ իր դրացիին կամ սիրուհիին կ(ըստ.

– Ծաղիկս, քեզի գոհար բերի:

Յետոյ անպատճառ եկեղեցի կը փութայ ու Աստուածամօրը կ(ըստ.

– Երկու մեղք ունիմ: Առաջինը՝ Գոհարին հետ ծաղիկով գործուած ու երկրորդ մեղքս՝ Ծաղիկին հետ գոհարով գործուած: ... Մոմերու բոցով տաքցած արցունքներովս սրբէ մեղքերս, ո՛վ ծաղկագոհար Աստուածամայրս”²⁰:

Հայի բնավորության մեջ, լինի նա կեսարացի, վանեցի, թե ակնեցի, ամուր է նստած վաճառականի նյութապաշտությունը. սա երգիծաբանի մյուս թիրախն է. “Կեսարացիին դաւանանքը առուտուրն է, տաճարը՝ շուկան, խորանը խանութը: Իր աստուածը ոսկի հորթը, սուրբը՝ արծաթը ու սրբուհին կամ սիրուհին՝ գոհարեղէնը”²¹: Գրոտեսկի միջոցով Պեշիկթաշյանը հասնում է ազգային հատկանիշների ծաղրման խոր ընդհանրացումների: “Վանեցիին սիրտը ոսկի, հոգին ոսկի, աստուածը ոսկի է: Ան կը բանի կամ ոսկիի տակ, կամ ոսկիի վրայ: Վանեցիին քսակը գոց է, սակայն, սեղանը բաց: Ձեռքը գոց է, բերանը բաց: Գլուխը գոց է, ճակատը բաց: Վանեցիին ականջը գոց է, սակայն, աչքը շատ բաց”²²:

Պեշիկթաշյանի երգիծանքի շերտերը զգալի են դարձում մարդկային և ազգային հատկանիշների քննման-երգիծման ներզգայական արտահայտչականությունը: Եթե հեղինակը թեթև կամիթներով է պատկերում ազգային դիմագծի մաս կազմող որակական հատկությունները, ապա բացասական հատկանիշները պախարակում է երգիծանքի առավել սուր շեշտադրումներով: Առևտրականությունից բխած խաբեբայությունը, ըստ հեղինակի, պատիվ չի բերում ազգին: Իր բոլոր ստեղծագործություններում պահպանելով ազնվության սկզբունքի առաջնայնությունը՝ նա, անշուշտ, հենց այդ դիրքից է դատապարտում խաբեբայությունն ու ցավով արձանագրում բարոյական պարկեշտության բացակայությունը, որն աղճատում է մարդկային ամենալավ որակները, հատկապես ազգապահպան հայրենասիրությունը: Պեշիկթաշյանն այսպանելի երևույթ է համարում կեղծ հայրենասիրությունն քարոզելը և այս առումով առանձնացնում է Պոլսեցուն. “Կրնայ յարութիւն առնել, իբրեւ հայ քրիստոնէայ, եթէ կազմուի մեծ Հայաստան մը, ամէն յարմարութիւններով, բոլոր հանգստաւէտութեամբ: Սանկ երիտասարդուհի Հայաս-

²⁰ Նույն տեղում, էջ 27:

²¹ Նույն տեղում, էջ 21:

²² Նույն տեղում, էջ 11:

տան մը, ընկողմանած սնդուսներու, մետաքսներու, ժանեակներու եւ ժապաւէններու մէջ: Ահա այն ժամանակ Պոլսեցին կ(երթայ Հայաստան իբրեւ կնամեծար կամ շրջիկ. կը յուզուի կը փղձկի, կը գրէ ոտանաւորներ, նուէրներ ալ կ(ընէ, եւ քաջաբար ակոյ մըն ալ քաշել կուտայ այնտեղ, իր արիւնով ալ ոռոգած ըլլալու համար իր “անուշիկ” հայրենիքին հողը”²³:

Պեշիկթաշլյանը, բարձր գնահատելով մայրենի լեզուն ու ազգային մշակույթը՝ որպէս նահանջի դեմ խոյսցող պատնէշ, և հետնելով դարի երգիծաբանության լավագույն ավանդույթներին ու միտումներին, տրամաբանական մտահանգումների բյուրեղացումները հավաքագրելով, մեկտեղում, ընդհանրացնում է գրեթէ բոլոր դիմանկարներն ազգային հավաքական մի կերպարի մէջ՝ սինթեզելով դրանցում եղած դրական, լուսավոր բոլոր հատկությունները: “Հայ աղբրտիք” ժողովածուի կերպարաստեղծման ուրույնության, երգիծման յուրատեսակ ձևն աներկբայորեն բարձր է գնահատում գրականագետ Գ. Հակոբյանը. “Պեշիկթաշլյանի դիմանկարների այս շարքում բաղիյուսված են ժանրի վիճակմանյան սահմանման տիրույթները, գրոտեսկային-տպավորապաշտական բնագրաստեղծ տարրերը՝ առաջադրելով Հոֆման-Պրուստ-ական կիրարկման հայեցի այնպիսի ընթերում, որտեղ ժանրակազմիչ հուշագրականության ելակետը, դիմանկարումի ես-հավաքականություն ընթացականության հակադարձականությամբ, սպահովագրեց դեմք-ես սինթեզ-վախճանակետը”²⁴:

Հայի ժամանակային ընդհանրական առանձնատիպը՝ Հայը

Հայի տիպերի մէջ հայերեն խոսքն անսպակ պահելու, հայի ազգային դիմագիծը պատվով պահպանելու սկզբունքները բացառապէս էաբանական են Պեշիկթաշլյանի համար: Այս առումով նրա երգիծանքն իր տեղը գիջում է անթաքույց հարգանքի, մեծարումի ու պատկառանքի. Վանեցու, Տարոնցու, Խարբերդցու օրինակով իր ժամանակակիցների դաստիարակությանը նա ներարկում է սիրո ու ազգային հպարտության ահռելի չափաբաժին: “Խարբերդցին կրնայ փոխել իր կրօնքը, իր հպատակութիւնը, իր գոյնը, իր լեզուն նոյնիսկ, սակայն հաւատարիմ կը մնայ խարբերդցիութեան որ իրեն համար թէ՛ ազգութիւն է, թէ՛ հպատակութիւն է, թէ՛ կրօնք է, թէ՛ կուսակցութիւն, թէ՛ աղանդ, թէ՛ արուեստ կամ արհեստ”²⁵: “Մեր պահել ուզած գիրն ու լեզուն, պատմութիւնն ու հէքեաթը, երգն ու պարը եւ

²³ Նույն տեղում, էջ 7:

²⁴ Գ. Հակոբյան. Ինքնության գեղարվեստական կերպընկալման ուրվագրերից (Նշան Պեշիկթաշլյանի դիմաստվերների առիթով). – “Գարուն” (Երևան), 1998, նոյ./դեկ., էջ 50:

²⁵ Ն. Պեշիկթաշլեան. Հայ աղբրտիք, էջ 35:

ուխտն ու հոգին Տարօնցիինն է առաւելապէս: Ան է հնօրեայ գանձապահը դարերէն եկող մեր հարստութեան”²⁶: “Վանեցին անձուլելի, անպատուաստելի, անբաղադրելի է, սակայն, իբրեւ Հայ: Եթէ, օր մը, բոլոր Հայերը օտարանան, Վանեցին է որ Հայ պիտի մնայ յաւիտեան ու կենդանի պիտի պահէ հայութիւնը”²⁷:

Միով բանիվ՝ դիմանկարների տարածականության մեջ բնակենտրոն նշանակություն տալով ազգայնությանը՝ Պեշիկթաշյանը ցցուն կերպով մատնանշում է հայկականությունը՝ որպէս ազգապահպան նշանակություն ունեցող իմացաբանական խորք: Ի մի բերելով հայի հարափոփոխ ինքնության²⁸ գեղակերտման վերնում քննված ձևերը՝ երգիծաբանը դրանք ամփոփել-ամբողջացրել է որպէս մի ընդհանրական գեղարվեստականացման բացառիկ նմուշ՝ այն՝ “Հայր” դիմանկարը, արդարև, դարձնելով դիմանկարների գագաթնակետ: Հայ գրականության պատմության մեջ, անտարակույս, Հայի դիմանկարի ստեղծաբանումը՝ տարբեր ժանրային դրսևորումներով ու տարբեր ընդգրկվածությամբ, ունի իր ակունքները: Արդարև, Ն. Պեշիկթաշյանի “Հայր” հիմնավոր զուգորդումներ ունի Հովհաննես Թումանյանի, Ուիլյամ Սարոյանի, Լևոն Շանթի, Դերենիկ Դեմիրճյանի ստեղծած համանուն կերպարների հետ, քանզի հղացքն ընդհանուր է, բայց և յուրաքանչյուրն առանձնահատուկ է՝ պայմանավորված ժանրային ու ոճային պարտադրումներով, գրողի արժեհամակարգով և հայեցակարգով, անգամ աշխարհագրական տեղանքով՝ բնակության վայրով: Տարբեր ու հիմնային առանձնահատկություններ ունի և Ն. Պեշիկթաշյանի “Հայր” դիմանկարը: Կերպարաստեղծման նույն օրինաչափություններն են այստեղ ներկա, ինչ մյուս դիմաստվերներ-դիմանկարներում: Սուր շեշտերով քննադատվում, պախարակվում ու երգիծվում են հայի արատավոր բարքերն ու հատկանիշները՝ նյութամոլությունը, նախանձը, խորամանկությունը, վախկոտությունը և այլն: Երգիծաբանության տեսարան Անրի Բերգսոնի “Օիծաղ” (Le Rire) գործի²⁹ որոշ մտքերի հետևելով՝ Պեշիկթաշյանը Հային համարում է հրեշտակի ու սատանայի խառնուրդ³⁰ և բաղդատում է նրա նյութական ու

²⁶ Նույն տեղում, էջ 51:

²⁷ Նույն տեղում, էջ 13:

²⁸ “Հայ ազգի ինքնությունը ապրիորի անփոփոխ չէ, այն անցել է պատմական զարգացման երկար և ինքնօրինակ ճանապարհ”,– գտնում է Օ. Սարգսյանը [Օ. Լ. Саркисян. Армянская идентичность: проблема синтеза моделей “культурно-исторической” и государственной нации.– Проблемы национальной идентичности в контексте современной глобализации (материалы международной научной конференции, 3–4 ноября 2017 г.). Ереван, 2017, с. 136]:

²⁹ Տե՛ս Գ. Պրլտեան. նշվ. աշխ., էջ 524:

³⁰ Հետաքրքիր զուգատիպությամբ՝ Պեշիկթաշյանը երգիծաբանի էության մասին նույն կերպ է խոսում “Մոմիաներ”-ի առաջաբանում, ինչը ևս մեկ անգամ վկայում է Ա.

հոգևոր հասկանիչները՝ անկուշտ ազահությունը դրամի և անողոք անտարբերությունը արվեստի հանդեպ՝ օտարամտության ֆոնին. “Ինչ որ իրն է ու անմիջապես դրամի չի վերածուի՝ չի գնահատեր: Օրինակ իր տաղանդաւորները: Բայց վա՛յ եթէ իր ցեղին պատկանող միջակ մը ստանայ օտարներու ներբողականը՝ չտեսի մը նման, մեծով պզտիկով, բարեկենդան կը սարքէ, կ(ուռի եւ կը պայթի”⁸¹: Հայի նախանձը և հայի մարդասիրությունը, ըստ երգիծաբանի, գոյատևում են կողք կողքի. “Ինկի՛ր ու Հայր ձեռք մը կուտայ քեզի: Ելի՛ր ու կ(ընդունիս իր ոտքը կամ նախանձէն եկող կիցը որ սակայն ազգօգուտ է, որովհետեւ կը մարզէ քեզ եւ պատճառ կ(ըլլայ որ պինդ կենաս ու ա՛լ չիյնաս”⁸²: Ոճական բազմաթիվ հնարքներով շաղկապելով անհամեմատելիները, համեմատելով հակոտնյա հասկանիչները, միաժամանակ երգիծաբանելով դրական ու բացասական կողմերը՝ նա փաստում է, որ “Հայր” պարադոքսալ երևույթ է՝ բարի ու նախանձ, աշխատասեր և նպաստառու, վախկոտ ու հերոս, կուսակցական և անիշխանական, բայց նաև այլ աշխարհներին բարձունքից նայող հաղթական մարդ. “Հայր իր տառապանքին չափ բարձր էակ մըն է”⁸³:

* * *

“Մեր պարտեզէն” (1947) և “Մեր դրախտէն” (1948) ժողովածուներում ևս ընդհանրական դիմանկարներ են՝ ըստ ոլորտի, մասնագիտությունների, սեռի և այլն: Հումորի, հեզանքի, սարկազմի միջոցով Պեշիկթաշյանը կարողանում է հասարակության տարբեր շերտերից տիպաբանական կերպարներ ստեղծել՝ ընդհանուրից եզակիին և հակառակը կառուցվածքով: Երգիծվում են բժիշկները, լեզվաբանները, ազգային ու քաղաքական, կուսակցական գործիչները, դերասանները, քրիստոնյաները և այլն: Հատկապես սուր է ազգային կուսակցական գործիչների հանդեպ ծաղրը, որը հետագայում “Ընկեր Փանոս” (1942), “Մուրատ Տավիտ” (1942), “Տանկ” (1958) երգիծավեպերում գրողը դարձնելու է առանցքային խնդիր: Մին գաղափարախոսության, կեղծ ազգասիրության մասին Պեշիկթաշյանը խոսում է բառախաղերով, թյուրատեսության, անհամապատասխան երևույթների զուգադրության, “մեծ ջանքերի և ոչինչ արդյունքի” տեսության եղանակներով:

Բերգսոնի ազդեցության մասին: “Ֆէնտմէն մըն է ան (երգիծաբանը – Ն. Բ.), որուն մէջ հաշտուած են հրեշտակն ու սատանան եւ իրարու հետ կը գործակցին ներդաշնակօրէն: Արդէն այդ երկուքին աշխատակցութիւնը կայ արուեստի որեւէ գործի մէջ, բայց մանաւանդ երգիծանքին” (տե՛ս Ն. Պեշիկթաշյան. Մումիաներ նորագոյն ծաղրանկարներ, էջ 8):

⁸¹ Ն. Պեշիկթաշյան. Հայ աղբրտիք, էջ 55:

⁸² Նույն տեղում:

⁸³ Նույն տեղում, էջ 57:

Մարկագլխիկ բնութագիր է ստանում այն ազգային գործիչը, որի մտահոգությունը իր մորթապաշտությունն է. “Ազգային գործիչը դարձնարձիկ մարդ մըն է: Լեզուն կը դառնայ, աչքը կը դառնայ, խելքը կը դառնայ, զուխը կը դառնայ: Երբեմն ոտքն ալ կը դառնայ ու մէկ կուսակցութենէն կ’(իյնայ միւս կուսակցութեան մէջ”³⁴:

Ժողովածուն փակվում է Ն. Պեշիկթաշյանի իմաստասիրական խոփափիլիսոփայությունը կրող, պատերազմի և խաղաղության մասին էսսեատիպ մտածումներով: Իր կյանքում և ոչ վաղ անցյալում համաշխարհային երկու պատերազմ տեսած, իր ազգի ու համայն մարդկության ճակատագրով մտահոգ մեծ երգիծաբանը կարևորում է խաղաղությունը, հայության գոյակցումն առանց պատերազմի, առանց կուսակցական ազգապառակտիչ գործունեության, միննույն ժամանակ քաջ գիտակցում պատերազմի և խաղաղության նուրբ սահմանի էությունականությունն ու սահմանագծերում ապրող հասարակության աղճատման վտանգավորությունը: “Խաղաղութիւնը պատերազմի համար կ’(աշխատի: Պատերազմն ալ խաղաղութեան համար կ’(աշխատի, կ’(ըսեն: Խաղաղութեան ժամանակ, մէկը, երբ “կեցցէ՛ պատերազմը” պոռագ՝ դաւադիր է: Պատերազմի ժամանակ մէկը որ “կեցցէ խաղաղութիւնը” պոռագ՝ դաւաճան է”³⁵:

Դիմանկարային իր ժողովածուներով Ն. Պեշիկթաշյանը նոր որակ ու խոսք բերեց հայ գրականության մէջ՝ իմացաբանական ինքնագիտակցությամբ պարզելով ազգային ճանաչողական արդի չափանիշներ:

Նաիրա Բալայան – բ. գ. թ., դոցենտ, ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող, Երևանի “Հայբուսակ” համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ և դասախոս: Գիտական հետաքրքրությունները՝ Մփյուռքի գրականություն, գրականության տեսություն ու քննադատության հիմնախնդիրներ, նորագույն և արդի գրականության հիմնահարցեր: Հեղինակ է շուրջ 20 հոդվածի, ուսումնական ձեռնարկի: nairamelsiki@gmail.com

REFERENCES

- A. Makaryan.** Arevmtahay grakan dimankarə, Ye’rev’an, 2002 (In Armenian).
G. Hakobyan. Inqnut’yan gegh’arvestakan kerpənkalman urvagreric (Nsh’an Pesh’ikt’ash’lyani dimastverneri ar’it’ov).- “Garun”, Ye’rev’an, 1998. Noy.-dek. (In Armenian).
G. Pilityan. Fransahay grakanut’ivn. 1922-1972, Ye’rev’an, 2017 (In Armenian).

³⁴ Ն. Պեշիկթաշյան. Մեր դրախտէն, Փարիզ, 1948, էջ 29:

³⁵ Նույն տեղում, էջ 151:

- H. Agh'asyan.** Ye'rgic'anq'ə yev' ir varpet'nerə arevmt'ahay ardi grakanut'yan mej, "Akos", Beyrut', 1952, t'iv 5 (In Armenian).
- N. P'esh'ikt'ash'lean.** Hay agh'brtiq, Pariz, 1941 (In Armenian).
- N. P'esh'ikt'ash'lean.** Mer drakh'ten, Pariz, 1948 (In Armenian).
- N. P'esh'ikt'ash'lean.** Momianer, Noraguyn c'agh'rankarner, Pariz, 1954 (In Armenian).
- N. P'esh'ikt'ash'lean.** C'agh'rankarner, Pariz, 1938 (In Armenian).
- O. L. Sarkisjan.** Armyanskaja identichnost: problema cinteza modeley "kul'turno-istoricheskoy" i ,rosudarstvennoyĭ nacii.- Problemi nacionalnoy identichnost'i v kontekste sovremennoy globalizacii (materiali mezhdunarodnoy nauchnoy konferencii 3-4 noyabrya 2017g.), Jerjevan, 2017 (In Russian).
- S.-A. Harut'yunyan.** Arvesti nsh'anagitakan sahmanerə, Ye'rev'an, 2017 (In Armenian).

ОТОБРАЖЕНИЕ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ В ЛИТЕРАТУРНЫХ ПОРТРЕТАХ НШАНА ПЕШИКТАШЛЯНА

НАИРА БАЛАЯН

Резюме

Ключевые слова: Ншан Пешикташлян, диаспора, борьба с ассимиляцией, литературный портрет, юмор, армянская идентичность, национальная черта, художественность образа.

Известный писатель армянской диаспоры Ншан Пешикташлян (1896–1972) родился в Константинополе, где он получил образование, а после смирнинской катастрофы 1922 года переехал в Париж, где преподавал армянский, а затем полностью посвятил себя литературе. Он написал и опубликовал множество литературных произведений, сотрудничал с различными периодическими изданиями и редактировал многие армянские журналы диаспоры. В богатом творчестве Пешикташляна новыми гранями заблестал жанр литературно-юмористического портрета, нашедший свое место в некоторых сборниках.

Среди свыше ста портретов, написанных в присущей писателю манере неподражаемого юмора, выделяются два типа: индивидуальные, в которых высмеиваются известные представители армянской интеллигенции того времени, и собирательные, в которых обобщены национальные особенности отдельных провинций и городов Западной Армении. В качестве художественного обобщения второго типа следует отметить литературный портрет «Армянин».

В сущности, посредством этих портретов, которые являлись художественно-документальным отображением армянской идентичности, писатель боролся с угрозой ассимиляции армян в диаспоре.

Наира Балаян – к. филол. н., доцент, старший научный сотрудник Института литературы им. М. Абегамяна НАН РА, преподаватель и заведующая кафедрой армянского языка и литературы в Ереванском университете «Айбусақ». Научные интересы: проблемы

литературы диаспоры, теории литературы и критики, вопросы новейшей и современной литературы. Автор около 20 статей, учебного пособия. nairamelsiki@gmail.com

CHARACTERISATION OF ARMENIAN IDENTITY
IN NSHAN PESHIKTASHLYAN'S LITERARY PORTRAITS

NAIRA BALAYAN

S u m m a r y

Key words: Nshan Peshiktashlyan, Diaspora, struggle against assimilation, literary portrait, satire, Armenian identity, national character, the artistry of the character.

Famous Armenian Diaspora writer Nshan Peshiktashlyan (1896-1972) was born in Constantinople, where he was educated and after the Smyrna catastrophe in 1922, he moved to Paris where he started teaching Armenian. Later he devoted himself entirely to the literature. He wrote and published numerous works, worked with various periodicals and edited various Diaspora Armenian magazines. In his rich and diverse oeuvre he gained the genre of a literary-satirical portrait of a new quality, which took its place in a number of collections.

There are over 100 portraits created separately by the author's unique humor where the Armenian intellectuals of that time are mocked, and the collective in which the national peculiarities of the provinces and cities of Western Armenia are introduced. The literary portrait of "The Armenian" should be highlighted as an artistic consolidation of the second type. In essence, by means of these portraits presenting the artistic-documentary reflection of the Armenian identity the writer struggled against the danger of assimilation of Armenians in Diaspora.

Naira Balayan – Candidate of Philological Sciences, Associate Professor, Senior Researcher at the NAS RA Institute of Literature after M. Abeghian, lecturer at the Chair of the Armenian Language and Literature at Yerevan "Haybusak" University. Scientific interests: the problems of Diaspora literature, literature theory and criticism, as well as various issues of contemporary and modern literature. Author of 20 critical articles. nairamelsiki@gmail.com

ՆՇԽԱՐՆԵՐ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԻՑ
(Նոր Նախիջևանի հիմնադրման 240-ամյակի առթիվ) *

ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱԶԼՅԱՆ

Բանալի բառեր՝ Ղրիմ, Դոնի Ռուստով, Նոր Նախիջևան, Ռուսաստան, բանասաց, բանավոր ավանդություն:

1768–1774 թթ. ռուս-թուրքական պատերազմում Ռուսաստանի հաղթանակից հետո վերջինիս հեղինակությունն ավելի էր աճել: Ուստի թուրք-թաթարական տիրապետության լծի տակ հեծող Ղրիմի հայերն իրենց հայացքն ուղղել էին Ռուսաստանի կողմը:

1778 թ. ամռանը գեներալ Ա. Վ. Սուվորովի գլխավորությամբ կազմակերպվել է 12.600 ղրիմահայերի գաղթը դեպի Ռուսաստան: Եկատերինա Երկրորդ կայսրուհին 1779 թ. նոյեմբերի 14-ին ռուսերեն և հայերեն գրված շքեղ հրովարտակով բազմաթիվ արտոնություններ է շնորհել նորահաստատ հայ գաղութի բնակչությանը, և արդյունքում Դոն գետի ափին հիմնադրվել է Նոր Նախիջևան քաղաքն իր շրջակա գյուղերով¹:

Նոր Նախիջևանը կառուցվել է ռուս հայտնի ճարտարապետ Ի. Ե. Ստարովի նախագծով: Քաղաքն ունեցել է կենտրոնաձիգ փողոցներ, կենտրոնում՝ հրապարակ, որը շրջապատված էր առևտրականների ու արհեստավորների (դերձակ, ոսկերիչ, ատաղձագործ, պայտառ, կաշեգործ, պատշար և այլն) խանութներով: Քաղաքից ոչ հեռու հիմնվել են Չալթր, Թոփթի, Մեծ Սալա, Փոքր Սալա, Նեսվիթա հայկական գյուղերը, որոնք կազմել են հայկական գաղթավայրի անբաժան մասը:

Նոր Նախիջևանն ինքնավար է եղել, ունեցել է 24 հոգուց բաղկացած քաղաքային Դումա և հայ քաղաքապետ: Հայկական մագիստրատում (քաղաքային վարչություն) ներկայացված է եղել տեղի դատարանը՝ ոստիկանական և գործադիր իշխանության իրավունքներով: 1811 թ. հայկական գյուղերում հիմնվել են տանուտերի ընտրովի

* Ընդունվել է սպագրության 26. III. 2019 թ.: ԵՊՀ-ի պատմության ֆակուլտետի հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ: Հոդվածը սպագրության է երաշխավորել զիտական դեկավար, պ. գ. դ., պրոֆեսոր Ա. Հայրունին (8. II. 2019 թ.):

¹ Տե՛ս Վ. Բ. Բարխուդարյան. Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1779–1861 թթ.), Երևան, 1967, էջ 63, 70–71:

պաշտոններ և 5 հոգուց բաղկացած ավագանու խորհուրդ: Հաստատվել է Նոր Նախիջևանի զինանշանը՝ հայերի աշխատասիրությունը խորհրդանշող մեղունների և փեթակների պատկերով:

Նոր Նախիջևանի հայերն զբաղվել են գյուղատնտեսությամբ (հացահատիկի մշակում, խաղողագործություն, ոչխարագործություն, շերամապահություն), արհեստագործությամբ (կաշեգործություն, ոսկերչություն, դարբնություն, պայտառություն, դերձակություն), արդյունաբերությամբ (ճարպի, բրդի, մետաքսի, աղյուսի, ծխախոտի արտադրություն) ու առևտրով: Հայ վաճառականներն առևտուր են արել Դոնի Ռոստովում, Նովոչերկասկում, Տազանրոգում, Նիժնի Նովգորոդում, Ստավրոպոլում, Եկատերինոդարում և այլուր: Նրանք Ասիայի ու Եվրոպայի մի շարք երկրներ են արտահանել ցորեն, ճարպ, բուրդ, յուղ, ձկնկիթ, ծխախոտ և այլ ապրանքներ²:

1959 թ. սեպտեմբերին Սովետական Հայաստանի գիտությունների ակադեմիայի (ՀԳԱ) Հասարակական գիտությունների բաժանմունքը կազմակերպել էր համալիր գիտարշավ դեպի Ռուսաստանի (ՌՄՖՍՀ) Դոնի Ռոստովի մարզի Նոր Նախիջևանի (Պրոլետարական շրջան) հայաբնակ վայրերը: Արշավախմբին մասնակցում էին ՀԳԱ-ի տարբեր ինստիտուտների և թանգարանների գիտաշխատողներ³:

Գիտարշավի քսան օրերի ընթացքում Նոր Նախիջևանի ավագ սերնդի 15 բանասացներից՝ գրի ենք առել հայ ժողովրդական բանահյուսության 160 միավոր նյութ:

² Նույն տեղում, էջ 55, 75:

³ Գիտարշավի ղեկավարն էր ՀԳԱ պատմության ինստիտուտի Հայ գաղթավայրերի պատմության բաժնի վարիչ, պատմաբան Վազգեն Ոսկանյանը, օգնականը՝ Վլադիմիր Բարխուդարյանը: Մասնակցում էին Պատմության ինստիտուտի ազգագրագետներ Դերենիկ Վարդումյանը, Էմմա Կարապետյանը, Ասյա Օդարաշյանը: Մոսկվայից, որպես պրակտիկանտ, գործուղված էր Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ուսանողուհի, Ստ. Շահումյանի թոռնուհի Տատյանա Շահումյանը: Խմբին մաս էին կազմում նաև Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտից Ահարոն Գրիգորյանը, Արվեստի բաժնից՝ հայ ժողովրդական ասեղնագործության գիտակ Սերիկ Դավթյանը, Հայաստանի ազգային պատկերասրահից Մանյա Ղազարյանը, երաժշտագետ Մանուկ Մանուկյանը և ուրիշներ:

⁴ Անուշ Բարաշյան (ծնվ. 1878 թ., Մեծ Սալա գ.) – տնային տնտեսուհի, Թագուհի Թորփուջյան (ծնվ. 1881 թ., Չալթր գ.) – տատներ, աղոթքով բուժող, Եղիա Թորփուջյան (ծնվ. 1881 թ., Չալթր գ.) – թռչակառու, Լուսեղեն Գյուրջյան (ծնվ. 1886 թ., Փոքր Սալա գ.) – թռչակառու, Մանվել Սողոմոնյան (ծնվ. 1886 թ., Թոփթի գ.) – կոլտնտեսության պահակ, Գեղեցիկ Օխյայան (ծնվ. 1887 թ., Չալթր գ.) – տնային տնտեսուհի, Խասբիքա Մալխասյան (ծնվ. 1893 թ., Մեծ Սալա գ.) – տնային տնտեսուհի, Ղազարոս Խաչգինանյան (ծնվ. 1893 թ., Թոփթի գ.) – փայտահատ, Հայկ Սողոմոնյան (ծնվ. 1899 թ., Լենինական գ.) – կոլտնտեսության հաշ-

Գրառված նյութերը պահվում են ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանահյուսության արխիվում⁵:

1959 թ. Ղրիմի հնաբույր բարբառով գրառված, 60-ամյա վաղեմության տարաբնույթ այդ բնագրերը որոշ գաղափար են տալիս Նոր Նախիջևանի ժողովրդական երբեմնի հարուստ բանարվեստի մասին:

Նոր Նախիջևանի հայոց բանավոր ավանդությունը, հայ ժողովրդի բանավոր մշակույթի բաղկացուցիչ մասը կազմելով, գոյատևել է ազգային բանահյուսության համընդհանուր ավանդներով: Սակայն ընդհանրությունների և նմանությունների հետ այն ներառել է նաև տեղային խիստ բնորոշ ու ինքնատիպ յուրահատկություններ, որոնք պայմանավորված են իրենց անցյալի ու ներկայի պատմահասարակական կյանքի հանգամանքներով: Այսպես, Նոր Նախիջևանի հայության ժողովրդական բանահյուսությունը գեղարվեստորեն արտացոլում է իրենց հասարակական, տնտեսական կյանքի նոր պայմանները, տեղի բնությունն իր բուսական և կենդանական աշխարհով, շրջապատի գյուղերն ու քաղաքներն իրենց բազմազգ բնակչությամբ և ինքնատիպ խոսվածքներով: Օրինակ՝ հեքիաթներից մեկում հերոսի՝ ածխավաճառի գործողությունները կապվում են Դոնի Ռոստովի ու նրա շրջակա Թոփթի, Չալթր, Մեծ Սալա հայաբնակ գյուղերի հետ: Կամ՝ լամպի մասին գաղափար տվող «Քիրմանի կտազ՝ թեփեն ձագ» (Քիրմանի գդակ՝ գագաթը ծակ) հանելուկի մեջ համեմատության եզր է դառնում «Քիրմանի կտազը», այսինքն՝ Նովոչերկասկ քաղաքի բնակիչների գործածած յուրօրինակ գլխարկը: Եվ կամ՝ «Խելքիտ նաղիմ՝ Դայդան էշթամ» (Խելքիդ նստեմ՝ Դայդան գնամ) արտահայտության մեջ նկատի է առնված Տագանրոզ քաղաքը, որը Նոր Նախիջևանի բարբառում «Դայդան» ձևով է արտասանվում, քանի որ Ղրիմի բարբառի տառադարձությամբ՝ $q > \eta$, $p > y$, $l > q$, $r > z$, $\delta > q$ և այլն⁶:

վապահ, Ռուբեն Լուկեջան (ծնվ. 1900 թ., Չալթր գ.) – երգասաց, Եվգինե Չոբանյան (ծնվ. 1907 թ., Մեծ Սալա գ.) – տնային տնտեսուհի, Մկրտիչ Լուկեջան (ծնվ. 1921 թ., Չալթր գ.) – երաժշտության ուսուցիչ, Աստղիկ Լուկեջան (ծնվ. 1922 թ., Չալթր գ.) – կոլտնտեսության գանձապահ, Շահեն Շահինյան (ծնվ. 1928 թ., Չալթր գ.) – «Կոմունար» թերթի գլխավոր խմբագիր, Լուսեղեն Չիրիչյան (ծնվ. 1870 թ., Չալթր գ.) – հեքիաթասաց:

⁵ FFIII:3444–3907, Վերժինե Սվազյանի ֆոնդ:

⁶ Ակադեմիկոս Հր. Աճառյանն իր «Քննություն Նոր Նախիջևանի (Խրիմի) բարբառի» ձեռագիր աշխատության մեջ նշում է. «... Ռոստովի, Նոր Նախիջևան քաղաքի, Մեծ և Փոքր Սալաների ու Նեսվիթա գյուղերի խոսակցականի բաղաձայնային համակարգը տարբեր է Չալթր և Թոփթի գյուղերի արտասանականից, որը ճիշտ Պոլսի բարբառի ձայնային դրությունն է. բաղաձայնների 2 աստիճան միայն կա՝ թրթռուն և շնչեղ խուլ: Շնչեղ թրթռուն բաղաձայնները ջնջված են» [տե՛ս Հր. Աճառյան. Քննություն Նոր Նախիջևանի (Խրիմի) բարբառի, Երևան, 1925, էջ 27–28 (ձեռագիրը պահվում է Հայաստանի Ազգային գրադարանի անձեռնմխելի ֆոնդում)]: Հարկ է նշել, որ սույն հոդվածի բնագրերը գրի ենք առել մեծ մասամբ Չալթր և Թոփթի գյուղերից:

Նույնպես և ժողովրդական “Մարյամ” երգի մեջ սիրեցյալը Նեսվիթա գյուղից է գալիս գիշերային հանդիպման.

*“Բազար դարած, նաշխած,
պերած Մարյամս,
Վաշթ պացվիլ էր գարմիր-
ջերմագ թուշերտ.
Նեսվիթայէն ընձի յէգած
կիշերտ”:*

*Բազար տարված, նախշած,
բերված Մարիամս,
Վարդը բացվել էր կարմիր-
ձերմակ թշերիդ.
Նեսվիթայից ինձ եկած
գիշերդ:*

Ղրիմից գաղթած հայերը, ապրելով նոր, ռուսական միջավայրում, հարազատացել են այդ տեղավայրին ու շրջակա ռուս բնակչությանը: Դա նկատելի է նաև նրանց պատմած իրապատում հեքիաթներում, որտեղ հերոսների գործողությունները կատարվում են ոչ միայն Դոնի Ռոստովում (Նոր-Նախիջևան) և շրջակա հայկական գյուղերում, այլև՝ ռուսական Նովոչերկասկ, Տագանրոգ և այլ քաղաքներում: Բացի այդ, որպես գործող անձինք, հանդես են գալիս ոչ միայն հայերը, այլև ռուս “բարիններն” ու “բարինաները”, “կազակներն” ու “մուժիկները”, ովքեր օգնում են հայ գաղթականներին:

Ուշագրավ է նաև, որ բանահյուսական տարբեր ժանրի նյութերի մեջ հաճախ պատահում են բազմաթիվ օտարամույժ՝ թուրքերեն բառեր, որոնք Ղրիմում կիրառվել են Նոր Նախիջևանի հայության առօրյա խոսվածքում: Օրինակ՝ “քօփուր” (քյոփրի) – կամուրջ, “սոխախ” – փողոց, “խում” – հող, “չորվախ” – աղբյուր, “խամչի” – մտրակ, “շամդան” – մոմակալ և այլն:

Եթե Ղրիմի բարբառում թուրք-թաթարական լեզվական փոխառությունները հին ծագում ունեն, ապա Ռուսաստան գաղթելուց հետո, հայերի բառապաշարի մեջ մուտք են գործել ռուսերեն մի շարք բառեր: Օրինակ՝ “կուզնեց” – դարբին, “պրոդովեց” – վաճառող, “դրոգ” – սայլ, “սեմեյստվո” – ընտանիք, “խազյաին” – տանուտեր և այլն, ինչպես նաև՝ ռուսերեն արտահայտություններ, որոնք ենթարկվել են հայոց լեզվի քերականական կանոններին. այսպես, “պագդարովիտ արեցին” – բարևեցին, “ախրանյատ ըրավ” – պահպանեց, “սազլասիտ էղավ” – համաձայնվեց և այլն:

Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը բազմազան է ու բազմա-սեռ.

1. վիպական բանահյուսություն (12 միավոր),
2. քնարական բանահյուսություն (31 միավոր),
3. ասույթային բանահյուսություն (117 միավոր):

1. Վիպական բանահյուսություն բաժնում ամփոփված են հրաշապատում և իրապատում հեքիաթները: Բանասացների վկայությամբ՝ իրենք այլևս չեն հավաքվում գյուղական “օդաներում” հեքիաթ լսելու նպատակով, ինչպես՝ Ղրիմում:

Հրաշապատում հեքիաթներից ինքնատիպ է “Աբոջանը” (Ապարանջան), որի սյուժեն զարգանում է Ղրիմից բերված համանուն երգի մոտիվներով: Այդ լիրո-էպիկական սիրերգը, հեքիաթի նյութ դառնալով, որոշ զարգացում է ապրել և՛ կերպարների, և՛ բովանդակության առումով: “Աբոջան” հեքիաթում որպես գործող անձինք հանդես են գալիս ոչ միայն սիրող զույգերը՝ Խամբերն ու Արզուն (ինչպես երգի մեջ է), այլև՝ բնության և հասարակության չար ուժերը մարմնավորող Կախարդ պատավր: Նա մինչև մահ վրեժխնդրությամբ է հիշում մանկության օրերին իր ջրի փարչը կտտրած Խամբերին և անվերջ պատուհասում է նրան՝ խափանելով սիրող զույգի երջանկությունը: Կախարդ պատավրի կերպարի ներկայությամբ է պայմանավորվում տվյալ հեքիաթի հրաշապատում բնույթն ու սյուժետային գծի հետագա զարգացումը: Հրաշապատում բնույթի է նաև “Շէն թաքավորին ախյիզը”, որը հայտնի “Կոնաստ աղջիկը” հեքիաթի երգային հատվածներով օժտված ինքնատիպ տարբերակն է: Նախ՝ թները կտրված աղջիկն ի նշան իր անմեղության կոչվում է Աղավնի, բացի այդ, տանջվելով նենգ հարսի չարությունից, օրորոցում պատկած եղբորորդուն պատմում է իր վիշտը՝ հետևյալ երգով.

“Նանի՛ գ, նանի՛ գ, անուշներով, Նանի՛ կ, նանի՛ կ, անուշներով,
 Օսգիէ բէշիք, արգաթ գամար, Ոսկուց օրորոց, արծաթից կամար,
 Մէչի բառգօղը յէխպօրը գավագ: Մեջը պատկողը եղբոր գավակ:

Նանիգ գասէի յէխպօրը օշթուն, Նանիկ կասեմ եղբոր որդուն,
 Մազիս թէլէրօվը գրգաբէի, Մազիս թելերով կկապէի,
 Միրդիս գրագովը գրչօրցնէի, Մրտիս կրակովը կչորցնէի,
 Նանիգ գասէի յէխպօրը օշթուն”:

Մրտակեղեք մեղեդի ունեցող այս օրորոցային փոքրիկ երգն առանձին հմայք և հուզականություն է հաղորդում դաստիարակիչ, խրատական բնույթի այս հեքիաթին: Այնինչ, Օսգի Յուզը (Ոսկե ձուկը), գնահատելով Աղավնու ազնվությունը, օգնում է նրան, դարձնում այլ երկրի Թագուհի ու վերականգնում նրա նախկին հեղինակությունը: Իսկ չար հարսին “գաբէցին ցիին բօշէն, վազէցուցին ցիխօն, քարին գրավ, չօլին գրավ, մինձ գօրը անգանչը մնաց” (կապեցին ձիու պոչից, վազեցրին ցեխերի մեջ, քարին կպավ, չոլին կպավ, մեծ կտորն ականջը մնաց):

Ինքնատիպ են նաև “Փերատ մարը” (Չար մայրը), “Էրգաթէ կալը” (Երկաթե գայլը) հեքիաթները: Այս երկու հեքիաթներում որպես գործող անձինք հանդես են գալիս նաև մի շարք կենդանիներ՝ մարմնավորելով բնության ու հասարակության մե՛րթ - չար, մե՛րթ բարի ուժերը:

Իրապատում հեքիաթները, գեղարվեստորեն պատկերելով կյանքում հաճախ պատահող իրական դեպքերն ու դեմքերը, ունեն դաստիարակիչ-բարոյախրատական բնույթ: Կենցաղային դեպքերի շուրջ են հորինված “Քումուր ձախօղը” (Ածուխ ծախօղը), “Օվ գը պանի, ան՝ գուդէ” (Ով աշխատի, նա՝ կուտի), “Խենթլուգը” (Խենթուկը), “Ալէմի ջարիգը” (Աշխարհի խայտառակը), “Թաթօն ու Փէթրիգէլը” (Թաթօն ու Փէթրիգէլը), “Չար բիանային հախէն էգօղ հարսը” (Չար սկեսրոջ հախից եկող հարսը), “Բարինային խէլքը” (Բարինայի խէլքը) հեքիաթները: Հետաքրքիր է նաև “Քառսուն ջան սբանօղը” հեքիաթը, որը “Դժիկոն” ժողովրդական հեքիաթի տարբերակն է: Հեքիաթում տղան իր հորը ճաշ տանելիս ոչնչացնում է ճանճերին և պաստառի վրա գրում ոչ թե ճանճ, այլ՝ ջան: Այս իրապատում հեքիաթների փոքր ծավալն ու հանգույցի հանկարծակի լուծումը դրանց տալիս է ժողովրդական նովելի տեսք:

2. Քնարական բանահյուսության երգերը ևս հին ծագում ունեն, դրանց միայն նշխարներն են մնացել՝ վկայելու համար, որ համայնքի հայերն ունեցել են նաև քնարական հարուստ ու բազմազան մշակույթ:

Թեև քանակով քիչ, բայց մտահղացման տեսակետից հետաքրքիր են մանկախաղացի երգերը, որոնք մանուկներին զվարճացնելու համար երգվող աշխույժ “Դանդաններ” (Մանկախաղացի երգեր), ռիթմիկ “Հավջիվներ” (Հավի ճվճվոցի երգեր), սրամիտ բառախաղերով ողողված շուտասելուկներ և ուրախ ավարտ ունեցող մանկական խաղերգեր են:

Իր հնությամբ ու պատկերավորությամբ ուշագրավ է “Խրիմի յերքը”, որտեղ նրանք վերհիշում են Ղրիմի Խարա Սու (Սև Ջուր) հայկական բնակավայրում իրենց գողտրիկ տները, կանաչապատ այգիները, որտեղ զբոսնում էին սիրեցյալները.

“...Բախչաները գըքալէինք,
Մէնք դեսօփին գըսիրէինք,
Մէզի գասին խարասուցի.
Մէնք դօնուշմա գը սիրէինք:

...Պարտեզներում կքայլէինք,
Մենք սիրունին կսիրէինք,
Մեզ կասէին խարասուցի.
Մենք գրուցել կսիրէինք:

Դիմաց-դիմաց խաներս,
Դիմացն ալ խանըքներս,
Դուն հօղէն յէ՛լ, յէս՝ հօւէն.
Թող քօր լան դուշմաններս:

Դիմաց-դիմաց իջևաններս,
Դիմացն էլ խանութներս,
Դու այնտեղից ե՛լ, ես՝ այստեղից.
Թող կուրանան թշնամիներս:

...Տիմացէն դեսա քէզի,
Ջերմագ վաշթ կիղցա քէզի,
Ֆօղ անէլու չխըյմիշէցի.
Ուրիշին դվին քէզի...”:

...Դիմացից տեսա քէզի,
Ճերմակ վարդ գիղցա քէզի,
Հոտոտելու չհամարձակվէցի.
Ուրիշին տվին քէզի...:

Ծիսական երգերը ևս գրեթե անհետացել էին, ու միայն պատաստիկներ էին հիշվում: Հարսանիքներն այլևս չէին կատարվում երգերի ու պարերի ավանդական ծիսակատարությամբ: Գրի ենք առել նաև հարս ու փեսա հանդերձավորելու հնաբույր երգեր: Անցյալում նրանք ունեցել են փեսա հագցնելու հատուկ “պարք” (սովորույթ, բարք), որի ընթացքում երգել են.

“Այսօրիկ իս նօր,
Այսօրիկ թաքավօր իս նօրիկ...
Փէսին գառէթան էգավ, գայնէց,
Փէսան քաշից մէջքը թուրը,
Փէսին կտակը գաբույտ մօշթի.
Այսօր հասար մուրադիտ,
օշթի’”:

Այսօր դու նոր ես,
Այսօր նոր թագավոր ես...
Փեսայի կառքը եկավ, կանգնեց,
Փեսան թուրը մեջքին քաշեց,
Փեսի գդակն է կապույտ մորթի.
Այսօր հասար նպատակիդ,
որդի :

Իսկ հարսն իր հայրական տնից դուրս գալու պահին երգել է.

“...Հայրի՛կ, մայրի՛կ,
տուք պարե՛վ գէցիք,
Տուք ալ պարե՛վ գէցիք.
զիս առին, դարին,
էմջէնէ՛ր, յանգանէ՛ր,
տուք ալ պարե՛վ գէցիք.
Տուք ալ պարե՛վ գէցիք.
զիս առին, դարին,
Հօրքուրնէ՛ր, մօրքուրնէ՛ր,
դուք ալ պարե՛վ գէցիք,
Տուք ալ պարե՛վ գէցիք.
զիս առին, դարին,
Մնացէք պարե՛վ,
սիրեզան քույրեր,
Դարօսը ցեր աչքին...”:

...Հայրի՛կ, մայրի՛կ,
դուք բարով մնացէք,
Դուք ևս բարով մնացէք.
ինձ առին, տարին,
Հորեղբայրնէ՛ր, հորեղբորկիննէ՛ր,
դուք ևս բարով մնացէք.
Դուք ևս բարով մնացէք.
ինձ առին, տարին,
Հորքուրնէ՛ր, մորքուրնէ՛ր,
դուք ևս բարով մնացէք,
Դուք ևս բարով մնացէք.
ինձ առին, տարին,
Մնացէք բարով,
սիրեկան քույրեր,
Տարօսը ձեր աչքին...:

Հարսնևորները պատասխանել են.

“Գէշթասս մէզմէն շաղ չուզելօվ,

Կերթասս մեզնից շատ չուզելով,

Անդէղ գերածո չամիչով թուզ է,
Աչքը գուլա, սիրտը գուզէ.
Հօրսէն, մօրսէն
պարնվիլ չուզէր...”:

Այնտեղ կերածդ չամիչով թուզ է,
Աչքը կուլա, սիրտը կուզէ.
Հորից, մորից
բաժանվել չուզէր...:

Կենցաղային երգերը նս հին են, որոնք հյուսված են իրական դեպքերի ու դեմքերի գեղարվեստական վերհուշով: Այսպիսին է, օրինակ՝ հայ գաղթականների հողերը բռնագրաված ու նրանց վաստակով հղիացած, Նոր Նախիջևանի մեծահարուստ քաղաքապետ Հարություն Խալիբյանի շուրջ հորինված երգը.

“Շաղ գուլում մաշթ էր
Խալիբ Ադան՝
Մեր քաղաքի գալում
գալական...”:

Շատ դաժան մարդ էր
Խալիբ ադան՝
Մեր քաղաքի անխիղճ
գլխավորը...:

Նման երգերը հիմք են տալիս ենթադրելու, որ տեղավայրի հայերն ունեցել են նաև իրական, պատմական անցքերի շուրջ հյուսված վիպական երգեր:

Թվում է, գեղանկարչի վրձնով է պատկերված հարուստ Աթոյի Միմոնի աղջկա կերպարը, նրա ճոխ հանդերձանքն ու շքեղ արդուզարդը, և, ի վերջո՝ հպարտ ու ինքնավստահ կեցվածքը՝ “Խաղա՛, ախչի՛ գս, խաղա՛” երգում.

“Գագ ու գէս ցէպուշկան
վիզո գախաձ,
Մարքարիդէ խուլանը
մէջքս գաբաձ,
Խաղա՛, ախչի՛ գս, խաղա՛,
Աթոյի Միմոնին ախչիզն իս.
Հէչ ումուռըտ թող չիլլա”:

Մետր ու կես շղթան
վիզո կախաձ,
Մարգարիտե գոտին
մեջքդ կապաձ,
Պարի՛ր, աղջի՛ կս, պարի՛ր,
Աթոյի Միմոնի աղջիկն էս.
Բնավ հոգդ թող չլինի:

Հակումը դեպի հարստությունն ու փողը նկատելի է նաև “Դէսօք թող լա, թող՝ չիլա” երգում.

“Դէսօք թող լա, թող՝ չիլա,
Թէք ըսդագը բօ՛ւ թող լա,
Իդա ախչգանը մարը
Իմիս բիանաս թող լա”:

Տեսքով թող լինի, թող՝ չլինի,
Միայն ստակը շա՛տ թող լի-
նի,
Այդ աղջկա մայրը
Իմ գոքանչը թող լինի:

“Հա՛, քա՛, հա՛ ըսը” կենցաղային երկարապատում երգի մեջ նորահարսին անհարգալից դիմող սկեսուրը նորանոր հրահանգներ է տալիս, որոնց հիմքում ևս հակումն է հարստության և ունեցվածքի նկատմամբ: Նորահարսը, ըստ չգրված օրենքի, պարտավոր է “խաթրը խոշ անել” (սիրաշահել) իրարահաջորդ հյուրերին՝ կնքահորը, ծնողներին, սկեսրայրին, զարգացած “չելեբիին” (ուսյալ անձ), որպեսզի արժանանա նրանց նվերներին՝ հոր կտակի ոսկիներին, մոր թանկարժեք “գերդանլըխին” (վզնոց), սկեսրայրի ոչխարներին, ուսյալ “չելեբիի” “լեզուչեբին” (խոսելու գին): Այդ բոլոր պատկերավոր դրվագները մատուցվում են հետհարսանեկան սովորության արարողակարգի ընդունված նկարագրությամբ՝ հարավոփոխ իրավիճակներում, տիպական նոր կերպարների հանդես գալով: Հանգամանքներ, որոնք Ղրիմից բերված այս հնաբույր երգը դարձրել են շարժուն ու դինամիկ, պատկերավոր, ցուցանելի, նան՝ ոչ միայն կենցաղային, այլև՝ ծիսակարգային.

“Հա՛, քա՛, հա՛ ըսը, յէ՛լ գայնէ՛,
Յէզվօրներուն ընթունէ,
Առաջ՝ հալավտ փօխէ.
Յէդրն ալ՝ ցեռքերը համփուրէ:

Ա՛յ, հա՛ ըս, դէ՛, է՛լ, կանգնի՛ր,
Եկվորներին ընդունի՛ր,
Առաջ՝ հագուստդ փոխի՛ր.
Հետո՝ ձեռքերն համբուրի՛ր:

Հա՛, քա՛, հա՛ ըսը, ժողօղվէ՛,
Հանա բաբաղ գրգանչէ,
Փսագներտ բիդ օրհնէ.
Միրաս-օսգին բիդ բախշէ:

Ա՛յ, հա՛ ըս, դէ՛, հավաքվի՛ր,
Ուր որ է հայրդ կկանչի,
Ձեր պսակը պիտ օրհնի.
Ժառանգ-ոսկին պիտ բաշխի:

...Հա՛, քա՛, հա՛ ըսը շո՛ւղ արա,
Մամադ հանա ցան գուդա,
Էրգու թուշէդ բիդ բաքնէ.
Գերդանլըխը բիդ բախշէ:

...Ա՛յ, հա՛ ըս, դէ՛, շո՛ւտ արա,
Մայրդ շուտով ձայն կտա,
Այտերդ պիտ համբուրի.
Վզնոցը քեզ պիտ բաշխի:

...Հարս ես՝ կնա պաղ ջուր պէ՛ր,
Լվացվողին՝ սրբիչ պէ՛ր,
Չայը քաշէ՛, շաքար պէ՛ր,
Մէզ-մէզ բաժակ չայ ալ պէ՛ր:

...Հարս ես՝ գնա պաղ ջուր բէ՛ր,
Լվացվողին՝ սրբիչ բէ՛ր,
Թեյը քաշի՛ր, շաքար բէ՛ր,
Մեկ-մեկ բաժակ թեյ էլ բէ՛ր:

Հա՛, քա՛, հա՛ ըսը բադրասողվէ՛,
Քողտ վերուր ու բահէ՛,
Աշթըխ ժամը անցա՛ձ է.
Դունն ալ մաքրէ՛ ու ավլէ՛...”:

Ա՛յ, հա՛ ըս, դէ՛, պատրաստվի՛ր,
Քողդ վերցրու ու պահի՛ր.
Արդեն ժամը անցել է.
Տունն էլ մաքրի՛ր ու ավլի՛ր...:

Քնարական բաժնում առկա են նաև ուխտագնացության երկու երգ, որոնք վկայում են, որ Ղրիմի հայերը ուխտի են գնացել Մշո Սուլթան Մր. Կարապետին:

*“Խարիբ Մելքոնը
օխտը տարի ցավ քաշիլ էր,
Սուրբ Գարաբեդ
ուխտի հասիլ էր,
Սուրադ առիլ էր...”:*

*Պանդուխտ Մելքոնը
յոթ տարի ցավ քաշել էր,
Սուրբ Կարապետ
ուխտի գնացել էր,
Նպատակին հասել էր...:*

Սակայն ուխտագնացությունը՝ “Խորլեզը”, ինչպես ասել են դրիմահայերը, նաև ուրախության “աղջիկտեսի” առիթ էր, իսկ աղջիկը պետք է լինի “կեղեցիկ պնուրթով, կեղեցիկ անունով” (գեղեցիկ բնավորությամբ, գեղեցիկ համբավով), այսինքն՝ ըստ ամենայնի կատարյալ:

“Կնացեք, ասացեք բաբայիս” տխրերգը հիշեցնում է հայ ժողովրդական միջնադարյան “Ասլան Ադա” վիպերգը: Բանտարկված որդին դիմում է հորը տունը-տեղը վաճառել և պահանջված գումարով իրեն բանտից ազատել: Հայրը հրաժարվում է օգնել որդուն: Նույն կերպ են վարվում նաև հարազատները: Միայն սիրած աղջիկն է պատրաստ զոհողության: Նվիրվածությամբ ու անկեղծ սիրով է համակված նրա վճռական որոշումը:

*“... Վզիս մեղալիօնը գրձախիս,
Հինք հարուր կրօշ ալ գրշինիս,
Գրշինի՛մ, սիրեգա՛նս, գրշի-
նի՛մ,
Գրշինի՛մ, գրհանի՛մ քեզ պան-
դից”:*

*... Վզիս մեղալիօնը կծախեմ,
Հինգ հարյուր գրոշ ալ կշինեմ,
Կշինե՛մ, սիրեկա՛նս, կշինե՛մ,
Կշինե՛մ, կհանե՛մ քեզ բանտից:*

Պատկերավոր են նաև “Օկա և Բստիր (Բստրա) մամաները” կենցաղային երգի հեղուկները, որոնք խորհրդանշում են Ռուսաստանի երկու գետերի անունները. ինչպես հայ ժողովուրդն է “Մայր Արաքս” անվանում իր կենսատու գետը, նույնպես ռուսական զույգ մայր-գետերը՝ Օկան և Բստրան, իրենց կենարար ջրով սերունդներ են սնուցում:

Հետաքրքիր են նաև “Մարիամ մորքուրմա” և “Ունանը” երգերը: Նուրբ հումորով է հյուսված “Բաբա՛, տուն ինձի վօրի՛ն բիդի դաս” երգը: Այս երգի տարբերակը տարածված է նաև Հայաստանում, ըստ որի՝ հայրն իր ծույլ աղջկան, ի վերջո, կնության է տալիս զուռնաչու, որպեսզի նա միշտ ուրախ լինի: Նոր Նախիջևանի հայաբնակ գյուղերում նույն երգը երգվում է, սակայն բնութագրականն այն է, որ Ղրիմից գաղթած

հայերն արդեն ոչ միայն ընտելացել են, այլև հարազատացել են ռուսական միջավայրին, և աղջիկը նախընտրում է կյանքը կապել “վարդանջիի” (հարմոնահարի) հետ:

1779 թ. Եկատերինա Երկրորդ կայսրուհին առանձին հրովարտակով հայ գաղթականներին զինվորական ծառայությունից ազատել էր, սակայն հետագայում հայերը զրկվում են այդ արտոնությունից, և “սալդատ գնալը” հայ գաղթականների համար դառնում է ողբերգություն:

Զինվորի երգերի գրառված տարբերակներն են՝ “Ես իմ վիջագու հանեցի, էլա սալդատ կնացի” (Ես իմ վիճակս հանեցի, էլա զինվոր գնացի) և “Սալդատի յերքը” (Զինվորի երգը): Ուշագրավ է նաև Հայրենական Մեծ պատերազմի օրերին հորինված “Սամպիկին դերան” (Սամպիկի ձորը) սրտակեղեք, բայց հաղթանակի լավատեսությամբ անմահացող հերոս զինվորի երգը:

3. Ասույթային բանահյուսության ստեղծագործություններում ժողովրդական դարավոր կենսափիլիսոփայության, բնության և հասարակության, իրերի ու երևույթների խորը ընդհանրացման արգասիք են առածներն ու ասացվածքները: Այդ սեղմ ու պատկերավոր ասույթները գեղարվեստորեն խտացնում են գաղթականների պատմական կենսափորձը, մարդկային բնավորության լավագույն հատկանիշները, իսկ վատ արարքները՝ դատապարտվում են պատկերավոր ու դաժան անեծքներով:

Զարքաշ կյանքով ապրող, “Քարեն հաց քամօղ” (Քարից հաց քամող) հայության այդ հատվածը ևս գովերգել է արհեստն ու արդար վաստակը՝ “Զենահաթը օսգէ արքջան է” (Արհեստը ոսկե ապարանջան է) և կամ՝ “Պանը՝ պանէլօվ, ջամփան՝ քալէլօվ” (Գործը՝ գործելով, ճամփան՝ քայլելով) ասացվածքների միջոցով: Աշխատանքի մասին մեծերը միշտ պատգամել են՝ “Կօրձը քէզմէն թօղ վախնա, տուն կօրձէն մի՛ վախնա” (Գործը քեզից թող վախենա, դու գործից մի՛ վախենա) իմաստուն խրատը:

Հանելուկները, թեպետ սկսվում են առանց հարցադրման, սակայն գաղտնագրված ձևով գաղափար են տալիս ազգագրական այդ խմբի անցյալ ու ներկա կյանքի, կենցաղի, ապրելակերպի և ինքնատիպ ուտեստների մասին.

| | |
|---|---|
| “Զօրս քօշա քուրսի, Մէշը իլինք օսգի. Խնամիները գրկան խօսքի”: | Քառանկյուն վառարան, Մեջը լիքը ոսկի. Խնամիները կզան խոսքի: |
|---|---|

(Եկեղեցի)

Եվ կամ՝

| | |
|--|--|
| “Զօրս ախպար քարքաղ գրպունին. Զօրս հաղը գրպունին. Հինկումը՝ մէշերը գրբրդրդի”: | Զորս եղբայր քարե պատ կշարեն. Զորս հատը կշարեն. Հինգերորդը՝ մեջը կպտտովի: |
|--|--|

(Գուլպա գործելու հինգ շուղերը)

Եվ կամ՝

“Դագը՝ դախդագ, վրան՝ դախ-
դագ,
Մէջէն գէլլէ քուռչօտ ախբատ”:
(Կրիա)

Տակը՝ տախտակ, վրան՝ տախ-
տակ,
Մէջից կէլլէ քոչոտ աղբատ:

Պատկերավոր համեմատությամբ է հարցադրված “Գուրաթի” կոչված տեղական ինքնատիպ թխվածքը, և կամ՝ հայ կանանց պատրաստած “Խաթլամա” շերտավոր թխվածքի գեղարվեստական պատկերով գաղափար է տրվում կաղամբի մասին.

“Խաթ-խաթ խաթլամա,
Մէջն ալ մէզ հադ դայամա”:

(Լահանա)

Խաթ-խաթ խաթլամա,
Մէջն էլ մի հատ մահակ:

(Կաղամբ)

Տարածված են նաև մի շարք անեծքներ և օրհնանքներ: Ժողովրդական այս բանադրանքները պատկերավոր գաղափար են տալիս, թե մարդիկ ինչպես են գնահատել իրենց նմանների չար կամ բարի արարքները: Ուժգնությամբ են հնչում զայրույթ և ատելություն արտահայտող անեծքները. “Քօռանաս, աչքիտ լուսը գդրվի” (Կուրանաս, աչքիդ լուսը կտրվի), “Խէվնաս, խէվ բադէրը իյնաս” (Խենթանաս, խենթի պես պատեպատ ընկնես), “Գադդիս միստ ուդիս” (Կատաղես՝ միսդ ուտես) ժողովրդական անեծքները: Այնինչ, աշխատավոր հայ մարդու բարոյական բարձր սկզբունքներն են դրսևորվում ժողովրդական օրհնանքներում: Այդ պատկերավոր ասույթներում բարության և առաքինության գնահատման չափանիշ են դարձել բնության տարրերը, երկնային ու երկրային ուժերը: Այսպես՝ “Ասդդտ բայձառ թօղ ըլլա” (Աստղդ պայծառ թող լինի), “Արևտ չրխավարի” (Արևդ չխավարի), “Ֆօղ պոնիս օսգի տառնա” (Հող բռնես՝ ոսկի դառնա), “Չլիս ու ձադգիս” (Ծլես ու ծաղկես) և այլն:

Ասույթային ժանրի ստեղծագործությունների մեջ ուշագրավ են աղոթքները՝ “Աստվածամոր աղոթքը”, “Չար նաֆասի” (Չար շունչ), “Չար նագարի” (Չար աչք), “Վախը չափելու” (Վախը չափելու) և հնամենի բուժիչ այլ ժողովրդական հմայական աղոթքները:

Գողտրիկ ու հուսադրող է նորալուսնին ուղղված աչքալուսանքի աղոթք-մաղթանքը, որտեղ ամեն ամիս ձերացող, բայց՝ հավերժորեն նորոգվող Լուսնի հետ է կապել ժողովուրդն իր լավագույն ակնկալիքները.

“– Նօր Լուսին, նօր շնահօր, – Նօր Լուսին, նօր շնորհավոր,

| | |
|-----------------------------------|----------------------------------|
| <i>Իմ ախպարս նօր թաքավօր,</i> | Իմ եղբայրս նոր թագավոր, |
| <i>Ձեր կնացիր, գէնջ էգար,</i> | Ծեր գնացիր, եկար պատանի, |
| <i>Ինձ ի՞նչ պէրիր արմաղան:</i> | Ինձ ի՞նչ նվեր բերեցիր: |
| <i>Լուսին. – Յերէսիտ՝ քեսպէտ,</i> | <i>Լուսին. – Երեսիդ՝ շնորիք,</i> |
| <i>Սիրդիտ՝ սուն,</i> | <i>Սրտիդ՝ գորություն,</i> |
| <i>Յէնիտ՝ բերէքէթ”:</i> | <i>Ձեռքիդ՝ առատություն:</i> |

Անփոփելով, նշենք՝ 1959 թ. Նոր Նախիջևանի հայ համայնքը, հակառակ ժամանակի ու տարածության համահարթեցնող ազդեցությունների, տակավին փորձում էր պահպանել Ղրիմի բնիկ բարբառն ու բանահյուսական անկրկնելի նշխարները, որոնք գաղափար են տալիս նրանց երբեմնի հարուստ ու ինքնատիպ ժողովրդական բանավեստի մասին:

Վերժինե Սվազլյան – ք. գ. դ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ արևմտահայոց բանավոր ավանդություն և պատմական հիշողություն: Հեղինակ է 26 մենագրության և շուրջ 250 գիտական հոդվածի: vsvaz333@yahoo.com

REFERENCES

- Ajarian Hr.** Knnutyun Nor Nakhidjevani (Khrimi) barbari, Yerevan, 1925 (manuscript).
Barkhudaryan V. Nor Nakhidjevani hay gaghuti patmutyun (1779–1861), Yerevan, 1967.
 FFIII:3444–3907, Verjinn Svazlyan Fund.

РЕЛИКВИИ АРМЯНСКОГО УСТНОГО НАРОДНОГО ТВОРЧЕСТВА НОВОЙ НАХИЧЕВАНИ

(К 240-летию основания Новой Нахичевани)

ВЕРЖИНЕ СВАЗЛЯН

Резюме

Ключевые слова: Крым, Ростов-на-Дону, Новая Нахичевань, Россия, сказитель, устная традиция.

В сентябре 1959 г. Отделением общественных наук Академии наук Советской Армении была организована комплексная научная экспедиция в Ростовскую область, Новую Нахичевань (Пролетарский район, РСФСР).

На протяжении 20 экспедиционных дней, в результате бесед и общения с 15 информаторами – представителями старшего поколения – мною было записано 160 единиц народоведческих материалов, до сих пор неопубликованных.

Армяне-переселенцы из Крыма адаптировались в новой, русской среде, которая стала для них родной. Свидетельством тому являются сложенные ими народные произведения, действия героев которых сопряжены не только с Ростовом-на-Дону и окрестными армянскими селами, но и с русскими городами Новочеркасском и Таганрогом. Героями этих рассказов являются не только армяне, но и русские барыни и барины, казаки и мужики, которые всячески помогали армянским переселенцам.

Вержине Свазлян – д. филол. н., ведущий научный сотрудник Института археологии и этнографии НАН РА. Научные интересы: устное народное творчество и историческая память западных армян. Автор 26 монографий и около 250 научных статей. vsvaz333@yahoo.com

THE RELICS OF THE ARMENIAN POPULAR FOLKLORE
OF NOR-NAKHJEVAN
(Dedicated to the 240th Anniversary of the Foundation of Nor-Nakhjevan)

VERJINĠ SVAZLIAN

S u m m a r y

Key words: Crimea, Rostov-on-Don, Nor-Nakhjevan, Russia, narrator, oral tradition.

In September, 1959, the Department of Social Sciences of the Academy of Sciences of Soviet Armenia organized a complex scientific expedition to the Rostov-on-Don province, Nor (New)-Nakhjevan (Proletarian region, RSFSR). During the 20 days of the expedition, in the result of talks and communication with 15 narrators-representatives of the older generation, 160 units of folk materials unpublished until now were recorded by me.

The Armenian settlers from Crimea, adapted to the new, Russian environment, which became a homeland for them. The evidence for that are observed in the popular creations they have narrated, where the actions of the heroes are not only from Rostov and the neighboring Armenian villages, but also from the Russian towns of Novocherkask and Taganrog. The characters appearing in the narratives are not only Armenians, but also Russian noblewomen and noblemen, Cossacks and muzhiks, who assisted Armenian settlers in any way possible.

Verjinn Svazlian – Doctor of Philological Sciences, Leading Researcher at the NAS RA Institute of Archaeology and Ethnography. Scientific interests: the oral folklore and historic memory of the Western Armenians. Author of 26 monographs and over 250 academic articles. vsvaz333@yahoo.com

ՅՈ. ԼԵՓՍԻՈՒՄԻ ԵՎ ՆՐԱ “ԳԵՐՄԱՆԱ-ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ”
ՀԱՅԱՆՊԱՍՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ
(1915 թ. սեպտեմբեր – 1916 թ. հուլիս)*

ՀՐԱՆՈՒՇ ՍԱՀԱԿՅԱՆ

Բանալի բառեր՝ “Գերմանա-հայկական ընկերություն”, Յո. Լեփսիուս, գրաքննություն, կոտորած, մամուլ, ցեղասպանություն, ապստամբ, Հայկական հարց, Օսմանյան կայսրություն, դաշինք, Բ. Հովվեզ, թուրքիկ, արսուր, Է. Շթիր, հյուպատոս:

Առաջին աշխարհամարտի տարիներին գերմանական լրատվամիջոցները գտնվում էին գրաքննության խիստ վերահսկողության ներքո: Դաշնակից երկրներում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ Գերմանիայի հեղինակությանը վնասող կամ նրա քաղաքական շահերի համար վտանգավոր համարվող փաստերը չէին կարող դառնալ հանրային քննարկումների առարկա: “Ճշմարտությունը միշտ չէ, որ կարելի էր ասել, – գրում էր Յո. Լեփսիուսը:– Ստերը չէին կարող հերքվել: Կցկտուր բաներ ասելն իմաստ չունեին: Լավագույնս իրազեկվածները խոսելու հնարավորություն չունեին. միևնույն է, նրանց տրամադրած տեղեկություններն առանց այլևայլության ենթարկվելու էին գրաքննության ... Յուրաքանչյուր ոք, ով հետևում էր գերմանական զանգվածային մամուլի հրապարակումներին, կարող էր նկատել, որ Հայկական հարցը գնահատելիս հողվածների ու գրքույկների հեղինակներն իրենց տրամադրության տակ սեփական նյութ չունեին: Նրանց տեսադաշտում էին միայն թուրքական պաշտոնական սակավաթիվ տեղեկությունները: Այստեղից արդեն կարելի էր ենթադրել, որ այդ հեղինակները ռազմական և քաղաքական շահերի թելադրանքով ներկայացնում էին իրողությունների միակողմանի և աղճատ պատկերը: Գերմանական մամուլն այդ նյութերը լրացուցիչ քննության ենթարկելու հնարավորություն չունեին: Սկզբից նեթ այն հակված էր անվերապահորեն հավատալու դաշնակից երկ-

* Ընդունվել է տպագրության 26. III. 2019 թ.: ԵՊՀ-ի պատմության ֆակուլտետի հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ: Հոդվածը տպագրության է երաշխավորել գիտական ղեկավար, պ. գ. դ., պրոֆեսոր Ա. Հայրունին (8. II. 2019 թ.):

րի համար նպաստավոր բոլոր տեղեկություններին և կոծկելու այնպիսիները, որոնք հաճելի չէին իրեն ...”¹:

Նշված հանգամանքով պայմանավորված՝ “հեղափոխականորեն” տրամադրված Լեփսիուսը 1915 թ. սեպտեմբերին կարճատև այցելությամբ մեկնեց Շվեյցարիա՝ մտադիր լինելով Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի դեմ իրագործվող հանցագործությունների քարոզարշավ սկսել շվեյցարական զանգվածային մամուլի միջոցով², որը, ի դեպ, հասանելի էր նաև Գերմանիայում³: Այս կապակցությամբ Բազելում գերմանական դեսպան Վուլդերլիխը Գերմանիայի ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին ուղղված մի գրության մեջ նշում էր. “Քանի որ չէր հաջողվել (Լեփսիուսին – Ն. Ս.) Կ. Պոլսում հայերի համար շոշափելի որևէ արդյունքի հասնել, Լեփսիուսը որոշեց պատերազմում չեզոք երկրի մամուլում աղմուկ բարձրացնել Գերմանիայի դաշնակցի դեմ ...”⁴:

Այցելելով Բազել ու Ժնև՝ Լեփսիուսը հանդիպեց հայ ժողովրդի շվեյցարացի բարեկամների հետ, նրանց իրազեկեց 1915 թ. հուլիս–օգոստոսին իր՝ Կ. Պոլիս ուղևորության արդյունքների մասին և տրամադրեց նաև իր հետ բերած փաստաթղթերի մի մասը⁵: Այնուհետև “Basler Nachrichten” օրաթերթի սեպտեմբերի 16-ի համարում նա հրատարակեց “Մի ժողովրդի բնաջնջումը” վերնագրով անստորագիր հոդվածը⁶, որտեղ ամփոփ ներկայացնում էր Կ. Պոլիս ուղևորության ընթացքում իր դիտարկումների արդյունքներն ու կոչ անում Օսմանյան կայսրությունում դեռ դիվանագիտական ներկայություն ունեցող և թուրքական կառավարության մոտ հեղինակություն վայելող քրիստոնյա տերությունների կառա-

¹ J. Lepsius. Der Todesgang des armenischen Volkes. Bericht über das Schicksal des armenischen Volkes in der Türkei während des Weltkrieges. Porsdam, 1927, S. 259–260.

² Ռ. Լեփսիուս. Մեծ աղէտի օրերուն.– “Հայրենիք” (Բոստոն), Ջ տարի, թիվ 8, 1928, էջ 108:

³ H.–L. Kieser. Der verpasste Friede. Mission, Ethie und Staat in den Ostprovinzen der Türkei 1839–1938. Zürich 2000, S. 355.

⁴ S. Schaede, R. Hosfeld (Hg.). Der Genozid an den Armeniern. Interdisziplinäre Perspektiven auf die historische und aktuelle Rolle des Protestantismus. Jena, 2016, S. 28.

⁵ Տե՛ս Der Konsul in Basel (Wunderlich) an den Reichskanzler (Bethmann Hollweg). – <http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/AllDocs/1915-09-22-DE-002,PA-AA,R14087>.

⁶ Տե՛ս J. Lepsius. Der Todesgang des armenischen Volkes, S. XXIV.

⁷ Լեփսիուսի հոդվածը սենսացիա առաջ բերեց ինչպես Շվեյցարիայում, այնպես էլ՝ Գերմանիայում՝ արժանանալով տարաբնույթ գնահատականների: Գերմանական մամուլի աշխատողներից մեկը (ում անունն աղբյուրում չի հիշատակվում), օրինակ, վստահեցնում էր՝ “այդ հոդվածի առանձին հատվածներ պարզապես թարգմանություն են ֆրանսիական մի բնագրից” (տե՛ս նույն տեղում):

վարություններին, դեսպաններին ու հյուպատոսներին միջոցներ ձեռնարկել՝ հայ ժողովրդի ծրագրված զանգվածային բնաջնջումը կանխելու և աքսորյալ բնակչության՝ դեռ կենդանի մնացորդներին փրկելու համար: “Եվրոպացի ակադեմիկոսների անխախտելի վկայություններով հիմնավորված՝ մեր հաղորդած տեղեկությունների ճշմարտացիությունը եթե վիճարկվում է որևէ մեկի կողմից, – գրում էր նա հողվածում, – ապա մենք կոչ ենք անում Օսմանյան կայսրությունում ներկայություն ունեցող տերություններին հրապարակել այդ երկրում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ հյուպատոսական չկրճատված տեղեկագրերը՝ որպես հակափաստարկ”⁸:

Կոչն, անշուշտ, առաջին հերթին ուղղված էր Գերմանիայի ու Ավստրո-Հունգարիայի կառավարություններին, ինչպես նաև՝ պատերազմում չեզոք ԱՄՆ-ի ղեկավարությանը: Վերջինիս որոշ ներկայացուցիչներ համոզված էին, որ երիտթուրքական կառավարության հակահայկական քաղաքականության դեմ դիվանագիտական բողոքն ու սպառնալիքները ունենալու էին սպասվածին հակառակ արդյունք: “Ստեղծված իրավիճակում անհրաժեշտ է ուժի կիրառումը”⁹, – գրում էր Կ. Պոլսում ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուն:

Սկզբունքորեն նույն կարծիքին էր նաև Լեփսիուսը, ով Բեռլին վերադառնալուց հետո Ռայխսսթագի շենքում “Մամուլի ստեղծագիտի” հոկտեմբերի 5-ի նիստում, որին մասնակցում էին նաև արտաքին ու ծովային գերատեսչությունների ներկայացուցիչները¹⁰, հանդես գալով ընդարձակ զեկույցով¹¹ և ներկայացնելով Օսմանյան կայսրության ներքին իրադարձությունների ստույգ պատկերը, կոչ արեց գերմանական կառավարությանը հենց սեփական երկրի շահերից էլնելով

⁸ A. Hayruni und R. Hosfeld. Johannes Lepsius und die Armenische Frage im Beziehungsgeflecht des Weltkrieges. – “Das Deutsche Reich und der Völkermord an den Armeniern”. Göttingen, 2017, S. 233–234.

⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 234:

¹⁰ Տե՛ս J. Lepsius. Der Todesgang des armenischen Volkes, S. XXIV:

¹¹ „Magdeburger Zeitung”-ի խմբագրությունը հոկտեմբերի 7-ին պատրաստեց զանգվածային մամուլի ներկայացուցիչների առջև Լեփսիուսի էլույթի մանրամասներն անփոփոդ “Թուրքիայի ներքին կացության մասին” վերտառությամբ տեղեկագիր, որը ենթակա չէր հրապարակման: Համաձայն այդ տեղեկագրի՝ իր էլույթի ժամանակ հոետորը ներկայացրել էր Օսմանյան կայսրությունում հայերի ողբերգական դրությունը, սուր քննադատության ենթարկել գերմանական կառավարությանը՝ թուրքերի հակահայկական գործողությունները չկանխելու համար և նշել, որ հայ բնակչության բնաջնջմամբ վերանալու էր Օսմանյան կայսրության վրա Գերմանիայի տնտեսական ու մշակութային ազդեցությունը [տե՛ս Der Konsul in Basel (Wunderlich) an den Reichskanzler (Bethmann Hollweg), – <http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/AllDocs/1915-09-22-DE-002,PA-AA,R14087>]:

Արևմտյան Հայաստանում (որտեղ տեղի էր ունենում հայ ժողովրդի սպանող) գերմանական զինված ուժերի վերահսկողություն սահմանել¹²: Նա նաև խորհուրդ տվեց ձեռնպահ մնալ Օսմանյան կայսրության ներքին իրադարձությունների վերաբերյալ “կեղծ և գունազարդված տեղեկություններ” հրապարակելուց, ինչը, նրա համոզմամբ, էապես կհարվածեր Գերմանիայի միջազգային հեղինակությանը¹³:

Երիտթուրքերի ցեղասպանական քաղաքականության դեմ ուղղված քարոզչության արդյունքում Լեփսիուսը, Գերմանիայի Արտաքին գործերի նախարարության (ԱԳՆ) բնորոշմամբ, հայտնվեց “գերմանական կառավարության բացարձակ ընդդիմության” կարգավիճակում¹⁴:

Հատկանշական է, որ հաջորդ օրը՝ հոկտեմբերի 6-ին, նույն շենքում հրավիրված մամլո համաժողովում ԱԳՆ-ի բանախոսը հերքեց Լեփսիուսի ասածների ճշմարտացիությունը՝ հայերին համարելով Անտանտի կողմից հրահրված “սպստամբներ”¹⁵: Իսկ հոկտեմբերի 7-ին կառավարությունը լրագրողներին հրահանգեց՝ Օսմանյան կայսրության հետ հարաբերությունները չվտանգելու համար պարտավորվելին այսուհետ չշոշափել Հայկական հարցը: Իսկ եթե հետագայում Գերմանիայի մեղսակցության պատճառով արտերկրի կողմից մեղադրանքներ ի հայտ գային, պետք է հարցը մեծ զգուշավորությամբ և վերապահությամբ դիտարկելին ու պնդելին, որ թուրքերը հայերի կողմից “ուժգին” բորբոքվել էին¹⁶: “Հայկական հարցի պատճառով մեր հարաբերությունները Թուրքիայի հետ խզելը երբեք չենք համարել և այժմ էլ չենք համարում ճիշտ”¹⁷, – նշել էր Գերմանիայի պետքարտուղարի տեղակալ Արթուր Յիմերմանը:

Ինչևէ, Լեփսիուսը շարունակեց Օսմանյան կայսրությունում քրիստոնյաների հալածանքների դեմ պայքարը, և Կ. Պոլիս ուղևորության պտուղներից մեկն էլ ե-

¹² A. Hayruni und R. Hosfeld. Նշվ. հոդվ., էջ 223:

¹³ Տե՛ս նույն տեղում:

¹⁴ Der Chef des Admiralstabs der Marine (Holtzendorff) an den Reichskanzler (Bethmann Hollweg). – [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1916-10-25-DE-001, PA-AA, R 14094](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1916-10-25-DE-001, PA-AA, R 14094).

¹⁵ Տե՛ս Der Konsul in Basel (Wunderlich) an den Reichskanzler (Bethmann Hollweg). [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1915-09-22-DE-002 PA-AA, R 14087](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1915-09-22-DE-002 PA-AA, R 14087).

¹⁶ A. Richard. Karl Libknecht und Genossen. Die Ausrottung der Armenier während des Ersten Weltkrieges und die deutsche politische Linke. – “Armenisch-Deutsche Korrespondenz”, Nr. 131/132, Jg. 2006/ Heft 1&2, S. 131–132.

¹⁷ R. Hosfeld. Operation Nemesis. Die Türkei, Deutschland und der Völkermord an den Armeniern. Köln, 2005, S. 254.

“դրամատիկ ազդեցություն” գործեց Յո. Լեփսիուսի ելույթի՝ Պ. Ռոհրբախի ինքնաբուխ արձագանքը. “Դր. Լեփսիուսի պնդումներն ամբողջապես հիմնավորվում են արտերկրի մամուլի հաղորդած տվյալներով: Ըստ այդմ, անկարելի է հանուն Թուրքիայի հետ դաշինքի այդ գործողությունների (նկատի ունի Օսմանյան կայսրությունում հայերի հալածանքն ու բռնությունները – Ն. Ս.) համատեղ պատասխանատվությունը հետագայում կրելը: Զինվորականությունը փակել է մեր բերանը: Բայց մենք կարող ենք և պարտավոր ենք կառավարությանն ասել, որ Թուրքիայի հետ մեր դաշինքն այլևս չենք կարող ընդունել որպես երկու իրավահավասար պետությունների համաձայնություն: Երբ այդ բաները հայտնի դառնան, այն ժամանակ գերմանացի ժողովուրդն ամոթի զգացումով կնայի աշխարհի աչքերին: Հետևաբար, կառավարությունը պետք է ստիպի Թուրքիային՝ բավարարել հայերի ցանկությունները: Այդ երկրի վախճանը մոտ է, և նրա նկատմամբ պետք է խափանման միջոց կիրառել”²⁶:

Յո. Լեփսիուսը, արձագանքելով Պ. Ռոհրբախի ելույթին, նրան անվանեց “մեր ողջ գերմանաթուրքական քաղաքականության մարգարե” և ավելացրեց. “Ես խոնարհվում եմ նրա առջև”²⁷: Այնուհետև Յո. Լեփսիուսը, Կ. Թ. Աքսենֆելդը, Յ. Ռիխթերը և Ա. Վ. Շրայբերը²⁸ նիստի արդյունքների հիման վրա կազմեցին ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին ուղղված ընդարձակ մի դիմում²⁹, որի տակ ի-

տվյալները, մտահոգություն էր հայտնում հասարակության և լրագրողների վրա Լեփսիուսի հայտարարությունների ազդեցության կապակցությամբ: Նա նաև հավելում էր, որ Լեփսիուսը օրեր առաջ զանգվածային մամուլի ներկայացուցիչների առջև Բեռլինում հանդես էր եկել Հայաստանի դեպքերի վերաբերյալ մի այնպիսի զեկուցմամբ, որը ենթակա չէր հրապարակման [տե՛ս Der Vorsitzende des Vereins deutscher Zeitungsverleger (Friedrich Faber) an den Unterstaatssekretär des Auswärtigen Amtes (Zimmermann).–[http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1915-10-12-DE-001, PA-AA, R 14088](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1915-10-12-DE-001, PA-AA, R 14088)]:

²⁶ Das undatierte Schreiben von Schreiber an den Oberpräsidenten v. Hegel und den Juristen R. Faber, LAH, № 13797.

²⁷ Տե՛ս նույն տեղում:

²⁸ A. Meißner. Martin Rades „Christliche Welt” und Armenien, Band 22. Berlin, 2010, S. 225.

²⁹ Դիմումի հեղինակները, մատնանշելով Գերմանիայի բարոյական վարկին սպառնացող վտանգը, փորձում էին գերմանական կառավարությանը դրդել հայերի օգտին վճռական միջամտության. “Դիմումը ստորագրողներին, որոնք մեծ հույսեր են կապում Ձերդ Գերագանցության հետ, առաջին հերթին անհանգստացնում և գործողության է մղում ոչ թե մտահոգությունն ապագայում Արևելքում Գերմանիայի տնտեսական ու մշակութային գործունեության հեռանկարի համար, որը վտանգի տակ է հայտնվել թուրք ազգայնականների չարաշահումների և իսլամական ֆանատիզմի

րենց ստորագրությունները դրեցին Գերմանիայի ավետարանական եկեղեցու 50 անվանի հետևորդներ, այդ թվում՝ «Գերմանա-հայկական ընկերության» (ԳՀԸ)³⁰ վարչության անդամներ Յո. Լեփսիուսը, Մ. Ռադեն, Պ. Ռոհրբախսն ու Է. Շթիրը³¹:

“Ստորագրողներին, – նշվում էր դիմումի մեջ, – խիղճն է, որ մղում է արտահայտելու այն մեծ հուզումը, որին մատնված են իրենք և գերմանացի քրիստոնյաների լայն շրջանները՝ տեսնելով թուրքահայ ժողովրդի ողբալի ճակատագիրը: Ստույգ տեղեկությունների համաձայն այդ ժողովրդին սպառնում է կատարյալ բնաջնջման վտանգը, եթե անմիջապես վերջ չտրվի նրա նկատմամբ գործադրվող անգթությանը”³²:

Այնուհետև մանրամասնորեն արծարծելով Արևելքում հայերի մշակութային դերի կարևորության հարցը և նկարագրելով վերջին սարսափներն ու տեղահանվածների վիճակը՝ դիմումի հեղինակները վերջում նշում էին. “Մենք խնդրում ենք Ձերդ Գերագանցությանը ամենաազդու կերպով Բ. Դռանը ներկայացնել ստեղծված կացության անտանելիությունը և դարմանման միջոցների ծայրահեղ ստիպողականությունը՝ աչքի առջև ունենալով գլխավորապես երեք հարց, որոնք ոչ մի կերպ չեն հակասում Թուրքիայի բարօրությանն ու մեր ռազմական նպատակների իրագործմանը և բխում են միայն մարդկայնության պահանջներից: Անհրաժեշտ է, որ՝ 1. արգելվի հայերի տեղահանությունը Կ. Պոլսից, Հալեպից, Իզմիրից և բոլոր այն վայրերից, որոնց տակավին չի դիպել տեղահանման կարգադրությունը, 2. ձեռնարկել ոչ թե երևութական, այլ իրական միջոցներ՝ պահպանելու Միջագետքի անապատները քշված հարյուր հազարավոր կանանց ու երեխաների կյանքը, և թույլ չտալ նոր վայրագություններ մնացյալ հայերի նկատ-

պատճառով, շարժառիթներ, որոնք արթնացրել են մեր խիղճը, այլ այն պատասխանատվությունը, որը քննարկվող դեպքերի համար կկրի Օսմանյան կայսրության դաշնակից քրիստոնյա ժողովուրդներից մեկը հանդիսացող գերմանացի ժողովուրդը” (տե՛ս J. Lepsius. Deutschland und Armenien, S. 185):

³⁰ ԳՀԸ-ն ստեղծվել է 1914 թ. հունիսին Բեռլինում: Ընկերության հիմնադիր անդամներն էին Յո. Լեփսիուսը (ով ԳՀԸ նախագահն էր հիմնադրումից մինչև 1927 թ.), Յ. Մարկվարտը, Մ. Ռադեն, Պ. Ռոհրբախը, Է. Շթիրը, Ջ. Գրինֆիլդը, Ռ. Դարբինյանը, Ա. Հայրանյանը, Մ. Մուրադյանը, Տ. Շահբազյանը: ԳՀԸ-ի նպատակն էր նպաստել հայ-գերմանական մերձեցմանը՝ մշակութային հողի վրա և Օսմանյան կայսրության արդիականացմանը ներսից հայերի (հայկական մշակույթի զարգացման) և դրսից գերմանական ազդեցության ուժեղացման միջոցով: Այս մասին մանրամասն տե՛ս Հ. Սահակյան. Գերմանա-հայկական ընկերության հիմնադրումը. – “Հայագիտության հարցեր”, № 1, Երևան, 2016, էջ 27–37:

³¹ E. Stier. Zur Geschichte der Deutsch–Armenischen Gesellschaft (1914–1939). – “Mitteilungsblatt der Deutsch–Armenischen Gesellschaft”, Nr. 5–6, Dezember, 1939, S. 5 (69).

³² Տե՛ս J. Lepsius. Deutschland und Armenien, S. 185.

մամբ, 3. հնարավորություն տալ ուրիշ երկրների քրիստոնյաներին, թերևս, գերմանացի և չեզոք վստահելի անձանց գործակցությամբ, օգնություն հասցնել տեղահանվածներին:

Հաշտության կնքման պահին խնդրում ենք հոգ տանել, որ բռնի իսլամացած քրիստոնյաները կարելիություն ունենան վերադառնալու իրենց նախկին դավանանքին, և Թուրքիայի քրիստոնյա փոքրամասնություններին տրվի խաղաղ ու անկաշկանդ զարգացման հնարավորություն: Խնդրում ենք Ձերդ Գերագանցությանը որքան կարելի է շուտ ստեղծել այնպիսի վիճակ, որ մենք կարողանանք հանդարտեցնել գերմանացի քրիստոնյաների հուզումը և հակազդել օտար երկրների կողմից Գերմանիայի դեմ ուղղված ամբաստանություններին³³:

Յո. Լեփսիուսի դրդմամբ՝ Բեթման Հոլվեգին համանման ուղերձ հղեցին նաև Գերմանիայի կաթոլիկները³⁴:

Ռայխսկանցլերը նշված դիմումին պատասխանեց հապաղումով նոյեմբերի 12-ին: Նա վստահեցնում էր՝ կայսերական կառավարությունն ինչպես մինչև այդ պահը, այնպես էլ ապագայում իր ազդեցությունը կգործադրի, որ քրիստոնյա ժողովուրդներն իրենց հավատի պատճառով չհետապնդվեն³⁵:

Բ. Հոլվեգի պատասխանը լրատվամիջոցներին փոխանցվեց ԱԳՆ-ի հետևյալ հավելվածով. «Գերմանացի քրիստոնյաները կարող են վստահ լինել, որ գերմանական կառավարությունը կանի այն ամենը, ինչը կարող է ծառայել այս նպատակին (Օսմանյան կայսրությունում քրիստոնյա հպատակների վիճակի բարելավմանը – Է. Շթիր) և գոյություն ունեցող կարիքը մեղմելու համար նրանց մարդասիրական ջանքերը նկատի կառնվեն³⁶»:

Գերմանաթուրքական դաշինքի առկայության պայմաններում գերմանական կառավարության նշված խոստումները, ցավոք, այդպես էլ չիրականացան: Բայց Լեփսիուսը տեղի տալու միտք չունեցավ: Ընդհակառակը, նա իր պարտքն էր համարում հնարավորին մեծացնել հասարակական ճնշումը՝ դա համարելով իշխանություններին ակտիվ քայլերի մղելու միակ գրավականը: Պատահական չէ, որ երբ զանգվածային լրատվության միջոցներն ու եկեղեցին արդեն բավականաչափ իրազեկ էին Արևմտյան Հայաստանում կատարվող իրադարձություններին, նա վճռեց իր տեղեկությունները հասանելի դարձնել հասարակական լայն շրջաններին: Այդ կերպ Լեփսիուսը մտադիր էր նաև թուրքական պաշտոնական

³³ Տե՛ս նույն տեղում, էջ 183–188:

³⁴ Նույն տեղում, էջ 189:

³⁵ E. Stier. An die Mitglieder der Deutsch–Armenischen Gesellschaft. Marburg, den 2. August 1916, EZA Berlin.

³⁶ Տե՛ս E. Stier. Zur Geschichte der Deutsch–Armenischen Gesellschaft (1914–1939), S. 5 (69).

լրատվության դեմ ստեղծել ուժեղ հակազդեցություն և, բացի այդ, ավետարանական համայնքներին դրդել հայ աքսորյալներին օգնելու նպատակով կատարել մեծածավալ հանգանակություններ, որոնք «կհամապատասխանեն կարիքի մեծությանը»³⁷:

Բայց, քանի որ պատերազմի ընթացքում գրաքննությունը խստորեն արգելել էր ԳՀԸ-ին տեղեկություններ հրապարակել Օսմանյան կայսրությունում հայերի բնաջնջման վերաբերյալ, և ընկերությունը ստիպված էր սահմանափակվել միայն թռուցիկներ տարածելով³⁸, Լեփսիուսը տեղեկատվական գործունեությունն այդ շրջանում իրականացնում էր իր իսկ կողմից խմբագրվող «Der Christliche Orient» ամսագրի միջոցով³⁹, թեև այդ ամսագրի համար ևս ստեղծվել էր բարդ իրավիճակ: 1915 թ. թղթի դեֆիցիտի պատճառով պարբերականը տպագրվում էր երկու ամիսը մեկ անգամ, իսկ 1916 թ. նույնիսկ երեք ամիսը մեկ⁴⁰:

Ամսագրի՝ 1915 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների համարում Լեփսիուսը հրապարակեց օգնության մի կոչ, որտեղ բավական թափանցիկ վկայություն էր կատարվում Արևմտյան Հայաստանում ստեղծված իրադրության մասին: Մրան հաջորդեց պարբերականի՝ նույն տարվա վերջին համարում հայ ժողովրդին վրա հասած աղետի վերաբերյալ «Հեռացում դեպի Սիրիա» վերնագրով հողվածի հրատարակումը: Չնայած գրաքննությունն արգելում էր Օսմանյան կայսրության ներքին իրադարձությունների վերաբերյալ մանրամասների հրապարակումը՝ այնուամենայնիվ, այդ հողվածում Լեփսիուսը տեղեկացնում էր՝ երիտթուրքական կառավարությունը ծրագրել էր Օսմանյան կայսրությունը վերածել զուտ իսլամական պետության, և որ երկրի հայաբնակ բոլոր վիլայեթները գրեթե ամբողջությամբ դատարկվել էին հայերից⁴¹:

Օսմանյան կայսրությունում հայերի կացության մասին տեղեկատվություն հրապարակելուց զատ՝ քայլեր ձեռնարկվեցին նաև ցեղասպանությունը վերապրած քսորյալ հայերի⁴² փրկարար աշխատանքների կազմակերպման ուղղությամբ:

³⁷ Տե՛ս J. Lepsius. Der Todesgang des armenischen Volkes, S. XXVI.

³⁸ Տե՛ս E. Stier. Zur Geschichte der Deutsch-Armenischen Gesellschaft (1914-1939), S. 5 (70).

³⁹ Ա. Հ ա յ ր ու ի ի. Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը, Երևան, 2002, էջ 271:

⁴⁰ A. Baumann. Der Orient für Christus. Johannes Lepsius-Biographie und Missiologie. Göttingen, 2007, S.103.

⁴¹ Տե՛ս նույն տեղում:

⁴² Խոսքը վերաբերում էր Սիրիայի և Միջագետքի անապատները քշված շուրջ 600.000 տղամարդկանց, կանանց, ծերերին ու երեխաներին (տե՛ս E. Stier. An die Mitglieder der Deutsch-Armenischen Gesellschaft, Marburg, den 2. August 1916, EZA Berlin):

յամբ, որին Լեփսիուսի հետ գործուն մասնակցություն ունեցավ նաև Է. Շթիրը: Վերջինս առողջական խնդիրների պատճառով դադարեցնելով հոգևոր ծառայությունն Ալտենի Դեսսաուում և 1916 թ. սկզբին հաստատվելով Մարբուրգում՝ նշանակվեց Մ. Ռադեի խմբագրությամբ լույս տեսնող “Die Christliche Welt” - պարբերականի բարեկամների միության” գլխավոր քարտուղար (նա նաև ԳՀԸ-ի քարտուղարն էր): Ազատվելով հոգևոր ծառայությունից և Մ. Ռադեի թույլատվությամբ՝ նաև գործնականում քարտուղարի պարտականությունները կատարելու⁴³ Է. Շթիրը նվիրվեց աքսորյալ հայերի օգնության աշխատանքների կազմակերպման գործին⁴⁴:

Դեռ 1915 թ. դեկտեմբերին Շթիրը գաղտնի փորձում էր Օսմանյան կայսրության ներքին իրադարձությունների հարցում կողմնորոշել “Անհրաժեշտ օգնություն” (“Das Notwendige Liebeswerk”) միության անդամներին՝ նրանց ներկայացնելով իր կարծիքը: Այսպես՝ նրա ենթադրությամբ հայերին աքսորի ենթարկելու համար հրահրիչ հանգամանք էր Վանում ռուսների կողմից հայ կամավորների մասնակցությամբ մահմեդական բնակչության ջարդը⁴⁵: Ինչ վերաբերում էր աքսորի ծավալին և այս առնչությամբ թուրքական կառավարության բռնած դիրքին, ապա նա նշում էր հետևյալը. “Եթե թուրքական կառավարությունն այժմ օտարերկրյա դեսպանությունների հանդեպ զոջումով է խոսում իր գործելաձևի մասին, ապա դա շատ փոքր բան է իր արածի համեմատ: Թուրք նախարարներից ոչ մեկն այնքան միամիտ չէ, որ դա չգիտակցի: Խոսքը գնում է ոչ թե մի քանի հայերի, ինչպես նշում է “Deutscher Wille”-ն, այլ մեկ միլիոնից ավելի ժողովրդի բնաջնջման մասին, և դա, հիրավի, գերազանցում է պատմության ողջ ընթացքում հայ ժողովրդի կրած բոլոր տառապանքները, նույնիսկ՝ ներկա պատերազմի սարսափները”⁴⁶: Է. Շթիրն անհեթեթություն էր համարում նաև թուրքական պաշտոնական հիմնավորումներն այն մասին, որ ժողովրդի տեղահանությունը

⁴³ Լեփսիուսը 1916 թ. հունվարին Մարբուրգում հանդիպեց Մ. Ռադեի հետ, ում խնդրեց Է. Շթիրին ազատել քարտուղարի պարտականությունների գործնական իրականացումից, որպեսզի նա ժամանակ ունենար զբաղվելու հայանպաստ աշխատանքների կազմակերպմամբ: Մ. Ռադեն սիրով համաձայնեց (տե՛ս Lepsius an Rade vom 16. Januar 1916, LAH, № 7143):

⁴⁴ Տե՛ս A. Meißner. Նշվ. աշխ., էջ 227:

⁴⁵ Շթիրը պարզաբանում էր, որ մահմեդականներին ջարդելով՝ հայերը վրեժ էին լուծում մինչ այդ հարյուրավոր հայկական գյուղերում թուրքերի կազմակերպած ջարդերի համար, որոնց 1914 թ. նոյեմբերից մինչև 1915 թ. ապրիլը զոհ էր գնացել շուրջ 26.900 հայ [տե՛ս E. Stier. Armenien und wir. – “Das Notwendige Liebeswerk” (այսուհետև՝ DNL), vom 14. Dezember 1915]:

⁴⁶ Տե՛ս A. Meißner. Նշվ. աշխ., էջ 228:

նազմական պարտադիր գործողություն էր, և բացի այդ՝ իրենք այն իրականացրել էին Ռուսաստանի սահմանամերձ շրջաններում հեղափոխության բռնկման վտանգից խուսափելու համար: Նա պարզաբանում էր՝ հայերը լոյալություն էին պահպանել թուրքական պետության հանդեպ, և որ դեռ պատերազմի սկզբում Կ. Պոլսի Հայոց պատրիարքն ու ՀՅԴ-ի պարագլուխները հայ ժողովրդին հանդարտության և խոհեմության կոչեր էին արել: Չնայած դրան՝ թուրքերը սպանել էին ՀՅԴ-ի գրեթե բոլոր ղեկավար գործիչներին:

Է. Շթիրն առանձնապես վրդովված էր այն իրողությամբ, որ պատերազմի պայմաններում Գերմանիան, լինելով միակ պետությունը, որը կարող էր ներգործել երիտթուրքական կառավարության վրա, չէր կանխել հայերի սպանողը: Ըստ նրա՝ ինքնակառավարումը կորցրած Օսմանյան կայսրությունը հայերի բնաջնջումով խիստ վնասում էր ինքն իրեն և դրանով իսկ նաև Գերմանիայի տնտեսությանը, քանի որ այդ երկրի ներքին առևտրի կազմակերպման, ներմուծման ու արտահանման ոլորտներում հայերը շատ «կարևոր տարր էին»: Այսուամենայնիվ, նա ամենավատը համարում էր այն, որ իրենք ստիպված էին լինելու քրիստոնեական հոգևոր արժեքների միջոցով Արևելք թափանցելու բոլոր հույսերը թաղել: Ի վերջո, հիմք ընդունելով հայերին օգնելու վերաբերյալ ռայխսկանցլերի վերոնշյալ խոստումը՝ Է. Շթիրը կոչ էր անում փրկել վերապրածներին. «Մենք՝ գերմանացիներս, Հայաստանին պիտի ցույց տանք մեծ օգնություն, ավելի մեծ, քան 1896 թ. օգնությունն էր, քանի որ այժմ նրանք (հայերը – Ն. Ս.) ավելի շատ են կապված մեզ հետ: Միսիոներական ընկերություններն արդեն հանգանակություններ են անում: Մենք՝ «Անհրաժեշտ օգնության» բարեկամներս, չենք կարող նրանցից հետ մնալ: Մենք չենք ուզում մտածել այն մասին, թե ինչ օգուտ դա մեզ կրերի այժմ կամ ապագայում: Մենք ուզում ենք դա անել որպես բարեգործություն, ուզում ենք դա անել, որպեսզի կարողանանք մաքուր պահել մեր խիղճը»⁴⁷:

Այսուամենայնիվ, պետք է նշել, որ Արևելքում գործող հայերի օգնության կայաններն անկարող էին օգնել բոլոր կարիքավորներին: Հալեպում, օրինակ, փրկարար աշխատանքների կազմակերպմանն աջակցում էր տեղի գերմանական հյուպատոս Վալտեր Ռյոսլերը: Բայց նա ևս անկարող էր կապ հաստատել աքսորյալների հեռավոր վայրերում տեղակայված ճամբարների հետ, որոնք քննարկվող ժամանակաշրջանում ոչ մի տեղից օգնություն չստացան:

Այդ պատճառով ԳՀԸ-ն որոշեց օգնության փրկարար արշավախումբ ուղարկել Արևմտյան Հայաստան, որը պետք է այցելեր աքսորյալների բոլոր ճամբարներն ու օգնություն հասցներ հարյուր հազարավոր անապաստան, անսնունդ և անօգնական կանանց ու երեխաներին: Այդ նպատակով 1916 թ. մարտի 2-ին ընկե-

⁴⁷ E. Stier. Armenien und wir. –DNL, vom 14. Dezember 1915.

րությունը դիմեց ռայխսկանցներին՝ խնդրելով արշավախմբի համար, որը բաղկացած էր լինելու բժիշկներից, գրքության քույրերից և երկրի պայմաններին ծանոթ անձանցից, մեկնման թույլատվություն ստանալ թուրքական կառավարությունից⁴⁸: “Որքան մեզ հայտնի է,– կարդում ենք այդ դիմումի մեջ,– թուրքական կառավարությունը մերժել է չեզոք կողմից իրեն եղած նման մի քանի առաջարկներ: Ուրեմն՝ առավել ևս Գերմանիայի մարդասիրական շրջանակների պարտքն է դառնում՝ գերմանական կառավարության միջամտությամբ ջանալ մեղմելու այն տառապանքը, որի գոյության համար Գերմանիան, իբրև Թուրքիայի զինակից, ամբողջ աշխարհի կողմից բարոյապես պատասխանատու է համարվում: Թուրքական կառավարությունը պատերազմի սկզբից ի վեր կարևորել է իր համերաշխությունը ոչ թուրք մահմեդականների հետ: Ուրեմն՝ նման համերաշխության իրավունք ունեն նաև գերմանացի քրիստոնյաները Թուրքիայի քրիստոնյաների նկատմամբ: Երբեք չի կարելի ընդունել, թե Թուրքիայի քաղաքական շահը պահանջում է կես միլիոն կանանց և երեխաների ոչնչացումը, մինչ Գերմանիայի շահը ստիպողաբար պահանջում է, որ ինքն իրեն ազատի այն կշտամբանքից, թե մեղսակից է քրիստոնյա ժողովրդի բնաջնջմանը ...”⁴⁹:

Ռայխսկանցները դիմումն ուղարկեց Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Վոլֆ Մետերնիխին, որն էլ այն ներկայացրեց թուրքական կառավարությանը: Հակառակ դեսպանի պնդումներին և բացատրություններին, թե ձեռնարկը քաղաքական նպատակ չի հետապնդում, թուրքական կողմից հնչեց մերժողական պատասխան՝ պատճառաբանելով, որ դրանով “կգորանան” հայերի կողմից արտասահմանի վրա դրված հույսերը⁵⁰:

1916 թ. ապրիլի 17-ին⁵¹ ԳՀԸ-ի կողմից կրկին խնդրագիր ուղարկվեց ԱԳՆ, որն այն փոխանցեց Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը: Սակայն դեսպանությունը մերժեց ներկայացված խնդրանքը՝ նշելով. “Դեսպանությունը կտրականապես դեմ է ԳՀԸ-ի ներկայացուցչի առաքմանը: Հայերի համար գերմանական բարեգործական ակցիայից հազիվ թե քաղաքական օգուտ քաղենք: Նույնիսկ զուտ մարդկային տեսանկյունից պարզ չէ, թե ինչու գերմանական փողերն ու գերմանական բարեգործությունը պիտի օգտակար լինեն ոչ թե պատերազմից շփոթված մեր քաղաքացիներին, այլ արտասահմանին: Դրանով մենք միայն ծառայություն կմատուցենք մեզ հետ պատերազմող և մեզ թշնամի հայերին ու ամերիկացիներին և չենք կարող սպասել նույնիսկ աննշան փոխհատուցման: Մասնակցելով

⁴⁸ St ü E. Stier. Zur Geschichte der Deutsch–Armenischen Gesellschaft (1914–1939), S. 5 (69).

⁴⁹ Ռ. Լեոնեան. նշվ. հոդվ., էջ 110:

⁵⁰ Նույն տեղում:

⁵¹ Նույն տեղում:

հայ-ամերիկյան բարեգործական միջոցառմանը՝ մենք դժգոհություն կատաղացանք թուրքական կառավարության մոտ⁵²:

Դժգոհ ստացած պատասխանից՝ Շթիբը վերջին փորձը կատարեց՝ դիմում հղելով անձամբ Թալեաթ փաշային: Նա խնդրեց հանուն մարդասիրական նպատակների թույլատրել Հալեպի և Մոսուլի վիլայեթներ իրենց մուտքը: Պատասխանը ստացվեց օգոստոսի 24-ին Մայնի Ֆրանկֆուրտի թուրքական հյուպատոսության կողմից: Դրանում նշվում էր, որ «նկատի ունենալով չորրորդ և վեցերորդ գործափափորումների ռազմական գործողություններն այդ վարչական շրջաններում՝ գլխավոր հրամանատարությունն արգելել է ուղևորությունն այդ տարածքներ⁵³:

Այսպիսով, ցեղասպանությունը վերապրած կարիքավոր հայերին գործնական օգնություն ցուցաբերելու ԳՀԸ-ի փորձերը ձախողվեցին:

Լեփսիուսն ի նպաստ հայ ժողովրդի գերմանական կառավարությանն ակտիվ միջամտության մղելու միակ հուսալի ճանապարհը, ինչպես արդեն նշվել է, համարում էր հասարակական ճնշման ուժգնացումը: «Der Christliche Orient» պարբերականը, սակայն, գրաքննության պայմաններում հասարակության իրազեկման՝ նախանշված նպատակին ըստ հարկի ծառայել չէր կարող, ուստի նա վճռեց դիմել հասարակության իրազեկման ամենաազդու միջոցին, այն է՝ իր հավաքած տեղեկություններն առանձին գրքով հրատարակել և առաքել Գերմանիայի ավետարանական քահանայություններին, «Գերմանիայի առաքելությունն Արևելքում» կազմակերպության (ԳԱԱ) բարեկամներին, գերմանական կառավարության անդամներին և այլոց: Առաքումը պետք է կատարվեր գաղտնի՝ չձախողելու համար⁵⁴:

Այդ նպատակով Կ. Պոլիս կատարած ուղևորության ընթացքում ձեռք բերած փաստական նյութերի հիման վրա նա 1916 թ. ամռանը հրատարակեց «Տեղեկագիր Թուրքիայում հայ ժողովրդի կացության մասին»⁵⁵ աշխատությունը⁵⁶: Հետա-

⁵² Տե՛ս E. Stier. Geschäftsbericht der Deutsch-Armenischen Gesellschaft, 21. Mai 1919, EZA Berlin, S. 10.

⁵³ E. Stier. Zur Geschichte der Deutsch-Armenischen Gesellschaft (1914-1939), S. 6 (70).

⁵⁴ Ա. Հայրունի. նշվ. աշխ., էջ 282:

⁵⁵ Տե՛ս J. Lepsius. Bericht über die Lage des Armenischen Volkes in der Türkei. Potsdam, 1916.

Լեփսիուսի «Տեղեկագիր»-ը՝ Ադաթոն բեյի ֆրանսերեն թարգմանությամբ, լույս է տեսել 1918 թ. Փարիզում: Վարկած կա նաև, որ Լեփսիուսը 1916 թ. Պոտսդամում այդ գրքի գերմաներեն հրատարակությունից անմիջապես հետո իրականացրել էր ֆրանսերեն հրատարակությունը և տարածել (տե՛ս A. Meißner. նշվ. աշխ., էջ 232-233):

գայում այդ կապակցությամբ Շթիրը գրել է. “Պատերազմի հետևանքով ի հայտ եկած խոչընդոտների առկայության պայմաններում խիզախություն էր, որ մեր (ԳՀԸ-ի – Ն. Ս.) նախագահ Լեփսիուսն անձամբ ստանձնեց 300 էջից բաղկացած “Տեղեկագիր Թուրքիայում հայ ժողովրդի կացության մասին” [որն ավելի ուշ հրատարակվեց “Հայ ժողովրդի մահուդին” (“Der Todesgang des armenischen Volkes”) վերնագրով] գրքի հրատարակման պատասխանատվությունը, երբ իր ղեկավարած ԳԱԱ-ի հոգաբարձությունը դեմ արտահայտվեց գրքի հրատարակմանը (երկարատև որոնումներից հետո հրատարակչություններից միայն երրորդն էր, որ համաձայնեց տպագրել գիրքը⁵⁷): Սա նաև դրդեց նրան հիմնադրելու նոր ընկերություն, որը կոչվեց “Դր. Լեփսիուս-Գերմանիայի արևելյան առաքելություն”⁵⁸:

1916 թ. հուլիսին Լեփսիուսն ընկերների և ընտանիքի անդամների օգնությամբ “Տեղեկագրի” 20.000 օրինակ առաքեց ավետարանական քահանայություններին, ԳԱԱ-ի իր ընկերներին, իսկ մնացած 500 օրինակը՝ պետական հաստատությունների աշխատակիցներին, Ռայխսբազի և Վիթենբերգի երկրամասային պառլամենտի պատգամավորներին, գերմանական հեղինակավոր պարբերականների խմբագրություններին⁵⁹: “Դր այդ եւ յետագայ քայլերուն հետևանքով Լեփսիուսի ներկայութիւնը Գերմանիոյ մէջ անյարմար կը նկատուի, եւ կառավարութիւնը կ’առաջարկէ իրէն՝ ուրիշ երկիր մը ընտրել իր բնակութեան համար”⁶⁰, – գրում է հայտնի դաշնակցական գործիչ, միաժամանակ ԳՀԸ վարչության անդամ Լիպարիտ Նազարյանը:

Այդ պատճառով, ինչպես նաև շաքարախտը բուժելու նպատակով Լեփսիուսը 1916 թ. հուլիսի 15-ին տեղափոխվեց Հոլանդիա⁶¹: Այնտեղից նա շարունակեց կապեր պահպանել հայկական շրջանների և գերմանական այն հաստատությունների ու գործիչների հետ, որոնք որևէ կերպ կարող էին օգտակար լինել Հայ դատին:

Երբ նույն թվականի սեպտեմբերի 9-ին թուրք դեսպան Հակկին (Բրահիմ Հակկի փաշա) բողոք ներկայացրեց Գերմանիայի ԱԳՆ-ին Լեփսիուսի “Տեղեկագրի” կապակցությամբ՝ այն անվանելով “Հայկական հարցի մասին հերթական

⁵⁶ Տե՛ս E. Stier. Geschäftsbericht der Deutsch–Armenischen Gesellschaft, 21. Mai 1919, EZA Berlin, S. 11.

⁵⁷ Գիրքը տպագրեց քրիստոնյա-պահպանողական “Reichsboten” պարբերականի հրատարակչությունը (տե՛ս J. Lepsius. Der Todesgang des armenischen Volkes, S. XXVI):

⁵⁸ E. Stier. Zur Geschichte der Deutsch–Armenischen Gesellschaft (1914–1939), S. 6 (70).

⁵⁹ A. Baumann. Նշվ. աշխ., էջ 101:

⁶⁰ Ռ. Լեոնեան. նշվ. հոդվ., էջ 109:

⁶¹ Տե՛ս A. Baumann. Նշվ. աշխ., էջ 104:

խայտառակ գրքույկ”, նրան տեղեկացրին, որ գրաքննության կողմից գրքույկն արդեն արգելվել էր (1916 թ. օգոստոսի 7-ին)⁶²:

Այս քայլը հերթական անգամ ապացուցեց, որ գերմանական կառավարության համար առաջնայինն իր շահերն էին՝ այնքան, որ նույնիսկ պատրաստ էր մի ամբողջ քրիստոնյա ժողովրդի բնաջնջման մեղսակից դառնալ:

Այսպիսով, խնդրո առարկա ժամանակաշրջանում Յո. Լեփսիուսի և նրա ԳՀԸ-ի գործունեությունը հատկանշվում էր մի կողմից երիտթուրքական կառավարության ցեղասպանական քաղաքականության դեմ ուղղված քարոզչության միջոցով գերմանական կառավարության վրա հասարակական ճնշումն ուժգնացնելու և այդ կերպ նրան հայերի օգտին ակտիվ միջամտության մղելու, մյուս կողմից՝ արքային վերապրած բազմահազար հայ որբերին ու կանանց փրկելու ջանքերով: Այդ ամենը կատրվում էր պետական քարոզչության պահանջներին ու գրաքննության արգելքներին հակառակ. հանգամանք, որն էլ դարձավ Լեփսիուսի՝ հայրենիքը ժամանակավորապես լքելու հիմնական պատճառներից մեկը:

Հրանուշ Սահակյան – 2018 թ. Գերմանիայում՝ Էռլանգեն-Նյուրնբերգի համալսարանում, զբաղվել է գիտահետազոտական աշխատանքով: Գիտական 6 հոդվածի հեղինակ է: hranush.sahakyan@mail.ru

REFERENCES

- A. Baumann.** Der Orient für Christus. Johannes Lepsius–Biographie und Missiologie. Göttingen, 2007.
- A. Hayruni und R. Hosfeld.** Johannes Lepsius und die Armenische Frage im Beziehungsgeflecht des Weltkrieges. – „Das Deutsche Reich und der Völkermord an den Armeniern“. Göttingen, 2017.
- A. Hayruni.** Yohannes Lepsius araqelutyunə. Yerevan, 2002 (In Armenian).
- A. Meizner.** Martin Rades „Christliche Welt“ und Armenien, Band 22. Berlin, 2010.
- A. Richard.** Karl Libknecht und Genossen. Die „Ausrottung der Armenier“ während des Ersten Weltkrieges und die deutsche politische Linke. – „Armenisch–Deutsche Korrespondenz“, № 131/132, Jg. 2006/ Heft 1 & 2.
- Das undatierte Schreiben von Schreiber an den Oberpräsidenten v. Hegel und den Juristen R. Faber, Lepsius–Archiv, Halle, № 13797.
- Der Chef des Admiralstabs der Marine (Holtzendorff) an den Reichskanzler (Bethmann Hollweg). –http: www.armenocide.net/armenocide/armgende.nsf/AllDocs/1916-10-25-DE-001, PA-AA, R 14094.
- Der Konsul in Basel (Wunderlich) an den Reichskanzler (Bethmann Hollweg). –http: www.armenocide.net/armenocide/armgende.nsf/AllDocs/1915-09-22-DE-002 PA-AA, R 14087.
- Der osmanische Botschafter Hakki an von Jagow im Auswärtigen Amt vom 9. September 1916 sowie dessen Antwort vom 15. September 1916, Lepsius–Archiv, Halle, № 13827.

⁶² Der osmanische Botschafter Hakki an von Jagow im Auswärtigen Amt vom 9. September 1916 sowie dessen Antwort vom 15. September 1916, LAH, № 13827.

- Der Vorsitzende des Vereins deutscher Zeitungsverleger (Friedrich Faber) an den Unterstaatssekretär des Auswärtigen Amts (Zimmermann). –[http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1915-10-12-DE-001, PA-AA, R 14088](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1915-10-12-DE-001, PA-AA, R 14088).
- E. Stier.** An die Mitglieder der Deutsch-Armenischen Gesellschaft, Marburg, den 2. August 1916, Evangelisches Zentralarchiv in Berlin.
- E. Stier.** Armenien und wir. – „Das Notwendige Liebeswerk“, vom 14. Dezember 1915.
- E. Stier.** Geschäftsbericht der Deutsch-Armenischen Gesellschaft, 21. Mai 1919, Evangelisches Zentralarchiv in Berlin.
- E. Stier.** Zur Geschichte der Deutsch-Armenischen Gesellschaft (1914–1939). – „Mitteilungsblatt der Deutsch-Armenischen Gesellschaft“, Nr. 5–6, Dezember 1939.
- H.–L. Kieser.** Der verpasste Friede. Mission, Ethie und Staat in den Ostprovinzen der TŸrkei 1839–1938. ZŸrich, 2000.
- J. Lepsius.** Der Todesgang des armenischen Volkes. Bericht Ÿber das Schicksal des armenischen Volkes in der TŸrkei wŸhrend des Weltkrieges. Potsdam, 1927.
- J. Lepsius.** Bericht Ÿber die Lage des Armenischen Volkes in der TŸrkei. Potsdam, 1916.
- J. Lepsius.** Deutschland und Armenien. Potsdam, 1919.
- Lepsius an Rade vom 16. Januar 1916, Lepsius-Archiv, Halle, № 7143.
- R. Hofseld.** Operation Nemesis. Die TŸrkei, Deitschland und der VŸlker mord an den Armeniern. KŸln, 2005.
- R. SchŸfer.** Geschichte der Deutschen Orient-Mission. Potsdam, 1932.
- R. Lernean.** Mec agheti orerun. – “Hayreniq” (Boston), Z tari, t’iv 8, 1928 (In Armenian).
- S. Schaede, R. Hofseld (Hg.).** Der Genozid an den Armeniern. InterdisziplinŸre Perspektiven auf die historische und aktuelle Rolle des Protestantismus. Jena, 2016.

ПРОАРМЯНСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ И. ЛЕПСИУСА И ЕГО “НЕМЕЦКО-
АРМЯНСКОГО ОБЩЕСТВА” В ЕВРОПЕ
(Сентябрь 1915 – июль 1916 г.)

ГРАНУՍ ՏԱԿՅԱՆ

Резюме

Ключевые слова: “Немецко-армянское общество”, И. Лепsius, цензура, резня, пресса, Геноцид, мятежный, Армянский вопрос, Османская империя, союз, Б. Ольвег, листовка, ссылка, Е. Штир, консул.

В годы Первой мировой войны немецкая пресса находилась под строгой цензурой. Факты, которые могли бы нанести ущерб репутации Германии или считались опасными для ее политических интересов, не становились материалом для публичного обсуждения. Но доктор И. Лепsius не смирился с позицией государства в сохранении молчания о трагическом положении армянского народа. После возвращения из Константинополя в

Берлин (сентябрь 1915 г.) он выступил с рядом проармянских инициатив: публикация фактических материалов о внутренних событиях в Турции в швейцарской прессе, организация спасательных работ. В последнем случае большое содействие ему оказывал священник Эвальд Штир. К сожалению, все попытки проникнуть в Западную Армению с целью помочь нуждающимся, потерпели неудачу. Поэтому, чтобы подтолкнуть правительство Германии к активному вмешательству в пользу армянского народа, Лепсиус на основе фактических материалов, приобретенных во время своей поездки в Константинополь, летом 1916 года опубликовал работу “О пребывании армянского народа в Турции” („Bericht über die Lage des Armenischen Volkes in der Türkei”), которую тайно отправил в евангелическое священство Германии, своим коллегам, членам правительства и т. д. Однако после этого шага правительство Германии призвало его покинуть страну, а 7 августа 1916 г. книга была запрещена цензурой.

Итак, в течение рассматриваемого периода Лепсиус и его „Немецко-армянское общество”, с одной стороны, предпринимали усилия, чтобы с помощью германского правительства предотвратить истребление армянского народа в Османской империи, с другой стороны, пытались помочь тысячам изгнанных армян.

Грануш Саакян – аспирантка кафедры истории армянского народа факультета истории ЕГУ. В 2018 году занималась научно-исследовательской работой в Германии, в университете Эрлангена-Нюрнберга. Автор 6 научных статей. hranush.sahakyan@mail.ru

PRO-ARMENIAN ACTIVITIES OF DR. JOHANNES LEPSIUS AND HIS “GERMAN-ARMENIAN SOCIETY” IN EUROPE

(September 1915 - July 1916)

HRANUSH SAHAKYAN

Summary

Key words: “German-Armenian Society”, J. Lepsius, censorship, massacre, press, Genocide, rebellious, Armenian Question, Ottoman Empire, union, B. Hollweg, leaflet, link, E. Stier, consul.

During World War I mass media in Germany was strictly controlled by censorship. The facts that could damage the reputation of Germany or its political interests could not be subject for public discussion. However, Dr. Lepsius did not agree with the position of the state in maintaining silence about the tragic situation of the Armenian people. After the return from Constantinople to Berlin (September 1915), he made substantial promising initiatives, publishing factual materials on domestic events of Turkey in Swiss press and

organizing rescue operations. In the latter case, he was assisted by the priest Ewald Stier. Unfortunately, all attempts to enter Western Armenia to help the needy failed. Therefore, in order to push the German government to actively intervene in favor of the Armenian people, Lepsius, on the basis of factual materials acquired during his trip to Constantinople in July/August 1915, in the summer of 1916 published his work –“The situation of the Armenian people in Turkey” („Bericht über die Lage des Armenischen Volkes in der Türkei”), and secretly sent it to the Evangelical priesthood of Germany, his colleagues and other influential circles. However, after this step, the German government urged him to leave the country, and on August 7, 1916, the book was banned by the censorship.

Thus, during the period under review, on the one hand, Lepsius and his “German-Armenian Society” made efforts to prevent the extermination of the Armenian people in the Ottoman Empire and on the other hand they tried to help thousands of expelled Armenians.

Hranush Sahakyan - PhD student at the Chair of Armenian History of the YSU Faculty of History. In 2018 she was engaged in research work in Germany, at the University of Erlangen-Nürnberg. Author of 6 scientific articles. hranush.sahakyan@mail.ru

ԳՐԱԿԱՆ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԸ ԵՎ ՆՐԱ ՆՈՐՄԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԸՍՏ
Ա. ԱՅՏԸՆՅԱՆԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ *

ԶԱՐԻԿ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Բանալի բառեր՝ երկլեզվություն, մեռած գրաբար, անկենդան աշխարհաբար, լեզվի փոփոխություն, լեզվի տարբերակներ, արևմտահայերեն, լեզվական նորմ, քերականական կառուցվածք, քննական քերականություն, արևմտահայերենի նկարագրական քերականություն, լեզվամշակ, մշակության գործիքներ:

Արսեն Այտրնյանը (1825–1902) հայ բանասիրության նշանավոր դեմքերից է: Լեզվաբան-լեզվասեր, բանասեր-բանահավաք, իմաստասեր-փիլիսոփա մի անհատ, ում ժամանակի պահանջմունքը հորդորեց հանձն առնել նոր աշխարհի համար նոր լեզվի գործածությանը՝ «բանի մը խոսք ի նպաստ խոսելու»: Նրա «Քննական քերականությունը» (1866 թ., Վիեննա) նոր դարագլուխ բացեց հայոց լեզվի պատմության մեջ¹: Ավելին, լեզվական տարբեր իրողությունների՝ Ա. Այտրնյանի ըմբռնումները վեր են բարձրանում նրա ժամանակից և շատ կողմերով կապվում այժմեական լեզվաբանության խնդիրների լուծման հետ. մերօրյա հայերենի նորմավորման, լեզվաշինական աշխատանքների կարգավորման, ճիշտ լեզվաքաղաքականություն վարելու գործընթացներում զգալի նշանակություն ունեն այտրնյանական դասերը:

XIX դ. կեսերին «գիտոց մեջ» հետազոտության նյութ դարձավ աշխարհաբարը, հասարակական ուշադրությունը սևեռվեց նրա կանոնարկման վրա: Ահա այս գործին լծվեց Ա. Այտրնյանը: Նրա կարծիքով ոչ միայն լեզվի բառերի պատմությունը պետք է կարգավորել բառարանի մեջ, այլև նույնը ժամանակագրության քերականությամբ պետք է լրացնել: Լեզուներն իրարից տարբերակող ամենամեծ հատկանիշը քերականությունն է. եթե բառական խտրու-

* Ընդունվել է տպագրության 15. XI. 2018 թ.: Գրախոսվել է 18. I. 2019 թ.:

¹ Ա. Այտրնյանի լեզվաբանական հայացքներին անդրադարձել են Գ. Ջահուկյանը, Է. Ադայանը, Ա. Աբրահամյանը, Ա. Վարդանյանը. առաջին մենագրական ուսումնասիրությունը կատարել է Ա. Ս. Աբրահամյանը (□Արսեն Այտրնյանի լեզվաբանական հայացքները□, Երևան, 1984 թ.):

յունը նյութական է միայն, քերականականը լեզուների “կերպական գատիչն” է: Այն լեզվի գործնական հմտության միակ գործիքն է:

Ա. Այտրնյանն ինքն է, թերևս, ամենքից լավ ներկայացրել իր կատարածը: Նպատակը չի եղել հայերենի առջև ծառայած բազմաթիվ խնդիրներ լուծելը, ուղղակի ջանացել է ճշմարիտ տեսության ելակետը նշել, “ժամանակի անցմամբ և տարակուսներու մթովը թխացած” ներկան իր անցածով լուսավորել՝ զգուշացնելով և անձամբ զգուշանալով լեզվի տեսական-գործնական ընթացքը միակողմանիորեն քննելուց, եղածը հնարավորինս մեղմելուց կամ չեղածը ցուցադրելուց: Ջանացել է գրաբար քերականություններից աշխարհաբարյան հայերենի քերականություն լույս ընծայել՝ պահպանելով “Հայկաբանության” կանոնները, առաջնորդվելով կանոնների կանոնով. “Քերականութիւնն արուեստ մըն է, որ կը սորվեցընէ լեզու մը 1. ուղիղ հասկընալ եւ 2. անսխալ խօսիլ կամ գրել”:

Իսկ ինչո՞վ է պայմանավորված քննական “խոստացողական” բառի գործածությունը: Այտրնյանը բացատրում է՝ այն պահանջում է քննել ու ընտրել, գրաբարի նմանությունների, փոխառությունների կամ օտարությունների չափն ու սահմանը որոշել, համեմատել և հակադրել, զուգահեռ ձևերը նկատել, տեղ-տեղ ավելի որոշ ու հատու վճիռ կայացնել՝ գործածության երկու կամ երեք ձևերից միայն մեկը՝ ընդունելին ի ցույց դնելով, զեղծումներն ու սխալները մատնանշել և այլն: Ահա թե ինչու շատ դեպքերում նորոգություն անելու ցանկությամբ չի առաջնորդվում: Երբեմն-երբեմն հին գանձարանների խորշերն է միայն բացում՝ շատ լավ գիտենալով, որ լեզուն ազնվացնելու կամ ճոխացնելու անվամբ նորոգությունից մինչև իմաստակության սահմանն անցնելը բավական է մեկ քայլ: Նա համոզված էր, որ այս “Քերականությունը” իր գլխավոր նպատակին ծառայեցնելու դեպքում ամենքին հավասարապես ծառայելու գործիք կդառնա: Իսկ նպատակային պահանջն անբեկանելի էր. “Միայն՝ կը կարծենք, թէ մէկու մ'ալ անհրաւած չենք ըլլար, երբ պահանջենք որ... լեզուին օրէնքները ծանօթանան, անհայազէտն հայազէտ ըլլայ, եւ հայախօսը միանգամայն ուղղախօս. կանոնն ըլլայ տիրող, եւ անտէրնչութեան վիճակի մը մէջ աղաւաղութիւնները չգօրանան օրէօր” (էջ 329):

“Ներկան անցածով լուսաւորելու է” նշանաբանով Այտրնյանը քննում է հայոց լեզվի պատմության շատուշատ հարցեր, հետազոտության նյութ է դարձնում իր ժամանակի հայերենը՝ կարևորելով բնության և իմացականության օրենքները, ժամանակի գործոնը: Երևույթներն առաջ բերելը բնության գործն է,

² Ա. Այտրնյան. Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Երևան, 1987, էջ 1 (այսուհետև այս գրքից մեջբերվող հատվածների էջերը կնշվեն տեքստում):

երևույթների քննությունը՝ իմացականության, իսկ բնությանն աջակից է ժամանակը: Մարդու մտավոր գործունեության ընթացքի “գլխավոր երեւեցուցիչն է խօսողութիւնը կամ լեզուն”՝ “հայ մտաց արտաքինը”: Այն, իր ընդհանուր ու ներքին զարգացմանը և արտաքին ձևի հետ սերտորեն լծակցված, դրսևորվում է անհատական խոսքով՝ “անհատաբար կը բխէ”, որի արդյունքում մտավոր գործունեության գումարելիների գումարը դառնում է պատմություն, դառնում է ժամանակագրություն: Վերջինս այն ժամանակ է բարձրագույն կարևորություն ստանում, երբ հյուսվածքի բազմակնճիռ թելերի կապակցությունը քննելուց բացի անցյալի միջոցով ներկան, ներկայի միջոցով անցյալը ճանաչելուց առավել դեպի ապագան առաջնորդող ճիշտ ուղիներ են ուրվագծվում: Ներկային տրված չէ ապագայի բացարձակ տեսողություն, իսկ ապագայի էությունն է մարդկային հաշիվներից դուրս և անստույգ լինելը: Այսուամենայնիվ, իբրև ապագա շենք, այն կարելի է տեսնել իր հիմքերի վրայից. ուրեմն յուրաքանչյուր լեզվի ապագան ներկայում դրվող և դրված հիմքերից կախում ունի: Այսընայանական այս դասը խիստ արդիական է:

Ինչո՞ւ է լեզվի քննությունը կարևոր, և ո՞րն է լեզվաքննության պատմական նշանակությունը: Լեզուն այն կրող ժողովրդի նյութական, բարոյական ու մշակութային արժեքների “ծանրաչափն” է: Այսպես. “Հին աշխարհի մեջ Ելլադայի նուրբ ու փափուկ ատտիկերենը եւ Լատինի հզոր եւ պերճ լատիներենը՝ Յունաց գեղեցկասէր մտացն ու Հռոմայեցւոց յաղթասէր բնաւորութեանը ճշգրիտ հայելիներն էին” (էջ 34): Հայոց լեզուն ևս իր գորեղությամբ ու զարդարանքով, իր կանոնավորմամբ և զարգացմամբ կամ իր անկումներով ու անտեսվածությամբ, հասարակացմամբ և փոփոխություններով յուրատեսակ “ծանրաչափն” է հայոց ազգի մտավոր, նյութական և բարոյական հաջող կամ անհաջող վիճակների:

Այսընայանը կարողանում է ճանաչել համընդհանրական լեզվաիրողությունները. լեզուն ընդհանուր է, և հայերենն ուսումնասիրել նշանակում է ընդհանուրից մասնավորին իջնել, ընդհանուր մարդկայինն ազգայնացնել, բայց և չմոռանալ՝ հայոց լեզուն կարևոր նյութ է պատմահամեմատական լեզվաբանության համար:

Իբրև իմաստասեր՝ լեզվագետը պիտի ետ նայեր ու հասներ Մեծ սկզբի՝ առաջին լեզվի հիմնախնդրին: Բայց ծագման կամ ծննդյան գաղափարը լեզունների պատմության մեջ յուրովի է մեկնաբանվում: Ինչո՞ւ: Որովհետև մարդկային ծնունդն առանց նախընթացի գուտ պատմական մի դեպք է. ծնունդը մարդու կենսագրության մեջ շղթայի առաջին օղակն է: Իսկ լեզունների պատմությունը հակառակն է հաստատում՝ գրեթե անկարելի է նրա առաջին օղակը գտնել: Այսընայանը փիլիսոփայում է. “Անկարելի եղած է նոյն առաջին օղակը գտնել,

մինչևեւոր վերջապէս հասնինք այն առաջին աստուածապարզն լեզուին, որուն սկզբնական վիճակին վրայ արդի փիլիսոփայական լեզուաքննութիւնը՝ ամենակերպ ընդարձակ հետազոտութիւններովը հանդերձ չէ կրցած վճիռ բերել: Ասել կ'ըլլայ ուրեմ նոր մեզի ծանօթ հին լեզուաց ծնունդը կամ սկզբնաւորութիւնը՝ իրենց զաւակացը ծնընդենէն կամ սկզբաւորութենէն միայն կարելի է գուշակել, այսինքն լեզուի մը ծագումը՝ այն անզգալի անդադար փոփոխութեանց շարունակութեանը մէջն է. եւ ծնած կը համարուի՝ երբ որ իւր նախընթացէն բարոյապէս զատուած յատուկ կերպարանք առած է" (էջ 32): Այս ճանապարհին նա հասնում է մտածողության, լեզվի և խոսքի եռահարաբերության խնդրին. լեզուն ոչ միայն հաղորդակցության, այլև մտածողության ձևավորման միջոց է. փոխվում է մտածողությունը, դրան համապատասխան փոփոխվում կամ կերպարանափոխվում է լեզուն:

Այսընյանը կրկին ու կրկին հաստատում է համընդհանրական լեզվաիրողությունը. "Կտրհող ու խօսող մարդկութիւնն է իւր լեզուին ձեւն ու կերպը տուողը: Առատ գաղափարաց տէր ժողովուրդ մը առատ ու ճոխ լեզուի ալ տէր է, գեղեցիկ մտաց տէր ըլլողը՝ գեղեցիկ լեզուի եւ այլն" (էջ 33):

Այսընյանը թե՛ տեսական, թե՛ գործնական հարցերի հարց է համարում ազգային լեզվի երկփեղկումը՝ "լեզուաց երկուսությունը": Ինչո՞ւ այդպէս, և ինչպէ՞ս նրանցից յուրաքանչյուրին իր իրավունքը տալ: Նա հայերենի ընթացքը երկու շրջափուլի է բաժանում՝ հինհայերենյան և նորհայերենյան: "Մեռյալ" գրաբարի և "անկենդան" աշխարհաբարի կողքին քննում է նաև ռամկական լեզուն՝ թե՛ "նախնեաց ռամկօրէնը", թե՛ իր ժամանակինը՝ գրելով. "Այսօրւան օրս երկու այլեւայլ հայերէն լեզուաց տէր ըլլալնիս ամէն խնդրէ եւ երկբայութենէ դուրս է:– Հնութեան դիմաց նորութիւն, ճոխութեան՝ աղքատութիւն, ընդհանրականութեան դիմաց մասնականութիւն. մեռելութիւն եւ կենդանութիւն. ասոնք են մեր հայերէն լեզուն երկուքի բաժանող՝ Գրաբար եւ Աշխարհաբար զանազանող վայրկեանները: Չատ նկարագիր եւ բնաւորութիւն, զատ բառից մթերք, տարբեր նշանակութիւն եւ կիրառութիւն, զատ օրէնք եւ քերականութիւն, միով բանիւ՝ երկու էապէս իրարմէ զանազանեալ լեզուներ ըլլալու ոչինչ կը պակսի. այնպիսի լեզուներ՝ որոնց երկունքն ալ, մէկը անցեալ եւ միւսը ներկայ աշխարհի լեզուներ ըլլալով՝ իրենց յատուկ կենցաղական ու գրաւորական կեանքն ունեցած են" (էջ 27–28): Այս հարցի լուծման ճանապարհին Այսընյանը հանգել է համալեզվական ճշմարտության՝ խնդիրը զուտ գործնական է, այսինքն՝ պետք չէ փնտրել, թե ո՞ր լեզուն ենք ուզում բանեցնել, այլ թե ո՞րն ենք հարկադրաբար գործածում, և որո՞վ կարող ենք ապրել: Նոր լեզուն կույր դիպվածի արդյունք չէ կամ թե սուկ դժբախտության արգասիք, այլ "բնական օրէնք եւ մարդկային մտաց հոգեբանական ընթացից մէկ երևոյթը՝ սկզբնաբար, ո-

րուն լրացուցիչն է ժամանակը, որուն կամա ակամա հարկ կ'ըլլայ հպատակիլ: Եթէ մեր ձեռքը տրուած ըլլար բնական օրինաց վրա իշխանութիւն, թերևս բնութեան շատ ընթացքը կը կասեցընէինք, կամ թէ ետ ալ կդարձընէինք այն գերբնական զօրութեամբ, և ոչ մեռեալ լեզուներու միայն, հապա շատ ուրիշ մեռեալներու կեանք կը պարգևէինք: Բայց իրաց վիճակը մեր բաղձանքէն տարբեր է" (էջ 252–253): Այսպէս մտածելով՝ Այտընյանն ուսուցանում է՝ չարյաց առաջին դարմանը, ասում են, պատճառը փնտրելն է, ճանաչելը, բայց դարմանն անելու անկարողութեան դեպքում մեծ սփոփանք է հասկանալ և ընդունել, թէ չարիքը հարկավոր ու անհրաժեշտ չարիք էր:

Նշանավոր լեզվագետը չէր կարող չանդրառանալ գրաբարի վերծանութեան և գրաբարահանութեան գործադրական խնդիրներին: Տեսականորեն գրաբարը սրբազան վաղեմութեան ներկայացուցիչն է և "անհնանալի հնութիւնների" մշտնջենավոր ավանդապահը, և նրա ուժն ու վայելչությունը պահելու միակ միջոցն այն իր սրբազան վիճակի մեջ պահպանելն է և ոչ թէ ռամիկի բերանը թողնելը: Ինչո՞ւ չեն կենդանանում մեռյալ դյուցազնական լեզուները: Որովհետև ցանկացած լեզու, որ հազարավոր տարիներ ի վեր անգործութեան մեջ է և աշխարհին ծանոթ է բառարանով ու քերականութեամբ, միայն շինծու կարող է լինել: Կասկած չկա, որ հին լեզուն գործածողը պետք է որ անտեսի անձնական ճաշակը, հին հեղինակների գաղափարողը լինի, մի խոսքով՝ ինքն իրեն հին աշխարհը փոխադրի՝ փորձելով թէ՛ հին և թէ՛ նոր աշխարհներին միաժամանակ խաբել: Բնականաբար, անհիմն չէ նրա տարակուսանքը. "Եթէ մենք զմեզ հին ժամանակներու չենք կրնար փոխադրել, ինչպէս կուզենք որ հին ժամանակներում խօսուածքը մեր ժամանակները բերենք" (էջ 287): Այնու կողմից՝ Այտընյանի համար մերժելի է այն մարդկանց մտածելակերպը, ովքեր գրաբարը որպէս մեռյալ մարմին են դիտում՝ փութալով մեջտեղից վերացնել: Արդո՞ք այդ "մեռելահանութեան" արդյունքը չէ, որ հայի ձեռքից հնութեան անհամար հրաշակերտներ անհետացան: Դատապարտելի են նրանք, ովքեր մի ձեռքում առաջադիմութեան դրոշմը պահած, մյուսում՝ լուսավորութեան վառվող ջահը, հանկարծ սկսում են մատենադարաններ այրել:

Խնդրի լուծման ամենամեծ "կնճիոր" երկու հայերենների միջև սահմանագծի որոշումն է. սահմագիծ, որը կամա՞ծին չէ. ժամանակի հանգամանքներն ու նոր աշխարհի ընդհանուր կարգն են այն գծել: Այս դեպքում ևս դասական է Այտընյանի խորհելաձևը. բավական աղետալի է այն "հատակագիծների" գործադրությունը, որոնց մեջ առաջադիմութեան գաղափարն ապստամբութեան գաղափարին կից է ըմբռնվում: Նա փորձում է ցույց տալ լեզվի գործածութեան եզրագիծը: Ամեն գործություն պետք է ներգործի այնքան և մինչև ուր կարող է: Սա վերաբերում է և հին լեզվի գործածութեանը՝ այնքա՛ն ժամանակ և այնտե՛ղ,

ուր հինն առանց “կերպարանաց այլայլություն” ընդունելու, առանց “ժամանակագրական բռնություն կրելու” կարող է մտածողության և հաղորդակցման գործառնությունները կատարել: Ուրեմն՝ տարագիր չանել գրաբարը, բայց և “սահմանն ցուցրներ իրեն՝ “վանքերու որմունքը կամ ճեմարաններու սրահները”” (էջ 310):

Նոր լեզվի բոլոր գանձերը հնի մեջ են, և հինը ստացողը “տիրած է նորոյն վրա”: Այս սկզբունքով առաջնորդվելով՝ լեզվագետը եզրակացնում է. “Քանի որ երկու լեզուաց տէր է այս օրս Հայ ազգը, ըստ մեզ պատշաճ ու հարկաւոր է երկուքին ալ ընդհանրական ուսումն ու մշակութիւնը, այնպէս որ չէ թէ միայն գրաբարը գրաբարին համար եւ աշխարհաբարն աշխարհաբարին համար, այլ և նաեւ փոխադարձ կերպով՝ աշխարհաբարը գրաբարին համար եւ գրաբարն աշխարհաբարին համար կ’արժէ եւ հարկ է սորվիլ ու մշակել ամենայն փութով” (էջ 319):

Ա. Այտընյանը լեզվի՝ հասարակության կառուցվածքով պայմանավորված սոցիալական և գործառնական տարբերակների խնդրին էլ է անդրադառնում, բնական է համարում լեզվի աստիճանականությունը, չի անտեսում լեզվի տարբերակների գոյությունն ու լեզվագործածության ոլորտների տարբերությունները: Այս հարցում մեր լեզվի “անգիր” ժամանակները ոչինչ “չեն ասում”, իսկ գրավոր ժամանակներն անապատների նման “լռում են”... Լեզվագետ Ա. Աբրահամյանն իրավացիորեն նշում է, որ լեզուների տարբերության ըմբռնման առաջին արտահայտությունը կարելի է համարել աստվածների և մարդկանց լեզուների առանձնացման վկայակոչումները բազմաթիվ ժողովուրդների դիցաբանության մեջ, իսկ հին աշխարհի լեզվաբանական ու ճարտասանական աշխատություններում հաճախակի են ընդգծվել միջլեզվային և ներլեզվային դասակարգման տարբեր հիմունքներ³: Եղած աղբյուրներին տեղյակ լինելով կամ գուցե տեղյակ չլինելով՝ Ա. Այտընյանը գիտակցել է՝ գրաբարն անգամ իր նախասկզբնական վիճակում միատարր լինել չէր կարող. “Ո՞վ կրնայ հաստատել՝ թէ ճոխ նախարարաց սեզ ամբոցներուն մեջ նոյն ոճն ու նոյն լեզուն կը հնչէր՝ ինչ որ հանդարտիկ խաղաղասեր ընտանեաց խոնարհ երդերուն տակ: Բնական է մտածել՝ որ երբ մէկ կողմանէ դպրաց դասու մը տկար եղեգներում յեցած ազնուագոյն լեզուն իւր գոյութիւնը հաստատ բռնել կը ջանար, միւս կողմանէ ժողովրդեան բազմութիւնն իւր ցածագոյն բարբառը՝ նորանոր փոփոխութիւններովն ու աղավաղութիւններովը մէկտեղ կը շարունակէր: Բայց այս ամէնը դարձեալ լոկ մակաբերութենէ աւելի չեն” (էջ 48): Բնականաբար, ազգի

³ Տես՝ Ա. Ա. Աբրահամյան. Արսեն Այտընյանի լեզվաբանական հայացքները, էջ 113–115:

մեջ խորհողն ու խոսողը մեկ անհատը չէ, և ոչ էլ ամենքը միևնույն կարգի և վիճակի մարդիկ են. ըստ լեզվակիրների իմացականության և զգացողության աստիճանների՝ լեզվում որոշ աստիճանականություն է դրսևորվում՝ բազմազունյան պեսպեսություններով. “Աւագանւոյ կամ Ադատաց լեզու”, “Ուսումնական կամ Գիտնոց լեզու”, “Հասարակ կամ Ընտանեկան լեզու”, “Գոեհիկ կամ Գեղջկաց լեզու” և այլն: Սրանք էլ իրենց գույներն ունեն՝ ազնիվ կամ կոշտ, զարդարուն կամ պարզ և այլն: Իր ժամանակից վեր բարձրանալով և անուղղակիորեն առնչվելով հանրալեզվաբանության խնդիրներին՝ լեզվագետը կարևորել է բազմաթիվ տարբերակների առկայության պայմաններում լեզվի միասնականության ու ամբողջականության խնդիրը:

Այտրնյանն ուրվագծում է իր ժամանակի լեզվավիճակը. մեռյալ գրաբար և անկենդան աշխարհաբար. միջակա անհարդար վիճակ. եղծված հնի կողքին տարբեր բարբառների բաժանված, օտարոտի տարրերով խառնված, գրագետների մոտ հարզ ու պատիվ չգտած նոր լեզու, որին “յեղեղուկ ժամանակն այնչափ կերպեր ու կերպարանքներ զգեցուց, որչափ ուրիշ մը չէ երբեք զգեցած”, և “բախտին խստութիւնն այն չափը պիտի հասներ այս լեզուին վրայ՝ որ իրեններն ըլլային զինքն հալածող, որ այն բերաններէն չարախօսուէր՝ որոնց մէջ իւր ծնունդը գտեր էր... Կարծէս թէ վրէժխնդիր Ուրուական մըն էր զինքն հալածողը” (էջ 257): Բայց ինչո՞ւ գարմանալ, որ “Բնությունն” ու “Ժամանակը” միաբանվել են՝ հնագույն ազգերից մեկին ևս մեկ հին և մեկ նոր լեզու տալու: Մյուս կողմից՝ լեզուների պատմությամբ հաստատված կանոն է՝ “միտքն է օրենսդիր և ոչ կամքը”, և բարի ցանկությամբ, բուռն բաղձանքով իրավիճակը հնարավոր չէ փոխել: “Գէշ խնայութիւն չէ հոգալ որ մէկ ժողովուրդը մէկէն աւելի լեզու չունենայ, բայց աւելորդ են ողբն ու տրտունջը, և վայրապար յոգնութիւն է եղածը չեղած երևցրնել, կամ եղածը չեղած ընելու ջանալ” (էջ 263):

Հայագետը լեզվի պատմաբնության շղթայում ուշադրության կենտրոնում է պահում նաև արևմտահայ աշխարհաբարի նկարագրության հետևյալ օղակները.

Ա. Գրի գյուտը: Ցանկացած աննյութ լեզու “լեզվի ազնվացուցիչ տարրի”՝ գրի հաստատուն կերպարանքով է մարմին առնում: Հազարամյա հայերենի նորմավորումը միայն գրի շնորհիվ անհրաժեշտություն դարձավ: Գիրն է հաղորդության այն խողովակը, որով ներկա դարն իրենից հազարավոր տարիներ առաջ ապրած ցեղերի խոսքն է լսում և հասկանում: Ա. Այտրնյանը լեզվի պահպանության և նորմավորման հարցերում գրի կարևորության մասին նշում է. “Առակ է՝ թէ խօսքը կը թռչի, գիրը կը մնայ: Գիրը, որ ժամանակակից բացակայից միանգամայն եւ ապագայ հեռաւորաց ուղղուած մնայուն դրոշմ է, լեզուին անդադար կերպարանափոխութեան ընթացքին առջելը բաւական ամուր

թումբ մըն է ...” (էջ 35): Գրավոր խոսքի միջոցով է, որ ձևավորվում է “օրինաց մատյանը”, որը “հարգում են” հաջորդ ժամանակներում, որին քիչ թե շատ հպատակվում են ապագա սերունդները՝ երբեմն՝ ավանդապահպանության օրենքին հլու՝ ներկա բացատրությունը նրան զոհելով, երբեմն՝ ետադաս անելով, երբեմն էլ խնդրահարույց հարցերում իրենց նախապատվությունը պահանջված չափավորությամբ առաջադասելով: Ավելին, լեզվագետը չի անտեսել գրավոր և բանավոր խոսքերի տարբերության հարցը. գրողը խոսողից առավել մտադիր է պահպանել լեզվական կանոնը, առավել պարտավորվածություն է զգում, պատասխանատվություն կրում:

Բ. Լեզվի նորմավորման և լեզվական նորմի փոփոխության հարցերը: Տիեզերական ընդհանուր կանոն է՝ յուրաքանչյուր լեզու ժողովրդի բերանում է աստիճանաբար փոփոխվում՝ ամրակայված օրենքների դեմ մեղանչելով, բայց և նորից կանոնավորվում է՝ բնական տրամաբանությամբ ու բնական ազդմամբ: Մյուս կողմից լեզվաբանը խոստովանում է՝ որքան խոսքը կանոններով կապկպված է, շղթայված, այնքան պարզունակ է և վայելչությունից զուրկ: Լեզուն իր փոփոխությունների ընթացքում ձգտում է կատարելության: Լեզունների հազարամյա պատմության մեջ ընդունված է կատարելության վերին աստիճանը կոչել “Ոսկեդեն դար”՝ բովանդակ իւր անցյալէն եւ ապագայէն գերագանց”: Նույնի համեմատությամբ հաջորդողներն էլ “Ոսկեդենից” հեռանալու համեմատ անուն են առնում՝ “Արծաթի”, “Պղնձի”, “Երկաթի”, մինչև “Խեցեդեն դար”: Լեզվի փոփոխության հարցում ևս կենսունակ է փիլիսոփայական հանրահայտ օրենքը՝ “քանակական փոփոխությունները պատճառ են դառնում որակական փոփոխությունների”: Այն, ինչ ծնվում է, պետք է ապրի, իր նմանն առաջ բերի և մեռնի. սա է բնության խորհուրդը: Բայց և բնության մեկ այլ օրենք էլ սահմանում է՝ ոչինչ միանգամից չի լինում, և ամեն փոփոխություն “անցման կարոտություն” ունի: Այս օրենքները լեզվի վրա էլ են տարածվում: Լեզվաբան-բանասերը իմաստասիրում է. “Ծնանիլ, ապրիլ, իւր նմանը յառաջ բերել եւ մեռնիլ. ասոնք են մարդկութեան եւ անոր շատ իրողութեանցն էական վայրկեանները: Մարդկային խօսողութեան գործիքը, լեզուն, ան ալ հարկաւ այս չորեքատիկ անցքերէն կ’անցնի, եւ բնութիւնը, որ ծանօթ սկիզբ մըն է թէ երբեք Ոստիւն չ’ըներ իւր ընթացքին մէջ, հոս ալ Անցման կարօտութիւն ունի եւ երկարագոյն ժամանակի: Լեզուաց այս քառապատիկ վայրկեաններն այնչափ ընդարձակ Շրջաններ են” (էջ 31): Ուրեմն՝ լեզուն փոփոխվում-փոխվում է ներքին-բնականոն առաջընթացի թելադրանքով, իսկ փոփոխությունների հիմնապատճառը չգործածվելն է, անգործության դատապարտվելն է, և լեզվի ազնվացումն ու կատարելագործումն առանց “բռնագրության”, առանց կամայականության պիտի լինեն, իսկ ներկայի տարածամ ու ինքնակամ փոփո-

խությունները սովորաբար ապագան են եղծանում: Այտրնյանը լեզվի գլխավոր “այլայլիչներ” է համարում քաղաքական իշխանությունը, կրոնը և գիրը: Մրանցից գատ այլ պատճառներ էլ է նշում՝ լեզվի ներքին պահանջմունքը, հաղորդակցական իրավիճակը, քաղաքական անցքերը, տարածական հեռավորությունը, “գաղթականությունը”, աշխատակազմի գրքերը և այլն:

Գ. Լեզվական շեղումները: Այտրնյանը խոսում է նաև զեղծումների և խոստումների մասին, հանգում սրանց դիտավորյալ և ոչ դիտավորյալ տարբերակմանը՝ տողատակում մեջբերելով Կիկերոնի խոսքը՝ “Սովորությունն ընդունելի ըրած է քաղցրութեան համար երբեմն լեզուին օրինացը դեմ մեղանչել” (էջ 52): Նրան մտահոգող հարցերից մեկը օտար ազդեցությունների կամ, ինչպես ինքն է ասում, “լեզուին տարրալուծութեանը մեջ՝ այս քիմիական խնամութեան գորութեան” խնդիրն է: Օտարագործածությունը ցանկացած լեզվի ետընթաց շարժման գլխավոր դրդիչն է: Մյուս կողմից՝ հին և նոր լեզուների քննական համեմատության արդյունքում ընդհանուր կանոնի բացառություն պիտի համարվի, եթե մի լեզու օտար կամ եկամուտ բառեր չունենա. ներքին կարոտությամբ պահանջվող արտաքին ազդեցությունը բնական երևույթ է: Օտարությունների ճարտար փոխառությունը ոչ լեզվի հարգը կարող է նվազեցնել և ոչ էլ վայելչությունը մթնեցնել, մանավանդ եթե հայտնի հեղինակների օրինավոր գործածությամբ ու ընդունելությամբ է վավերացված: “Այս ճարտարությունն ալ ուրեմն ինչպէս ուրիշ ամէն արուեստ՝ որոշ կերպ ու գաղտնիք մ'ունի, որ օտարինն իրեն յօդէ առանց մուրացիկ երևալու” (էջ 224): Այտրնյանը սովորեցնում է փոխառող-թարգմանողին. “Ժամանակիս բանասերն ալ հարկ է որ իւր խստութիւնը գիտնայ մեղմել ... Շատ բան իբրեւ հարկաւոր, քանի մը բան իբրեւ վայելուչ՝ պատշաճ է ընդունիլ, կամ ընդունուածը չմերժել, յամենայնի չափը պահելով” (էջ 336): Այսինքն՝ օտարության չափը Չափավորությունը պիտի լինի: Բայց օտարությունները նաև անհոգության և լեզվական բարձիթողության, անչափության արդյունք են:

Դ. Լեզվի “նորոգության”, “մշակության”, այլ կերպ ասած՝ լեզվաշինական աշխատանքները: Լեզվի թուլանալու պատճառը թերակատար քննությունն է, և մեր ձեռքում է նրա խոտելի մասը ջնջելը և “հարդարյալ կերպարանք տալը”: Որպես նորմավորման սկզբունք նշում է. “Բնութեան հպատակիլ եւ արուեստական մշակութիւնը բնութենէ անբաժին բռնել՝ մարդկօրեն գործողութեան գլխաւոր առավելութիւնն է” (էջ 318): Եզրակացությունն անբեկանելի է՝ յուրաքանչյուր լեզու անհրաժեշտ է մշակել և կատարելագործել:

Ե. Լեզվապաշտպանության անհրաժեշտությունը: Հայտնի է, որ այտրնյանական հայերենն իր ներկա վիճակի մեջ գովասանքի արժանի չէր, սակայն այն, որ նրա գլխավոր առավելությունն իր հարկավոր լինելն էր, և դրանով իսկ

լեզվակիր հանրությանը ծառայություն էր մատուցում, արժանի էր արդար պաշտպանության:

Զ. Ուսուցումն ու կրթությունը: Չկա այնպիսի ազգ կամ ժողովուրդ, որ առանց ուսման ու կրթության իր սեփական մայրենի լեզվով անսխալ խոսելու և գրելու պարծանքն ունենա: Այս հարցում, նաև լեզվի նորմավորման գործընթացում կարևորում է դպրոցի դերը. այստեղ է, որ կարելի է սովորել “ըստ օրինի խոսել”:

Է. Մայրական դաստիարակությունը: Մատաղ սերնդին կրթելու համար անհրաժեշտ է, որ մայրերն էլ ուսումնական լինեն. “Ազգիս մէջ ալ ուսումնասիրութիւն չմըտնէ պիտի, մինչեւ որ մայրերն ալ ուսումնական չըլլան, որպէս զի անոնց զուակաց կազմութեանը մէջ ուսումնասիրութիւն տարրանայ, և շատ կանուխ ուսման յարգն ու կարեւորութիւնն ճանչեն” (էջ 327):

Ը. Լեզվի տեսական և գործնական ուսուցման փոխկապակցվածությունը: Իհարկէ, այս հարցը ևս քննվում է գրաբարի և աշխարհաբարի առնչությամբ, բայց այն իր կարևորությամբ ավելին է: Գործնականն առանց տեսականի մի շենք է՝ առանց հիմքերի, կամ գոնե հիմք է՝ առանց հաստատուն լինելու: Եթե նոր մատենագրությունը “ստուգի” գործարան է, ուր “կռանահարութեան և ձեռնավարութեան կարօտ” լեզուն պիտի գործի և գործածվի, ապա նույն գործարանին նյութ մատակարարողը, նրա “բովքը” գրաբարն է. առանց “բովուց” գիտության, առանց նյութի տարերքը տեսականապես և հիմնովին ճանաչելու հնարավոր չէ լեզվին կատարյալ ձև տալ: Այս լեզվապայքարի ընդդիմակաց կողմերն անհաշտելի չեն. մեկը պարզապես բանասեր հոգի է, մյուսը՝ գործասեր: Կհաշտվեն և գովեստի արժանի կլինեն, եթե ջանան “բանասեր-գործասեր” լինել:

Թ. Լեզվամշակների աշխատանքը և մշակության գործիքները: Ի վերջո, Այտրնյանը չէր կարող չարժեքավորել ազգային լեզուն “ուսման նյութ” դարձնողների՝ “բանասեր-գործասեր” լեզվամշակների աշխատանքը, նրանց ջանքն ու հորդորները և մատուցած “կերպ-կերպ նպաստները”: Լեզվամշակը ստորին գործավոր չպետք է լինի, չպետք է լինի և վերին օրենսդիր: “Քերականությունը” թերթելիս հաճախ են աչքի զարնվում լեզվամշակողին ներկայացվող պահանջներն ու զանազան գնահատականները, ինչպես՝ դարմանող, ազնվացնող, պատշաճորեն խիստ և ներողամիտ կամ՝ հանճարը՝ սուր, ճաշակը՝ կիրթ և ընտրող, զգացողականը՝ արթուն, ձեռքը՝ ճարտար: Բնականաբար, նա պետք է գրեր. “Մատաղատունկ մը, գորն որ ինչպէս ժամանակը ծնաւ, նոյնպէս նոյն ժամանակը կ’աճեցրնէ, կը հասցրնէ, ձեւն ու կերպարանքը կու տայ, ճոխ կամ աղքատ. հօր կամ տկար, գեղեցիկ կամ տգեղ՝ բոլորովին ապագային նպաստավորութեանն ապավինած: Այս լեզուի տունկը՝ որչափ որ պարարտ գետնի -

հիւթովն եւ զուարթ երկնից օղովն ու ցօղովը սնանելու բախտն ունենայ, միշտ մշակի մը ճարտար ձեռքին կարօտ է, որ դարմանէ, ուղղէ, քշտէ եւ ազնուացրնէ” (էջ 41): Մյուս կողմից՝ լեզվամշակը պետք է կարողանա իր խստությունը մեղմել, ընդունել կամ չընդունել, չմերժել կամ մերժել՝ ամենայնի չափը պահելով: Այնուամենայնիվ, քերականության մեջ անհատն արժեք չունի. ընդհանուր քերականագիտության այս մեծ ճշմարտությունն Այտընյանը նորից ու նորից է հաստատում. “Քերականութիւնը թէեւ իրօք օրինաց մատեան մ’ըլլայ, քերականութեան հեղինակն այն օրինաց ալ հեղինակը չէ. իւր պաշտօնն է դիտել, քննել այն օրէնքներն, որ բնութիւնը իւրովի կազմեր է, ժողովել, քովէ քով բերել, համեմատել, ընդհանուրն ու մասնաւորն գատել, բացատրութիւնը որոշել եւ այլն, եւ այլն, ճշդիւ այնպէս՝ ինչպէս բնական գիտութեանց որեւէ ճիւղին զբաղող մատենագիր մը ուրիշ պաշտօն կամ պարտավորութիւն չի ճանչնար իւր վրայ՝ եթէ ոչ բնութեան երևոյթներուն եւ անոնց օրինացը գումարութիւնն ընծայեցընել պարզապէս. եւ որչափ հաւատարիմ է այս մասին՝ այնչափ ի մերձուստ եւ ապահով ճամբով հասած է վախճանին, եւ նոյնչափ վստահ է իւր պաշտօնն անվրէպ կատարած ըլլալուն: Լեզուներն ալ բնութեան հորիզոնին վրայ բնական երևոյթներ են. եթէ քերական մ’այս տեսութեան մեջ սխալած է, հարկ է ըսել, թէ իւր պաշտօնը չէ ճանչցած” (էջ 323):

Լեզվագետի ուշադրությունից դուրս չի մնում նաև “մշակության” գործիքների անհրաժեշտության հարցը. “Խնամով եւ մտադրութեամբ շարադրուած գրութեանց յաճախութիւն, քերականութիւն ու բառարան՝ լեզուին մշակութեան բուն ընտիր գործիքներն են” (էջ 41): Այսպիսի խնամակալների ձեռքերում պահվող ճոխ ժառանգության տեր լեզուն չի կարող չմշակվել, չզարգանալ:

Հայերենի ընձեռած փաստական նյութի պատմահամեմատական քննությամբ, լեզվի և լեզվական նորմի փոփոխության վերաբերյալ արժեքավոր դիտարկումներով, արևմտահայ աշխարհաբարի քերականական կառուցվածքի գիտական նկարագրությամբ Ա. Այտընյանն իրավամբ համարվում է հայերենի պատմական քերականության հիմնադիրը:

Զարիկ Աղաջանյան – բ. գ. թ., դոցենտ: ԵՊՀ-ի հայոց լեզվի ամբիոնի դասախոս: Գիտական հետաքրքրությունները՝ ժամանակակից հայերենի նորմավորման, լեզվի պատմահամեմատական քննության, խոսքի մշակույթի ձևավորման, հայոց լեզվի դասավանդման մեթոդիկայի, հանրակրթության հարցեր: Հեղինակ է 8 մենագրության (2-ը՝ համահեղինակությամբ) և շուրջ 17 հոդվածի: Lu060423el@mail.ru

REFERENCES

- A. S. Abrahamyan.** Arsen Ayt'nyani lezvabanakan hayacqneri, Ye'rev'an, 1984 (in Armenian).
A. Ayt'nyan. Չոռական զերականուտյուն աշխարհար կամ արժի հայերեն լեզվի, Ye'rev'an, 1987 (in Armenian).
E. B. Aghayan. Hay lezvabanut'yan patmut'yun, Ye'rev'an, 1958 (in Armenian).

ЗАПАДНОАРМЯНСКИЙ ЛИТЕРАТУРНЫЙ ЯЗЫК И ВОПРОСЫ ЕГО
НОРМИРОВАНИЯ В ГРАММАТИКЕ А. АЙТЫНЯНА

ЗАРИК АГАДЖАНИЯН

Резюме

Ключевые слова: двуязычие, мертвый древнеармянский язык, безжизненный ашхарабар, изменения языка, варианты языка, западноармянский язык, языковая норма, грамматический строй, научная грамматика, описательная грамматика западноармянского языка, языковед, инструменты развития языка.

Арсен Айтынян принадлежит к числу видных представителей армянской филологической науки. Его считают основателем исторической грамматики армянского языка.

Грамматика является самым важным признаком, по которому дифференцируются языки. По мнению лингвиста, она – искусство, которое учит: 1) понимать правильно, 2) писать и говорить без ошибок. В своем труде „Критическая грамматика ашхарабара или современного армянского языка“ арменовед описывает состояние языка своего времени: мертвый древнеармянский и безжизненный новоармянский. В цепи исторического исследования языка он считает важными: а) вопросы нормирования языка и изменения языковой нормы; б) работу, связанную с языковым строительством; в) необходимость защиты языка; г) роль обучения и образования, в особенности значение школы: именно здесь можно научиться правильно говорить; д) взаимосвязанность теоретического и практического обучения языку; е) работу тех, кто занимается проблемами языка; ж) необходимость инструментов развития языка; з) материнское воспитание и т. д.

Сегодня в процессах нормирования современного армянского языка, регулирования работ по языковому строительству, ведения правильной языковой политики „Критическая грамматика“ Айтыняна играет большую роль.

Зарик Агаджаниян – к. филол. н., доцент. Преподаватель кафедры армянского языка ЕГУ. Научные интересы: нормирование современного армянского языка, его историко-сравнительное исследование, формирование культуры речи, методика преподавания

языка и общеобразовательные вопросы. Автор 8 монографий (в 2 как соавтор) и около 17 статей. Lu060423el@mail.ru

WESTERN-ARMENIAN LITERARY LANGUAGE AND QUESTIONS OF ITS
NORMALIZATION IN A. AITYNYAN'S GRAMMAR

ZARIK AGHAJANYAN

S u m m a r y

Key words: bilingualism, dead old Armenian language, lifeless Ashkharabar, the changes of the language, variants of the language, Western Armenian literary language, lingual norm, grammatical structure, scientific grammar, Western Armenian descriptive grammar, linguist, tools for language development.

Arsen Aitynyan is one of the prominent representatives of the Armenian philological science. He is considered to be the founder of the historical grammar of the Armenian language.

Grammar is the most important feature by which the languages are differentiated. In the linguist's opinion it is an art that teaches 1) to understand correctly, 2) to write and speak without mistakes. In his work "Critical Grammar of Ashkharabar or Modern Armenian Language" a specialist of the Armenian studies describes the state of the language of his time: the dead old Armenian language and the lifeless modern Armenian language. In the chain of the historical research of the language he considers the following as important: a) the questions of language standardizing and the changes of the language norm b) work related to the language building c) the necessity of the language protection d) the role of teaching and education especially the importance of school: it is here, that one can speak correct e) the interconnectedness of theoretical and practical language teaching f) the work of those who deals with the language problems g) the necessity of tools for language development h) mother's upbringing, etc.

At the present time A. Aitynyan's "Critical Grammar" plays an important role in the process of standardization, regulation of the work on the modern Armenian language building, as well as in the conduction of the correct language policy.

Zarik Aghajanyan – Candidate of Philological Sciences, Assistant Professor. Lecturer at the YSU Chair of Armenian Language. Scientific interests: standardizing of the modern Armenian language, its historical-comparative method, formation of the language culture, methods of teaching and questions of general education. Author of 8 monographs (she is a co-author for 2 of them) and about 17 articles. Lu060423el@mail.ru

ՀԱՅՈՑ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՈՒՏԵՍՏԻ ԷԹՆՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅԱՆ
ՇՈՒՐՁ *

ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Բանալի բառեր՝ ազգային ուտեստ, պատմաազգագրական շրջաններ, բուսական ծագման սննդամթերք, անասնապահական մթերքներ, կաթնամթերք, ձկնեղեն, ձվեղեն, ըմպելիքներ:

Ուտեստը մարդկանց սոցիալական շփման, բարեկամական և ազգակցական կապեր հաստատելու միջոց է, իսկ եթե այդպիսիք առկա են, ապա այն ավելի է ամրապնդում այդ հարաբերությունները: Ազգագրական և պատմագեոգրավեստական գրականության մեջ արձանագրված են բազմաթիվ կոլեկտիվ ճաշկերույթներ, երբ ուտեստի՝ զուտ քաղցր հագեցնելու գործառույթը մղվում է հետին պլան: Սրանցից կարելի է առանձնացնել ավանդական ընտանեկան և գործնական բնույթի ճաշկերույթները. մանկան ծնունդն ու մկրտությունը, ամուսնությունը և հարսանիքը, հուղարկավորությունը, մեռելոցները, մեծարման երեկոները, ծննդյան տարեդարձները, օրացույցային ու եկեղեցական տոները և այլն: Անգամ շրջանառվում է «թշնամու տանը հաց ուտել» արտահայտություն, որ խորհրդանշում է հաշտվել, խաղաղություն, նույնիսկ՝ խնամիական կապեր հաստատել:

Ուտեստի համակարգը կենցաղի ու մշակույթի բաղկացուցիչ տարրերից է, ուտտի ևս ներառվում է ազգագրության ուսումնասիրության շրջանակների մեջ: Այն, մարդու կենսական պահանջմունքները բավարարելուց բացի, կատարում է նաև այլ գործառույթներ. միավորում ու միաժամանակ տարբերակում է տարբեր էթնիկ հանրույթների: Ազգագրական առումով ուտեստի միջոցով հնարավոր է ներկայացնել ինչպես տվյալ էթնոսին, տարածքային ներէթնիկ խմբերին, նրանց շրջապատող միջավայրը, տնտեսավարման եղանակները, այնպես էլ սոցիոնորմատիվ և հումանիտար մշակույթներին առնչվող հարցեր, քանզի ուտեստը, զուտ կենսական նշանակություն ունենալով հանդերձ, միջնորդավորում է մարդկանց ու մարդկային խմբերի միջև եղած կապերը¹:

* Ընդունվել է տպագրության 04. III. 2019 թ.: Գրախոսվել է 18. III. 2019 թ.:

¹ Տե՛ս Ի. Ա. Барсегян, С. Е. Енгибарян. Система питания у армян. – Культура жизнеобеспечения и этнос. Ереван, 1983, с. 206–253.

Ուտեստը էթնոպահպան գործառույթ ունի: Այն պահպանում, արտացոլում ու փոխանցում է տվյալ էթնիկ հանրության բնորոշ ավանդական տնտեսական զբաղմունքների առանձնահատկությունները, համատեղ հացկերույթների կազմակերպման վարքագծային կանոնները, աշխարհայացքը, հավատալիքային պատկերացումները: Ուտեստի համակարգում արտացոլվում են նաև տվյալ էթնոսի պատմական անցյալի կարևոր շրջափուլերը, քաղաքական ու սոցիալական վիճակը, տնտեսական կյանքի առանձնահատկությունները: Կարճ ասած՝ ուտեստի համակարգն իր հերթին մի յուրօրինակ էթնիկ «անձնագիր» է²: Այն նաև հասարակական հարաբերությունների արտահայտման ցուցիչներից է, քանի որ մարդիկ սեղանի շուրջ են շփվում, ճանաչում միմյանց:

Յուրաքանչյուր ժողովրդի, այդ թվում նաև հայերի ուտեստի համակարգը պայմանավորված է ժողովրդի կենցաղում տարածված և գերակշռող տնտեսամշակութային տիպով: Ուտեստի մշակույթի ձևավորմանը նպաստել են բազմաթիվ այլ գործոններ ևս՝ տվյալ էթնոսի տարածքային յուրահատկությունները, բնակլիմայական պայմանները, ավանդույթներն ու կենցաղը, սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը, բնակչության առանձին խավերի սոցիալ-ունեցվածքային տարբերությունները, կրոնական աշխարհայացքը, երբեմն-երբեմն՝ նաև պատմաքաղաքական իրողությունները, միջէթնիկական կապերը: Հայոց մեջ յուրաքանչյուր պատմաազգագրական շրջանում ձևավորվել է իրեն հատուկ, բնակչության խառնվածքին, պահանջներին ու նախասիրություններին հարիր սննդակարգ: Սպասքը, ամանեղենը նույնպես հարմարեցվել են տարբեր կերակրատեսակների հետ, որոնք առաջացրել են ներդաշնակություն և իրենց ազդեցությունն ու տպավորություններն են թողել հյուրասիրվողի վրա: Այս պարագայում կարևորվել են նաև մատուցման և հյուրասիրությունը կազմակերպելու ավանդական եղանակները³:

Հայ ժողովրդի ավանդական ուտեստի համակարգը ձևավորվել է լեռնային և նախալեռնային գոտում, որտեղ երկրագործության համակարգում գերակշռում էր դաշտավարությունը՝ հացահատիկային կուլտուրաների մշակումը՝ զուգակցված նստակյաց ու հեռագնա անասնապահության հետ: Ավանդական ուտեստում անհամեմատ գերակշռում էին բուսական ծագմամբ՝ հացահատիկ, միրգ, բանջարեղեն, որոնց հաջորդում էին կենդանական՝ կաթ-կաթնամթերք, մսեղեն, ձկնեղեն, ձվեղեն սննդամթերքները: Սակայն նշված սննդամթերքների հարաբերակցությունները հայ ժողովրդի ավանդական ուտեստի համակարգում ունեցել են տարբեր դրսևորումներ: Այսպես, XIX դ. վերջին և XX դ. սկզբին, եթե Այրարատի ցածրադիր վայրերին բնորոշ էր հացահատիկ-բուսեղեն-կաթնամթերք-մսեղեն սննդամթերքների հաջոր-

² Տե՛ս Ռ. Ծ ա տ ո ռ յ ա ն. Հայոց ավանդական տոնական ուտեստը, Երևան, 2011, էջ 7:

³ Տե՛ս С. А. А р у т ю н о в, В. П. К о б ы ч е в, Г. А. С е р г е е в а. Материальная культура. – Пища и жилище. Народы Кавказа, кн. 4. М., 1995, с. 9–10.

դականությունը, Շիրակին՝ հացահատիկ-կաթնամթերք-մսեղեն-բանջարեղեն հաջորդականությունը, ապա Սյունիքին և Տավուշին՝ հացահատիկ-կաթնամթերք-բանջարեղեն-մսեղենը⁴: Նշված օրինակներից պարզ է դառնում, որ կաթնամթերքի, բանջարեղեն-մսամթերքի օգտագործման հաջորդականությունը պայմանավորված է տվյալ տարածքում կենցաղավարող տնտեսավարման հիմնական ճյուղերի հաջորդականությամբ:

Եթե համեմատելու լինենք Սյունիքում և Այրարատի ցածրադիր վայրերում կենցաղավարող տնտեսավարման հիմնական ճյուղերը, ապա նկատելի է, որ եթե Սյունիքին բնորոշ է դաշտավարությունը, հացահատիկային կուլտուրաների մշակումը, անասնապահությունն ու այգեգործությունը՝ այն էլ գետահովտային շրջաններում, իսկ Այրարատին՝ առաջին հերթին դաշտավարությունը, հետո բանջարաբուստանային կուլտուրաների մշակումը, այգեգործությունը և նոր միայն անասնապահությունը, որը զանգվածային բնույթ չի կրել՝ արոտների բացակայության պատճառով: Հետևաբար, միանգամայն օրինաչափ է տվյալ տարածքներում սննդամթերքների նման հաջորդականությունը:

Հայերի ավանդական ուսուստի համակարգում առանձնանում են հետևյալ կառուցվածքային միավորները.

ա. հացահատիկային մթերքներից պատրաստված ճաշատեսակներ, կերակրատեսակներ, կերակուրներ և թխվածքներ,

բ. կաթ-կաթնամթերքներ և կաթնեղենից պատրաստված ճաշատեսակներ,

գ. մսեղեն՝ վայրի, ընտանի կենդանիների և թռչունների,

դ. ձկնեղեն,

ե. ձվեղեն,

զ. միրգ-բանջարեղեն՝ նկատի ունենալով նաև վայրի բույսերն ու հատապտուղները,

է. բմպելիքներ:

ՀԱՅԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՄԹԵՐՔՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ՃԱՇԱՏԵՍԱԿՆԵՐ, ԿԵՐԱԿՐԱՏԵՍԱԿՆԵՐ, ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ ԵՎ ԹԽՎԱԾՔՆԵՐ

Հայերը հացահատիկային կուլտուրաները մշակել են ըստ տարածաշրջանների բնակչոլոգիական պայմանների. բարձրադիր շրջաններում՝ գլխավորապես, գարի, արևահայաց ցածրադիր շրջաններում՝ ցորեն:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին Հայաստանում իր տեսականիով և տարածվածությամբ առաջին տեղում էր ցորենը, որին հաջորդում էին՝ լեռնային շրջաններում՝ գարին, հաճարը, տարեկանը, կորեկը, Մասունում, Մոկսում նաև՝ դժվարամարս, խո-

⁴ Մանրամասն տե՛ս И. А. Барсегян, С. Е. Енгибарян. Նշվ. աշխ., էջ 254–270:

շոր հատիկ գլգիլը: Իսկ եգիպտացորենը և բրինձը ուշ շրջանում փոխառված մշակաբույսերից են: Հայկական լեռնաշխարհը ցորենի, գարու, կորեկի և այլնի մշակության հնագույն հայրենիքներից է համարվել: Ցորենի և գարու շտեմարանների գոյությունը բացահայտվել է դեռ վաղ բրոնզեդարյան հնագիտական հուշարձանների (Մոխրաբլուր, Էլառ, Շենգավիթ և այլն) պեղումների շնորհիվ⁵:

Նախապատվությունը տալով ցորենին՝ հայ ժողովուրդն այն վերամշակել է տարբեր եղանակներով և օգտագործել բազմազան պատրաստուքներ ու կերակրատեսակներ ստանալու համար: Ցորենն աչքի էր ընկնում վերամշակման և օգտագործման բազմազանությամբ: Հացահատիկային կուլտուրաները, հայոց մեջ հազարամյակներ շարունակ մեխանիկական և ջերմային եղանակով վերամշակելով, ստանում էին այտուր, փոխինդ, ձավար, կորկոտ, բլդուր⁶:

Շիրակում, Սյունիքում, Այրարատում և՛ ձավարը, և՛ բլդուրը պատրաստում էին միայն ցորենից: Գարուց ձավար պատրաստելը համեմատաբար սակավ էր տարածված, իսկ բլդուրը իսպառ բացակայում էր: Այլ էր պատկերը Տավուշում: Այստեղ ձավարը պատրաստում էին բացառապես հաճարից, որը տեղացիները հատուկ այդ նպատակով էին մշակում: Լեռնային շրջաններում շատ մեծ տարածում է ունեցել աշնանն ու ձմռանը փոխնդե խաշիլը, խավիժը: Խաշիլի վրա լցնում էին հալած յուղ, կաթ, շաքարաջուր, իսկ խավիժը պարտադիր էր նոր ծննդաբերած կնոջ ուտեստի համալիրում: Վերջին հարյուրամյակում գերակշռել են բրնձե փլավները՝ չամիչով, չրերով, նուշով, մսով համեմված:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին ամենասիրված ու տարածված հացատեսակներն էին լավաշն ու բոքոնը, որոնք թխում էին ցորենի և գարու այտուրից՝ առանձին-առանձին կամ խառը (այս ձևը գերակշռում էր), իսկ խիստ կարիքավորներն այն հիմնականում թխել են կորեկի այտուրից: Լավաշ հացատեսակը Հայաստանի տարբեր շրջաններում հայտնի է նաև “լոշ” անվամբ: Այն հայկական հնագույն հացատեսակներից է, Հայաստանի ազգային հարստություններից, տարածված է նաև Կովկասի, Իրանի, Աֆղանստանի և Առաջավոր Ասիայի այլ ժողովուրդների շրջանում: Անգլալեզու աղբյուրներում լավաշը հիշատակվում է “հայկական դյուրաբեկ հաց”, “հայկական բլիթ” անվանումներով: “Լավաշ” անվանումը գիտնականները բխեցնում են նախահայերեն law բառից, որը նշանակում է “հարթ”: Միջին հայերենում արդեն

⁵ Տե՛ս Լ. Ջալալբեկյան. Մոխրաբլուրի պատվարները. – ՊԲՀ, 1974, - 4, էջ 157–162, Է. Խանգադյան. Էլառ-Դարանի, Երևան, 1979, էջ 23, Հ. Միմոնյան. Շենգավիթի 2000 թ. պեղումները. – “Հայաստանի հնագույն մշակույթը”, Երևան, 2001, էջ 33–34 և այլն:

⁶ Տե՛ս Ե. Մարկարյան, Ս. Ա. Արտյունով և Կուլտուրա жизнеобеспечения и этнос, с. 189–190.

⁷ Տե՛ս Լ. Bilderback. “The Everything Bread Coochoo”, “Flatbreads”, Adams Media, 2010.

lawš բառը նշանակել է “հարթ, բարակ հաց”⁸: Հայաստանում լավաշի տարածվածության մասին վկայում են հնագիտական պեղումների արդյունքում հայտնաբերված թոնիքները և այնտեղ մնացած լավաշի մնացորդները⁹: 2014 թ. նոյեմբերի 26-ին որոշում է կայացվել ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկում ներառել Հայաստանի կողմից ներկայացված “Լավաշ. ավանդական հացի պատրաստումը, նշանակությունը և մշակութային դրսևորումները Հայաստանում” հայտը: Հայկական թոնրի լավաշը իր համով, բուրմունքով, նրբությամբ և մեծ չափերով (50,100 սմ և ավելի) հռչակված է եղել հնուց ի վեր: Թոնրից բացի անասնապահ, կաթնամշակ սարվոր կանայք սաճի (թիթեղ) վրա էին թխում հաստ լավաշ-հացը, որը սաճի լավաշ էր անվանվում¹⁰: Այս հացատեսակը հայ բնակչությունը գործածել է երկու եղանակով. երկար ժամանակ գործածելու համար չորացնում էին արևի տակ և 8–10 հատ ծայք արած դասավորում հացի ամբարներում կամ էլ տեղավորում էին մառանում՝ առաստաղից կախված փայտյա չորանոցի վրա և երկրորդ՝ այն թխում էին ամեն օր կամ մի քանի օրը մեկ անգամ: Օրվա չորացրած հացը տանտիկիներ փաթաթում էր խոնավ շորի մեջ կամ ջուր ցանում վրան, որից հետո այն գրեթե ոչնչով չէր տարբերվում թարմ լավաշից՝ պահպանելով համի ու բուրմունքի հատկանիշները: Հաշվի առնելով լավաշի նման հատկությունը և վառելիքը խնայելու անհրաժեշտությունը՝ հատկապես ձմռանը՝ այն թխում էին մեկ շաբաթից մինչև մի քանի ամսվա համար: Այսպիսի դեպքերում հաց թխելը իրականացվում էր ազգական կամ հարևան կանանց փոխօգնությամբ: Նրանց օգնական էին դառնում ջահել հարսներն ու աղջիկները: Անցյալում կային նաև հացթուխ կանայք, որոնք հացարար անունն էին կրում. նրանք նաև վարձով թխում էին ունևոր գերդաստանների հացը: Նման դեպքում հունցելը, գնդելն ու թխելը կատարվում էր 2–4 կնոջ համագործակցությամբ՝ աշխատանքի հստակ բաժանմամբ: Խմոր հունցողը և թխողը տարեց, փորձառու կանայք էին, գրտնակողը՝ համեմատաբար երիտասարդները:

Արցախում “հաց ու խմորին” փոխադարձ օգնության էին հասնում դրկից կանայք: Այստեղ սովորություն կար հաց թխել այնքան, որ 30–40 օր բավարարեր ընտանիքին: Այս երևույթը բնորոշ էր նաև Արարատյան դաշտավայրի բնակավայրե-

⁸ H. Martirosyan. Etymological dictionary of the Armenian inherited lexicon (Leiden Indo-European Etymological Dictionary Series; 8).– Brill, 2008, p. 305.

⁹ Տե՛ս նաև Հ. Բեգլարյան. Հացագործությունը միջնադարյան Հայաստանում.– ՀՄՄՀ ԳԱ “Լրաբեր հաս. գիտ.”, 1987, -5, էջ 75:

¹⁰ Տե՛ս նաև Վ. Բդոյան. Հայ ազգագրություն (համառոտ ուրվագիծ), Երևան, 1974, էջ 114–115:

րին¹¹: Ի դեպ, հայոց մեջ նման կոլեկտիվ ջանքով են իրականացվել էրիշտա կտրելու, ցորենը մաղելու, ձավարը ծեծելու, աղալու, կորկոտ, բլդուր, տհալ, քաղցրեղեն պատրաստելու, այգեթաղի, այգեկութի աշխատանքները¹²: Հաց թխելու միջոցին արգելվում էր արական սեռի ներկայությունը՝ լավաշը թոնրի պատից շուտ չպոկվելու, կրակի մեջ չվառվելու մտահոգությամբ: Առհասարակ տանտիրուհու մենաշնորհն է եղել ոչ միայն հաց թխելու, այլև կաթնամթերքների, հացամթերքների պատրաստման, մթերքների պահեստավորման աշխատանքների, սննդի բաշխման դեկավարությունը: Նրա ձեռքում էր մառանի բանալիների տրցակը, նա էր հացավորողը, և նա է միայն իրավունք ունեցել ճաշել գերդաստանի տղամարդկանց հետ՝ նահապետի կողքին՝ մի փոքր մեջքով թեքված դիրքով¹³:

Լավաշը մեզանում օժտված է այնպիսի հատկանիշներով, որ աշխատանքի վայրում կարող էր ծառայել որպես պնակ, սկուտեղ, գդալ, անձեռոցիկ և, վերջապես, բրդուձ¹⁴: Հացը և թոնիրը հայոց մեջ սրբազանացվել են: Թոնրի ձևը և նրա մեջ թխվող լավաշը հայերի կենցաղում պահպանվել է հազարամյակներ: Անշուշտ, դրան նպաստել են լավաշի մի քանի դրական հատկություններ՝ բարձր սննդարարությունը, դյուրին մարսողությունը, երկար պահելու պիտանելիությունը և հաց թխելու առավել կատարելագործված մեթոդի կիրառումը: Այն գյուղերում, որտեղ եկեղեցիներ չեն եղել կամ ավերվել են, պսակն ու կնունքը կատարում էին տանը՝ թոնրի շուրջ: Այս միտքն է հաստատում նաև այն իրողությունը, որ Վանի շրջանի Լեզք գյուղի շրջակայքում “Սուրբ թոնիր” անունով ուխտատեղի է հիշատակվել¹⁵:

Հացը մեծ տեղ է գրավել հայերի օրական սննդի մեջ և հաճախ “հաց ուտել” արտահայտությունը ստացել է ոչ միայն հացի, այլև, ընդհանուր առմամբ, սնվելու՝ ուտելու նշանակություն:

Հայաստանի տարբեր շրջաններում եղել են հացի հետ կապված ուշագրավ սովորույթներ ու հմայական արարողություններ: Այն հայոց ընկալումներում սրբության, աստվածային պարզևի, արգասավորության, անվտանգության, առատության, չարախափան նշանակության խորհրդանիշ է համարվել: Հացը մեր լեռնաշխարհում պաշտամունքի առարկա է եղել: Հայ մարդը թոնիրը դիտել է իբրև եկեղեցի. դրա-

¹¹ Տե՛ս Ռ. Նահապետյան. Հայոց ազգակցական համակարգը (XIX դ. երկրորդ կես – XX դ. սկիզբ). – Պատմաազգագրական ուսումնասիրություն, Երևան, 2012, էջ 142–143:

¹² Տե՛ս նույն տեղում, էջ 128–164:

¹³ Տե՛ս Ստ. Լիսիցյան. Չանգեզուրի հայերը, Երևան, 1969, էջ 220, նաև Ռ. Նահապետյան. Կինը հայոց ավանդական ընտանիքում (ըստ սասունցիների ազգագրական սովորույթների). – ՊԲՀ, 2009, - 1, էջ 71–87:

¹⁴ Տե՛ս С. Арутюнян, Ю. Мкртумян. Вершина хлебопечения-лаваш. – Хлеб в народной культуре. Этнографические очерки. М., 2004, с. 200–209.

¹⁵ Տե՛ս Գ. Սրվանձտյանց. Գրոց ու բրոց, Երկեր, հ. 1, Երևան, 1978, էջ 52:

նում կողած հացը՝ սուրբ նշխար է համարել և իր ամենամեծ երդումը “հացով” է կնքել. “Քու տան հալալ հացը վկա էդնր”, “Քու տան հացը իմ աչքը բոցոցու”: Հացը սրբություն էր. եթե մի կտոր հաց ընկներ գետին, վերցնում, թափ էին տալիս ու դնում բերանները՝ մրմնջալով՝ “մեղա Աստծու”¹⁶ կամ էլ՝ համբուրում ու դնում մի բարձր տեղ՝ թոչուններին կեր: Անգամ հացի թափված փշրանքները հավաքում էին, որպեսզի դրանք բաժին չդառնային տան հատակին վիտացող կարծեցյալ չար ոգիներին¹⁷ կամ չփոխակերպվեին նրանցով¹⁸: Մինչև հաց ուտելը՝ ձերերը հացը մոտեցնում էին ճակատին՝ որպես սրբություն: Այն չէր կարելի դանակով կտրել կամ գլխին դնել, որպեսզի տան առատությունը, “խերն ու բարաքյաթը տանից չփախներ”:

Հայոց սովորույթի համաձայն՝ հյուրին դիմավորում էին աղ ու հացով՝ հացը սրբություն է, աղը՝ մաքրագործող: Ակոռահատիկի ժամանակ երեխայի, հարսանիքին՝ նորապսակների վրա հատիկեղեն էին շաղ տալիս՝ ծլարձակման, պտղաբերության հավատալիքով¹⁹: Ըստ ժողովրդական պատկերացումների՝ Ջանգեզուրում հացը կապվում էր տանտիրոջ կյանքի հետ²⁰: Թոնրից հանած առաջին հացը չէին ուտում այնքան ժամանակ, մինչև յոթը հաց չհանեին: Հակառակ դեպքում՝ տանտիկինը կմահանար և ամուսինը մի քանի կին կփոխեր: Գիշերը երեխայի հետ տնից դուրս գալիս նրա ծոցը հաց էին դնում՝ չարքերի հարձակումներից պաշտպանելու համար:

Վասպուրականում օտարության գնացող անձի պաշարից մի կտոր հաց էին վերցնում և պահում, որպեսզի նա տուն վերադառնար: Եթե այդ հացը որևէ մեկը գողանար կամ ուտեր, պանդուխտը չէր վերադառնա²¹: Իսկ Շիրակում նույն նպատակով հացը ոչ թե պահում, այլ ուտում էին²²: Աղձնիքում և Հայաստանի պատմաագագրական այլ շրջաններում ընդունված էր, որ սկեսուրը հարսանեկան արարողության ժամանակ հարսին դիմավորելիս նրա ուտերին լավաշ-հացեր էր

¹⁶ Տե՛ս նույն տեղում:

¹⁷ Տե՛ս Ս. Лисициан. Очерки этнографии дореволюционной Армении. – Кавказский этнографический сборник, т. 1. М., 1955, с. 218.

¹⁸ Տե՛ս Ա. Е. Тер-Саркисянц. Традиционная пища армян. – Традиционная пища как выражение этнического самосознания, под. ред. С. А. Арутюнова и Т. А. Ворониной. М., 2001, с. 120–121.

¹⁹ Տե՛ս Ռ. Ն ա հ ա պ ե տ յ ա ն. Աղձնիքահայերի մանկան ծննդի և խնամքի ավանդական սովորույթներն ու ծեսերը (պատմաագագրական ուսումնասիրություն), Երևան, 2011, էջ 121–122:

²⁰ Ստ. Լ ի ս ի ց յ ա ն. Ջանգեզուրի հայերը, էջ 178:

²¹ Ե. Լ ա լ ա յ ա ն. Վասպուրական. – “Ազգագրական հանդես” (այսուհետև՝ ԱՀ), գ. XXV, 1915, էջ 57:

²² Ա. Մ ի թ ա ռ յ ա ն ց. Փշրանքներ Շիրակի ամբարներից. – “Էմինյան ազգագրական ժողովածու”, հ. Ա, Մոսկվա-Ալեքսանդրապոլ, 1901, էջ 198:

զգում՝ ասելով. «Ոտքդ խերով լինի, ամբարներդ հացով լի»: Տուն մտնելուց հետո հարսն այն զգում էր վերին անկյուններից մեկը, որպեսզի իր ոտքը խերով լիներ և տունն էլ միշտ հացով լի: Մասուն գավառի Խուլթիկ գյուղում հարսին ու փեսային յոթ անգամ ման էին ածում թոնրի շուրջ, ամեն մի պտույտի ժամանակ հարսի ուսերի վրայի յոթ հացերից մեկը և մազերի հետ թել-թել հյուսված ընկույզի միջուկի շարաններ էին շարտում ժողովրդի վրա: Աղջիկներին արգելվում էր ուտել տաշտի քերանքից թխված հացը կամ նստել թոնրի խփին՝ տանը մնալու, չամուսնանալու մտավախությամբ²³: Թոնրի առաջին հացը դնում էին ծննդաբերող կնոջ որովայնի վրա՝ բարեհաջող ծննդաբերելու ու կարճեցյալ չարքերի հարվածներից զերծ մնալու նպատակով: Ծննդաբերությունից հետո լավաշով փաթաթած կանաչ սոխ էին կերցնում ծննդկան կնոջը, որի մի մասն էլ նրա գլխավերևը երեք անգամ պտտեցնելով, զգում էին մոր ու մանկան կողքը, այդ նույն մտավախությամբ: Այլ դեպքերում կավե ամանով այլուրի վրա մի բուռ աղ էին ցանում և, երեք անգամ պտտեցնելով ծննդկանի գլխավերևը, տալիս էին մի աղքատի՝ «չարքերին» մոլորեցնելու և վերջինիս մուտքը տուն կանխելու նպատակով²⁴: Գիշերը խուսափում էին ուրիշներին հացի խմոր տալուց՝ հացի օրհնությունից ու հովանավորությունից չզրկվելու մտավախությամբ²⁵:

Հայոց ավանդական կենցաղում մեծ տարածում էին գտել տոնածիսական թխվածքները՝ գաթան, «տարի» կոչված կրկենին, բաղարջը: Դրանցից իր տոնածիսական նշանակությամբ առանձնապես աչքի էր ընկնում կրկենին, որը, պատրաստում էին Նոր տարվա նախօրյակին և դրանով գուշակություններ կատարում: Պատրաստի խմորի գնդի մեջ գուշակության համար միջուկի մեջ՝ դրամ, լոբի կամ կոճակ էին դնում: Մասունում խմորի մեջ երկու փայտի կտոր էին դնում՝ մեկը՝ բախտի, մյուսը՝ դովլաթի համար²⁶: Կրկենին նախշում էին ձեռքով կամ գաթանախշով, որը պատրաստում էին քարից, փայտից, կավից: Ծիսական հաց նախշելու այդպիսի դրոշմիչներ են հայտնաբերվել Ք. ա. III հազ. հնագիտական հուշարձաններից Մեծամորում, Արարատյան դաշտավայրում, Նախիջևանում, Աղստևի հովտում կա-

²³ Տե՛ս Ռ. Ն ա հ ա պ ե տ յ ա ն. Աղձնիքահայերի ամուսնահարսանեկան սովորույթներն ու ծեսերը (պատմաագագրական ուսումնասիրություն), Երևան, 2007, էջ 158:

²⁴ Տե՛ս Ռ. Ն ա հ ա պ ե տ յ ա ն. Աղձնիքահայերի մանկան ծննդի և խնամքի ավանդական սովորույթներն ու ծեսերը, էջ 68:

²⁵ Տե՛ս Ռ. Ն ա հ ա պ ե տ յ ա ն, Բ. Ղ ա ր ի բ յ ա ն. Օջախ-թոնրի պաշտամունքի մի քանի սովորույթներն Աղձնիքում. – «Գիտելիք և խորհրդանիշ, հավատալիք և սովորույթ». Միջազգային առաջին գիտաժողովի հոդվածների ժողովածու, Երևան, 2006, էջ 124–140:

²⁶ Տե՛ս Ե. Կ ա ր ա պ ե տ յ ա ն. Մասուն, ազգագրական նյութեր, Երևան, 1962, էջ 122:

տարված պեղումների ժամանակ²⁷: Այն նախշագարդում էին նաև բաժակով, պատառաքաղով և այլն: Գաթանախշի վրա եղած զարդանախշերից բացի, կրկենու երեսը զարդարում էին նաև տարվա տասներկու ամիսները, լուսատուները խորհրդանշող նախշերով, ինչպես նաև՝ սերմերով ու պտուղներով, որոնք խորհրդանշում էին հացի, պտուղների արգասաբերության գաղափարը²⁸: Այն կտրում և բաժին էր հանում գերդաստանի նահապետը տան անդամներին, անասուններին, արտերին: Տնեցիներից որ մեկի բաժնի մեջ լիներ նշանը՝ նրա անվան հետ էր կապվում այդ տարվա հաջողությունը:

Տոնաձիսական թխվածքների համալիրում իր ուրույն տեղն ուներ գաթան, որը պատրաստում էին հիմնականում տոներին ու ամուսնական հանդիսություններին՝ հատկապես հարսանիքների ժամանակ, ինչպես նաև՝ պատվավոր հյուրեր ունենալիս: Գաթան դարձել էր հարսանեկան ծիսակարգի կարևոր տարրերից մեկը: Մակայն դրա կիրառումը չէր սահմանափակվում միայն սրանով: Այն հաճախ գործածում էին նաև որպես պասվա թխվածք, որի խմորը յուղի փոխարեն հունցում էին ձեթով:

Բաղարջը (Տավուշում այն կոչվում էր պաղարձ), ըստ իր օգտագործման նպատակի, լինում էր գուշակության՝ աղի բաղարջ, զոհաբերության՝ փաղախ բաղարջ (առանց թթխման թխած) և տոնական (խորիզով): Գուշակության նպատակով աղի բաղարջը թխում էին Սբ. Մարգարի պասի ուրբաթ օրը և հավատում, որ այն ուտող պատանին կամ աղջիկը երազում կտեսնի իր ապագա հարսնացուին կամ փեսացուին: Հայերի ավանդական տոնաձիսական համակարգում առանձնակի տեղ են գրավել, այսպես կոչված, “մալի պճեղ”, “խնոցի”, “գութան”, “ցորենի հոր” ծիսական թխվածքները, որոնց միջոցով Նոր տարվա գուշակություններն էին կատարում²⁹: Եթե ծիսական այդ թխվածքները թոնրի շրթից շուտ պոկվեին և ընկնեին թոնիրը, ընդունված էր կարծել, թե կնվազեր անասունների կաթը, արտերի բերքը, իսկ եթե նշված թխվածքները ուռչեին ու անվնաս եփվեին՝ կերաշխավորվեր բերքի և մթերքների առատությունը:

Ամանորին թխում էին նաև փոքրիկ մարդակերպ հացեր՝ աչքերի, բերանի, կրծքերի և այլ պատկերներով, որոնք հաճախ համեմում էին չամիչով: Այս հացերը հիմնականում հայտնի էին ասիլ-բասիլ անվանումներով: Պատրաստում էին նաև կլկլա կամ դուլաջ, որը կլոր, մեջտեղը ծակ բլիթ էր: Այն անցկացնում էին գոմեշի կամ եզան եղջյուրներին, որպեսզի գալիք տարում ցորենի առատություն լիներ:

²⁷ Տե՛ս Է. Խա ն գ ա դ յ ա ն, Կ. Մ կ ր տ չ յ ա ն, Է. Պ ա ր ս ա մ յ ա ն. Մեծամոր, Երևան, 1973, էջ 131–134:

²⁸ Տե՛ս Վ. Բ դ ո յ ա ն. Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, 1972, էջ 488:

²⁹ Ա. Ա. Օ դ ա բ ա շ յ ա ն. Ամանորը հայ ժողովրդագրական տոնացույցում.– “Հայ ազգագրություն և բանահյուսություն”, հ. 9, Երևան, 1978, էջ 53–54:

Ակնհայտ է, որ ծիսական հացերն ամբողջապես նվիրված էին պտղաբերության ապահովման գաղափարին:

Հայ ժողովրդի ավանդական ուտեստի համակարգում իրենց հաստատուն տեղն ունեին հացահատիկային մթերքներից պատրաստված կերակրատեսակները, որոնց թիվը հասնում էր մի քանի տասնյակի: Այդ կերակրատեսակների մի մասը պատրաստվել է գուտ հացահատիկային կուլտուրաներից (մոխրի, փոթուկ), մյուսը՝ վայրի բույսերի, բանջարաբոստանային կուլտուրաների (բանջարով կորկոտ, ձավարով ավելուկ) կամ կենդանական ծագում ունեցող [հարիսա, տոլմա, ճմուռ (Տավուշում՝ ճմբուռ) և այլն] մթերքների հետ խառնելով: Ծամդիլ, խաթխաշ էին կոչվում Նոր տարվան եփվող եգիպտացորենի, ցորենի, լոբու հատիկները, որոնք առանց յուղի, խաշած, սառը վիճակով էին հյուրասիրում: Տյառնընդառաջի տոնի ուտեստ էր այլուրով և քաղցրով պատրաստված հալվան ու բոված ցորենից՝ փոխինդը, որը հատուկ խորհուրդ է ունեցել Սբ. Սարգսի տոնին: Փոխնդե խաշիլը ճաշակում էին յուղով, կաթով կամ մեղրով, թանով, դոշաբով:

Թվարկված ճաշատեսակներից ու կերակրատեսակներից ավելի հարգի են համարվել մսեղենի օգտագործմամբ հացահատիկային մթերքներից պատրաստվածները:

Բացի ցորենից և գարուց, հացահատիկային կուլտուրաներից տարածված են եղել նաև կորեկը, վարսակը, եգիպտացորենը, բրինձը: Ի դեպ, բրինձը ևս տեղական մշակաբույսերից է եղել, թեև վերջին երկուսը ներկայումս ներկրվում են: Ընդդեմից գործածական են եղել սիսեռը, ոսպը և, առանձնապես, լոբին: Շատ տարածված էին լոբով պատրաստված ուտելիքները, և պատահական չէ, որ Լոռիում կար ասույթ՝ «առանց լոբի Նոր տարին գալ չի»: Տնտեսության մեջ հատիկավոր մշակաբույսերի ունեցած կարևոր դերերով են պայմանավորված եղել ցորենին, գարուն, կորեկին և այլ մշակաբույսերին վերագրվող պտղաբերության, առատության, կյանքի շարունակականության խորհրդանշանային դերերը: Դրանք, որպես սերմ, ծլարձակման, նոր կյանք պարզնելու խորհուրդ ունեին: Պատահական չէ, որ հարս գնացող աղջկա կոշիկների մեջ չէին մոռանում կորեկի կամ գարնանացան ցորենի հատիկներ լցնել³⁰: Ցորենից պատրաստված աղանձն էլ նորապսակներին նվիրված տոնի խորհրդանիշներից էր, որին վերագրվում էին նաև չարախափան, արգասավորման հատկանիշներ: Նույնը վերաբերում է ընդդեմին (ընկույզ, նուշ, կաղին), մրգերին: Օրինակ՝ նուռը, խնձորը ոչ միայն սիրո, այլև պտղաբերության խորհրդանիշներ էին³¹: Հավատում էին, որ դրանք կարող էին ազդել երիտասարդների բեղունության, սերնդաձի, հողի բարեբերության, բերքի առատության վրա:

³⁰ Ռ. Նահապետյան. Աղանիքահայերի մանկան ծննդի ու խնամքի ավանդական սովորույթներն ու ծեսերը, էջ 11:

³¹ Նույն տեղում, էջ 8–32:

ԿԱԹՆԱՄԹԵՐՔՆԵՐ ԵՎ ԿԱԹՆԵՂԵՆԻՑ ՊԱՏՐԱՍՎԱԾ ՃԱՇԱՏԵՍԱԿՆԵՐ

Հայոց ավանդական սննդի համակարգում զգալի էր և այժմ էլ առավել շատ օգտագործվող կաթնամթերքի տեսակարար կշիռը: Հայոց կաթնատնտեսության առանձնահատկություններից էր կաթի անթափոն մշակումը, որի արդյունքում ստացված բոլոր մթերքները ևս գործածվում էին սննդի մեջ՝ ենթարկվելով երկրորդային մշակման: Հայ տանտիկիները մեծ վարպետությամբ կարողանում էին պատրաստել մածուն, քամած մածուն, կաթնաշոռ, կաթի սեր, չորաթան, պանրի գանազան տեսակներ, կարագ և այլն³²:

Կաթի մշակումը հայերի մեջ հազարամյակների պատմություն ունի: Հայերի շրջանում մշտապես գործածական է եղել կովի, ոչխարի, գոմեշի, այծի կաթը³³: Հում կաթի օգտագործումը հայոց կենցաղում սահմանափակ է եղել: Երբեմն միայն հովիվներն էին խմում նոր կթած կաթը: Ամենայնուհետը համարվել է կովի կաթը³⁴: Դարերի ընթացքում հայությունը հանգել է այն եզրակացության, որ կովի կաթից ավելի արդյունավետ է կարագ ստանալը, ոչխարի կաթից՝ պանիր, իսկ գոմեշի կաթից՝ մածուն, որն առավել հարգի է համարվել: Մածունը օգտագործվել է նաև որպես լրացուցիչ կերակրատարր որոշ ուսուցանողական համար (տոլմա, փլավ, թաթար բորակի և այլն): Մածունը գործածվում էր շուրջ տարի, և գյուղական բնակչությունը

³² Այս մասին տե՛ս նաև Ռ. Ծ ա տ ու ը յ ա ն. նշվ. աշխ., էջ 16:

³³ Կաթի և կաթնամթերքի վերաբերյալ հայոց կենցաղում և Կովկասի ժողովուրդների կենսապահովման մշակույթի համալիրում կարևոր ազգագրական նյութեր են գրառվել Ա. Քալանթարի կողմից (տե՛ս Ա. Ք ա լ ա ն թ ա ը. Կաթնային արդյունքներ. – ԱՀ, գ. Դ, Թիֆլիս, 1898, - 2, էջ 276–292):

³⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 276–277:

նր տիրապետում էր այն մեկ ու ավելի շաբաթ կավամաններում սառը պահպանելու հմտությանը, իսկ ավելի երկար տևողության համար քամում էին, լցնում կաշվե պարկի մեջ և թեթևակի աղում: Նոր ծնած կենդանիների կաթից կամ խեժից պատրաստում էին դալ և բուլամա³⁵: Անդրկովկասում լայնորեն գործածական է եղել կաթի սերը: Սերը քաշում էին հատկապես անյուղ, երեսքաշ պանիր պատրաստելիս:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին հայերին հայտնի էր կարագի պատրաստման երկու եղանակ՝ մածունից և հում կաթի սերից: Կարագը ստանում էին խնոցում կաթը հարելու միջոցով, որը պատրաստվում էր փայտից, կավից կամ կաշվից (տիկ): Կարագ ստանալու համար նախատեսված մածունը լցնում էին խնոցու մեջ, այն պետք է լիներ ոչ սառը և ոչ էլ տաք, քանի որ առաջինի դեպքում կարագը վատորակ էր լինում, իսկ երկրորդի դեպքում՝ դժվար հարվում: Գյուղական տնայնագործության մեջ տարածված էր նաև կարագի ստացման մեկ այլ եղանակ. մեկ շաբաթվա կամ մեկ ամսվա կաթի սերուցքը հավաքում էին մի մեծ կավե ամանի մեջ, այն թանձրանում էր, ապա շրջում էին տոպրակի մեջ ու աղում: Վերջինս քամվում էր շմաթից (սիճուկից), որից հետո լցնում էին խնոցու կամ կավե նեղ վզիկով կարասանման ձուլի մեջ և հարում: Խնոցին հարում էին միայն տարեց, զավակների տեր, փորձառու կանայք: Եթե մածնանման սերը սառն էր լինում, ավելացնում էին մի քիչ տաք ջուր: Կարագը հանում էին խնոցուց, լվանում սառը ջրով, աղում թեթևակի ու դնում կավե կամ էմալապատ ամանի մեջ:

Մեկ այլ դեպքում հում կաթի սերից կարագ ստանալու համար կաթը լցնում էին մեծ փայտե տաշտի կամ կավե, կամ էլ էմալապատ մետաղե ամանների մեջ: Մի քանի օր անց կաթի երեսը ծածկվում էր սերով, որը մեկ այլ ամանի մեջ առանձնացվում էր փայտե մեծ շերտիով: Մնացած կաթը օգտագործում էին պանիր պատրաստելու համար: Հավաքված հում կաթի սերը լցնում էին խնոցու մեջ և հարում: Խորհրդային շրջանում 1970–1980-ական թվականներին գյուղական շատ բնակավայրերում խնոցին փոխարինվեց լվացքի մեքենայով:

Կարագը պահեստավորելու համար վրան աղ էին շաղ տալիս, 3–4 օր անց հալում և պահում էին սառը տեղում՝ կավե կճուճի մեջ: Թանը լեռնային շրջաններում ենթակա էր վերամշակման: Նրանից պատրաստում էին չորաթան, նաև՝ ժաժիկ (շոռ): Չորաթան պատրաստելու համար թանը լցնում էին քաթանից կամ կտավից կարված տոպրակի մեջ: Միճուկն առանձնանում էր շոռատիպ զանգվածից, վերջինիս էլ մի փոքր այտուր խառնելով՝ պատրաստում էին գնդիկներ և չորացնում արևի տակ՝ ստանալով չորաթան (չորթան), որից ուշ աշնանն ու ձմռանը պատրաստում էին ճորթնով ճաշ՝ ձեձած ցորենի ձավարով, նման առանց մսի հարիսայի: Բսկ շոռը կամ ժաժիկը պատրաստելու համար թանը եռացնում էին պղնձե կաթսայի մեջ: Տա-

³⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 277:

քացնելիս շոռանման զանգվածն անջատվում էր սիճուկից, որն էլ լցնում էին տոպրակը և քամում: Դրան խառնում էին զանազան հոտավետ կանաչիներ՝ ուրց, դարչին, մեխակ, նան՝ աղ, զանազան չրեր: Ուտում էին թարմ կամ պանրի հետ կճուճներում պահածոյացնում: Թանը թարմացնող ու զովացնող ըմպելիք է համարվել, իսկ սիճուկը չեն թափել՝ տվել են անասուններին, հատկապես ծնից հետո՝ հետծննդյան ցավերն ամոքելու համար: Կանայք սիճուկով լվանում էին գլուխը՝ անիծ կամ ոջիլ չբռնելու նան՝ մազերին փայլ տալու համար:

Հայոց ուտեստի համակարգում, հացի հետ զուգահեռ, առանցքային դեր էր վերապահված պանրին, ինչի մասին վկայում են բազմաթիվ ժողովրդական ասացվածքներ, ինչպես օրինակ՝ «հաց ու պանիր, կեր ու բանիր», «պանիր ու հաց, սիրտը բաց» և այլն³⁶: Պանիրն այն մթերքներից է, առանց որի չի ապրել և չի ապրում ոչ մի հայ ընտանիք: Հայերի համար այն այնքան առօրյա ուտելիք է համարվել, որքան և՛ հացը: Ճաշից հետո անգամ «բերանը ոսկեջրում էին պանրով»՝ պանրով ու կանաչիով լավաշի բրդուճ ճաշակելով:

Հայերը պանիր պատրաստելու մեծ վարպետներ են եղել, ինչպես որ՝ ներկայումս: Որպես կանոն՝ այն պատրաստում էին ոչխարի, այծի, երբեմն նան՝ կովի սերը քաշած և անքաշ կաթից: Ըստ այդմ էլ՝ պանիրը տարբերվել է իր յուղայնությամբ: Հայ ժողովրդի կենցաղում տարածված էին պանիրներ գտված կաթից՝ չեչիլ, թել, հյուսած, հորած՝ զանազան խոտաբույսերով և գլուխ անքաշ պանիր՝ լոռի, չանախ, բրինձ ու այլ անվանումներով³⁷: Չեչիլ պանիրը պահում էին պուտուկների մեջ, շերտ-շերտ դասավորելիս չէին մոռանում նրանց արանքում զետեղել հոտավետ վայրի կանաչիներ՝ ուրց, դաղձ, բոխի: Կճուճի երեսը ծածկում էին ընկույզի տերևով, ապա այն մոխրի բարակ շերտով, հերմետիկ փակում ու շրջում բերանի վրա: Մասունում պանրով և կարագ յուղով լի հորած կճուճները (գրուր) թաղում էին մշտապես հոսող առուների եզրերին, խոնավ, ճահճուտ տեղերում: Մասունցի բանահավաք Ե. Կարապետյանի հավաստմամբ՝ «թան ու թացանը այդ եղանակով հատուկ համ ու հոտ էր ստանում»³⁸: Մասունում հմտացել էին նան կաթի սերը երկար ժամանակ պահելու գաղտնիքներին: Կավե գրուրներով, բայց արդեն բացօթյա տեղերում հորում էին 30–50 սմ խորությամբ, որի տեղը միայն գիտեին կաթնամշակ կինը՝ խղպանը և այն թաղող տղամարդը³⁹: Պանրի տեսակներից է նան հորած մոթալ պանիրը՝ ոչխարի մորթու մեջ պահպանված: Եղեգնաձորում, հոտավետ բույսերը, չրերը շաղախում էին աղաջրից հանված թարմ պանրի հետ և տոպրակի մեջ լցրած թողնում են քամվելու մի քանի՝ նույնիսկ 10–15 օր: Եղեգնաձորի պանրին

³⁶ Տե՛ս Ա. Тер-Саркисянц. Традиционная пища армян, с. 124.

³⁷ Տե՛ս Է. С. Маркарян, С. А. Арутюнов. Նշվ. աշխ., с. 213.

³⁸ Ե. Կարապետյան. նշվ. աշխ., 1962, էջ 28–29:

³⁹ Տե՛ս Վ. Պետոյան. Մասնա ազգագրություն, Երևան, 1965, էջ 122–123:

անվանել են բղուղ պանիր, որը մեծ համբավ է ունեցել Թիֆլիսի քաղաքային շուկայում⁴⁰:

Պանրի մակարդ են ստացել գառան, հորթի, ուլի, երբեմն էլ խոշոր կենդանու ստամոքսից, որն ուներ խմորոդ, մերող հասկություն: Այդ մակարդի տեղական անվանումներն են խախացոց, շիրդան: Այն դնում էին որևէ ամանի մեջ, վրան լցնում ջուր կամ շիճուկ, հետո ավելացնում աղ և զանազան հոտավետ համեմունքներ՝ դարչին, թարխուն, սխտոր, մեխակ, ուրց, խունկ, անգամ մրգերի չրեր՝ հոն, սալոր, չամիչ, արմավ, խնձոր, ծիրան, մեղր, ցորեն, գարի, բրինձ և այլն, ու դնում որևէ տաք տեղ: Մեկ կամ մի քանի օր անց հեղուկն արդեն պատրաստ էր կաթը մակարդելու համար⁴¹:

ՄՍԵՂԵՆ ԿԵՐԱԿՐԱՏԵՍԱԿՆԵՐ

XIX դ. վերջին և XX դ. սկզբին հայոց կենցաղում ընդունված էր տավարի, ոչխարի, այծի, ինչպես նաև՝ գոմեշի, հավի, հնդկահավի, խոզի մսի օգտագործումը: Որսորդությամբ ձեռք բերված միսը գլխավորապես լրացուցիչ և պատվաբեր նշանակություն է ունեցել:

Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկ ցեղերի տնտեսության հիմնական ճյուղերից մեկն էլ դեռևս էնեոլիթյան (V–IV հազ. Ք. ա.) տնտեսության մեջ անասնապահությունն էր: Էնեոլիթյան հուշարձանների պեղումներից հայտնաբերվել են ցուլերի, կովերի, այծերի, ոչխարների, խոզերի ոսկորների հարուստ մնացորդներ: Խոշոր անասուններն օգտագործվել են երկրագործության մեջ որպես քաշող ուժ և կթու ու մանր եղջերավոր անասունների հետ միաժամանակ ապահովել մսի, կաթնամթերքի, կաշեգործության, մանածագործության աճող պահանջները: Տնտեսության մեջ շարունակում էր զգալի դեր խաղալ որսորդությունը, իսկ մեծ գետերի հովիտներում՝ ձկնորսությունը⁴²: Հին հայերի ուտեստներին անդրադառնալիս հույն պատմիչ և գորավար Քսենոփոնը գրում է. «Չկար մի հայի տուն, որտեղ սեղանին միաժամանակ չդնեին գառան, ուլի, խոզի, հորթի և հավի միս, մեծ քանակությամբ ցորենի ու գարու հացի հետ»⁴³:

⁴⁰ Տե՛ս Ա. Քալանթար. նշվ. աշխ., էջ 287–288:

⁴¹ Նույն տեղում, էջ 282:

⁴² Մանրամասն տե՛ս Ռ. Նահապետյան. Հայ ազգագրության պատմություն, մաս 1, Հնագույն և հին սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները հայերի և Հայաստանի մասին, Բուհական ուսումնական ձեռնարկ, Երևան, 2010, էջ 15–41:

⁴³ Տե՛ս Ռ. Նահապետյան. Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին, Երևան, 2018, էջ 44–48:

Այդուհանդերձ, անցյալում միսր համեմատաբար քիչ է օգտագործվել առօրյա սննդի համակարգում և համարվել է թանկ, հարգի, տոնական: Առավել տարածված է եղել ոչխարի, ապա տավարի մսի գործածումը: Խոզի միսը, ի տարբերություն մեր օրերի, անցյալում քիչ է գործածվել սննդի համակարգում՝ խոզաբուծության լայն տարածում չունենալու պատճառով:

Միսը մեծ մասամբ օգտագործում էին հարսանիքների, թաղումների, մատաղների կամ ուխտագնացությունների ժամանակ: Ձոռաբերության համար խուսափում էին էգ կենդանուց կամ թռչնից: Ձոռաբերվող կենդանու վզին կապում էին կարմիր ժապավեն և երեք անգամ պտտում սրբատեղիի շուրջը, կտրում ականջը, արյունը քսում էին սրբավայրի դռանը կամ էլ ներկաների ճակատներին: Մատաղի մսից բաժին էին հանում յոթ հարևան ընտանիքների համար:

Մորթն անելու համար հրավիրում էին հատուկ մարդու՝ դասաբի: Անասուններ մորթողներին այդ հատուկ անունով դիմելը վկայում է հայոց մեջ մսի կիրառական մեծ նշանակության մասին: Մորթը կատարում էին բացառապես տղամարդիկ՝ առանձնապես ամուսնացած տղամարդիկ: Մորթելիս կենդանու գլուխը պետք է ուղղվեր դեպի արևելք. մի երևույթ, որն աղերսվում էր հեթանոս հայերի արևի պաշտամունքի հետ:

Մսից պատրաստված ուսեստներից ամենահարգին համարվել է խորովածը, որի պատրաստման եղանակը հայտնի էր ամեն մի հայ տղամարդու: Խորովածի մեկ այլ տեսակ էր խորվուն, որը պատրաստել են հատուկ արարողությունների ժամանակ՝ Սբ. Խաչին կամ էլ առավել պատվարժան հյուրեր ընդունելիս: Խորվուն պատրաստելու համար ոչխարի կամ այծի մորթազերծ, փորտտիքը մաքրած մարմինն ամբողջությամբ ոտքերից կախում էին թոնրի մեջ՝ տակը դնելով ձավարով լի մի պղինձե կաթսա, որտեղ կենդանուց կաթած յուղով եփվում էր ձավարը:

Հայերի սիրած մյուս ճաշատեսակներից է տոլման: Հարսանիքների և, ընդհանրապես, հասարակական ճաշկերույթների ժամանակ տոլման առաջնակարգ տեղ է գրավել:

Մսից պատրաստված և հարգի ճաշատեսակներից են եղել նաև լուլա-քյաբաբը, բոզբաշը, քյուֆթան, խաշլաման, կոլոլակը, մսով ապուրները, չանախը, շիլափլավը, խաշը, չիբթման, չախոբիլին և այլն: Վերջին երկու ճաշատեսակները համարվում են արևելավրացական⁴⁴, սակայն միջէթնիկական կապերի հետևանքով դրանք իրենց ուրույն տեղն են գրավել հայ ժողովրդի ուսեստների համակարգում: Ներկայումս մեծ տարածում են ստացել մսե խորտիկները (նրբաբլիթներ, կարկանդակ, խինկալի, կոտլետ և այլն):

⁴⁴ Տե՛ս Բարյան.– Народы Кавказа, т. 2. М., 1962, с. 306.

Հայերը միսն օգտագործել են առանձին կամ էլ խառնելով հացահատիկային պատրաստուքների կամ բանջարաբոստանային մշակաբույսերի հետ՝ պատրաստել են տարբեր ճաշատեսակներ ու կերակրատեսակներ: Հարիսան նույնպես դասվել է սիրված ճաշատեսակների շարքին: Անցյալում այն ունեցել է տոնական և ծիսական նշանակություն: Հարիսան պատրաստում էին կորկոտից ու հավի մսից և ուտում արևածագին: Ուտելիս վրան հալած յուղ էին ավելացնում: Հին Հայաստանում ծիսական կերակուրները՝ հարիսան, խաշը, կաթնապուրը, մատաղը եփվում էր մեհյանների, սրբավայրերի ու եկեղեցիների մոտ և նվիրված էին գլխավորապես երկրագործությանն ու անասնապահությանը հովանավորող աներևույթ ուժերին: Հարիսան նվիրված էր հատիկամշակությանը, կաթնապուրը՝ կաթնամթերքների առատության ապահովմանը, խաշը՝ անասնապահության հաջողությանը, մատաղը՝ ընտանիքի անկորուստ լինելուն: Դրանով էլ պետք է բացատրել, որ այս կերակուրները մեր օրերում էլ մի տեսակ ծիսական բնույթ ունեն, թեև վերջինիս հին էությունը չի գիտակցվում⁴⁵: Խաշը, մատաղը մեր օրերում էլ գրեթե առանց հյուրերի չեն վայելում:

Լեռնային անասնապահական շրջաններում տարածված է եղել աշնանը մսի պահածոյացման և ձմռանը օգտագործելու մշակույթը: Տարբեր շրջաններում կիրառվում էին մսի պահածոյացման զանազան եղանակներ: Տավարի կամ ոչխարի մսից պատրաստում էին դավուրմա՝ տհալ: Շիրակի տարածաշրջանում 1971–1972 թթ. մեր գրառած նյութերի համաձայն՝ տեղացիները դավուրման պատրաստելու երբեք եղանակ էին կիրառում: Առաջին՝ ոսկրահան էին անում և համաչափ կտրատում ու եփում: Եփած միսը զետեղում էին կավե կճուճների մեջ և վրան լցնում անասունի հալած ճարպը, իսկ եթե այն չէր բավականացնում, ապա ավելացնում էին յուղ: Լցրած յուղը պետք է ամբողջությամբ ծածկեր միսը: Երկրորդ՝ ճարպոտ միսը տապակում էին, ապա լցնում կավե կճուճի մեջ, այն ծածկում յուղի կամ ճարպի շերտով: Երրորդ՝ միսը կիսաեփ էին անում, ապա տապակում և դարձյալ կավե ամանների մեջ յուղով ծածկված վերին շերտով պահում սառը տեղում կամ թաղում հողի մեջ⁴⁶: Ձմռանը տհալը օգտագործում էին ամենատարբեր ապուրների, փլավների մեջ: Այն խնայողաբար էին օգտագործում՝ հիմնականում որպես նախուտեստ՝ պատվավոր հյուրեր ընդունելիս: Արևմտահայերն իրենց հետ բերեցին տավարի և գառան կամ ոչխարի մսից արտաքին շերտը պղպեղով ու չամանով պատված, արևի տակ չորացման եղանակով պատրաստված բաստուրմայի և սուջուխի մշակույթը:

⁴⁵ Վ. Բդոյան. Հայ ազգագրություն, էջ 115:

⁴⁶ Նյութերը գրի ենք առել Շիրակամուտ գյուղում: Այդ տարիներին տարածաշրջանում մեծ ուշադրություն դարձվեց հնդկահավի, սագի, ճագարի մեծ քանակությամբ բուծմանը, որոնց միսը նույնպես ենթակա էր պահածոյացման:

Մտեղեն կերակրատեսակներից անցյալում հիմնականում օգտվել են աշնան-ձմռան ամիսներին: Այսպիսով, մսից պատրաստվող կերակրատեսակները բավական բազմազան են եղել: Դրանք պարունակել են ամոքային (համեմունք) բուրավետ մի շարք նյութեր՝ սխտոր, պղպեղ, դարչին և այլն, որոնց շնորհիվ համով ու հոտավետ էին դառնում: Փավստոս Բուզանդը հիշատակում է “ամիճ” կերակրատեսակը՝ որսի մսից պատրաստված⁴⁷:

ՁԿՆԵՂԵՆ

Այս տնտեսաձևի վերաբերյալ ոչ առատ նյութեր կարելի է գտնել հնագիտական գտածոներում, մատենագրության մեջ, թանգարանային հավաքածուներում⁴⁸: Ազգագրական նյութերի հիման վրա ձկնորսական մշակույթի վերաբերյալ ուսումնասիրություն է հրատարակել ազգագրագետ Ա. Պետրոսյանը⁴⁹: Ուշագրավ վկայություններ են թողել հայ մատենագիրները: Փ. Բուզանդի երկում ուշագրավ է պետական ձկնորսարանի և ձկնորսության մասին ակնարկը: Հիշատակվում է Առեստ ավանում Բերկրի գետակի վրա արքունական ձկնորսարանը: Երկում ակնարկ կա Վանա լճի ձկնորսության և անգամ “մեծ կուտակումներով” Աղթամար կղզու ավերքը թափվելու մասին⁵⁰: Վանա լճի աղ դրած տառեխ ձկնատեսակն արտահանվել է: Գ. Մազիստրոսի հաղորդմամբ՝ լեռնային գետերի կարմրախայտ ձկնատեսակը իր սննդային արժեքներով մեծ համարում է ունեցել: Նշվել է նաև դրա բուժական հատկությունների մասին⁵¹:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին ձկան օգտագործումը հայերի կենցաղում միանշանակ չի եղել: Սյունիքում այն քիչ թե շատ ամենօրյա ուտեստ էր համարվում: Իսկ ա-

⁴⁷ Տե՛ս Փ ա վ ս տ ո ս Բ ու զ ա ն դ. Հայոց պատմություն, Երևան, 1987, էջ 319:

⁴⁸ Հայաստանի հնագույն շրջանի ձկնորսության վերաբերյալ ուշագրավ են Շենգավիթի հնագիտական պեղումներից հայտնաբերված փոքր չափի քարե խարիսխ-ձանրոցաքարերը, ինչպես նաև տարբեր տեսակի ձկների ոսկրային մնացորդները [տե՛ս Մ. Մարդարյան. Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Երևան, 1967, էջ 104; С. А. Е с а я н. Оружие и военное дело древней Армении (3–1 тыс. до н. э.). Ереван, 1962, с. 223–225].

⁴⁹ Տե՛ս Ա. Պ ե տր ո սյ ա ն. Ձկնորսական մշակույթը Հայաստանում (պատմագագրական ուսումնասիրություն), Երևան, 2015, Մ. Դ ա դի կյ ա ն. Հայաստանի ձկները, Երևան, 1971:

⁵⁰ Փ ա վ ս տ ո ս Բ ու զ ա ն դ. նշվ. աշխ., էջ 35, 147, 339, 422: Տե՛ս նաև Ռ. Ն ա հ ա պ ե տյ ա ն. Ազգագրական տեղեկությունները Փավստոս Բուզանդի “Հայոց պատմություն” երկում, Երևան, 2013, էջ 14–15:

⁵¹ Տե՛ս Գրիգոր Մազիստրոսի թղթերը, բնագիրն առաջաբանով և ծանոթագրություններով առաջին անգամ ի լոյս ընծայեց Կ. Կոստանեանց, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 213, 218:

հա Շիրակում ձուկն ուներ գերազանցապես տոնածիսական, իսկ Այրարատում՝ և՛ տոնածիսական, և՛ ամենօրյա կիրառական նշանակություն: Արաքս գետից և նրա վտակներից որսում էին ծածան, լոքո, Սևանա լճից՝ իշխան, կարմրախայտ: Արաքսում ձուկ բռնում էին գրեթե շուրջ տարին:

Ձուկը հայերը օգտագործում էին տապակած, խաշած, աղ դրած վիճակում: Սյունիքում այն խաշում էին լոլիկով, կանաչիով: Շիրակում եփում էին առանց համեմունքների: Սևանի տարածաշրջանում ձկնից նաև տոլմա, կոտլետ էին պատրաստում⁵²: Հայ բնակչությունն աչքի էր ընկնում, ձուկը չորացնելով և աղ դնելով պահածոյացնելու մշակույթով:

ԶՎԵ ՈՒՏԵՍՏՆԵՐ

Հայկական իրականության մեջ բազմազան կիրառություն է ունեցել և այժմ էլ ունի ձուկ, որը հայերն օգտագործել են կլոր տարին: Հիմնականում գործածական է եղել հավի ձուկ, որն օգտագործել են հում, խաշած, տապակած վիճակում: Ձուն տապակում էին նաև բանջարեղենի հետ: Իբրև բաղկացուցիչ տարր՝ օգտագործվել և այժմ էլ գործածվում է բազմազան կերակրատեսակների մեջ: Ձուն և ձվից պատրաստված կերակուրները զատկական տոնահանդեսներում գլխավորն էին: Այն կարևոր տեղ էր գրավում, քանի որ անմիջականորեն առնչվում էր ծեսի խորհրդին: Որպես նոր կյանքի խորհրդանիշ՝ ձուն առնչվել է գարնան, բնության զարթոնքն արտացոլող հավատալիքներին: Այն կյանքի և բեղմնավորման, իսկ ներկվածը՝ արևի վերածննդի, սիրո խորհրդանիշ է ընկալվել:

ՎԱՅՐԻ ԲՈՒՅՍԵՐ: ՄԻՐԳ-ԲԱՆՋԱՐԵՂԵՆ

Թեև հայ ժողովրդի հիմնական զբաղմունքները դարեր շարունակ եղել են երկրագործությունն ու անասնապահությունը, սակայն դրանց կողքին ուրույն տեղն է ունեցել նաև վայրի բույսերի հավաքչությունը: Տարբեր վիտամիններ պարունակող վայրի բույսերի պահանջը մեծ է եղել հատկապես գարնանը, երբ զգացվել է ամբարված սննդամթերքների, մրգեղենի և բանջարեղենի պակաս:

Վայրի բույսեր հավաքելը սովորական, առօրյա բնույթ է կրել: Գարնանը և որոշ չափով ամռանը հավաքված բույսերն օգտագործում էին շուրջ տարի: Այսպես, բույսերից մի քանիսն օգտագործում էին անմիջապես՝ որպես բանջարեղեն, մյուսները տապակում կամ էլ չորացնում էին, թթու դնում և կամ պահածոյացնում՝ ամռանը օգտագործելու համար:

⁵² Տե՛ս Հայկական խոհանոց, խմբ. Ա. Ս. Փիրուզյանի, Երևան, 1962, էջ 20:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին հայոց կենցաղում տարածված էր ավելի քան 100 տեսակի վայրի բույսերի օգտագործումը⁵³՝ ավելուկ, եղինջ, բլղրղան, բոխի, դանդուռ, դաղձ, եզան լեզու, թելուկ, թրթնջուկ, ծնեբեկ, սունկ, կոտեմ, համեմ, դանձիլ, ճնճղապաշար, մանդակ, շուշան, սիբեխ, սամիթ, սպանաղ, փիփերթ⁵⁴։ Վայրի բույսերից պատրաստված ճաշատեսակներն ու կերակրատեսակներն ունեցել են հիմնականում ամենօրյա, ինչպես նաև՝ ծիսական բնույթ։ Հայոց կենցաղում ավելուկը, փիփերթը, եղինջը, թելուկը տապակում էին, օգտագործում ձավարով և կարտոֆիլով պատրաստվող ջրալի ճաշատեսակներում, մյուսներն էլ օգտագործվել են խաշած, աղ դրած։ Անտառաշատ վայրերում ինչպես անցյալում, առավել ևս մեր օրերում սունկը դարձել է չափազանց հարգի, ինչը, հավանաբար, պայմանավորված է դրա օգտակարության և սննդարության մասին գիտելիքներ ձեռք բերելու, սննդի համակարգում բազմազանություն ստեղծելու (աղցաններ, զանազան ուսեստներ, թթուներ, մարինադներ) հանգամանքով։ Որպես համադրամ ուսեստ՝ դրանցով հյուրասիրում են հյուրերին, դնում տոնական սեղաններին։ Իբրև հարգի ուսեստ՝ սնկի պահածոներ են ուղարկում այլ վայրերում ապրող բարեկամներին⁵⁵։

Վայրի բույսերից մի քանիսը գործածվել են նաև բուժիչ նպատակներով։ Այսպես գինով եփած ավելուկը փայծախի ցավերը մեղմացնելու, իսկ հյութը՝ ատամի ցավը կտրելու⁵⁶, դրանից պատրաստված ճաշատեսակները օգտակար են համարվել երիկամների, փորագավի⁵⁷, ստամոքսի համար։ Ուրցը, դաղձը, նանան հիմնականում օգտագործվել են որպես համեմունքներ։ Դրանք ևս գործածվել են բուժիչ նպատակներով։ Ուրցը օգտագործել են բերանի, թոքերի, աղիների հիվանդությունների բուժման, ցավերի մեղմացման⁵⁸, իսկ դաղձը՝ սրտի աշխատանքը կանոնավորելու համար⁵⁹։

⁵³ Տե՛ս Ե. Ս. Մարկարյան, Ս. Ա. Արտյունով, Նշվ. աշխ., ս. 224.

⁵⁴ Տե՛ս Հայաստանի բնաշխարհ, Երևան, 2006: Վայրի բույսերի և դրանց գործածության մասին գիտական հրապարակումներ ունի Ա. Ամիրխանյանը [տե՛ս Ա. Ամիրխանյան. Նորամուծություններ հայոց հավաքչական մշակույթում. – ՀՀ ԳԱԱ “Լրաբեր հասարակական գիտությունների”, 2016, - 1, էջ 224–231, նույնի՝ Սունկը լոռեցիների հավաքչական մշակույթում. – “Հայ ժողովրդական մշակույթ. XVI. ավանդականը և արդիականը հայոց մշակույթում” (Դ. Վարդույանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու), Երևան, 2014, էջ 93–101]:

⁵⁵ Տե՛ս Ա. Ամիրխանյան. Սունկը լոռեցիների հավաքչական մշակույթում, էջ 101:

⁵⁶ Տե՛ս Ա. Գ. Հակոբյան. Հայկական լեռնաշխարհի դեղաբույսերը, Երևան, 1975, էջ 27:

⁵⁷ Տե՛ս Ե. Լալայան. Նոր-Բայազետի գավառ. – ԱՀ, գ. XVI, Թիֆլիս, 1907, էջ 57:

⁵⁸ Տե՛ս Ա. Գ. Հակոբյան. Նշվ. աշխ., էջ 125:

⁵⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 23–24:

Վայրի բույսերի հետ հայոց ավանդական ուտեստում առանձնակի տեղ է գրավել մրգերի և բանջարեղենի օգտագործումը: XIX դ. վերջին և XX դ. սկզբին Հայաստանում իր համով, արնահամ բույրով առանձնակի կարևորվել են ծիրանը, խաղողը՝ ավելի քան 70 տեսակներով, խնձորը, թուֆը, կեռասը, բայր, թուզը, սալորը, նուռը, դեղձը, տանձը, սերկնիլը, կիտրոնը, փշատը, ընկույզը: Կերակրատեսակներից փլավին ավելացնում էին չամիչ, տոլմային՝ սերկնիլ, նուռ: Դեղձից, թզից պատրաստում էին ալանի, իսկ խաղողից, ընկույզից՝ սուջուխ: Մոկսում ընկույզը գործավում էր ոչ միայն որպես ընդդեմ և ուտեստի ու խմորեղենի մեջ, այլև դրանից ձեթ էին ստանում: Ակադեմիկոս Հովսեփ Օրբելին 1911 թ. այստեղ ընկույզի ստացման հսկա զանգվածով, քարե անիվով աշխատող ձիթհան է արձանագրել⁶⁰: Շուրջ տարին միրգ ունենալու ցանկության շնորհիվ հայ բնակչությունը տիրապետել է չրեղեն պատրաստելու հմտություններին:

Բանջարաբուստանային մշակաբույսերից առավել տարածված էին վարունգը, սմբուկը, լոլիկը, բողբոջը, դդումը, սոխը, սխտորը, բամիան, ճակնդեղը, շաղգամը, դդմիկը, սեխը, ձմերուկը, բազուկը, ավելի շատ կաղամբը, կարտոֆիլը, գազարը: Նշված բուստանային մշակաբույսերից կարտոֆիլն ու լոլիկն Արևելյան Հայաստան է բերվել XIX դ. սկզբներին Ամերիկայից: Կարտոֆիլն անգամ կոչվել է իր բերողի՝ կաթողիկոս Եփրեմի անվամբ՝ եփրեմայինձոր, իսկ լոլիկը՝ ոսկեխնձոր⁶¹: Բանջարեղենը օգտագործում էին հում, խաշած կամ տապակած վիճակում: Դրանցից պատրաստում էին տարբեր ճաշատեսակներ, ձմեռվա համար պահածոներ, թթու:

Վայրի մրգերից՝ խնձոր, տանձ, հոն, զկեռ, ալոճ, մամուխ, բոհնչ, սալոր հավաքելու սովորությունը քաղցրավենիքներ պահածոյացնելու, ճաշեր, չրեր ու պաստեղ պատրաստելու, օղի թորելու համար տարածված է եղել բացառապես Արցախում, Տավուշում, Լոռիում, Սյունիքում: Հայ բնակչությանը ծանոթ է եղել նաև հատապտուղներից մոշը, գետնանուշը, հաղարջը, էլակը և այլն, որոնք այսօր համարվում են օգտակար թե՛ ժողովրդական բժշկության մեջ և՛ թե՛ ուտեստի համալիրում (թարմ վիճակում, մուրաբա, ջեմ, քաղցրեղեն, հյութ, կոմպոտ և այլն): Հարկ է նշել, որ հավաքչությունը միայն սոցիալական իրավիճակով չէր պայմանավորված, կարևոր նշանակություն են ունեցել պատմաազգագրական շրջանին բնորոշ տնականորեն ձևավորված և ժառանգաբար փոխանցված կենսաձևն ու սննդի համակարգի ավանդույթները⁶²:

⁶⁰ Տե՛ս Ի. Ա. Օրբելի. Избранные труды в двух томах, т. II. Ереван, 2002, с. 8.

⁶¹ Տե՛ս Վ. Բդոյան. Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, 1974, էջ 115, 117:

⁶² Ա. Ամիրխանյան. Վայրի մրգերի հավաքչությունը Լոռիում. – Հայ ժողովրդական մշակույթ, XVII, Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ, 1, Երևան, 2018, էջ 403–412:

ԸՄՊԵԼԻՔՆԵՐ

Դեռևս հնագույն ժամանակներից Հայաստանում տարածված է եղել գինեգործությունը: Այդ են վկայում նաև հնագիտական պեղումներից՝ հատկապես Եղեգնաձորի Արենի բնակավայրից (V–IV հազ. Ք. ա.), Կարմիր բլուրից (I հազ. Ք. ա.) հայտնաբերված հնձանները, վիթխարի մեծության գինու կարասները, անտիկ՝ հունական և հռոմեական աղբյուրների, հայ մատենագիրների երկերի ու վիմագիր արձանագրությունների տեղեկությունները: Գինի պատրաստելու համար տղամարդիկ խաղողը ոտքերով տրորել և ստացված հյութը (շիրան) լցրել են կարասները կամ էլ տակառները⁶³: Հույն անտիկ պատմագիրներն ուշագրավ տեղեկություններ են հաղորդել Հայաստանը գինեգործության հայրենիք լինելու, միջազգային շուկայում հայկական գինու կայուն պահանջարկի մասին: Այս տեսակետից բացառիկ տեղեկություն է հաղորդում Հերոդոտոսը, ըստ որի՝ Հայաստանից Եփրատ գետով նավերով «փյունիկյան» գինի էին տանում Բաբելոն⁶⁴: Պատմագիրն այդ տեղեկությունը որակում է որպես Բաբելոնում իր լսածներից ամենազարմանալին: Ըստ հետազոտությունների՝ «փյունիկյան» գինին աչքի է ընկել առանձնահատուկ բուրավետությամբ, ինչը թույլ է տվել ենթադրել, որ այն պատրաստվել է «մուսկատ» տեսակի խաղողից⁶⁵: Առավել ընդարձակ և բացառիկ հիշատակություն է թողել Քսենոփոնը: Ըստ նրա՝ հայ ընտանիքը ի բնե հյուրասեր և օտարականների համար գթառատ է եղել: Հայերը լիառատ կերուխումի են արժանացրել հույն գինվորներին՝ գետնի մեջ թաղված կարասներից հրամցնելով անուշահոտ հին գինիներ: Տորենի, գարու ու ընդեղենի պարունակությամբ լի կարասներից բացի, հիշատակել է նաև գինով լի կարասներ, որի երեսին եղել են գարու հատիկներ, դրանց մեջ դրվել են նաև եղեգներ՝ մեծ ու փոքր՝ առանց ծնկի: Ըստ երևույթին, դա գարեջրի առաջին գրավոր վկայությունն է: Պատմագրի վկայությամբ՝ խմիչքը շատ թունդ էր, եթե ջուր չխառնեին,

⁶³ Տե՛ս Ս. Հարությունյան, Ա. Քալանթարյան և ուրիշներ. Գինին հայկական ավանդական մշակույթում, Երևան, 2005, Ռ. Փալանջյան. Գինեգործությունը և տեխնիկական բույսերի վերամշակումը Հին Հայաստանում (մ. թ. ա. VI – մ. թ. IV դարեր), պ. գ. թ. գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2015, Դ. Григорян. Рыцари коньяка. Ереван, 2006; Ю. И. Аруцев. Вина и коньяки Армении. Ярославль, 2005, А. Меружанян. Дерево познания. Виноделие в Армении. – «Анив», (М.), 2006, № 5, с. 14–19; А. Е. Тер-Саркисянц. Пища. – Армяне. Серия «Народы и культуры». М., 2012, с. 233–246.

⁶⁴ Տե՛ս Հերոդոտոս. Պատմություն ինը գրքից, թարգ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1986, էջ 78–80:

⁶⁵ Տե՛ս Ռ. Նահապետյան. Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին, էջ 17–20:

իսկ տեղացի սովոր մարդկանց համար շատ ախորժելի ըմպելիք էր: 1958 թ. Կարմիր-բլուրում բացվել է գարեջրի պատրաստման արհեստանոց: Գտնվել է տուֆից մեծ չափերի կոնք՝ լցված գարիով և 40-ից ավելի ամաններ՝ գարեջրի պահպանման համար⁶⁶: Գարեջրի մասին հիշատակությունները շատ են հասկապես միջնադարյան հայ մատենագրության մեջ, ընդ որում նաև՝ բժշկարաններում⁶⁷: Քսենոփոնը նաև վկայում է, որ հայերը ունեին գինին կրաշաղախով ձեփված հորերում պահելու սովորույթ⁶⁸: Նա, մասնավորապես, ընդգծում է, որ հայկական գինիները բարձրորակ էին, հնեցված, բուրավետ և տարբեր տեսակների⁶⁹: Ըստ գույնի՝ առանձնանում էր սպիտակ, վարդագույն, կարմիր երանգներով: Սպիտակ գինին ստանում էին սպիտակ խաղողից, իսկ վարդագույնը և կարմիրը՝ սևից: Նռան գինին համեմատաբար քիչ էր տարածված: Գինին ամենօրյա և տոնական խմիչք էր. խմում էին գերազանցապես տղամարդիկ: Գինուց ստանում էին քացախ:

Օղին հայերը պատրաստում էին ինչպես խաղողից, այնպես էլ այլ մրգերից (խնձոր, տանձ, սալոր և այգու այլ բարիքներ): Շատ գնահատելի են համարվել հունի, ծիրանի, վայրի (քոլի) տանձի, թթի օղիները, որոնք նաև գործածվել են իբրև բուժական միջոց: Այգեգործական և հարթավայրային շրջաններում՝ առավել գործածական է եղել գինին, իսկ լեռնային շրջաններում՝ օղին:

Հայկական կոնյակն այսօր փառաբանված է աշխարհում:

Ոչ ալկոհոլային խմիչքներից հայերի կենցաղում տարածված էին թեյը, թանր, օշարակը, իսկ 1940-ական թվականների կեսերից՝ սուրճը, որի կենցաղավարումը մտցրին սփյուռքահայերը: Բուժիչ նպատակներով թեյ պատրաստում էին ուրց, դաղձ, մասուր գործածելով:

Կանայք խաղողից պատրաստում էին դոշաբ, երբեմն էլ՝ թթից: Այն նույնպես ուներ բուժիչ հատկություն: Սովորույթի համաձայն՝ մինչ օրս էլ տարբեր մրգերից (ծիրան, դեղձ, սերկնիլ, բալ և այլն) ու հատապտուղներից (ազնվամորի, մոշ, հոն և այլն) պահածոյացնում են կոմպոտներ պատրաստելով:

Այսպիսով, աշխարհագրական և բնակչուլոգիական պայմանների բազմազանությամբ, տիրապետող երկրագործական դարավոր մշակույթով, ազգային ինքնատիպ ավանդույթներով ու կենցաղով պայմանավորված՝ հայոց երկրում ձևավորվել և հազարամյակներ շարունակ կիրառվել է տեղական հայ բնակչության խառնվածքին, պահանջներին, նախասիրություններին հարիր սննդակարգ: Ավանդական ու-

⁶⁶ Н. А р у т ю н я н. Земледелие и скотоводство Урарту. Ереван, 1981, с. 91–92.

⁶⁷ Տե՛ս Ա մ ր ր դ ո վ լ ա թ Ա մ ա ս ի ա ց ի. Օգուտ բժշկութեան, Երևան, 1940, էջ 113, 115, 156, 167, 178, 333, 416, 418, 519:

⁶⁸ Ք ս ե ն փ ո ն. Անարասիս, Երևան, 1970, էջ 97:

⁶⁹ Տե՛ս Ռ. Ն ա հ ա պ ե տ յ ա ն. Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին, էջ 44–48:

տեստում գերակշռողը եղել են բուսական ծագմամբ՝ հաց և հացահատիկային մթերքներից պատրաստված կերակրատեսակները, միրգ-բանջարեղենը, որոնց հաջորդել են կենդանական կաթնամթերք, մսեղեն, ձկնեղեն, ձվեղեն ծագմամբ սննդամթերքները: Ավելի քան բազմազան ու առավել քան հինավուրց ծագմամբ են եղել ոգելից և զովացնող ըմպելիքների կիրառությունը, որոնց վերաբերյալ առատ փաստեր են արձանագրվել հնագիտական պեղումներից հայտնաբերված նյութերում, մատենագրական հնագույն աղբյուրներում:

Ռաֆիկ Նահապետյան – պ. գ. դ., ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնի պրոֆեսոր: Գիտական հետաքրքրությունները՝ հայ ազգագրություն: Հեղինակ է 9 մենագրության, 130 գիտական հոդվածի, 3 բուհական ուսումնական ձեռնարկի, մեկ տասնյակից ավելի ուսումնամեթոդական աշխատանքների: rafiknahapetyan@mail.ru

REFERENCES

- A. Amirxanyan.** Noramucutyunner hayoc havaqchakan mshakujtum.- “Լրaber hasarakakan gitutyunneri”, HH GAA, 2016, N 1(In Armenian); Sunkժ lorecineri havaqchakan mshakuytum.- “Hay dzoghovrdakan mshakuyt. XVI. avandakanժ yev’ ardiakanժ hayoc mshakuytum”, Yerevan, 2014 (In Armenian).
- A. A. Odabashyan.** Amanorժ hay zhoghovrdakan tonacuycum.- “Hay azgagrutjun yev’ banahjusutyun”, h. 9, Yerevan, 1978 (In Armenian).
- Amirdovlat’ Amasiaci.** Ogut bdzshkutyan, Yerevan, 1940 (In Armenian).
- A. Mjeruzhanjan.** Drevo poznaniya. Vinodelie v Armenii.- “Aniv”(M.), 2006, N 5 (In Russian).
- A. Petrosyan.** Dzkvorsakan mshakujtժ Hayastanum (patmaazgagrakan usumnasirutyun), Yerevan, 2015 (In Armenian).
- A. Qalantar.** Katnayin ardjunqner.- “Azgagrakan handes”, g. D, Tiflis, 1898 (In Armenian). Armjane.- Narody Kavkaza, t. 2. M., 1962 (In Russian).
- D. Grigojan.** Rycari konjaka. Jerjevan, 2006 (In Russian).
- E. Xanzandyan.** Elar-Darani, Yerevan, 1979 (In Armenian).
- E. Xanzandyan, K. Mkrtchyan, E. Parsamyan.** Mecamor, Yerevan, 1973 (In Armenian).
- G. Srvandzyanc.** Groc u broc, Erker, h. 1, Yerevan, 1978(In Armenian).
- Herodotos.** Patmutyun inժ grqic, targ. S. Krkyasharyani, Yerevan, 1986 (In Armenian).
- H. Martirosyan.** Etymological dictionary of Armenian inherited lexicon, Brill, 2008
- I. A. Orbjeli.** Izbrannyje trudy v dvux tomax, t. II. Jerjevan, 2002 (In Russian).
- Ju. I. Arucev.** Vina I konjaki Armenii. Jaroslavl, 2005 (In Russian).
- L. Jalalbekyan.** Moxrabluri patvarnerժ.- PBH, 1974, N 4 (In Armenian).
- M. Dadikyan.** Hayastani dzknerժ, Yerevan, 1971 (In Armenian).
- N. Arutjunjan.** Zjempljedjelic I skotovodstvo Urartu. Jerjevan, 1981 (In Russian).
- Pavstos Buzand.** Hajoc patmutyun, Yerevan, 1987(In Armenian).
- Qsenopon.** Anabasis, Yerevan, 1970 (In Armenian).
- R. Caturyan.** Hayoc avandakan tonakan utestժ, Yerevan, 2011 (In Armenian).

- R. Hahapetyan.** Aghdznıqahayeri amusnaharsanekan sovorujtnern u censerð (patmaazgagrakan usumnasirutyun), Yerevan, 2007; Aghdznıqahayeri mankan cındı yev xnamqi avandakan sovorujtnern u censerð (patmaazgagrakan usumnasirutyun), Yerevan, 2011; Azgagrakan teghekutyunnerð Pavstos Buzandi “Hajoc patmutyun ”jerkum, Yerevan, 2013;; Kinð hayoc avandakan ðntaniquım (ðst sasuncineri azgagrakan sovorutyuneri).- PBH, 2009, N 1(In Armenian).
- R. Palanjyan.** Ginegorcutyund yev texnikakan buyserı veramshakumð Hin Hayastanum (m. t. a. VI-m. t. IV darer), p. g. t. gitakan astıanı hajcman atenaxosutyıan seghmagir, Yerevan, 2015 (In Armenian).
- S. G. Hakobyan.** Haykakan lernashxarhi deghabyuserð, Yerevan, 1975 (In Armenian).
- S. Harutyunyan, A. Qalantaryan yev urishner.** Ginin haykakan avandakan mshakuytum, Yerevan, 2005 (In Armenian).
- V. Petoyan.** Sasna azgagrutyun, Yerevan, 1965 (In Armenian).
- Ye. Lalayan.** Nor-Bayazeti gavar’.- “Azgagrakan handes”, g. XVI, Tiflis, 1907 (In Armenian).
- Ye. Karapetyan.** Sasun, Yerevan, 1962 (In Armenian).

ОБ ЭТНОКУЛЬТУРНОМ ХАРАКТЕРЕ АРМЯНСКОГО ТРАДИЦИОННОГО БЛЮДА

РАФИК НАГАПЕТАН

Резюме

Ключевые слова: национальное блюдо, историко-этнографические регионы, продукты растительного происхождения, продукты животноводства, молочные продукты, рыба, яйца, напитки.

Изучение комплекса армянских традиционных и современных блюд - одна из важнейших проблем этнологической науки. В условиях новой независимой государственности, в связи с растущим интересом к национальной культуре, сегодня, как никогда, возросла потребность научного изучения национальных блюд. Благодаря расширению международных экономических, культурных и политических связей, а также привлекательному разнообразию и особенностям армянских национальных блюд Республика Армения получает возможность стать выдающимся местом экотуризма.

Армянские национальные блюда весьма разнообразны. Их особенности связаны с вековыми национальными традициями, природно-экологическими условиями, методами хозяйствования, историко-политическими реалиями, межэтническими связями. Этими факторами обусловлено преобладание в армянских национальных блюдах тех или иных продуктов питания растительного и животного происхождения, алкогольных напитков, соков и т.д.

Рафик Нагапетян – д. и. н., профессор кафедры археологии и этнографии ЕГУ. Научные интересы: армянская этнография. Автор 9 монографий, 130 научных статей, 3 вузовских учебных пособий и более десятка учебно-методических работ. rafiknahapetyan@mail.ru

ON THE ETHNO-CULTURAL NATURE OF THE ARMENIAN NATIONAL TRADITIONAL
DISH

RAFIK NAHAPETYAN

S u m m a r y

Key words: national dish, historical-ethnographic regions, products of vegetable origin, livestock products, milk products, fish, eggs, beverages.

The study of the complex of Armenian traditional and modern meal is one of the most important problems of the science of ethnology. In the new independent statehood, with growing interest in national culture, today, more than ever, the demand for a national dish study has grown. Due to the enlargement of international economic-cultural and political relations, as well as the attractive diversity and peculiarities of the Armenian national dishes, the Republic of Armenia gets an opportunity to turn into a prominent place of ecotourism.

The Armenian national dishes are diverse. Their peculiarities are related to the centuries-old national traditions, natural-ecological conditions, methods, management, historical-political realities, inter-ethnic relations. Due to these factors, the prevalence of this or that product of vegetable or livestock origin, alcoholic beverages, juices, etc., in the Armenian national dishes is conditioned with.

Rafik Nahapetyan – Doctor of Historical Sciences, Professor at the YSU Chair of Archaeology and Ethnography. Scientific interests: Armenian ethnography. Author of 9 monographs, 130 scientific articles, 3 manuals, more than 10 educational-methodological works. rafiknahapetyan@mail.ru

ՀՈԼՈՎԱԿԱՆ ՈՐՈՇ ԻՄԱՍՏՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄԸ
ԻՄՊԱՆԵՐԵՆԻ DE ՆԱԽԴԻՐՈՎ
(Հայերենի հետ զուգադրությամբ)*

ՆԱՐԻՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Բանալի բառեր՝ հոլովական իմաստ, համադրական ձև, վերլուծական ձև, ձևաբանական միավոր, բովանդակության պլան, արտահայտության պլան:

Առարկայի հարաբերությունը գործողության կամ ուրիշ առարկայի հետ տարբեր լեզուներում կարող է արտահայտվել ինչպես համադրական, այնպես էլ վերլուծական ձևերով, ընդ որում այդ երկու եղանակները կարող են գործածվել առանձին-առանձին կամ զուգակցվել: Հայերենում առարկաների հարաբերության իմաստների արտահայտման համար գործածվում են ն՛ համադրական (հոլովածներ), ն՛ վերլուծական ձևեր (կապական կապակցություններ): Հայերենի հոլովական իմաստների իսպաներեն համարժեքներն արտահայտվում են նախդրավոր կապակցություններով, այսինքն՝ վերլուծական եղանակով:

Ստորև ներկայացվող իմաստների քննությունը ցույց է տալիս, որ մի կողմից երկու տարբեր լեզուներով հաղորդակցվող մարդիկ կարող են տարբեր քերականական միջոցներով արտահայտել միևնույն իմաստը, մյուս կողմից՝ ձևաբանական մեկ միավորը կարող է ունենալ բավական կարևոր դեր տարբեր իմաստների արտահայտման գործում:

Իսպաներենում ձևաբանական կարևոր միավորի դեր կատարող նախդիրներից է de նախդիրը, որն այժի է ընկնում գործածության մեծ հաճախականությամբ և մեծ թվով իմաստային հարաբերություններ արտահայտելով՝:

Հայերենի հոլովական իմաստների մասին խոսելիս նախապատվություն ենք տվել յոթ հոլովի տեսությանը՝ համարելով այն բովանդակության պլանի բազմակողմանի ուսումնասիրության և խնդրի քննության համար առավել

* Ընդունվել է տպագրության 20. XII. 2018 թ.: ԵՊՀ-ի համեմատական լեզվաբանության ամբիոնի հայցորդ: Հոդվածը տպագրության է երաշխավորել գիտական ղեկավար, բ. գ. թ., դոցենտ Ս. Աբրահամյանը (26. XII. 2018 թ.):

¹ Տե՛ս M. Bassols. Sintaxis latina. Madrid, 1967, p. 226.

հարմար տարբերակ: Հոլովական իմաստները ներկայացնում ենք ըստ իսպաներենի de նախդիրով կազմված կապակցությունների կիրառությունների հաճախականության:

1. Պատկանելության իմաստ: Հայերենում պատկանելության իմաստի հիմնական դրսևորումն է “իրական սեփականության իմաստը”²: Արտահայտվում է սեռական հոլովով: Հայերենի պատկանելության իմաստն իսպաներենում առավելագույն ճշգրտությամբ ներկայացնում է de նախդիրը: Ինչպես ասում է լեզվաբան Ֆ. Ռամիրեսը՝ “de նախդիրը գոյականների ստորակարգության բուն նախդիրն է այնպես, ինչպես սեռականն էր գերազանցապես անվանը կից հոլով”³: Օրինակ՝

Զինվորի պարգևը հանձնվեց հետմահու: – El premio del soldado fue otorgado a título póstumo.

Դեսպանատան աշխատակիցները միացան ցուցարարներին: – Los empleados de la embajada se unieron a los manifestantes.

2. Հատկանիշի իմաստ: De նախդիրով արտահայտվում է հայերենի սեռական և գործիական հոլովներով արտահայտվող հատկանիշի իմաստը:

Իսպաներենագիտության մեջ ընդունված է առանձնացնել “հատկանիշի” իմաստի հետևյալ դրսևորումները⁴՝

ա) նույնականություն (monasterio de Tatev – Տաթևի վանք),

բ) անձնական հատկություններ և մտավոր գործընթացներ (la simplicidad del alma – հոգու պարզությունը, deseo de la vida despreocupada – անհոգ կյանքի ցանկություն). այս հատկություններին իսպաներենագիտության մեջ տրվում է “վերացական ստացականության իմաստներ” անվանումը,

գ) վերացական հատկություններ (la dulce armonía de su voz – նրա ձայնի մեղմ ներդաշնակությունը). իսպաներենագիտության մեջ հանդիպում են “ոչ բուն ստացականության իմաստներ” անվանումով,

դ) կոնկրետ հատկություններ (el frescor del jabón – օձառի թարմությունը):

Սեռական հոլովով արտահայտվող հատկանիշի իմաստը Մ. Աբեդյանը ներկայացնում է հետևյալ հինգ կետերով⁵.

• Ինչի որ ընդունակ է մի առարկա, օրինակ՝ կյանքի մարդ – hombre de la vida.

² Մանրամասն տե՛ս Մ. Աբեդյան. Երկեր, հ. 2, Երևան, 1974, էջ 343–349:

³ F. Ramírez. Gramática española. Madrid, 1986, p. 78.

⁴ Մանրամասն տե՛ս A. Granvik. Estudio histórico – comparativo de los usos y la semántica de la preposición DE en español. Helsinki, 2012, p. 105.

⁵ Տե՛ս Մ. Աբեդյան. նշվ. աշխ., էջ 348–349:

• *Բնչի համար որ սահմանված, հատկացված, պիտանի է մի առարկա, օրինակ՝ ուտելու հաց* – pan de comer.

• *Բնչ որ մի բանով լինում է, կատարվում է, օրինակ՝ խաղալու մեքենա* – coche de jugar.

• *Բնչով որ մի բան լինում է, օրինակ՝ ձեռքի աշխատանք* – trabajo de mano.

• *Վիճակ, աստիճան, տարիք և այլն, որ ունի, կամ որի մեջ գտնվում է մի բան, օրինակ՝ նոր ձևի հագուստ* – vestido de forma nueva.

Գործիական հոլովով արտահայտվում է մարդկանց և իրերին բնորոշ հատկությունների իմաստը: Օրինակ՝

Կապույտ աչքերով աղջիկը: – La niña de ojos azules.

Բարձր օձիքով վերնաշապիկ: – Un jersey de cuello alto.

3. Անջատման իմաստ: *Հայերենում անջատման իմաստը բացառական հոլովի գլխավոր գործառույթն է. այստեղ գործ ունենք ելակետի կամ սկզբնակետի, հեռացման կամ անջատման ինչպես ուղղակի, այնպես էլ փոխաբերական իմաստների հետ: Օրինակ՝*

Տնից, հարազատներից հեռացավ առանց որևէ մեկին մի բառ ասելու: – Se fue de casa, de sus familiares sin decirle a nadie alguna palabra.

Այդ ծանր դրությունից դուրս գալու համար ծայրահեղ միջոցների դիմեցին: – Tomaron medidas extremas para salirse de esa situación difícil.

4. Ստորոգելի: *Իսպաներենի de նախդիրով կազմված կապակցությամբ (կիրառվում է “ser + de + գոյական” կայուն կառույցը) արտահայտվում է հայերենի սեռական, բացառական և գործիական հոլովներով արտահայտվող ստորոգելին: Օրինակ՝*

Նա մեծ պաշտոնի էր: – Era de gran posición.

Այս տունը քարից է: – Esta casa es de piedra.

Թխվածքը մրգերով էր: – La torta era de fresa.

5. Մասի և ամբողջի հարաբերության իմաստներ: *Ունենք հարաբերության երկու եզր. մի կողմից կարող է նշվել ամբողջի մասը, մյուս կողմից՝ մասերից կազմված ամբողջը: Առաջին դեպքում ամբողջը, զանգվածը, բազմությունը, որից առանձնացվում, հանվում, վերցվում է մի որոշ մաս, կշիռ, քանակ, նշանակվում է բացառական հոլովով դրված բառով: Օրինակ՝*

Գինուց շատ խմեց: – Bebig mucho de vino.

Երեխաներից երկուսը կամ երեքը: – Dos o tres de los niños.

Երկրորդ դեպքում նշվում են մեկ ամբողջություն կազմող առարկաները և այն ամբողջը, որը կազմված է մասերից: Նշանակվում են սեռական հոլովով դրված բառերով: Օրինակ՝

մահմեդականների բազմություն – muchedumbre de moros,
ոչխարի հոտ – una manada de ovejas,
դպրոցի աշակերտները – los alumnos de la escuela,
ծառի ճյուղերը – las ramas de árbol.

Իսպաներենագիտության մեջ մասի և ամբողջի հարաբերությունը ներկայացվում է մի շարք ենթատեսակներով, որոնք բնութագրվում են հետևյալ կերպ.

ա) Ճշգրիտ մասեր (Aún no habían pasado la mitad del camino cuando el coche se rompió. – *Ճանապարհի կեսն անգամ չէին անցել, երբ ավտոմեքենան փչացավ*): բ) Բաղադրիչ մասեր կամ անդամներ (La puerta de la casa siempre está abierta a los invitados. – *Տան դուռը միշտ բաց է հյուրերի համար*): գ) Պատահական (հատուկենտ) մասեր (Los agujeros del viejo techo no se pudo repararse. – *Հին տանիքի անցքերը հնարավոր չեղավ վերանորոգել*): դ) Վերացական և (կամ) ոչ պարտադիր մասեր (Esferas de la vida pública de nuestro estado necesitan consolidarse. – *Մեր պետության հանրային կյանքի ոլորտները համախմբման կարիք ունեն*): ե) Մարմնի մասեր (La mano de su hijo se ha rotado ya hace tres veces. – *Իր տղայի ձեռքն արդեն երեք անգամ կոտրվել է*): զ) Անորոշ քանակ (մասեր, մասնաբաժիններ) (En la mesa estaba puesto sólo cuatro raciones de pan. – *Սեղանին դրված էր ընդամենը հացի չորս մասնաբաժին*): Առաջին չորս ենթատեսակները հայտնի են “մասի և ամբողջի իմաստներ” անվանումով⁶:

6. Նյութի իմաստ: *Կարող է արտահայտվել բացառական և գործիական հոլովներով գործածված բառերով, որոնք ցույց են տալիս այն առարկաները, որոնցից բաղադրվում է մեկ այլ առարկա: Օրինակ՝*

Ոսկուց և արծաթից (պատրաստված) թագ – corona de oro y de plata.
Ցորենի ալյուրից հաց – pan de harina de trigo.
Մսկով աղցան – ensalada de seta.

7. Ծագման իմաստ: *De նախդիրի մյուս գործառույթը հայերենի սեռական և բացառական հոլովներով արտահայտվող ծագման իմաստի արտահայտումն է: Սեռական հոլովով արտահայտվող ծագման իմաստը առարկայի կամ անձի առաջացման աղբյուրն է: Օրինակ՝*

Ծերունու միակ զավակը լքեց հայրական օջախն ու տուն չվերադարձավ: – El Onico hijo del anciano se ausentó de la casa de su padre y no volvió a casa.

⁶ *Sté u G. G a y a. Curso superior de sintaxis española. México, 1943, pp. 246–250.*

Իսպաներենագիտության մեջ ծագման իմաստը ևս ներկայացվում է մի շարք ենթատեսակներով՝

ա) Մարդկանց ծագման վայր (los famosos poetas de España – *Իսպանիայի հայտնի բանաստեղծները*): բ) Իրերի ծագման վայր (yerba de India – *Հնդկաստանի խոտը*): գ) Մարդու և վայրի անվանումներ (Martín Alfonso de Toledo – *Մարտին Ալֆոնսո տոլեդացի*, Don Quijote de la Mancha – *Դոն Կիխոտ Լամանչացի*): դ) Վերացական սերում (la algazara de la casa – *տան աղմուկը*): ե) Կոնկրետ աղբյուր/արձակող օբյեկտ/ (los rayos del sol – *արևի ճառագայթները*): զ) Մարդկային գործողություն (las consecuencias de su comportamiento – *նրա պահվածքի հետևանքները*): է) Անմիջական սերում (la madre de Jesucristo – *Հիսուս Քրիստոսի մայրը*): ը) Բարեկամական հարաբերություն (el niño de mi hija – *իմ դստեր երեխան*): թ) Կոնկրետ նյութ (el pan de trigo – *ցորենի հաց*): ժ) Պարունակության մեջ առկա նյութ (edificio de piedra – *քարի շենք*): ի) Տեսակ, սերում (los polvos de arroz – *բրնձի փոշի*):

Բացառական հոլովով ցույց է տրվում մի առարկա, որից ստեղծվում է մեկ այլ առարկա: Օրինակ՝

Ավերակներից տուն սարքեցին: – Construyeron una casa de las ruinas.

8. Տարածական իմաստ: *Իսպաներենի de նախդիրով կազմված կապակցություններով արտահայտվում են նաև հայերենի սեռական, բացառական և գործիական հոլովներով կազմված տարածական իմաստներ:*

Սեռական հոլովով արտահայտվում է այն տեղի իմաստը, որտեղ գտնվում է մի առարկա: Մ. Աբեդյանը նշում է, որ տեղի նշանակությամբ կիրառվում են ինչպես մարդու և կենդանիների մարմնի մասեր ցույց տվող անունները, այնպես էլ տեղ ցույց տվող բառերը⁸: Օրինակ՝

Քաղաքի ու մարզերի ուսանողները մասնակցեցին համագումարին: – Los estudiantes de la ciudad y de las regiones participaron nctivamente en el consejo estudiantil.

Մինչև մահ մատի մատանին չհանեց: – Hasta la muerte no se quitó el anuelo de dedo.

Բացառական հոլովով արտահայտվում է այն տեղի իմաստը, որտեղից սկիզբ է առնում գործողությունը կամ շարժումը (տեղի այս իմաստի մեջ որոշակի չափով զգացվում է բացառական հոլովի ընդհանուր՝ անջատման իմաստը): Այս իմաստը կարող է արտահայտվել նաև մարդկանց ու կենդանիների մարմնի զանազան մասերը ցույց տվող բառերով: Օրինակ՝

⁷ Տե՛ս A. Granvik. Նշվ. աշխ., էջ 234–268:

⁸ Մանրամասն տե՛ս Մ. Աբեդյան. նշվ. աշխ., էջ 347:

Նրա աչքերից արցունք էր կաթում: – Lngrimas goteaban de sus ojos.

Աշխատանքից հոգնած վերադարձավ: – Regresó cansado del trabajo.

Կախվել էր մոր շորերից և լաց էր լինում: – Había colgado de la ropa de su madre y estaba llorando.

Ծնունդից է գալիս: – Viene del cumpleaños.

Այն տեղի իմաստը, որի վրայով, միջով, եզրով, հարևանությամբ անցնում է մի առարկա, հայերենում արտահայտվում է գործիական հոլովով (տեղի այս իմաստի մեջ որոշակի չափով զգացվում է գործիական հոլովի ընդհանուր միջոցի իմաստը): Իսպաներենում համարժեք իմաստն արտահայտվում է de նախդիրով կազմված a través de և por vía de նախդրավոր դարձվածքներով: Օրինակ՝

Երբ ես քսաներկու տարեկան էի, ամբողջ երկրով շրջագայեցի: – Cuando tenía veintidos años, viajé a través de todo el país.

9. Ժամանակի իմաստ: *De նախդիրով արտահայտվող ժամանակի իմաստը համապատասխանում է ժամանակի իմաստի՝ հայերենի հայցական և բացառական հոլովներով արտահայտվող համապատասխան իմաստներին:*

De նախդիրով կազմված a lo largo de նախդրավոր դարձվածքով արտահայտվում է հայցական հոլովով արտահայտվող ժամանակի իմաստը՝ այն ժամանակամիջոցը, որի սկզբից մինչև վերջ ձգվում է գործողությունը: Օրինակ՝

Երկու տարի շարունակ փորձում էր համալսարան ընդունվել: – A lo largo de dos años estaba tratando de ingresar a la universidad.

Բացառական հոլովի դեպքում ունենք a partir de նախդրավոր դարձվածքով արտահայտված ժամանակի իմաստ, որ ցույց է տալիս ժամանակային սկզբնակետ: Օրինակ՝

Այսօրվանից սկսվեցին դպրոցականների գարնանային արձակուրդները: – A partir de hoy, comenzaron los recesos de primavera de los escolares.

10. Գործողություն կատարողի (փոխակերպված ենթակայի) իմաստ: *Գործողություն կատարողի՝ de նախդիրով արտահայտվող իմաստը համապատասխանում է հայերենի սեռական և հազվադեպ՝ ուղղական հոլովներով արտահայտվող համապատասխան իմաստներին: Օրինակ՝*

Եղանակի վատթարացման հետևանքով դպրոցում դասերը հետաձգվեցին: – Las clases escolares se aplazaron como resultado del deterioro del clima.

Թռիչքները հետաձգվելու պատճառով օդանավակայանում մարդկանց հոծ բազմություն էր կուտակվել: – Debido a la demora de los vuelos, una gran multitud de personas se había acumulado en el aeropuerto.

Գործողություն կատարողի իմաստ է արտահայտվում նաև ներգործող խնդրով:

De նախդիրով արտահայտվող ներգործող խնդրի իմաստը համապատասխանում է այս իմաստի՝ հայերենի բացառական և գործիական հոլովներով արտահայտվող համապատասխան իմաստներին: Բացառական հոլովով արտահայտվում է գործողությունը կատարողի իմաստը, որից այդ գործողությունն անցնում է քերականական ենթակային: Տրամաբանական ենթական բացառականով դրված առարկան է, սակայն քերականորեն դա ներգործող խնդիր է և ոչ թե ենթակա: Օրինակ՝

Միրված էր բոլոր նրան ճանաչողներին: – Era amado de todos los que le conocían a él.

Ներգործող խնդիրը որոշ բայերի հետ դրվում է գործիական հոլովով: Օրինակ՝

Բլուրները ծածկված էին խիտ անտառներով: – Las colinas estaban cubiertas de bosques densos.

11. Գործողությունը կրողի (ուղիղ խնդրի) իմաստ: Լրացումը ցույց է տալիս այն առարկան, որը կրում է լրացալի ցույց տված գործողությունը⁹: De նախդիրով արտահայտվող այս իմաստը հայերենում արտահայտվում է սեռական հոլովով: Օրինակ՝

Գիտաժողովի կազմակերպումը նրանից երկար ժամանակ պահանջեց: – La organizacion de la conferencia exigió mucho tiempo de ello.

12. Պատճառի ու հիմունքի իմաստներ: De նախդիրով կազմված կապակցություններով արտահայտվող պատճառի ու հիմունքի իմաստները համապատասխանում են հայերենի բացառական և գործիական հոլովներով արտահայտվող իմաստներին: Օրինակ՝

Տանջվում էր գլխացավից: – Estaba sufriendo del dolor de la cabeza.

Դողում էր ցրտից: – Estaba tiritando del frío.

Երեխան մորը ճանաչեց ձայնից: – El niño reconoció a su madre de la voz.

Օրենքները հանրաքվեի են դրվում Ազգային ժողովի կամ Կառավարության առաջարկով: – Las leyes se someten a referéndum a propuesta de la Asamblea Nacional o del Gobierno.

13. Համեմատության իմաստ: Առարկաների համեմատումը կատարվում է դրանց որևէ հատկության առնչությամբ: Այն առարկան նշանակող բառը, որի հետ համեմատվում է մի ուրիշ առարկա, հայերենում դրվում է բացառա-

⁹ Տե՛ս S. R. Lacuesta, E. B. Gisbert. La derivacion nominal. Madrid, 1999, p. 4583.

կան հոլովով, որին համապատասխանում է իսպաներեն de նախդիրով կապակցությունը: *Օրինակ՝*

Ժամանակակից շենքերը, չնայած բարձրահարկ լինելուն, ավելի ապահով են հին շենքերից: – Los edificios modernos, aunque siendo de gran altura, son mns seguros de los edificios antiguos.

14. Վերաբերության իմաստ: *De նախդիրով արտահայտվող վերաբերության իմաստը համապատասխանում է հայերենի բացառական հոլովով արտահայտվող համապատասխան իմաստին: Գործածվում է սասցական և մտածական բայերի պահանջով, ցույց տալիս, թե ինչի, ում մասին է խոսքը:* *Օրինակ՝*

Խոսում էր ինչ-որ նախագծից: – Hablaba de un proyecto.

Անհանգստանում էին ամեն մի մանրուքից: – Se ocuparían de todos los detalles.

15. Միջոցի իմաստ: *Հայերենում գործիական հոլովով ցույց է տրվում այն առարկան, որի միջոցով, միջամտությամբ, միջնորդությամբ կատարվում է գործողությունը: Այդ իմաստն իսպաներենում արտահայտվում է “de + գոյական” և “a través de, por vía de + գոյական” կադավարներով: Օրինակ՝*

Նա հպարտ էր իր հարազատներով: – Estaba orgulloso de sus parientes.

Նայում էր հեռադիտակով: – Miraba a través del telescopio.

Այդ գյուղ կարելի է հասնել քանդված կամրջով: – A ese pueblo se puede llegar por vía del puente destruido.

16. Ձևի իմաստ: *Հայերենում արտահայտվում է գործիական հոլովով, որի համարժեք իսպաներեն կառույցը կազմվում է “de + գոյական” կադավարով: Օրինակ՝*

Իր ամբողջ ուժով հարվածեց դռանը: – Golpeó a la puerta de toda su fuerza.

17. Սահմանափակման իմաստ: *Այս իմաստը հայերենում արտահայտվում է բացառական և գործիական հոլովներով, որոնց համապատասխանում են իսպաներենի de նախդիրով կազմված նախդրավոր կապակցություններ: Եթե սահմանափակման իմաստ արտահայտող բացառական հոլովով ցույց է տրվում այն առարկան, որից վերցվում է որևէ հատկություն, ապա գործիական հոլովով առավել հաճախ գործածվում են մարդու տարիքի, բնավորության, վարք ու բարքի, սովորությունների հետ կապված բառերը: Օրինակ՝*

Թվաբանությունից շատ ուժեղ էր, բայց հումանիտար առարկաներից բան չէր հասկանում: – Era muy fuerte en la aritmética, pero no entendía nada de los temas humanitarios.

Մասնագիտությամբ բժիշկ էր, բայց ամեն գործ անում էր առանց որևէ դժգոհության: – Era un médico de profesión, pero estaba haciendo todo sin ninguna insatisfacción.

Իրականում տարիքով փոքր էր, բայց արտաքուստ մեծ էր երևում: – Realmente era joven por la edad, pero se veía mayor de la apariencia.

18. Բացահայտման իմաստ: *Բացահայտման իմաստը կարող է արտահայտվել հայերենի բոլոր հոլովներով, քանի որ բացահայտիչն ու բացահայտյալը մեծ մասամբ հոլովական համաձայնություն են ունենում: Հետևաբար, վերը նշված բոլոր իմաստներով գործածված գոյականները կարող են ունենալ համապատասխան հոլովով բացահայտիչ: Իսպաներենում de նախդիրով արտահայտվում են հայերենի սեռական և բացառական հոլովներով արտահայտվող բացահայտման իմաստի համարժեքները: Օրինակ՝*

Լևոն Մադոյանի՝ հայտնի դուդուկահարի հարյուրամյակին նվիրված միջոցառում կազմակերպվեց: – Se organizg un evento dedicado al cien aniversario de Levgn Madoynn, del famoso jugador de duduk.

Հեռացավ Հայաստանից՝ իր օրրանից: – Se fue de Armenia, de su cuna.

Այսպիսով, քննություն առնելով հայերենի հոլովական իմաստները, որոնք իսպաներենում արտահայտվում են de նախդիրով կազմվող կապակցություններով, տեսնում ենք հետևյալ հարաբերակցությունները.

1. *հայերենում կան հոլովական իմաստներ, որոնց արտահայտման համար իսպաներենում de նախդիրը հիմնական միջոցն է: Դրանք են պատկանելության, հատկանիշի, անջատման, մասի ու ամբողջի հարաբերության, ծագման և բացահայտման իմաստները,*

2. *կան նաև հոլովական իմաստներ, որոնք թեև կարող են de նախդիրով արտահայտվել, բայց ավելի հաճախ պահանջում են այլ նախդիրների գործածություն: Դրանք են ստորոգելիի, նյութի, տարածական, ժամանակի, գործողություն կատարողի, գործողությունը կրողի, պատճառի ու հիմունքի, համեմատության, վերաբերության, միջոցի, ձևի, սահմանափակման իմաստները,*

3. *իսպաներենի de նախդիրն արտահայտում է հայերենի հոլովական իմաստներն ավելի հաճախ առանձին, երբեմն էլ նախդրավոր կապակցությունների կազմում, որոնցով միայն արտահայտվում են տարածական, ժամանակի, պատճառի, հիմունքի և միջոցի իմաստները:*

Նարինե Մելքոնյան – գիտական հետաքրքրությունը՝ լեզվաբանություն: 7 հոդվածի հեղինակ է: nar_melq@yahoo.com

REFERENCES

- A. **Granvik**. Estudio histórico – comparativo de los usos la semántica de la preposición DE en español. Helsinki, 2012 (En Español).
- F. **Ramírez**. Gramática española. Madrid, 1986 (En Español).
- M. **Bassols**. Sintaxis latina. Madrid, 1967 (En Español).
- M. **Abegh'yan**. Ye'rker, h. Z, Ye'rev'an, 1974 (In Armenian).
- S. **Gaya**. Curso superior de sintaxis española. México, 1943 (En Español).
- S. **Lacuesta. E. Gisbert**. La derivación nominal. Madrid, 1999 (En Español).

ВЫРАЖЕНИЕ НЕКОТОРЫХ ПАДЕЖНЫХ ЗНАЧЕНИЙ ИСПАНСКИМ
ПРЕДЛОГОМ DE
(В сопоставлении с армянским)

НАРИНЕ МЕЛКОНЯН

Резюме

Ключевые слова: падежное значение, синтетическая форма, аналитическая форма, морфологическая единица, план содержания, план выражения.

Значения, выражающиеся в армянском языке падежными формами, в испанском выражаются аналитически – предложными конструкциями. В образовании испанских форм, эквивалентных разным падежам армянского, часто используется предлог de.

Одна и та же морфологическая единица в обоих языках может играть очень важную роль в выражении разных значений, и наоборот, одно и то же значение может выражаться различными грамматическими средствами. Например, многие семантические эквиваленты родительного, отложительного и творительного падежей (с незначительными количественными различиями), выражающие большое число разных значений в армянском, в испанском образуются с помощью предлога de, отличающегося высокой частотностью употребления.

Нарине Мелконян – соискатель кафедры сравнительной лингвистики ЕГУ. Научные интересы: лингвистика. Автор 7 статей. nar_melq@yahoo.com

EXPRESSION OF SOME CASE MEANINGS BY SPANISH
PREPOSITION “DE”

(in comparison with the Armenian)

NARINE MELKONYAN

S u m m a r y

Key words: declensional meaning, synthetic form, analytical form, morphological unit, content plane, expression plane.

Meanings expressed in Armenian language by declensional forms, in Spanish are expressed analytically by prepositional constructions. In the formation of Spanish forms equivalent to different cases in Armenian, the preposition “de” is often used.

The same morphological unit can play a very important role in the expression of various meanings in both languages and vice versa – the same meaning can be expressed by different grammatical means. For instance, many semantic equivalents of Ablative, Genitive and Instrumental cases (with insignificant quantitative differences), expressing a large number of different meanings in Armenian, are formed in Spanish by the preposition “de”, standing out with its obviously high frequency of usage.

*Narine Melkonyan – Extern PhD student at the YSU Chair of Comparative Linguistics.
Scientific interests: Linguistics. Author of 7 articles. nar_melq@yahoo.com*

ՏԱՅՔՈՒՄ ԵՎ ԿՂԱՐՁՔՈՒՄ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՎՐԱՅԱԿԱՆ ՃՅՈՒՂԻ
ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԹՎԱԿԱՆԻ ՇՈՒՐՁ *

ԼԻԱՆԱ ՆԱԶԱՐՅԱՆ

Բանայի բառեր՝ Բագրատունիներ, Տայք, Կղարջք, Արշիլ II, Աշոտ Մսակեր, Ատրներսեհ, Բագրևանդի ճակատամարտ, Ջուանշեր:

Մինչև VIII դ. Բագրատունիները կապ չունեին վրացական իշխանության հետ, որը կարելի է հիմնավորել հենց վրացական աղբյուրներով: Հետևաբար, Տայքը, որպես Բագրատունիների մի ճյուղի տիրույթ, չէր կարող պատկանել վրաց պետությանը: Ուստի Տայքում հաստատված Բագրատունիների իշխանության պատմությունը պետք է սկսել VIII դ., իսկ առավել հստակ՝ Աշոտ Կույրի (732–748 թթ.) որդի Վասակից ու նրա թոռ Ատրներսեհից:

Համաձայն XIII դ. պատմիչ Վարդան վարդապետի՝ Աշոտ Կույրի թոռ Աշոտ Մսակերը (մահ. 826 թ.) արաբներից ազատագրեց Շիրակը և Աշոցքը ու գրավեց նաև Տայքը, որտեղ էլ հիմնեց Կայմախ ամրոցը և այնտեղ տեղափոխեց իր ընտանիքը¹: Իսկ թե ե՞րբ է դա տեղի ունեցել, կրկին վկայում է Վարդանը. “... անկելոցն ի մեծ պատերազմին”², այսինքն՝ 775 թ. Բագրևանդի ճակատամարտից հետո, երբ հայերը պարտություն կրեցին արաբներից: Համաձայն Ն. Ադոնցի՝ Աշոտ Մսակերը 803–805 թթ. ժամանակահատվածում է տիրել Տայքին³: Նա, մեջբերելով VIII դ. պատմիչ Ղևոնդի վկայությունը, գրում է. “Ուղիղ հարյուր տարի առաջ Աշոտի նախնիքներից մեկը, Սմբատ Բյուրատյան, թողել էր Դարոյնք և հաստատվել Տայքի Թուխարք բերդում, “եւ զգուշանայր յորդոցն Իսմայելի (արաբների – Լ. Ն.)”⁴: Խոսքը վերաբերում է 703 թ. Վարդա-

* Ընդունվել է տպագրության 19. II. 2019 թ.: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի միջին դարերի պատմության բաժնի կրտսեր գիտաշխատող: Հոդվածը տպագրության է երաշխավորել գիտական ղեկավար, պ. գ. թ., դոցենտ Ա. Շահնազարյանը (05. IV. 2019 թ.):

¹ Տե՛ս Հավաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ (այսուհետև՝ Վ ա ր դ ա ն վ ա ր դ ա պ ե տ), ի Վենետիկ, 1862, էջ 76:

² Նույն տեղում:

³ Տե՛ս Ն. Ադոնցի. Երկեր, հ. Ա, Երևան, 2006, էջ 449:

⁴ Պատմաբանութիւն Ղևոնդեայ Մեծի վարդապետի Հայոց, որ յաղագս երեւելոյն Մահմետի եւ զկնի նորին, թէ որպէս եւ կամ որով արինակաւ տիրեցին տիեզերայ, եւս առաւել թէ Հայոց

նակերտի ճակատամարտից հետո Սմբատ Բագրատունու (Բյուրատյան)՝ Տայքի Թուխարք բերդում հաստատվելուն⁶: Հնարավոր է, որ Ն. Ադոնցին նման եզրահանգման հիմք է տվել Վարդան պատմիչի վկայությունն առ այն, որ Աշոտ Մսակերը՝ Տայքում հիմնելով Կալմախ ամրոցը, «բնակեցուցանե ի նմա զընտանիս իւր. և ինքն (Աշոտ Մսակեր – Լ. Ն.) նմանեալ նախնոյն իւրոյ Սմբատայ, որդւոյ Բիրատայ իշխանի Սմբատաւանայ⁷: Այսինքն՝ Վարդանի նշած Սմբատը, ով Սմբատավանի կամ Բաբերդի իշխան Բյուրատի որդին էր, Ղևոնդի հիշատակած Սմբատ (Բյուրատյան) Բագրատունին է, ով հաստատվել էր Տայքի Թուխարք ամրոցում:

Փորձենք պարզել Սմբատ Բագրատունի (Բյուրատյան) իշխանի Թուխարքում հաստատվելու ժամանակը: Ստույգ է, որ դա տեղի է ունեցել Բյուզանդիայի Տիրերիոս III (698–705 թթ.) կայսեր օրոք, այսինքն՝ մինչև 705 թ., քանի որ կայսրը Վարդանակերտի ճակատամարտից հետո Սմբատ Բագրատունուն շնորհել էր կուրապաղատի տիտղոս, և վերջինս գնացել էր Տայք⁸: Ապա կայսրը նրան տվել է «զքաղաքն, որ անուանեալ կոչի Փոյթ՝ ի կողմանն Եզեր աշխարհին, և բնակեցան ի նմա ամս 9 (6)»⁹: Այսինքն՝ ըստ Ղևոնդի, նրանք այնտեղ բնակվել են 6 տարի: Եթե Սմբատն ու իր համախոհները 703–705 թթ. միջակայքում են գնացել Փոյթի, ապա պատմիչի նշած 6 տարին համապատասխանում է մոտ 709–711 թթ., որից հետո Արմինիայի ոստիկան Աբդլ-Ազիզի միջնորդությամբ վերադարձել են Հայաստան¹⁰: Ն. Ադոնցը նրանց վերադարձը դնում է մոտ 712 թ.¹¹: Քանի որ Աբդլ-Ազիզը ոստիկան է եղել 705–709 թթ.¹², հետևաբար, Սմբատ Բագրատունին (Բյուրատյան) վերադարձել է ամենաուշը մինչ 709 թ., ուստի դրանից հանելով նրա՝ Փոյթում անցկացրած 6 տարիները՝ ստացվում է՝ նա Տայքում եղել է 703 թ., այսինքն՝ ապստամբությունից անմիջապես հետո: Ա. Տեր-Ղևոնդյանը ևս Սմբատի վերադարձը թվագրում է 709-ով¹³:

ազգիս (այսուհետև՝ Ղևոնդ վարդապետ).– Մատենագիրք Հայոց, հ. 9, Ը դար, Անթիլիաս-Լիբանան, 2007, էջ 751:

⁵ Ն. Ադոնց. նշվ. աշխ., էջ 449:

⁶ Տե՛ս Ղևոնդ վարդապետ, էջ 750–751:

⁷ Վարդան վարդապետ, էջ 76:

⁸ Տե՛ս Ղևոնդ վարդապետ, էջ 750, А. Тер-Гевондян. Армения и Арабский халифат. Ереван, 1977, с. 76, տե՛ս նույնի՝ Հայաստանը VI–VIII դարերում, Երևան, 1996, էջ 126:

⁹ Ղևոնդ վարդապետ, էջ 757:

¹⁰ Տե՛ս նույն տեղում:

¹¹ Տե՛ս Ն. Ադոնց. նշվ. աշխ., էջ 483:

¹² Տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան. Արմինիայի ոստիկանների ժամանակագրությունը.– Հոդվածների ժողովածու, Երևան, 2003, էջ 387:

¹³ Տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան. Հայաստանը VI–VIII դարերում, էջ 137:

Հետևաբար, դատելով Ն. Ադոնցի խոսքերից՝ Աշոտ Մսակերը նրանից ուղիղ 100 տարի հետո, այսինքն՝ մոտ 803–805 թթ. միջակայքում է հաստատվել Տայքում, առավել ճշգրիտ՝ 803 թ.: Մակայն համամիտ չենք այդ տեսակետին, քանի որ, ինչպես Վարդան վարդապետն է վկայում, Գնունիների տոհմը, նեղվելով Հայաստանում հաստատված արաբական ցեղերից, դիմում է Աշոտ Մսակերի օգնությանը, ով էլ 1000 զինվորով գնում է Ադիովիտ և այդ տոհմը տեղափոխում Տայք՝ բնակեցնելով այնտեղ¹⁴: Այսինքն՝ կարելի է ենթադրել, որ Աշոտ Մսակերը մինչ այդ արդեն տիրում էր Տայքին:

Համաձայն Ա. Տեր-Ղևոնդյանի՝ Գնունիների տեղափոխումը Տայք տեղի է ունեցել մոտ 790 թ., առավել ստույգ՝ 785–790 թթ.¹⁵: Հետևաբար, Աշոտը մինչ այդ արդեն պետք է հաստատված լիներ այնտեղ: Ընդ որում, Ա. Եղիազարյանը գտնում է, որ 774–775 թթ. հակաարաբական ապստամբությունից հետո Տայքը, ինչպես նաև քաղաքական ասպարեզից հեռացած Մամիկոնյանների ու Կամսարականների մյուս տիրույթները, «ժառանգական իրավունքով անցել էր Բագրատունիներին, քանի որ Հայոց իշխան Աշոտ Մսակերի մայրը Մամիկոնյան էր, իսկ Մամիկոնյանները ապստամբությունից առաջ տիրում էին Տայքին»¹⁶: Այն, որ Մամիկոնյաններին ու Կամսարականներին պատկանող տիրույթներն անցել են Աշոտ Մսակերին, վկայում է նաև Ասողիկը¹⁷: Մակայն Աշոտը ժառանգական իրավունքով չէ, որ տիրել է Տայքին ու Կամսարականների տիրույթներին: Նա, ըստ Վարդանի, իր եղբայր Շապուհի հետ «հարին զգորսն Իսմայելի՛ որ անդ (Շիրակ – Լ. Ն.), և գրաւեցին յինքեանս զՇիրակ և զԱշոցք, և զգաւառն Տայոց»¹⁸: Իսկ Ասողիկը նշում է, որ Աշոտը «գանձագին արար զգաւառն Աշրարունեաց յազգէն Կամսարականաց»¹⁹: Ն. Ադոնցը հավանական է համարում, որ «785 թ., երբ մեռավ Խազրագ դեմ պատերազմելիս Ներսէհ Կամսարական, այնուհետև Կամսարական իշխաններ չեն հիշվում: Պետք է ենթադրել, որ տոհմը սպառվել էր: Աշոտ Մսակերը օգտվեց այս հանգամանքից և Կամսարականների ժառանգներից գնեց Արշարունիքի մի մասը»²⁰: Բացի այդ, ըստ Ն. Ադոնցի, Արշարունիքին տիրելուց (785 թ.) հետո է Մսակերը գրավել նաև Շիրակը, Աշոցքն ու Տայքը²¹: Հետևաբար, Աշոտ Մսակերն

¹⁴ Տե՛ս Վարդան վարդապետ, էջ 77:

¹⁵ Տե՛ս А. Тер-Гевондян. Նշվ. աշխ., էջ 125:

¹⁶ Ա. Եղիազարյան. Տայքի իշխանությունը Հայ Բագրատունիների տերության համակարգում. – ՊԲՀ, 2008, № 3, էջ 199, հմմտ. ն ու լ յ ն ի՝ Հայ Բագրատունիների տերությունը (885–905 թթ.), Երևան, 2011, էջ 114:

¹⁷ Տե՛ս Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական (այսուհետև՝ Ա ս ո ղ ի կ), Ս. Պետերբուրգ, 1885, էջ 106:

¹⁸ Վարդան վարդապետ, էջ 76:

¹⁹ Ա ս ո ղ ի կ, էջ 106:

²⁰ Ն. Ադոնց. նշվ. աշխ., էջ 448:

²¹ Տե՛ս նույն տեղում:

ապստամբությունից (774–775 թթ.) անմիջապես հետո “ժառանգական իրավունքով” չտիրեց այդ տարածքներին, քանի որ դրա համար ժամանակ էր հարկավոր: Ըստ Ա. Տեր-Ղևոնդյանի՝ դա պետք է տեղի ունեցած լիներ 775–784 թթ. միջակայքում: Նրա տեսակետի հիմքում ընկած են Ղևոնդի և վրացական աղբյուրների տեղեկությունները: Իսկ Յ. Մարկվարտը կարծում է, որ Աշոտ Մսակերը մինչև 788 թ. “պատմութեան մեջ չերեւար”²², այսինքն՝ այդ տարածքներին Բագրատունի իշխանի տիրելը տեղի է ունեցել դրանից հետո: Աշոտ Մսակերի՝ Տայքին տիրելու ժամանակին դեռ կանդրադատանք, իսկ այժմ ներկայացնենք վրացական աղբյուրների տեղեկությունները:

Վրաց հեղինակներից Ջուանշերը (XI դ.) հայտնում է, որ Ադարնասե Կույրի եղբորորդի Ադարնասեն՝ Վրաց թագավոր Արչիլի մոտ գնալիս, “այդ նույն ժամանակ, մի քանի պիտիաշխների (իշխանների) չթույլատրեցին գնալ Կդարջք, նրանց մի մասը գնաց Տայք և տեր դարձավ մի ժայռի, որը կոչվում էր Կալմախի, և այնտեղ հիմնեց ամրոց”²³: Պատմիչի նշած Ադարնասե Կույրը՝ նույն ինքը՝ Աշոտ Կույրն է, իսկ նրա եղբորորդի Ադարնասեն՝ ոչ թե եղբորորդին էր, այլ նրա որդի Վասակը և նրա որդի Ատրնեքսեհը, որոնք ևս Բագրևանդի (775 թ.) ճակատամարտի պարտությունից հետո հեռացել էին Տայք ու Կդարջք և հիմք դրել Բագրատունիների վրացական ճյուղին²⁴: Անկասկած, վրաց պատմիչի նշած “պիտիաշխներն” էլ Աշոտ Մսակերն ու նրա հետ Տայք տեղափոխված իշխաններն էին. Վարդանի տեղեկություններին դեպքերի նկարագրության նմանությունն ու հիմնած ամրոցի անունը՝ Կալմախ, այդ փաստի ապացույցն են: Սակայն կարևոր է նաև, որ, ըստ Ջուանշերի, Աշոտը և իր հետ գնացած իշխաններն Աշոտ Կույրի որդու ու թոռան հետ “միաժամանակ” են անցել Տայք: Հետևաբար, առավել կարևորվում է այն հարցը, թե ե՞րբ են վերջիններս գնացել Տայք ու Կդարջք: Դա պարզելու համար մեզ կրկին օգնում է վրաց, կարելի է ասել, ամենահավաստի աղբյուրը՝ Ջուանշերը: Վերջինս թեև որոշ դեպքերի ժամանակագրությունը շփոթել է, սակայն դրանք հնարավոր է ուղղել և դնել ըստ իրենց ժամանակագրական հերթակա-նության:

Համաձայն Ջուանշերի, Էմիր Խուլի [վրաց. բնագրում՝ *ամոր ցրոյ*- Ամիր Ղրու (Քրու)] կողմից Քարթլին գրավելու ժամանակ Ադարնասեն գնացել էր Գուարամ կուրապաղատի որդիների մոտ՝ Կդարջք և մնացել էր այնտեղ ու դիմել էր Արչիլին²⁵: Վերջինս, վրաց արքա Արչիլ II-ն էր՝ Ստեփանոս II-ի որդին և Միհրի եղբայրը, ով իշխել է VII դ.

²² Յ. Մարկվարտ. Վրական Բագրատունեաց ծագումը, գերմաներեն թարգմանեց Հ. Մ. Հապոզեան, Վիեննա, 1915, էջ 122:

²³ ქართლის ცხოვრება, ტექსტი დადგენილი ყველა ძირითადი ხელნაწერის მიხედვით ს. ყაუხჩიშვილის მიერ, ტომი I (այսուհետև՝ ქართლის ცხოვრება, ტომი I), თბილისი, 1955, გვ. 243, *Картлис Цховреба. История Грузии (այսուհետև՝ Картлис Цховреба)*. Тбилиси, 2008, с. 112.

²⁴ *Տէ՛ս Վարդան վարդապետ*, էջ 81–82:

²⁵ *Տէ՛ս* Картлис Цховреба, с. 112.

երկրորդ կեսից մինչև VIII դ. առաջին քսանամյակը (668–718 թթ.): Արշիլի կառավարման թվերը հաստատ չեն և ոմանք նրա գահակալումը հասցնում են 705–745 թթ.²⁶: Հետևաբար, Աշոտ Կույրի որդին կամ թոռը չէր կարող նրա մոտ գնացած լինել, նույնիսկ եթե իսկապես Արշիլն իշխել է մինչև 745 թ., քանի որ կասկածից վեր է, որ Բագրատունի իշխանները Վրաց արքայի մոտ են գնացել Բագրևանդի ճակատամարտից հետո: Ջուանշերն էմիր Խուլին նույնացնում է Մուհամմադի որդի Մուրվանի հետ, որին Քարթլի էր ուղարկել «Էշիմ՝ Աբդալ-Մելիքի որդին»²⁷: Վերջինս արաբ խալիֆ Աբդալ-Մալիքն է (685–705 թթ.), իսկ Էշիմը՝ նրա որդի խալիֆ Հիշամը (724–743 թթ.): Պատմիչի նշած Մուհամմադի որդի Մուրվանն Արմինիայի ոստիկան էր նշանակվել 732–733 թթ. և Հայաստանից հեռացել 743–744 թթ.²⁸ ու դարձել խալիֆ (744–750 թթ.): Մուրվանն էր, որ Աշոտ Բագրատունուն (Աշոտ Կույրին) նշանակեց Հայոց իշխան²⁹: Արդեն իսկ ակնհայտ է, որ այս Մուրվանն ոստիկանի օրոք չէին տեղի ունեցել Բագրևանդի ճակատամարտն ու դրան հաջորդող դեպքերը: Սակայն Ջուանշերն այս ոստիկանին է տալիս «Ղու (Քրու)- Խուլ» մականորդը, մինչդեռ Ղևոնդ պատմիչը նման կերպ բնորոշում է Աբդալ-Ազիզ ոստիկանին. «... առաքե [Վալիդ I խալիֆը (705–715) – Լ. Ն.] զԱբդալ-Ազիզ ոմն, որ էր խալիֆ լսելեալ»³⁰, այսինքն՝ խուլ էր: Վերջինս, որի ամբողջական անունն է՝ Աբդալ-Ազիզ իբն Հատիմ ալ-Բահիլի, համաձայն Ա. Տեր-Ղևոնդյանի, ոստիկան է եղել 705–709 թթ.³¹, որի ջանքերով Փոթիից Հայաստան վերադարձան վերը հիշված Սմբատ Բյուրատյանն ու այլ իշխաններ³²: Քանի որ հազիվ թե երկու ոստիկաններն էլ՝ Աբդալ-Ազիզն ու Մուրվանը, խուլ են եղել, ուստի ենթադրելի է, որ պատմիչները շփոթել են նրանց: Դեպքերին ժամանակակից պատմիչ Ղևոնդը դժվար թե շփոթեր նման արատ ունեցող ոստիկանին, ուստի, առավել հավաստի է թվում, որ «Խուլ»-ը ոչ թե 732 թ. ոստիկան նշանակված Մուրվանն էր, այլ՝ Աբդալ-Ազիզը (705 թ.): Ն. Ադոնցն իրավացիորեն կարծում է, որ Ջուանշերին շփոթության մեջ են գցել վերոհիշյալ Սմբատ Բագրատունու (Բյուրատյան)՝ Տայքի Թուխարք ամրոց ու այնտեղից Փոթի գնալու դեպքերը, որոնք էլ արձագանք են գտել վրաց պատմիչի մոտ, և նա ոչ միայն Սմբատ Բագրատունուն նույնացրել է Ատրնեսեհի կամ Վասակի հետ, այլև՝ նրանց Կղարջք գնալու իրադարձությունները՝ Սմբատի Փոթի գնալու հետ: Ուստի Ջուանշե-

²⁶ Տե՛ս նույն տեղում, ծանոթ. 1, էջ 137: Արշիլի կառավարման թվականների վերաբերյալ մանրամասն տե՛ս Матиане Картлиса. Перевод, введение и примечания М. Д. Лордкипанидзе. Тбилиси, 1976, ծանոթ. 4, էջ 62–63:

²⁷ Տե՛ս ქართველთა ცხოვრება, ტომო I, էջ 233, Картლის Цховреба, с. 108.

²⁸ Տե՛ս Ա. Տեր - Ղևոնդյան. Արմինիայի ոստիկանների ժամանակագրությունը, էջ 388:

²⁹ Տե՛ս նույն տեղում:

³⁰ Ղևոնդ վարդապետ, էջ 757:

³¹ Տե՛ս Ա. Տեր - Ղևոնդյան. Արմինիայի ոստիկանների ժամանակագրությունը, էջ 387:

³² Տե՛ս Ղևոնդ վարդապետ, էջ 757, Ասոդիկ, էջ 125:

րը շփոթել է նաև հիշյալ ոստիկաններին՝ Աբդի-Ազիզին ու Մուրվանին, և վերջինիս կոչել «Խուլ»³³: Հետևաբար, շփոթության արդյունքում Բագրատունի իշխան Ատրներսեհի Կդարջքում հաստատվելը, հավանաբար, Ջուանշերին «ստիպել է» կարծել, թե նա է գնացել Արչիլ թագավորի մոտ և բնակության տարածք խնդրել: Ավելացնենք՝ դեպքերի նույնացման օգտին է խոսում նաև այն փաստը, որ Արչիլը՝ նույն ինքը՝ Արչիլ II-ը, Մմբատ (Բյուրատյան) Բագրատունի՝ Տայք և Փոթի գնալու ժամանակ էր իշխում Քարթլիում, իսկ Կդարջքում կարող էին իշխել Գուարամ կուրապաղատի որդիները: Մակայն, ինչպես կտեսնենք ստորև, զարմանալիորեն այդ փաստն անտեսել են Ն. Ադոնցը, նաև՝ Մ. Բրոսսեն ու Յ. Մարկվարտը: Այսինքն՝ Արչիլի մոտ գնացել են ոչ թե Աշոտ Կույրի որդի Վասակն ու թոռ Ատրներսեհը, այլ՝ Մմբատ (Բյուրատյան) Բագրատունին:

Չնայած դեպքերն ու դեմքերը շփոթելու իր իրավացի ենթադրությանը՝ այնուամենայնիվ, Ն. Ադոնցը շարունակել է կարծել, որ Ատրներսեհը 775 թ. գնացել էր Արչիլի մոտ. ընդ որում, ըստ նրա, Արչիլը մահացել է 786 թ.³⁴: «Արչիլի վկայաբանություն»-ից տեղեկանում ենք, որ էմիր Դրուից (Խուլից) 50 տարի անց, ունի Չիչնաում (վրացերեն բնագրում՝ ԶոՖնայթ-Ճիճնաում)՝ Մուհամմեդի որդին, որին կոչում էին նաև Ասիմ, մտավ Քարթլի³⁵: Չիչնաում էր, որ սպանել տվեց Արչիլին³⁶: Ն. Ադոնցը, Մուրվանի գալու 732 թ. ավելացնելով 50 տարի, Արչիլի մահվան տարին համարում է մոտ 781 թ.³⁷: Ղևոնդը վկայում է, որ Խազիմ անունով արաբ ոստիկանը Դվինում սպանել տվեց Համազասպ և Սահակ Արծրունիներին՝ ՄԼԳ (233), Հայոց թվականին, հայտնության օրերին³⁸ այսինքն՝ 785 թ., Մուսե խալիֆի (785–786) օրոք: Այս խալիֆի ժամանակ. «...սպան եւ զիշխանն Վրաց չարաչար մահուամբ. զի վերամբարձ առեալ զոտիցն եւ զձեռացն՝ ընդ մէջ կտրէր զմատաղութին հասակի նորա»³⁹, – գրում է պատմիչը: Ն. Ադոնցը գտնում է, որ այս Վրաց անանուն իշխանն Արչիլն է, ինչպես կարծում են նաև Մ. Բրոսսեն և Յ. Մարկվարտը՝ հիմք ընդունելով նահատակության տարին (785 թ.) և ոստիկանի անունը (Խազիմ)⁴⁰: Ղևոնդի նշած Խազմ ոստիկանը՝ Խուզայմա իբն Խազիմ

³³ Տե՛ս ն. Ադոնց. նշվ. աշխ., էջ 483:

³⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 484:

³⁵ Տե՛ս ქართლის ცხოვრება, ტომი I, էջ 245, Летопись Картли. Перевод, введение и примечания Г. В. Цулая.– Памятники грузинской исторической литературы, IV. Тбилиси, 1982, с. 41; Картлис Цховреба, с. 135.

³⁶ Տե՛ս ქართლის ცხოვრება, ტომი I, էջ 247, Летопись Картли, с. 43; Картлис Цховреба, с. 136.

³⁷ Տե՛ս ն. Ադոնց. նշվ. աշխ., էջ 484:

³⁸ Տե՛ս Ղևոնդ վարդապետ, էջ 848 (մատենագրքում գրած է 784 թ.):

³⁹ Նույն տեղում:

⁴⁰ Տե՛ս ն. Ադոնց. նշվ. աշխ., էջ 484: Ընդ որում, Ն. Ադոնցը Ղևոնդի նշած ՄԼԳ (233) թվականը կարդում է ՄԼԴ (234) և նահատակության տարին համարում 786 թ.: Հմմտ. Histoire

ալ-Տամիմին (786–787 թթ.) էր, ով, համաձայն Ա. Տեր-Ղևոնդյանի, պատմիչի նշած ժամանակ (785 թ.), հավանաբար, ոստիկանի տեղակալն է եղել⁴¹: Սրա անունը, ըստ Ն. Ադոնցի, վրացական աղբյուրում աղավաղված ձևով է հիշվում՝ Ջիջում-Ասիմ, մինչդեռ պետք է լինի Խիզում-Ասիմ, իսկ «մատաղության հասակի» խոսքը, նրա կարծիքով, վերաբերում է Արչիլին, ինչը նշանակում է, որ նա չէր կարող իշխած լինել 50 տարի: Ուստի համաձայն Ն. Ադոնցի՝ վկայաբանության հեղինակը փորձել է հարթել սխալ ժամանակագրությունը և Արչիլի կառավարումը հասցրել մինչև 786 թ.⁴²:

Մենք համամիտ չենք Ն. Ադոնցի տեսակետին, քանզի չենք կարծում՝ Ղևոնդի նշած նահատակված անանուն Վրաց իշխանն Արչիլն է, քանի որ վերջինս Ստեփանոս II-ի որդին էր, ով իշխել է VII դ. ընթացքում: Նույնիսկ եթե, համաձայն աղբյուրների, Արչիլը միանձնյա կառավարել է եղբորից՝ Միհրից հետո 50 տարի, միննույնն է, նրա գահակալումը չի հասնի մինչև 781 թ. կամ 786 թ.: Բացի այդ, եթե, ինչպես վերը նշվեց, արար Խուլ ոստիկանը եղել է ոչ թե Մուրվանը, այլ Աբդլ-Ազիզը, ապա նրա գալուց (705 թ.) հետո 50 տարի անց ժամանակը հասնում է մոտ 755–759 թթ.: Հետևաբար, Արչիլի մահը պետք է տեղի ունեցած լինի դրանից ոչ ուշ: Կասկածելի է նաև աղբյուրի նշած Խուլ ոստիկանից «50 տարի հետո» Չիչնաումի Քարթլի գալը, քանի որ «Քարթլիի մատնության»-ի հայերեն թարգմանությունում նշվում է հետևյալը. «Արդ զկնի երկոտասան ամաց գնալոյ Խուլ ամիրային, եկն Ճիճնաում, որդի Մահադիայ ... որ և կոչեին Ասիմ»⁴³: Չիչնաումի գալը, փաստորեն, տեղի է ունեցել Խուլ ամիրայի հեռանալուց 50 տարի հետո, իսկ Ն. Ադոնցը հաշվում է ոչ թե Մուրվանի հեռանալու (744 թ.), այլ գալու թվականից (732 թ.) 50 տարի հետո, որի դեպքում նրա գալը կստացվեր 794 թ.: Ջուանշերի «Պատմության» վրացերեն բնագրում ևս նշվում է, որ Խուլի «հեռանալուց» մոտ 50 տարի հետո արաբները փորձեցին մտնել Քարթլի⁴⁴: Աղբյուրը, չի նշում որևէ անուն կամ Արչիլի մահվան մասին: Մակայն հաջորդ նախադասությամբ նա հայտնում է Արչիլի որդիների ու դուստրերի մասին. «... և ուներ Արչիլը երկու որդի՝ Ջուանշերը և Հովհաննը, չորս դուստր՝ Գուրանդուխտ, Մարիա, Միրանդուխտ և Շուշան»⁴⁵: Ընդ որում, Ջո-

de la Géorgie depuis l'antiquité jusqu'au XIX^e siècle par M. Brosset, 1^{re} partie, S.-Pétersbourg, 1849 (այսուհետև՝ M. Brosset), ծանոթ. 2, էջ 253, Յ. Մ ա ր կ վ ա ր տ. նշվ. աշխ., էջ 86:

⁴¹ Տե՛ս Ա. Տեր - Ղևոնդյան. Արմինիայի ոստիկանների ժամանակագրությունը, էջ 390:

⁴² Տե՛ս Ն. Ադոնց. նշվ. աշխ., էջ 484:

⁴³ Համառոտ Պատմութիւն Վրաց ընծայեալ Ջուանշերի պատմիչի (այսուհետև՝ Ջուանշեր), Վենետիկ, 1884, էջ 103, «Քարթլիս Յիտվրերայի» կամ Վրաց պատմության հին հայերեն թարգմանությունը (այսուհետև՝ «Քարթլիս Յիտվրերայի» հին հայերեն թարգմանությունը), վրացերեն բնագիրը և հին հայերեն թարգմանությունը ուսումնասիրությամբ և բարոգրքով լույս ընծայեց Իլիա Աբուլաձեն, Թբիլիսի, 1953, էջ 204:

⁴⁴ Տե՛ս Карталис Цховреба, с. 112. ქართველთა ცხოვრება, ტომი I, էջ 244:

⁴⁵ Նույն տեղում:

ւանջերի “Պատմությունն” ավարտվում է հենց այդ տեղեկությամբ, ինչից կարելի է ենթադրել, որ արաբների գալու ժամանակ կամ “Խուլի “հեռանալուց” մոտ 50 տարի հետո” Արչիլը սպանվել էր: Բացի այդ, հայերեն թարգմանությունում 50-ի փոխարեն նշված է “երկոտասան”, այսինքն՝ 20 տարի, հետևաբար, Չիչնաումը եկել է Աբդի-Ազիզ Խուլի հեռանալուց 20 տարի հետո՝ 729 թ.: Իսկ եթե նույնիսկ Խուլ ուստիկանը Մուրվանն էր, ապա վերջինիս հեռանալուց 20 տարի հետո՝ 764 թ.: Կարծում ենք, ճիշտ չէ Չիչնաում-Ասիմին նույնացնել Խուլայմա իբն Խազիմ ալ-Տամիմի ուստիկանի հետ, քանի որ, ելնելով ժամանակագրական տվյալների վերը կատարված քննությունից, Չիչնաումը պետք է Քարթլի գնացած լինի առավել վաղ, քան Խուլայմա իբն Խազիմ ալ-Տամիմի կառավարումը (786–787 թթ.): Ընդ որում, Չիչնաում-Ասիմն աղբյուրներում այլևս չի հիշվում: Կարելի է կարծել նրա անունն Ասիմ էր, իսկ “Չիչնաում”-ը՝ լոկ մակդիր⁴⁶:

Մուրվան ուստիկանից հետո՝ 744 թ., մեկ այլ արաբ ուստիկան է նշանակվել, որի անունը, ի դեպ, Ասիմ իբն Աբդալլահ իբն Յազիդ (Եզիդ) ալ-Հիլալի էր և նույն տարում էլ սպանվել է⁴⁷: Ասիմ անունով այլ ուստիկան հայտնի չէ: Հետևաբար, ենթադրելի է՝ Չիչնաում-Ասիմը նույն՝ Ասիմ իբն Աբդալլահ իբն Յազիդ ալ-Հիլալին է, որի կառավարման թվականն էլ մոտավորապես համապատասխանում է Աբդի-Ազիզ Խուլի կառավարումից 50 տարի անց ժամանակաշրջանին, այսինքն՝ 759 թ. (թեև մոտ 10 տարին չի համընկնում այսինքն՝ 744 թ. համեմատ): Մակայն չի բացատրվում, որ վրացերեն բնագրի “*ორმოცდაათი*”-ի⁴⁸ (օրմոցդասթի՝ 50) փոխարեն պետք է լինի “*ორმოცი*” [օրմոցի՝ 40, այսինքն՝ վրացերեն տասնյակ թվերի կազմության համակարգի վերջի “*ათი*”-ին (“*աթին*”) ավելացվել է և դարձել “*ორმოცდაათი*”-ի (օրմոցդասթի՝ 50)], այսինքն՝ պետք է լինի 749 թ. չհաշված, որ Ջուանջերի վրացերեն տեքստում նշվում է “մոտ 50” տարի⁴⁹:

Հետևաբար, կարելի է նշել, որ Արչիլ թագավորի սպանությունը կատարվել է 744–745 թթ.: Ուստի Ն. Ադոնցը սխալվում է՝ կարծելով, թե աղբյուրը նրա կառավարման տարիները՝ մոտ 50 տարի, չափազանցրած է ներկայացնում: Մակայն, քանի որ նրա գահակալման սկիզբը համընկնում է Հուստինիանոս II-ի (685–695 թթ., 705–711 թթ.)

⁴⁶ Ե՛վ Ջուանջերը, և՛ “Արչիլի վկայաբանության” հեղինակը նշում են, որ Չիչնաումի օրոք բազում ավերածություններ ու կոտորածներ են եղել, ինչպես էմիր Խուլի օրոք: Ուստի, հնարավոր է նրան այդպես են կոչել իր դաժան գործունեության համար, քանի որ վրացերենում կան ჭეჭვა (*ձեճդվա*), ჯოჯბნა (*ջիջգնա*), ჩიხნა (*չիչքնա*) և წიფნა (*ծիծգնա*) բառեր, որոնք նշանակում են՝ տրորել, ճմլել, ճխլել, ծվատել, փորել, քրքրել, բզկտել և այլն:

⁴⁷ Տե՛ս Ա. Տեր - Ղևոնդյան. Արմինիայի ուստիկանների ժամանակագրությունը, էջ 388:

⁴⁸ ქართლის ცხოვრება, ტომი I, გვ. 245.

⁴⁹ Տե՛ս ქართლის ცხოვრება, ტომი I, էջ 244, Картлис Цховრება, с. 112.

կառավարման շրջանին⁵⁰, և, ինչպես պարզվեց նա մահացել է 744–745 թթ., ապա իսկապես նա կառավարել է մոտ 50 տարի: Հետևաբար, 774–775 թթ. ապստամբության մասնակից Բագրատունի իշխանները՝ Ատրներսեհն ու Վասակը, ինչպես նաև Աշոտ Մսակերն ու իր հետ Տայք գնացածները, ապստամբությունից հետո չէին կարող դիմել Արշիլին: Ուստի, Ղևոնդի նշած Խուզայմա իբն Խազիմ ալ-Տամիմի կողմից նահատակված անանուն «Վրաց իշխան»-ն Արշիլը չէր:

Վերջինս ուներ երկու որդի՝ Հովհանը և Ջուանշերը, որոնք էլ հոր մահից հետո ժառանգեցին իշխանությունը, և, ամենայն հավանականությամբ, պատմիչի հիշատակած «Վրաց իշխանը» նրանցից մեկն էր: Ընդ որում, արքայազն Վախուշտը Ջուանշերի մահվան թվական է համարում 787-ը (քրոնիկոնի 7-րդ տարին)⁵¹, իսկ Հովհանինը՝ 786 թ.: Այսինքն՝ վերջինիս մահվան թվականը համապատասխանում է հենց Ղևոնդի նշած Արծրունի իշխանների հետ նահատակված անանուն «Վրաց իշխանի» մահվան ՄԼԳ (կամ ՄԼԴ) Հայոց թվականին (785 թ. կամ 786 թ.): Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ պատմիչի նշած «Վրաց իշխան»-ը՝ Հովհանն է, որի երիտասարդ տարիքն էլ կարող էր պատմիչի կողմից հիշվել «գմատադուրիւն հասակի»⁵²: «Վրաց Տարեգիրք»-ը, սակայն, նշում է, որ Ջուանշերը բավական ծեր հասակում է մահացել⁵³, ուստի, եթե Հովհանը նրանից մեկ տարի շուտ էր մահացել, ինչպես վկայում է Վախուշտը, ապա նա ևս ծեր պետք է լիներ:

Դատելով կատարված քննությունից՝ հաստատապես կարելի է նշել՝ Աշոտ Կույրի որդին՝ Վասակը, կամ որ առավել հավանական է՝ վերջինիս որդի Ատրներսեհը, գնացել է ոչ թե Արշիլի, այլ՝ նրա որդի Ջուանշերի մոտ: Վերջինս էլ տարածքներ է տվել Բագրատունի իշխանին և ամուսնացել նրա դստեր՝ Լատավրիայի հետ: Բսկ Ատրներսեհի Կղարջք գնալը, փաստորեն, պետք է եղած լինի մինչև 787 թ.: «Վրաց Տարեգիրք»-ը հստակ նշում է, որ «դեռևս Ջուանշերի կենդանության օրոք Ադարնասեն փոխանակեց իր իշխանության մեկ երրորդը ... և գնաց Կղարջք ու այնտեղ մահացավ»⁵⁴: Ասվածից կարելի է նաև ենթադրել, որ Ջուանշերը մահացել է Ատրներսեհից առաջ: Արքայազն Վախուշտն Ատրներսեհի մահվան թվական է հայտնում 779-ը (քրոնիկոնի 531 թ.)⁵⁵, այսինքն՝ նա մահացել է Ջուանշերից շուտ: Սակայն Ատրներսեհը չէր կարող այդ թվականին մահանալ, քանի որ նույն «Վրաց Տարեգիրք»-ն այնուհետև հայտնում է, որ

⁵⁰ *Տէ՛ւ Կարտլիս Ըջօւրեբա*, ս. 110.

⁵¹ *Տէ՛ւ Վախուշտի Բագրատիոնի*. *История царства грузинского*. Перевел, снабдил предисловием, словарями и указателем Н. Т. Накашидзе. Тбилиси, 1976 (*այնուհետև՝ Վախուշտի Բագրատիոնի*), ս. 126.

⁵² *Ղևոնդ վարդապետ, էջ 848*:

⁵³ *Տէ՛ւ Կարտլիս Ըջօւրեբա*, ս. 140.

⁵⁴ *Летопись Каргли*, с. 48.

⁵⁵ *Տէ՛ւ Վախուշտի Բագրատիոնի*, с. 187.

նրանից հետո իշխանությունն անցնում է Ատրնեքսեհի որդի Աշոտ Կուրապաղատին⁵⁶ (մահ. 826 թ.) (խոսքը՝ Վրաց թագավոր Ջուանշերի իշխանության մասին է): Հետևաբար, եթե Ատրնեքսեհը մահացել էր Ջուանշերից առաջ, ապա ինչպե՞ս էր վերջինիս իշխանությունն անցել Ատրնեքսեհին, որից հետո էլ սրա որդուն՝ Աշոտ Կուրապաղատին: Ուստի մնում է ենթադրել, որ Ջուանշերը, ամուսնանալով Ատրնեքսեհի դուստր Լատավրիայի հետ, մահացել է իր աներոջից շուտ, և իշխանությունն անցել է նախ աներոջը՝ Ատրնեքսեհին, ապա՝ աներորդուն՝ Բագրատունի տան ներկայացուցիչ Աշոտ Կուրապաղատին: Դրանով էլ ընդհատվել է Վրաց Խոսրովյան դինաստիայի իշխանությունը և հիմք է դրվել Բագրատունիների վրացական ճյուղի իշխանությանը: Իսկ Վախուշտի նշած 779 թ. հնարավոր է, որ մահացել է Ատրնեքսեհի հայր Վասակը, ով վրացական աղբյուրներում նույնացվել է որդու հետ և կոչվել՝ Ատրնեքսեհ: Փաստորեն, Բագրատունի իշխանների Տայք և Կղարջք գնալը պետք է տեղի ունեցած լինի մինչ 779 թ.:

Այսպիսով, ելնելով աղբյուրների տեղեկությունների քննությունից, կարելի է պնդել՝ հայ իշխանները 775–779 թթ. միջակայքում են գնացել Տայք, և որ նրանց մի մասը՝ Վասակի ու Ատրնեքսեհի գլխավորությամբ այնտեղից անցել է Կղարջք, իսկ մյուս մասը՝ Աշոտ Մսակերի գլխավորությամբ, մնացել Տայքում՝ հիմնելով Կալմախ ամրոցը: Ատրնեքսեհը, Կղարջքում խնամախանալով Ջուանշերի հետ, ստանալով որոշ տիրույթներ, սկիզբ է դնում նոր իշխանական հարստության՝ Բագրատունիների վրացական ճյուղի գլխավորությամբ, որը հիմնադրվել է մինչ Ջուանշերի մահը, այսինքն՝ 787 թ.: Այն բռնեց հզորացման ուղին Ատրնեքսեհի որդի Աշոտ Բագրատունու օրոք: Այդ իշխանությունն է, որ վրաց պատմագիտական գրականությունն անվանում է «Տառ-Կլարջեթիի» (Տայք-Կղարջքի) կամ «Քարթվելական թագավորություն», նույնիսկ՝ «Իբերական թագավորություն»⁵⁷:

Լիանա Նազարյան – գիտական հետաքրքրությունները՝ պատմաաշխարհագրական ուսումնասիրություններ: Հեղինակ է շուրջ 10 հոդվածի: Lian_nazaryan@mail.ru

⁵⁶ *St' u Kartlis Cxovreba*, c. 140.

⁵⁷ საქართველოს ისტორიის ნარკვევები, ტომი II, ტფილისი, 1973, გვ. 445; М. Лордкипанидзе. Из истории грузино-византийских взаимоотношений на грании X–XI вв., საქართველოს ფეოდალური ხანის ისტორიის საკითხები, II, თბილისი, 1972, c. 31.

REFERENCES

- A. Ye'gh'iazaryan.** Hay Bagratunineri terut'yuny (885-905 t't.), (Patmaash'xarhagrakan usumnasirut'yun), Ye'rev'an, 2011 (In Armenian).
- A. Ye'gh'iazaryan.** Tayqi ish'xanut'yunə Hay Bagratunineri terut'yan hamakargum, "PBH", 2008, t'iv 3 (In Armenian).
- A. Ter-Gevondjan.** Armenija i Arabskij xalifat, Jerevan, 1977 (In Russian).
- A. Ter-Gh'evondyan.** Hayastanə VI-VIII darrerum, Ye'revan, 1996 (In Armenian).
- A. Ter-Gh'evondyan.** Arminiayi vostikanneri zh'amanakagrut'yunə, "Hodvac'neri zh'ogh'ovac'u", Ye'rev'an, 2003 (In Armenian).
- Hamar'ot Patmut'iun Vrac ənc'aye'al Juansh'eri patmch'i, Venetik, 1884 (In Grabar).
- Havaqumn patmutean Vardanay vardapeti lusabaneal, i Venetik, 1862 (In Armenian).
- Histoire de la Géorgie depuis l'antiquité jusqu'au XIX^e siècle par M. Brosset, 1^{re} partie, S.-Petersbourg, 1849
- Kartlis Cxovreba.** Istorija Gruzii, glavnyj redaktor R. Metreveli, Tbilisi, 2008 (In Russian).
- Ljetopis Kartli.** Perjevod, vvedjenje i primjehanije G.V. Culaja, Tbilisi, 1982 (In Russian).
- Matjeana Kartlisa.** pjerjevod, vvedjenje i primjehanije M. D. Lordkipanidzje, Tbilisi, 1976 (In Russian).
- M. Lordkipanidzje.** Iz istorii gruzino-vizantiskix vzaimootnoshenii na granij X-XI vv., Saqart'velos feodaluri xanis istoriis sakitxebi, II, T'bilisi, 1972 (In Russian).
- N. Adonc.** Ye'rker, h. A, Ye're'van, 2006 (In Grabar).
- Patmabanutiun Gh'evondeay Meci vardapeti Hayoc,vor yagh'ags ereveloyn Mahmeti ev zkni norin, tevorpes yev' kam vorov orinakav tirecin tiezeray, yev's ar'avel te Hayoc azgis, Matenagirq Hayoc, h. Z, Y. dar, Antilias-Libanan, 2007 (In Grabar).
- "Qart'lis Cxovrebayi" kam Vrac patmut'yan hin hayeren t'argmanut'yunə, vraceren bnagirə yev' hin hayeren t'argmanut'yunə usumnasirut'yamb yev bar'grqov luys ənc'ayec Ilia Abuladz'en, T'bilisi, 1953 (In Armenian).
- Qart'lis Cxovreba.** teqsti dadgenili kxvela dzirit'adi xelnac'eris mixedvit' S. Kxauxch'ish'vilis mier, t. I, T'bilisi, 1955 (In Georgian).
- Saqart'velos istoriis narkvevebi, t. II, T'bilisi, 1973 (In Georgian).
- Step'anosi Taronecvoy Asogh'kan Patmut'iun tiezerakan, S. Peterburg, 1885 (In Grabar).
- Vaxushti Bagrationi.** Istorija carstvo gruzinskogo, pjerjevod, snadbil prjedislovijem, slovarjami i ukazatjeljem N.T. Nakashidzje, Tbilisi, 1976 (In Russian).
- Y. Markuart.** Vrakn Bagratuneac c'agumə, germanerene t'argmanec H. M. Napozean, Vienna, 1915 (In Armenian).

О ДАТЕ УТВЕРЖДЕНИЯ ВЛАСТИ ГРУЗИНСКОЙ ВЕТВИ БАГРАТИДОВ В ТАЙКЕ И
КХАРДЖКЕ

ЛИАНА НАЗАРЯН

Р е з ю м е

Ключевые слова: Багратиды, Тайк, Кхарджк, Арчил II, Ашот Мясоед, Атрнерсех, Багревандская битва, Джуаншер.

В 774–775 гг., после поражения в битве Багреванда, понесенного от арабов, одна ветвь Багратидов утвердилась в Тайке и соседнем Кхарджке, создав линию грузинских Багратидов. Из письменных источников следует, что сын Армянского князя Ашота Слепого Васак и его сын Атрнерсех после битвы с Ашотом Мясоедом ушли в Тайк. Ашот Мясоед поселился там, а Васак и Атрнерсех ушли в Кхарджк и, получив от сына грузинского царя Арчила II Джуаншера некоторые области, создали грузинскую ветвь Багратидов. Вышеуказанные события имели место в 775–779 гг.

Лиана Назарян – младший научный сотрудник отдела истории средних веков Института истории НАН РА. Научные интересы: историко-географические исследования. Автор около 10 статей. Lian_nazaryan@mail.ru

ON THE DATE OF THE ESTABLISHMENT OF POWER BY THE GEORGIAN BRANCH OF THE
BAGRATUNI IN TAYK AND KG HARJK

LIANA NAZARYAN

Summary

Key words: Bagratuni, Tayk, Kgharjk, Archil II, Ashot The Meat Eater, Adrnerseh, Bagrevand battle, Juansher.

After the defeat in the Bagrevand battle of 774–775, a branch of the Bagratuni settled down in Tayk and the neighbouring Kgharjk laying the foundation of the Georgian Bagratuni. From the examination of the source data it becomes clear that after the battle, Vasak – the son of the Armenian prince Ashot the Blind, and his son Adrnerseh withdrew to Tayk simultaneously together with Ashot Msaker (Ashot The Meat Eater). The latter settled there while Vasak and Adrnerseh headed towards Kgharjk and received lands from Juansher, the son of the Georgian king Archil II and established the Georgian branch of the Bagratuni. All this happened to be between the years of 775–779.

Liana Nazaryan – Junior Researcher at the NAS RA Institute of History, Department of Middle Ages History. Scientific interests: historical-geographical studies. Author of 10 scientific articles. Lian_nazaryan@mail.ru

ՀԱՂԱՐԾՆԱՎԱՆՔԻ ԴԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՇՈՒՐՁ *

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ

Բանալի բառեր՝ վանք, դավանական, փաստ, քաղկեդոնական, եկեղեցի, խաչ, տրապեզ, դեկան, հունարեն, բառ:

Վիճարկման ենթակա չէ այն փաստը, որ Հայաստանի Հանրապետության տարածքում կան մեկ տասնյակից ավելի հայկական միջնադարյան քաղկեդոնական վանքեր, եկեղեցիներ (Հնեվանք, Թեժառույք, Կիրանց վանք, Քոբայր, Պղնձահանք, Խուճապի վանք, Ոսկեպարի Ս. Աստվածածին եկեղեցի և այլն): Դրանց մի մասը հիմնադրվել է հայ երկաթնուղիների կողմից, մյուսներն էլ նախկինում եղել են հայոց առաքելադավան սրբարաններ, որոնք հայրենակիցների կամքով մի առ ժամանակ քաղկեդոնականացվել են XII–XIII դդ. հզորացած հարևան Վրաստանի ազդեցությամբ: Հետևապես, կասկած չեն հարուցում այդ վանքերի հայկականությունն ու հայ ժողովրդի միանձնյա ժառանգական իրավունքը:

Վիճարկելի է, սակայն, հայկական քաղկեդոնական կրոնական հաստատությունների շարքում Հաղարծնավանքը դասելը: Տավուշյան անտառային գեղատեսիլ բնության հետ բարձրաճաշակ ներդաշնակությամբ կառուցված Ս. Աստվածածնի վանքը մինչև XI դ. կեսը գործել է Լոռիի (Տաշիր–Չորագետի) Կյուրիկյան թագավորների հովանավորության ներքո: Այդ փաստի վառ վկայությունը Հաղարծնի վանքային համալիրի արքայական դամբարանում Սմբատ¹, Գագիկ² Կյուրիկյան Բագրատունի թագավորների տապանաքարերն են՝ համապատաս-

* Ընդունվել է տպագրության 05. IV. 2019 թ.: Գրախոսվել է 09. IV. 2019 թ.:

¹ Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. VI (այսուհետև՝ Դիվան, պր. VI և էջը), Իջևանի շրջան, կազմեցին՝ Ս. Ավագյան, Հո. Ջանիոլադյան, Երևան, 1977, էջ 59, նաև Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հաղարծնի և Դադի եկեղեցիները և վանական շինությունները, գրեց Մեսրոպ Մազիստրոս Տէր Մովսիսեան, Երուսաղէմ, 1938, էջ 18: Սմբատը հնարավոր է՝ լինի կամ Դավիթ Անհողինի (996–1048 թթ.) եղբայրը կամ որդին (տե՛ս Կյուրիկյանների տոհմաճառը՝ Ռ. Մ ա թ և ո ս յ ա ն. Տաշիր–Չորագետ, Երևան, 1982, էջ 110–111):

² Մեր դաշտային օրագրից: Գագիկը Սմբատ Բ-ի ու Կյուրիկե Ա-ի (1050–1059 թթ.) եղբայրն է՝ Դավիթ Անհողինի որդին (տե՛ս Ռ. Մ ա թ և ո ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 110–111, նաև՝ Ղ. Մ ո վ ս է ս ե ա ն. Լոռիի Կյուրիկեան թագաւորներու պատմութիւնը, Վիեննա, 1923, էջ 95):

խան համառոտագրություններով (երկրորդինը եղծված է, բայց կարդացվում է տառահեռքերով: Կա նա երրորդ շիրմաքար, որի հիշատակագրությունն ամբողջովին ջնջված է, հետևապես՝ անընթեռնելի: Ժամանակին Մ. Սմբատյանը դա կարդացել է՝ Գեորգ Թագաւոր)³:

XI դ. կեսին սելջուկ-թուրքերի կողմից ավերվելուց, ապա հայ-վրացական զորքերի հաղթական առաջխաղացմամբ ազատագրվելուց հետո XII դ. Վրաց Գեորգի Գ թագավորի (1155/6–1184 թթ.) ու Հայոց իշխանների հրամանով Հաղարծնի վանքը նորոգվել է, վերականգնվել են նաև դրա հողատիրական իրավունքները: Հաղարծնի վանքը ծաղկում է ապրել XII դ. վերջին և հաջորդ դարի սկզբին՝ հայտնի երաժշտագետ Խաչատուր վարդապետ Տարոնացու վանահայրության օրոք⁴: - Վանքը հովանավորվել և օժանդակվել է Մահկանաբերդի Արծրունիների վասալ Հարբանց իշխանական տան կողմից, որի ներկայացուցիչները համալիրում իրականացրել են նորոգչական ու կառուցողական լայնածավալ աշխատանքներ, որոնք «այսօր էլ մեծ հիացմունք են պատճառում իրենց վեհությամբ ու ինքնատիպությամբ»⁵:

Միանգամից ասենք, որ Հաղարծնավանքի հուշարձանախմբի XII–XIII դդ. կառույցների ճարտարապետական հորինվածքներում, պաշտամունքային շինությունների թե՛ արտաքին, թե՛ ներքին հարդարանքներում քաղկեդոնականության դրոշմ փնտրելը, մեղմ ասած, անհիմաստ է:

Հուշարձանը քաղկեդոնական ենթադրած մասնագետները, որոնց մեջ կան նաև գիտական մեծ հեղինակություններ, հիմնվել են երկու փաստարկի վրա՝ առանց խորանալու դրանց էության մեջ: Այդպիսով նրանք իրենց հապշտապ արտահայտած կարծիքով ջուր են լցրել քաղկեդոնիկ վրացիների ջրաղացին:

Առաջին փաստարկը Հաղարծնավանքի գավթի արևելյան պատի մեջ ազուցված Վրաց Գեորգի Գ-ի՝ 1184 թ. թագավորական քարեղեն հրամանագրի անեծքի բանաձևման բաժնի հետևյալ հատվածն է, որը փորագրված է 13-րդ տողում.

ՆՁՈՎԵՍԾԻՆԻՎԱԶԷՆՄԻՅԱՅՆԷՆ

³ Տե՛ս Տեղագիր Գեղարքունի ծովագարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ, գրեց Մեսրոպը արքեպիսկոպոս Սմբատեանց Նախիջեւանցի՝ միաբան Ս. Էջմիածնի, Վաղարշապատ, 1898, էջ 185:

⁴ Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 524:

⁵ Ս. Մ ա ն ո շ ա ր յ ա ն. Կրկին Հաղարծնաձորի թևավոր խաչքարի մասին. – «Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն», 2018, -2, էջ 31:

Այն վերծանվում է՝ «... ՆՁՈՎԵՍՅԻՆ Ի ՎԱՐՁԵՈ ԱԾ ԱԾՆԷՆ»⁶: Իսկ վիմագրի՝ մեզ հետաքրքրող մասում զգուշացվում են բոլոր նրանք, ովքեր, եթե հակառակվեն Հաղարծնավանքի ավատական իրավունքների վերականգնման շուրջ արքայի արձակած հրամանգրին կամ ջանան այն հանել, ապա իրենց գերդաստաններով կնզովվեն Վարձիայի Աստվածածնից, ինչպես նաև Նիկիայի առաջին տիեզերածոդովին մասնակից 318 հայրապետներից և այլն: Այդ կապակցությամբ «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի պրակ VI-ի կազմողները գրում են. «Հավանաբար հենց այդ ժամանակներին է վերաբերում Հաղարծնի հոգևոր ու մշակութային կենտրոնի քաղկեդոնական կողմնորոշումը, որն ակներև է նաև սույն բնագրից. այսպես, անեծքի ձևակերպման մեջ ի թիվս բուն հայկական նզովքների, հանդիպում է նաև՝ նզովեսցին ի Վարձեո Ած ածնէն», որ, անշուշտ, անուղղակիորեն ակնարկ է Վարձիա վրացական վանքի հոգևոր գերիշխանության և դավանաբանական միասնության մասին»⁷:

Տրամաբանորեն ասած՝ Հաղարծնի ու Վրաստանի Մեսխեթի շրջանում գտնվող Վարձիայի միջև հեռավորությունը չի խոսում այդ տեսակետի օգտին: Բացի այդ, դժվար թե Վրաց թագավորը, թույլ տալով Հաղարծնի վանքի վերանորոգումը և վերականգնելով հոգևոր հաստատության վանքապատկան իրավունքները, հավակնություն ունենար այն քաղկեդոնականացնելու, որն անհնար էր Հայ եկեղեցու ավանդին հավատարիմ Խաչատուր Տարոնացի վարդապետի նման գործչի պարագայում, ով իր կենդանության օրոք ունեցել է սրբի համբավ՝ և, անշուշտ, կհակադրեր վրացիների նկրտումներին: Որպես հակաքաղկեդոնական փաստարկ՝ ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ վիմագրում Վրաց թագավորից հետո հիշատակվում է Ամենայն հայոց կաթողիկոս Գրիգոր Դ Տղան (1173–1193 թթ.)⁸:

⁶ Գրչագրի և վերծանության հատվածները տե՛ս՝ Դիվան, պր. VI, էջ 37:

⁷ Նույն տեղում, էջ 38, տե՛ս նաև՝ Վ. Հ ա ր ո թ յ ու ն յ ա ն. Հաղարծնի վանքը, Երևան, 2007, էջ 5:

⁸ Հաղարծնի գավթի՝ 1181 թ. նվիրատվական արձանագրության մեջ վանահայր Տարոնացին պատվի է արժանացել սուրբ համառոտագրված մակդիրով. ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՄԲ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԽԱՉԱՏՐՈ (վիմագրի տե՛ս՝ Դիվան, պր. VI, էջ 34):

⁹ Տե՛ս Վ. Հ ա ր ո թ յ ու ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 11: Վիմագրում Գրիգոր Դ կաթողիկոսի հիշատակության կապակցությամբ Լ. Մելիքսեթ-Բեկը նշում է, որ նա կողմնակից էր հայոց և հունական եկեղեցիների միությանը, այսինքն՝ համաձայն էր քաղկեդոնականության կողմնորոշմանը (տե՛ս Լ. Меликсетъ-Бековъ. Разныя известія и заметки.— Христианскій Востокъ, т. III, вып. II. Петроградъ, 1914, с. 198): Իրականում, սակայն, Գրիգոր Տղան, հետևելով իր հորեղբոր՝ Ներսես Շնորհալու (1166–1173 թթ.)՝ միջեկեղեցական հարաբերություններում դիրքորոշմանը, Հայոց և Հույն

Բայց ամենակարևոր հակափաստարկը, ինչը բացառությամբ Ս. Երեմյանի, սպրդել է ուսումնասիրողների ուշադրությունից, այն է, որ 1184 թ. վիմագրի “... ՆՁՈՎԵՍՅԻՆ Ի ՎԱՐՁԵՈ ԱԾԱԾԵՆ” հաստիվածում վերջին բառից առաջ բացակայում է ՄԲ համառոտագրությունը, որով կցուցվեր վանք կամ մենաստանի եկեղեցի: Հետևապես, ակնարկը վանքին կամ եկեղեցուն չի վերաբերում:

Ս. Երեմյանը ճիշտ է նկատել՝ նգովքի հաստիվածում խոսքը Վարձիայի քարանձավային մենաստանի մասին չէ, այլ այն սրբության, որը պահվում է այնտեղ, սակայն, հետևելով վրացի արվեստագետ Շ. Ամիրանաշվիլուն, մասունքը Ս. Աստվածածնի սրբապատկեր է կարծել¹⁰: Շ. Ամիրանաշվիլին այդ սրբապատկերն իր շրջանակով թվագրում է X–XVI դդ.¹¹:

Իրականում խոսքը ոչ թե սրբապատկերի, այլ խաչի մասին է, որի վերաբերյալ Վարդան Արևելցին իրազեկում է շատ կարևոր մի տեղեկություն. “Դպրավանից տարան գիսաչն, որ յանուն սուրբ Աստուածածնին, որ արդ Վարձիոյ կոչի, յայնժամ ճոնեանց կոչիր. և տարաւ գնա Սարգիս ճոնեանց ի գաղութ՝ յերեսաց այլազգեաց, ուր արար սքանչելիս ձեռօք Տիմոթ վարդապետի, զկինն Դեմետրեայ արքայի Վրաց՝ յուրկութենէ բժշկեալ, վասն որոյ և առին ի Հայոց. և է սրբոյն Մեսրոբայ օրհնեալ, և կամ Բարսղի սրբոյ ճոնին, և ունի գիր հայերէն յաջ թնն”¹²:

Ստացվում է, որ վրացիները ստիպել են Սարգիս ճոնյանցին (անշուշտ, եղել է Շիրակի Դպրավանքի վանահայրը XII դ. կեսին) Ս. Աստվածածնի կոչված խաչը (այն անվանում էին նաև ճոնյանց խաչ) տանել իրենց մոտ: Դրանից հետո սրբությունը հայտնի է դառնում Վարձիայի խաչ անվամբ, ինչն ակնբախ է 1184 թ. վիմագրից ու Վարդան վարդապետի հաղորդածից: Խաչը Վարձիայում (վաղ հայերեն տարբերակով՝ Վարձունիք, Վարձառունիք)¹³ Տիմոթ վարդապետի (երևի տեղի վանահայրն էր) ձեռքով հրաշքներ է գործում, բորոտությունից բուժում է Վրաց թագավոր Դեմետրե Ա-ի (1125–1156) կնոջը, որից հետո վրացիները խաչը վերցնում են (խլում են)¹⁴ հայերից:

Եկեղեցիների միությունը պատկերացնում էր որպես համագործակցություն երկու նվիրապետությունների միջև՝ հավասարը հավասարի հետ սկզբունքով:

¹⁰ Տե՛ս С. Еремян. Агарцинская надпись 1184 г.– Исследования по истории культуры народов Востока. Сборник в честь академика И. А. Орбели. М.–Л., 1960, с. 87.

¹¹ Տե՛ս III. А м и р а н а ш в и л и. История грузинского искусства, т. I. М., 1950, с. 230.

¹² Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, լուսաբանեալ ի Վենետիկի Ս. Ղազար, 1862, էջ 76–77, տե՛ս նաև՝ “Քրիստոնյա Հայաստան” հանրագիտարան, էջ 275:

¹³ Տե՛ս Վ ար դ ա ն Ա ր և է լ ց ի. Տիեզերական պատմություն, աշխարհաբար թարգմ., ներած. և աստղանիշերով ծանոթ. Գ. Թոսունյանի, Երևան, 2001, էջ 107:

¹⁴ Տե՛ս նույն տեղում:

Եթե այս հիշատակության մեջ խաչն օրհնողի հարցում Վարդան Արևելցին երկմտում է՝ այն վերագրելով մե՛րթ Մեսրոպ Մաշտոցին, մե՛րթ Դպրավանքի VII դ. կեսի վանահայր, նշանավոր երաժշտագետ Բարսեղ Ճոնին, ապա նրա ուսուցիչ Վանական վարդապետ Տավուշեցին որոշակիացնում է, երբ խոսում է Հայոց ուսուցչապետի կողմից վրաց այբուբենի ստեղծման մասին. «... զՎարժիոյ խաչն Մեսրոպ է արհնեալ, և յաջ թնին կայ հայ գիր»¹⁵: Տավուշեցու հետագա հաղորդածից պարզվում է, որ վրացիները փորձել են կոծկել խաչի հայկական ծագումը. «Եվ զայն ոսկւով ծածկեալ են թէ թո՛ղ (գիրը – Ա. Ս.) չերևի»¹⁶:

Հարևան երկիր տեղափոխվելուց հետո էլ Աստվածածնի ս. Խաչը շարունակել է երկրպագվել հայերի կողմից, ինչն ակնբախ է 1184 թ. վիմագրից:

Սակայն Ճոնյանց Ս. Աստվածածնի խաչի վրացացումը՝ հայերեն մակագրությունը ոսկեգոծմամբ քողարկելու ճանապարհով, երևի, բավարար հիմք չի եղել, և կարճ ժամանակ անց Վարձիայի մենաստանում վանքի խաչի փոխարեն արդեն Թամար թագուհու օրոք (1184–1213 թթ.) հանդես է գալիս Ս. Աստվածածնի սրբապատկերը: Վերջինս, ըստ Ս. Երեմյանի, համարվել է Վրաց Բագրատունիների պահապանը. Թամար թագուհու պատմիչները հաճախ են հիշատակում, որ ոչ մի ռազմական արշավանք չէր կատարվում առանց նրա անունից գորքերի օրհնության¹⁷:

Հաղարծնի վանքը քաղկեդոնական կողմնորոշման ենթադրած մասնագետների երկրորդ փաստարկը երեք օտար բառերի կիրառությունն է տեղի վիմագրերում: Այսպես, Լ. Մելիքսեթ-Բեկը, ելնելով սեղանատան հարավային մուտքի կամարի արձանագրության մեջ «տրապէզ», «դեկան» եզրույթների գործածությունից, ինչպես նաև 1184 թ. վիմագրում վրաց իշխանավորների հիշատակությունից (վկայվող ութ անձանցից միայն երկուսն են վրացի), կարծել է, թե Հաղարծնավանքն ունեցել է քաղկեդոնական կողմնորոշում¹⁸: Միաժամանակ նա նկատում է, որ Վրաց թագավորն ու նրա գործավորները կարող էին կառուցել ոչ միայն քաղկեդոնական, այլև հակաքաղկեդոնական եկեղեցիներ¹⁹:

Մենաստանը քաղկեդոնական է ենթադրել նաև Հ. Օրբելին. «Հաղարծնի վանքը ... հավանաբար հետևելիս է եղել քաղկեդոնական ուսմունքին. որքան բնորոշ է, որ հենց այստեղ մի քանի հայկական արձանագրությունների մեջ հանդիպում

¹⁵ Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 534, նաև՝ Ս. Կարապետյան. Ջավախք, Երևան, 2006, էջ 484:

¹⁶ Գիրք թղթոց, էջ 534:

¹⁷ Տե՛ս С. Еремян. Նշվ. աշխ., էջ 87:

¹⁸ Տե՛ս Л. Меликсетъ-Бековъ. Նշվ. աշխ., էջ 198:

¹⁹ Տե՛ս նույն տեղում:

ենք այնպիսի տերմինների, ինչպիսիք են՝ քոբ, դեկան, տրապեզ ...²⁰: Թվարկված եզրույթների գործածությամբ՝ վանքը երկաբնակ կարծելը համոզիչ չէ, քանի որ դրանցից միայն մեկն է գուտ հունարեն՝ տրապեզ (Τραπεζα, թարգմանվում է սեղան²¹, այստեղից էլ՝ սեղանատուն), որով ինչ որ կերպ համալիրը կարող էր առնչվել քաղկեդոնականությանը: Բայց դա էլ համոզիչ փաստարկ չէ, քանի որ մինչ օրս էլ մեր եկեղեցում օգտագործվում են մեծ թվով հունարեն բառեր, որոնք հայոց բառապաշար մուտք են գործել դեռևս քրիստոնեական ամենավաղ ժամանակներից:

Մյուս երկու բառերից քոբը պարսկերեն է՝ کوب, նշանակում է կաթսա²²: Ինչ վերաբերում է «դեկան» եզրույթին, ապա այն, կարծում ենք, նույնպես ունի պարսկական ծագում, որն առաջացել է ٤٥٠ [dähe]՝ տասնյակ բառի հոգնակի թվից ٤٥٠ [däheran]²³՝ դահեկան: Վերջինս հայոց մեջ միջնադարում գործածվել է առավելապես ոսկեդրամ կամ արծաթեդրամ իմաստով, որը վիմական աղբյուրներում հաճախ հանդիպում է կրճատ ձևով՝ դեկան, ինչը դահեկան բառի ժողովրդական ձևն է²⁴: Դահեկան բառի հիմքում Աքեմենյան Պարսկաստանի տիրակալ Դարեհ Ա-ի (Ք. ա. 522–486 թթ.) անունն է՝ «Դարեհական, Դարեհի նշանով դրամ»²⁵, որն արքան հատել է իր աշխարհակալ տերության համար:

Ըստ Հր. Աճառյանի՝ հունարեն դեկան (դեկանիոն–δεκανίω–տասնապետ) ձևը կազմված է δεκα՝ «տասն» բառից²⁶ (վարչական նշանակությամբ): Դեկան–դեկանիոնը հունարենից անցել է լատիներենին (dekanus–տասնապետ)²⁷: Չի բացառված պարսկերեն դահեկան–դեկանի ազդեցությունը հունարեն դեկանիոն–դեկանի վրա Ք. ա. V դ. առաջին կեսից:

Դեկան բառը, վարչական նշանակությամբ, հայոց մեջ, մասնավորապես հայերեն վիմագրերում, ունեցել է սակավ գործածություն: Մի դեպքում այն վավերացված է Հայաստանի հայ քաղկեդոնականների մայրավանք Ախթալայի Ս. Աստվածածնից ոչ հեռու գտվող մատուռի բարավորին՝ դեկանաւորթին (վանահայ-

²⁰ Դիվան հայ վիմագրության, պր. I, Անի քաղաք, կազմեց Հ. Օրբելի, Երևան, 1966, էջ IX:

²¹ Տե՛ս Հայերեն բացատրական բառարան, կազմեց Ստ. Մալխասեանց, հ. IV, Երևան, 1945, էջ 446:

²² Տե՛ս Հր. Աճառյանի. Հայերեն արմատական բառարան, հ. Դ, Երևան, 1979, էջ 585:

²³ Տե՛ս Персидско-русский словарь. Сост. Б. Миллер. М., 1953, с. 232.

²⁴ Տե՛ս Հր. Աճառյանի. Հայերեն արմատական բառարան, հ. V, Երևան, 1971, էջ 646:

²⁵ Նույն տեղում, էջ 614–615:

²⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 646:

²⁷ Տե՛ս Հայերեն բացատրական բառարան, կազմեց Ստ. Մալխասեանց, հ. I, Երևան, 1944, էջ 502:

րություն) բառի դեկանալություն հոլովված ձևով²⁸: Երկրորդ դեպքում դեկան բառը փոքագրված է Հաղարծնի սեղանատան 1248 թ. վիմագրում, ըստ որի՝ վանքի տնտես Կուտասը, ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՅՈՎԱՆՆԻՍԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ, տրապիզի շինարարության համար օգնություն է հատկացնում, և ԴԵԿԱՆ (վանահայրը), ՎԱՐԴԱՊԵՏՔՍ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ԽՈՍՏԱՑԱՆ սուրբ Բարսեղի տոնին²⁹ երկու օր անխափան պատարագ կատարել³⁰: Ս. Ավագյանի, Հո. Ջանփոլադյանի պրպտումների շնորհիվ՝ հիշատակված առաջնորդը Կիրակոս Գանձակեցու վկայած Հովհաննես Արմանեցին է, ով «շինեաց ի Հաղարծինն զսեղանատունն երևելի՝ սրբատաշ վիճօք»³¹: Ի դեպ, Հովհաննեսը, Գանձակեցու տեղեկացմամբ, Հաղարծնավանքի հետ մեկտեղ առաջնորդ է կարգվում նաև Նոր Գետիկի վանքում, ինչն ակնբախ է նաև Գոշավանքի 1260 թ. վիմագրի բովանդակությունից, և արդեն, ըստ պատմիչի, 1256 թ. ձեռնադրվել էր եպիսկոպոս³²:

Այսպիսով, վերոշարադրյալից հանգում ենք այն անհերքելի եզրակացության, որ Հյուսիսարևելյան Հայաստանի նշանավոր վանքային համալիրներից մեկը՝ գեղատեսիլ Հաղարծինը, երբևիցե քաղկեդոնական կողմնորոշում չի ունեցել:

Աշոտ Մանուչարյան – պ. գ. թ., ԵՊՀ հայոց եկեղեցու պատմության և եկեղեցաբանության ամբիոնի դոցենտ: Գիտական հետաքրքրությունները՝ վիմագրություն, միջնադարի պատմություն, Հայոց եկեղեցու պատմություն, միջնադարյան հուշարձաններ, պատմական և ժամանակակից աղանդներ: Հեղինակ է 4 գիրք-գրքույկի, շուրջ 70 հոդված-հրապարակումների: ashot.manucharyan.1959@mail.ru

²⁸ Տե՛ս Պ. Մ ու ը ը յ ա ղ յ ա ն. Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Երևան, 1977, էջ 204, Դիվան հայ վիմագրության, պր. IX, Լոռու մարզ, կազմեցին՝ Ս. Բարխուդարյան, Կ. Ղաֆադարյան, Ս. Սաղումյան, Երևան, 2012, էջ 260:

²⁹ Համաքրիստոնեական սուրբ, մեծ հայր Բարսեղ Կեսարացու (329–379) հիշատակը Հայ առաքելական եկեղեցին միջնադարում, ըստ Գրիգոր Վկայասեր-Գրիգորիս-Կիրակոսի Տոնանամակ-Ճաշոցի նշվել է հունվարի 1-ին [տե՛ս Ռ. Վ ա ղ ը ա ն յ ա ն. Հայոց տոնացույցը (4–8-րդ դարեր), Երևան, 1999, էջ 270]: Այսօր Հայոց եկեղեցին տոնում է երկու անգամ: Մեկը մնացել է գրեթե անփոփոխ. նշվում է հունվարի 1-ի մերձակա շաբաթ օրը, իսկ երկրորդը՝ հոկտեմբերի վերջին շաբաթ օրը՝ «երկոտասան վարդապետաց հետ» (տե՛ս «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, էջ 177):

³⁰ Տե՛ս Դիվան, պր. VI, էջ 58:

³¹ Նույն տեղում, էջ 46, Կ ի ը ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի. Պատմություն Հայոց, աշխ. Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 223:

³² Տե՛ս նույն տեղում, նաև Դիվան, պր. VI, էջ 82:

REFERENCES

- A. Manuch'aryan – Krkin Hagharc'nadz'ori t'ev'avor xacach'kari masin.- 'Banber Ye'revani hamalsarani: Hayagitutyun ", 2018, № 2 (in Armenian).
- Divan hay vimagrut'yan, prak I, Ani qagh'aq, kazmec H. Orbeli, Ye'rev'an, 1966 (in Armenian).
- Divan hay vimagrutyanyan, prak VI, Ijevani sh'rjan, kazmecin S. Avakyan . Hr. Janp'oladyan, Ye'rev'an, 1977 (in Armenian).
- Divan hay vimagrutyanyan, prak IX, Lor'u marz, kazmecin S. Barxudaryan, K. Gh'afadaryan, S. Sagh'umyan, Ye'rev'an, 2012 (in Armenian).
- Girq t'gh't'oc, T'iflis, 1901 (in Armenian).
- Gh' Movsesyan.** Lorii Kyurikyan tagavorneru patmutyuna, Vienna, 1923 (in Armenian).
- Hayeren bacatrakan bar'aran, kazmec St. Malxasyan, h. I, Ye'rev'an, 1944 ; h. IV, Ye'rev'an, 1945 (in Armenian).
- Haykakan ye'rek mec' vanqeri: Tatevi, Hagharc'ni yev' Dadi ye'kegh'ecineri yev' vanakan sh'inutyunnery, grec Mesrop Magistros Ter Movsisyan, Ye'rusagh'em, 1938 (in Armenian).
- Havakumn patmutyan Vardana vardapeti, lusabaneal i Venetik i S. Gh'azar (in Armenian).
- Hr. Ac"aryan.** Hayeren armatakan bar'aran, h. 1, Ye'rev'an, 1971; h. 4, Ye'rev'an, 1976 (in Armenian).
- Kirakos Gandz'akeci.** Patmutyun Hayoc, ash'x. K. Meliq-Ohanjanyani, Ye'rev'an, 1961 (in Armenian).
- L. Melikset - Bekov.** Raznija izvestija i zametki // Xristianskij Vostok // t. III, vip. II, Petrograd, 1914 (in Russian).
- Persicko-Russkij slovar', sostavil B. Miller, M., 1953 (in Russian).
- Qristonya Hayastan hanragitaran, Ye'rev'an, 2002 (in Armenian).
- R. Matevosyan.** Tash'ir-Dz'oraget, Ye'rev'an, 1982 (in Armenian).
- R. Vardanyan.** Hayoc tonacuyca (4-8-rd darer), Ye'rev'an, 1999 (in Armenian).
- P. Muradyan.** Hayastani vracakan ardz'anagrutyunnera, Ye'rev'an, 1977 (in Armenian).
- S. Karapetyan.** Javack, Ye'rev'an, 2006 (in Armenian).
- S. Yeremyan.** Agartinskija nadpis' 1184 g. .- Issledovaniya po istorii kul'tura narodov Vostoka . Sbornik v chest' akademika I. A. Orbeli, M.-L., 1960 (in Russian).
- Tegh'ekagir Gegh'arkuni c'ovazard gavar'i, vor ayjm Nor-Bayazid gavar', grec Mesrovb arkye'ps. Smbatyanc Nakhich'evanci: miaban S. Ejmiadz'ni, Vagh'arsh'apat, 1898 (in Armenian).
- Vardan Arevelci.** Tiezerakan patmutyun, ashx. targm. nerac', yev' astgh'aniserov c'anot. G. Tosunyani, Ye'rev'an, 1999 (in Armenian).
- V. Harutyunyan.** Hagharc'ni vanqa, Ye'rev'an, 2007 (in Armenian).

О КОНФЕССИОНАЛЬНОЙ ОРИЕНТАЦИИ АГАРЦИНСКОГО МОНАСТЫРЯ

АШОТ МАНУЧАРЯН

Резюме

Ключевые слова: монастырь, конфессиональный, факт, халкидонский, церковь, крест, трапеза, декан, греческий, слово.

В свое время некоторые армянские ученые, не углубляясь в изучение двух фактов, высеченных в Агарцинском монастыре, поспешно полагали, что этот монастырь в определенный период последовал халкидонскому вероисповеданию. Первым фактом является отрывок формулировки проклятия в надписи притвора 1184 г., гласящий “Да будут прокляты Вардзинской Богоматерью”, под которой полагали известный пещерный монастырь Св. Богоматери Грузии. В соответствии с этим считали, что Агарцин был халкидонским и подчинялся Вардзинскому монастырю. Не учитывалось то обстоятельство, что перед словом “Богоматерь” отсутствует сокращение “Св.”, которое указывало бы на наличие монастыря или церкви. В действительности, согласно армянским историографическим источникам, речь идет о чудотворном кресте Богоматери, который освятил Месроп Маштоц. Он хранился в Ширакском монастыре Дпреванк Армении и назывался “Чонянским крестом Богоматери”. В XII в. этот крест был отвезен в Грузию, где с его помощью вылечилась от проказы жена грузинского царя Деметре I (1125–1156). Он больше не возвращался к хозяевам, был установлен в Вардзинском монастыре, переименован в “Вардзинский крест Богоматери”, но продолжал почитаться армянами. Таким образом, в отрывке проклятия надписи речь идет об этом кресте.

Второй факт – наличие греческих слов “трапеза, декан” в надписи Агарцина 1248 г. Не учитывалось то обстоятельство, что в этой надписи упоминается глава епархии Агарцина того времени Иоанн Арменец, который был известным армянским апостольским исповедником.

Вышесказанное позволяет сделать вывод, что Агарцинский монастырь никогда не имел халкидонской ориентации.

Ашот Манучарян – к. и. н., доцент кафедры истории Армянской церкви и экклезиологии ЕГУ. Научные интересы: эпиграфика, средневековая история, история Армянской церкви, исторические памятники, исторические и современные секты. Автор 4 книг-брошюр, около 70 статей-публикаций. ashot.manucharyan.1959@mail.ru

ON THE CONFESSIONAL ORIENTATION OF HAGHARTSIN MONASTERY

ASHOT MANUCHARYAN

Summary

Key words: monastery, confessional, fact, Chalcedonian, church, cross, trapeza, dean, Greek, word.

Previously several Armenian scholars, without having studied thoroughly two lapidary inscriptions carved on the monastery wall, wrongly assumed that Haghartsin monastery followed the Chalcedonian faith at a certain period of time. The first evidence is the part of the formulation of an anathema in the inscription of the gavit (narthex) (1184), which says “Let them be cursed by Vardzia’s Holy Mother of God”, under which it was supposed to be a famous cave-monastery of St. Holy Mother of God of Georgia. According to this fact, they pushed forward the idea that Haghartsin monastery followed the Chalcedonian faith and was under the domain of Vardzia monastery. The fact that the acronym “St.” lacks before the word “Astvatsatsin” was not taken into account, which would have pointed out to the presence of a monastery or church. In fact, according to Armenian historiographic sources, this is the miraculous Cross of Mother of God, which was consecrated by Mesrop Mashtots. It was kept in the Shirak monastery Dprevank of Armenia and was called “Tchonyants Cross of the Mother of God”. In the XII century that cross was taken to Georgia, where the the wife of Georgian king Demetre I (1125-1156) was cured of leprosy with its help. It was never returned back to the owners, and was erected in the monastery of Vardzia. The monastery was renamed the “Holy Cross of Vardzia”, but the Armenians have continued to worship it. Thus, the fragment of the curse of the inscription mentions this cross.

The second fact is the existence of the Greek words “trapeza” and “dean” in the Haghartsin inscription from 1248. Here, the fact that this inscription mentions the name of Hovhannes Armenetsi – the Head of the Diocese of that time and a famous Armenian Apostolic confessor, was not taken into account, too.

The foregoing lets us conclude that Haghartsin monastery never followed the Chalcedonian orientation.

Ashot Manucharyan – Candidate of Historical Sciences, Associate Professor at the YSU Chair of History of Armenian Church and Ecclesiology. Scientific interests: lithography, History of Middle Ages, History of the Armenian Church, historical monuments and modern sects. Author of 4 books and brochures, around 70 articles and publications. ashot.manucharyan.1959@mail.ru

ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌԵՍՈՒՐՍԸ ԵՎ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ՝ ԱՐՏԱՔԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ *
(Մ. թ. ա. II – մ. թ. IV դդ.)

ԱՇՈՏ ՍԱՐԳՍՅԱՆ

Բանալի բառեր՝ քաղաքական միտք, քաղաքական կողմնորոշում, էթնիկ միասնություն, պետականություն, իրատեսական քաղաքականություն, քաղաքակրթական միասնություն, քաղաքական արժեհամակարգ, Մովսես Խորենացի, ազգային պետություն, պետականության ռեսուրս:

Պատմական ժամանակային լայն կտրվածքով արտաքին-քաղաքական հարաբերություններում որպես կողմ Հայաստանը կարելի է տեսնել երեք կարգավիճակով.

ա) թագավորական իշխանությամբ անկախ պետություն,

բ) այլ պետությունների կազմում, բայց դե-ֆակտո ինքնիշխան՝ հայ ազնվականության աշխարհիկ իշխանությամբ,

գ) աշխարհիկ իշխանության փաստական բացակայություն, երբ ժողովուրդը ներկայանում է որպես կրոնական հատկանիշներով առանձնացող համայնք, իսկ նրա հիմնական քաղաքական պատասխանատուն ու ներկայացուցիչը դառնում է եկեղեցին:

Ստորև կանդրադառնանք պետականության անընդհատ, դասական ու ամենատեսական՝ Հայաստանում Արտաշիսյան և դրան հաջորդած Արշակունյաց թագավորության շրջանին՝ ըստ գիտական պատմագրության, որը Մովսես Խորենացու «Հայոց պատմությամբ» ամբողջությամբ ներկայանում է որպես Արշակունյաց հարստության թագավորություն: Նկատի ունենք, որ այն, որպես այդպիսին, մի կողմից իր մեջ կուտակել է նախորդ հայկական պետականությունների քաղաքական փորձն ու ավանդույթները, մյուս կողմից՝ դրանք որակապես նոր մակարդակի բարձրացնելով՝ պայմանավորել է հայկական պետականության չրնդհատվող տևական գոյությունը, աշխարհի պատմության մեջ ունեցած կարևոր դերակատարությունը, հայ ժողովրդի հետագա ճակատագիրը:

* * *

* Ընդունվել է տպագրության 31. I. 2019 թ.: Գրախոսվել է 06. V. 2019 թ.:

Պատմագիտության մեջ արդեն Տիգրան Մեծին հաջորդող գահակալների, իսկ երբեմն նույնիսկ Տիգրանի թագավորության վերջին շրջանում, արտաքին քաղաքականությունը ներկայացնելու ու բացատրելու համար այն բնորոշվում է «քաղաքական կողմնորոշում» հասկացությամբ: Խոսվում է «հռոմեասեր» ու «պարթևասեր»¹, ավելի ուշ՝ «հունասեր» ու «պարսկասեր» կուսակցությունների մասին², որոնք, իբր, գործել են Հայաստանում, մրցակցել և նրանց պայքարի արդյունքի հիմքի վրա էլ ձևավորվել է «կողմնորոշումային» արտաքին քաղաքականությունը, որոշվել, ավելի ճիշտ՝ կանխորոշվել երկրի արտաքին քաղաքական ուղեգիծն ու վարքագիծը:

Արտաքին քաղաքական կողմնորոշումը, որպես քաղաքական եզրույթ, մի կողմից՝ այլ, գերադաս համարվող արժեհամակարգի հակվելու, մյուս կողմից՝ վերջնականության, մշտականության ժամանակային ենթատեքստ ունի: Պետականության պայմաններում այն ինչ-որ տեղ արդեն ինքնուրույն քաղաքականությունը բացառող երևույթ է: Ուստի պետականության շրջանի պատմության այսօրինակ մեկնաբանությունը և տվյալ բառերի օգտագործումը՝ որպես բանալի իրադարձությունները ներկայացնելու կամ բացատրելու համար, կարծում ենք, գայիս է ուշ շրջանից, երբ տևական շրջան պետականությունից զրկված ու անազատության մեջ գտնվող ժողովրդի քաղաքական միտքն ազգի ազատագրվելու միջոցը սկսեց փնտրել երրորդ ուժի՝ էվրոպական պետությունների կամ Ռուսաստանի մեջ: Նման պայմաններում գուցե անխուսափելիորեն առաջացող քաղաքական այդ պատկերացումը կամ մտածելակերպն առավել խորացվեց և ամրապնդվեց նախ՝ XIX դ. վերջից հայ ժողովրդի ճակատագրի պատասխանատվության տակ մտած, այսպես կոչված, հայ հեղափոխական կուսակցությունների գործելակերպի և քարոզչության (Եվրոպայում փնտրելով «Հայկական հարցի» լուծումը), ապա՝ խորհրդային պատմագիտության կողմից, որը հետևողականորեն և անվերապահորեն «ռուսական կողմնորոշումը» սկսեց մատուցել որպես հայ ժողովրդի փրկության միակ խարիսխ: Որպեսզի երևույթը («քաղաքական կողմնորոշումը») միայնակ ու դրանով իսկ արտառոց չմնա, «փրկության» ուղիների պատկերացումներն ու կարծրատիպերը, իրենց հիմքի հետ, ինչ-որ տեղ նաև գաղափարախոսական պարտադրանքով տեղափոխվեցին հնի վրա:

Ընդհանրապես, խնդիրն ավելի լայն է. գաղափարախոսական պարտադրանքով խեղաթյուրվել են մեր՝ ինչպես նոր և նորագույն, այնպես էլ հին և հնագույն շրջանի պատմական իրողությունները³:

¹ Տե՛ս նաև Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 602, 628–629:

² Հայ ժողովրդի պատմություն, հ. 2, Երևան, 1984, էջ 81–83:

³ Ակադեմիկոս Գազիկ Սարգսյանի մի դիպուկ դիտարկումը բանալի ու նաև ահազանգ է արմատապես վերանայելու «քաղաքական դոկտրինի թույնով» աղավաղված ոչ միայն նոր ու նորագույն, այլ նաև հին շրջանի պատմության համար արված մեկնաբանությունները և

Մեր խնդիրը, բնականաբար, վերոհիշյալ՝ Արտաշիսյան-Արշակունյաց շրջանի նոր փաստերի բացահայտումն ու արձանագրումը չէ, այլ պատմագիտությանն արդեն իսկ հայտնի իրողությունների և աղբյուրագիտական նյութի դիտարկումն ու վերախմբման արդյունքները քաղաքական տեսանկյունից և այդ հիմքի վրա նաև արտաքին քաղաքականության բնութագրումն ու գնահատականը:

Երկրի արտաքին հարաբերություններն ու քաղաքականությունը պայմանավորվում են մի շարք գործոններով, ինչպես՝ պետականության ավանդույթը և ռեսուրսը, պետության հզորությունը, քաղաքական միտքը, քաղաքական արժեքային համակարգը, հասարակության բնույթը և այլն:

Որպես պետական միավորի՝ հարևանների հետ Հայաստանի ունեցած արտաքին քաղաքական հարաբերությունների էությունը, ուղղվածությունը և բնույթը պարզելու համար ժամանակագրական առումով որպես մեկնակետ ընդունելով մ. թ. ա. II - դարասկիզբը՝ նկատի ունենք դրանով սկսված հայկական անկախ պետականության դասական կատարելությունը, շուրջ 600-ամյա շրջանի անընդհատ գոյությունը, ինչպես նաև՝ նախընթաց շրջանի համեմատ աղբյուրագիտական նյութերի առումով առավել առատությունը: Այն ժամանակակից աղբյուրների մասով հենվում է հունահռոմեական հարուստ պատմագրության վրա: Ճիշտ է, վերջինս տառապում է միակողմանիությամբ ու անաչառության պակասով, ինչը վաղուց աներկբա արձանագրել է ժամանակակից պատմագիտությունը⁴: Ավելին՝ օտար աղբյուրների այդ բացը, ավելի լայն կոնտեքստում, դեռ մեկուկես հազարամյակ առաջ դիպուկ նկատել և գնահատել է նաև պատմահայր Մովսես Խորենացին՝ դրան տալով տրամաբանական, համոզիչ բացատրություն⁵: V դարից սկիզբ առնող հայ պատմագրությունը, և առաջին հերթին հենց Խորենացու «Հայոց պատմությունը», թեև դարերի հեռ-

տրված գնահատականները. «Իշխող քաղաքական դոկտրինայի (նկատի ունի կոմունիստական – Ա. Ս.) թույնը, հոսելով հին պատմությունից դեպի նորը, հետզհետե ուժեղանում էր, իսկ հասնելով նորագույնին, պարզապես կազմալուծում այն» (տե՛ս Գ. Մարգարյան. Մեր օրերի իմ ընկալումները. – «Հայաստանի Հանրապետություն», 14. VIII – 15. VIII. 1992):

⁴ Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 554, շ. Մանանդյան. Տիգրան Մեծը և Հռոմը, Երկեր, հ. Ա, Երևան, 1997, էջ 408:

⁵ «... զի ոչ հարկ ինչ և ոչ պէտք կարևորք էին նոցա՝ զազգաց օտարաց և զաշխարհաց ի բացեայ և զհամբաւս հինս և զգրոյցս նախնականս յիրեանց թագաւորաց կամ մեհենից մատեանս գրել. մանաւանդ զի և ոչ պարծանք ինչ նոցա և ոչ բարգաւաճանք՝ օտար ազգաց քաջութիւն և գործք արութեան» (Մովսէս Խորենացի. Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը և ներածութիւնը Մ. Աբեղեանի և Ս. Յարութիւնեանի, նմանահանութիւն, լրացումները Ա. Բ. Մարգարեանի, Երևան, 1991, Ա. ԺԴ, էջ 47):

վից, որոշակի հավասարակշռություն է ստեղծում՝ փոխհատուցելով մեր խնդրո առարկա շրջանի համար օտար աղբյուրների միակողմանիությունը և օգնում բացել նախորդ դարերի քաղաքական կարևոր իրողությունները:

Պետականության ռեսուրսը

Հարցի ներկայացման համար մեր կողմից ընդունված ժամանակագրական ելակետը պայմանավորված է նաև հետևյալ հանգամանքով: Արտաշես Ա-ի օրոք հիմնվեց, նրա հաջորդների շրջանում կատարելության հասավ այն պետականությունը, որի կուտակած ռեսուրսն ապահովեց ավելի քան վեցհարյուրամյա անկախ պետության գոյություն: Դրա հիմքում, անշուշտ, ընկած էին մինչ այդ Հայկական լեռնաշխարհում եղած պետականությունների, մասնավորապես Երվանդունիների շրջանի քաղաքական փորձն ու ավանդույթները: Եվ, այնուամենայնիվ, Արտաշես Ա-ի և հաջորդների շրջանում, բազմապատկելով այդ ռեսուրսը, հայկական պետականությունը բարձրացավ որակական նոր աստիճանի: Այն իր ստեղծած արժեքներով, քաղաքական մտածողությամբ ու ավանդույթներով պայմանավորեց նաև Հայաստանի, որպես միջազգային հարաբերություններում համաշխարհային պատմության առումով կարևոր, հաճախ՝ վճռական «խաղացողի» որակապես նոր դերը: Բնականաբար, դրանով էլ պիտի պայմանավորվեր նաև երկրի արտաքին քաղաքականության կամ այլ երկրների հետ հարաբերությունների բնույթը:

Մելնկյաններից անկախություն նվաճած Հայկական նոր պետության հիմնադիր Արտաշես I-ը պետականության հիմքում դրեց երկու ամուր և վճռորոշ հիմնաքար. առաջին. լեզվական (էթնիկ) միատարրությունը.

Ստրաբոնը թվարկելով, թե ինչ երկրներ իրենց միացրեցին Արտաշեսը Մեծ Հայքում և Ջարեհը Ծովքում՝ եզրափակում է. «Այսպիսով, բոլորը միալեզու էին»⁶:

Միակ հայալեզու երկրամասը՝ Ծովքը, որ Արտաշեսը փորձեց, բայց չհաջողեց միացնել իր պետությանը, միացվեց նրա թոռան՝ Տիգրան Բ-ի թագավորության սկզբում: Արտաշեսը գրավում էր հայերով բնակեցված հողերը, որովհետև դա ավելի հեշտ էր, թե՛, որպես պետական գործիչ, պետության կայացման ու հզորացման, կենսունակության բարձրացման համար էթնոսի միատարրությունը համարում էր կարևոր և ապահով քաղաքական հանգամանք:

Միայն Ստրաբոնի այս հաղորդումը բավարար էր, որպեսզի այն հիմք դառնար որոշակի ենթադրության. անկախ այն բանից՝ նկարագրվող դեպքերից շուրջ մեկուկես դար հետո ապրած հույն պատմիչն այդ բանը շեշտել է որպես նաև իր ժամանակ

⁶ Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 530: Տեղին է և կարևոր այն դիտարկումը, թե՛ «Ստրաբոնի նկարագրած իրադարձությունները, այսպիսով, ավելի ճիշտ է բնութագրել «միավորում» և ոչ «նվաճում» բառով (նույն տեղում):

խիստ հայտնի մի գիտելիք և փաստ, թե տեղեկությունը քաղել է դեպքերին ավելի մոտ աղբյուրից: Երկու դեպքում էլ մեկնաբանությունը կլինի հոգուտ տեղեկության հավաստիության ու դրան տրված կարևորության: Սակայն, Ստրաբոնից անկախ ու նրանից 5 դար հետո ապրած Խորենացին ևս ունի նույն թեմայով մի ամբողջ շարք վկայություններ, որոնք, ի տարբերություն Ստրաբոնի արտաքուստ դեռ չեզոք թվացող, զուտ տեղեկատվական բնույթի արձանագրմանը, հստակ քաղաքական բեռնվածություն ունեն: Երկու պատմիչների նույն խնդրով հաղորդումների համադրումը նոր որակ է տալիս. մի կողմից Խորենացու հաղորդումների կողքին քաղաքական բեռնվածություն է ստանում նաև Ստրաբոնի հաղորդումը, մյուս կողմից նրա կարճատև արձանագրումը մեծացնում է Խորենացու հաղորդումների ժամանակի մեջ առարկայական լինելու հիմքը, հավաստիության ու հեղինակի կողմից իրողությանը տված կարևորության աստիճանը: Երկուսը միասին ապահով հիմք են դառնում հնարավոր քաղաքական ենթադրությունների շրջանակի մեծացման և որոշակիացման համար:

Ահա Պատմահոր համապատասխան վկայություններն իր Պատմության ժամանակագրությամբ.

1. Արտաշեսից դեռ շատ առաջ ապրած Արամը իր գրաված նոր հողերի այլալեզու բնակիչներին հրամայում է “ուսանել զխօսս և զլեզուս հայկական”⁷:

2. Տիգրան Երվանդյանը Հայաստանի տարածքային կորուստները վերականգնում է՝ “և զսահմանս մերոյ բնակութեանս ընդարձակեալ՝ ի հինսն մեր հասուցանէր յեզերս ծայրից բնակութեան”⁸:

3. Վաղարշակ Ա-ն էլ (որ Պատմահոր մոտ հանդես է գալիս որպես Հայաստանում Արշակույաց հարստության հիմնադիր) կողմնակալ իշխաններ է կարգում. “Բսկ ի ծայրս հայերէն խօսից կողմնակալ իշխան բիրուց և հազարաց, յարևմտից կուսէ”⁹:

4. Դարձյալ Վաղարշակը՝ “և յարևելից կողմանէ, զեզերք հայկական խօսիցս, կողմնակալս բիրաւորս զերկուս ի ցեղից տանց նահապետութեանց, զՄիսակեանսդ և որ ի Կադմեայ տանէն ...” [կարգէ]¹⁰:

Առաջին դեպքում թագավորը (Արամը) բացառիկ կարևորություն է տալիս պետության ներսում մեկ լեզվով խոսելու հանգամանքին և “հայկականացնում” նվաճված այլալեզու մանր ցեղերին: Երկրորդ դեպքում (Տիգրան Երվանդյանի շրջան) “մեր բնակության հին սահմանները” ակնհայտորեն վերաբերում է հայերով, հայերենով խոսողներով բնակեցված տարածքներին, ու հայ թագավորի բնական իրավունքն է դիտվում ու պարտականությունը նկատվում դրանք իր պետության մեջ նե-

⁷ Մ ո վ ս է ու Խ ո ռ է ն ա ճ ի. Պատմութիւն Հայոց, Ա. ԺԴ, էջ 46:

⁸ Նույն տեղում, Ա. ԻԴ, էջ 71:

⁹ Նույն տեղում, Բ. Գ, էջ 105:

¹⁰ Նույն տեղում, Բ. Ը, էջ 113:

րառելը: Եվ երրորդ դեպքում (Վաղարշակ Պարթևի շրջան) պետության վարչական և «հայկական խօսքի» սահմանները համատեղվում, նույնացվում են որպես բնական սահման: Եվ դա անկախ այն բանից, որ նրան Հայաստանի թագավորությունը հանձնած ավագ եղբայրը՝ Պարթևական թագավոր Արշակը, իրավունք էր սովել ընդարձակել երկրի սահմանները. «... և այլ որչափ միտք և քաջութիւն հասանիցեն. զի սահմանք քաջաց գէնն իւրեանց, որքան հատանէ՝ այնքան ունի»¹¹:

Խորենացու վկայությունները «հայկական խոսքի»՝ որպես Հայաստանի բնական սահմանների մասին վերաբերում են տարբեր ժամանակների ու թագավորների՝ կազմելով մի շղթա-համակարգ: Պատմահայրը որևէ հարցում այսպես հետևողական է, երբ այդ հարցին կամ երևութին առանձնակի կարևորություն է տալիս: Ստրաբոնից շուրջ 5 դար հետո լինելու հանգամանքը և սվյալ հարցում այսօրինակ հետևողականությունը մղում են, կարծես թե, միակ բացատրության. հայերենը կամ էթնիկ միատարրությունը, որպես պետականության առաջնային և ապահով հիմքի ընկալում, Խորենացուն է հասել հայ քաղաքական մտքի ավանդույթով և տևական գործնական դրսևորմամբ: Այն գործել է նաև V դ., և Խորենացին եղել է այդ պատկերացման համոզված կրողներից: Բնականաբար, խոսքը միայն լեզվական միասնությանը չէր կարող վերաբերել, այլ էթնոսին բնութագրող, ազգային ինքնության մաս կազմող ամբողջ արժեհամակարգի բաղադրամասերի (մշակույթ, կենցաղ, սովորույթներ, հավատալիքներ, ցեղային տարբերությունների բացակայություն և այլն) միասնությանը, որոնց մեջ լեզուն, պարզապես, առաջնայինն է և հեշտ ճանաչելին: Իսկ սա էլ, իր հերթին, հիմք է տալիս պնդելու, որ Արտաշիսյաններից սկիզբ առնող հայկական 600-ամյա պետականության հիմքում, որպես առաջնային գործոն, գիտակցված, ամրորեն դրված է եղել ազգային (էթնիկ) հանգամանքը: Այնքան տիպական ու բնորոշ է եղել հայկական պետականության այս հատկանիշը, որ այն, որպես յուրահատուկ ու կարևոր քաղաքական իրողություն, ճանաչվել է նաև աշխարհում: Այն հանգամանքը, որ Արտաշիսյանների, և, հատկապես, Տիգրան Բ-ի շրջանում հաղթական պատերազմների հետևանքով այլալեզու հոծ զանգվածներ են վերաբնակեցվել Հայաստանում, որևէ կերպ չի խանգարում այս ամենին (այս մասին, ստորև):

Երկրորդ. պետական ապարատի և պետականության այլ կառույցների կատարելագործումը.

Պատմագիտությունը բացահայտել և արժանիորեն շատ բարձր է գնահատել Արտաշես Ա-ի հայտնի բարեփոխումները¹²: Կարելի է ասել, որ ազգային իմաստով ունիտար պետականություն ստեղծելուց հետո պետականության ռեսուրսի երկրորդ

¹¹ Նույն տեղում, Ա. Ը, էջ 29:

¹² Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 534–539:

հիմնասյունը դարձան այդ բարեփոխումները՝ ուղղված վերից վար պետական կառավարման մանրակրկիտ ու արդյունավետ համակարգի կատարելագործմանը, երկրի միասնականության ապահովմանը, ներքին կայունության համար վտանգ պարունակող խոչընդոտների և հանգամանքների կանխարգելմանն ու վերացմանը: Առաջին հերթին հենց դրանց տված արդյունքն էր Տիգրան Բ-ի օրոք Հայաստանի ապրած քաղաքական «պայթյունը» և աշխարհակալ տերության վերածվելը:

Պատմահոր երկում իր անդրադարձն ունի նաև այս երկրորդ բարենորոգումների ու հստակ ձեռնարկումների միջոցով երկրի ներքին քաղաքական կյանքը կարգավորելու և կառավարման արդյունավետությունն ապահովող հիմնասյուն-գործոնը: Եվ այստեղ ևս այն վերաբերում է պետականության հիմնադրին (որ նրա մոտ Պարթև Վաղարշակն է): Վերջինիս գահակալությանը վերաբերող վեց գլուխներում¹³ ներկայացվող ընդարձակ նյութի մեծ մասը հենց պետականաստեղծ այդ բարեփոխումների կամ ձեռնարկումների մասին է, իսկ այդ գլուխներից մեկի վերնագիրը շատ բնութագրական է. «Յօրինւած թագավորութեանն, և թէ ուստի՝ գնախարարութիւնսն կարգեաց, ո՛րպէս և զհա՛րդ կենցաղավարել հրամայեաց»¹⁴: Խնդրին տված գերկարևորությամբ այն ակնհայտորեն հիշեցնում է Արտաշես Ա-ի պետականաստեղծ բարենորոգումները: Այդ ամենը ներկայացնելով՝ Խորենացին Վաղարշակի արած բարենորոգումներն ընդհանրացնում է այսպես. «Քանզի բազում ինչ աստ կարգաց և յօրինուածոց տանց, ազգաց, քաղաքաց, շինից, դաստակերտաց, և համայն ասել՝ օրէն թագաւորութեան, և որ ինչ շուրջ զթագաւորութեամբն զօրաց, զօրապետաց, կողմանց կողմնակալաց և որ նման այսոցիկ»¹⁵: Այս դեպքում ևս պատմագիտական և այլ հասկանիչների կողքին գործ ունենք Պատմահոր քաղաքական բարձրակարգ ընկալունակության հետ: Եթե անգամ այս գլխում նկարագրվածը փաստական իմաստով գալիս է նրա գրավոր աղբյուրից, ապա դրան տված, ակնհայտորեն հեղինակային, բացառիկ կարևորությունը քաղաքական մտքով ավանդված պատկերացման արձանագրումն է, և այս դեպքում ևս, պատմիչն այդ պատկերացման համոզված կրողն է:

Այսպիսով, Հայկական լեռնաշխարհում ավելի քան 300.000 կմ/քառ. տարածությամբ ծավալված երկիրն իր բնակչությամբ ու քաղաքական ընտրանիով որպէս քաղաքական-պետական մի ընդհանրություն էր զգում, և դրա հիմքում, առաջին հերթին, դրված էր առարկայական երկու գործոն՝ լեզվական (էթնիկ) միատարրությունը, ավելի ու ավելի կատարելագործված և ամրապնդվող պետական կառույցներն ու պետականության ավանդույթը:

¹³ Մ ո վ ս է ս Խ ո Ր Է ն ա ց ի. Պատմություն Հայոց, Բ. Գ-Ը, էջ 104, 119:

¹⁴ Նույն տեղում, Բ, Է, էջ 109:

¹⁵ Նույն տեղում:

Պետականակենտրոն արժեքային համակարգը

Պետականության որևէ ռեսուրս շատ արագ կարող է մաշվել, սպառվել, եթե այն ճիշտ չի կառավարվում, և բնակչության մեծագույն մասը դրա շահառուները չեն: Ուստի՝ վերևում ներկայացված օբյեկտիվ, առարկայական գործոններին պետք է ավելացնել ոչ պակաս կարևոր երկու սուբյեկտիվ հանգամանք, որոնք այդ բաղադրիչները “ցեմենտողի” դեր են խաղացել:

Առաջինն արկածախնդրության մերժումն է և իրատես քաղաքական մտքի կրող պետական իշխանական ընտրանին՝ թագավորի գլխավորությամբ: Այլ կերպ պարզապես անհնար է պատկերացնել աշխարհակալ երկու պետությունների արանքում Հայկական պետականության երկարատև ընթացքը, բարձր դիմադրողականությունը և խաղացած, հաճախ վճռական, դերը: Քաղաքական մտքի այդ որակը եղել է ոչ թե էպիգոդիկ, այլ՝ տիրապետող, հետևողական ու տևական:

Երկրորդ, սուբյեկտիվ գործոնը պիտի լիներ երկրի ինքնիշխանությամբ, անկախությամբ, պետականությամբ շահագրգիռ բնակչության մեջ ազատ, լիիրավ քաղաքացիների մեծամասնության առկայությունը: Վերջինս պետականության պահպանմամբ շահագրգիռ լինելու համար պետք է համարեր, որ վայելում է երկրի իշխողների (նույն քաղաքական ընտրանու) կողմից իր նկատմամբ դրսևորած բազմակողմ հոգածություն: Խորենացու վկայություններից դժվար չէ արտածել այդ իրողության և ժամանակի հայ քաղաքական մտքի նաև տվյալ հատկանիշի դրսևորումները: Թագավորի հաղթական պատերազմներից, նվաճումներից, պետության հզորացումից ու հարստացումից օգտվում են երկրի քաղաքացիների՝ անխտիր բոլոր խավերը, բարձրանում է նրանց ապահովությունը, պաշտպանվածությունը, բարեկեցությունն ու սոցիալական կարգավիճակը: Երվանդյան Տիգրանի արտաքին նվաճումների արդյունքներն այսպես են ներկայանում. “Արանց կացեալ գլուխ և արութիւն ցուցեալ՝ զազգս մեր բարձրացոյց, և զընդ լծով կացեալսս՝ լծադիրս և հարկապահանջս կացոյց բազմաց. մթերս ոսկւոյ և արծաթոյ և քարանց պատուականաց և զգեստուց և պէս պէս գունից և անկուածոց՝ արանց միանգամայն և կանանց՝ հասարակաց բազմացոյց. որովք սգեղագոյնքն իբրև զգեղաւորս երևէին սքանչելիք, և գեղաւորքն ըստ ժամանակին առ հասարակ դիւցազնացեալք: Հետևականարտքն ի վերայ ուսոց ձիոց բերեալք, և պարսաւորքն առ հասարակ դիպաղեղունք, և շերտաւորքն ի սուսեր և ի տէգ նիզակի վառեալք. մերկքն վահանօք և զգեստուք երկաթեօք պարածածկեալք... Խաղաղութեան և շինութեան բերող, իւղով և մեղու զամենայն հասակ”¹⁶ պարա-

¹⁶ Թվում է՝ այստեղ բնագրական փոքր խաթարում կա կապված “հասակ” բառի հետ: Դա չի խանգարել, որ Մալխասյանցը “իւղով և մեղու զամենայն հասակ պարարեալ” ճիշտ թարգմանի “բոլորին լիացրեց յուղով և մեղով” (տե՛ս Մ ո վ ս ե ս Խ ո թ ե ն ա գ ի. Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմ., ներած. և ծանոթ. Ստ. Մալխասյանի, Երևան, 1990, էջ

րեալ¹⁷: Բայց ոչ միայն այս դեպքում: Թագավորի հոգածության տակ են իր երկրի բնակիչների բոլոր խավերը: Նա ապահովում է նրանց արժանապատիվ կյանքը, իրավական պաշտպանվածությունն ու արդարությունը. Տիգրանը՝ «Արդարադատ և հաւասարասէր կշիռս ունելով յամենայնի՝ զամենայն ուրուք զկենցաղ՝ մտացն լծակաւ կշռէր: Ոչ ընդ լաւագոյնսն խանդայր, և ոչ զնուաստսն արհամարհէր, այլ ամենեցուն հասարակաց հնարէր զխնամոցն իւրոց ի վերայ տարածանել զզգեստս¹⁸: - Վաղարշակը կարգում է՝ «Իրաւարարս ի տանն արքունի, իրավարարս և ի քաղաքս և յաւանս: Հրաման տայ՝ և քաղաքացեաց մարդկան արգոյ և պատիւ լինել առաւել քան զեղջկաց. և զզեղջկաց պատուել զքաղաքացիս որպէս զիշխանս. և քաղաքացեաց մի՛ կարի առ զեղջկօքն պերճանալ, այլ եղբայրաբար վարիլ, վասն բարեկարգութեան և աննախանձոտ կենաց, որ է շինութեան և խաղաղութեան կենաց պատճառք. և որ ինչ նման այսոցիկ¹⁹»:

Հայաստանում, այսպիսով, կարելի է ասել, ստեղծվել էր քաղաքական արժեքային մի համակարգ, որը կարելի է բնութագրել պետականակենտրոն բառով: Պետականակենտրոն արժեքային համակարգի կրողներն էին ոչ միայն երկրի քաղաքական ընտրանին, այլ նաև, մեծ մասամբ ազատ, նույն պետականության շահառու ամբողջ բնակչությունը կամ դրա մեծագույն մասը: Եվ սա անկախությունն ապահովող, պետականության ռեսուրսի մաս կազմող հերթական կարևոր բաղադրիչն էր: Արտաշես Ա-ի բարենորոգումներից սկսած՝ պետականության հիմքում դրված հզոր լիցքերը ստեղծեցին այնպիսի պոտենցիալ, որ հնարավոր դարձավ Հայաստանի աննախադեպ քաղաքական «պայթյունը», աշխարհակալ պետության վերածվելը, տարածաշրջանային պատմության մեջ մշտապես էական դերակատարությունը, իսկ որոշակի մի շրջանում համաշխարհային պատմության ընթացքը պայմանավորող վճռորոշ գործոնի վերածվելը:

Ստեղծված յուրատեսակ պետականության ռեսուրսը Հայաստանի բնակչության ու, հատկապես, նրա քաղաքական ընտրանու պատկերացումներում ամրացնում էր «մենք»-ի և «մեր»-ի հստակ սահմանազատումը՝ «նրանցից»: Այն իր ներքին ամրութե-

46): Պարզապես «հասակ» բառը, ըստ «Նոր հայկազյան բառարանի», նման իմաստ չունի: Հաջորդ պարբերության վերջին միտքը, սրան շատ նման, ունի այսպիսի ձևակերպում. «... ամենեցուն հասարակաց հնարէր զխնամոցն իւրոց ի վերայ տարածանել զզգեստս»: Այս դեպքում էլ թարգմանությունը նույնն է՝ «ամենքի» (= «բոլորի»): Ըստ այդմ, թերևս, առաջին դեպքում բնագրում «հասակ» բառի փոխարեն եղել է «հասարակ» կամ «առ հասարակ»: Կամ էլ այն պետք է հասկանալ և թարգմանել՝ «յուրով ու մեղրով լիացրեց բոլոր տարիքի մարդկանց»:

¹⁷ Մ ո վ ս է ս Խ ո թ է ն ա ց ի. Պատմութիւն Հայոց, Ա. ԻՂ, էջ 72:

¹⁸ Նույն տեղում, էջ 73:

¹⁹ Նույն տեղում, էջ 117–118:

յան և արտաքին սահմանների կոշտությամբ ճանաչվեց հարևանների կողմից, դարձավ հայկական պետականությունը ու նրա “բնական սահմանները” պայմանավորող անշրջանցելի մի փաստարկ նաև համաշխարհային պատմության զարգացումներն իրենց ուսերին առած երկու բևեռների՝ Հռոմեական և Պարթևական պետությունների համար:

Հայկական “պետականության ռեսուրսի” կշիռն ու սահմանային կոշտությունն արտահայտվեց մ. թ. ա. 66 թ. Արտաշատում կնքված պայմանագրում: Հռոմի Հայաստանի դեմ մղած դժվարին պատերազմները հաղթանակով ավարտվեցին և, Հայաստանը, կարծես թե (գեթ ըստ ժամանակակից պատմիչների նկարագրության), հայտնվեց կապիտոլյացված վիճակում²⁰: Հռոմեական կայսրությունը չգնաց Հայաստանի անկախությունը վերացնելու, պրովինցիայի վերածելու քայլին²¹, այլ հետ վերցրեց միայն Տիգրանի արտաքին նվաճումները, հայկական պետության կազմում պահպանվեց Արտաշես Ա-ի ժամանակ ձևավորված և Տիգրանի ժամանակ ամբողջացած “հայերեն խոսքով” եզրագծվող Հայկական թագավորության սահմանները: Մա Հայաստանի սահմանների վաստակված “անձեռնմխելիության” միջազգային ճանաչման փաստ էր²²՝ պայմանավորված առաջին հերթին դրանց ձեռք տալու դեպքում հետագա բարդությունների ու վտանգավորության գիտակցումով: Հայկական պետականության ռեսուրսը՝ իր էթնիկ, քաղաքական, քաղաքակրթական միատար-

²⁰ Տե՛ս նաև Ն. Մանանդյան. նշվ. աշխ., էջ 578–581:

²¹ Ըստ Արմեն Խաչիկյանի՝ Պոմպեոսն այդ քայլին չգնաց, որովհետև դա չէր համապատասխանում Հռոմի քաղաքական գործելակերպին (տե՛ս А. Хачикян. Армения в сфере международной политики накануне и в начале нашей эры. Ереван, 1999, с. 8–9).

²² Ակադեմիկոս Ս. Երեմյանն այս պայմանագիրը որպես Հայաստանն այդ սահմաններով միջազգային ճանաչման ակտ է գնահատում, ասելով թե՛՝ Մեծ Հայքի տարածքն առաջին անգամ “պաշտոնապես վավերացվել է” մ. թ. ա. 66 թ.՝ 312.795 կմ/քառ. (տե՛ս Ս. Երեմյան. Հայաստանն ըստ Աշխարհացույցի, Երևան, 1963, էջ 69): Տիգրանը գնաց հաշվարկված իմաստուն քայլի՝ զիջեց “գրաված հողերն”՝ այն հիմքի միջազգային ճանաչման դիմաց, որը պիտի ապահովեր և ապահովեց հայ ժողովրդի ապագան ոչ թե նույնիսկ դարերի, այլ հազարամյակների համար: Ֆրանսիացի պատմաբան Ռենե Գրուսեի խոսքով՝ “Տիգրանը, թերագնահատված այդ մեծ տիրակալը, շատ ավելի է արժանի պատմության հիացմունքին, քան նրա ժամանակակից Միհրդատ Եվպատորը, եթե ցանկանանք նկատել, որ Միհրդատը փայլուն կերպով ինքնասպանության հասցրեց իր երկիրը, մինչդեռ Տիգրանը ապահովեց իր ժողովրդի հավերժական հարատևումը” (Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 555): Պատկերավոր, բայց ճշգրիտ այս խոսքը կարելի է ընդհանրացնել ժամանակի ավելի լայն կտրվածքով՝ մի կողմից Տիգրանի փոխարեն նկատի ունենալով հայ քաղաքական միտքը հայկական պետականության տևական այս շրջանում, մյուս կողմից՝ այդ ընթացքում պատմական թատերաբեմից անհետ վերացած բազմաթիվ այլ պետություններ և ժողովուրդներ:

րությանը ու միասնականությանը, քաղաքական ընտրանու պետական գիտակցությանը, քաղաքացիական ազատ բնակչության ազգային պատվախնդրությանը, “մենք”-ի ու “մեր”-ի աշխարհագրական սահմանների հստակ պատկերացումով ու խորացած գիտակցումով դրա հետ կարող էր չհաշտվել: Այն փաստը, որ հետագա ավելի քան կես հազարամյակում պետական այդ սահմանները, ոչ մեծ կորուստներով²³, պահպանվեցին մինչև Հայաստանի երկու մասի բաժանումն ու Արշակունյաց թագավորության անկումը, արդյունք էր նույն պետականության ռեսուրսի գոյատևման, ինչը ժամանակին հնարավոր չէր եղել շրջանցել և միջազգայնորեն ամրապնդվել էր Արտաշատում կնքված պայմանագրով: Բայց նաև դրանով ամեն ինչ չավարտվեց²⁴:

²³ Արտաշատի պայմանագրով ճանաչված տարածքից մ. թ. ա. 37 թ. Հռոմի և Պարթևական կայսրության միջև պայմանագրով անջատվում ու Պարթևական պետությանն էր միանում “Միջագետք Հայոց”-ը՝ 27.600 կմ/քառ.: Մնացած 285.195 կմ/քառ.-ն ևս մի անգամ “պաշտոնապես ընդունվեց” որպես Հայաստանի տարածք 298 թ. Մծբինի 40- ամյա դաշնագրով՝ պահպանվելով մինչև մ. թ. 387 թ.՝ Հայաստանի երկու մասի բաժանվելը (տե՛ս Ս. Երեմյան. նշվ. աշխ., էջ 69):

²⁴ Ս. Երեմյանի գնահատմամբ (Հայաստանի երկու մասի բաժանվելուց, ապա թագավորության վերացումից հետո)՝ “Չնայած նրան, որ դադարեց Մեծ Հայքը իբրև քաղաքական հասկացություն, շարունակում էր գոյություն ունենալ Մեծ Հայքը իբրև էթնիկական հասկացություն: Մինչև առաջին իմպերիալիստական պատերազմի տարիները Մեծ Հայքի տերիտորիայի վրա շարունակում էր իր գոյությունը հայ ժողովուրդը որպես գերիշխող ազգություն (նույն տեղում, էջ 70): Այս պատմաշրջանին անդրադառնալու խնդիր չունենալով՝ միայն քաղաքական տեքստի վերածենք Ս. Երեմյանից մեջբերված պատմագիտական տարողունակ դիտարկումը. Արշակունյաց թագավորության անկումից հետո էլ Մեծ Հայքում պահպանվեց պետականության ռեսուրսի հիմնական հենասյունը՝ էթնիկ, լեզվական, քաղաքակրթական միասնությունը: Պատմական պատեհությունների շրջանում այդ հիմքի վրա ստեղծվեցին նաև տարբեր կարգավիճակի պետական կազմավորումներ՝ ապահովելով “հայ ժողովրդի, որպես գերիշխող ազգության” հետագա գոյությունը նույն աշխարհագրական տարածքում: Այդ հիմքը, որպես հայկական պետականության ռեսուրս, պահպանվել էր և առկա էր մինչև XIX դարավերջերն ու XX դարասկիզբը: Հայտնի է, որ 1500-ամյա այդ շրջանում ժողովրդի ճակատագրի համար պատասխանատու, քաղաքական մտքի կրողներ և գործադրողներ են եղել նախ՝ հայ ազնվականությունն ու եկեղեցին, ազնվականության սպառումից հետո՝ միայն եկեղեցին և XIX դարավերջից, շուրջ երեք տասնամյակ՝ “հեղափոխական կուսակցությունները”: Ս. Երեմյանի խոսքով՝ “Մեծ Հայքը իբրև էթնիկ հասկացություն”-ից, կամ, մեր ձևակերպմամբ՝ հայկական պետականության ռեսուրսից XIX դարավերջում էլ դեռ մնացել էր այնքան, որ կարող էր Մեծ Հայքում նոր պետականության ստեղծման հիմք դառնալ: Այն զրոյացավ հենց այս վերջին շրջանում, երբ իրատեսական քաղաքական մտքին “հայրենասիրության” քողի

Քաղաքակրթական յուրահատկությունը և միասնականությունը

Այս ամենի բնական հետևանքն անխուսափելիորեն պիտի հանգեցնե՞ր ինքնատիպ դարձող քաղաքակրթական միասնականությունը և, այդ առումով, որոշակի գերակայությանը հարևանների նկատմամբ: Տվյալ կոնտեքստում էլ պետք է փնտրել վերևում առկախված այն հարցի պատասխանը, թե ինչպե՞ս է, որ միալեզվությունը պետականության հիմնասյուն համարող հայ քաղաքական միտքը որևէ վտանգ չի տեսել այլալեզու հոծ զանգվածներ, ընդհուպ ամբողջ ժողովուրդներ Հայաստանում վերաբնակեցումից: Ընդ որում՝ դատելով հայտնի աղբյուրների տեղեկություններից, դրանց թիվը ոչ թե տասնյակ, այլ հարյուրավոր հազարներ էին²⁵: Մինչդեռ ո՛չ օտար, ո՛չ հայկական աղբյուրները որևէ ակնարկ չունեն էթնիկ կամ ցեղային հիմքի վրա վերաբնակեցվածների ոչ միայն ընդվզումների, այլև բողոք հիշեցնող ինչ-որ փաստի մասին²⁶: Չնայած դասակարգային պայքարի, որպես պատմության առաջ մղիչ ուժի կոմունիստական գաղափարախոսության կոնցեպցիայի պարտադրանքին, նման փաստեր այդ շրջանում հնարավոր չի եղել պեղել նաև սոցիալական հիմքի վրա: Դրա բացատրություններից մեկը կարող է լինել այն փաստը, որ, ի տարբերություն դասական ստրկատիրական հասարակարգ ունեցող երկրների (Հունաստան, Հռոմ), պատերազմների հետևանքով գերեվարված ու Հայաստան վերաբնակեցվածների մի մասը որոշակի իրավունքներ էր ստանում, մի մասն էլ, թերևս, ինչ-որ ժամանակ հետո դառնում էր երկրի իրավահավասար քաղաքացի-բնակիչ՝ պետության կողմից արժանանալով նույնպիսի հոգածության²⁷: Սրան, կարծում ենք, պետք է ավելացնել մի երկրորդ հանգամանք ևս՝ հայկական քաղաքակրթական միջավայրը: Այն, ավելի բարձր լինելով, ըստ երևույթին, եղել է, այսպես ասենք, դրական իմաստով ազդեցիկ: Տարբեր տեղերից Հայաստան վերաբնակեցվածները ձուլվել են՝ ստանալով ազգային նոր ինքնություն:

Յուրահատուկ են եղել հարաբերությունները երկու անմիջական հարևանների՝ վրացիների ու ադվանների հետ, և դրա հիմքում ևս Հայաստանի քաղաքակրթական

տակ փոխարինեց, արկածախնդրական՝ ոչ քաղաքական մտածելակերպն ու գործելակերպը:

²⁵ Տե՛ս նաև Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 653–654:

²⁶ Միակ էթնիկ միավորը, որը որոշակի դիմադրություն է ցուցաբերել, ըստ Խորենացու, եղել է հրեական համայնքը՝ պահպանելու համար իր կրոնական առանձնահատկությունները, բայց, ի վերջո, տեղի է տվել (տե՛ս Մ ո վ ս է ս Խ ո ռ է ն ա գ ի Պատմություն Հայոց, Բ. Ը, էջ 117 և 119, Բ. ԻՂ, էջ 141–142):

²⁷ Հայաստանում ստրկատիրության և ստրուկների կարգավիճակի առանձնահատկությունների մասին տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 646–652:

գերակայությունն է: Հայ-վրացական կամ հայ-ադվանական հակամարտություններ ու մրցակցություն, փաստորեն, չեն գրանցվում: Այս ժողովուրդները, որպես կանոն, ներկայանում են որպես բարեկամ ու դաշնակից, անվերապահորեն ճանաչում են իրենց նկատմամբ Հայաստանի քաղաքական լիդերությունը և ենթակա են նրա քաղաքակրթական խնամակալությանը: Հայաստանը հոգում է նրանց հոգևոր ու մշակութային կարիքները. քրիստոնեությունը Վրաստան ու Ադվանք է թափանցում Հայաստանի վրայով ու նրա օգնությամբ, Մեսրոպ Մաշտոցը V դարի սկզբին ստեղծում է ոչ միայն հայկական գիրը, այլ նաև վրացականն ու ադվանականը և դպրոցներ բացում նրանց համար: Նաև պետականություն չունենալու պայմաններում դավանաբանական հարցերում նրանք հայ եկեղեցու հետ են, իսկ նվիրապետական առումով՝ նրա կառուցվածքի մեջ: Ընդհուպ X դարում, Կոստանդնուպոլսի պատրիարքը Հայաստանի կաթողիկոսին դիմում է որպես «Հայոց, Վրաց և Ադվանից միահամուռ հոտի» առաջնորդ²⁸:

Ինչ վերաբերում է պետական կազմավորման նախնական փուլերում գտնվող, հիմնականում ավարառությամբ զբաղվող կովկասյան ցեղերին, նրանց պարբերաբար կրկնվող ասպատակությունները նույնպիսի խնդիր էին նաև Իրանի համար: Բացի նրանց ավազակային արշավանքներից նրանց կայեղու ձևը հայ քաղաքական միտքը տեսել է ոչ միայն ուժային հակադրման, այլ նաև վերջիններիս քաղաքակրթության աստիճանի բարձրացման և ժամանակի «միջազգային իրավունքի» դաշտ տեղափոխելու մեջ: Ալանների հերթական արշավանքներից մեկն ավարտվում է նրանով, որ Հայոց արքա Արտաշեսը ստիպում է իրեն կնության տալ ալանների արքայի դստերը: Դինաստիական ամուսնությունները միջպետական հարաբերությունների մեջ նաև պետությունների համակցության ապահովման կարևոր ապահովող գործոն էր: Շատ ավելի խոսուն և ուղղակի է Պատմահոր մի այլ վկայությունը՝ անմիջապես քաղաքակրթական լծակի օգտագործման մասին. Վաղարշակը նույն կովկասյան ցեղերի հետ պատերազմով հարցերը լուծելուց հետո, նրանց հետագա ավարառական արշավանքները կանխելու, այսօրվա տերմինով ասած, քաղաքականապես կանխատեսելի հարևան ունենալու համար՝ ձեռնարկում է հետևյալը. «Եվ աստ կոչեցեալ զվայրենի եկամուտ ազգն, որ ի դաշտին հիւսիսոյ և որ զստորոտով մեծի լերինն Կաւկասոյ, և որ ի հովիտս կամ ի ձորս երկայնաձիգս խորացեալս... պատուէր տալով զաւազակութիւն և զմարդադաւութիւն ի բաց քեցել յինքեանց, և հրամանաց և հարկաց արքունի հպատակ լինել. որպէս զի միւսանգամ տեսեալ զնոսա՝ ա-

²⁸ Տե՛ս Յ ո վ հ ա ն ու կ յ թ ո ղ ի կ ո ս ի Դ բ ա ս խ ա ն ա կ եր տ ց ո յ . Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 266:

ռաջնորդս և իշխանս հանդերձ գեղեցիկ կարգօր հաստատեցէ: Եւ արձակէ զնոսս հանդերձ արամբք իմաստնովք և վերակացուօք իւրմէ՝²⁹:

Ոչ թե կողմնորոշումային, այլ իրատեսական արտաքին քաղաքականություն

Մեծ Հայքի պետականության յուրահատկության մասին Ս. Երեմյանն արձանագրում է. «Մեծ Հայքը ոչ միայն նրանով էր աչքի ընկնում, որ Հին Աշխարհի երրորդ մեծ պետությունն էր, այլև տարբերվում էր Հռոմից և Պարթևստանից մի էական գծով: Մեծ Հայքի թագավորությունն իրենից ներկայացնում էր մի միաձույլ էթնիկական թագավորություն»³⁰: Ինչպես տեսանք, սա ոչ թե ձևական, այլ էական քաղաքական որակական հատկանիշների տարբերություն էր: Այս տարբերությունը Հայաստանը պահպանեց նաև աշխարհաքաղաքական հիշյալ բնեռների հաջորդների՝ Սասանյան Պարսկաստանի և Բյուզանդական կայսրության նկատմամբ: «Միաձույլ էթնիկական» պետականությանը այս տիպը, որակը կամ մակարդակը, որի բաղադրիչներն են՝ նույն լեզուն, մշակութային-քաղաքակրթական միասնությունը, ընդհանուր արժեքային համակարգը և քաղաքացիական ազատ բնակչությունը (այս դեպքում, առնվազն, դրա մեծագույն մասը) բնորոշվում է «ազգ-պետություն» (կամ «ազգային պետություն») քաղաքական եզրույթով: Այսօրինակ պետական կազմավորումների առաջացման շրջանը Եվրոպայում ուշ միջնադարն է, և շարունակվել է ընդհուպ մինչև XIX դար³¹: Եթե անգամ չասենք, թե Հայաստանը նույնպիսի «ազգ-պետություն» էր արդեն շուրջ երկու հազարամյակ առաջ, ապա դժվար է նաև էական տարբերություններ նկատել Արտաշիսյան-Արշակունիների անընդհատ պետականության շրջանի և ուշ միջնադարից մինչև նոր ժամանակներում կազմավորվող «ազգ-պետությունների» հիմնական քաղաքական հիմքերի ու բնորոշիչների միջև:

²⁹ Մ ո վ ս է ս Խ ո թ ե ն ա ց ի. Պատմութիւն Հայոց, Բ. 2, էջ 108–109: Խորենացին միայն այստեղ չէ, որ հստակ արձանագրում է Հայաստանի քաղաքակրթական գերազանցությունը հյուսիսային ժողովուրդների և ցեղերի նկատմամբ: Արտաշեսի նոր բարեկարգումների մասին նրա խոսքում իմիջայլոց ասված այսպիսի մի միտք կա. «... այլ ըստ օրինակի հիւսիսականաց կողմանց շաղղակերութեամբ և այլովք այսպիսեօք կեցեալք» (նույն տեղում, Բ. ԾԹ, էջ 188), իսկ հայտնի «Ողբի» սկսվածքում Հայաստանը համարում է հյուսիսային բոլոր ազգերի մեջ «վեհագույնը»՝ այստեղ արդեն նկատի ունենալով ավելի լայն շրջանակ. «Ողբամ զքեզ Հայոց աշխարհ, ողբամ զքեզ, հանուրց հիւսիսականաց վեհագոյն» (նույն տեղում, Գ. ԿԸ, էջ 358):

³⁰ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 707:

³¹ Ընդունված է համարել, որ Եվրոպայում ազգային պետություններ սկսեցին առաջանալ 30-ամյա պատերազմների ավարտից և 1648 թ. Վեստֆալյան հաշտության պայմանագրից հետո (տե՛ս Энциклопедия ,Всемирная История», «Национальное государство» հոդվածը /w.histrf.ru/articles/ article/show/natsionalnoie_gosudarstvo):

Վստահաբար, հենց սա է եղել այն կարևոր առանձնահատկությունը, որը և պայմանավորել է հայկական պետականության կենսունակությունն ու տևականությունը, համաշխարհային պատմության մեջ խաղացած դերը:

Երկրի անվտանգության ապահովման, խաղաղության պահպանման, ըստ հնարավորության, ինչու չէ, նաև սահմանների ընդարձակման խնդիր ունեցող արտաքին քաղաքականությունը չէր կարող չհամապատասխանել պետության բնույթին, բովանդակությանը և հնարավորություններին: Իսկ դա այլ բան չէր կարող լինել, քան ժամանակի բևեռացված աշխարհում, դարձյալ այսօրվա հասկացությամբ ասած, “անվտանգության համակարգերից” որևէ մեկին անդամագրվելը, հարելը՝ էթե անվտանգության իմաստով ինքնաբավ չես կամ ինքնդ չես անվտանգության համակարգերից մեկի առանցքը կամ բնեղը: Հայաստանն այս ընթացքում ապահովության առումով եղել էր և՛ ինքնաբավ, և՛ անվտանգության համակարգի առանցք կամ բևեռ՝ ուրիշների համար, և՛ անվտանգության այլ համակարգերի մաս՝ կամավոր թե պարտադրված: Երրորդ դեպքում, բնականաբար, պետք էր վճարել՝ սուվերենության որոշակի սահմանափակմամբ կամ հարկատվությամբ (այդպես է անգամ արդի աշխարհում): Ավելի քան բնական է, որ երկրի քաղաքական ընտրանին կարող էր ունենալ այս կամ այն անվտանգության համակարգը գերադասելու իր պատկերացումները: Եվ, ինչպես այս կամ այն պետության հետ դաշնակցելը, այնպես էլ տարբեր պատկերացումներ ունենալը բոլորովին այլ բան է, քան արտաքին քաղաքական կողմնորոշումը:

Հայաստանի տարածքային ամբողջականությունը և պետական կարգավիճակը պահպանվեց ոչ միայն մ. թ. ա. 66 թ. Տիգրանի և Պոմպեոսի միջև կնքված միջազգային պայմանագրի իրավական ուժով, այլև դրա հիմքում եղած պետականության ռեսուրսի, պետականակենտրոն արժեքային համակարգի ու դրան համապատասխան իրականացված արտաքին քաղաքականության շնորհիվ: Կարգավիճակի առումով այն ոչ մի կերպ չհամակերպվեց հռոմեական կայսրության պրովինցիա դառնալու փորձերին, չհանդուրժեց Հռոմի կամ Պարթևական պետության կողմից առանձին կամ համատեղ նշանակված այն գահակալներին, որոց գործունեությունը չէր բխում անկախ պետականության կամ կուտակված պետականության ռեսուրսի, երկրի շահերի տրամաբանությունից³²: Հայաստանը Տիգրանի թագավորության վերջին շրջանում ու նրա հաջորդների օրոք էթե այլևս համաշխարհային պատմության ընթացքը պայմանավորող վճռորոշ ուժ չէր, սակայն, շարունակելով ամբողջությամբ պահպանել իր հզոր պետականության ռեսուրսը ու դրան համարժեք արտաքին քաղաքականությունը, որպես ինքուրույն գործոն, վճռական նշանակություն է ունեցել հա-

³² Թերևս, իրոք, մ. թ. ա. I դարում ապրած հռոմեացի բանաստեղծի՝ “Կամուրջներ չհանդուրժող Երասխ” տողը փոխաբերական, քաղաքական իմաստ ունի:

մաշխարհային պատմությունը կերտող Հռոմեական և Պարթևական կայսրությունների հարաբերություններում ու մրցակցությունում: Պատահական չէ, որ 298 թ. Մծբինի պայմանագրով վերահաստատվեց Մեծ Հայքի միջազգայնորեն ճանաչված սահմանների անձեռնմխելիությունը, որը, ըստ էության, մնաց մինչև Հայաստանի երկու մասի բաժանվելը: Հետագա շրջանում էլ, որպես երրորդ «խաղացող», Հայաստանի դիրքորոշումը հոգուտ մեկի կամ մյուսի, նույնպիսի վճռական նշանակություն է ունեցել Բյուզանդական կայսրության և Սասանյան Պարսկաստանի հակամարտություններում³³:

Արտաքին քաղաքականությունն ածանցվում է պետականության ռեսուրսից, բնույթից, քաղաքական արժեհամակարգից: Ինչպես արևելյան ու արևմտյան հզոր հարևանների, այնպես էլ կովկասյան ժողովուրդների ու պետությունների հետ Հայաստանի հարաբերությունների և արտաքին քաղաքականության ամենակարևոր բնորոշիչը եղել է առկա հնարավորություններից բխող, պետականակենտրոն արժեքային համակարգով թելադրված իրատեսական քաղաքականության սկզբունքը: Միայն այդ կես էր հնարավոր պահպանել, գեներացնել ու հզորացնել պետականության ժառանգված ռեսուրսը, դրա արդյունավետ կառավարմամբ ապահովել հայկական պետականության ավելի քան 600-ամյա անընդհատ գոյությունը և միջազգային դերակատարությունը: Ուստի՝ պատմագիտության մեջ տարածված այն տեսակետը, թե արդեն Տիգրան Մեծից հետո Հայկական պետության արտաքին քաղաքականությունը դառնում է «կողմնորոշումային», կարծում ենք, վերանայման, վերազնահատման կարիք ունի: Հայաստանի փոփոխվող կարճաժամկետ կամ երկարաժամկետ դաշնակցությունն այս կամ այն կողմի հետ (անկախ դրանց կամավոր կամ հարկադրված լինելուց) ոչ թե պետականագուրկ ազգերին բնորոշ «կողմնորոշումներ» են, այլ բարձրակարգ պետական համակարգ ունեցող երկրին վայել, սեփական շահերի գիտացումով և իրատես քաղաքականությամբ պայմանավորված, աշխարհում առկա այս կամ այն «անվտանգության համակարգն» ընտրելու արտաքին քաղաքական հաշվարկված քայլեր են: Եվ այս մեկնակետով պետք է գնահատել ու բացատրել ոչ միայն Արտաշիսյան հարստության, այլև Հայաստանում Արշակունիների գահակալության ողջ շրջանի արտաքին քաղաքականությունը: Ավելին՝ որ-

³³ Բուզանդի Պատմությամբ ավանդված է սպարապետ Վասակ Մամիկոնյանի պատասխանը Պարսից Շապուհ թագավորի հոխորտանքին. «...մինչ ես Վասակ էի, ես սկայ էի. մի ոտնս ի միոյ լերին կայր, և միւս ոտնս ի միոյ լերին կայր. յորժամ յաջ ոտնս յենուի, զաջ լեառն ընդ գետին տանէի. յորժամ ի ձախ ոտնն յենուի, զձախ լեառն ընդ գետին տանէի ... Լերինքն երկուք մի դու էիր, և մի թագաւորն Յունաց» (Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց ի չորս դպրութիւնս, Վենետիկ, 1933, Դ. ԾՂ, էջ 175): Այս գեղեցիկ պատումը, ըստ էության, ավելի քան կեսհազարամյա քաղաքական իրողության վիպական արտացոլումն է:

պես հայ քաղաքական մտքի հատկանիշ, այն պետք է նկատի ունենալ նաև հետագա դարերի համար:

Աշոտ Սարգսյան – պ. գ. թ., Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ V–X դդ. պատմագրություն, հայ քաղաքական մտքի, Ղարաբաղյան շարժման պատմություն: Հեղինակ է 4 մենագրության և 12 հոդվածի: ashot.sargssyan@gmail.com

REFERENCES

- A. **Xachikjan**. Armenija v sfere mezhdunarodnoj politiki nakanune i v nachale nashej ery. Jerjevan, 1999 (In Russian).
Enciklopedija “Vsemirnaja Istorija”, “Nacionalnoe gosudarstvo”
/w.histrf.ru/articles/article/show/natsionalnoe_gosudarstvo (In Russian).
- G. **Sargsyan**. Mer oreri im Bkalbumner. “Hayastani Hanrapetutyun”, 14.VIII-15. VIII. 1992 (In Armenian).
Hay dzoghovrdi patmutyun, h. 1, Yerevan, 1971; h. 2, Yerevan, 1984 (In Armenian).
- H. **Manandyan**. Tigran Mecb yev HromO, Yerker, h. A, Yerevan, 1997 (In Armenian).
- Movses Xorenaci**. Patmutivn Hayoc, qnnakan bnagirS yev neracutivnՅ M. Abeghyani yev S. Yarativneani, nmanahanutivn, IracumnerO A. B. Sargseani, Yerevan, 1991(In Armenian).
- Movses Xorenaci**. Hayoc patmutyun, ashxarhabar targm., nerac. yev canot. St. Malxasyani, Yerevan, 1990 (In Grabar).
- Pavstosi Buzandacvoy Patmutivn Hayoc i chors dprutivns, Venetik, 1933 (In Grabar).
- S. **Yeremyan**. Hayastann 8st Ashxarhacuyci, Yerevan, 1963 (In Armenian). Yovhanu katoghikosi Drasxanakertcoy Patmutivn Hayoc, Tiflis, 1912 (In Grabar).

РЕСУРС ГОСУДАРСТВЕННОСТИ И СИСТЕМА ЦЕННОСТЕЙ – ФАКТОРЫ, ОБУСЛАВЛИВАЮЩИЕ ВНЕШНЮЮ ПОЛИТИКУ (II в. до н. э. – IV в. н. э.)

АШОТ САРГСЯН

Резюме

Ключевые слова: политическая мысль, политическая ориентация, этническая однородность, государственность, прагматическая политика, цивилизационное единство, политическая система ценностей, Мовсес Хоренаци, национальное государство, ресурс государственности.

В последний период правления Тиграна Великого, включая период царствования Аршакидов (II в. до н. э. – IV в. н. э.), внешняя политика Армении определялась понятием

“политическая ориентация”, политическим термином, подразумевающим постоянность, окончательность.

Изучение периода царствования Арташесидов–Аршакидов с политической точки зрения выявляет сформировавшийся ресурс государственности Армении со следующими компонентами: а) этническая однородность; б) сформировавшиеся государственные структуры; в) многочисленное свободное гражданское население, находящееся под материальным попечением государства и под его правовой защитой; г) цивилизационное единство. Все эти компоненты составили ресурс государственности Армении, создали систему, нацеленную на централизованное государство и превратили Армению в своеобразное “национальное государство”.

Этот ресурс государственности мог быть создан, сохранен и мог выжить только в условиях существования прагматического политического мышления, которое воплощало в жизнь только интересы своей страны. Лишь таким образом можно было обеспечить долговременное существование этого государства и ту решающую роль, которую оно сыграло в геополитических процессах в течение более половины тысячелетия.

Внешняя политика является производной от ресурса государственности, типа государства, от политической системы ценностей. Переменчивые краткосрочные и долгосрочные союзнические отношения с той или иной стороной (независимо от того, было ли это союзничество добровольным или принудительным) во время правления Арташесидов–Аршакидов не являлись “ориентациями”, свойственными для наций, лишенных государственности, а выверенными политическими шагами, которые были присущи стране, имеющей развитую государственную структуру, осознающей свои интересы и обуславливающей выбор существующей в мире той или иной системы безопасности прагматической политикой. Именно с этой точки зрения необходимо рассматривать и объяснять внешнюю политику не только периода царствования династии Арташесидов, но и периода царствования Аршакидов в Армении.

Ашот Саргсян – к. и. н., старший научный сотрудник Матенадарана им. М. Маштоца. Научные интересы: историография V–X веков, история армянской политической мысли, Карабахского движения. Автор 4 монографий и 12 статей. ashot.sargssyan@gmail.com

STATEHOOD CAPACITY AND VALUE SYSTEM AS DETERMINING FACTORS IN
FOREIGN POLICY
(II c. BC – IV c. AD)

ASHOT SARGSYAN

S u m m a r y

Key words: political thought, political orientation, ethnic homogeneity, statehood, pragmatic politics, civilizational unity, political value system, Movses Khorenatsi, nation-state, unitary state, state resource.

The foreign policy of Armenia since the latter part of the reign of Tigran the Great, and including the period of the Arshakuni (Arshakid) dynasty (II c. BC – IV c. AD), has been analyzed in the historiographic literature through the lens of the concept of “political orientation” – a term which presupposes permanence and finality.

The examination of the Artaxiad-Arshakuni period from a political perspective demonstrates the following elements, which generate Armenia’s capacity for statehood: 1) ethnic homogeneity, 2) refined structures of governance, 3) a sizeable population of free citizens, who enjoyed the state’s material care and legal protection, 4) civilizational unity. These elements made up the capacity for statehood and engendered a state-centric political value system, which made Armenia a unique “nation-state.”

This state capacity could be created and maintained only in the presence of pragmatic politics, which was the precondition for the longevity of that state and the crucial role it played in important geopolitical processes for more than half a millennium.

Foreign policy is a function of the state’s resources, nature, and political values. In the Artaxiad-Arshakid period Armenia’s shifting short-term or long-term alliances with this or that state (regardless of whether it was forced or voluntary) is not an evidence for “orientations” characteristic of stateless nations, but rather calculated foreign policy decisions fitting a state with a sophisticated system of governance, a state, which could opt for this or that “security system” based on realism and a clear understanding of its interests. From this very point of view, it is necessary to consider and explain the foreign policy not only of the period of the reign of the Artaxiad dynasty, but also of the period of the reign of the Arshakids in Armenia.

Ashot Sargsyan – Candidate of Historical Sciences, Senior Researcher at M. Mashtots Matenadaran. Scientific interests: historiography of the V–X cc, History of Armenian Political Thought, History of the Karabakh Movement. Author of 4 monographs, 12 scientific articles. ashot.sargssyan@gmail.com

К 150-ЛЕТИЮ
СО ДНЯ РОЖДЕНИЯ КОМИТАСА

СТАТЬЯ ФОМЫ ГАРТМАНА О КОМИТАСЕ ВАРДАПЕТЕ*

Ключевые слова: Ф. Гартман, Комитас Вардапет, народная песня, обработка, композитор, Кутина, Эчмиадзин, Тифлис, Париж, Константинополь.

В начале февраля 1919 г. в Тифлис прибыл известный русский композитор, дирижер и пианист (немец по происхождению) Фома Гартман (1885–1956). Несколько слов о нем.

Ученик А. Аренского (по композиции) и А. Есиповой (по фортепьяно), Ф. Гартман в 1906 г. оканчивает С.-Петербургскую консерваторию. В следующем году его первое капитальное произведение, балет «Аленький цветочек», ставится на сцене Мариинского театра.

В 1908 г. Ф. Гартман уезжает за границу, где занимается с Ф. Мотлем (в Мюнхене) в области дирижирования и проходит с ним вагнеровский и классический репертуар, работая в то же время в Мюнхенской опере. К тому же времени относится его знакомство с Александром Заххаром, увлекшим его идеями о воссоздании античного мужского балета, для которого композитор пишет «Пластические танцы» (для камерного оркестра).

За границей Гартман знакомится с новыми веяниями западноевропейской музыки и увлекается французскими импрессионистами, как музыкантами (К. Дебюсси, М. Равель), так и живописцами (П. Гоген, В. Ван-Гог). Эти последние оказывают особое влияние на него и заставляют искать новые пути в музыке, пути, аналогичные тем путям, по которым импрессионисты шли в живописи. Проходит 2 года исканий, и конец этого периода венчает хореографическая поэма «Фра-Мино» (на сюжет Анатоля Франса «Святой сатир»), в которой Гартман освобождается от влияний школы, и выявляется самостоятельный лик композитора-импрессиониста.

Интересно, что этому выявлению себя в импрессионизме не помешали даже занятия со жрецом идей классицизма Сергеем Танеевым, учеником и горячим поклонником которого был Ф. Гартман.

* Принята к печати 10. VI. 2019 г.

Перу Гартмана принадлежат также соната для фортепьяно, камерная опера, ряд фортепьянных, инструментальных и вокальных произведений¹. «Гартман не из тех композиторов, которые, достигнув чего-нибудь, остаются на месте всю свою жизнь, разрабатывают один материал, – он непрерывно движется, его талант эволюционирует, и, будем надеяться, – пишет Ев., автор корреспонденции о Ф. Гартмане, – что тифлисский период его деятельности будет плодотворным, и Тифлис хорошо примет этого талантливую и передового артиста»².

Ф. Гартман с 1919–1921 гг. жил и творил в Тифлисе, преподавал в местной консерватории, был близок со многими деятелями армянской культуры, в частности, с Ов. Туманяном, Е. Тадевосяном, Сп. Меликяном, проф. Заврияном и мн. др. С 1921 г. жил и работал за рубежом (с 1951 г. – в Нью-Йорке).

О плодотворной деятельности Ф. Гартмана в Тифлисе говорит и тот факт, что уже через некоторое время он занимается изучением и распространением наследия великого армянского музыканта, композитора Комитаса, печатает ряд аналитических статей, читает лекции о его жизни и творчестве. Так, в газете «Закавказское Слово» (28. II. 1919; 1. III. 1919) публикуется глубокая и объемистая статья композитора «Комитас Вардапет» (в двух частях) из цикла «Народная песня и ее собиратели». А 29 марта устраивается концерт-лекция, посвященная творчеству Комитаса, где лектором выступил Ф. Гартман. С этого времени предпринимаются усилия армянской интеллигенции, направленные на облегчение участи Комитаса, находящегося в Париже на лечении от психического расстройства, полученного в ссылке, во время Геноцида армян в 1915 г. Все это привело к созданию «Общества имени Комитаса» в Тифлисе в начале мая 1919 г.³

Публикуемая статья Ф. Гартмана «Комитас Вардапет» на русском языке и сегодня, спустя 100 лет, не потеряла свою ценность и впервые вводится в научный оборот нами. Страницы номеров газеты изношены, в тексте имеются неразборчивые слова и словосочетания.

Для сравнения с русским текстом публикуем также армянский перевод указанной статьи, сделанный известным педагогом, музыковедом и певицей Маргарит Бабаян [«Анаит» (Париж), 1936, № 1–2, с. 22–33]. Здесь имеются пропуски, несоответствия с русским текстом, также неразборчивые слова и словосочетания. Кроме того, есть множество интересных примечаний –

¹ О Ф. Гартмане, в частности, см.: «Закавказское Слово» (Тифлис), 11. II. 1919.

² Там же.

³ См.: Т. Ованесян, А. Закарян. Тифлис, 1919, «Общество имени Комитаса». – «Советакан арвест» («Советское искусство», Ереван), 1984, № 2, с. 59–61 (на арм. яз.).

наблюдений и комментариев переводчицы и редактора журнала «Анаит» Аршака Чопаняна относительно некоторых мыслей, изложенных в статье Ф. Гартмана.

АНУШАВАН ЗАКАРЯН

КОМИТАС ВАРДАПЕТ*

< I >

Тифлисской консерваторией по инициативе ее директора Н. Н. Черепнина¹, в недалеком будущем предполагается устроить два концерта, посвященные национальной музыке грузин и армян. Это отличное начинание высшей музыкальной школы Тифлиса имеет большое значение не только в смысле ознакомления публики с музыкой ее родной нации. Значение этих концертов, несомненно, общекультурное, и о нем я хочу сказать несколько слов.

Кавказ, как возрождающийся к новой жизни, с этнографической точки зрения представляет исключительный интерес в смысле многообразия племен, населяющих его сравнительно небольшую территорию. С незапамятных времен, народы эти принесли сюда, в дикий, недоступный край, свой язык, свою культуру, свое искусство. В горниле постоянной кровавой борьбы, то отражая внешних врагов, то подавляя внутренние смуты, народы Кавказа закаляли в себе любовь к своей самобытности. Малодоступная, суровая природа оберегала эту самобытность от чужеземного влияния. Для ученого исследователя здесь сохранилась еще нетронутая живая старина, для музыканта-этнографа – народная песня во всей ее девственной чистоте! Но напрасно видеть в народной песне исключительно этнографический интерес. Значение ее, прежде всего, общекультурное. Будучи совершеннейшим выражением духа народа, являясь образцом музыкального примитива, народная песня как бы заключает в себе синтез тех художественных возможностей гармонии и

* Статья эта написана Фом. Ал. Гартманом, композитором, хорошо известным в России и за границей, одним из наиболее выдающихся представителей музыкального импрессионизма, учеником Аренского, Танеева, Есиповой (ф.-п.) и Мотля (дирижирование). Произведения Ф. А. ставились в России (балет «Аленький цветок» – на Мариинской сцене) и за границей. В настоящее время Ф. А. гостит в Тифлисе. Подробно о г. Гартмане см. «Зак. Сл.», № 20.

¹ Газета «Кавказское Слово» 15 августа 1918 г. сообщает: «Прибыл из Петрограда в Тифлис известный композитор и профессор петроградской консерватории Н. Н. Черепнин, избранный директором тифлисской консерватории». 30 сентября состоялся концерт композитора (см.: «Кавказское Слово», 3. X. 1918).

ритма, которые данный народ чуткой душой своей черпает из кристальных родников своего подсознательного творчества, незамутненного еще никакими посторонними влияниями и непосредственного в своей красоте, как непосредственно пение соловья. Восточная песня с их благоуханной поэзией, изысканной гармонией, причудливым ритмом, еще так мало известным Европе, таят в себе благодатные ростки развития музыки не только народов Кавказа, но и всего Запада. Из этих ростков впоследствии вырастет тот музыкальный оазис, в тени которого найдут себе приют алчущие и жаждущие музыкальной правды, лучшие представители западноевропейского творчества, стремящиеся выйти за пределы стиля, уже сказавшего в лице своих гениальных представителей свое последнее слово, и давшего в своем дальнейшем переразвитии сурогат творчества, ярко характеризующий современную Германию. Истинные искатели новых путей в искусстве те, кто на знамени своих устремлений свято хранит завет гениального учителя новой французской школы – Модеста Мусоргского «к новым берегам»; эти пионеры нового искусства всегда были близки к народной песне и, подобно тому, как современные художники нашли новые откровения в творчестве русских кустарей, в старинных баварских «*glassmalerei*», в творчестве так называемых диких народов, индейцев и негров – композиторы, изучая народные песни, находили в них разрешение тех задач ритма и гармонии, к которому они бессознательно стремились, но не находили в музыкальном стиле Западной Европы последних столетий. Из сказанного ясно, почему в данное время с точки зрения именно общеевропейской культуры столь важно обратить внимание на сохранение в неприкосновенном виде одного из главных сокровищ Кавказа – его народных песен. Ведь в этом отношении данное время является почти экзотическим. Уже скоро пробьет тот час, когда дорога западной цивилизации широко раскроется для народов Кавказа, и может случиться, что в своем порыве к благам культуры народы Кавказа если не забудут, то подвергнут европейскому влиянию свои родные песни. Ведь народная песня есть создание в высшей степени хрупкое и нежное. Малейшее изменение в ритме, малейшее (одно слово неразборчиво.– А. З.) или понижение одной из ее нот, хотя бы на восьмую тона, роковым образом отражается на всем ее строении, отнимая подчас всю характерную красоту ее, отнимая завершенность ее формы и т. образом нарушая всю цельность ее построения. Повторю – настало критическое время для народной песни, и следует, немедля часа, всячески прийти на помощь тем жрецам ее культа, тем собирателям этого истинного народного богатства, которые, несмотря на все необычайные трудности на своем пути, все же, благодаря неустанной энергии, воздвигли храм кавказской народной песни. Имена Палиева, Аракчиева, Балачивадзе, Меликиана, Тер-Гевондяна и др. у всех на устах; история их не

забудет. Всеевропейское признание их уже не за горами и оно достойно вознаграждает за те трудности, которые им в свое время пришлось превозмочь. Но есть среди собирателей песен Закавказья один, которому, быть может, не суждено будет увидеть апофеоз труда всей его жизни, осуществление его заветных, святых мечтаний. Этот человек не в силах был перенести ужасов и несчастий, обрушившихся на его истерзанную, обливавшуюся кровью родину. Хрупкая натура его не выдержала всех потрясений. Я говорю о Комитасе Вардапете, ныне в болезненном психическом состоянии находящемся в Константинополе, по всей вероятности, лишенном достаточных средств и нужного ухода, лишенном душевного тепла и ласки родных и близких, быть может, погибших в ужасные дни армянской резни². Хотя Комитас и выступал на Западе с большим успехом, но тем не менее, имя его было почти неизвестно не только широкой публике, но и самим музыкальным специалистам. В Петрограде и в Москве концерты его, к сожалению, не состоялись. Последние его сборники песен появились незадолго до войны, заставившей во многих отношениях забыть про искусство. Все эти обстоятельства вместе взятые заставляют нас думать, что среди культурных слоев общества найдутся люди, не знающие Комитаса, или, быть может, знающие его только по имени. Для них эти строки, посвященные жизни и творчеству Комитаса, на основании данных, любезно предоставленных нам друзьями и почитателями его гения, окажутся не лишними. Но есть еще одна цель, которую я руководствую, когда пишу эту статью. На Кавказе настало время самого энергичного собирания народных песен с одной стороны, а с другой, время лихорадочной композиторской работы в области национального творчества*).

В то и другое твердо верю. И вот поэтому мне бы очень хотелось для будущих молодых работников в области народного творчества особенно отметить истинность того художественного пути, который избрал Комитас, как в смысле собирания песен, так и в смысле оригинального творчества, ищущего своих корней в народной песне. Если кто-нибудь, ссылаясь на то, что Комитасом опубликованы исключительно обработки народных армянских мелодий, задаст мне вопрос – о каком оригинальном творчестве Комитаса я говорю – тому я отвечу, что упомянутые обработки, кстати сказать, носящие на себе печать несомненной гениальности, я именно считаю оригинальным творчеством, хотя и заключающем в себе

² Имеется в виду Геноцид армян, осуществленный в 1915 г. в Османской Турции. А. З.

*) Национализм в искусстве я понимаю не как проявление каких-либо политических тенденций, а как тот характерный отпечаток столь необходимой с точки зрения истинной художественности, тот специфический аромат искусства данного народа, коренящийся в глубинах его души, в глубинах его подсознательного творчества.

армянские песни во всей их неприкосновенности. Впрочем, более подробное обоснование данного положения я приведу во второй части моей статьи, которую посвящу разбору творчества Комитаса. Теперь же перейду к изложению биографических сведений о нем.

Архимандрит Комитас, в мире Соломон Геворкян, родился 28 сентября 1869 года в городе Кутине или Куте (турецкое произношение), неподалеку от Бруссы. Брусса с ее окрестными городками, в том числе Кутиной замечательна своим маиоликовым производством.

Еще в старину армяне, выходцы из Акулиса³, занесли сюда маиоликовое искусство, это совершеннейшее выражение восточной орнаментики. Здесь оно стало быстро развиваться. Вскоре Брусса стала поставлять свои произведения на всю Турцию. Искусство Бруссы наконец нашло свое наивысшее выражение в украшениях знаменитой Брусской мечети. Мне охотно верится, что искусство родного города Комитаса, еще сохранившее заветы старой красоты, с ранних лет оставило в нем, быть может, бессознательное, но во всяком случае неизгладимое впечатление, которое впоследствии в глубинах его художественной души трансмутировалось в необыкновенную чуткость к мелодической орнаментике песен Востока.

Еще годовалым ребенком Комитас лишился матери и остался на попечении своего отца и тетки, заменившей ему мать. Когда маленькому Соломону исполнилось семь лет, отец определил его в местную армянскую школу, где он пробыл 4 года; по окончании ее отец отправил его в Бруссу в 3-х классное училище, но здесь он оставался недолго, так как смерть отца заставила его вернуться в Кутину. Круглым сиротой он остался на руках дяди и уже упомянутой тетки, исполнявшей обязанности диаконисы в местной армянской церкви. У маленького Соломона оказался отличный голос, и вот с ранних лет, под руководством своей второй матери, будущий блестящий представитель армянской церковной музыки, чуткой душой впитывает в себя красоты древних армянских церковных песнопений, к которым еще не прикоснулась рука европейской музыкальной цивилизации. Случай помог маленькому Соломону и дал ему возможность одновременно продолжить свое образование и развить музыкальный талант. В 1881 году Католикос Георгий IV, большой любитель музыки, желая организовать образцовый кафедральный хор, предложил своим епархиям привезти в Эчмиадзин для бесплатного обучения в академию наиболее способных мальчиков, обладавших хорошими голосами и слухом. В Кутине из 25 кандидатов выбор пал на Соломона, и местный

³ Агулис был одним из процветающих населенных пунктов области Гохтан исторической Армении. В автобиографии Комитас пишет, что его предки – зоки из села Цхна этой области. А. З.

архимандрит Георг Дердзакян, ехавший в Эчмиадзин для рукоположения в епископы, отвез с собой и маленького избранника судьбы. Характерно отметить, что малолетний Соломон, великолепно знавший армянскую церковную службу, не говорил по-армянски. Последнее обстоятельство дает мне повод отметить характерную роль армянской церкви в жизни родного ей народа, и это, быть может, нам отчасти объяснит, почему именно армянскому монаху суждено было стать столь выдающимся деятелем в области собирания народных песен. Жестокая судьба некогда великой Армении с давних пор разбросала сынов ее по всему свету, и вдали от своей великой матери-родины они давно бы забыли о ней и ассимилировались бы с окружающим населением, не будь армянской церкви, сыгравшей в духовном объединении армян столь выдающуюся роль. И действительно, армянская церковь, кроме выполнения чисто религиозных функций, была всегда тем путеводным огоньком, тем жертвенником, на который сыны Армении приносили свои лучшие мечты о будущем своей родины. Служители армянской церкви всегда были теми ангелами-утешителями, которые приходили на помощь сынам родины в их несчастиях и вместе с тем были лучшими хранителями заветов армянской культуры, уцелевшей, несмотря на роковые удары истории, прошедшей через века ожесточенной борьбы. Отсюда ясно, что именно церковь научила маленького Соломона с ранних лет, несмотря на незнание им в детстве родного языка, любить свою родину, ее обычаи, ее церковные песнопения, кстати сказать, по твердому убеждению Комитаса, происшедшие в значительной части своей из народных мелодий. По приезде в Эчмиадзин, Соломон поступил в академию, где наряду с науками усердно занимался теоретически и практически церковным пением. Учителями и руководителями его были ученики известного Ташчяна, в свою очередь учащегося у знаменитого реформатора армянской церковной нотации Амбарцум баби-Лимончианца. Как известно, старинная армянская церковная нотация, подобно старинным нотам обозначениям греческой и латинской церковей, называющихся (одно слово неразборчиво.– А. З.), подобно старинному русскому крюковому обозначению, также выражается в необыкновенно сложной системой значков, называющихся хазами <neumes>. Ключ к чтению (одно слово неразборчиво.– А. З.) и крюков составлял и ныне составляет предмет тщательнейшего исследования современных музыкальных ученых, но благодаря необыкновенной своей многосложности являет еще до сих пор очень спорную область. Неизменное обозначение в большинстве случаев только указывает орнамент мелодии, и чтецу нужно, кроме знания (одно слово неразборчиво.– А. З.) обозначения, быть еще чутким знатоком самого характера, самой внутренней (одно слово неразборчиво.–

А. З.) церковных песнопений, чтобы достаточно хорошо разбираться в старинных рукописях. Для облегчения обиходного церковного пения уже упомянутым Лимончианцем, знатоком армянского хазового письма, было изобретено новое нотное письмо с точным обозначением каждой ноты, причем для самих значков были им взяты внешние очертания (одно слово неразборчиво.– А. З.). Характерно отметить, что Лимончианц в своей нотации не воспользовался линейной нотацией Запада, сохранив буквенный характер обозначения. Несмотря на кажущуюся трудность пользования таким письмом, оно оказывается достаточно гибким для записания труднейших в ритмическом отношении восточных мелодий.

Надо предполагать, что именно в ученические годы Комитас уже приобрел то глубокое знание церковных напевов, которое наложило печать на характер его последующих музыкальных работ. Но кроме знаний в области церковного пения уже в годы ученичества в Соломоне пробуждается любовь к народным песням. Уже в эти годы он пользуется каждым случаем, чтобы записать эти мелодии. Приезд товарищей с вакаций часто приносит ему возможность услышать новые песни, которые он немедленно нотирует. Но все эти попытки пока остаются в тени, и ни со стороны самого Соломона, ни со стороны его учителей не делается шагов к приобретению им музыкального образования Запада.

В 1890 году учеником 6 класса Комитас принял сан архидиакона; в 1893 году он кончил академию, а в 1895 году принял сан архимандрита. В монашестве Соломон получает имя Комитаса, имя, которое ему суждено было обесмертить не только для Армении, но и для всех истинных ценителей народной музыки. Одновременно с окончанием академии он получает место учителя пения при академии. Скучное содержание (около тридцати рублей в месяц) тем не менее дает ему возможность приобрести плохенькую фисгармонию и некоторые учебники по музыке. Наряду с попытками самостоятельно овладеть тайнами западноевропейской мудрости он продолжает записи народных песен и продолжает это настолько успешно, что через несколько лет им уже записаны в окрестных деревнях до трехсот мелодий. Но стремление получить всестороннее музыкальное образование не дает возможности молодому монаху удовлетвориться местом учителя церковного пения в далеком Эчмиадзине. На субсидию, данную А. И. Манташевым и другими армянскими меценатами, он едет сначала в Тифлис, чтобы заниматься с известным армянским духовным композитором Экмалианом. Но эти занятия длятся только шесть месяцев. Не удовлетворившись ими, Комитас направляется сначала в Лейпциг, где остается около года, а потом в Берлин к профессору Рихарду Шмидту. Здесь Комитас проводит 3 года в интенсивных занятиях со своим новым учителем. Он проходит гармонию, контрапункт,

попутно строгий стиль, формы и т. д. Новый ученик Шмидта оказался в высшей степени старательным, но ярко выраженная восточная натура его, его любовь и стремление к изысканным гармониям Востока создает постоянно почву для споров между европейцем учителем и непокорным учеником. Эти споры особенно разгораются при гармонизациях армянских песен, привезенных Комитасом в Берлин. Здесь он упорно отстаивает свои непокорные гармонизации, и к чести Шмидта надо сказать, что он нередко уступал, складывая оружие своей теоретической критики перед ясно выраженным оригинальным талантом своего ученика, говоря при этом: «Если вам так нравится и вы убеждены в красоте данного способа гармонизации, пусть остается так, как вами написано». Нужно отметить также, согласно рассказу Шмидта о занятиях с Комитасом, постоянное стремление Комитаса к пользованию квартсекстанкордом (кстати сказать, очень специфичным для гармоний Кавказа) вне пределов, указанных в учебнике гармонии. Это свидетельство самого профессора говорит опять-таки о ясно выраженной гармонической индивидуальности Комитаса. Но иногда стремление к оригинальным гармониям уже переходит в пределы терпимости строгого хранителя заветов прошлого гармонического благополучия в духе учебника Бусслера. Тогда он окончательно выходит из себя, и Комитас впоследствии с большим юмором рассказывал, как однажды за уроком, наткнувшись в задаче на недозволенную последовательность, Шмидт не вытерпел, сел на клавиши рояля и, повторив это несколько раз, приговаривал: «Вот ваши аккорды, вот ваши аккорды» ... Из немецких композиторов Комитас в годы ученичества особенно увлекался Вагнером, причем ему особенно нравилось необыкновенно тонкое обращение Вагнера с текстом, т. е. именно та черта, которую мы должны впоследствии отметить в сочинениях самого Комитаса. К берлинскому периоду его жизни относятся также его попытки композиции в западноевропейских музыкальных формах.

Но эти попытки его не удовлетворяют. Он находит в них слишком сильное влияние окружающей его музыкальной среды, недостаток ясно выраженной оригинальности, стремление к которой красной нитью проходит через всю его композиторскую деятельность. Неуклонимо строгий к себе как к художнику он оставляет свои берлинские сочинения неопубликованными.

О значении годов учения в Берлине для художественного развития натуры Комитаса я буду говорить ниже, а пока замечу, что, по свидетельству его друзей, он сам не особенно любил вспоминать об этих годах учения, но все же отдавал должное своему профессору, прибавляя при этом, что именно в Шмидте, хотя и не чувствующем характерных тонкостей музыки Востока, он, тем не менее, нашел достаточно бережное отношение к своей музыкальной индивидуальности. Мало

того, когда впоследствии в Эчмиадзине зашел вопрос о том, куда послать для изучения музыки Запада Спиридона Меликяна, кстати сказать, одного из достойнейших преемников заветов Комитаса, то Комитас настоял на посылке Меликяна именно в Берлин к Шмидту, ссылаясь на вышеприведенное свое мнение о нем.

«Закавказское Слово», 28. II. 1919.

< II >

В 1899 г., после четырехлетнего пребывания в Германии, окрыленный сознанием приобретенной техники, полный стремлением найти новые вдохновения в песнях родной страны, Комитас возвращается в Эчмиадзин и снова занимает пост учителя при Академии. Здесь он с лихорадочной энергией принимается за запись и обработку народных песен. Он пользуется каждым вакационным периодом, чтобы отправиться часто в дальние поездки с целью записи. По свидетельству очевидцев, Комитас отличался редким чутьем в отыскании песенного материала, редким умением подойти к народным певцам, заставить их петь и петь охотно. Последнее особенно важно, т. к. при небрежном пении могут ускользнуть тонкости ритмики и мелодического строения песни, часто совсем не поддающиеся нотному обозначению, в особенности, когда дело доходит до четвертей тонов, а подчас и более мелких делений. В селах он часто организовывал хоры, игры и, сидя где-нибудь незаметно в стороне, спешил занести подслушанное им на бумагу. В деле записи народных армянских песен следует особенно отметить значение храмовых праздников, т. наз. тон (по-армянски), сопровождавшихся играми, песнями и плясками. Зачастую на этих праздниках вдохновенными народными певцами слагались новые песни. Нечего говорить, что постоянным гостем на этих праздниках был Комитас. Что касается техники записи, то, по свидетельству учеников Комитаса, последняя была у него необыкновенно развита*). Как образчик этой техники, рассказывают про один эпизод, когда некие музыканты-путешественники посетили Комитаса в Эчмиадзине. При свидании один из них предложил спеть записанную им с величайшим

*) Между прочим, во время процесса записания он никогда не прерывал певца. Последнее часто делается неопытными записывателями, и это зачастую нарушает цельность музыкального воплощения песни и может вредно отозваться на записи.

трудом одну из курдских песен, вообще говоря, плохо поддающихся нотной записи. Комитас, прослушав песню всего один раз, тут же записал ее, к величайшему удивлению присутствовавших. Характерно отметить, что при записывании песен, Комитас, несмотря на свое западноевропейское музыкальное образование, пользовался всегда буквенной нотацией Амбарцум-баби. Видимо, они представляли для него большие удобства, чем музыкальное письмо Запада, которым он, конечно, владел в совершенстве. Кто знает, быть может, буквенному нотному письму еще предстоит сыграть роль в будущем, не только в деле записи народных мелодий с более мелкими тоновыми дроблениями (четверть тонами и т. д.), но и вообще в усложненной гармонии грядущего нового стиля.

Наряду с записью народных песен, Комитас ревностно занимается обработкой уже записанных мелодий, причем именно в этот период своей деятельности он работает над чеканкой своего оригинального музыкального стиля, позволившей ему впоследствии опубликовать свои три сборника, эти три шедевра, на которых, по моему убеждению, будет обосновываться впоследствии дальнейшее развитие армянской музыки. В этой работе он проявляет редкий педантизм, редкую строгость к себе, постоянное стремление вновь изменить, улучшить, уточнить филигранную отделку той рамки, в которой должен был предстать публике его кумир, его родная песня. Чуть ли не ежемесячно, чуть ли не к каждому новому публичному исполнению он дает все новые и новые редакции своих обработок. В такой неустанной работе проходит время до 1905 года. В этом году Комитас впервые выступает с хоровыми концертами-лекциями в Тифлисе и Баку, прошедшими с выдающимся успехом. До того времени кроме музыки зурначей да всякого рода фортепианных переложений народных танцев, подчас плохих, общество Тифлиса и Баку знало только национальные армянские песни, в большинстве случаев положенные на мелодии типично европейского характера, исполнявшиеся на концертах Карамурзы – деятеля типа Славянского. На концертах же Комитаса публика впервые услышала в отличном хоровом исполнении дотоле ей совершенно неизвестные мелодии далекой Армении и сразу же по достоинству оценила их своеобразную прелесть. Этой справедливой оценке обществом долголетнего труда Комитаса, этому успеху концертов прежде всего способствовал сам Комитас, вдохновенный певец (правда, не обладающий первоклассным голосом, но зато могущий проникновенным исполнением заставить слушателей забывать этот недостаток). Комитас кроме того был еще и превосходный лектор, умевший излагать подчас самые сухие теоретические положения так сжато и вместе с тем так ясно, что публика слушала его с неослабным интересом. Живости его лекций много способствовали и его

природное остроумие и юмор, которыми он как чуткий лектор пользовался всегда, чтобы поднять настроение аудитории в те моменты, когда он замечал, что внимание слушателей начинает ослабевать. Окрыленный своими концертными успехами на родине, Комитас в следующем же году предпринимает концертную поездку в Западную Европу. Со своим хором он посещает Швейцарию и Париж, и здесь, в мировой столице, постоянный успех сопутствует его публичным исполнениям, где он всюду, кстати сказать, выступал в своей скромной одежде монаха, с типичным остроконечным клобуком на голове. В этом году появляется в Париже с французским переводом первый его сборник обработок армянских песен, сразу же оцененный по заслугам музыкальными деятелями Парижа. Об отношении Западной Европы к армянским песням Комитас часто говорил своим друзьям, что французы проявили гораздо больше чуткости и понимания музыки Востока, чем немцы. И это очень типично для французов, за последние десятилетия оставивших далеко позади себя немцев, в смысле поступательного движения не только в музыке, но и в искусстве вообще. После парижских триумфов летом 1907 года Комитас возвращается снова на прежний пост в Эчмиадзине. Но здесь он остается всего 2 года. Отрезанность культурной музыкальной жизни, убогая обстановка, скудные материальные средства, не хватавшие на приобретение необходимейших музыкальных сочинений и книг по музыке, отсутствие под рукой даже рояля, ибо рояль стоял в певческом классе, где зимой бывало зачастую холодно – в келье же приходилось довольствоваться прежней плохенькой фисгармонией – все это вместе взятое, естественно, заставило Комитаса искать обстановки более подходящей для его композиторской деятельности и покинуть Эчмиадзин, тем более, что богатейший песенный материал (до трех тысяч) им уже был набран, и с этой стороны дальнейшее пребывание в центре Армении не представлялось более необходимым. Нужно было привести весь этот материал в порядок, а как педантичен и строг к самому себе в этом отношении был Комитас, мы уже имели случай говорить. К тому же, в душе композитора давно возникли планы написать армянскую оперу в совершенно новом оригинальном стиле, свободном от влияния греческого распева. Создание оперы из материала народных песен было также заветной мечтой Комитаса. Для осуществления всех этих обширных планов Комитас переселяется в конце 1909–1910 учебного года в Константинополь. Здесь он устраивается вместе со своим приятелем художником Терлемезяном, украсившим своими произведениями новое обиталище композитора. Известность Комитаса как знатока народных песен не только Армении, но и Турции продолжает расти. Комитас становится одним из близких друзей турецкого принца Сабаха Эдина, который не перестает увлекаться

мастерским исполнением Комитаса турецких народных песен. Концертная деятельность его также продолжается. Следует отметить его поездку в Египет. В отношении обработки песен он неустанно продолжает свое дело, но наряду с этим работает над оперным текстом в сотрудничестве с поэтом Ованесом Туманяном «Ануш», а также над обедней. Из этих работ Комитаса опубликованы незадолго до начала войны только 2 сборника обработок армянских песен, два шедевра, которые, несмотря на их малый сравнительно объем, уже обесмертили их создателя. Почему такая скудость? Тому ли причиной слишком строгая самокритика или просто-на-просто недостаток материальных средств для издания? Я думаю последнее. Об «Ануше» и обедне Комитаса, над которыми он не переставая работал, мы, к большому сожалению, судить лично не можем, но, по рассказам друзей Комитаса, задумано было то и другое крайне интересно. Вот образчик идеи построения «Сват Сват Господа Саваеф» из его литургии. Имея с Мусоргским общую черту – реально представить себе творимый им музыкальный образ, он следующим образом воплощал в своем художественном воображении этот церковный текст. Он представлял себе шествие Царя Царствующих в надзвездных высях окруженного (одно слово неразборчиво.– А. З.) ангелов, пение которых сначала сава доносятся до сынов земли. Далее пение ангелов становится все слышнее и при словах «испол небо и земля слави его», сливается в апогейном *fortissimo* с пением сынов земли. Приведенный пример заставляет нас подозревать какие новые красоты, как в смысле вдохновенно надуманной общей концепции, так и в чисто музыкальном своем осуществлении, должна была заключить обедня Комитаса. Но наступившая война тяжким бременем легла на деятельность его, а переход Турции на сторону Германии и последовавшая за этим армянская резня сыграла трагическую роль в жизни Комитаса. Несмотря на свою близость к принцу Саббах Эдину, он все же был отправлен с другими армянскими деятелями в Конию пешком. По пути туда, глубоко потрясенный всеми виденными им ужасами армянской резни, он не переставая плакал. Энергичное вмешательство Соединенных Штатов успело спасти от неминуемой гибели в числе уцелевших до того времени армян и Комитаса. Но было уже поздно. Хрупкая натура, перенесшая два нервных расстройства, не выдержала. Комитас впал в психический недуг. Какого его состояние в данный момент – неизвестно. Так трагически пресеклась деятельность большого человека, деятельность, сулившая так много не только для родного народа Комитаса, но и для всех друзей истинной духовной культуры.

В чем же заключается высококультурное значение автора трех небольших сборников песен, которые, казалось, по своему малому объему не могли бы составить труда всей жизни человека, посвятившего себя исключительно музыке.

Если бы композиторская деятельность Комитаса и выразилась бы только в этих трех сборниках (из биографии его мы видим, что это не так), то и тогда значение Комитаса было бы непреходящим, ибо прежде всего он первый обратил серьезное внимание на народные песни Армении. Он первый почувствовал все культурное и эстетическое значение народных песен его страны для всего армянского народа. Он первый почувствовал, что здание будущей армянской музыки в смысле оригинальных композиций может быть построено только на прочном фундаменте этих песен. Он первый указал, что те национальные песни, которые пелись в городах и которые уже начали переходить в деревню, европейского происхождения и в своей мелодике не имеют ничего общего с настоящей армянской песней. Комитас первый, с убеждением, во всеуслышание сказал армянам: «Вот ваши настоящие песни, они созданы народом, к которому вы принадлежите, и вы должны их любить» (его собственные слова). А как их нужно любить, Комитас показал всей своей жизнью. Ведь одна запись трех тысяч народных песен, поющих в отдаленных, глухих уголках горной Армении, куда Комитасу приходилось пробираться не во главе материально хорошо обставленной этнографической комиссии, а в качестве убогого путника, окрыляемого только одной беззаветной любовью к своему делу.

Но, установив истинный характер армянской мелодики, Комитас не ограничился этим. Перед ним стояла новая громадная задача – создание гармонического и контрапунктического стиля в духе настоящего Востока, могущего породить впоследствии новое слово в музыке. И Комитас подошел к этой задаче тем единственным верным путем, который в данном случае только и был возможен. Он начал не с подражания Западу, а с непосредственной работы над тем плодотворным материалом, который он сам собрал в народе и который единственно мог породить стиль, не найденный Комитасом в Берлине у Шмидта.

Обрабатывая песни, как мы уже знаем, со всей педантичностью (по свидетельству его учеников) строгостью, постоянно изменяя, постоянно оттачивая тонкости аккордового воплощения, Комитас постепенно все глубже и глубже вживался во внутренний дух песни и таким образом получал возможность путем чистой интуиции, т. е. путем самым ценным, проникнуться той высшей закономерностью, которая, увы, не находится в учебниках гармонии, и которую можно найти путем лишь внутреннего духовного слияния с сущностью песни. И действительно, если мы будем разбирать гармоническую фактуру обработок Комитаса – мы увидим кроме необыкновенной прелести, тонкости, обаятельности его гармонии, по меткому выражению Черепнипа, какого-то гармонического

(одно слово неразборчиво – *А. З.*), – еще и необыкновенную оригинальность, органически проистекающую из сущности самой песни.

Разбирая хоровые обработки Комитаса, мы увидим опять-таки новое слово в области контрапунктического изложения. Кроме чисто гармонического средства в смысле созвучания, его хоровые голоса, образующие целое, не только сами по себе свободно движутся в живой мелодической и ритмической прелести, но кроме того носят в себе ярко выраженный отпечаток народной мелодии, хотя и принадлежащей перу современного музыканта.

Это характерная черта не одной какой-либо обработки, а характерная черта всех обработок в их целом, дающая им значение не только ритма для народной песни, а именно образцов нового восточного гармонического и контрапунктического стиля, которому впоследствии, думается мне, суждено развернуться в более крупные музыкальные формы – стиля, отцом которого следует считать Комитаса.

Переходя к детальному рассмотрению его обработок, отметим в его первом сборнике очаровательную в своей пастушеской прелести серенаду (№ 3) влюбленного, в которой чувствуются благовоющие ароматы горных цветов после вешнего дождя. Особого внимания заслуживает трагическая песня эмигранта с ее импрессионистическим сопровождением, вначале напоминающим музыку капель дождя, падающих с мокрых листьев лесных гигантов Кавказа. Вообще все сопровождение песни эмигранта – маленький шедевр музыкального импрессионизма, по тонкости своей могущего быть сравнимым только с лучшими вещами Дебюсси, Равеля. Далее идут две очень интересные обработки одной и той же песни, первая из них с фортепианным аккомпанементом, вторая с хоровым сопровождением. Очень характерна, как по гармонии, так и по применению имитационного стиля «Мой возлюбленный ушел за гору». Но вещь, которая представляет собой высшее достижение всего первого сборника, вещь, стоящая даже выше песни эмигранта – это полный сладостной неги ноктюрн. И контрапунктическое (имитационное) – изложение, и (одно слово неразборчиво.– *А. З.*) гармонического склада, и замечательное чувство голосовой инструментовки – все это одно сплошное очарование. И вместе с тем, ноктюрн занимает всего одну страничку хорового изложения. Как мало и вместе с тем, как много.

В следующих двух сборниках, вышедших несколько лет спустя после первого, мастерство Комитаса, показанное им в первом сборнике, как бы еще оттачивается. В сборнике, посвященном исключительно хорам, технические особенности стиля, как в смысле контрапунктического изложения, так и в смысле разнообразия голосовой инструментовки получают свое полное выражение. В другом сборнике, посвященном исключительно одноголосным мелодиям, мы находим еще большую

изошренность гармонического склада, наряду с изысканностью, носящей отпечаток примитива, столь подходящего к духу самой песни. Относительно поэтического колорита всего этого сборника я бы сказал, что он носит на себе отпечаток какого-то просветленного пантеизма, отраженного в душе народа, постоянно созерцающего далекое небо, окаймленное горными вершинами и отражающееся в кристаллических водах горных озер. Попутно выскажу пожелание скорейшего перевода на один из европейских языков последних двух сборников, изданных исключительно на армянском языке, дабы сделать их достоянием всей Европы. Быть может, цех поэтов, организовавшийся в Тифлисе⁴, мог бы в сотрудничестве с армянскими поэтами прийти на помощь в этом деле и издать хотя бы в виде приложения переводы текстов. При разборе песенных обработок Комитаса я не коснулся предисловия к первому сборнику, где он в коротких словах выражает мысль большого значения относительно несоответствия в армянских песнях акцентов сильному времени, указываемого тактовой чертой, которая, по мнению Комитаса, служит лишь для обозначения единства счета. В этих мыслях он близко подходит к основам музыкальной речи Б. Л. Яворского, ученика Танеева, одного из самых выдающихся теоретиков нашего времени. О вышеприведенных мыслях Комитаса я упомянул еще и потому, что в лице его мы имеем выдающегося музыкального теоретика. Я уже говорил о Комитасе как о знатоке армянского (одно слово неразборчиво.– А. З.) письма. Свой теоретический труд он именно посвящает его разбору в связи с историей происхождения армянских песен и церковных напевов. Незадолго до войны он говорил своему ученику и другу Аракеляну, что им найден ключ к армянскому нотному письму. Тоже самое подтверждает и свидетельство его другого друга художника Татевосяна, по словам которого, Комитас совершенно свободно разбирался в старинной фамильной книге, принадлежащей роду Татевосянов и содержащей (одно слово неразборчиво.– А. З.) знаки. Всякий русский музыкант, старавшийся проникнуть в красоты знаменного распева, хранящегося в тайниках старинного крюкового обозначения, поймет, какой величайший интерес представляет его творческий труд. Но где в настоящее время находится этот труд, где находятся рукописи записанных им трех тысяч песен, где эскизы обедни, оперы? В каком состоянии находится он сам, этот современный ашуг, могущий действительно сказать, что жизнь его была песней. Есть ли у него средства в данный момент, которые позволили бы приступить к лечению в условиях наивозможно благоприятных. Быть может, есть еще возможность вернуть ему здоровье и силы. Быть может,

⁴ О «Цехе поэтов» подробно см.: А. Закарян. Тифлисский «Цех поэтов» Сергея Городецкого и сборник «Акмэ». Ереван, 2011. А. З.

возможно обратиться к Американской миссии, которой принадлежит честь спасения жизни этого выдающегося деятеля, с тем чтобы получить точные сведения о состоянии его здоровья, на основании которых можно было бы знать, какого рода помощь нужна в данный момент Комитасу. Вообще в судьбе этого выдающегося человека следует принять деятельное участие⁵.

Вложив в сокровищницу человеческого знания так много ценного, обогатив музыкальный мир новыми красотами, Комитас являет всей своей жизнью пример того пути, который должен избрать всякий музыкант, желающий сохранить характерные черты самобытности не только свои личные, но и своего народа. Мы знаем, что и те и другие черты в его сочинениях налицо. И, отметив его самобытность, мы особенно упираем на то, что Комитас не побоялся пройти через искус западноевропейского музыкального знания, ибо он внутренне понимал, что истинная самобытность творчества бывает или прирожденной, и в этом случае за нее бояться нечего, или же ее вовсе нет, и тогда ее никакими средствами не получить. Комитас приобрел технику музыкального письма, но не стал ее рабом, а заставил эту технику служить своему новому творчеству. Это западноевропейское музыкальное знание было для Комитаса тем мостом, по которому он свободно перешел через пропасть, на дне которой копошатся дилетантизм, безвкусие, оригинальничание, творческая немочь и прочие (одно слово неразборчиво.– А. З.) – в страну свободных возможностей, которые он и явил в своих сочинениях.

Заканчивая статью, я хочу еще указать на необыкновенную красоту, полную трагического пафоса, заключенную в шествии ашуга-мученика в образе монаха к лобному месту страдания целого народа, в Конюю.

Думаю, что этому поэтическому образу еще суждено воплотиться в творчестве одного из поэтов Армении⁶. Будем душевно надеяться, что певец Армении не погиб; но что дело его не погибло, это мы можем с радостью утверждать. Перед нами лежит (одно слово неразборчиво.– А. З.) сборник армянских песен, собранных в Александропольском уезде учеником Комитаса, композитором Спиридоном Меликяном и композитором Тер-Гевондяном, в лице которых мы имеем достойных преемников дела Комитаса, являющегося по справедливости крестным отцом их сборника.

⁵ Откликом на сказанное было основанное в начале мая 1919 г. в Тифлисе «Общество имени Комитаса».

А. З.

⁶ Как и предугадал Ф. Гартман, из грядущих армянских поэтов, в частности, гениальный Паруйр Севак (1924–1971) в 1959 г. написал поэму «Неумолкаемая колокольня». В ней показана судьба Комитаса – с рождения до потери рассудка после пережитого ужаса Геноцида, затем смерти и «возвращения на родину» – в 1935 г.

А. З.

Ф. Гартман

«Закавказское Слово», 1. III. 1919.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԸ ԵՒ ՆՐԱ ՀԱԻԱՔՈՂՆԵՐԸ⁽¹⁾

<Ա>

Թիֆլիզի Երաժշտանոցի տեսուչ Պ. Ն. Ն. Չերեպնինի * նախաձեռնությամբ շուտով կայանալու են երկու նուագահանդեսներ՝ նուիր-ուած հայկական եւ վրացական երաժշտութեան: Թիֆլիզի Երաժշտական Բարձրագոյն Դպրոցի այդ գովելի ձեռնարկը շատ մեծ նշանակութիւն ունի, ոչ միայն որովհետեւ պիտի ծանօթացնէ հասարակութեանը իր հարազատ ժողովուրդների երաժշտութիւնը, այլ այդ նուագահանդեսները ունին եւ ընդհանուր մշակութային նշանակութիւն: Դրա մասին կ'ուզեմ մի քանի խօսք ասել:

Կովկասը, որ այժմ դէպի նոր կեանք է վերածնում, ազգագրական տեսակէտից մասնաւոր հետաքրքրութիւն է շարժում: Նա ունի այնքան այլազան ժողովուրդներ, որոնք ապրում են նրա համեմատաբար փոքր տարածութեան վրայ: Անյիշատակ ժամանակներից այդ ժողովուրդները իրենց լեզուն, մշակոյթն ու գեղարուեստը բերին այս վայրենի անմատչելի երկիրը: Մշտական արինահեղ կռիւների մէջ, մերթ արտաքին թշնամուն հեռացնելով, մերթ ներքին երկպառակութիւնները զսպելով, Կովկասի ժողովուրդները ուժեղացրին իրենց մէջ սերը դէպի ազատութիւնը եւ ինքնուրոյնութիւնը: Անմատչելի ու խիստ բնութիւնը առաւել եւս պահպանեց նրանց օտար ազդեցութիւններից: Գիտական հետազօտողի համար՝ հնութիւնը պահուել է այստեղ անարատ, իսկ երաժիշտ ազգագրողին համար՝ ժողովրդական երգը պահպանել է իր անբիծ մաքրութիւնը:

¹⁾ «Անահիտ»ի Ե. տարուան թիւ 1-2ին մէջ հրատարակած էինք Օր. Մ. Բարայեանի ձեռքով կատարուած թարգմանութիւնը հայ ժողովրդական երաժշտութեան եւ Կովկաս վարդապետի մասին բանախօսութեան մը գոր 1919ին Թիֆլիսի մէջ արտասանած էր ռուս յայտնի երաժիշտ Թ. Հարտման, որուն մէկ գեղեցիկ Սէնֆոնին նուագուեցաւ վերջերս՝ մեծ յաջողութեամբ՝ Փարիզի հոշակաւոր Լամուրէօ նուագահանդեսներուն մէջ: Այսօր կը հրատարակենք թարգմանութիւնը նոյն նիւթին վրայ Պ. Հարտմանի թիֆլիսեան ռուս թերթի մը տուած երկու շահեկան յօդուածներուն որ կը լրացնեն ինչ որ քսած էր իր բանախօսութեան մէջ: Ծ. Խ.

* 1918 թ. օգոստոսի 15-ին «Слово» թերթը հաղորդում է. «Պետրոգրադից Թիֆլիս է ժամանել նշանավոր կոմպոզիտոր և պետրոգրադյան կոնսերվատորիայի պրոֆեսոր Ն. Ն. Չերեպնինը, ով ընտրվել է Թիֆլիսի կոնսերվատորիայի դիրեկտոր»: Սեպտեմբերի 30-ին տեղի է ունեցել նրա համերգը (տե՛ս «Кавказское Слово», 3. X. 1918): Ա. Զ.

Մակայն ժողովրդական երգին մէջ պէտք չէ միայն որոնել նրա ազգագրական հետաքրքրութիւնը: Դրա նշանակութիւնը նախ եւ առաջ ընդհանուր մշակութական է: Երաժշտութիւնը ժողովրդի հոգու կատարեալ արտայայտութիւնն է: Իր անարատ նախնականութեան մէջ՝ ժողովրդական երգը պարունակում է բաղադրութիւն գեղարուեստական չափերի ու ներդաշնակութիւնների: Ժողովուրդը իր թրթռուն հոգու զօրութեամբ քաղում է նոցա իր բիրեղային աղբիւրների կիսագիտակցական խորքից: Նա ապականուած չէ օտար ազդեցութիւններից եւ անմիջական է իր գեղեցկութեան մէջ, ինչպէս է սոխակին երգը: Արեւելեան երգը իր անուշաբոյր բանաստեղծական էութեամբ, նուրբ ներդաշնակութեամբ, ճոխ բազմազան չափերով, Եւրոպային դեռ այնքան քիչ ծանօթ, իր մէջ պարունակում է ոչ միայն Կովկասեան ազգերի երաժշտութեան զարգացման բողբոջները, այլ եւ ամբողջ Արեւմուտքի: Այդ բողբոջներից պիտի ծաղկի ապագայում այն երաժշտական ովասիսը, որի շուքին տակ ապաստանարան պիտի գտնեն երաժշտական ճշմարտութիւն որոնող ծարաւած ու տարուած արեւմտեան Եւրոպայի ստեղծագործութիւնների լաւագոյն ներկայացուցիչները, նոքա որոնք տենչում են դուրս ելնել երաժշտական այն ոճերից ու սահմաններից եւ որոնց ամենաքանքարաւոր ներկայացուցիչները իրենց վերջին խօսքը ասած են, իր գերզարգացման մէջ տուած են այն ինչ որ ցայտուն կերպով ներկայացնում է այժմեան Գերմանիայի գեղարուեստը:

Նոր ճանապարհներ որոնողները նոքա են, որ իրենց դրօշակին վրայ վառ պահպանում են ռուսական նորագոյն դպրոցի հանճարեղ վարափեր^{*}: Այդ ռահվիրաները միշտ մօտ են եղած ժողովրդական երգին եւ ինչպէս այժմեան նկարիչները իրենց ներշնչումը գտել են ռուսական ժողովրդական արհեստաւորների (artisan) ստեղծագործութեան մէջ, Բաւարիայի հին ապակեգործների (glassmalerei) նախնական ցեղերի – հնդիկների, նեգրերի – ստեղծագործութիւնների մէջ, երգահանները՝ ուսումնասիրելով ժողովրդական երգերը՝ նրանց մէջ լուծումը գտան այն բոլոր չափերի եւ ներդաշնակութիւնների խնդիրների, որ այլեւս չէին կարող գտնել արեւմտեան Եւրոպայի վերջին դարերի երաժշտական ոճին մէջ: Պարզ է եւրոպական մշակոյթի տեսակէտից, թէ ի՞նչ մեծ նշանակութիւն ունի իր անարատ ձեւով պահպանելը Կովկասի գլխաւոր հարստութիւններից մինը – նրա ժողովրդական երգը: Կը գայ ժամանակ, երբ արեւմտեան քաղաքակրթութիւնը իր դոները լայն պիտի բանայ Կովկասի ժողովուրդների առաջ: Աւա դ, օգտուելով Եւրոպայի մշակոյթի բարիքներից, նոքա – կովկասեցիները – իրենց երգերը կարող են ենթարկել եւրոպական ազդեցութեան: Ժողովրդական երգը չափազանց քնքոյշ եւ զգայուն ստեղծագործութիւն է. իր չափի, ձայնաշարի

* Տեքստում այսպէս է. տե՛ս ռուսերենում:

բարձրացնելը կամ իջեցնելը, նոյն իսկ մի 1/8 աստիճանի, ճակատագրորեն կարող է ազդել նրա կազմութեան վրայ, նուազեցնելով նրա բնորոշ գեղեցկութիւնը, ձեւին կատարելութիւնը, եւ այդպիսով խորտակել նրա ամբողջութիւնը:

Կրկնում եմ՝ հասել է ժամկետը ժողովրդական երգը հաւաքելու. անհրաժեշտ է, առանց ժամանակ կորցնելու, ամէն կերպ օգնութեան հասնել նրա քուրմերին – նրանց, որոնք չնայած անասելի դժուարութիւնների, շնորհիւ իրենց անյաղթ եռանդի կատուցել են կովկասեան ժողովրդական երգի տաճարը: Պալիէվի, Արակչէէվի, Բալանչիվաձէի, Մելիքեանի, Տէր Ղեւոնդեանի եւ ուրիշների անունները ամէնքի բերանն են: Պատմութիւնը նրանց չի մոռանայ: Հեռու չէ եւ ամբողջ Եւրոպայի գնահատումը, եւ նրանք արժանի են, այն մեծ դժուարութիւնների համար, որ կարողացել են յաղթահարել:

Այդ երգ հաւաքողների մէջ կայ մէկը, որ գուցէ երբեք չի տեսնելու իր ամբողջ կեանքի աշխատութեան ապօթեօգը, իր բարձրագոյն իղձերի իրականացումը: Այդ մարդը չկարողացաւ դիմանալ այն տաժանելի դժբաղդութիւններին եւ սարսափներին, որ թափուել էին իր արիւնլուայ եւ բազմաչարչար հայրենիքին վրայ: Նրա նուրբ էութիւնը անզօր եղաւ մաքառելու եւ դիմադրելու այդպիսի ցնցումների: Խօսքս Կոմիտաս վարդապետի մասին է, այժմ ծանր հոգեկան հիւանդ Պոլսում: Նա հաւանօրէն գուրկ է նիւթական միջոցներից ու խնամքից, գուրկ հոգեկան տաքուկ փայփայանքից եւ ընտանիքից ու մօտիկներից, որ գուցէ անհետացած են հայկական կոտորածների հրէշային օրերին*: Թէեւ Կոմիտասը մեծ յաջողութիւններ ունեցաւ Արեւմուտքում, բայց նրա անունը համարեայ անյայտ է մեր հասարակութեան մեծ մասին, նոյն իսկ երաժշտական մասնագէտներին: Դժբաղդաբար նրա համերգները տեղի չէին ունեցած ոչ Պետրոգրադ, ոչ էլ Մոսկուա: Նրա վերջին հաւաքածոները լոյս են տեսել պատերազմից քիչ առաջ եւ այդ ժամանակ գեղարուեստական խնդիրները մոռացուած էին շատերի համար: Այս բոլոր հանգամանքները ինձ մտածել են տալիս, որ մեր զարգացած հասարակութեան մէջ շատեր կան որ ծանօթ չեն Կոմիտասի գործունէութեան կամ գուցէ միայն նրա անունը լսած լինեն: Նոցա համար անելորդ չեմ համարում այս տողերը նուիրել նրա կեանքի եւ գործունէութեան: Բոլոր տեղեկութիւնները ստացել են սիրալիր կերպով նրա բարեկամներից ու նրա քանքարը յարգողներից:

Այս տողերը գրելիս ունիմ եւ մի ուրիշ նպատակ, որ ինձ խորապէս ոգեւորում է. մի կողմից հասել է ժամը Կովկասում կատարելու ժողովրդական երգի հաւաքումը տենդային ուժով եւ միւս կողմից նրանց մշակումը եւրոպական կանոնների համաձայն: Ես խորապէս հաւատում եմ այդ գործին եւ ուզում եմ ժողովրդա-

* Նկատի ունի 1915 թ. Օսմանյան Թուրքիայում իրականացված Հայոց ցեղասպանությունը: Ա. Զ.

կան ստեղծագործություններով հետաքրքրուող ապագայ աշխատողներին ցոյց տալ այն ճշմարիտ ճանապարհը, որ ընտրած էր Կոմիտաս վարդապետը: Նա՝ թե՛ ժողովրդական երգերը հաւաքելու գործում, թե՛ ինքնուրոյն ստեղծագործութեան մէջ, արմատը ժողովրդական երգի էութեան մէջ գտնում էր: Եթէ մէկը ինձ հարց տայ, թե Կոմիտասը միմիայն մշակել է ժողովրդական երգերը եւ ուրեմն ի՞նչ ինքնուրոյն ստեղծագործությունների մասին եմ խօսում, ես նրան կը պատասխանեմ, որ այդ յիշուած մշակումները՝ կատարեալ քանքարի արտայայտութիւններ, ինքնուրոյն ստեղծագործություններ են եւ միաժամանակ ժողովրդական երգը իր անձեռնմխելի գեղեցկութիւնը պահպանած: Աւելի մանրամասն այս խնդրոյն վրայ կը խօսիմ յօդուածիս երկրորդ մասին մէջ, որ պիտի նուիրեմ Կոմիտասի ստեղծագործութեան քննադատականին: Այժմ պիտի անցնիմ նրա կենսագրութեան:

Կոմիտաս վարդապետը, աշխարհական անունով՝ Սողոմոն Գէորգեան, ծնած է Սեպտեմբերի 28ին, 1869 թ. Կուտինա քաղաքում (թրքական արտասանութեամբ՝ Քէօթահիա), Բրուսա քաղաքին մօտ: Բրուսան, ինչպէս իր հարեւան փոքրիկ քաղաքները, յայտնի է բրուտագործութեամբ (1 բառ անընթեռնելի է – Ա. Չ.): Շատ հին ժամանակները, Ագուլիսի* գաղթականները բերին այդտեղ սոյն գեղարուեստը, արեւելեան զարդարուեստի այդ կատարեալ արտայայտութիւնը: Կամաց կամաց Բրուսան սկսեց արտադրել ամբողջ Տաճկաստանի համար այդ զարդարանները եւ նրա գեղարուեստի զագայթակէտը եղան Բրուսայի մզկիթի զարդարանները: Հաւանական է, որ իր հայրենի քաղաքի գեղարուեստը փոքր հասակից անգիտակցօրէն տպաւորութիւն գործած լինէր Կոմիտասի վրայ: Գուցէ ապագայում այդ անգիտակցական տպաւորութիւնները նրա հոգու խորքին մէջ կերպարանափոխուելով՝ տուին նրան արեւելեան երգի եղանակին զարդարանքի այն անհուն զգացողութիւնը եւ հասկացողութիւնը:

Մի տարեկան հասակում Կոմիտասը զրկուում է իր մօրից (1): Հայրը եւ հօրաքոյրը, որ մօր պէս խնամում էր նրան, պահեցին երեխան: Երբ Սողոմոնի եօթը տարին լրանում է, հայրը նրան տեղաւորում է Կուտինայի հայ դպրոցը, որտեղ նա չորս տարի պարապեց: Երբ աւարտեց այդտեղ, հայրը նրան դրկեց աւելի բարձր ուսումնարան Բրուսա (երեքդասեան դպրոց): Հօր մահը արգիլում է նրան երկար ուսանելու այդտեղ եւ նա դառնում է հայրենի քաղաքը: Որքին պահեցին

* Ագուլիսը պատմական Հայաստանի Գողթան գավառի բարգավաճ բնակավայրերից էր: Կոմիտասը ինքնակենսագրականում գրում է, որ իր նախնիներն այդ գավառի Յդնա գյուղից են, զոկ են: Ա. Չ.

¹⁾ Մայրը մեռնում է 17 տարեկան հասակում թոքախտից: Նա եղած է շատ մելամաղձոտ, տաղանդաւոր բանաստեղծուհի եւ երաժշտուհի, վարդապետին տուած տեղեկություններին համեմատ: Մ. Բ.

հորեղբայրը եւ յիշուած հորաքոյրը, որ տեղւոյն Հայոց եկեղեցու սարկաւազուհին էր: Սողոմոնը երեխայ ժամանակ շատ սիրուն արծաթահունչ ձայն է ունեցած: Փոքր հասակից, իր հոգեւոր մօր առաջնորդութեամբ՝ հայկական եկեղեցական երաժշտութեան ապագայ այդ փայլուն ներկայացուցիչը իր մէջ ծծած էր եկեղեցական մեղեդիների գեղեցկութիւնը՝ դեռ անարատ ունէ արեւմտեան երաժշտական քաղաքակրթութիւնից:

Դիպուածը օգնեց փոքր Սողոմոնին եւ նրան միջոց տուեց թէ՛ շարունակելու իր ուսումը եւ թէ՛ զարգացնելու իր երաժշտական տաղանդը:

1881 թ. Գեորգ Դ. Կաթողիկոսը, որ երաժշտութեան մեծ սիրահար էր, փափագ ունեցաւ օրինակելի երգչախումբ կազմակերպել Էջմիածնի տաճարի համար: Նա առաջարկեց իր բոլոր թեմերին՝ Էջմիածին դրկել ամենարճնորոնակ տղաներին, որոնք լաւ ձայն ու լսողութիւն ունէին եւ խոստացաւ նոցա ձրի ընդունել ճեմարանը: Կուսիւնայում 25 թեկնածու տղաներից ընտրուեցաւ Սողոմոնը, եւ տեղւոյն Առաջնորդ Գեորգ Դերձակեանը՝ որ պիտի մեկնէր Էջմիածին եպիսկոպոս ձեռնադրուելու, իր հետ տարաւ ճակատագրի ընտրեալին: Բնորոշ փաստ. փոքր Սողոմոնը, որ փայլուն կերպով ծանօթ էր ամբողջ եկեղեցական ծիսակատարութիւններին, մի բառ չգիտէր հայերէն (1):

Այս վերջին հանգամանքը ինձ առիթ է տալիս մատնանիշ անելու այն մեծ դերը, որ հայկական եկեղեցին կատարում է իր ժողովուրդի համար եւ այս կարող է մեզի բացատրել, թէ ինչու հայ հոգեւորականութեան է վիճակուած ժողովրդական երգեր հաւաքելու մեծ գործը: Ատենով մեծ եղած Հայաստանին դաժան վիճակը վաղուց է, որ ցիրուցան է արած նրա զաւակներին ամբողջ աշխարհի մէջ, հեռու իրենց մայր – երկրից: Նոքա վաղուց մոռացած կը լինէին նրան ու ձուլուած օտար ազգերի հետ, եթէ հայ եկեղեցին չլինէր, որ Հայերի հոգեւոր կապակցութեան սիւնն է: Եւ յիշուի հայ եկեղեցին, բացի կրօնական պարտականութիւններից, միշտ եղել է այն փարոսը, այն զոհասեղանը, որին Հայաստանի զաւակները բերած են իրենց լաւագոյն իղձերը եւ ազատութեան գաղափարը: Հայ եկեղեցականները միշտ եղած են այն պահապան հրեշտակները, որոնք օգնութեան էին հասնում իրենց ազգայիններին նրանց դժբաղդութիւններին մէջ: Նոյն ժամանակ նոքա պահապաններն էին հայ մշակոյթի պատգամների, որ կարողացել էին կորուստից ազատել հայ պատմութեան սոսկալի դարերի ընթացքին: Պարզ է, որ եկեղեցին էր սովորեցրել փոքր Սողոմոնին սիրել իր հայրենիքը, նրա սովորութիւնները, եկեղեցական երգեցողութիւնը, չնայած, որ նա չգիտէր մայրենի լեզուն: Կոմիտասի խոր համոզումով եկեղեցական եղանակների օրօրոցը եղած են ժողովրդական երգերը:

Հասնելով Էջմիածին, Սողոմոնը մտնում է ճեմարան, որտեղ գիտութիւնների հետ միասին, ջերմ կերպով ուսումնասիրում է թէ՛ տեսական եւ թէ՛ գործնական

կերպով եկեղեցական մեղեդիները: Նրա ուսուցիչները եւ ուղեկիցները եղան նշանաւոր Թաշճեանի աշակերտները, իսկ նա ինքը – Թաշճեանը – հայկական եկեղեցական նօթագրութեան կազմակերպիչ՝ Բարա Համբարձում Լիմոնճեանցի աշակերտն էր եղած: Ինչպէս յայտնի է, հին հայկական եկեղեցական նօթագրութիւնը, որպէս եւ յունականը, լատինականը եւ հին ռուսականը, չափազանց բարդ նշաններից էր կազմւած, որ կոչուում էին խազեր (neumes): Այժմեան երաժշտագէտները աշխատում են թափանցել դրա գաղտնիքը, որ դեռ շատ ու շատ վիճելի է: Խազերը ցոյց են տալիս գլխաւորապէս մեղեդիի զարդարանքը եւ նոցա կարդացողը եկեղեցական մեղեդիների ներքին կազմի ու բնաւորութեան շատ նուրբ զգացող պիտի լինի, լուսաբանելու համար նոցա գաղտնիքները: Այդ մեծ դժուարութիւնները թեթեւացնելու համար, վերեւ յիշուած Լիմոնճեանը՝ քաջածանօթ հայկական խազերի նշաններին, յօրինած էր մի նոր նօթագրութիւն. արտաքուստ՝ նշանները վերցրած էր հին նշանների ձեւից, ամէն նօթայի ճիշդ նկարագրով: Բնորոշ է, որ Լիմոնճեանցը չուզեց օգտուել Արեւմուտքի գծագիր կազմից, այլ պահպանեց տառերի նկարագրական ձեւը, որ՝ չնայած իր դժուարութեանը՝ շատ ձկուն է արեւելեան չափերի դժուարագոյն եղանակները գրի առնելու համար: Պէտք է ենթադրել, որ արդէն ուսման շրջանում Գումիտասը ձեռք բերած էր եկեղեցական մեղեդիների խոր գիտութիւնը, որ այնքան ազդած էր իր յետագայ աշխատութիւնների վրայ: Դրանից դուրս՝ նոյն ժամանակ Սողոմոնին մեջ զարթնում է սերը դէպի ժողովրդական երգերը: Նա օգտուում է ամէն հանգամանքից նոցա գրի առնելու. ընկերների դարձր արձակուրդներից՝ միջոց էր տալիս նրան նոր երգեր լսելու, որ նա իսկոյն ձայնագրում էր: Սակայն այդ բոլոր փորձերը մնում էին շուքի մեջ թէ՛ Սողոմոնի եւ թէ՛ իր վարժապետների կողմից, որ քայլ չէին անում նրան արեւմտեան երաժշտական զարգացումը եւ պատրաստութիւնը տալու (1): 1890 թ. իբրեւ Զ. դասարանի աշակերտ՝ Գումիտասը ընդունեց սարկաւազութիւնը, 1893 թ. նա աւարտեց ձեւարանը եւ 1895 թ. վարդապետ ձեռնադրուեց: Նրան տալիս են Գումիտաս անունը, որ նա պիտի անմահացնէր ոչ միայն Հայաստանի, այլ աշխարհիս գեղասերների եւ ժողովրդական երաժշտութեան պաշտոնների համար: Աւարտելով ձեւարանը նա նշանակուում է այնտեղ երգեցողութեան վարժապետ: Նրա աղքատիկ տոճիկը (մօտաւորապէս 30 բուրլի ամիսը) նրան հազիւ միջոց էր տալիս մի փոքր երգեհոն եւ երաժշտական կանոնների

¹⁾ Այստեղ պիտի յիշատակեմ մեծ հայազէտ եւ ուսումնական Կարապետ Կոստանեանցի՝ ձեւարանի տեսչի՝ կարծիքը Սողոմոնի մասին, որ երեւի թէ յայտնի չէր Պ. Հարտմանին: Գումիտասը այնչափ տարուած էր երաժշտութեամբ, որ չափազանց անուշադիր էր ուրիշ դասերի, բայց նրա արտակարգ երաժշտական ընդունակութիւնների պատճառով՝ վարժապետները աչք էին գոցում եւ նրան մի դասարանից միւսը առաջ տանում, տեսչի համաձայնութեամբ: Մ. Բ.

մի քանի դասագիրք ձեռք բերելու: Այդ համեստ փորձերի հետ՝ արեւմտեան երաժշտական գիտությունների գաղտնիքները մենակ ձեռք բերելու, նա շարունակում էր հաւաքել ժողովրդական երգեր եւ մի քանի տարրուան մէջ մինչեւ 300 երգ գրի էր առել: Երաժշտական բազմակողմանի զարգացման տենչը տանջում էր երիտասարդ վարդապետին եւ խեղդում նրան էջմիածնում: Վերջապէս շնորհիւ համեստ թոշակի՝ Ադ. Մանթաշեանի եւ մի քանի ուրիշ մեկենասների կողմից, նա սկզբում մեկնում է Թիֆլիզ, յայտնի եկեղեցական երգահան Մակար Եկմալեանի հետ պարապելու: Դա տեւում է մօտ վեց ամիս: Չգոհանալով դրանով, Կոմիտասը մեկնում է նախ եւ առաջ Լէյպցիգ, ուր մնում է մի տարի, իսկ յետոյ Բերլին, Պրոֆեսոր Շմիդի մօտ ուսանելու: Նա երեք տարի մնում է այնտեղ տենդային աշխատանքի մէջ: Ուսանում է ներդաշնակութիւնը (harmonie), ձայն առ ձայնը (contrepoint), խիստ ոճը (le style sévère), երաժշտական ձեւերը (formes), գեղարուեստի պատմութիւնը: Համալսարանում հետեւում է փիլիսոփայութեան, գեղագիտութեան (esthétique) դասընթացքներին: Պրոֆ. Շմիդի աշակերտը անխնց էր, բայց ինքնուրոյն. նրա ուժեղ արեւելեան խառնուածքը, սերը եւ որոնումը արեւելեան ներդաշնակութիւնների՝ անվերջ վիճաբանութիւնների նիւթ էր եւրոպացի վարժապետի եւ անհնազանդ արեւելցի աշակերտի միջեւ: Այդ վեճերը սաստկանում էին, երբ Կոմիտասը սկսում էր իր հետ բերած ժողովրդական երգերը ներդաշնակել եւ իր ամբողջ էութեամբ պաշտպանում էր իր անհնազանդ ներդաշնակութիւնները:

Ի պատիւ Պրոֆ. Շմիդի պէտք է ասել, որ շատ անգամ ճարը կտրած, ծալում էր դասական քննադատութեան գէնքը իր աշակերտի այնքան ցայտուն, ինքնատիպ տաղանդին առաջ եւ ասում. “Եթէ դուք համոզուած էք այդ ներդաշնակութեան գեղեցկութեանը, թո՛ղ ձեր ուզածը լինի”: Հետաքրքիր է այն փաստը, որ պատմած է Պրոֆ. Շմիդը իր աշակերտի մասին խօսելիս, որ նա միշտ ձգտում էր օգտագործելու quart-sext accord-ը, բնորոշ՝ Կովկասի եղանակները ներդաշնակելու համար եւ որ դասագրքերի կանոններից դուրս է: Վարպետի այդ վկայութիւնը ապացոյց է, թէ ինչ ցայտուն, ուժեղ եւ ինքնուրոյն երաժշտական խառնուածք ունէր Կոմիտասը: Երբեմն էլ վարպետը չէր կարողանում հանդուրժել այդքան ազատ եւ կանոնների հակառակ ներդաշնակութիւններին եւ համբերութիւնը կորցնում էր: Շատ տարիներ յետոյ Կոմիտասը պատմում էր ծիծաղելով, որ մի անգամ այլեւս չհամբերելով նրա ազատութիւններին, պրոֆեսորը նստեց դաշնամուրի մատներին (clavier) վրայ եւ մի քանի անգամ նոյնը կրկնելով բացազանչում էր. “Ահա ձեր ներդաշնակութիւնները”:

Իր ուսման շրջանին Կոմիտասը խորապէս տարրուած էր Վագների երաժշտութեամբ եւ նրան հիացնում էր վերջինիս այնքան խնամքոտ վերաբերմունքը դէպի բնագիրները (texte): Իր ապագայ երկերի մէջ Կոմիտասը ծայրայեղ կատարելու-

թեան հասցրեց այդ խնդիրը: Բերլինի իր այդ շրջանին նա գրած էր մի քանի երկեր, – արեւմտեան երաժշտական ձեւի փորձեր: Սակայն դա իրեն բաւարարութիւն չէր տալիս: Նա զգում էր, որ իր երաժշտական շրջապատը չափազանց ազդում էր իր ինքնուրոյնութեան վրայ: Այդ տենչը կարմիր թելի պէս անցնում է նրա երգահանի գործունէութեան միջոց: Իբրեւ արուեստագէտ՝ չափազանց խիստ լինելով դէպի ինքը, նա չուզեց տպագրութեան յանձնել իր Բերլինի հեղինակութիւնները (1):

Ես աւելի ուշ պիտի խօսիմ այդ տարիների նշանակութեան մասին Կոմիտասի գեղարուեստական զարգացումի տեսակէտից: Իր մօտիկ բարեկամների վկայութեամբ նա չէր սիրում յիշել այդ տարիները, բայց ընդունում էր Պրոֆեսոր Շմիդի մեծ գիտութիւնը: Թէեւ վերջինս չէր ըմբռնում արեւելեան երաժշտութեան նրբութիւնները, սակայն նա վերին աստիճանի տաքուկ, ինամոտ ու նուրբ վերաբերմունք ցոյց տուաւ Կոմիտասին, թէ՛ արտիստին եւ թէ՛ մարդուն (2): Երբ տարիներ

1) Այդ հեղինակութիւններից մի քանիսը, որ Փարիզի Կոմիտասեան Յանձնաժողովը գտաւ Պոլսից դրկուած վարդապետի գոյքերի մէջ, դրկուեցան Երեւանի պետական Թանգարանը, ինչպէս եւ մի շարք նրան պատկանող գրքերը եւ նօթաները՝ որոնց լուսանցքները իր դիտողութիւններով լեցուն են: Մ. Բ.

2) Աւելորդ չենք համարում այստեղ պատմել Կոմիտաս վարդապետի յիշատակները Պրոֆեսոր Շմիդի մասին: Վարդապետը իր ամբողջ թոշակը համարեայ գործադրում էր ուսման, դաշնակի ու երգեհոնի վարձքի, գրքեր ու նօթաներ գնելուն եւ հազիւ կարողանում էր օրական մի անգամ ճաշել: Պրոֆեսորը յուզմունքով նկատում էր իր տաղանդաւոր աշակերտի հալուելը, որ նիհարում էր օրէց օր: Վերջապէս չհամբերելով, մի օր դասից յետ Պր. Շմիդը վճռում է նրան հետեւել հասկանալու համար նրա կեանքը. հեռուէն տեսնում էր, ինչպէս նա մտաւ մի ժողովրդական համեստ պանդոկ եւ խեղճուկ նախաճաշ արաւ: Նա շարունակեց հետեւել վարդապետին մինչեւ նրա դուռը եւ մտաւ տանտիկնոջը մօտ, բացատրելով իր այցելութեան նպատակը եւ խնդրելով, որ իրեն միջոց տայ հասկանալու իր աշակերտի կեանքը: Տիկինը տեղաւորում է նրան մի յարկ ցածր Կոմիտասի սենեակին տակ եւ նա մնում է այնտեղ ամբողջ օրը, ունկնդրելով ինչպէս վարդապետը մերթ երգում, մերթ նուագում է, բայց այլեւս ուտելու խնդիր չկայ: Իրիկուան ժամը 10ին նա բաղխում է դուռը: Երբ Կոմիտասը զարմանքով տեսնում է իր Պրոֆեսորին, վերջինս յարձակւում է իր աշակերտին վրայ. – “Դուք այսպէս ապրում էք առանց սնունդ առնելո՞ւ, ես արգիլում եմ այլեւս ինձի վճարելու”: Եւ այդ օրուանից նա ստիպուած է լինում շաբաթը երեք անգամ գնալ ճաշելու իր Պրոֆեսորին մօտ, որ այնուհետեւ տանում էր նրան Բերլինի օպերան: Կոմիտասի առաջին հոգար դառնալիս Կովկաս լինում է իր պարտքը լիովին վճարելու իր ամենապատուական պրոֆեսորին: Նա որդու պէս սիրում էր վարդապետին եւ եթէ մի շաբաթ նամակ չառնէր նրանից, հեռագիր էր տալիս իմանալու Կոմիտասի առողջութիւնը:

Դէպքը այնքան հազուագիւտ է, որ արժանի էր յիշատակուելու:

Մ. Բ.

յետոյ խնդիր ծագեց Էջմիածնում, թէ ո՛րը դրկել ուսանելու Կոմիտասի ամենաարժանաւոր, նրա պատուէրները շարունակող աշակերտ՝ Սպիրիտոն Մելիքեանին (3) նա համոզեց, որ նրան դրկեն աշակերտելու Պրոֆ. Շմիդին, բացառելով իր կարծիքը նրա մասին:

Բ.

Չորս տարի Գերմանիայում անցրնելուց յետոյ, 1899 թ. Կոմիտասը դառնում է Էջմիածին, թեւաւորուած դասական գիտութեամբ, ոգեւորուած՝ հայրենիքում նոր ներշնչումներ գտնելու գաղափարով: Նա նորից նշանակուում է ճեմարանի ուսուցիչ եւ տենդային եռանդով սկսում է գրի առնել ու մշակել ժողովրդական երգերը: Նա օգտուում է ամէն արձակուրդից եւ մեկնում շատ հեռաւոր խուլ անկիւններ՝ եղանակներ, երգեր ժողովելու: Տեսնողները վկայում են, որ Կոմիտասը մասնաւոր շնորհք ուներ նիւթ գտնելու, մասնաւոր հմտութիւն ժողովրդական երգիչներին մօտենայու եւ նոցա ոգեւորելու: Այս վերջին հանգամանքը նշանակալից է. անհոգի երգուածը շատ անգամ թերի է, չափը, երգի շէնքը կարող են անկատար լինել: Արդէն այնքան դժուար է դոցա գրի առնելը, մանաւանդ 1/8 եւ երբեմն աւելի մանր նօթային բաժանումները: Գիւղերում նա կազմակերպում էր կլոր պարեր, խաղեր, եւ ինքը մի տեղ պահուած՝ շտապ գրի էր առնում իր լսածները: Հայկական եկեղեցական տօները, ուխտագնացութիւնները ահագին նշանակութիւն ունին ժողովուրդի բնական ձիրքերը ուսումնասիրելու գործում: Պարերը, երգերը անպակաս էին այդ տօներին, եւ ժողովրդական երգիչները, ոգեւորուած, ներշնչուած, նոր երգեր էին ստեղծում (1):

Կոմիտասի աշակերտները վկայում են, որ նա անմասն վարդապետութիւն էր ձեռք բերած իլգրԵփիյմ? տթ տթտ տթտ թտտթթտտթթթ* երգերը գրի առնելու (*): Իբր նմուշ պատմում են հետեւեալը. – Մի քանի երաժիշտ ճանապարհորդներ այցելում են նրան Էջմիածնում: Դոցանից մինը անասելի դժուարութեամբ կարողացել էր նօթագրել մի քրդական եղանակ: (Դոքա չափագանց դժուար են նշանակելու համար): Նա խնդրում է Կոմիտասին այդ եղանակը լսել: Ո՛րչափ մեծ է լինում ներկաների զարմանքը, երբ վարպետը այդ երգը մի անգամ լսելուց յետոյ, իսկոյն արձանագրում է իր ամբողջութեամբ: Նա օգտուում էր այդ դէպքերում

1) Կոմիտասը, որին ժողովուրդը անուանում էր “Երգիչ վարդապետ”, անպակաս էր այդ ուխտագնացութիւններին եւ իր անմասն յիշողութեան մէջ ամբարում էր իր լսածները, որ ապագայում պիտի այնքան օգտագործէր: Ս. Բ.

* Տեքստում այսպէս է. տե՛ս բուսերենում: Ս. Զ.

*) Երգը լսելիս նա երբեք չէր ընդհատում, ինչ որ անում են անփորձ հաւաքողները: Դա արգելք է լինում շատ անգամ եւ խանգարում է երգի ամբողջութիւնը: Թ. Հ.

Համբարձում Բաբայի նօթագրութիւնից, որ աւելի յարմարութիւն է ներկայացնում շտապ գրելիս (1) քան եւրոպականը, որին նա ոչ պակաս քաջ հմուտ էր:

Ո՞վ գիտէ, գուցէ ապագայում տառական նօթագրութիւնը դեր կատարէ քառորդական նօթաների եւ ապագայ նոր ոճերի բարդ ներդաշնակութիւնների համար:

Բացի ժողովրդական երգերը ուսումնասիրելուց, Կոմիտասը եռանդով մշակում էր իր հաւաքած եղանակները եւ իր երաժշտական ոճը կատարելագործում: Այդ նրան հնարաւորութիւն տուեց ապագայում հրատարակելու իր երեք ժողովածուները, – իր երեք գլուխ գործոցները: Իմ խորին համոզումով այդ հատորները ապագայում հայ երաժշտութեան զարգացման հիմնաքարն են լինելու: Նա անսահման մանրակրկիտ ու խիստ էր ինքն իրան հանդէպ, երբեք չգոհանալով եւ միշտ կատարեալը փնտռելով: Համարեայ ամէն ամիս, ամէն ունկնդրութեան իր մշակումները նոր ձեւ էին առնում:

Այսպիսի անասելի աշխատանքի մէջ անցնում է ժամանակը մինչեւ 1905 թ.: Այդ տարի Կոմիտասը առաջին անգամ նուագահանդէս – դասախօսութիւններ է տալիս Թիֆլիզ եւ Բագու, որ մեծ ընդունելութիւն են գտնում: Մինչեւ նրա յայտնութիւնը՝ Թիֆլիզի ու Բագուի հասարակութիւնը բացի զուռնաչիների երաժշտութիւնից եւ պարերգերից՝ դաշնամուրի վերածուած՝ շատ անգամ վերին աստիճան անյաջող, գիտէր միայն ազգային երգեր, որոնց եղանակները եւրոպական էին մեծ մասամբ: Այդ երգերը խմբի ձեւով տարածում էր Կարա Մուրզան, մի գործիչ որ Հայոց համար եղած է ինչպէս Ռուսների համար Սլավիանսկին: Կոմիտասի խումբը հիանալի պատրաստուած էր եւ հասարակութիւնը զարմանքով ունկնդրեց իրեն անծանօթ հեռաւոր Հայաստանի երգերը եւ գնահատեց նոցա ինքնուրոյն գեղեցկութիւնը: Յաջողութեան գլխաւոր պատճառը Կոմիտասն էր – այդ ոգեւորիչ երգիչը: (Ճիշդ է որ նա առաջնակարգ ձայն չունէր, բայց իր անմասն, մեծաշունչ ոգեւորուած կատարումը մոռանալ էր տալիս ձայնի պակասութիւնը (2):) Կոմիտասը նոյնպէս սքանչելի դասախոս էր. նա ամենաչոր, գիտնական խնդիրները իմանում էր այնպէս կարճ ու պարզ ներկայացնել, որ հասարակութիւնը նրան ունկնդրում էր առանց յոգնութեան: Նրա բնական սրամտութիւնը, զուարթ բնաւորութիւնը կենդանացնում էին դասախօսութիւնը: Իբրեւ նուրբ հոգեբան նա գիտէր օգտուիլ իր այդ առանձնահատկութիւններից, երբ զգում էր, որ լսողների հետաքրքրութիւնը թուլանում է:

1) Կոմիտասը համեմատում էր այդ նօթագրութիւնը սղագրութեան հետ: Մ. Բ.

2) Այստեղ աւելորդ չեմ համարում աւելացնել, որ Կոմիտասի երգելու արուեստը աճում էր օրէ օր, նա շատ խոր կերպով թափանցել էր այդ արուեստին, եւ իր երգելը քանի գնում աւելի եւս կատարելութեան էր հասնում: Մ. Բ.

Այդ յաջողութիւններից թեւաւորուած՝ Կոմիտասը մի շարք երգահանդէսներ է կազմակերպում հետեւեալ տարին Արեւմտեան Եւրոպայում: Նա այցելում է Ջոնիգերիան (1) եւ Փարիզը, ուր ահագին յաջողութիւն եւ ընդունելութիւն է գտնում: Նրա ամէն մի բեմ երեւալը՝ վանականի համեստ զգեստով եւ վեղարով, փայլուն յաջողութիւն էր իր եւ հայկական երաժշտութեան համար: Այդ նոյն տարին Փարիզում լոյս է տեսնում նրա առաջին հաւաքածուն հայ մտաւորականների Ընկերակցութեան շնորհիւ եւ մեծ գնահատումի է արժանանում Փարիզի երաժիշտների կողմից: Կոմիտասը շատ անգամ կրկնում է իր բարեկամներին, որ Ֆրանսիացիք շատ աւելի նրբազգաց հասկացող եղան դէպի արեւելեան երաժշտութիւնը, քան թէ Գերմանացիները: Դա բնորոշ է Ֆրանսիացիների համար, որ այս վերջին տասնեակ տարիների ընթացքում այնքան յառաջադիմած են եւ առաջնորդող դեր ունեն ոչ միայն երաժշտութեան, այլ եւ ընդհանուր գեղարուեստին մէջ:

Փարիզի փառայեղ յաջողութիւններից յետոյ Կոմիտասը վերադառնում է Էջմիածին 1907 թ. ամառը եւ շարունակում իր առաջուն պաշտօնը: Նա մնում է այնտեղ երկու տարի շատ տխուր ու ծանր հոգեկան վիճակի մէջ: Նա գուրկ է երաժշտական միջավայրի շրջանակից. խղճուկ կեանք, աղքատիկ միջոցներ, որ մինչեւ իսկ թոյլ չէին տալիս նրան գնելու անհրաժեշտ նօթաները եւ գրքերը. մինչեւ իսկ դաշնամուր չունէր իր ձեռքի տակ (դաշնակը դրուած էր երգեցողութեան դասարանում, որտեղ ձմեռը ահռելի ցուրտ էր), նա իր խուցում պիտի գոհանար խղճուկ երգեհոնով: Այս բոլորը ստիպեց Կոմիտասին աւելի բարեյաջող հանգամանքներ որոնել իր երգահանի գործունէութեան համար եւ Էջմիածինը ձգել: Նրա հաւաքած երգերի թիւը հասնում էր 3000ի եւ այդ տեսակէտից Հայաստանի կեդրոնի մէջ մնալը այլեւս անհրաժեշտ չէր: Հարկաւոր էր այդ բոլոր նիւթերը կարգի բերել, իսկ մենք գիտենք, թէ նա որչափ բծախնդիր ու խիստ էր ինքն իրան հանդէպ: Բացի դրանից նա վաղուց վճռել էր հայկական պատարագը նոր ինքնուրոյն ոճով պատրաստել եւ ազատ օտար ազդեցութիւններից (յունական, արաբական, պարսկական): Մի ուրիշ իղձ ունէր նաեւ – հայկական ժողովրդական երգերից օպերա ստեղծել: Այդ ընդարձակ ծրագիրները իրագործելու յոյսով 1909–10 ուսումնական տարուան վերջը Կոմիտասը տեղափոխուում է Պոլիս: Այնտեղ նա բնակարան է վարձում իր բարեկամ նկարիչ Փանոս Թերլեմէզեանի հետ, որ զարդարում է իր նկարներով երգահանի տունը: Նրա համբաւը աճում է օրէ օր: Նրա վարպետութիւնը ոչ միայն հայկական, այլ եւ տաճկական երաժշտութեան հիացմունք է պատճառում իր շուրջը: Նրա երկրպագուներից մինը լինում է Իշ-

1) Յարգելի երաժիշտը երեւի տեղեակ չէր, կարծելով թէ Կոմիտասը իր հետ տարած էր իրեն խումբը: Նա ամէն տեղ պատրաստում էր տեղական ոյժերից խումբեր: Մ. Բ.

խան Սաբահեդդինը: Նա կազմակերպում է անթիւ երգահանդէսներ (1) թէ՛ Պոլսում, թէ՛ գաւառներում, անհուն յաջողութեամբ: Յիշատակենք եւ նրա ճանապարհորդութիւնը դէպի Եգիպտոս եւ այնտեղ տարած երաժշտական յաղթանակները:

Նոյն ժամանակ անխոնջ շարունակում էր երգերի մշակման գործը: Յովհ. Թումանեանի հետ պատրաստում է “Անուշ” օպերայի բնագիրը եւ մշակում պատարագը:

1913 թ. պատերազմից մի քիչ առաջ նա հրատարակում է անձամբ երկու հատոր ժողովրդական երգերի, երկու գլուխ գործոց, որոնք չնայած իրենց փոքր ծաւալի անմահացրած են իրենց ստեղծողին: Ինչո՞ւ այդքան քիչ արտադրութիւններ: Արդեօք իր բժախնդիր վերաբերմունքը դէպի իւր գործը գլխաւոր պատճառն էր, թէ նիւթական միջոցների պակասութիւնը: Ես կարծում եմ աւելի շուտ վերջինս: Դժբաղդաբար մենք գաղափար չենք կարող տալ ոչ “Անուշ”ի, ոչ էլ պատարագի մասին, որ նա անդադար կատարելագործում էր, բայց իր բարեկամների վկայութեամբ նոցա ինքնատիպութիւնը շատ մեծ է: Ահա մի նմուշ նրա պատարագից – “Սուրբ Սուրբ”ը:

Կոմիտասը համանմանութիւն ուներ Մուսորգսկու հետ – դրական (րէպ) կերպով երեւակայում էր երաժշտական պատկերը: Ահա թէ ինչպէս էր տեսնում այս եկեղեցական բնագիրը. “Թագաւորների թագաւորը ընթանում է իր թափօրով աստղերէն վեր, շրջապատուած հրեշտակների խմբերով, որոնց երգը հազիւ լսելի է երկրի զաւակներին: Կամաց կամաց հրեշտակների երգը աւելի լսելի է դառնում եւ այն խօսքերին “Լի են երկինք եւ երկիր փառօք քո” ուժգին թնդում է նոցա երգը երկրի զաւակների փառաբանութեան հետ”: Այս օրինակը երեւակայել է տալիս, թէ ի նչ նոր գեղեցկութիւններ, ի նչ զմայլելի ստեղծագործական կատարելութիւն պիտի ներկայացնէ Կոմիտասի պատարագը: Աւա դ, հասնում է պատերազմը, որ սոսկալի արգելք եղաւ նրա գործունէութեան: Տաճկաստանի միանալը Գերմանիայի հետ եւ դրան հետեւող հայկական տարագրութիւնները ողբերգական հետեւանք ունեցան Կոմիտասին համար: Նա արքայութիւն է ուրիշ հայ գործիչների հետ Կոնիա եւ հարկադրուած է ոտով երթալու: Ճանապարհին, խորապէս ցնցուած կոտորածների զարհուրելի տեսիլներով, նա անընդհատ լալիս էր: Միացեալ Նահանգների դեսպանին եռանդուն միջամտութեան շնորհիւ հնարաւոր եղաւ Կոմիտասին եւ մի քանի ուրիշ Հայերի մահուանից ազատել: Բայց արդէն ուշ էր: Նրա նուրբ էութիւնը, որ երկու ջղային քայքայումների դիմադրել

¹⁾ Կոմիտասը խումբ էր պատրաստել Պոլսում, որ բաղկացած էր 250 հոգուց (երկսեռ) եւ որի կատարելութեան մասին հրաշքներ են պատմում:

էր, այս անգամ խորտակուեց եւ Կոմիտասը հոգեպէս հիւանդացաւ: Ինչպէս է այժմ նրա դրութիւնը – մենք չգիտենք:

Ահա թէ ինչ ողբերգական կերպով քայքայուեց այդ մեծ մարդու գործունէութիւնը, որ այնքան շատ պիտի տար ոչ միայն իր հայրենակիցներին, այլ եւ աշխարհիս հոգեւոր մշակոյթի բարեկամներին:

Ինչի՞ մէջ է կայանում այս փոքր երեք հաւաքածուների հեղինակի բարձր մշակութական նշանակութիւնը եւ միթէ՞ դոքա կարող են ներկայացնել երաժշտութեան նուիրուած մի մարդու ամբողջ գործունէութիւնը: Ես պնդում եմ, որ եթէ Կոմիտասի ամբողջ գործը այդ երեք հաւաքածուները լինէր (ինչպէս տեսնում էք կենսագրականից, դա ճիշդ չէ), նրա նշանակութիւնը մնայուն է: Նա առաջինը լուրջ ուշադրութիւն դարձրեց Հայաստանի ժողովրդական երգերին վրայ: Նա առաջինը զգաց այդ երգերի մշակութական եւ ազգագրական նշանակութիւնը իր ցեղին համար: Նա առաջինը ըմբռնեց, որ հայկական երաժշտութեան ապագան իբր ինքնուրոյն պիտի կառուցուի ժողովրդական երգի հաստատուն հիմքի վրայ: Նա առաջինը մատնանիշ արեց, որ ազգային երգերը – դոքա քաղաքներից արդէն գիւղերն են անցնում – եւրոպական ծագում ունին եւ իրենց եղանակները ոչ մի կսպ չունին իսկական հայկական երգին հետ: Նա առաջինը համոզմունքով ու բարձրաձայն գոչեց Հայերին՝ “Ահա ձեր իսկական երգերը, նրանց ստեղծել է այն ժողովուրդը, որին դուք պատկանում էք եւ դուք պիտի նոցա սիրէք” (իր սեպհական խօսքերն են):

Կոմիտասի ամբողջ կեանքը ապացոյց է, թէ ինչպէս պէտք է նոցա սիրել: Ինչ - հոյակապ գործ՝ երեք հազար երգեր գրի առնելը, այն երգերը, որ երգւում էին Հայաստանի անյայտ խուլ անկիւններում ...: Ինչ անասելի դժուարութիւնների էր հանդիպում Կոմիտասը, իբր խղճուկ շրջիկ անցնելով այդ լեռնական վայրերը: Ոչ մի ազգագրական նիւթապէս օժտուած մասնաժողով նրան օգնութեան չէր հասած: Նրան թելաւորում էր միայն իր անհուն սէրը դէպի գործը: Այդ բոլորը նրան բաւարարութիւն չէր պատճառում: Նրա առջեւ դրուած էր մի ահագին դժուար խնդիր. նոր ներդաշնակային (harmonique) եւ ձայն առ ձայն (contrepointique) ոճ ստեղծել արեւելեան երաժշտութեան հոգուն համաձայն: Դա ապագայում նոր խօսք պիտի բերէր երաժշտութեան մէջ: Այդ դժուար խնդիրը նա լուծեց եւ ընտրեց այն ճանապարհը, որ պիտի գործադրուէր այդ դէպքում: Նա օրինակ չառաւ եւրոպական - արեւմուտքի կանոններից, այլ իր պտղաբեր նիւթի մէջ գտաւ այն ոճը, որ ոչ մի Շմիդ չէր կարող նրան սովորեցնել: Կոմիտասը ինչպէս ասացինք, բժախնդիր ու խիստ դէպի իր մշակումները, աւելի ու աւելի խոր վերապրում էր երգին ներքին հոգին ու կզմը: Նա մաքուր ներզգացումով (intuition) թափանցում էր երգի հոգիին: Դա անկարելի է ուսանիլ ոչ մի երաժշտական դասագրքի մէջ: Կոմիտասը գտաւ այդ ներքին շաղկապման մէջ երգի էութեան համաձայն

դաշնակումը: Եթե քննենք Կոմիտասի ներդաշնակային մշակումները, կր տեսնենք, բացի այդ ներդաշնակութեան նրբութիւնից, հիանալիութիւնից, հմայչութիւնից, որ ինչպէս ճիշդ նկատած էր Պ.* զարմանալի ինքնուրոյնութիւն, որ բնականօրէն բոլորում է երգի էութիւնից: Քննելով իսրայէլական աշխատութիւնները, այդտեղ էլ պիտի տեսնենք բոլորովին նոր ոճ ձայն առ ձայն (contrepont) մշակումների մէջ: Խմբական երկրորդական ձայները մի ամբողջութիւն են կազմում եւ ամէն մի ձայնը (բառը չի կարդացվում – Ա. Զ.) է իր չափով ու եղանակով: Դոքա զօրեղ կերպով կրում են ժողովրդական երգի դրոշմը, թէեւ պատկանում են երգահանի գրչին (1): Կոմիտասը մշակման բնորոշ ստեղծուած ոճը ոչ միայն նշանակութիւն ունի ժողովրդական երգի գործում, այլ օրինակ պիտի ծառայէ արեւելեան երաժշտութեան մշակումների համար: Կարծում եմ, որ ապագայում դա աւելի ընդարձակ ծաւալ է ստանալու եւ երաժշտական ձևերը (formes) լայնանալու են: Կոմիտասը այդ ոճի հոգեւոր հայրը պէտք է համարել:

Աւելի մանրամասն քննելով նրա աշխատութիւնները, մատնանիշ անենք սքանչելի սերենադը, “Երկինքն ամպել ա”, որ սիրային հովուային բնաւորութիւն է կրում (Թիւ 3): Դուք զգում էք լեռների վայրի ծաղիկների բուրմունքը զարնան անձրեւներից յետոյ ...: Առանձին ուշադրութեան արժանի է “Անտունի” ողբերգական երգը իր տպաւորական (impressionnisme) ներդաշնակութեամբ: Սկզբում կարծես անձրեւի կաթիլները թափւում են Կովկասի վիթխարի ծառերի տերեւներից: Այդ երգի ամբողջ ներդաշնակ կազմը՝ գլուխ գործոց է: Նրա երաժշտական տպաւորական արուեստը իր նրբութեամբ կարելի է համեմատել միայն Դեբիսիի, Բավելի լաւագոյն գործերի հետ: Այդ երգին հետեւում են “Գարուն ա, ձուն ա արել” երգի երկու տեսակ մշակումները, մէկը դաշնակի, միւսը իսրայէլական ուղեկցութեամբ: Շատ բնորոշ է իր ներդաշնակութեան, ինչպէս նմանեցնող ոճի (style imitn) կողմից “Էս գիշեր եարս գնաց սարը”: Այդ առաջին հաւաքածուի մէջ կայ մի երգ, “Անտունի”ն իսկ գերազանցող: Դա քաղցր հեշտանքով լեցուն գիշերայինն է (nocturne) “Լուսնակն անուշ”: Նրա ձայն առ ձայն ու նմանեցնող ոճի ներդաշնակային կենդանութիւնը եւ ձայների դասաւորումը, անսահման հիացմունք են առաջ բերում: Եւ այդ ամբողջը մի երես տեղ է բռնում: Այդքա՛ն քիչ եւ այդքա՛ն շատ ...:

* Տե՛ս ռուսերէն տեքստում՝ Չերեպինին:

Ա. Զ.

1) Այստեղ պէտք է ասեմ, որ Կոմիտասը զարմանալի վարպետութեամբ օգուտ էր քաղում երգերի վարիանտներից, որոնց գիտէր անհամար: Նա երգի կազմից գիտէր քաղել երկրորդական ձայները: Տես “Նաւասարդ”ին մէջ (Յունուար 1914) Կոմիտասի յօդուածը “Լոռու Գութան երգի” մասին:

Ս. Բ.

Երկու հետեւեալ տեսքերի մէջ, որոնք առաջինից մի քանի տարի աւելի ուշ լոյս տեսան (1), Կոմիտաս վարդապետի վարպետութիւնը հասնում է իր գագաթնակէտին: Այն տեսքին մէջ, որ նուիրուած է խմբական երգերի, թեքնիքի առանձնայատկութիւնները՝ թէ՛ իբր ձայն առ ձայն եւ թէ՛ իբր ձայների դասաւորում՝ գտնում են իրենց ամբողջ արտայայտութիւնը: Միւս հատորին մէջ, որ նուիրուած է միաձայն երգերի, մենք գտնում ենք աւելի եւս նրբացած ներդաշնակութիւններ, որ նրբութեան կողքին կրում են նախնական (primitif) դրոշմ, այնքան համապատասխան երգերի հոգուն: Այդ տեսքի բանաստեղծական գունաւորումի մասին եւ կ'ասէի, թէ դա կրում է մի տեսակ լուսաշող համաստուածականութիւն (panthéisme), որ Կոմիտաս վարդապետը գտած է իր ժողովուրդի հոգու մէջ – վերջինիս հայեացքը բեւեռուած դէպի հեռաւոր երկինքը, սահմանափակուած լեռների գագաթներով, եւ որ ցոլանում է լեռնային լճերի անբիծ ջրերի մէջ:

Այս առթիւ պիտի մտախոյզ, որ շուտափոյթ կերպով մի եւրոպական լեզուի թարգմանուէին այդ երկու տեսքերի խօսքերը, որ միայն հայերէն լեզուով են հրատարակուած: Այդ կերպով Եւրոպային մատչելի կը դարձուին այդ սքանչելի գործերը:

Քննելով Կոմիտաս վարդապետի երգերի մշակումը, եւ մատնանիշ չարի իր առաջին տեսքին յառաջաբանը, որին մէջ մի քանի պարզ խօսքերով նա արտայայտում է մեծ նշանակութիւն ունեցող գաղափարներ, այն է թէ՛ շեշտերը հայկական երգերի մէջ ուժեղ չափի վրայ չեն հիմնուած (temps fort). դա նշանակում է չափի գծով, որ ըստ Կոմիտաս վարդապետի՝ միայն երաժշտական հաշուի տեսակէտից նշանակութիւն ունի: Ես դիտմամբ յիշեցի շեշտերի խնդիրը, որ ներկայացնէ Կոմիտաս վարդապետին ինչպէս առաջնակարգ տեսարան: Արդէն ասացի թէ ի նչպիսի վարպետ էր խազական գրերի: Իր տեսական աշխատանքը նա նուիրում է դրա քննութեանը, կապելով հայկական երգերի եւ եկեղեցական մեղեդիների պատմութեան հետ: Պատերազմէն մի քիչ առաջ նա ասում էր իր աշակերտ եւ բարեկամ Առաքելեանին, որ ինքը գտած է խազերը կարդալու բանային: Նոյնը վկայում է եւ իր ուրիշ բարեկամ նկարիչ Եղիշէ Թադէոսեանը, թէ Կոմիտաս վարդապետը ազատ կարդում էր խազերը, իրենց հին ընտանեկան գիրքին մէջ՝ Թադէոսեան տոհմին նուիրուած: Ամէն մի տուս երաժիշտ, որ կ'ուզէր թափանցել այդ խորհրդաւոր եկեղեցական նշանները, որ կան եւ Ռուսաց սլաւոնական ժամասացութեան մէջ, կարող է հասկանալ, թէ ի նչ մեծ հետաքրքրութիւն են

1) Առաջինը – “Քնար Հայկական” – 1907 թ. Փարիզի Մտաւորական Ընկերութեան միջոցներով հրատարակուած: Երկրորդ եւ երրորդը, Լէյպցիգ, 1913 թ. Կոմիտաս վարդապետի անձնական նախաձեռնութեամբ եւ միջոցներով: Երկրորդ հրատարակութիւն՝ Կոմիտասեան Յանձնաժողովի կողմէ:
Մ. Բ.

ներկայացնում նրա տեսական աշխատությունները: Բայց, ամառ, ո՞րտեղ է այժմ այդ աշխատությունը, ո՞րտեղ 3000 երգերի ձեռագիրը, ո՞րտեղ պատարագը, օպերայի էսկիզները: Ի՞նչ դրութեան է այժմս ինքը, այդ ժամանակակից Մեծ Աշուղը, որ կարող է ճշմարտապես ասել, թե իր կեանքը երգն է եղած: Արդեօք միջոցներ ունի՞ այս վայրկեանիս, որ թոյլ տային նրան բժշկուելու ամենալալ պայմանների մեջ: Գուցէ դեռ հնարաւոր լինի նրան դարձնել առողջությունը եւ ոյժերը: Գուցէ Ամերիկեան դեսպանատան շնորհիւ, որուն պատկանում է պատիւը այդ մեծ մարդու կեանքը փրկած լինելու – կարելի է ճշդիւ իմանալ վարդապետին առողջական դրությունը: Ո՞ւմ միջոցաւ կարելի է տեղեկանալ, թե ի՞նչ օգնութեան է կարօտ այժմս վարդապետը: Առհասարակ ժամ է զբաղուելու այդ մեծ գործիչի վիճակով եւ որքան կարելի է դրական կերպով (1), *:

Կոմիտաս վարդապետը, որ մարդկային գիտութեան շտեմարանին ա՛յնքան տուած է, հարստացրած է երաժշտական աշխարհը նոր գեղեցկութիւններով: Նա օրինակ է իր ամբողջ կեանքով այն ուղիի, որը պիտի ընտրէ ամէն երաժիշտ, որ ցանկանում է պահպանել թե՛ իր եւ թե՛ իր ազգի ինքնուրունութեան ամենացատուն գծերը: Մենք կարող ենք հաստատել, որ այդ բոլոր գծերը կան նրա հեղինակութիւնների մեջ, եւ մատնանիշ անելով նրա ինքնուրունութիւնը, շեշտում ենք այն փաստը, որ Կոմիտաս վարդապետը չվախեցաւ անցնել արեւմտեան երաժշտութեան գիտութեան բովով, որովհետեւ նա ներքուստ զգում էր, որ իսկական ստեղծագործական ինքնուրունութիւնը կա՛մ լինում է ի ծնէ եւ այդ դէպքում պիտի դուրս ցայտէ, կա՛մ եթէ նա գոյութիւն չունի, ձեռք բերելը անհնարին է:

Կոմիտաս վարդապետը ուսումնասիրեց երաժշտական թեքնիքը, բայց նրա ստրուկը չեղաւ. նա ստիպեց այդ թեքնիքը ծառայել իր նոր եւ ինքնուրոյն ստեղծագործութեանը: Արեւմտեան եւրոպական գիտությունը եղաւ այն կամուրջը, որի վրայով Կոմիտասը ազատ անցկացաւ անդունդի վրայով, որի յատակին վիստում են սիրողները, անճաշակութիւնը, կեղծ ինքնուրոյն ձեւացնողները, թոյլ ստեղծագործները եւ ուրիշ սողունները, – այո՛, անցաւ ազատ հնարաւորութիւնների երկիրը եւ ապացուցեց այդ իր գործին մեջ:

Վերջացնելով յողուածս կ'ուզեմ ցուցնել այն ողբերգութեան վսեմ գեղեցկութիւնը մարտիրոս Աշուղին ընթանալը իր ազգին տանջանքների ճանապարհից –

1) Յիշեցնենք ընթերցողին, որ այս տողերը գրուած են 1919 թ. Թիֆլիզ, Կ. Վ.-ի Պոլսից Փարիզ տեղափոխուելուց առաջ: Մ. Բ.

* Ասվածի արձագանքն էր 1919 թ. մայիսի սկզբին Թիֆլիսում հիմնադրված «Կոմիտասի անվան ընկերությունը»: Ա. Զ.

դէպի Կոնիա: Կարծում եմ, որ ապագայ հայ բանաստեղծների ներշնչումի առարկայ պիտի դառնայ այդ ողբերգական պատկերը**:

Յուսանք ամբողջ հոգով, որ Հայաստանի մեծ Երզնիքը կորած չէ: Բայց նրա գործը կենդանի է, այդ կարող ենք ուրախութեամբ հաստատել: Մեր առջև դրուած է մի մեծադիր հաւաքածու հայկական ժողովրդական երգերի, որ հաւաքած են Ա-դէքսանդրապոլի գաւառում Կոմիտաս վարդապետի աշակերտ երգահան Սպիրիտոն Մելիքեանը եւ երգահան Ա. Տէր Ղեւոնդեանը, որոնք վարդապետի արժանաւոր յաջորդներն են եւ Կոմիտաս վարդապետը արդարեւ այդ հաւաքածուի կնքահայրը պէտք է համարել (1):

ԹՈՄԱՍ ՀԱՐՏՄԱՆ

Ռուսերէնից թարգմանեց
ՄԱՐԳԱՐԻՏ ԲԱԲԱՅԵԱՆ

** Ինչպէս կանխատեսել էր Թ. Հարտմանը, ապագա հայ բանաստեղծներից, մասնավորապէս, հանճարեղ Պարույր Սևակը (1924–1971) 1959 թ. գրեց “Անլռելի գանգակատուն” պոէմը: Այն ներկայացնում է Կոմիտասի ճակատագիրը՝ ծննդյան օրից մինչև Մեծ եղեռնի տպավորություններից խելագարվելը, ապա և մահը՝ ‘վերադարձը հայրենիք’՝ 1935-ին:

Ա. Չ.

¹⁾ Պ. Թ. Հարտմանի այս շատ շահեկան յօդուածներէն երկրորդին մէջ կան քանի մը կէտեր ուր իր տեղեկութիւնները ճիշդ ըլլալ չեն թուիր: Կոմիտաս վարդապետ ծանօթ էր թուրք երաժշտութեան, բայց անոր մէջ ‘իր վարպետութիւնը չուզեց ցոյց տալ’ նոյն իսկ Պոլիս գտնուած տարիներուն. եթէ մեծ դիրք ունեցող Թուրքեր, իշխան Սապահէտտին, եւ անկից ալ աւելի՝ գահաժառանգ իշխանը, Մեճիտ Էֆէնտի, իր երաժշտագիտական հմտութիւնը եւ երգիչի տաղանդը գնահատած են, իբր հայ երաժիշտ եւ իբր հայ երգի արուեստագէտ է որ զայն առաւելապէս ճանչցած ու յարգած են: Կոմիտաս վարդապետ ինծի յայտնած է թէ Թուրքեր առաջարկած են իրեն ընել թուրք ժողովրդական երաժշտութեան համար ինչ որ հայ շինական երաժշտութեան համար ըրած էր, բայց ինք խուսափած է այդ կոչին դրական պատասխան տալէ:

Ճիշդ չէ որ Կ. Վ. “Թումանեանի հետ կը պատրաստէր Անուշ օփերայի բնագիրը”. գիտեմ որ ան երկար ատեն խնդրեց ու սպասեց, որ Թումանեան իր Անուշ վիպերգը լիպրեթթոյի վերածէ, բայց Թումանեան չկատարեց անոր այդ խնդիրքը: Կոմիտաս միմիայն գրած է եղանակներ մեներգի կտորներու համար, դեռ առանց դաշնակման. ասկից աւելին չէ ըրած Անուշ օփերայի իր ծրագիրն իրագործելու համար: Կոմիտասեան յանձնաժողովը այդ կտորները՝ ըստ իս պէտք է ի լոյս բնծայէ իր հրատարակելիք ապագայ տետրերուն մէջ: Թէ Կոմիտաս վերջնական ու լիակատար լուծումը գտած էր հին հայ ձեռագիրներու մէջ գտնուող տաղերու խազագրութեան առեղծուածին, վստահ չեմ. չեմ կարծեր նաեւ որ այդ մասին լրացած գրաւոր աշխատութիւն մը ունեցած ըլլայ: Նօթեր առած է միայն այդ նիւթին վրայ: Ա. Չ.


“Անահիտ” (Փարիզ), 1936, - 1-2, էջ 22-33:

Анушаван Закарян – д. филол. н., главный редактор ИФЖ. Исследователь армянской действительности начала XX века, Армянского вопроса и Геноцида армян, армяно-русских историко-литературных связей. Автор 19 книг, сборников и около 220 статей, публикаций. patmhandes@rambler.ru

Անուշավան Զարարյան – ք. գ. դ., ՊԲՀ-ի գլխավոր խմբագիր: XX դարասկզբի հայ իրականության, Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության, հայ-ռուս պատմագրական կապերի հետազոտող: 19 մենագրության, ժողովածուների և շուրջ 220 հոդված, հրապարակումների հեղինակ: *patmhandes@rambler.ru*

НИКОЛАЙ ОГАНЕСЯН. *В ближневосточном и восточноазиатском политическом водовороте. Записки востоковеда*. Ереван, изд-во «Тигран Мец», 2019, 208 с.*

Ключевые слова: Ближний Восток, арабские страны, армянская община Ливана, советско-сирийские отношения, внешняя политика СССР.



В мае 2019 года в Ереване вышла в свет на русском языке новая книга известного армянского востоковеда, члена-корреспондента Национальной академии наук РА, профессора Николая Оганесяна «В ближневосточном и восточноазиатском политическом водовороте. Записки востоковеда».

В основе монографии лежат записи личных встреч и бесед автора с лидерами и официальными лицами разных стран Ближнего Востока, Японии, а также аналитические материалы, отправленные высшему политическому руководству СССР через советские посольства.

Монография проф. Н. Оганесяна освещает специфику отношений СССР с Сирией, Ливаном, Египтом, Иорданией, Организацией Освобождения Палестины (ООП), Японией, а также сообщает интересные и важные сведения о многих международных и региональных проблемах.

На наш взгляд, отдельного внимания заслуживает отчет о деятельности делегации Армении в Ливане, датированный 14 октября 1979 года. Это был период ужесточения гражданской войны в Ливане, когда, несмотря на объявленный армянской общиной Ливана нейтралитет в кровопролитной войне, армянские кварталы

* Принята к печати 21. VI. 2019 г.

подвергались нападениям со стороны фалангистов и постоянно находились под угрозой. Именно в этот период Н. Оганесян находился в Ливане и вместе с посольством СССР принял активное участие «в разработке подробного плана мероприятий по сплочению армянских политических организаций для отражения вооруженного нападения ливанских правых сил и сохранения самостоятельности армянской общины» (с. 27). Далее автор не без гордости пишет: «В результате героического сопротивления и отпора фалангистам находившиеся на первой линии обороны армянские бойцы смогли не только защитить все границы армянских кварталов Бурдж Хамуда и Набаа, но и продвинуться вперед. Это было настоящей сенсацией, которая вызвала невиданный энтузиазм» (с. 29).

Стоит особо выделить также отчет о командировке Н. Оганесяна в Ливан уже в феврале-марте 1982 года, когда он провел многочисленные встречи с руководством Ливана, высокопоставленными официальными лицами Сирии и Ирана.

Впечатляет рассказ автора о его вкладе в освобождение четырех советских дипломатов, взятых в заложники в Бейруте в 1985 году, когда во время очередной научной командировки в Сирию проф. Н. Оганесян был приглашен в посольство СССР в Дамаске и после просьбы посла Ф. Федотова вплотную подключился к работе по освобождению дипломатов. Для этой цели он неоднократно встречался с лидером ливанской организации «Амаль», с председателем Арабской межпарламентской группы, имел встречи в МИД-е Сирии. После этих встреч местонахождение заложников было установлено и они были освобождены. Примечательно, как автор описывает свою встречу с ними: вместе с четырьмя советскими дипломатами, возвращавшимися на родину рейсом из Дамаска в Москву, летел человек, который «большую часть своей научной командировки уделил спасению их жизней» (с. 126), но с которым они даже не познакомились.

Монография проф. Н. Оганесяна дает нам четкое представление о той роли, которую играли ученые в разрешении многочисленных деликатных проблем, возникавших перед советской дипломатией. Деятельность Николая Оганесовича, арабиста с мировым именем, явилась ярким примером эффективного применения теоретических знаний на практике с целью продвижения национальных и государственных интересов. Ведь неспроста в ученых кругах Армении его часто называли «армянским Примаковым».

Вместе с тем, освещая события, автор не ограничивается одной лишь ближневосточной тематикой и представляет нам записи встреч и бесед с официальными лицами Великобритании, США, Японии; эти записи являются ценным источником для исследования двусторонних отношений, а также внешней политики СССР и многих международных проблем. В этой связи хочется отметить беседу с членами делегации королевского общества института международных отношений Великобритании. Заглавия отдельных частей беседы говорят сами за себя: «Отношение к перестройке в СССР в свете визита М. Тэтчер в Москву», «Возможности новых парламентских выборов в Англии», «Вопрос ликвидации ракет средней дальности (РСД) и результаты визита государственного секретаря США Шульца в Москву», «Советско-английские торговые отношения».

Важное место в книге занимает запись, посвященная поездке академика Андрея Сахарова в Ереван, Спитак и Арцах. В этой части монографии четко представлена позиция одной из знаковых фигур того времени, истинного представителя советской интеллигенции академика Сахарова по отношению к Арцахской проблеме.

Проф. Н. Оганесян продолжал научно-дипломатическую работу и в период независимости Республики Армения. Так, представляет интерес участие Н. Оганесяна в качестве директора Института востоковедения НАН РА на международной конференции «Мирный Кавказ и Евразийский коридор: аспекты интеграции Восток-Запад», которая прошла в Грузии в сентябре 1999 года. Кроме опубликованного доклада «Интеграция и перспективы предотвращения и решения конфликтов» познавательна информация о встречах и беседах автора в рамках конференции с проф. Збигневом Бжезинским, бывшим советником президента США по национальной безопасности.

В конце книги представлен перечень основных монографических исследований Н. Оганесяна (91 название на разных языках), который еще раз подтверждает значительный вклад, внесенный ученым в современное востоковедение, а также в развитие армянской и мировой арабистики.

Надо признать, что книга Н. Оганесяна является новым словом в армянском востоковедении как по содержанию, так и по стилю изложения материала. В ней автор собрал воедино около 25-ти разных материалов по результатам встреч и бесед с президентами, полити-

ческими, военными, религиозными лидерами и видными учеными тех ближневосточных стран, в которые он был неоднократно командирован руководством страны.

Книга написана в жанре, отличном от других академических работ, вышедших из-под пера выдающегося армянского арабиста. Н. Оганесян предстает перед нами не только как ученый, но и как политический деятель, дипломат, который относится к каждой встрече с предельной ответственностью, обращая внимание даже на мелкие и, на первый взгляд, незначительные детали.

В современной историографии большую ценность представляют источники, которые передают информацию из первых рук, особенно дипломатические записи и отчеты, проливающие свет на суть проблемы или задачи, на цели встречи или беседы, а также описывающие обстановку (международную, внутривосточную и т. д.), в которой происходят те или иные события. Книга Н. Оганесяна в этом смысле является неоценимым вкладом в изучение новейшей истории арабских стран и отдельных проблем ближневосточного региона.


РУБЕН КАРАПЕТЯН

Д. и. н., Чрезвычайный и полномочный посол РА, профессор кафедры международных отношений и мировой политики Российско-армянского университета. Научные интересы: Ближний Восток, политика Южного Кавказа. Автор 7 монографий, более 30 статей. karapetianr@gmail.com

ՄԵԴԱ ՏԱՃԱՏ ՕՀԱՆԵԱՆ. Իրաքի հայ համայնքը 20-րդ դարուն, *Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2016, 293 էջ.**

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, նահանջ, գաղթականություն, Միջագետք, Իրաք, հայրենադարձություն, հայապահպանում:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Սփյուռքի և հայ գաղթօջախների



պատմության բաժնի գիտաշխատող, պ. գ. թ. Սեդա Օհանյանի անդրանիկ մենագրությունը՝ չնայած կրում է «Իրաքի հայ համայնքը 20-րդ դարուն» խորագիրը, այդուհանդերձ, աշխատության յուրաքանչյուր գլխի կամ ենթաբաժնի սկզբնամասում հեղինակը տալիս է նաև Իրաքի տարածքում հայերի գոյության պատմության ողջ ընթացքը՝ սկսած վաղնջական շրջանից: Մենագրությունը բաղկացած է ծավալուն ներածականից, երեք գլխից, որոնցից յուրաքանչյուրը՝ մի շարք ենթաբաժիններից, վերջաբան-եզրակացությունից և հավելվածից, որտեղ առաջին անգամ հրապարակվել

են մի շարք փաստաթղթեր, լուսապատճեններ ու լուսանկարներ:

Աշխատանքի ներածականում հեղինակը ներկայացնում է Իրաք-Միջագետքյան տարածքում հայերի մշտական բնակության մասին առաջին հիշատակությունները՝ հասցնելով այդ խնդիրը մինչև XX դարի սկիզբ, մինչև իր աշխատանքի բուն շրջանը: Հեղինակը, բնականաբար, հպանցիկ անդրադարձ է կատարում ժողովրդագրական տեղաշարժերին և դրանց դրդապատճառներին, ինչի հետևանքով հայությունն իր կեցությունն է հաստատում ներկա Իրաքի տարածքում գտնվող մի շարք հայտնի և քիչ հայտնի բնակավայրերում՝ Բաղդադում, Բասրա, Մոսուլ, Քիրքուկ, Սուլեյմանիե, Ջախո, Ամատիա, Սուգ Էլ Շիյուխ և այլն: Ներկայացվում է ժողովրդագրական տեղաշարժի այնպիսի կարևորագույն դրվագ, ինչպիսին Շահ Աբասի արշավանքն էր Հայաստան և Արարատյան նահանգի հայության բռնագաղթը Իրան, որոնց բեկորները հայտնվել են նաև Իրաքի զանազան վայրերում: Հեղինակը փաստում է, որ XVII դ. տեղի ունեցած բռնագաղթից դեռ շատ առաջ հայերի ներկայությունը Իրաքում եղել է զգալի, ին-

**Ընդունվել է տպագրության 21. VI. 2019 թ.:*

չի վառ ապացույցն է օսմանյան բանակի հայազգի հրամանատար Գոգ Նազարի (Գևորգ Նազարեթյան) խնդրանքով սուլթան Մուրադից հող ստանալը և Բաղդադի հյուսիսային կողմում 1639 թ. Մբ. Աստվածածին եկեղեցու, ինչպես նաև վերջինիս կից գերեզմանատան կառուցումը: Այս թվականն էլ համարվում է Իրաքի հայ գաղթօջախի վերակազմավորման տարեթիվը:

Ս. Օհանյանն աշխատանքը շարադրել է՝ օգտագործելով հայ գաղթաշխարհի վերաբերյալ գրականության այն ողջ ծավալը, որը վերաբերում է իրաքահայ համայնքին: Այդ իմաստով աշխատանքում տեղ են գտել ինչպես բազմաթիվ հեղինակների աշխատություններ, մենագրություններ, գրքեր, հոդվածներ, այնպես էլ՝ զանազան տարեգրքեր, ձեռնարկներ, տեղեկագրեր, հուշագրություններ, համայնքի հայապահպանության գործում առանցքային նշանակություն ունեցած կազմակերպությունների փաստաթղթերը: Պակաս արժեքավոր ու հետաքրքրական չեն նաև արաբ հեղինակների ուսումնասիրությունները և արաբալեզու պարբերականներում հրատարակված աշխատանքներն ու նույնալեզու այլնայլ նյութեր, որոնք հեղինակը բնագրային ընթերցմամբ ևս ներկայացրել է մենագրության մեջ: Վերոբերյալ արխիվային՝ ցարդ անտիպ նյութերն օտարալեզու (արաբերեն, անգլերեն) աշխատանքների հետ բացառիկ արժեք են հաղորդում մենագրությանը:

Մենագրության առաջին գլխում («Իրաքահայությունը 20-րդ դարում») ներկայացվում է իրաքահայ համայնքի պատմության նորագույն շրջանը, որը, բնականաբար, սկզբնավորվել է Առաջին աշխարհամարտի, Հայոց ցեղասպանության և տարագրյալ հայության մի մասի՝ Իրաքի տարբեր վայրեր հանգրվանելու բերումով: Սեփական հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում, ցեղասպանության ենթարկվող հայության համար որոշակի առումով փրկության դուռ է բացվում, երբ բրիտանական զորքերը սկսում են մաս առ մաս ազատագրել Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող Պարսից ծոցի արաբական շրջանները կամ խնդրո առարկա Բասրայի, Բաղդադի և Մոսուլի վիլայեթները: Հենց պատերազմի սկզբին՝ 1914 թ. նոյեմբերի 5-ին, ազատագրվում է ռազմավարական նշանակության Բասրա քաղաքը: Ունենալով ավելի քան ինը տասնյակ հազար զոհ և հսկայական նյութական կորուստներ՝ բրիտանական զորքերն ամբողջացնում են ապագայի Իրաք պետության տարածքի ազատագրումը (ապագա գաղութացումը) 1918 թ. վերջերին՝ գրավելով Մոսուլն ու հարող շրջանները: Չափազանց կարևոր է այն հանգամանքը, որ հեղինակը չի անդրադառնում սուկ հայության ճակատագրին, այլ Հայոց ցեղասպանությամբ պայմանավորված գործընթացներին, ինչպես նաև իրերի հետագա ընթացքի ողջ շղթան քննում է ինչպես Իրաքի արաբական պետության ներքին զարգացումների, այնպես էլ բրիտանական գաղութային քաղաքականության ներկայացման համապատկե-

րին: Պարզորոշ է, որ նշյալ զարգացումներով էր մեծապես պայմանավորվելու նաև Իրաքում հանգրվանած հայության ճակատագիրը: Իսկ գաղթական հայության առաջին խմբերն արդեն Իրաքի հյուսիսային շրջաններն էին հասել 1915 թ. աշնանը, երբ Մոսուլ, այնուհետև մեծամասամբ Բաքուպա են տեղափոխվում շուրջ 3.000 կարնեցիներ: Հայության հաջորդ խոշոր քարավանը (հեղինակի հաշվարկներով՝ հայրենի Վասպուրականը թողած և դեպի Իրաքի անապատները ուղղություն վերցրած հայության թիվը կազմել է 26.183) Միջազգետքի հայ գաղթականության կոմիտեի նախագահ, Վանի նահանգի Գյավաշ գավառակի ինքնապաշտպանական ուժերի և Շատախի գավառակի Փեսանդաշտի զինվորական հրամանատար, կուսակցական (ՀՅԴ) ու համայնքային խոշոր գործիչ Լևոն Շադոյանի, ազգային-ազատագրական շարժման և կուսակցական (ՀՅԴ) ականավոր գործիչ, 1915 թ. Վանի ազատագրման մասնակից Կոստի (Կոնստանդին) Համբարձումյանի առաջնորդությամբ Իրաք է ժամանում 1918 թ. օգոստոսին և մեծաթիվ ասորիների հետ հանգրվանում մայրաքաղաք Բաղդադից 45 կմ հեռավորության վրա գտնվող Բաքուպա գյուղաքաղաքի մոտ՝ բրիտանական իշխանությունների կողմից հիմնված վրանային ճամբարում: Այս ընթացքում գաղթականներ են Իրաք հասնում նաև Բիթլիսի նահանգից, Մալմաստ-Ուրմիայից, Դեր Զորի սիրիական անապատից և այլ վայրերից:

“Գաղթականության հոսքը Իրաք” խորագրով այս գլխի առաջին ենթաբաժնում Ս. Օհանյանը ներկայացնում է ցեղասպանությունից ձողոպրած հայության բեկորների հաստատվելը Իրաքի ինչպես Բաքուպա և Նահր Օմար (հայությունն այստեղ է տեղափոխվել 1920 թ. հակաբրիտանական խոշոր ապստամբության և Բաքուպայի ուրակոման պատճառով և ապրել՝ մինչև 1929 թ.) գաղթականներ, այնպես էլ առանձին քաղաքներ ու գյուղաբնակ վայրեր: Ներկայացվում են նաև բոլոր այն հանձնախմբերի ձևավորման գործընթացները, այն երախտավոր գործիչները, որոնք առանցքային դերակատարում են ունեցել նոր միջավայրում հայտնված գաղթականների կյանքի կազմակերպման գործում: Առանձնակի կարևոր են Լ. Շադոյանի և Պողոս Նուբար փաշայի կողմից ստեղծված Հայ ազգային պատվիրակության արխիվային վավերագրերից քաղված տեղեկությունները, որտեղ ամենայն մանրամասնությամբ ներկայացվում են ինչպես Միջազգետք ժամանած հայ գաղթականության թվապատկերն ու այլևայլ վիճակագրական տեղեկություններ, նաև տեղեկացնում այն մասին, թե Արևմտյան Հայաստանի ո՞ր նահանգից, ո՞ր գավառի, ո՞ր գյուղից քանի այր, կին, տղա, աղջիկ են գաղթել Միջազգետք, քանիսն են մահացել և այլ մանրամասներ: Ի մի բերելով և համադրելով այդ վավերագրերում առկա վիճակագրական տեղեկությունները՝ Ս. Օհանյանը փաստում է, որ Իրաք հանգրվանած հայության 82 տոկոսը վասպուրականցիներ են, 5 տոկոսը՝ Բիթլիսից և Կարինից տեղա-

փոխվածները, իսկ մնացյալք այստեղ են հասել այլ վայրերից: Ժողովրդագրական արտաքին ու ներքին շարունակական տեղաշարժերի պայմաններում հեղինակը դժվարանում է Իրաքի հայ գաղթականության վերջնական թվապատկեր մատնանշել, և միայն հարաբերական ճշգրտությամբ է վկայակոչում գաղթականության 90.000–100.000 թիվը:

Երկրորդ ենթագլխում ներկայացվում է 1921 թ. սկսած և մինչև դարի 80-ական թվականներին շարունակվող հայրենադարձության գործընթացը, որի ընթացքում մերթ ընդհատումներով, մերթ ուժգնացող ալիքով հայրենիք՝ Խորհրդային Հայաստան են վերադարձել իրաքահայ ընտանիքները: Այդ բաղձալի, սակայն որոշակի ընդմիջումներով և բարդություններով ուղեկցվող գործընթացը սկիզբ է առել 1921 թ. հոկտեմբերից, երբ այդ և հաջորդ՝ 1922 թ., “Դարա”, “Աքբար” և “Շուճա” շոգենավերով պարբերաբար Խորհրդային Հայաստան հայրենադարձվեց շուրջ 8.000 հայ: 1924 թ. ևս 1.000 անձից բաղկացած հայրենադարձների խումբ է ժամանում Պարսկաստանի վրայով հայրենիք: Հեղինակը, բնականաբար, հատուկ անդրադարձ է կատարում մեծ հայրենադարձությանը (1946–1949 թթ.), Բաղդադում ստեղծված հայրենադարձների հարցերով զբաղվող կոմիտեի գործունեությանը, Երկրորդ աշխարհամարտի ավարտին Հայկական հարցի վերաբացմանը, Պողոտամի կոնֆերանսին (1945 թ. ՆáðÉÇëÇ 17 – ú-áëïáéÇ 2) և Թուրքիայի կազմում գտնվող հայկական որոշ շրջանների (Կարս, Արդահան) հնարավոր վերադարձի մասին քննարկումներին: Ցավոք, հայրենիք վերադարձի խիստ ցանկություն ունեցող 4.000 հոգուց այս փուլում վերադարձի հնարավորություն է ընձեռվում միայն շուրջ 177 ընտանիքի (857 շունչ): Հեղինակը խորքային վերլուծության ենթարկելով այս իրողությունը՝ փաստում է, որ տվյալ փուլում հայրենադարձությունը իրաքահայության պարագայում ունեցավ շատ փոքր չափեր, որի պատճառը Իրաքի միապետական համակարգի բոլոր ժամանակների իշխանությունների թրքամետ քաղաքականությունն էր և հայրենադարձության հանդեպ խիստ բացասական վերաբերմունքը: Հավելենք նաև, որ հայրենադարձության գործընթացը վերսկսվում է 1962 թ., և մինչ 1980 թ. պարբերաբար հայրենիք է վերադառնում շուրջ 75 ընտանիք (291 շունչ):

Հայ առաքելական եկեղեցու (ՀԱԵ) Իրաքի թեմի պատմությանը, երկրի մի շարք բնակավայրերում տարբեր տարիներին հիմնադրված եկեղեցիներին, առաջնորդարանին առընթեր մարմիններին և վերջիններիս գործունեությանը, Իրաքի հայ կաթոլիկ և ավետարանական եկեղեցիների պատմությանն է նվիրված մենագրության՝ “Եկեղեցին և իր գործունեությունը” երրորդ ենթագլուխը: Աղբյուրագիտական մի շարք նյութերի հենքի վրա հեղինակը շարադրում է Իրաքի թեմի կազմավորման ընթացքը՝ փաստելով, որ, լինելով “տերունի”, այսինքն՝ էջմիածնական թեմ, սկզբնապես այն եղել է Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի ի-

րավասության ներքո, ունեցել պարսկահայ հոգևորականներ: Իրաքում առաջին՝ Բաղդադի Սբ. Աստվածածին եկեղեցու՝ 1639 – 1640 թթ. կառուցմամբ և գաղութի վերակազմավորմամբ մեկնարկում է նաև այս օտար հողի վրա հաստատվող հայության հոգևոր-կրոնական կյանքի կազմակերպման դժվարին գործը:

XIX դ. կեսերին (1848 թ.), նկատի առնելով, որ Իրաքի տարածքը ենթարկվում է Օսմանյան կայսրությանը, իրաքահայերը որոշում են դառնալ Կ. Պոլսի պատրիարքարանի ենթական: Այս շրջանում Բաղդադում հիմնադրվում են Սբ. Երրորդություն (1852 թ.), Սբ. Գր. Լուսավորիչ (1957 թ.), Սբ. Կարապետ (1973 թ.) և Սրբոց Նահատակաց (1990 թ.) եկեղեցիները, իսկ Բասրայում, ուր հայության թիվը ստվարացավ XVII դ. երկրորդ կեսին Նոր Ջուղայից տեղափոխված հայ գաղթականների շնորհիվ, հիմնադրվեցին Սբ. Աստվածածին (1736 թ.), Սբ. Ստեփանոս (տեղը և կառուցման թվականն անհայտ) և մի երրորդ եկեղեցի, որի տեղն ու անունը, ցավոք, հեղինակին հայտնի չէ: Քաղաքի հայոց գերեզմանատան մեջ 1973 թ. կառուցվել է նաև Սբ. Հովհաննես Կարապետ մատուռը:

Ս. Օհանյանը երրորդ ենթազյխի այս ենթաբաժինն ամբողջացնում է՝ ներկայացնելով նաև Մոսուլի (Սբ. Էջմիածին, 1957 թ.), Քիրքուկի [առաջին եկեղեցին (անունը չի նշվում), 1932 թ., երկրորդ եկեղեցին՝ Սբ. Աստվածածին, 1952 թ.], Ջախոյի (Սբ. Աստվածածին, 1932 թ.), Ավգրուկի (Սբ. Վարդանանց, 2001 թ.), Հավրեզի (եկեղեցի ունեցող զուտ հայաբնակ այս գյուղը հիմնադրվել է 1929 թ.՝ Նահր Օմարի գաղթակայանի ցրումից հետո: 1970-ական թվականներին ամառայացած գյուղը վերստին վերաբնակեցվել է 2003 թ. դեպքերից հետո, իսկ 2015 թ. վերածովել է եկեղեցին և կոչվել Սբ. Սարգիս), Հաբբանիեի (բնակավայրն ունեցել է հայ-ասորական համատեղ գործածման եկեղեցի), Դհոքի (2008 թ., Սբ. Ներսես Շնորհալի) եկեղեցիները, այդ և եկեղեցի չունեցող հարակից այլ [Քեյ-Թրի (K3), Խանակին, Խալըդիե, Էրբիլ, Մուսեյլ և այլն] շենքերում տարբեր տարիներին ապրող հայության թվապատկերը, ինչպես նաև այդ վայրերում գործունեություն ծավալած համայնքային կազմակերպությունների գործունեության որոշ դրվագներ:

ՀԱԵ թեմի պատմության խճապատկերն ամբողջացվում է հաջորդ ենթաբաժնում, որտեղ ներկայացված են առաջնորդարանին առընթեր մարմինների հիմնադրման և ծավալած գործունեության մասին ամբողջական տեղեկությունները: Առաջնորդարանի հովանու ներքո գործող այդպիսի մարմիններից են Չքավորաց օժանդակ մարմինը (1922 թ. – ցայսօր)¹, Եկեղեցապան մարմինը (1935 թ. – ցայսօր), Եկեղեցու բարեգարդման մարմինը (1960 – 1979 թթ.), Եկեղեցու կարգա-

¹ Կազմակերպությունը 1922–1926 թթ. կոչվել է Հայ ազգային աղքատախնամ մարմին, 1926–1990 թթ.՝ Տիկնանց աղքատախնամ մարմին, 1990 թ.՝ Չքավորաց օժանդակ մարմին:

պահության մարմինը (1960–1962 թթ.), Հայ եկեղեցասիրաց կազմը (1986 թ. – - ցայսօր), Կալվածքների հանձնախումբը, Բժշկական հանձնախումբը, Շինարարական հանձնախումբը, Ուսումնական խորհուրդը, Կրթական հանձնախումբը, Աշակերտների երթևեկության հանձնախումբը:

Իրաքահայ համայնքի վերակազմավորման շրջանից (XVII դ.) սկսյալ հիշատակություն կա հայ կաթոլիկ հայության մասին:

Աշխատանքի առաջին գլուխը ավարտվում է Առաջին աշխարհամարտի և Հայոց ցեղասպանության տարիներին Օսմանյան կայսրության տարբեր վայրերից մազապուրծ Իրաք հանգրվանած հայ ավետարանականների կողմից փոքրաթիվ համայնքի ձևավորման և զարգացման² ընթացքի պատմության ներկայացմամբ:

Իրաքահայության տնտեսական – հասարակական կյանքը ներկայացնող երկրորդ ընդարձակ գլխի առաջին ենթագլխում խոսվում է հայերի՝ Իրաքի տարածքում ծավալած տնտեսական, հիմնականում՝ առևտրային գործունեության մասին: Միջազգետքը, լինելով Արևելքն Արևմուտքին կապող հնագույն առևտրային տարանցիկ խաչմերուկ, ունենալով երկու խոշոր նավարկելի գետեր, իսկ Օռոտը՝ նավահանգիստներ, դեռ վաղ ժամանակներից հայության համար առանցքային նշանակության հաղորդուղի է եղել: Հետազոտության շրջանում շեշտակի ավելանալով Բասրայում և այլուր՝ հայությունը կտրուկ զարկ տվեց նաև այս տարածքների առևտրատնտեսական զարգացմանը: Ունենալով փայլուն ունակություններ՝ հայությունն արագորեն ներգրավվում էր ոչ միայն տնտեսական (առևտուր, արհեստագործություն, հանքարդյունաբերություն և այլն), այլ՝ պետական կառավարման, հատկապես արտաքին կապերի ու դիվանագիտության, բժշկության, գիտության, գրականության ոլորտներում: Հեղինակը մատնանշում է Բաղդադում, Բասրայում ու այլուր բարձր դիրքեր զբաղեցնող մի շարք հայերի, որոնք համայնքային խոշոր գործիչներ³ լինելուց զատ, նաև Իրաքի բարգավաճման ու պետականաշինության երախտավորներն էին:

Իրաքահայության տնտեսական և հասարակական կյանքին առնչվող գլուխը հեղինակն ամբողջացնում է՝ երկրորդ ենթագլխում տալով հասարակական

² Իրաքի մեջ հայ ավետարանական միակ եկեղեցին հիմնադրվել է 2003 թ.՝ Բաղդադ ամերիկյան զորքերի մուտքից անմիջապես հետո: Մինչ այդ ավետարանականներն իրենց հոգևոր պահանջմունքների բավարարման համար այցելել են հայ առաքելական եկեղեցի:

³ Իրաքահայ համայնքի կայացման երախտավորների շարքում հեղինակն առանձնացրել է և մանրամասն ներկայացրել առանցքային գործիչներ, բարերարներ Միմոն Մկրտիչ Ղարիբյանի, Արամ Ղարիբյանի, Հակոբ և Քերոբ Գույումճյան եղբայրների, Մահտեսի Մարկոս որդի Մահտեսի Բաբենդերիի կենսագրականները:

կյանքի, համայնքում գործած ու գործող բոլոր կազմակերպությունների և միությունների մասին ամբողջական տեղեկություններ: Մուլթանական կառավարության կողմից 1863 թ. մարտի 17-ին վավերացված Ազգային սահմանադրությամբ ղեկավարվող իրաքահայ համայնքի համար, ելնելով աշխարհաքաղաքական փոփոխություններից և նոր իրողությունների առկայությունից, 1930 – 1931 թթ. և 1963 թ. ընդունվում են Իրաքի կառավարական նոր օրենքները, որոնցից վերջինը գործում է մինչ օրս: Ըստ այդմ՝ ՀԱԵ Իրաքի համայնքի ղեկավար մարմինն Ազգային կենտրոնական վարչությունն է⁴, որն ընտրում են 21 տարին լրացած իրաքահայերը՝ 4 տարի ժամկետով: Այսպիսով՝ հայկական համայնքի և Իրաքի պետական մարմինների միջև առկա իրավահարաբերությունները կարգավորվում են Իրաքի օրենսդրությամբ կազմավորված Ազգային կենտրոնական վարչության միջոցով: Հեղինակը հանգամանորեն ներկայացրել է Իրաքում գործած կամ գործող ու համայնքի ազգային կյանքը ղեկավարող կազմակերպությունները:

Յուրաքանչյուր հայ գաղթօջախի պատմության առանցքը, բնականաբար, կրթամշակութային կյանքի ընթացքն է, առանց որի հայ տեսակը պարզապես չի կարող գոյատևել օտար հողում: Իրաքի հայ գաղթօջախը ևս բացառություն չէ: Առաջին դպրոցները Բաղդադում հիմնվել են կաթոլիկ (1628 թ., հաճախել են նաև առաքելադավան մանուկները), այնուհետև առաքելական (1790 թ.) եկեղեցիներին կից: Բաղդադում առաջին՝ Սբ. Թարգմանչաց ազգային վարժարանը հիմնվել է 1852 թ.՝ Սբ. Երրորդություն եկեղեցու բացմանը զուգահեռ: Հետաքրքրական է, որ մինչև Չաբեյյան աղջկանց վարժարանի հիմնումը (1901 թ.), Թարգմանչաց վարժարանում ուսանել են նաև իգական սեռի մանուկները, ինչն արտառոց երևույթ էր XX դարի միջավայրի համար: 1917 թ. Թարգմանչաց և Չաբեյյան վարժարանների միացումով հիմնվում է Թարգմանչաց երկսեռ վարժարանը, որն էլ իր հերթին 1949 թ. միավորվում է Բաղդադի «Գեյլանի Քեմի» կոչվող վրանաքաղաքի մեջ հիմնադրված Սվաճյան վարժարանի հետ և ստանում Ազգային միացյալ վարժարան անվանումը: Յավոք, դպրոցի բնականոն ընթացքը խաթարվում է Իրաքի կառավարական որոշմամբ, որի համաձայն 1974 թ. բոլոր ազգային դպրոցները պետականացվում են: Հեղինակն առաջին ենթագլխում խոսում է նաև իրաքահայ կրթական կյանքում ու հայապահպանության մեջ զգալի նշանակություն ունեցած այլ կրթօջախների մասին ևս:

1974 թ. կառավարական հայտնի որոշումից հետո գաղթօջախի հայությունը նոր ձևեր որոնեց մատաղ սերնդի ազգային դիմագիծը պահպանելու համար:

⁴ Առաջնորդանիստ Սբ. Գր. Լուսավորիչ եկեղեցու հարկի տակ գտնող սույն վարչությունն իր Թաղային խորհուրդներն ունի Բասրա, Մոսուլ և Քիրքուկ քաղաքներում:

Այդ նպատակով 1985 թ. առաջնորդանիստ եկեղեցու հարակից դահլիճում հիմնվում է կիրակնօրյա հավաքավայր, որի հաճախորդ աշակերտների թիվը կարճ ժամանակ անց հասնում է 400-ի: Հետագայում տարբեր տարիքային խմբերի (դասարանների) բաժանված այս «հավաք-դպրոցը» մինչև Հայ ազգային տարրական երկսեռ վարժարանի վերաբացումը (2004 թ.), իր վրա պետք է վերցնեք Բաղդադի հայության մատաղ սերնդի կրթադաստիարակչական գործը:

Իրաքահայ կաթոլիկ համայնքի՝ տարբեր տարիներին բացված և 1974 թ. պետականացված մի քանի կրթօջախների պատմության ներկայացմամբ հեղինակն ավարտում է սույն ենթագլուխը և անցնում հաջորդ երեք ենթագլուխների շարադրանքին, որտեղ ամենայն բարեխղճությամբ ներկայացվում են իրաքահայ համայնքի թատերական, երաժշտական, գրական-գեղարվեստական կյանքը, խոսվում է կերպարվեստի, տպարանների և մամուլի մասին: Ս. Օհանյանը մանրամասն տեղեկություններ է տալիս 1921 թ. Բաղդադում առաջին հայկական թատերական ներկայացման, Թատերասիրաց միության ստեղծման (1924 թ., այն 1926 թ. տարրալուծվում է հիմնված Բաղդադի Հայ երկսեռ երիտասարդական միության մեջ), Բաղդադ, Բասրա, Մոսուլ, Քիրքուկ քաղաքների և այլ բնակավայրերի մեջ թատերական խմբերի գործունեության ու ներկայացումների, Բաղդադի «Կոմիտաս» քառաձայն երգչախմբի կեսդարյա փառավոր ուղու (1954 թ. այն 1957 թ. միանում է Բաղդադի Հայ երկսեռ երիտասարդական միությանը), Իրաքի հայկական բարեգործական ընդհանուր միության «Աբովյան» թատերախմբի (1939 թ.) ու «Մայաթ-Նովա» երգի-պարի խմբի (1965 թ.), Բասրայի գրական-մշակութային և երաժշտական կյանքի, Խորհրդային Հայաստանից մշակութային գործիչների՝ տարբեր տարիներին Իրաք կատարած այցերի ու համայնքի հայաշատ բնակավայրերում տեղի ունեցած մշակութային միջոցառումների, իրաքահայ անվանի մշակութային գործիչների և այլնի մասին:

Մենագրության երրորդ գլխի վերջին ենթագլուխը նվիրված է համայնքային տպագրական գործին և մամուլին: Այստեղ ևս հեղինակը, հետևելով իր կողմից քննվող ժամանակաշրջանը (XX դ.) «խախտելու» նախորդ բաժիններում ձևավորված «ավանդույթին», իր շարադրանքը սկսում է 1874 թ. Իրաքում բացված առաջին տպարանի և տպագրական արվեստի սկզբնավորման մասին անդրադարձով: Նյութական և քաղաքական հողի վրա բազմաթիվ դժվարությունների պատճառով իրաքահայ համայնքի պարբերականները չեն ունեցել տասնամյակների կյանք ու փակվել են հիմնադրումից կարճ ժամանակ անց: Համայնքում տպագրված պարբերականներից հիշատակելի է ՀՅԴ-ի ջանքերով հիմնադրված «Գոյամարտ» շաբաթաթերթը (1948 – 1954 թթ., 1957 – 1958 թթ.) և ՀԱԵ Առաջնորդարանի կողմից հրատարակվող «Կանթեղ» եռամսյա պարբերականը (2000 թ. – ցայսօր):

Մինչև 2004 թ. լինելով խնդրո առարկա համայնքի անդամ (Հայոց ցեղասպանությունից փրկված և Իրաքում վերընձյուղված ծնողների ժառանգ) և լավագույնս տիրապետելով համայնքային կյանքի պատմությանը, տարբեր վարչակարգերի ու տիրապետությունների շրջանում առկա ազգային-քաղաքական խնդիրներին, ներհամայնքային նուրբ և զգայուն հարցերին՝ Ս. Օհանյանը հաջողությամբ կարողացել է գտնել ոսկե միջինը և ստեղծել այնպիսի շարադրանք, որում և՛ չի տուժել անաչառությունը, և՛ աշխատանքն ընդունելի կարող է համարվել ինչպես հայկական, այնպես էլ արաբական շրջանակների կողմից: Ավելի լին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ մենագրությունը ոչ թե անհետացած, այլ կենդանի համայնքի մասին է, հեղինակից պահանջվել են այնպիսի շեշտադրումներ, որոնք չեն վտանգի պարբերաբար շիկացող Իրաքի հայկական համայնքային կազմակերպությունների բնականոն կյանքը:

Այսպիսով՝ հայկական արխիվային հարուստ նյութերի, հայալեզու, արաբալեզու ու անգլալեզու գրականության, մամուլի և այլնայլ տեղեկագիրների հենքի վրա Ս. Օհանյանին լիարժեքորեն հաջողվել է ստեղծել Իրաքի հայ համայնքի XX դ. պատմությունը: Ավելին, ինչպես նշեցինք, հեղինակը ջանք չի խնայել՝ հետադարձ հայացք նետելու և յուրաքանչյուր բաժնի շարադրանքը գրեթե «գրոյական կետից» սկսելու համար: Ըստ էության մենագրությունն ինչ-որ տեղ կարելի է համարել իրաքահայ համայնքի ամբողջական պատմության շարադրման առաջին փորձը: Եվ այդ իմաստով գրքի վերնագիրը կարելի էր համահունչ դարձնել բովանդակությանը՝ նկատվող ժամանակագրական շեղումից խուսափելու համար:


ՎԱՀԵ ՍԱՐԳՍՅԱՆ

Պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Սփյուռքի և հայ գաղթօջախների պատմության բաժնի գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Վրաստանի հայության, մասնավորապես՝ ջավախահայության խնդիրները, Հայաստան – Վրաստան հարաբերություններում առկա բազմաբնույթ հիմնահարցերը, Վրաստանի տեղաբնիկ ժողովուրդների ու ազգային փոքրամասնությունների խնդիրները: Հեղինակ է 1 մենագրության և գիտական հոդվածների: Vsargsyan83@gmail.com

ՍՈՒՄԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. Վերնատուն, Երևան, “Էդիթ Պրինտ”
հրատ., 2018, էջ 28.*

Բանալի բառեր՝ “Վերնատուն”, Թումանյան, արխիվային փաստաթղթեր,
նամակներ, գրական խմբակ:

*Հովհաննես Թումանյանի ծննդյան 150 և “Վերնատան” 120-ամյակի առ-
թիվ արժանի նվեր է մատուցել ճանաչված թումանյանագետ, Մ. Աբեղյանի*



*անվան գրականության ինստիտուտի առաջատար
գիտաշխատող, բանասիրական գիտությունների
դոկտոր Սոսաննա Հովհաննիսյանը: Մենագրու-
թյունը տպագրվել է Գրականության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ, պատասխանատու
խմբագիր՝ Բ. Գ. Պ. Ջանփոլադյան:*

*Աշխատանքն արժեքավոր է ոչ միայն որպես
ճանաչված գրական խմբակի գործունեության նո-
րովի, համակողմանի լուսաբանում՝ փաստական
հարուստ հենքով, հեղինակային հետաքրքիր մեկ-
նաբանություններով ու վերլուծություններով, այլև
արտացոլում է հայ գրականության մեծերի՝ վեր-
նականների անձնական, ընկերային հարաբերությունները, գրական հե-
տաքրքրությունները և ճաշակը, աշխարհընկալման ընդհանրություններն
ու յուրահատկությունները: Միաժամանակ, “Վերնատան” գործունեության
միջոցով Մ. Հովհաննիսյանին հաջողվել է պատկերել XX դարասկզբի գրա-
կան գործընթացները, ի դեմս վերնականների ստեղծագործական ու անձ-
նական տարաբնույթ դժվարությունների՝ ներկայացնել հայ մտավորակա-
նության խնդիրներն ու քաղաքական անբարենպաստ պայմաններում հա-
նուն գրականության, հանուն հայոց հոգեմտավոր զարգացմանն ուղղված
նրանց ազգանվեր գործունեությունը:*

*“Վերնատան” մասին խոսվել ու գրվել է շատ հաճախ, հիմնականում
Թումանյանի ժամանակակիցների, մասնավորապես վերնականների հուշե-
րում, նամակներում, հողվածներում” (էջ 5),– գրում է Մ. Հովհաննիսյանը:*

* Ընդունվել է տպագրության 15. V. 2019 թ.:

Հիրավի, մեզանում գրական որևէ խմբակի կամ միավորման գործունեությունն նմանօրինակ ուշադրության չի արժանացել: Ա. Ինճիկյանը, Լ. Հախվերդյանը, Ավիկ Բսահակյանը, Հ. Ուլուբաբյանը, Ա. Սահիկյանն անդրադարձել են հայոց մշակութային, հոգևոր կյանքում “Վերնատան” ունեցած նշանակությանը, իսկ գրականագետ Ավ. Բսահակյանը, ընդգծելով դրա դերն ու նշանակությունը, անդրադարձել է վերնականներից յուրաքանչյուրին՝ իրավացիորեն առանձնացնելով Թումանյանի մեծ դերակատարումը՝ որպես “Վերնատան” “մարտկոցի”¹: Գրական խմբակի մասին արժեքավոր հուշեր են գրել ոչ միայն Ավետիք Բսահակյանը, Դ. Դեմիրճյանը, Լ. Շանթը, այլև դրան փոքրիշատե առնչություն ունեցող ժամանակակիցները, Ամենայն հայոց բանաստեղծի կիներն ու դուստրերը:

Մենագրության մեջ ի մի բերելով մինչ այդ արվածն ու ասվածը, հավուր պատշաճի գնահատելով գրական խմբակի գործունեությունն արժևորող յուրաքանչյուր աշխատություն՝ Ս. Հովհաննիսյանը նորահայտ նյութերով, արխիվային փաստաթղթերով (նամակներ, գրություններ, օրագրային գրառումներ, հուշեր) ամբողջացրել է գրական խմբակի դիմանկարը՝ նոր դիտարկումներով հարստացնելով այն: Եվ, բնականաբար, վերնականների առանցքում, որպես կենտրոնաձիգ ուժ, Թումանյանն է, որի “անձնական նկարագիրը, հայ գրողներին համախմբելու ... ունակությունը ծանրակշիռ գործոն է եղել և իր հետքն է թողել նրանցից յուրաքանչյուրի կյանքում մասնավորապես և ազգային գրական ընթացքի վրա՝ ընդհանրապես” (էջ 11):

Ինչպես գրում է Ս. Հովհաննիսյանը, “նշանավոր հնգյակին (Ղազարոս Աղայան, Լևոն Շանթ, Ավետիք Բսահակյան, Դերենիկ Դեմիրճյան, Նիկոլ Աղբալյան) Թումանյանը ինչ-որ մի մաս է տվել իր մարդկային էությունից, տաղանդից ու անձնական հմայքից: Նրանք էլ իրենց հերթին բանաստեղծի ժամանակակիցների հոծ բազմությունից այն քչերն են, ովքեր հաճախ են ուրախություն ու ջերմություն հաղորդել պոետի կյանքին, և նրանց միջև եղած սերն ու նվիրումը եղել են փոխադարձ ու անկեղծ” (էջ 10–11):

Աշխատության առաջին գլխում՝ “Վերնատան” պատմության համառոտ ակնարկ՝ հեղինակն անդրադառնում է “Վերնատան” հիմնադրման պատմությանը՝ նշելով. “Վերնատան ստեղծումը յուրօրինակ հավաստումն էր այն իրողության, որ 900-ականներին հայ գրականության զարգացումը որոշակի փուլ էր թևակոխում և Թումանյանի շուրջն էր կենտրոնանում գրական նոր շարժումը” (էջ 21): Վերնականների՝ գրական մեկ ընկերակցության շուրջ համախմբվելը, ըստ գրականագետի, պայմանավորված էր ոչ միայն

¹ Ավ. Բսահակյան. Վերնատան զավակները, Երևան, 2017, էջ 16:

գրական, մշակութային, հասարակական խնդիրների նկատմամբ ունեցած միասնական մոտեցմամբ, այլև հոգևոր ներդաշնակությամբ ու մարդկային համանման որակների առկայությամբ: “Նրանք միասնական էին գրականության դերի ընկալմամբ և հակադիր էին ազգայնական նեղմիտ ըմբռնումներին” (էջ 22), – նշում է Ս. Հովհաննիսյանը:

Մենագրության մեջ “Վերնատան” գրական համալսարան լինելու հանգամանքը բացատրվում է նրանով, որ վերնականները ձգտում էին վերագնահատել նախորդների ժառանգությունը, զարգացնել հայ դասական գրականության ավանդները, փորձում էին բարձրացնել ժողովրդական բանահյուսության դերը: Գրականագետ Ա. Ինձիկյանի՝ “Վերնատանը” քննարկվող սկզբունքային նշանակություն ունեցող հիմնահարցերին Ս. Հովհաննիսյանը հավելում է ևս հինգ ուղղություն՝ գրողի և քննադատության կապի, գրականության տեսության, գրական ու գրողների կազմակերպություն հիմնելու, տարբեր ազգերի պատմության և այլն: Աշխատության մեջ հեղինակը քննության է առնում վերնականների վերաբերմունքը գրական արժեքներին՝ առանձնացնելով նրանցից յուրաքանչյուրի նախասիրությունները, անդրադառնում կազմակերպված գրական դատերին, որին մեծ նշանակություն է տվել Թումանյանն ինքը՝ դիտելով այն որպես “փոխադարձ կապի ու շփման միջոց”: Առաջին բաժնում արժեքավոր է ոչ միայն հայ դասականների գրական ճաշակի, նախասիրությունների, սեփական և միմյանց ստեղծագործությունների նկատմամբ ունեցած վերաբերմունքի լուսաբանումը, այլև կարևորվում է իրար ուղղված անկեղծ ու շիտակ քննադատության առկայությունը, և որտեղ իրենց մեծությամբ, մեծահոգությամբ փայլում են հայ գրականության դասականները: Վերնականներն իրենք էլ իրենց հուշերում, նամակներում բազմիցս կարևորել են “Վերնատանը” տիրող այդ անկեղծ մթնոլորտը, որը ստիպում էր առավել բժախնդիր լինել ամեն տողի, բառի նկատմամբ, միննույն ժամանակ մղում էր ստեղծագործական որոնումների, վերելքների: Այս գլխում արժեքավորը ոչ միայն հայ մեծանուն գրողների՝ գրականության խնդիրների հանդեպ մոտեցումների ու ճաշակի արտացոլումն է, այլև ուրվագծվում են նրանց բացառիկ անշահախնդիր, նախանձեկորեն անկեղծ հարաբերությունները, երբ գրական ամբիցիաներից առավել կարևորվում է ճշմարտությունը և այն բարձրաձայնելու խիզախությունը:

Տասր տարի ընդհատումներով գործող խմբակը մեծ ազդեցություն է ունեցել նրա անդամներից յուրաքանչյուրի կյանքում, թերևս, նաև այն պատճառով, որ գրական ճաշակ ձևավորելուց բացի տվել է ամենակարևորը՝ մարդկային ջերմ, անկեղծ շփում, հոգեկան մտերմության այնպիսի մի պաշար, ո-

րից հետագայում էլ, հազարավոր կիլոմետրերով իրարից բաժանված լինելով, “սնվել” են վերնականները:

Աշխատության երկրորդ գլուխը՝ “Թումանյանը և “Վերնատան” նոր անդամները” անդրադարձ է վերնականների միջանձնային հարաբերություններին, նրանց ընկերական, ոգեղեն կապին: Թումանյան–Աղայան, Թումանյան–Շանթ, Թումանյան–Աղբայրյան, Թումանյան–Իսահակյան, Թումանյան–Դեմիրճյան հարաբերությունների պատմությունը ներկայացված է ակնատեսի անմիջականությամբ ու գրականագետի անաչառությամբ: Ընդհանրապես Ս. Հովհաննիսյանի մոտեցումը թումանյանական նյութին առանձնահատուկ է: Կարևորելով թեմային առնչվող յուրաքանչյուր փաստ, ասելիքի առանցքը դարձնելով բացառապես տեղի ունեցած իրողությունները, պահպանելով հանդերձ նյութի մատուցման գիտական ոճը՝ գրականագետը զերծ չի մնում գեղարվեստական-հուզական պատումի արտահայտչամիջոցներից, ինչի շնորհիվ դասագրքերից մեզ ծանոթ գրական մեծությունները ձեռք են բերում գեղարվեստական կերպարներին առանձնահատուկ գծեր՝ ներաշխարհի շոայլությամբ, մարդկային թուլություններով, ժամանակաշրջանի կնիքով և ժամանակից վեր լինելու առանձնահատուկ շնորհով: Թերևս նաև սա է մենագրության հատկապես այս գլխի առինքնող ազդեցության պատճառը: Ընթերցողը ստանում է ավելին, քան պարզապես փաստն է, իրողությունը կամ պատմական ու գրական ճշմարտությունը: Նա ձեռք է բերում անմնացորդ նվիրումի, մեծ ու հուզիչ ընկերության դասեր. անհնար է չհիանալ մարդկային այն բարձր, անշահախնդիր, միմյանցով հպարտանալու, միմյանց բարձրացնելու, կարևորելու հատկություններով, որոնց կրողներն էին վերնականները՝ Աղայանը, Իսահակյանը, Շանթը, մյուսները: Եվ այս ամենը հրաշալի մարմնավորում է ստացել Ս. Հովհաննիսյանի գրչի շնորհիվ:

“Վերնատուն” աշխատության հեղինակին հաջողվել է վավերագրական առատ նյութերի միջոցով ոչ միայն ներկայացնել “պատմական անհատների”՝ Թումանյանի ու մյուս վերնականների բազմակողմանիությունը, այլև վերստեղծել նրանց դարաշրջանն ու պատմական միջավայրը, ներկայացնել XX դարասկզբի հայ մեծերի միջանձնային, նեղ ընկերական, երբեմն էլ ընտանեկան կապերը՝ վեր մնալով կենցաղագրությունից ու առօրեականությունից: Առանձնահատկություն, որն էլ ավելի արժեքավոր է դարձնում աշխատանքը:

Փաստենք գրականագետի՝ նյութի մատուցման մի հետաքրքիր առանձնահատկության մասին ևս: Առաջնորդվելով թումանյանական “վատր լավ տեսնելու” սկզբունքով՝ Ս. Հովհաննիսյանը շեշտը նախևառաջ դնում է բա-

նաստեղծի և մյուս վերնականների հարաբերությունների մարդկային լուսավոր, ուսուցողական կողմի վրա՝ շրջանցելով, իհարկե, նրանց միջև երբեմն ծագած թյուրիմացությունները, օբյեկտիվորեն մեկնաբանելով դրանց ներքին հոգեբանական պատճառները: Այս մոտեցումը փոքր-ինչ խախտվում է Թումանյան-Դեմիրճյան հարաբերությունների պատմությունը շարադրելիս. Ս. Հովհաննիսյանը Դ. Դեմիրճյանին նախևառաջ ներկայացնում է իբրև գրականության խորաթափանց տեսաբանի ու քննադատի, ապա անցում կատարում նրանց մարդկային հարաբերություններին, որտեղ Դեմիրճյանը դրսևորվում է բնավ ոչ բարձր հատկանիշներով: Ինչպես նկատել էր Թումանյանը՝ «Դեմիրճյանը մի խարաբ շերտ ունի իր մեջ, որ ամեն ինչ փչացնում է»²: Հենց այս «շերտին» էլ անդրադառնում է Ս. Հովհաննիսյանը «Վերնատան» ստվերը՝ ենթազրկում՝ ներկայացնելով փաստեր, որոնք նրբանկատորեն շրջանցել են գրականության այլ պատմաբաններ: Ու թեպետ հետագայում Դեմիրճյանը դարձավ «Թումանյանի ստեղծագործության ամենախորունկ մեկնաբաններից մեկը»³, այնուհանդերձ, «բանաստեղծին որպես մարդ, նույնիսկ ընկեր ու բարեկամ Դեմիրճյանը այնքան էլ լավ չճանաչեց, գուցե այնքան էլ չսիրեց իր մեծ բարեկամին» (էջ 218), – ասելիքն ամփոփում է Ս. Հովհաննիսյանը:

Նկատենք նաև, որ «Հավելված»-ում զետեղված են Թումանյանին հասցեագրված «Վերնատան անդամների նամակներից, ինչպես նաև վերջիններիս մտքերը «Վերնատան» Շեքսպիրի Թումանյանի մասին:

Ցավոք, մենագրությունը զերծ չէ տեխնիկական և համակարգչային բնույթի վրիպումներից, սակայն, համոզված ենք, որ ընթերցողը գրքից կստանա բոլոր հանգամանքներում մարդ մնալու, մերձավորին, ընկերոջը սիրելու, առաքինությամբ հիանալու, ոգեշնչվելու հավերժ օգտակար դասեր:

ԳԱՅԱՆԵ ՀԱԿՈՒՅԱՆ

Բ. Գ. Թ., դոցենտ, Հյուսիսային համալսարանի դասախոս: Գիտական հետաքրքրությունները՝ կապուտիկյանագիտություն, հանրային կապեր: Հեղինակ է 22 գիտական հոդվածի և 1 ուսումնամեթոդական ձեռնարկի: h.gayane@list.ru

² Ն. Թումանյան. Հուշեր և գրույցներ, Երևան, 1987, էջ 198:

³ Սեծերը ամենամեծի մասին. Վերնատան անդամները Թումանյանին, կազմեց և առաջաբանը գրեց Լևոն Հախվերդյանը, Երևան, 2011:

ՈՒՂԵՑՈՒՅՑ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

“Պատմաբանասիրական հանդես”-ի էջերում լուսաբանվում են հայ ժողովրդի պատմության, գրականության, լեզվի, արվեստի ու մշակույթի, փիլիսոփայության հարցերը, պատմագրության, ընդհանուր բանասիրության և հայագիտության տեսական խնդիրները, հայ ժողովրդի քաղաքական, սոցիալական և մշակութային կապերը մյուս ժողովուրդների հետ:

Հանդեսն ունի հոդվածների, հաղորդումների, քննարկման ու բանավեճի, հրապարակումների, գրախոսության, մեր երախտավորները, մեր հորեյարները, գիտական կյանք, լրատու բաժիններ: Հոդվածները տպագրվում են հայերեն և ռուսերեն՝ համապատասխան ամփոփումներով, անվճար:

Պարբերականը լույս է տեսնում 4 ամիսը մեկ անգամ, տարեկան 3 համար, յուրաքանչյուր համարի ծավալը 21 տպ. մամուլ (320 էջ):

Հանդեսի պաշտոնական կայքէջը՝ <http://academhistory.am/hy> պատմաբանասիրական հանդես.html

Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ patmhandes@rambler.ru, patmhandes@yahoo.com

ՀՈՂՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

1. Հոդվածի ծավալը պետք է լինի մինչև 15 էջ (ավելի մեծ ծավալը՝ խմբագրության նորոշմամբ), տեքստի լայնությունը՝ 12.5 սմ, երկարությունը՝ 21 սմ, միջտողային տարածությունը՝ At least՝ 13:

2. Հայերեն տեքստը “Grqee Nor” տառատեսակով՝ շեղ (*italic*), ընդգծված տեքստը (բառը)՝ ուղիղ, 12 տառաչափով, ռուսերենը՝ “Times New Roman”՝ 11.5:

3. Հոդվածի վերնագիրը պետք է լինի “Arial Armenia” տառատեսակով, ՄԵԾՍԱՌԵՐՈՎ (հայերենի չափը 12, ռուսերենինը՝ 11), դրվում է կենտրոնում, իսկ դրա ներքևում՝ հեղինակի անուն-ազգանունը՝ ՄԵԾՍԱՌԵՐՈՎ (հայերենը՝ “Grqee Nor” տառատեսակով, չափը՝ 11, ռուսերենը՝ “Times New Roman”-ով, չափը՝ 10):

4. Հաջորդ տողում գրվում են “Բանալի բառեր”-ը՝ առնվազն 10 բառ կամ բառակապակցություններ (ուղիղ):

5. Հոդվածի վերջում տրվող ամփոփումները պետք է ունենան տեքստի սեղմ բովանդակությունը (կես էջի չափով կամ 6–7 նախադասությամբ): Եթե հոդվածը հայերեն է, ապա ամփոփումները պետք է լինեն ռուսերեն ու անգլերեն, իսկ եթե ռուսերեն է՝ հայերեն և անգլերեն: Հայերենի ու անգլերենի տառաչափը 11.5, ռուսերենինը՝ 11:

6. Ամփոփումների տեքստից առաջ պետք է ՄԵԾՍԱՍՈՒԵՐՈՎ գրել հոդվածի վերնագիրը (տառաչափը՝ 11), ներքևում հեղինակի անուն-ազգանունը (կենտրոնում) և ՄԵԾՍԱՍՈՒԵՐՈՎ (տառաչափը՝ 10): Հաջորդ տողում՝ կենտրոնում, գրվում են համապատասխանաբար՝ “Ամփոփում”, “Резюме”, “Summary” բառերը ցրիվ, տառաչափը՝ 10: Յուրաքանչյուր ամփոփման տեքստից առաջ գրվում են համապատասխան լեզվով “Բանալի բառեր”-ը, իսկ տառաչափը՝ ամփոփման տեքստի տառաչափով: Բոլոր լեզուներով տրվող “Բանալի բառեր”-ը պետք է լինեն նույնական:

7. Հոդվածի տեքստի վերջում գրվում են հեղինակի (հեղինակների) մասին հակիրճ տեղեկություններ՝ գիտական աստիճանը, աշխատավայրը, գիտական հետաքրքրությունների ոլորտը, հրատարակված աշխատանքների քանակը: Որից հետո դրվում է հոդվածի օգտագործված գրականության ցանկը՝ լատինատառ տառատարձմամբ (այբբենական կարգով):

8. Ռուսերեն ամփոփումից հետո ռուսերենով դրվում է հեղինակի մասին տեղեկությունը, իսկ անգլերենից հետո՝ անգլերենով:

ՀՂՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

ա) Հղումների տառաչափը. հայերենը՝ 11, ռուսերենը՝ 10.5, այլ լեզուներով՝ 11:

բ) Գրքի վրա հղման դեպքում գրվում է հեղինակի անվան սկզբնատառը, ազգանունը՝ ամբողջությամբ և ցրիվ, որից հետո դրվում է միջակետ, այնուհետև՝ մեծատառով գրքի վերնագիրն առանց չակերտների, ստորակետով՝ հրատարակության վայրը, թիվը, էջը:

գ) Ժողովածուների դեպքում նախ նշվում է օգտագործված հոդվածի վերնագիրը, դրվում է միջակետ ու անջատման գիծ, ապա գրվում է ժողովածուի վերնագիրը, խմբագրի կամ կազմողի տվյալները, հրատարակության վայրը, թիվը, էջը:

դ) Հղված ամսագրերի դեպքում տրվում է հոդվածի հեղինակի անուն-ազգանունը, վերնագիրը, այնուհետև դրվում է միջակետ ու անջատման գիծ, չակերտների մեջ նշվում է ամսագրի անվանումը, հրատարակության վայրը, թիվը, համարը, էջը: Թերթերի դեպքում չակերտների մեջ նշվում է թերթի անունը, այնուհետև՝ փակագծում հրատարակության վայրը, որից հետո՝ ամսաթիվը (օրինակ՝ 01. II. 1998): Վերը նշվածը վերաբերում է նաև ռուսերեն ու այլ լեզուներով հղումներին:

դ) Կայքերին տրվող հղումների դեպքում գրվում է հոդվածի կամ հոդվածի հեղինակի տվյալները և վերնագիրը, ապա դրվում է միջակետ ու անջատման գիծ, նշվում՝ կայքի հասցեն:

Հոդվածները գրախոսվում են, մերժման դեպքում չեն վերադարձվում:

РУКОВОДСТВО ДЛЯ АВТОРОВ

На страницах «Историко-филологического журнала» освещаются вопросы истории, литературы, языка, искусства и культуры, философии армянского народа, общетеоретические вопросы историографии, общей филологии и арменистики, политические, экономические и культурные связи армянского народа с другими народами.

Журнал имеет отделы статей, сообщений, обсуждений и дискуссий, публикаций, рецензий, наши заслуженные деятели, наши юбиляры, научная жизнь, хроника. Статьи печатаются на армянском и русском языках с соответствующими резюме, бесплатно.

Журнал выходит раз в 4 месяца, 3 номера в год, объем каждого номера – 21 печ. лист (320 с.).

Официальный сайт журнала: http://academhistory.am/hy_սյունսյրանիս-սիրական հանդես.html

Электронная почта журнала: patmhandes@rambler.ru, patmhandes@yahoo.com

СТРУКТУРА И ТЕХНИЧЕСКОЕ ОФОРМЛЕНИЕ СТАТЬИ

1. Объем статьи должен быть до 15 страниц (бóльший объем – по решению редакции), ширина текста – 12,5 см, длина – 21 см, интервал At least – 13.

2. Армянский текст – шрифт «Grqee Nor», курсив (*italic*), выделенный текст (слово) – прямо, размер шрифта 12; русский текст – «Times New Roman» – 11,5.

3. Заглавие статьи – шрифт «Arial Armenia», прописными буквами (на армянском языке размер 12, на русском – 11), помещается в центре, под ним пишется имя и фамилия автора прописными буквами (на армянском языке шрифтом «Grqee Nor», размер 11, на русском – «Times New Roman», размер 10).

4. На следующей строке пишутся «Ключевые слова» – минимум 10 слов или словосочетаний (курсивом).

5. Резюме, прилагаемые к статье, должны заключать в себе ее краткое содержание (полстраницы или 6–7 предложений). Если текст статьи на армянском языке, то резюме должны быть на русском и английском языках, если текст статьи на русском, резюме – на армянском и английском. На армянском и английском языках размер шрифта 11,5, на русском – 11.

6. Перед текстом резюме пишется прописными буквами заглавие статьи (размер 11), ниже, в центре – имя и фамилия автора прописными буквами (размер 10). На следующей строке, в центре пишется соответственно «*Միջինիւմ*», «Резюме», «Summary» вразбивку, размер 10. Перед текстом каждого резюме даются «Ключевые слова» на соответствующем языке, размер шрифта такой же, как в тексте резюме. «Ключевые слова» на всех языках должны быть одинаковыми.

7. После текста статьи пишутся краткие сведения об авторе (авторах): ученая степень, место работы, сфера научных интересов, количество опубликованных работ. Затем помещается библиография статьи в латинской транслитерации (в алфавитном порядке).

8. После резюме на русском языке помещаются краткие сведения об авторе на русском языке, а после резюме на английском языке – на английском.

ОФОРМЛЕНИЕ СНОСОК

а) Размер шрифта: на армянском языке – 11, на русском – 10,5, на других языках – 11.

б) При ссылке на книгу, пишутся инициал имени автора, фамилия полностью, вразбивку, после чего ставится точка, затем без кавычек, с прописной буквы пишется заглавие книги, после запятой – место, год издания, страница.

в) При ссылке на сборник пишутся имя и фамилия автора, заглавие использованной статьи, ставятся точка и тире, затем пишется заглавие сборника, данные редактора или составителя, место, год издания, страница.

г) При ссылке на журналы пишутся имя и фамилия автора, заглавие статьи, затем ставятся точка и тире, пишется название журнала в кавычках, место, год издания, номер, страница. При ссылке на газеты пишется в кавычках название газеты, затем в скобках место издания, после чего указывается дата (например, 01. II. 1998). То же относится к сноскам на русском и других языках.

д) При ссылке на сайт пишутся данные статьи или автора статьи, затем ставятся точка, тире, указывается адрес сайта.

Статьи рецензируются, в случае отказа не возвращаются.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈՂՎԱԾՆԵՐ, ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

I

Վահան Բայրուրյան – Իրանական մետաքսի համար պայքարի ազդեցությունը Մերձավոր ու Միջին Արևելքի միջազգային հարաբերությունների վրա և հայ առևտրական կապիտալը (XVII դարասկիզբ)3

Աելիտա Դոլուխանյան – Խորենացու պատմության ֆրանսերեն նոր թարգմանության առաջաբանը և հայ պատմահոր ժամանակը30

Համո Սուքիասյան – Հին ու նոր տոմարների տարբերությունը և Հովհաննես Թումանյանի ծննդյան ամսաթվի հարցը 1910–1930-ական թվականներին47

Պետրոս Դեմիրճյան – Նար- Դուսի ստեղծագործության գնահատության ընթացքը57

Քնարիկ Ավագյան – Սիրիայի հայ համայնքի ճգնաժամը համասփյուռքյան առաջնահերթությունների վերաբերման առիթ (2011–2018 թթ.)65

Ավետիս Ավետիսյան – Աստվածատուր Աստապատցի. նոր անուն XIII դարի հայ որմնանկարչության ասպարեզում78

II

Ռուբեն Մահակյան, Ռոստոմ Մարգարյան – Անտիոնիական զենքի և զինամթերքի շրջանառության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (1918–1920 թթ.)93

Նախրա Բալայան – Հայ ինքնության կերպավորումը Նշան Պեշիկթաշլյանի գրական դիմանկարներում115

Վերժինե Սվազյան – Նշխարներ Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունից (Նոր Նախիջևանի հիմնադրման 240-ամյակի առթիվ)130

Հրանուշ Մահակյան – Յո. Լեփսիուսի և նրա □Գերմանա-հայկական ընկերության□ հայանպաստ գործունեությունը Եվրոպայում (1915 թ. սեպտեմբեր – 1916 թ. հուլիս)144

Զարիկ Աղաջանյան – Գրական արևմտահայերենը և նրա նորմավորման հարցերն ըստ Ա. Այտընյանի քերականության162

Ռաֆիկ Նահապետյան – Հայոց ավանդական ուսուցողի էթնոմշակութային բնութագրության շուրջ175

Նարինե Մելքոնյան – Հոլովական որոշ իմաստների արտահայտումը իսպաներենի DE նախդիրով (հայերենի հետ զուգադրությամբ)200

Լիանա Նազարյան – Տայքում և Կղարջքում Բագրատունիների վրացական ճյուղի իշխանության հաստատման թվականի շուրջ211

Աշոտ Մանուչարյան – Հաղարծնավանքի դավանաբանական կողմնորոշման շուրջ223

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

| | |
|--|-----|
| Աշոտ Սարգսյան – Պետականության ռեսուրսը և արժեքային համակարգը՝ արտաքին քաղաքականությունը պայմանավորող գործոններ (մ. թ. ա. II – մ. թ. IV դդ.) | 233 |
|--|-----|

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ԿՈՄԻՍՏԱՍԻ ՇՆՆՅԱԼ
150-ԱՍՅԱԿԻՆ ԸՆԴԱՌԱՋ

| | |
|---|-----|
| Անուշավան Զաքարյան – Թումաս Հարտմանի հողվածը Կոմիտաս Վարդապետի մասին (ռուս.) | 252 |
|---|-----|

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | |
|---|-----|
| Ռուբեն Կարապետյան – Նիկոլայ Հովհաննիսյան. Մերձավորարևելյան և արևելասահլիական քաղաքական հորձանուտում: Արևելագետի գրառումներ (ռուս.) | 287 |
| Վահե Սարգսյան – Սեդա Տաճատ Օհանեան. Իրաքի հայ համայնքը 20-րդ դարում | 291 |
| Գայանե Հակոբյան – Սուսաննա Հովհաննիսյան. Վերնատուն | 300 |
| Ուղեցույց հեղինակների համար | 305 |
| Ուղեցույց հեղինակների համար (ռուս.) | 307 |

СОДЕРЖАНИЕ

СТАТЬИ, СООБЩЕНИЯ

I

| | |
|---|----|
| Ваан Байбуртян – Влияние борьбы за иранский шелк на международные отношения на Ближнем и Среднем Востоке и армянский торговый капитал (начало XVII века) | 3 |
| Ազլիտա Դոլուխանյան – Предисловие нового французского перевода «Истории» Хоренаци и эпоха отца армянской историографии | 30 |
| Ամո Տուկիասյան – Разница между старым и новым календарями и вопрос о дате рождения Ованеса Туманяна в 1910–1930-х годах | 47 |
| Պետրոս Դեմիրչյան – Процесс оценки творчества Нар-Доса | 57 |
| Կնարիկ Ավակյան – Кризис армянской общины Сирии как повод для переоценки приоритетов армянской диаспоры (2011–2018 гг.) | 65 |
| Ավետիս Ավետիսյան – Аствацатур Астапатци □ новое имя в армянской настенной живописи XVIII века | 78 |

II

| | |
|---|-----|
| Рубен Саакян, Ростом Саргсян – Проблема незаконного оборота оружия и боеприпасов в Республике Армения (1918–1920 гг.)..... | 93 |
| Наира Балаян – Отображение армянской идентичности в литературных портретах Ншана Пешикташляна | 115 |
| Верджине Связлян – Реликвии устного народного творчества Новой Нахичевани (к 240-летию основания Новой Нахичевани)..... | 130 |
| Грануш Саакян – Проармянская деятельность И. Лепсиуса и его «Немецко-армянского общества» в Европе (сентябрь 1915 – июль 1916 г.)..... | 144 |
| Зарик Агаджанян – Западноармянский литературный язык и вопросы его нормирования в грамматике А. Айтыняна..... | 162 |
| Рафик Нагапетян – Об этнокультурном характере армянского традиционного блюда.. | 175 |
| Нарине Мелконян – Выражение некоторых падежных значений испанским предлогом de (в сопоставлении с армянским)..... | 200 |
| Лиана Назарян – О дате утверждения власти грузинской ветви Багратидов в Тайке и Кхарджке | 211 |
| Ашот Манучарян – О конфессиональной ориентации Агарцинского монастыря..... | 223 |

ОБСУЖДЕНИЯ

| | |
|---|-----|
| Ашот Саргсян – Ресурс государственности и система ценностей – факторы, обуславливающие внешнюю политику (II в. до н. э. – IV в. н. э.) | 233 |
|---|-----|

ПУБЛИКАЦИИ

К 150-ЛЕТИЮ СО ДНЯ
РОЖДЕНИЯ КОМИТАСА

| | |
|---|-----|
| Анушаван Закарян – Статья Фомы Гартмана о Комитасе Вардапете (на русск. яз.) | 252 |
|---|-----|

РЕЦЕНЗИИ

| | |
|---|-----|
| Рубен Карапетян – Николай Оганесян. В ближневосточном и восточноазиатском политическом водовороте. Записки востоковеда (на русск. яз.) | 287 |
| Ваэ Саркисян – Седа Тачатовна Оганян. Армянская община Ирака в 20-м веке..... | 291 |
| Гаянэ Акопян – Сусанна Ованесян. Вернатун | 300 |
| Руководство для авторов (на арм. яз.)..... | 305 |
| Руководство для авторов (на русск. яз.) | 307 |

CONTENTS

ARTICLES, REPORTS

I

- Vahan Bayburdyan** – The impact of the struggle for Iranian silk on international relations in the Near and the Middle East and the Armenian trade capital (The beginning of the 17th century).....3
- Aelita Dolukhanyan** – The preface of the new French translation of the “History” by Khorenatsi and the era of the Father of Armenian Historiography30
- Hamo Sukiasyan** – The difference between old and new calendars and the issue of the date of birth of Hovhannes Tumanyan in the 1910-1930ss47
- Petros Demirchyan** – The process of the evaluation of Nar-Dos oeuvre.....57
- Knarik Avagyan** – The crisis of the Armenian community in Syria as a ground for the reevaluation of the pan-Diasporan priorities (2011-2018).....65
- Avetis Avetisyan** – Astvatsatur Astapatsi – a new name in the 18th century Armenian mural painting78

II

- Ruben Sahakyan, Rostom Sargsyan** – The problem of the illicit weapons and ammunition in the Republic of Armenia (1918-1920).....93
- Naira Balayan** – Characterisation of Armenian identity in Nshan Peshiktashlyan’s literary portraits.....115
- Verjiné Svazlyan** – The relics of the Armenian popular folklore of Nor-Nakhijevan (Dedicated to the 240th Anniversary of the Foundation of Nor-Nakhijevan).....130
- Hranush Sahakyan** – The pro-Armenian activities of Dr. Johannes Lepsius and his “German-Armenian Society” in Europe (September 1915-July 1916).....144
- Zarik Aghajanyan** – Western-Armenian literary language and questions of its normalization in A. Aitynyan’s grammar162
- Rafik Nahapetyan** – On the ethno-cultural nature of the Armenian national traditional dish175
- Narine Melkonyan** – Expression of some case meanings by Spanish preposition “de” (in comparison with the Armenian)200
- Liana Nazaryan** – On the date of the establishment of power by the Georgian branch of the Bagratuni in Tayk and Kgharjk211
- Ashot Manucharyan** – On the confessional orientation of Haghartsin monastery.....223

DISCUSSIONS

- Ashot Sargsyan** – Statehood capacity and value system as determining factors in foreign policy (II c. BC – IV c. AD)233

PUBLICATIONS

TO THE 150TH BIRTH
ANNIVERSARY OF KOMITAS

Anushavan Zakaryan – The article of Thomas Hartmann about Komitas Vardapet (Russ.) 252

BOOK REVIEWS

Ruben Karapetyan – Nikolay Hovhannisyan; In the Near Eastern and East Asian Political
Whirlpool; Notes of an Orientalist (Russ.)287

Vahe Sargsyan – Seda Tachat Ohanyan; The Armenian community of Iraq in the
20th century291

Gayane Hakobyan – Susanna Hovhannisyan; Vernatun300

A guidance for the authors305

A guidance for the authors (Russ.)307